Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՆԵՂՈՒՑՆԵՐԸ

(ՎՈՍՓՈՐ ԵՒ ԴԱՐԴԱՆԵԼ)

ԹՈՒՔԱԿԱՆ ՋՐՈՒՂԻՆԵՐԸ ԵՒ ՀԱՅ ԴԱՏԸ

Գրքոյկիս վերնագրից դժուարանում է
Հ. Ե. Դ. Պետրոսեանցի Հանրագիտարանը


26°
27°
28°
29°
30°
41°
40°
Ադրիանուպոլիս
(Էդիրնէ)
Մարմարա
ՅՈՒՆԱՍՏԱՆ
Սեւ ծով
Վրսվիրը
Զաթալջա
ՊՈԼԻՍ
Իզմիթ
Սաքարիա գետ
Էնոս
ՄԱՐՄԱՐԱ ԾՈՎ
Դարդանել
Գելիպոլու
Իմբրոս
Մուդանիա
Չանաք-Գալէ
ԵՂԷԱՆ
Թենեդոս
Աստիճանաչափ 1:2,500,000
կմ. 20 0 20 40 60 80 100 կմ.
Պետական սահման
Երկաթուղի

ԵԼԳ ՈՒՍՏԵՐԸ

ՆԿԱՏՈՒԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Տպուած է	էջ	վերից	Տող	Պէտք է լինի
*)	5	»	15	**)
Փետր. 2ի	24	վարից	8	Փետր. 21ի
Պոլիսը	203	վերից	14	Պոլսինը

205րդ էջի վրայ Մ. Մարինինի մի յօդուածից նաեւ հետեւեալ քաղուածքը կատարած ենք.

«Կովկասը, հաւանաբար, նկատի առնուի իբրեւ մի մասը Թրքական Կայսրութեան»:

Այս քաղուածքը, իր հերթին, յօդուածագիրը առած է գնդ. Հաուսի «Դիւան»ի Դ. հատորից։

Դրքոյկի 205րդ էջը տպագրուելուց բաւական ուշ՝ մեր ձեռքն անցաւ Մոսկուա հրատարակուող «Պատմութեան Հարցեր» պարբերականի 1947 թուականի 3րդ թիւը, ուր պրոֆ. Բ. Շտէյնի մի յօդուածում նոյն քաղուածքը, առնուած դարձեալ նոյն գնդ. Հաուսի «Դիւան»ի միեւնոյն հատորից (հ. Դ., էջ 152—153), յիշատակուած է հետեւեալ ձեւով (40րդ էջի վրայ).

«Կովկասը, հաւանաբար, նկատի առնուի իբրեւ Թրքական Կայսրութեան կենդի մի մասը»:

Մենք գնդ. Հաուսի «Դիւան»ը, տարաբախտաբար, մեր ձեռքի տակ չունենք. այն համոզումին ենք, որ քաղուածքը հարազատօրէն թարգմանած է ոչ թէ Մ. Մարինինը, այլ պրոֆ. Բ. Շտէյնը։

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

1946 Օգոստ. Տիմ Ե. Միութիւնը Թուրքիոյ յանձնեց իր ծանուցագիրը Նեղուցների մասին:

Այս մեծակշիռ իրադարձով մի նոր էջ է բացւում պատմութեանը մէջ այն ուշխարհամասի, ուր գտնւում է նաեւ մեր հայրենիքը:

Դարերով մեծ հոգս այս մեծ հարցի անդրադարձը սնգամ մեծ ու հզօր պետութեանց ճակատագրի վրայ. պատմակշիռ պիտի լինեն հետեւանքները նաեւ այս հերթական տարի՝ խորհրդային նոր յուսալքի:

Այս իսկ պատճառով տեղւոյն չպատեցինք հարցը մինչ ապրիլի հանգամանքներէն հետեւցնել հայ բնութեանին:

Տարաբախտաբար, երկարեց մեր զրուցիրը: Ցանցառը մեզի չեն: Շատ է հին Նեղուցների պատմական անցեալը, եւ տրամաբանօրէն շատ է հարուստ այն նիւթը, որ կուտակուած է այս ջրանցքների շուրջ: Անկախ այս ամենից՝ եզակիօրէն բարդ է հարցի բնոյթը, ծանր է նրա ռազմա-քաղաքական կշիռը, եւ անհուանօրէն մեծ է նրա տնտեսական արժէքը:

Եթէ այսպէս չլինէր, դարերով չէր ձգձգուի այս կնճռի լուծումը:

Երկարեց մեր զրուցիրը նաեւ այն պատճառով, որ նիւթը՝ հարուստ լինելով էանցեալի՝ ինքնին չոր նիւթ է — ջրաղիներ. այսքան անհրապոյր մի հարց զէր մի չափով հետաքրքրական բնիայելու համար ընթերցողին՝ հարկաղրուեցինք բնդարձակել մեր պրպտանքի շրջագիծը եւ հրթիռնապէս դուրս գալ Նեղուցների նեղ սահմաններից, միշտ կապուած մնալով, սակայն, մեր բուն նիւթին՝ այդ նոյն Նեղուցներին:

Զուր է ասել, որ Նեղուցները մեր ուշադրությունը գրաւեցին գերակշռաբար այն սեռ ազգերի պատճառով, որ նրանք միջոց՝ իբրեւ Հայ Դատի լուծման «յուսակայանների» մէկը՝ ունեցել են մեր ճակատագրի հետ, կա՛մ անմիջապէս եւ կամ միջնորդաբար:

Վ. Ն.

17 Մայիս 1947
ԴԱՀԻՐԷ

ՆԵՂՈՒՑՆԵՐԸ
(ՎՈՍՓՈՐ ԵՒ ԴԱՐԴԱՆԵԼ)

ԹՌՈՒՑԻԿ ԱԿՆԱՐԿ

Վոսփոր եւ Դարդանել.— Աշխարհագրական ազդակը.— Ռուսիոյ ծաւալումը.— Իր պայմարը մոնդոլածին եւ թաթարածին ժողովուրդների դէմ.— «Երրորդ Հռոմը».— «Անմեղ եւ մաքուր կոյսը».— Հիւսիսի «պատուհանը» եւ ճարտի «բանալին».— Հական.— Դարերը եւ նոսանմիններ նոյնացած.— Նոյեր ամէն տեղ.— Սուէզ.— Դարաւոր մրցորդների անդրանիկ հանդիպումը Պոլսոյ ջրերում.— Խրիմի դասը:

I

Հին հելլենական աշխարհի բոլոր ծովերի և նեղուցների անունները դիցաբանական ծագում ունէին։

Ըստ հելլէն առասպելին՝ Ցովը Ինաքոսի աղջիկն էր, որին Զեւսը սիրելով՝ փոխեց ճերմակ երինջի, նրան իր կնոջ՝ Հերայի զայրոյթից պաշտպանելու համար։ Հերան անդրադառնալով եղածին՝ համոզեց Զեւսին երինջն իրեն նուիրել. Զեւսը կատարեց իր կնոջը խնդրանքը և Հերան՝ երինջն առնելով՝ նրան յանձնեց հսկողութեանը Արգոս հովուի, որ իր գլխին հարիւր աչք ունէր, որոնցից յիսունը երբ փակուէին՝ միւս յիսունը կը մնային անթարթ։

Զեւսն այս անգամ Հերմէսին դիմեց, որ՝ գնա-

լով Արգոսի մօտ՝ իր սրինգով քնացրեց նրան եւ գլուխը կտրեց։

Սակայն Հերայի զայրոյթը չարունակեց հետապընդել Յովին։

Այթուած մի ճանճից, որին ուղարկած էր Հերան, Յով խենթի նման թափառեց աշխարհի վրայ, լողալով անցաւ նախ Նեղուցից, որ այդ առթիւ Bosphoros (եզան անցք) կոչուեց, ապա անցաւ Յոնիական ծովից, որ այդպէս կոչուեց իր անունով, եւ, վերջապէս, հասաւ Եգիպտոս, ուր և վերստացաւ իր նախկին վիճակը։

Այլ է միւս Նեղուցի անուան դիցաբանական ծագումը, մէկ գծով՝ իբրև Hellespont, իսկ միւս գծով՝ իբրև Dardanelles։

Աթամասը թագաւորն էր Որքոմինէի (Բեոտիոյ մէջ)։ Կինը մեռնելով՝ նա ամուսնանում է Ինոյի հետ, որ խստիւ հալածում էր առաջին կնոջից մնացած Փրիքսոս տղային և Ելլէ (կամ Հելլէ) աղջկան։

Որթ մօրը հալածանքներից ազատուելու համար՝ Փրիքսոս իր քրոջը հետ հեծնում է ոսկեգեղմ խոյը և փորձում անցնել ասիական ափը։ Ճանապարհին Հելլէ ընկնում է ծովը և խեղդւում։

Իր անունով Նեղուցը կոչւում է Հելլեսպոնտոս։

Փրիքսոսին յաջողւում է ցամաք դուրս գալ եւ ոսկեգեղմ խոյը հասցնել մինչև Կողքիս։

Ըստ մէկ այլ առասպելի՝ Դարդանոս (Dardanos) որդին էր Զեւսի եւ յաւերժահարս Էլեկտրայի։ Իր եղբօրը սպանելով եւ փախչելով Սամոթրակէ կղզին՝ Դարդանոսը այնտեղից կտրում է Նեղուցն ու անցնում Փոքր Ասիա՝ Փռիգիոյ թագաւոր Տեւկրոսի մօտ, որից սիրով ընդունուելով՝ փեսայանում է նրան։ Տեւկրոսը հողեր է նուիրում Դարդանոսին, որոնց վրայ վերջինս կառուցանում է Տրովադան և

Տեւկրոսի մահից յետոյ հանդիսանում հիմնադիրը Տրովադայի արքայական հարստութեան՝ իր անունը տալով նաև Նեղուցին։

Բայց գանք այսօրուան։

Վոսփորը — այլ անունով՝ Պոլսական Նեղուցը (Թուրքերէն՝ Սրամբուլ Բողազը, հին բուկիկական Վոսփորը) — ունի 18 մղոն երկարութիւն եւ կէսից մինչեւ 2 մղոն լայնութիւն։*)

Դարդանելը (հին Հելլեսպոնտոսը, Թուրքերէն՝ Չանակ-Գալէսի) — ունի 48 մղոն երկարութիւն եւ 3ից մինչև 4 մղոն լայնութիւն։

Ուրեմն, ընդհանուր առումով, իր երկայնքով ու լայնքով, Դարդանելը Վոսփորի կրկնակին է։

Երկու Նեղուցներն էլ — թէ՛ Վոսփորը եւ թէ Դարդանելը — երկուական հատանք ունեն. Վոսփորում վերի հատանքը Սեւ ծովից հոսում է դէպի Մարմարա, իսկ վարինը՝ Մարմարայից դէպի Սեւ ծով. իսկ Դարդանելի մէջ վերինը Մարմարայից հոսում է դէպի Եգէական, իսկ վարինը՝ Եգէականից դէպի Մարմարա։

Երկու Նեղուցների միջև ընկած է Մարմարա ծովը (հին յունական Պրոպոնտիսը, Թուրքերէն՝ Մերմերդեմիզի), 175 մղոն երկարութեամբ եւ առաւելագոյնը 50 մղոն լայնքով։

Այլ խօսքով՝ տարածութիւնը Սեւ ծովից մինչև

---

*) **Bosphoros** — յունական բարդ բառ է եւ բաղկացած է **boûs** — եզ (սեռական կը լինի՝ **boo's**—եզան) եւ **po'ros** — ոնցք բառերից։

Մի տարօրինակ զուգադիպութիւն կայնութեան մի նոր անգլիական համարանուն **Oxford** քաղաքի անուանը. **ox** — եզ, **ford** — ջրանցք։

Այս նուազ տարօրինակն այն է, որ **ox**-ին այնքան համանիշն է բուրերէն եզն բառը — **էմիզ**։

Եգէական, Նեղուցներն ու Մարմարան հաշուելով, հաւասար է 241 մղոնի։

Մեծն Բրիտանիոյ նկատմամբ ընդունուած է ասել, թէ 226 մղոն տարածութեան ուժով նա տիրապետելում է աշխարհին,— «226 miles that rul the World»։

Այս 226ից 200ը՝ լայնքն է Հիւսիսային ծովի (Սկովտիայի արեւելեան ափից մինչև Ստաւանգեր՝ Նորվեգիոյ մէջ), 18 մղոնը՝ լայնքն է Մանշի, 8 մղոնը՝ Ջիբրալտարի, իսկ Սուէզը իր լայնքով բռնում է մի տարածութիւն, որի վրայից կարելի է դիւրութեամբ, ինչպէս ընդունուած է ասել, ֆուտբոլի գնդակ նետել։

Համեմատութիւնները պահելով հանդերձ, նոյնը կարելի է ասել այն 241 մղոնի մասին, որ Սեւ ծովից երկարում է մինչև Եգէական։

Ով տիրում է այս 241 մղոնին, նա մի զգալի չափով գունաւորում է ռազմա-քաղաքական պատկերը մի հսկայ աշխարհի։

Իր այս արժէքի մէջ է բուն պատճառը այն յաւերժական վէճերի եւ պատերազմների, որոնց ծիրը երկարում է մինչև 1200 տարիներ Քրիստոսից առաջ, երբ Ագամեմնոն յոյն զինուորներին առաջնորդեց դէպի Դարդանելի հարաւ-արեւելեան ափի մերձավայրը՝ Տրովադայի դէմ կռուելու համար։

Զուր չէ ասուած այն խօսքը՝ թէ աշխարհագրութիւնը իր քաղաքականութիւնն ունի։

Ծովերից կտրուած Զուիցերիան ծովային քաղաքականութիւն չունի, եւ չունի ռազմատորմիղի հոգ. մինչ Անգլիան չնչում է ռազմանաւերի վրայ եւ գործում՝ ռազմանաւերի միջոցով։

Նորագոյն Ռուսաստանը այն օրը միայն Նեղուցների հարց ունեցաւ, երբ ծաւալուելով, գլխաւորութեամբ իր առաջին կայսեր՝ Մեծն Պետրոսի (1672—1725), եկաւ եւ փռուեց Սեւ ծովի ափերին։

«Դարաւոր նիգերով եւ զոհողութիւններով Ռուսաստանը ստեղծեց մի պետութիւն,— ասում է ռուս երկրի մեծագոյն պատմաբանը՝ պրոֆ. Վ. Կլիւչեւսկիյ,— որի նմանը իր կազմով, տարածութեամբ եւ համաշխարհային դիրքով մեծ չգիտեմ Հռոմէական Կայսրութեան անկումից այս կողմ»։ *)

Ռուսիա, այս կոյս երկիրը իր կոյս ժողովրդով, որ քրիստոնէութիւն ընդունեց տակաւին երէկ՝ 988ին — եւ ընդունեց, յիշենք անցողակի, հայ իշխանուհու՝ Աննայի ձեռքից, որ բիւզանդական հայածին կայսրներից Ռոմանոս Բ.ի աղջիկն էր, Վասիլ Բ.ի քոյրը եւ Կոնստանդին Միրանածինի թոռը*) — եւ քրիստոնէական տարեթիւ ընդունեց ճիշտ երէկ՝ 1700 Յունուար 1ին (որ ասել է՝ 1699 Դեկտ. 24ին), այս կոյս երկիրը, որ, խոստովանութեամբը նոյն պատմաբանի՝ Կլիւչեւսկու՝ «թէ՛ իր հոգեկան եւ թէ իր նիւթական միջոցներով չի գտնուում եւրոպական այլ ժողովրդների մէջ առաջին շարքում»**), ամում եւ հզօրանում էր մի անօրինակ արագութեամբ, մի անդիմադրելի թափով։

«Զորս հարիւր տարիների ընթացքում,— նկատում է ռուս հետաքրքրական գրիչներից Լուկին,— Ռուսաստանը, միջին հաշուով, իւրաքանչիւր օր ընդարձակուած է 50 քառ. մղոն, եւ 850.000 քառ. մղոնից, որ նրա տարածութիւնն էր 1500ին, նա 1900ին հա-

*) Վ. Կլիւչեւսկիյ — «Դասընթացք Ռուսական Պատմութեան», Մաս Ա., 3րդ հր., Մոսկուա, 1908, էջ 39:

**) Ա. Ալպոյանեան — «Պատմութիւն Հայ Գաղթականութեան», Գահիրէ, 1943, էջ 342—343:

***) Կլիւչեւսկիյ — նոյն տեղը, էջ 39:

սաւ մի վիթխարի տարածութեան՝ 8.200.000 ք. մը-ղոնի»)։*

1939ին, տակաւին երկրորդ մեծ պատերազմը չսկսած, երբ Խ. Միութիւնը ընդամէնը 11 հանրապետութիւն ունէր, այս անծայրածիր և միակտուր ցամաքը դրաւում էր մեր աշխարհի մէկ-վեցերորդը, 60.000 քիլ. սահմաններով, որոնցից աւելի քան 2/3ը (43.000 քիլ.) — ծովային, իսկ մօտ 1/3ը (17.000 քիլ.) — ցամաքային։ **)

Այսօր չատ աւելի մեծ ու ընդարձակ է այս աշխարհը։

Այս անօրինակ և անընդմիջուող ծաւալումը եղաւ առաւելաբար մոնղոլ և Թրքо-Թաթար ժողովրդների հաշուին։

13րդ դարի սկզբին այն հսկայածաւալ երկիրը, որ այսօր Խ. Միութիւն անուանն է կրում, մօտաւորապէս Օբ գետից դէպի արեւելք, մինչեւ Օխոտսկեան եւ Ճապոնական ծովերը (ծայրագոյն արեւելքում), պատկանում էր մոնղոլ ցեղերին, իսկ Օբ գետից դէպի արեւմուտք, մինչեւ Ճերմակ ծովն ու Ֆինական ծոցը (հիւսիսում), մինչեւ Զեխիոյ եւ Հունգարիոյ սահմանները (արեւմուտքում) եւ մինչեւ Խրիմ ու Անդրկովկաս (հարաւում), պատկանում էր Թրքо-Թաթար խաներին, կարգուած առաւելաբար Ոսկէ Հորդայից։

---

*) Ա. Լուկին — «Մեծ Հիւսիսային Ուրուայ» («Պ. Նովոստի», Փարիզ, 25 Մարս 1940)։

**) 1939ին Խ. Միութեան բուն տարածութիւնն էր 21.300.000 ք. միլ., իսկ մեր ամբողջ մոլորակի տարածութիւնն է 149 միլ. ք. միլ. (բեւեռներով միասին), առանց բեւեռների — 134 միլ. ք. միլ., այլ խօսքով՝ Խ. Միութիւնը գրաւում է այս 139 միլիոնի մօտ մէկ-վեցերորդը, բայց ոչ իբրեւ բաժան-բաժան հողեր, այլ իբրեւ մէկ միակտուր սուխարն։

Բաւական է յիշատակել, որ «Մայրը ռուսական քաղաքների»՝ Կիեւը — Ուկրայնայի այսօրուան մայրաքաղաքը — տակաւին 1240ին գտնւում էր իշխանութեանը տակ թաթար ժողովրդի, մի վայրագ ու կռապաշտ ցեղ, որ իսլամութիւն պիտի ընդունէր 1272ին*)։

Ռուսը կարողացաւ խորտակել այս ուժը, եւ 1480ին, չուրջ երեք դար նրա լուծը կրելուց յետոյ, վերջ տալ թաթար իշխանութեանը ռուսական հողերի վրայ։

Գնացին թաթարները, բայց եկան օսմանցիները, մի առոյգ եւ ռազմունակ ցեղ, որ 1356ին Դարդանելն անցնելով եւ մէկ դար վերջ՝ 1453ին՝ Բիւզանդիոնի մայրաքաղաքին տիրելով՝ արիւնալի բախումների մէկ նոր պատմաշրջան բացաւ ռուս երկրի հեռ։

Այս բախումների մէջ է, որ մէկ անօրինակ եւ ուժգին թափով ծաւալուեց ու հզօրացաւ ռուս երկիրը։

Ըմբռնելու համար արժէքը այն ճիգի, որ ռուս երկիրը սպառեց եւրոպական հողի վրայ ոտք դրած այս նոր տարրի դէմ — մարդկային մի աւերիչ հեղեղ, որ Իրանն իբր կռուան ունէր Մերձաւոր Ասիան մինչեւ Իրան — պէտք չէ մոռանալ, որ 1453ին

---

*) Ընթերցողը որպէսզի կարողանայ գէթ մօտաւոր գաղափար կազմել 1240 թուի Կիեւի մասին, յայտնենք, որ, ըստ 11-րդ դարու եւրոպացի պատմագէտ Թիտմար Մերզբուրգսկիի, Կիեւը ունէր 400 եկեղեցի եւ 8 մեծ շուկայ, ըստ մէկ այլ եւրոպացի պատմագէտի՝ Ադամ Բրեմենսկիի — դարձեալ 11-րդ դարի գրիչ — Կիեւը իր շէնութեամբ կարող էր մրցել Բիւզանդիոնի մայրաքաղաքի հետ. ռուս մատենագրական աղբիւրներ վկայում են, որ 1071ի մեծ հրդեհին Կիեւում այրուած են մինչեւ 700 եկեղեցիներ։ (Տե՛ս, **Վ. Սալիչեւսկիյ,** — «Դասընթաց Ռուս Պատմութեան», Մաս Ա., Մոսկուա, 1908, էջ 207)։

Պոլիս ոտք կոխած Թուրքը իր արժէքով այսօրուան Թուրքը չէր։

«Արեւմտեան պետութեանց մէջ,— գրում է մի հմուտ գրիչ,— ամենէն առաջ Ֆրանսան էր, որ ստեղծեց մնայուն բանակ. այդ տեղի ունեցաւ ԺԵ. դարից ոչ առաջ, Կարլոս Է.ի ժամանակ։ Այդ շրջանին, աւելի քան հարիւր տարի առաջ, արդէն գոյութիւն ունէին ենիչէրական գնդերը, որոնց կազմութիւնը թրքական աղբիւրները հաստատում են մօտաւորապէս 1330 թուականին։ Այս պարագան պէտք չէ աչքաթող անել, երբ մենք հետեւում ենք 14րդ դարից մինչև 16րդ դարը Թուրքիոյ մղած պայքարին Եւրոպայի դէմ։ Թուրքը մեր օրերին — յետամնաց ժողովուրդ է, մինչ այն օրերին նա — ճիշտ է, միայն մէկ մարդի մէջ՝ զինուորական — բոլոր ժողովուրդներից անցած էր առաջ, եւ այստեղ էր նրա յաջողութեանց գլխաւոր պատճառը։ Միայն 17րդ դարից այս կողմ, երբ եւրոպական ցամաքի վրայ աստիճանաբար սկսեցին զարգանալ կանոնաւոր բանակները, Թուրքերի ռազմական հզօրութիւնը աստիճան առ աստիճան դիմեց դէպի անկում»։*

Բայց այդ դարում իսկ — ու դեռ բաւական երկար ժամանակ — Թուրքիան պատկառելի զինուորական ոյժ էր, մանաւանդ ցամաքային։

«Ալլահը հողը տուել է հաւատացեալին. իսկ ծովը՝ անհաւատին», ասում է Թուրքը։

Ցամաքային այս անարկու ուժի դէմ է, որ պիտի մաքառէր Ռուսիան։

«Եւրոպայի քրիստոնեայ պետութեանց մի չարք

*) **Մ. Պոկրովսկիյ** — «Թուրքիան Եւրոպայում եւ Բիւզանդիոնի անկումը» («Միջին դարերի պատմութեան թնթերցումի գիրք». ն. Գ., Մոսկուա, 1914, էջ 561—562)։

պատերազմները Թուրքիոյ դէմ,— նկատում է ծանօթ պատմաբան Ն. Կարէեւ,— լեցնում են 16րդ, 17րդ եւ 18րդ դարերի պատմութիւնը. ու տակաւին 15րդ դարի երկրորդ կէսին միտք յղացուած էր Թուրքերին Եւրոպայից քշելու։ Սակայն 16րդ եւ 17րդ դարերում չափուել Թուրքերի հետ — չափազանց դժուարին գործ էր. ապացոյց — հէնց այն պաշարումները, որոնց երկու անգամ, 1529ին եւ 1683ին, ենթարկուեց Վիեննան Սուլթանի հորդաների կողմից...»։*)

Իսկ յայտնի է, որ մասնաւորաբար 19րդ դարում եւրոպական պետութիւններից ոչ ոք Թուրքիոյ հետ պատերազմ այլեւս չունեցաւ, բացառութեամբ Ռուսիոյ, որ միայն այդ հարիւրամեակին ամբողջ չորս արիւնալի պատերազմներ մղեց Թուրքիոյ դէմ՝ նրա ուժերը վերջնապէս ջլատելով,— 1806–1812, 1828–29, 1853–1856 եւ 1877–1878 թուականներին։

Ակնարկելով Ռուսիոյ մղումին դէպի տաք ջրերն ու դէպի Բիւզանդիոնի ժառանգութիւնը՝ Զեխոսլովակիոյ հանրապետութեան նախագահը՝ Էդ. Բենեշ — սլաւ ժողովրդների պատմութեան հմուտներից մէկը — նկատում է.

«...Ռուսական նորագոյն պատմութեան վերջին չորսհարիւրամեայ շրջանին, 1472ից մինչեւ 1876ը, ռուս երկրի ձգտումը դէպի Բալտեան ծովը եւ դէպի Սիբիր ու պայքարը Լեհաստանի դէմ — այս ամէնը հասկանալի պատճառներով ժողովրդական ճիգի շատ աւելի նուազ լարում պահանջեց, քան ձգտումը դէպի Ցարգրադ (Պոլիս) եւ դէպի տաք ծով»։**)

*) **Պրոֆ. Ն. Կարէեւ** — «Դասընթացք 19րդ եւ 20րդ դարերի պատմութեան», հ. Ա., Մոսկուա, 1919, էջ 126։

) **Էդ. Բենեշ — «Սլաւ Քաղաքականութեան Պնդումը» («Վոլիա Ռոսիի», Պրագա, 1926, II, էջ 105)։

Նույն միտքը աւելի յստակ ձեւակերպուած է ռուս յարգի գրիչներից մէկի՝ Իշխան Տրուբեցկոյի կողմից.

«Եթէ մենք խորհրդածելու լինենք մեր արտաքին քաղաքականութեան գլխաւոր դէպքերի շուրջ, — նկատում է հեղինակը իր մէկ աշխատութեան մէջ՝ «Ռուսաստանը՝ իբրեւ մեծ պետութիւն» — սկսելով Եկատերինա Բ.ի տիրակալութեան շրջանից մինչեւ մեր օրերը, ապա մենք ուղղակի ապշահար կը լինենք ի տես այն դերի, որ այդ քաղաքականութեան մէջ խաղում էր Մերձաւոր Արեւելքը։ Կարելի է ասել, որ Ռուսիոյ դիրքը Եւրոպայում մի զգալի չափով նախաձեււում էր նրա ունեցած շահերով Սեւ ծովում եւ Բալկաններում։ Այլ խօսքով այս նշանակում է, որ վաղնջագոյն ժամանակներից աշխարհագրութիւնը եւ պատմութիւնը այստեղ ըստերծած են Ռուսիոյ կենսական շահը»։

Այս ընդհանուր տեսութեան մէջ որոշակի իմաստ դնելով՝ հեղինակը վկայագրում է.

«Եթէ մենք փորձենք թափանցել մեր հարիւրամեայ յարաբերութեանց իմաստին Թուրքիոյ հետ, ապա դիւրութեամբ կ'ընդնշմարենք, որ հնուց ի վեր կարմիր թելի նման այդ յարաբերութեանց միջից անցնում են երկու հիմնական դրդապատճառներ, — մեր մատնոգութիւնը քրիստոնեայ ազգաբնակութեան ճակատագրի մասին և Նեղուցների հարց»*)։

Երկու գծերով էլ—Նեղուցներ և Քրիստոնէութիւն — Ռուսաստանը եթէ շահեր չապահովէր իրեն, այլ շահեր կորցնէր, ի հարկէ, ո՛չ կը հետաքրքրուէր և ոչ էլ գոհողութիւններ կը ստանձնէր։

* Ibid, էջ 99:

Այս գծերով նա իր ծաւալումի և տիրակալութեան ճամբաներն էր հարթում Բալկաններում եւ հարաւի տաք ջրերի վրայ։

Խօսելով Համայն Ռուսիոյ Մեծն Իշխան Իւան Գ.ի ամուսնութեանը մասին բիւզանդական վերջին իշխանուհու՝ Սոֆիա Պալէոլոգի հետ (1472ին), մի ամուսնութիւն, որով բիւզանդական երկգլխանի Արծիւը՝ իբրև պետական զինանշան՝ փոխանցում էր Ռուսիոյ, Իշխան Տրուբեցկոյ իր նոյն աշխատութեան մէջ — «Ռուսաստանը՝ իբրեւ մեծ պետութիւն» — նկատում է.

«Բիւզանդական երկգլխանի Արծուի խորհրդապաշտ աւանդը, որ դրուած էր Իւան Գ.ի ամուսնութեան հիմում Սոֆիա Պալէոլոգի հետ, ուղղափառութեան պաշտպանի դերը ինքնին փոխանցում էր ռուս ինքնակալի գահին։ Բիւզանդիոնը երկրորդ Հռոմն էր, Մոսկուան — երրորդ, իսկ չորրորդ Հռոմ չի՛ կարող լինել»։ *)

Հռոմէական կայսրութեան ստացուածքների տիրացման այս ճանապարհով է անա, բայց միայն ռուսական գայթակղի տակ, որ Մոսկուան տանում էր իր քաղաքականութիւնը Նեղուցների հարցում եւ բալկանեան ու մերձ-արեւելեան քրիստոնեայ ժողովուրդների մէջ։

*) Ibid, էջ 99:

Անցողակի յիշատակենք, որ ստացուածքը պատկանում է ռուսական նեւագոյն հաղարներից Պսկովի վանքի վանահօր՝ Ֆիլոթէյին, որ ապրել է 15-րդ դարում:

Բուն ստացուածքը նեւեւեալ ձեւն ունի.— «Երկու Հռոմ ընկել են (այսինքն՝ բուն Հռոմը եւ Պոլիսը.—Ն.), երրորդը (այսինքն՝ Մոսկուան.—Ն.) կանգնած է, իսկ չորրորդ Հռոմ չի՛ կարող լինել»:

Այդ դարից այս կոլմ ռուս երկրի մէջ շարունակ կրկնուել է նշանաւոր վանահօր խօսքը: (Տե՛ս, **Պրոֆ. Պ. Միլիւկով** — «Գկնարկներ Ռուս Մշակոյթի Պատմութեան», հ. Ա., Փարիզ, 1937, էջ 26):

Աշխարհագրությունը — իր քաղաքականությունն ունի։

Եթէ պիտի ապրէր Ռուսաստանը, ապա ցրտաշունչ հիւսիսից նա պիտի իջնէր դէպի տաք ու կենսատու հարաւը, իսկ իր անծայրածիր ցամաքների բովանդակ ծանրութեամբ ու հզօրանքով հարաւ իջնելով ու փեսայանալով Սեւ ծովի հետ, ուզէր թէ չուզէր, իր կամքով թէ իր կամքից անկախ, պիտի փորձէր ոտք դնել այդ ծովի մէջ եւ այնտեղից էլ՝ նեղուցները կտրելով՝ անցնել աւելի հեռուները՝ տաք ջրերի վրայ տարուան բոլոր օրերին ազատօրէն նաւարկելու համար։

Սուլթանները յիմար մարդիկ չէին. այն օրից ի վեր — 1453 Մայիս 29 — երբ Մուհամմեդ Բ. տէր դարձաւ Բիւզանդիոնի մայրաքաղաքին և Ֆաւթիհ — յաղթական — տիտղոսով անցաւ պատմութեան, այդ օրից այս կողմ Պոլսոյ գահակալները մէկ գերագոյն նպատակ ունէին,— ի գին ամէն զոհողութեան Սեւ ծովն ու Նեղուցները ոչ թէ ջրի վրայ պաշտպանել, այլ՝ ցամաքի, այլ խօսքով՝ դէպի հարաւ Ռուսիոյ էջքը արգիլելու համար ժամառաջ դէպի հիւսիս բարձրանալ՝ նրա առջեւ ծաւալումի բոլոր ճամբաները կտրելով։

Պոլսոյ գահակալները այս ուժը չունեցան սակայն։

Հին Ռուսիոյ հմուտ դիւանագէտներից Եմելիան Ուկրաինցեւ (մեռած 1708ին), որ ռուսական երեք ցարերի ժամանակ — Ալեքսէյի, Ֆէոդորի եւ Մեծն Պետրոսի — փաստօրէն վարում էր իր երկրի արտաքաղաքականությունը, 17րդ դարի վախճանին, իբրեւ Ռուսիոյ դեսպանը Պոլսոյ մէջ, յանուն կայսեր՝ Մեծն Պետրոսի՝ դիմելով Սուլթանին՝ խնդրում էր ազատ հոչակել նաւարկությունը Սեւ ծովի վրայ։

Բարձրագոյն Դրան խորհրդոյ թարգմանն ու լիազօր բանագնացը՝ Աղեքսանդր Մաւրոկորդատոյ — ծագումով յոյն և դաւանանքով ուղղափառ — յանուն իր Վեհապետի պատասխանում է.

«Թուրքիան Սեւ ծովը պահպանում է իբրեւ մի անարատ և անմեղ կոյս, որին ո՛չ ոք կարող է մերձենալ. ուստի Սուլթանը պիտի նախընտրէր թոյլ տալ, որ ամէն ոք իր աղիքների մէջ մտնի, քան թէ օտար նաւեր Եւաքինեան (նախնիներին ծանօթ Սեւ ծովը.—Ն.) ջրերի վրայ նաւարկեն»։*)

Այս «կոյս»ը այն գեղեցկուհիներից չէր սակայն — թո՛ղ թէ հազուագիւտօրէն քչաթիւ — որոնց տիրանում էին սուլթանները իրենց գահի ուժով եւ նրանց քաղցրութիւնները վայելում իրենց կանանոցներում։

Սեւ-ծովեան գեղեցկուհին մէկ հատիկ էր, անկրկնելի եւ անփոխարինելի. սուլթանները դիւրութեամբ նրան չէին կարող բանտել իրենց ռազմաքաղաքական հարեմում։

Այս գեղեցկուհու ազատագրման գործը վիճակուեց Ռուսաստանին։

Կարիքը մայրն է նաև քաղաքակա՛ն գիւտերի, քաղաքակա՛ն նախաձեռնութեանց։

Երբ Մեծն Պետրոսը իր կայսրութեան մայրաքաղաքը՝ Պետերբուրխը — որ յետոյ կոչուեց Սանկտ-Պետերբուրգ, ապա՝ Պետրոգրադ, իսկ այսօր՝ Լենինգրադ — 1703 Մայիս 16ին հիմնադրեց հիւսիսի մէկ մառախլապատ ու ճահճոտ անկիւնում, Նեւայի գետաբերանին ընկած կղզեակների վրայ, նա այդ վայրն ընտրեց ոչ այն պատճառով, որ յատուկ սէր

*) Վ. Նիկիֆոր — «Պատմութեան դասեր» («Ռ. Նովոստի», Փարիզ, 30 Օգոստ. 1946, թիւ 68)։

ունէր դէպի մառախուղն ու ճահիճները։ Կարի՛ քը նրան տարաւ այդտեղ, իր նրաածաւալ կայսրութեան այն միակ անկիւնը, որտեղից նա կարող էր, ըստ Պուշկինի խօսքի, «պատուհան բանալ դէպի Եւրոպա», ուր նա կարող էր մի նաւակայան ունենալ դէպի յառաջադէմ ու բարգաւաճ աշխարհը, դէպի անսասոյց ծովերն ու օվկիանոսները։

Կայսրութեան նոր մայրաքաղաքի հիմնադրումին դառնալով՝ ռուս մեծանուն պատմաբաններից Ս. Սոլովեով (1820—1879) նկատում է.

«Բրիստոսի թուականութեան 9րդ դարում Նեւայի գետաբերանից սկսուեց մեծ ճանապարհը Վարեագների աշխարհից (Սկանդինաւեան երկրներ.— Ն.) դէպի Յոյների երկիրը։ Դարի կէսին այդ ձեւով ծիլ տուաւ Ռուսաստանը։ Սակայն յաջորդ ութ և կէս դարերին նա չարունակ ծաւալուեց դէպի արեւելք, հասաւ Արեւելեան օվկիանոսին, բայց ի վերջոյ նա խիստ կարօտը քաշեց Արեւմտեան ծովի ու կրկին դարձաւ դէպի ետ՝ իր վերածնունդի միջոցները նրանից քաղելու համար»։*)

Պատմաբանը մի քանի տողերի մէջ ճշտիւ գրած է իր հայրենիքի շուրջ ինը դարերի պատմութիւնը։ Մոռացած է միայն մատնանշել, որ հիւսիսի սլաւը վարեագների՝ առաջնորդութեամբ է, որ շարժուած է դէպի հարաւ՝ դէպի Սեւ ծով ու Բիւզանդիոն, մինչ առանց վարեագների, բուն ինքը սլաւը, աւելի ճիշտը՝ սլաւացած վարեագը — այն՝ որ առեղծուածօրէն ռուս անունը կրեց և այդ անմեկնելի անունը իր երկրին տուաւ — դարեր շարունակ, յամառաբար և անընդմիջաբէն, յառաջացած է դէպի արեւելք, հասած նրա ծայրագոյն կէտին՝ ովկիանոսին, յուսախաբուած իր երազների մէջ ու կրկին դարձած այն կէտին, որտեղից մեկնած էր ութ և կէս դար առաջ, բայց միայն ուրիշների գլխաւորութեամբ։

Բայց դառնալով դէպի ետ՝ ինչո՞ւ Ռուսիա դէպի հարաւ չշարժուեց, այլ վերստին դէպի հիւսիս գնաց՝ դէպի իր պետականութեան ծննդավայրը։

Ինչո՞ւ ծաւալումը դէպի հարաւ նա կատարեց աւելի ուշ, կատարեց այն ժամանակ, երբ հիւսիսում հզօրապէս ամրացած էր արդէն։

Պատմական այս պրպտանքը դուրս է մեր նպատակից, ստոյգն այն է սակայն, որ հիւսիսի «պատուհանը» քիչ եկաւ իր տնտեսական և ռազմա-քաղաքական վիթխարի թոքերին։

Շնչելու համար Հսկան դարձաւ իր չորս կողմը և ամենից բնական «պատուհանը» գտաւ հնուց ի բրեն ծանօթ այն Նեղուցներն մէջ — Վէսփոր և Դարդանել— որոնք Սեւ ծովին խարսխած երկրները կարող էին ազատօրէն կապել արտաքին աշխարհին։

Ասքը մի Ռումանիոյ, մի Բուլգարիոյ մասին չէր, որոնց ո՛չ ազատ ելքը Սեւ ծովից դէպի Միջերկրական եւ ոչ էլ ազատ մուտքը Նեղուցներից դէպի Սեւ ծով չէր կարող մտահոգութեան մատնել ե՛ւ ոչ ոքի։

Ինդիրը դառնում էր մի ճշմարիտ Հսկայի շուրջ, որի ազատ շարժումները Նեղուցներից դէպի դուրս և դէպի ներս կարող էին ծանրօրէն տագնապի մատնել քաղաքական աշխարհը։

Ու նոյնը նաեւ այն դէպքում — միշտ նոյն Հսկան նկատի առնելով — երբ ուրիշնե՛ր, իրեն չափ հզօր ու պատկառազդու, երթեւեկի նոյն ազատու-

*) Ս. Սոլովեով — "Ռուսիոյ Պատմութիւնը Հնագոյն ժամանակներից„, Ս. Պետերբուրգ. 1896, Գիրք Դ. (ն. XI—XV), 2որ հրատ., էջ 1270:

թիւնն ունենային՝ այս անգամ իրե՛ն տագնապի մատնելով։

Եւ իրաւամբ. ռուսական Հսկայի՝ էջքը դէպի Սեւ ծով ու դէպի Նեղուցները լի է քաղաքական խորագոյն տագնապներով եւ արիւնալի բախումներով։

Տկար է Թուրքիան այսօր, բայց նա տկար չէր երէկ։

«Ռուս պետական մարդիկ,— նկատում է ռուս մեծագոյն պատմաբանը,— Մեծն Պետրոսի մահից յետոյ վախենում էին Ռուսիոյ եւ Թուրքիոյ մէկմէկի դէմ պայքարից եւ այդ պատճառով վստահելի զինակից էին որոնում»։*)

Որոնում էին ոչ միայն ռուսները, այլեւ Թուրքերը. եւ իրողութիւն է, որ Թուրքերը աւելի դիւրութեամբ էին զինակից գտնում, քան ռուսները։

Մեծն Պետրոսը մեռաւ 1725ին. ուրեմն նաեւ այդ Թուականից այս կողմ իր դէմ մերթ զօրաւոր Թուրքիան ունենալով առանձին եւ մերթ նրան ունենալով այլ զինակիցների հետ՝ ռուս երկիրը գերերով արիւն Թափեց իր բնական սահմաններին հասնելու համար։**)

---

*) Պրոֆ. Ա. Կլիուչեւսկիյ — «Դասընթացք Ռուս Պատմութեան», Մաս Ե., Պետերբուրգ, 1922, էջ 22:

**) Մեծն Եկատերինան 1768ի Հոկտ.ին պատերազմ հռչակեց Թուրքիոյ դէմ: Այս կապակցութեամբ ծաւալուն քարոզչութիւն էր տարւում Թուրքիան Եւրոպայից բեռլու: Պատերազմից միչ առաջ աբխազական Վոլտեր. նամակ ուղղելով Եկատերինային, այն յոյսն էր յայտնում, որ մոս ապագային, պատերազմի յաջող աւարտումով, Պոլիսը կը դառնայ ռուս Կայսրութեան մայրաքաղաքը...

«Հեմիաքը արագ պատմում է, սակայն գործ արագ չի կատարում», ասում է ռուսը.

Իր պատմութեան վերջին աւելի քան երկհարիւրամեակին ռուս ժողովուրդը Նեղուցների մէջ միչտ իր տան դռները տեսաւ, որոնց բանալիները գտնւում էին, սակայն, օտարների՝ ձեռքում։

Այս վերջիններն անտեղեակ չէին Ռուսիոյ փափագին։

Իր կայսեր՝ Աղեքսանդր Գ.ի հրահանգով գերմանեւուս գաղտնի համաձայնութեան շուրջ բանակցութիւններ վարելով գերման կանցլերի Բիսմարկի հետ, ռուս դեսպանը Բերլինի մէջ՝ Պաւել Շուվալովը՝ հետեւեալ ձեւով է արձանագրում 1887 Մայիս 17ին իր ունեցած տեսակցութիւնը «երկաթեայ վարչապետ»ի հետ.

«Կանցլերը նորէն դարձաւ իր սիրելի նիւթին. կրկին սկսաւ խօսել Պոլսոյ, Նեղուցների մասին, եւ այլն, և այլն։ Նա կրկնեց ինձ, որ Գերմանիա չատ ուրախ պիտի լինէր, եթէ մենք հաստատուէինք այնտեղ եւ, ինչպէս ինք արտայայտուեց, մեր ձեռքերի մէջ առնէինք մեր տան բանալիները»։*)

Արդար և իրաւացի գտնելով հանդերձ Ռուսաստանը իր ձգտումի մէջ, օտարները, այնուամենայնիւ, միչտ Նեղուցների մէջ տեսան իրենց ապահովութեան բանալիները՝ հիւսիսի անհանդարտ Հսկան իր ծովածաւալ աշխարհում բանտուած պահելու համար։

Պայքարը Ռուսաստանի՝ դէմ էր միչտ, բայց ոչ նրա կրած չապիկի՝ ճերմակ կամ կարմիր։

Որովհետեւ սպառնացող ոյժը չապիկի մէջ չէր, այլ չապիկը կրողի։

Հզօր էր Ռուսաստանը երէկ՝ երբ երկրում ցարիզմն էր իշխողը։

---

*) "Պատմութիւն Դիւանագիտութեան", հ. Բ., 1945, Մոսկուա, էջ 94:

ՀԱՅԿ. ԲԻՒՐՈ
Գ.ԲԻՒՐՈ
A.R.F. BUREAU
LIBRARY

Հզօր է Ռուսաստանը այսօր՝ երբ երկրում իշխողը բոլշեւիզմն է։

Ցարի՛զմն էր ուժեղ Ռուսաստանով եւ ոչ Ռուսաստանը՝ ցարիզմով։

Նոյնը եւ այսօր։

Բոլշեւի՛զմն է հզօր Ռուսաստանով եւ ոչ Ռուսաստանը՝ բոլշեւիզմով։

Բոլշեւիզմի դրօշակիրը եթէ Ալբանիան լինէր՝ մեր աշխարհում հակաբոլշեւիկ ճակատ չէր կազմուի։

Բայց որովհետեւ անյարմար է ասել, թէ մենք Ռուսիո՛յ դէմ ենք մաքառում, կուռում ենք նրա՛ն ոգար պահելու համար, ուստի մաքառողները երէկ ասում էին, թէ կռուում են ցարիզմի՝ ռուսական ռեակցիայի դէմ, իսկ այսօր ասում են, թէ կռուում են բոլշեւիզմի՝ ռուսական յեղափոխութեան դէմ։

Ամերիկեան գրիչներից Վինսընթ Շինան արդար իրաւունքով նկատում էր «Էժիա» պարբերականի 1946ի Սեպտ.ի թիւում.

«Զարմանալի է. հէնց որ Ռուսաստանը ծովի վրայ ելք է ուզում՝ կայսերապաշտները անմիջապէս սկսում են բարոյականից ճառել»։ *)

Սակայն «բարոյական»ը, «յետաշրջութիւն»ն ու «յեղափոխութիւն»ը դեր չունեն մանաւանդ Նեղուցների հարցում, ուր նոյնանում են բոլոր գոյները, լինի Ռուսիոյ մէջ, լինի նրա սահմաններից դուրս։

Ռուս հասարակական մտքի բոլոր թեւերը — ամենէն աջից մինչեւ ամենէն ձախը՝ միապետական թէ ազատական, յետադիմական թէ յեղափոխական, սլաւոնասէր թէ արեւմտական, էս-էր, մենշեւիկ թէ բոլշեւիկ — սրանք բոլորը, անխըտրաբար ամէնքը, Նեղուցների հարցում միշտ նոյն տեսակէտն ունեցան. նրանք դատեցին իբրև ռուս, իբրև մէկ ընդհանրական հայրենիքի զաւակներ, ուստի և դատեցին միակերպ։

Անգամ այն դէպքերում, երբ մեր թուած հոսանքներից մէկը կամ միւսը, քաղաքական անցքերի անդիմադրելի հարկադրանքի տակ, այս կամ այն զիջումը կատարեց, խորքին մէջ այդ զիջումը գործելակերպային խաղ եղաւ, բայց երբե՛ք սկզբունքային նահանջ։

Առնենք օրինակներից թարմագոյնը։

1917 Հոկտ. 25ին իշխանութեան գալով՝*) բոլշեւիկները իրենց անգրանիկ հրամանագրերից մէկը ուղղեցին «Ռուսիոյ եւ արեւելքի բոլոր աշխատաւոր մուսուլմաններին»։

1917 Նոյ. 24 հրամանագրով (դեկրետ), ստորագրութեանը տակ Լենինի (իբրև Ժողովրդական Գործավարների Խորհրդի նախագահ) և Ստալինի (իբրև Ազգութեանց Գործերի Ժող. գործավար), նրանք Պոլսոյ (որ ասել է՝ նաև Նեղուցների) մասին հետեւեալն էին յայտարարում.

---

*) "Հայրենիք„, 11 Հոկտ. 1946:

*) Կարելի չէ խոր ցաւով չնկատել այն անփութութիւնը, որ կայ բոլշեւիկ հրատարակութեանց մէջ. օրինակ, Լ՚ութ սեղմուած է առաջին բոլշեւիկ կառավարութիւնը. ըստ մի շարք աղբիւրների՝ 1917 Նոյ. 6—7ին (նոր տոմարով) կամ Հոկտ. 24—25ին (հին տոմարով). եւ թուականները այսման խստօրէն ճշտուած թէ՛ մէկ եւ թէ միւս տոմարով (տե՛ս, օրինակ, "Լենին եւ Ստալին„, հ. Բ., 1936, էջ 5). ըստ այլ աղբիւրների՝ նոր տոմարով Նոյ. 9ին կամ ոնով՝ Հոկտ. 27ին (տե՛ս, օրինակ, «Պատմութիւն Դիւանագիտութեան», հ. Բ., էջ 303):

Եւ այսպէս — յանուխ:

«Մենք յայտարարում ենք, որ տապալուած ցարի գաղտնի դաշինքները Պոլսոյ գրաւման մասին, հաստատուած տապալուած Կերենսկու կողմից, — այժմ պատառոտուած եւ ոչնչացուած են։ Ռուսական Հանրապետութիւնը եւ Կառավարութիւնը՝ ժողովրդական Գործավարների Խորհուրդը՝ դեմ են ուրիշների հողերի գրաւման։ Պոլիսը պէտք է մնայ մուսուլմանների ձեռքը»։ *)

Այս հրամանագրի վրայից վեց տարին չբոլորած՝ երբ Խորհրդային Ռուսիա անդարձ պատմութեան յանձնած էր Բրեստի ամօթալի օրերը և ամբացած իբրև իշխանութիւն, նրա ներկայացուցիչը Լոզանի Խորհրդաժողովում՝ Չիչերին՝ իր խօսքն ուղղելով լորդ Քըրզընի — այն մարդուն, որ այդ Խորհրդաժողովում կարողացաւ Անգլիան փաստական տէրը դարձնել Նեղուցների — իր 1922 Դեկտ. 6ի ճառի մէջ յայտարարում էր.

«Էնվերով նախագահին (ակնարկը՝ Քըրզընի.— Ն.)՝ ես այն տպաւորութիւնն առի, թէ նրա զեկուցման հիմնական նպատակն է (Նեղուցների շուրջ) ստեղծել մի սիստեմ, ուղղուած Ռուսիոյ դէմ։ Մենք ձեզ խաղաղութիւն ենք առաջարկում, մինչ դուք անվերջանալիօրէն ձգձգում էք պայքարը մեր դէմ։ Ռուսիա գտնւում է նոր շրջանի նախասեմին, և մենք ուզում ենք այդ շրջանը սկսել՝ մեր շուրջը ստեղծելով խաղաղութեան հաստատուն պայմաններ, մինչ դուք ուզում էք մեզ դնել այնպիսի պայմանների մէջ, որոնք մեզ պայքարի պիտի մղէին։ Ռուսական յեղափոխութիւնը ռուս ժողովրդից կերտած է մի ազգ, որի բովանդակ կարողութիւնը կենտրոնացած է իր կառավարութեան մէջ*

*) "Հոկտեմբերեան յեղափոխութեան դեկրետներ», հ. Ա., էջ 134

*մի ուժով, որ իր նախընթացը չունի պատմութեան մէջ. եթէ այդ ժողովրդին պայքար պարտադրուի՝ նա անձնատուր չի՛ լինի։ Դուք, թերեւս, անհանգիստ էք նրա համար, որ մեր հեծեալները կրկին երեւացել են Պամիրի բարձունքների վրայ, ու նաև նրա համար, որ ձեր առջեւ այլեւս չունէք մի կիսապուշ-ցար, որ 1895ին ձեզ զիջեց Հինդու-Կուշի լեռնաշղթան։ Բայց մենք ձեզ ոչ թէ պայքար, այլ խաղաղութի՛ւն ենք առաջարկում, հիմ առնելով ամբարտակի սկզբունքը մեր միջեւ ու նաեւ սկզբունքը Թուրքիոյ ազատութեան եւ գերիշխանութեան»։ *)*

Խորհրդաժողովը... Լոզանո՞ւմ է, խօսքը... Նեղուցների՞ մասին, մինչ սպառնալիքը ուղղուած է Հնդկաստանի՞, Պամիրի բարձունքներին սաւառնող ռուս արծիւների անունից...

Չիչերինի ճառի մէջ բնաւ պատահական չէ Հինդու-Կուշի յիշատակութիւնը։ Խօսքը այն լեռնանցքի մասին է, որտեղից ցարական շրջանի մեծանամբաւ ռուս զօրավարը՝ Սկոբոլեւ — մէկը այն յաղթական ռազմավարներից, որ Ռուսիան առաջնորդեց դէպի Միջին Ասիա, մինչեւ հնդկական սահմանները — ծրագրած էր 1880ական թուականներին ռուսական բանակները երկու ուղղութեամբ՝ Հերատից դէպի Կաբուլ և Սամարղանդից Հինդու-Կուշի վրայով դէպի Փէնջաբ՝ տեղաշարժել Անգլիոյ դէմ, դէպի Հնդկաստան.

«Այս լեռնաշղթան գործնապէս այնքան էր զբաղեցնում Սկոբոլեւին,— նկատում է քաջանմուտ ռուս պատմաբանը՝ բոլշեւիկ Պոկրովսկիյ,— որ նա այդ ուղղութեամբ մինչեւ իսկ մի չարք փորձեր

*) "Պատմութիւն Դիւանագիտութեան», հ. Գ., 1945, Մոսկուա, էջ 219:

կատարեց, որոնք համոզեցին իրեն կայելիութեանը մէջ Հինդուս-կուշը անցնելու ունգամ Փետրուարին, հրետանիով միասին, երբ լեռնային այդ ամբարձ ուղեւորը ծանկուած էին լինում ձիւնով»։ *)

Աշնարդի մէկ ծայրից միւսը ծաւալած հզօրները լսվանում սակարկում էին արեւմուտքի՛ դրոների շուրջ, երբ իրենց մտքի մէջ արեւելքի՛ դրոները նկատի ունէին։

Ու նոյնը նաև երէկ։

1869 Նոյ. 17ին բացուեց Սուէզի ջրանցքը՝ հիմից փոխելով պատկերը այն աշխարհամասի, որ փուռած է Ատլանտեանից մինչև Հնդկական ովկիանոս։

Մասամբ նաև ա՛յս ջրանցքին հակազդելու համար՝ 1891ին ձեռնարկուում է Սիբիրեան հռչակաւոր երկաթուղագծի կառուցմանը, որ ամբողջ 8678 քիլ. երկարութեամբ մի անծայրածիր գիծ է, եւ այն էլ ոչ թէ Ռուսիոյ արեւմտեան սահմաններից, այլ միայն Մոսկուայից մինչեւ Վլադիվոստոկ հաշուելով։

«1892 Նոյ. 18ին Աղեքսանդր Գ.ին ներկայացրած իր զեկոյցին մէջ,— նկատում է պրոֆ. Խվոստով,— ելեւմտական նախարար Ս. Վիտտէն մատնանշում էր, թէ ինչպէս Սիբիրեան երկաթուղագիծը Սուէզի ջրանցքից դէպի իրեն պիտի քաշի ապրանքային փոխադրութիւնները և դառնայ ռուս արդիւնաբերութեան արտադրանքի փոխադրման խողովակ դէպի չինական շուկան»։ **)

*) Մ. Պոկրովսկիյ — «Ռուսաց Պատմութիւն», հ. Ե., 2ոդ հրատ., Մոսկուա, էջ 323:

**) «Պատմութիւն Դիւանագիտութեան», հ. Բ., էջ 112:

Հնդկաստանին սպառնալու գնով Ռուսիան պաշտպանելով Նեղուցների հարցում, Չիչերին, որի կառավարութիւնը ստորագրած էր 1917 Նոյ. 24ի հրամանագիրը Պոլսոյ և Նեղուցների մասին, նոյն Լոզանի Խորհրդաժողովում ազդարարում էր.

«Նեղուցների հարցի լուծում, առանց Ռուսիոյ համաձայնութեան, չկայ և չի կարող լինել... Իսկ Ռուսիան չի կարող հաշտուել Նեղուցների հարցի լուծման մի այնպիսի ձեւի հետ, որ դէմ է իր շահերին»։ *)

Չիչերինից աւելի քան մէկ դար առաջ, ռուս պետական կանցլերը՝ կոմս Կարլ Նեսելրոդէ (1780-1862) — այն՝ որ 1815ին Աղեքսանդր Ա.ի հետ մասնակցեց Վիեննայի Կոնգրեսին — գրում էր.

«Բաւական է մի հայեացք նետել քարտէսին՝ հասկանալու համար, որ այն օրից ի վեր, երբ ռուսական գրաւումները հասան մինչեւ Սեւ ծով, այդ օրից այս կողմ ազատ հաղորդակցութիւնը Սեւ ծովից դէպի Միջերկրական դարձաւ Ռուսիոյ հիմնական պահանջներից մէկը»։ **)

Նեղուցների հարցում գոյն չկայ նաև Անգլիոյ մէջ. նոյնն են մտածումները թէ՛ պահպանողական Չըրչիլի եւ թէ աշխատաւորական Բեւինի։

«Պոտսդամում,— յայտարարում էր Չըրչիլ 1946 Մարտ 15ին Նիւ Եորքում արտասանած իր ճառի մէջ,— անգլիացիք և ամերիկացիք Խ. Միութեան առաջարկեցին երաշխիք Նեղուցների լիակատար ազատութեան մասին, խաղաղութեան և պատերազմի ժամանակ, թէ՛ ռազմական եւ թէ առեւտրական նաւերի համար։ Թուրքիա պիտի տար այս

*) «Վոսիոր եւ Դարդանել» ("Ռ. Նովոստի", 23 Օգոստ. 1946, թիւ 67):

**) Նոյն տեղը:

երաշխիքը։ Բայց մեզ ասուեց, թէ այս բաւական չէ, թէ Ա. Միութիւնը ուզում է Նեղուցներից ներս մի ամրոց, որտեղից նա պիտի կարողանար իշխել Պոլսոյ վրայ։ Սա Նեղուցները բանալ ասել չէ. սա Նեղուցները փակել ասել է, յօգուտ միայն մէկ ազգի»։

Խօսքից գործի դառնալով՝ Մեծն Բրիտանիայ երէկի վարչապետը յարում էր.

«Եթէ Ա. Միութիւնը յամառի ճնշում գործ դնել Թուրքիոյ վրայ, այդ պարագային Միացեալ Ազգերի Կազմակերպութեանն է մնում որոշում տալ այս մասին, եւ սա մեծ փորձութիւն պիտի լինի Համաշխարհային Կազմակերպութեան համար։ որի վրայ այնքան մեծ յոյսեր դրուած են»։ *)

Այլ խօսքով՝ այդ Կազմակերպութիւնը, ուզում էր ասել Չըրչիլը, եթէ Թուրքիոյ հետ կողք-կողքի չծառանայ խորհրդային «ճնշման» դէմ՝ կարող է դադարել գոյութիւն ունենալուց...

Ահա եւ աշխատաւորական Բեւինը։

Խօսելով Նեղուցների և «երկու նահանգ»ների՝ Կարսի և Արդահանի մասին, Անգլիոյ արտ. գործոց նախարարը Համայնքների Տան 1946 Փետր. 2ի նիստին յայտարարում էր.

«Մանր է կշռում Թուրքիոյ խնդիրը Միջին Արեւելքի կնճռի մէջ։ Այս խնդիրը և՛ ուզեցի Մոսկուայում (ընդգծումը՝ մեզանից.—Ն.)։ Անգլիական կառավարութիւնը մտահոգ է սահմանային այս խնդրով, որ կատարելապէս ջղերի պատերազմի մի տեսարան է պարզում։ Նկատառման արժան երկու կէտ կայ այստեղ,— Նեղուցների խնդիրը և ապա երկու նահանգների»։ *)

*) „Ցուսաբեր", 18 Մարտ 1946։

*) Անցողակի յիշատակենք, որ խօսքը Մոսկուայի այն խորհրդաժողովի մասին է, ուր ներկայ էին Բրնզ, Բեւին և Մոլոտով։ Եւ որ տեւեց 1945 Դեկտ. 16ից մինչեւ Դեկտ. 26։

Ինչպէս յայտնի է, այդ խորհրդաժողովի բացումից ետոյ երեք տարի առաջ, 1945 Նոյ. 27ին, Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր ծանօթ դիմումն ուղղեց Երեք մեծ պետութեանց պետերին՝ Ստալինի, Տրումընի և Էթլիի։

Քիչ վերջ, 1945 Դեկտ. 2ին, խորհրդային Միութեան Գործավարների խորհուրդը "Իզվեստիա"ի եւ "Պրաւդա"ի մէջ հրապարակեց իր արձակած պատմական հրամանագիրը տարագիր հայութեան հայրենադարձի մասին։

Այս մթնոլորտի մէջ է անշա, որ Բեւին, **իր իսկ ճանաչեցութեամբ**, ինչպէս իմն է ասում, յուզած է հայկական պահանջքներից Կարսի եւ Արդահանի խնդիրը։

Բեւին, տարաբախտաբար, չի ասում, թէ **կանխապէս**. Մոսկուայից առաջ, Ա. Միութիւնը եթէ դրած չէր ոչ միայն Նեղուցների, այլ եւ **հայկական հողերի** պահանջը, ապա ինչո՞ւ իմն խնդիր չեղած տեղ խնդիր յուզած է։

Այս հարցումին մասամբ միայն պատասխանում էր Բրնզ իր այն հարցի մէջ, որ նա արտասանեց Ուաշինգտոն, 1945 Հոկտ. 10ին։

Հիւս. Ամերիկայի արտ. գործոց քարտուղարը իր այդ ծանուցմամբ զբաղուած էր ներքինակուռապէս վկայելու, որ Կարսի եւ Արդահանի մասին խօսք դարձած է Մոսկուայից առաջ, Պոտսդամի խորհրդաժողովում (1945 Յուլիս 17 — 1945 Օգոստ. 2), ուր Ա. Միութիւնը պահանջած է "**ռազմագիտական այդ երկու լեռնաշրջանները վերադարձնել Հայաստանի**" (Բրնզի հարց տ՛ս — "Le Progrés Egyptien", Փահիրէ, 11 Հոկտ. 1945)։

Սակայն Պոտսդամը եղած էր... 1945ի՛ն. մինչ մենք մտած էինք արդէն... 1947ի՛ մէջ։

Համ. Պալատում 1946 Հոկտ. 22ին արտասանած քարոզական իր բնդարձակ ճառի մէջ — ետոյ երկու ժամ տեւողութեամբ — Բեւին, անդրադառնալով գերման հարցին, յայտարարում էր.

«**Անգլիս որոշեցիր չէ գործադրելու Պոտսդամի համաձայնութեան այն մասերը, որոնք նպաստաւոր չեն իրեն, որովհետեւ չեն գործադրուում** (ուրիշների կողմից.—Ն.) **նոյն համաձայնութեան ստորեր մասերը**» ("Պրաւդա", 24 Հոկտ. 1946)։

Արդեօք նոյնը չէ՞ կացութիւնը նաեւ թրքական հարցի մէջ։

Անդրադառնալով այս վերջին կէտին՝ Բեւին յայտարարում էր.

«Թուրքիոյ եւ Ռուսիոյ միջեւ սահմանագլուխը գծուեց ոչ թէ աշխարհակալի կողմից, այլ անցեալ պատերազմին պարտուած Թուրքիոյ եւ տկարացած Ռուսիոյ փոխադարձ համաձայնութեամբ։ Հետեւաբար, կարելի չէ ասել, թէ սա պարտադրուած սահմանագլուխ է։ Իսկ ազգագրական տեսակէտով այս սահմանագլխի բնակչութեանց միջև այնքան փոփոխութիւններ կատարուած են, որ կարելի չէ այլեւս ազգային խնդրի մասին խօսել»։

Ապա Նեղուցների միջազգայնացման տեսակէտն արծարծելով՝ Բեւին հետեւեալ ընդհանուր յայտարարութիւնն էր անում Թուրքիոյ մասին.

«Անկեղծօրէն պիտի ասեմ, որ չեմ ուզում Թուրքիան փոխակերպուած տեսնել արբանեակ պետութեան։ Ուզում եմ, որ Թուրքիան անկախ եւ ազատ պետութիւն մնայ»։*)

Հուրջ մէկ տարի վերջ նոյն խնդրին անդրադառնալով՝ Բեւին 1946 Հոկտ. 22ին Համ. Պալատում արտասանած իր ճառի մէջ, յայտարարում էր.

«Վերջին երեք-չորս տարիների ընթացքին դումարուած միջազգային խորհրդաժողովներին (որ ասել է՝ 1943ի Հոկտ.ից ի վեր, երբ Մոսկուայում գումարուեց երեք Մեծերի արտ. գործոց նախարարների անդրանիկ խորհրդաժողովը.—Ն.), ինչպէս նաև Թուրք կառավարութեան հետ իր ունեցած թղթակցութեան մէջ՝ խորհրդային կառավարութիւնը բացորոշապէս յայտնած է, թէ ուզում է անպատճառ խարիսխ ունենալ Նեղուցներում (եւ միա՞յն, 1943ից ի վեր ուրիշ պահանջ դրած չէ՞.—Ն.), ինչ որ իրականին մէջ Նեղուցների հսկակչիռը պիտի յանձնէր Խ. Միութեան եւ ոչ թէ այն ցամաքային պետութեան (ակնարկը՝ Թուրքիոյ.—Ն.), որ բացայայտօրէն ամենէն աւելի չահագրգռուած է այդ ջրուղիով։ Ն. Վ. Կառավարութիւնը բացորոշապէս յայտնած է, որ, իր կարծիքով, եթէ այդ առաջարկն ընդունուէր, ապա այդ պիտի նշանակէր անարդար միջամտութիւն Թուրքիոյ վեհապետական իրաւունքներին (ծափեր), իսկ հետեւանքը պիտի լինէր, արդարեւ, այդ երկիրը ենթարկել օտար տիրապետութեան ու նաև անտեղի կերպով միջամտել չահակից պետութեանց իրաւունքներին»։*)

Զուր է ասել, որ էականը, ի հարկէ, Թուրքիոյ «վեհապետութիւն»ը չէ, այլ շահակից պետութեան (ոչ իսկ «պետութեանց») «իրաւունք»ը։

Ինչպէս տեսնում էք, տարբեր բառերով նոյն մտքերն են արծարծում թէ՛ պահպանողական Չրչիլը եւ թէ աշխատաւորական Բեւինը։

Եւ այսպէս թէ՛ երէկ եւ թէ՛ այսօր, մոնաւանդ արտաքին քաղաքականութեան մէջ, ուր Անգլիոյ մէջ լոկ նախարարներ են փոխւում, բայց ոչ քաղաքականութիւն։**)

*) «Ցառաջ», 25 Հոկտ. 1946։

**) Դաշնակիցներ անկարող եղան 1915ի Մարտին ծովից ճեղքել Դարդանելը. ուստի, այս վերջինի ամրութեանց ցամաքից տիրանալու համար, 1915ի Ապրիլին զօր հանեցին Գելիպոլուի թերակղզին։ Գերմանիոյ կողմից Թուրքիոյ ընծայուած աջակցութեանը շնորհիւ, ձախող գնաց նաեւ այդ գործը։ 1915ի Նոյ.ին Շանսիլիէյում տեղի ունեցած միջդաշնակցային խորհրդաժողովում, գլխաւորութեամբը Կիչընէրի, որոշուեց իսպառ հաւուեյարդարի ենթարկել Գելիպոլուի ճակատը եւ նոր ճակատ բանալ Սելանիկում։

Անգլիացիներ ամբողջական պարպումին դէմ էին սակայն. նրանք ուզում էին իրենց զօրամասերից մի հատուած բռունցք պահել

Մեծն Բրիտանիոյ առաջին աշխատաւորական *վարչապետը՝ Մակդոնալդ՝* 1924 *Յունուար* 8*ին, «Ալբերտ Հոլ»ի միտինգում խօսելով անգլեւռուս յարաբերութեանց մասին եւ իր յորդորը ցեղակից* բուրժուազիին *ուղղելով՝ յայտարարում էր.*

«Միայն ձեր ողջմտութեանը չէ, որ դիմում եմ ես: Ես դիմում եմ նաեւ ձեր պատմութեանը։ Ես ոգեկոչում եմ մեր Արտաքին Գործոց Նախարարութեան սովորոյթներն ու փորձառութիւնը։ Այդ իմաստով մենք նոր կառավարութիւն պիտի չլինենք։ Մենք պիտի լինենք մի բանուորական կառավարութիւն, որ գործադրում է, սակայն, այն նոյն սկզբունքները, որոնք պատմական դարձած են մեր Արտաքին Գործոց Նախարարութեան գործունեութեանը մէջ»։*)

«Պատմական» դարձած այս նոյն «սկզբունք»ները գործադրում է այսօր Անգլիոյ նաեւ երկրորդ աշխատաւորական *վարչապետը՝ Իտլի՝ մասնաւորաբար Նեղուցների հարցում։*

թերակղզիի հարաւային ծայրին:

Անգլիացիների այս փափագին բուռն կերպով ընդդիմացաւ մոնտանդ **ռուս** ներկայացուցիչը. ամբողջական պարպումը տեղի ունեցաւ 1916 Յունուար 9ին:

Համակրանքով աւդրագրանալով **ցարական** Ռուսիոյ ներկայացուցչի այս ընդդիմութեան՝ **համայնավար** գինուորական գրիչներից **Կորսուն** նկատում է.

«**Ռուս** ներկայացուցիչը այդ **խորհրդաժողովում՝ զարթիլինգիի՝ պահանջից ամբողջութեամբ պարպել թերակղզին, չփափագելով անգլիական տեւական խարիսխ՝ նոր Ջիբրալտար հաստատել Միջերկրականի մուտքին...**»: (Տե՛ս **Ն. Կորսուն** — «Բալկանեան նակատը 1914—1918ի համաշխարհային պատերազմին», Մոսկուա, 1939, էջ 61):

---

*) «Պատմութիւն Դիւանագիտութեան», հ. Դ.. Մոսկուա, 1946, էջ 292:

«...*Բեւինի դիւանագիտութիւնը* (*Նեղուցների հարցում*), — *նկատում է Վինսըն Շիհան*, — *Դիզրայէլիի եւ լորդ Սոլսբերիի դիւանագիտութիւնից տարբեր քան չէ, բացի անհատական ուղեղից*»։ *)

Նեղուցների հարցում գոյն չկայ նաեւ Հիւս. Ամերիկայի մէջ. այն մեծակշիռ ձաւը, որ Բեւինից անմիջապէս վերջ, 1946 *Փետր.* 26*ին, արտասանեց Միացեալ Նահանգների արտաքին քարտուղարը՝ դեմոկրատ Բըրնզ՝ Անդրծովեան Մամուլի Ակումբում — կրկնութիւնը Բեւինի մտքերի, աւելի՛ վճռական չեշտերով — բազմիցս նոյնութեամբ կրկնած են նաեւ հանրապետական վանդէնբերգները։*

Եւ եթէ սրանցից որեւէ մէկը, լինի աջից թէ ձախից, քաղաքական դէպքերի հարկադրանքի տակ, Նեղուցների հարցում այս կամ այն զիջումը կատարեց, խորքին մէջ այդ զիջումը — ասա՛ եւ կրկնի՛ր — գործելակերպային խաղ եղաւ, բայց ոչ սկզբունքային նահանջ։

Այսպէս այն պարզ պատճառով, որ քաղաքական աշխարհը եօթը սկզբունք ունի, որոնք պառնում են — անխտրաբար բոլորը — միայն ծանի չուրջ։

Այլ էր, օրինակ, երէկ, երբ ամերիկեան մեծազօր հանրապետութիւնը անհուն չափերով տակաւին մխրճուած չէր Մերձաւոր եւ Միջին Արեւելքի հարցերի մէջ։

1905*ին, երբ մեծանուն Վիտէն, միջնորդութեամբը Ռուզվելտի, Պորտսմուտում կնքում էր ռուսեւճապոն խաղաղութեան դաշինքը, ամերիկեան քաղաքագէտները, խօսելով Թուրքիոյ մասին, ասում էին իրեն.*

---

*) **Վինսըն Շիհան** — «Նեղուցների Հարցը» («Հայրենիք», 11 Հոկտ. 1946):

«Թուրքիան պէտք չէ գոյութիւն ունենայ, ուրովհետեւ մահմեդական երկիր է, նրա տեղը Եւրոպան չէ, իսկ թէ որի՞ն նա բաժին կը մնայ՝ այդ մեզ չի շահագրգռում»։*)

Այսօր այսպէս խորհող հաւանօրէն ոչ իսկ մէկ հատ քաղաքագէտ կայ Հիւս. Ամերիկայի մէջ։

Ոչ միայն այսօր չկայ՝ երկրորդ համաշխարհային պատերազմի վախճանին, այլ չկար նաեւ երէկ՝ առաջին համաշխարհային պատերազմի նախասեմին։

Արագօրէն բարդաւաճելով եւ հզօրանալով՝ նոյնքան արագօրէն Ամերիկան մեղսակից դարձաւ մեր մոլորակի քաղաքական բարդ իրադարձութեանց։

Իր գործունէութեան հաշուեկշիռը կատարելով՝ Թէոդոր Ռուզվելտ՝ ամերիկեան հանրապետութեան հուչակաւոր նախագահը՝ առաջին մեծ պատերազմից երեք տարի առաջ, նկատում էր.

«Մեծ բան կարգին պիտի նկատել՝ քանի տակաւին Անգլիան պահում է ուժերի հաւասարակշռութիւնը Եւրոպայում։ Բայց երբ որեւէ պատճառով նա այդ բանը այլեւս չկարողանայ անել, այդ դէպքում Միացեալ Նահանգները հարկադրուած պիտի լինեն միջամտելու, թո՛ղ թէ առժամաբար — խնդիր չէ, ո՛ր պետութեան եւ կամ պետութեանց ո՛ր խմբակի դեմ — վերականգնելու համար ուժերի հաւասարակշռութիւնը։ այո՛, մեր աշխարհագրական դիրքի եւ մեր հոգեբանի բերումով՝ մենք դառնում ենք հաւասարակշռող տարը համայն աշխարհի ուժերի փոխյարաբերութեանց մէջ»։**)

*) Թոմաս Ու. Վիլսոն — «Յուշեր», հ. Ա., 1921, Բերլին, էջ 393:
**) Ֆ. Դեպին — «Գլխապտոյտ յոգողութիւններից» («Ոց. Վեստնիկ», Նիւ Յորք, 1946 Մարտ 15, էջ 64):

Իսկ այսօր խօսում են սրանից շատ աւելի յստակ լեզուով։

1946 Հոկտ. 7ին Հիւս. Ամերիկայի ծովային քարտուղար Ջեմս Վ. Ֆորեստալ պաշտօնապէս յայտարարում էր.

«Ամերիկեան ռազմանաւեր են գտնուում Միջերկրականում և նրանք պիտի մնան այնտեղ ուժ տալու համար Դաշնակիցների քաղաքականութեան Եւրոպայի մէջ, պաշտպանելու համար Միացեալ Նահանգների շահերը այնտեղ եւ զօրավիգ լինելու համար այդ շրջաններում մեր հետապնդած ամերիկեան քաղաքականութեան»։*)

Խօսքը այն ռազմանաւերի մասին է, որոնք 1945 Օգոստ. 8ից այս կողմ սկսած են ստէպ-ստէպ յաճախել Թրքական ջրերը։

«Յայտնի է, — յայտարարում էր այս այցելութեանց առիթով Վ. Մոլոտով «ՄԱԿ»ի Ընդհանուր Ժողովում 1946 Հոկտ. 29ին արտասանած իր կարեւոր քաղաքական ճառի մէջ,— որ երբ հարկ է զգացուում դիւանագիտական բանակցութեանց մէջ լաւագոյն արդիւնքների հասնելու, ապա ռազմատորմիղներ և դաշնակից օդատորմիղներ են երեւում այն ծովերում եւ վայրերում, ուր նրանք նախապէս չէին լինում»։**)

Ահա այսքան սուր եւ այսքան կենդանի է այսօր ամերիկեան շահագրգռութիւնը Թրքական ջրերում։

«Եթէ Խորհրդային Կառավարութիւնը ստանայ այն, ինչ որ կ'ուզէ Թուրքիայէն,— 1946 Հոկտ. 10ին յայտարարում է Միացեալ Նահանգների նախ-

*) «Հայրենիք», 8 Հոկտ. 1946:
**) «Իզվեստիա», 31 Հոկտ. 1946:

կին պետական ենթաքարտուղար Սըմներ Ուէլզ, — Սեւ ծովը անմիջապէս պիտի դառնայ ռուսական լիճ մը։ Անոր ափերուն՝ վրայ եղող պետութիւնները պիտի հարկադրուին ենթարկուիլ խորհրդային լուծին։ Եւ Միացեալ Նահանգներու կողմէ որեւէ հաւանակերպում խորհրդային պահանջներուն պիտի նշանակէ, որ այս երկրի կառավարութիւնը կ'ընդունի աշխարհի բաժանումը երկու մասի։ Ուստի Նեղուցներու խնդիրը աւելի բան մըն է, քան Ռուսիոյ ապահովութեան արդար իրաւունքի հարցը»։ *)

Ուէլզ յստակօրէն ուզում էր հասկացնել, որ Ռուսիոյ պահանջների իրացումը արգիլելու համար Ամերիկա պէտք չէ կանգ առնի ո՛չ իսկ զէնքի առջեւ։

Այսպէս նաեւ բազմաթիւ ուրիշներ, առանց գոյնի և դաւանանքի խտրութեան։

Այս բոլոր յայտարարութեանց իմաստն այն է, թէ «Միացեալ Նահանգների ասիմանները հասնում են մինչեւ Դարդանել», ինչ որ ճիշտ կերպով — թէեւ ժխտաբար եւ անուղղակիօրէն — խոստովանում էր ամերիկեան «ՆԵԹ» գործակալութիւնը։ **)

Փոխուել են պայմանները, փոխուել են շահերը, փոխուել են նաեւ մարդիկ — Tempora mutantur, mutamur et nos in illis,— ասում է լատին առածը։

Ահա Անգլիան, որ 1915ի Մարտին հանդիսաւորապէս հրաժարուեց Պոլսից եւ Նեղուցներից ի նպաստ Ռուսիոյ, մինչ այսօր նոյն Անգլիան — որի իշխանութիւնը, ի դէպ, գտնուում է ոչ թէ աշխարհական լորդերի, այլ ազատասէր ընկերվարների ձեռքը — կոթնած աջակցութեանը հզօր Ամերիկայի, համէն կերպ մաքառում է ռուսական Երկգլխանի

*) «Հայրենիք», 12 Հոկտ. 1946։

**) «Հայրենիք», 8 Հոկտ. 1946։

Արծուին փոխարինելու եկած Մուրճ-Մանգաղի ուրուականը Նեղուցներից հեռու պահելու համար։

Եւ պարզ է թէ ինչո՛ւ։

Սխալվէ այն կարծիքը, թէ տեղական յառաջդիմութիւնները — օդանաւ, հիւլէական ռումբ և յարակից զէնքեր — մի զգալի չափով անարժէք են դարձրել ծովերն ու նեղուցները։

Մորիս Պերնօն 1937ին գրում էր.

«Պէտք չէ Միջերկրականից ո՛չ անսահմանօրէն ընդարձակուող ճանապարհ երեւակայել դէպի Հընդկաստան, ո՛չ երեւակայել ֆրանսական ծով եւ ոչ էլ հիտալական լիճ։ Սրանք բոլորը տարբեր դարաշրջանի հասկացողութիւններ են, որոնք այլեւս չեն համապատասխանում ո՛չ այսօրուան տնտեսական պահանջներին եւ ոչ էլ ժամանակակից պատերազմի եւ քանդումի միջոցներին»։ *)

Եթէ ճիշտ լինէր այս խօսքը, պայքարը Վոսֆորի եւ Դարդանելի շուրջ այսօր այնքան սաստկօրէն չէր շարունակուի։

Ճիշտ հակառակը. տեղական յառաջդիմութեանց զուգահեռ՝ Նեղուցների արժէքը ոչ թէ նուազում, այլ բազմապատկուում է։

Որովհետեւ այդ յառաջդիմութիւնները մարդկութեան ոչ միայն աւերիչ զէնքեր են հայթայթում, այլ եւ ստեղծարար ու վերակերտիչ։

Այդ յառաջդիմութեանց զուգահեռ փոխուում է մեր մոլորակի նաեւ աշխարհագրական պատկերը, նրա այս կամ այն մասի տնտեսական եւ ռազմաքաղաքական կշիռը։

Մէկ աշխարհ էր երէկ, մինչեւ 1914ը, երբ փորուած չէր տակաւին Պանամայի՝ Լրանցքը, և երբ

*) Վ. Նիկիֆոր — «Պատմութեան դասերը» („Ռ. Նովոստի", 30 Օգոստ. 1946)։

երկու ովկիանոսները տակաւին միացած չէին իրարու. մէկ տարբեր աշխարհ է 1914ից այս կողմ, երբ 68 քիլ. երկարութիւն ունեցող այս ջրանցքը գործում է արդէն՝ Խաղաղականն ու Ատլանտեանը իրարու կապելով։

Այլ էր Մանչից մինչեւ Գանգէսի ջրերը փոխող աշխարհի տնտեսական եւ ռազմա-քաղաքական արժէքը մինչեւ 1869 թուականը՝ երբ հանճարեղ Լեսեպսը տակաւին փորած չէր Սուէզի ջրանցքը. այլ է այդ թուականից այս կողմ՝ երբ 160 քիլ. երկարութեամբ մի նեղուց այդ աշխարհները արդէն կապում է իրարու։

Նոյն փայլուն ճակատագիրն է սպասում նաեւ Վոսփորին ու Դարդանելին։

Այսօր իսկ մի վիթխարի աշխատանք է տարւում Դոնը նաւարկելի ջրանցքով Վոլգային կապելու. երբ վաղը այս հսկայ աշխատանքը աւարտի՝ Մոսկուայի գոներից ջրային ճամբաներով բուն Ռուսիան, որ տէր է անհուն հարստութեանց, ուղղակիօրէն պիտի կապուի համայն աշխարհին։

Նոյնը նաեւ դէպի արեւմուտք։ Հեռու չէ այն օրը, երբ մէկ այլ նաւարկելի ջրանցքով Հռենոսը պիտի կապուի 2794 քիլ. երկարութիւն ունեցող Դանուբին — այսօր իսկ այդ 2794ից 2659 քիլ.ը արդէն նաւարկելի — այս ամբողջ աշխարհամասը, մեծափարթամ ու բերրի, դէպի Սեւ ծով քաշելու եւ այնտեղից՝ Նեղուցների վրայով՝ հաղորդակցութեան մէջ դնելու համար մնացեալ աշխարհի հետ։

Խօսւում է այն մասին, որ այսօր իսկ աշխատանքներ են տարւում արդէն Ադրիականը Դանուբին կապելու, որ ասել է՝ նաեւ Սեւ ծովին ու Նեղուցներին։

Այս մեծամիտ ու հերոսական գործերը այն պարզ պատճառով, որ ջրային հաղորդակցութիւնը

շատ աւելի կարճ է, դիւրին և ժամանակային։

Գերման տնտեսագէտները վկայում էին, ըստ 1914ի տուեալների, որ «Համբուրգ-Ամերիկա» ովկիանոսեան հաղորդակցութեանց ծախսերը յիսուն անգամ աւելի նուազ եղած են բաղդատմամբ այն ծախսերի, որ պիտի կատարուէին նոյն տարածութիւնները կտրելու համար ցամաքի վրայ, երկաթուղիով։

Համեմատութիւնները պահելով՝ զգալապէս միշտ տարբեր եղած են ծախսերը ջրերի և ցամաքների վրայ։

Այս նոյն յաղթանակը վաղուան մրցման մէջ պիտի չունի օդը ջրի վրայ, ինչպէս որ այսօր շահում է ջուրը ցամաքի վրայ։

Սակայն այսօր և առայժմ մրցումը առաւելաբար ջրի և ցամաքի միջև է։

Ո՞վ գիտէ, ո՞վ կարող է գուշակ դառնալ եւ նախասել հետեւանքները — տնտեսական և ռազմա-քաղաքական — այն ճակատագրակիր հիդերի, որ թափւում են այսօր՝ Հռենոսի, Ադրիականի եւ Մոսկուայի միջեւ ընկած աշխարհները ջրային լայնարձակ — ժամանակային և դիւրին — ճամբաներով դէպի Սեւ ծով և այնտեղից էլ Նեղուցների վրայով դէպի այլ ծովեր և աշխարհներ ուղղելու համար։*)

---

*) 1945 Մայիս 8ի համաձայնութեամբ Խ. Միութիւնը կապուած է արդէն Ռումանիայ՝ ստեղծելով խորհրդային-ռումէն նաւարկութեան միացեալ ընկերութիւն։

Ըստ այս համաձայնութեան՝ ռումէն կառավարութիւնը Խ. Միութեան է փոխանցում սեփական նաւամատոյցների վրայ — Կոնստանցա, Բրայլա, Գալաց եւ Զուրջովոյ — ունեցած իր բացարձակ իրաւունքներ, ինչպէս նաեւ արտօնում է, որ Ռումանիայ մէջ հաստատուի Խ. Միութեան ծովային տոմարը (Registre maritime)։

1924ին Պոլսոյ նաւահանգստից, առաւելաբար Վոսփորի շնորհիւ, որ Եւրոպան ջրային ճանապարհով կապում է Ասիային, անցած են 5.230 նաւեր 7.647.000 տոն տակառաչափով։ 1912ին նաւային շրջանառութիւնը Պոլսոյ նաւահանգստում եղած է — 18.318 նաւեր 15.000.000 տ. տակառաչափով։ *)

Երբ մեր մատնանշած աշխատանքները ամբողջանան, 1912 և 1924 թուականներին վերաբերող այս թուերը պիտի բազմապատկուեն՝ անհունօրէն բարձրացնելով նաև Նեղուցների արժէքը։

Նոյն եռուզեռը Սեւ ծովի նաև այլ եզերամերձ պետութեանց նաւահանգիստներում։

1939ին բուլգար նաւահանգիստներից մուտք և ելք ունեցած են 9311 նաւեր 1.776.600 տ. տարողութեամբ, ռումէն նաւահանգիստներից՝ 2392 նաւեր 4.574.600 տ. տարողութեամբ, և Սեւ ծովի խորհրդային նաւահանգիստներից՝ 717 նաւեր 1.315.800 տ. տարողութեամբ։ **)

Մրագրուած աշխատութեանց հետեւանքով՝ նոր թափ պիտի առնի տնտեսական կեանքը նաև այս երկրների նաւահանգիստներում՝ փոխադարձաբար ազդելով Նեղուցների կեանքի և արժէքի վրայ։

Ու նոյնը նաև ռազմա-քաղաքական տեսակէտով։ Գալիք պատերազմներին եթէ ռազմանաւը պիտի պահի իր արժէքը, ապա պիտի պահի նաև ռազմանեղուցը՝ պաշտպանութեան և յարձակումի հզօրագոյն միջոցներ ընձեռելով այնտեղ խարսխած ուժին։

Այս բոլոր նկատումներով այնքան բուռն եւ այնքան անզիջող է պայքարը Ռուսաստանի դէմ

*) Թուերի մանրամասներ տե՛ս — «Մեծ Խորհրդային Հանրագիտարան», հ. Է., 1927, Մոսկուա, էջ 235:

**) Հր. Ն. Թորոսեան — «Նեղուցները բանալի Մօտաւոր Արեւելքի տնտեսութեան» («Ցառաջ», 27 Դեկտ. 1946):

Նեղուցների հարցում։

Զարմանալի ուշագրաւ և նշանաւորական է այն առաջին հանդիպումը, որ Անգլիա և Ռուսիա դաշներ առաջ ունեցան Պոլսոյ ջրերում։

Վերջացած էր Թուրքիոյ դէմ պատերազմը, որին զինակցաբար մասնակցում էին Ռուսիա, Աւստրիա, Լեհաստան եւ Վենետիկ, և, միջնորդութեամբը Անգլիոյ և Հոլանդայի, 1699 Յունուար 26ին կնքուած էր Կարլովցիի (Հունգարիա) դաշինքը։

Խաղաղութիւնը աւելի հաստատուն և տեւական դարձնելու համար՝ Մեծն Պետրոսը, գլխաւորութեամբը իր լիազօր դեսպանների՝ Ուկրաինցևի և Զեբեդէեւի՝ յատուկ պատուիրակութիւն է ուղարկում Պոլիս։

Պատուիրակութիւնը մեծ կարաւանով հասնում է Կերչ նաւահանգիստը՝ այնտեղից ծովով Պոլիս մեկնելու համար։

Սակայն, թէ՛ Կերչի թուրք փաշան և թէ՛ պատուիրակութիւնը դիմաւորելու համար Պոլսից Կերչ եկած թրքական պաշտօնատարը ամէն կերպ աշխատում են, որպէսզի ռուս դեսպանները Պոլիս մեկնեն ոչ թէ ծովով, այլ ցամաքով։

Ըստ երեւոյթին, իրենց թագուն նպատակն էր արգելել ռուսական նաւի մուտքը Սեւ ծով՝ այս «անմեղ և մաքուր կոյս»ը չսրբապղծելու համար...

Կայսեր հրահանգին հաւատարիմ՝ ռուսները պընդում են իրենց որոշման վրայ և Կերչից, ռուսական «Պետրոս Առաքեալ» նաւը առնելով, կտրում Սեւ ծովը և անցնում Պոլիս։

Խօսքը տանք պատմիչին.

«Օգոստոս 28ին (1699ի) դեսպանները ծով ելան և անփորձ հասան Ցարգրադ (Արքայաքաղաք, Պոլիս)։ Մի չտեսնուած զարմանք.— ռուսական նաւը հան-

դիսաւորապէս, թնդանօթային համազարկերի տակ, մտնում է Կոնստանդնուպոլսոյ նաւահանգիստը եւ խարիսխ նետում Սերայի դիմաց։ Կայսերական պատուիրակների առաջին գործն է լինում հարիւրապետ Պամբուրգին ուղարկել քաղաք՝ իրենց ողջոյնը հաղորդելու համար ֆրանսական, անգլիական և հոլանդական դեսպաններին։ Ֆրանսացին և Հոլանդացին սիրալիր ընդունում են Պամբուրգին և իրենց շնորհակալութիւնը յայտնում ողջոյնի համար։ Մինչ Անգլիացին նրան իր մօտ չի ընդունում, մարդ է ուղարկում սանդուղ և հրահանգում յայտնել, որ ինք Պամբուրգի հետ տեսնուելու որևէ կարիք չունի, և որ սեղան նստած է ճաշելու։ Սկսում են գալ ուրիշները՝ ցուցանքը (ակնարկը՝ «Պետրոս Առաքեալ»ին.—Ն.) տեսնելու համար. գալիս են ֆրանսացիները դեսպանատան շքախմբից, գալիս է մեծ վեզիրը և կառքով երկար պտտում նաւի շուրջ, գովում եւ զարմանում, որ նաւը այդքան շուտ կերչից հասել է Ցարգրադ. գալիս է, վերջապէս, նաեւ ինքը Սուլթանը»։ *)

Ծովը պատկանում էր Թուրքին, նրա «կուսութեամբ» առաջին շահագրգռուողը ինքը Սուլթանն էր, որ անձամբ քաղաքավարական այցի եկած էր ռուսական նաւին, սակայն քէն պահողը Անգլիացին էր՝ «Ծովերի Թագուհու» լիազօր դեսպանը Պոլսոյ մէջ, ներկայացուցիչը այն երկրի, որ, ի դէպ, պատերազմում հանդէս եկած էր իբրև միջնորդ և հաշտարար...

Այդ յարաբերութիւնները գրեթէ նոյնութեամբ շարունակուեցին մինչև այսօր, վերջին աւելի քան երկու և կէս դարերի ընթացքին։

*) Ս. Սալովեավ — «Ռուսիոյ Պատմութիւնը Հնագոյն Ժամանակներից», Գիրք Գ., էջ 1231—1232:

Դեղուցների հարցում Անգլիոյ ընդդիմութիւնը Ռուսաստանին իբր պատճառ ունի Ռուսիոյ հզօրութիւնը։ Եթէ չլինէր այս վերջինը՝ չէր լինի նաեւ իր ներեւանքը՝ Անգլիոյ ընդդիմութիւնը։

Ճիշտ էին հին հռոմայեցիները,— «Պատճառի վերացումով՝ ինքնին վերանում է նաև հետեւանքը»։

Իսկ այս պատճառը ոչ միայն չի վերանում, այլ դէպքից դէպք դառնում է աւելի սպառնական։

Հաստատաքայլ և անդիմադրելիօրէն Ռուսաստանը դառնում է մեր մոլորակի հզօրագոյն կայսրութիւններից մէկը՝ իր թեւերը լայնօրէն փռելով դէպի արեւելք եւ արեւմուտք, դէպի հիւսիս և հարաւ։

Անգլիան նորեկ չէ քաղաքականութեան մէջ։ Շուրջ երեք դար առաջ, ինչպէս տեսանք, Անգլիոյ վարիչները նախազգում էին այն վերելքը, որ պատմութիւնը վերապահած էր Ռուսիոյ։

Եւ, ի նախատեսութիւն այս սպառնալիքի, նը-քանք անում էին ինչ-որ հնարաւոր է՝ գալիք վըտանգները մեղմելու համար։

Պատմութեան մէջ մի դղրդագին դէպք պատահեց 1853ի Մայիսին, մի արար, որ հետագային իր կրկնութիւններն ունեցաւ նաև 1914ին, 1919ին եւ 1941-42ին։

Մեր խօսքը Խրիմի պատերազմի մասին է, որ կոչւում է այդպէս իր վախճանը — այնքան աղէտալի Ռուսիոյ համար — Խրիմում գտած լինելու պատճառով։

Թուրքիա մերժած էր ցար Նիկոլայ Ա.ի վերջնագիրը ուղղափառ եկեղեցու պահանջների մասին Սբ. Տեղերում։ Այդ պահանջների էութիւնը կայանում էր նրանում, որ Թուրքիոյ բոլոր ինը միլիոն ուղղափառ հպատակները պիտի անցնէին անմիջա-

կան հոգատարութեանը տակ ռուս կայսեր՝ այս ձեռով իրաւունք տալով նրան Թուրքիոյ ներքին գործերին միջամտելու։ Աւելի ճիշտը՝ բուն Թուրքիան պիտի վերածուէր մերձ-դանուբեան իշխանութեանց նման մի երկրի, ենթակայ Ռուսիոյ։

Կայսրը իր այս նպատակը գաղտնի պահած չէր Անգլիայից. 1852ի Դեկտ.ին Պետերբուրգի անգլիական դեսպանի միջոցով նա Լոնդոն յղած էր Թուրքիոյ բաժանման իր ծրագիրը, որով իրեն պիտի հասնար, ի միջի այլոց, նաև Պոլիսը։

Լոնդոնը, ի հարկէ, մերժեց այս ծրագիրը. ոչ միայն մերժեց, այլ և շտապ գործի անցաւ զինակցութեամբ Ֆրանսայի կապուելու՝ գալիք փորձանքին միացեալ ուժերով դիմագրաւելու համար։

Անհեռատես Նիկոլայը 1853ի Փետր.ին նորից կրկնեց իր առաջարկը, եւ դարձեալ մերժում ստացաւ։

Սակայն բուն պատերազմը սկսաւ կրօնական պատրուակով։

Կայսեր վերջնագիրը մերժուած լինելով՝ ռուս դեսպանը Պոլսոյ մէջ՝ Մենշիկով՝ 1853 Մայիս 9ին իր անձնակազմով ձգեց Թուրք մայրաքաղաքը եւ դարձաւ հայրենիք։

Դեսպանի մեկնումից անմիջապէս յետոյ՝ անգլեֆրանսական ռազմատորմիղը մտաւ Մարմարա։

Առանց այս կարեւորագոյն անցքը ըստ արժանւոյն նկատի առնելու, Նիկոլայ Ա. 1853 Մայիս 26ի հրովարտակով հրամայեց իր զօրքերին առաջ շարժուել եւ գրաւել մերձ-դանուբեան իշխանութիւնները՝ Մոլդաւիա եւ Վալախիա։

Նոյն Թուականի Հոկտ. 21ին Ռուսիա պատերազմ հռչակեց Թուրքիոյ։

Վեց ամիսը չբոլորած՝ 1854 Ապրիլ 11ին՝ ցարը պատերազմ հռչակեց նաեւ Անգլիոյ և Ֆրանսայի,

որոնց ռազմատորմիղները արդէն գտնուում էին Սեւ ծովում։

1854 Սեպտ. 1ից մինչև Սեպտ. 6ը, ընդամէնը վեց օրուայ մէջ, դաշնակիցները Խրիմում արդէն ցամաքահանած էին 61.400 զինուոր 108 դաշտային թնդանօթներով։

Շուտով սկսաւ սեւծովեան հզօրագոյն ամրոցի՝ Սեւաստոպոլի պաշարումը, որ տեւեց 11 ամիս։

Ռուսիոյ դէմ ստեղծուած էր արդէն մի հզօր դաշնակցութիւն, մասնակցութեամբը Անգլիոյ, Ֆրանսայի, Պրուսիոյ, Աւստրիոյ և Սարդինիոյ։

1855 Հոկտ. 5ին ընկաւ Սեւաստոպոլը։

Պատերազմը կորցրած էր Ռուսաստանը՝ տալով 522.110 զոհ, ծախսելով 800 միլիոն ռուբլի, հողեր զիջելով եւ իր երբեմնի փառքից զրկուելով*)։

Սեւաստոպոլի եւ Ռուսիոյ սեւծովեան ռազմատորմղի ոչնչացման ծրագիրները Անգլիա որոնում էր 1830ից ի վեր. Խրիմի պատերազմը այն առիթն է, որ պատմութիւնը ընծայեց իրեն։

«Երբ պատերազմը սկսաւ, — գրում է մի համառ գրիչ,— Նեղուցների մասին ոչ մէկ խօսք չկար։ Սակայն վերջանալու մօտ՝ խօսում էին միայն նրանց մասին եւ, Նեղուցների կապակցութեամբ, նաեւ Սեւ ծովի մասին»։**)

Նիկոլայը զգում էր, որ պատերազմը տանուլ պիտի տայ, ուստի կէս ճանապարհին, մեծ զիջումներով, յօժար էր հաշտութեան։

---

*) Կալիսիոնի զոհերն էին.— Թուրքիա՝ 400.000 մարդ, Ֆրանսա՝ 95.000, Անգլիա՝ 22.000։

**) Մ. Պոկրովսկիյ — «Արեւելեան Հարցը (1854—1873)», («Ընթերցումի գիրք նոր ժամանակի պատմութեան մասին», Ե. Ե., Մոսկուա, 1917, էջ 478)։

«Ռուս կառավարութիւնը համաձայնւում էր, — վկայում է նոյն գրիչը, — գրեթէ առանց վէճի, ընդունելու բոլոր պահանջները, բացառութեամբ միայն մէկ կէտի — Նեղուցներ. մինչ հակառակորդները ուզում էին խօսել միայն ա՛յդ մասին, մնացեալը նրանց աչքին ոչինչ էր»։

Աւելին. պատմական ժամը հնչած նկատելով՝ Անգլիա երազեց ռուս ծովային ուժը ոչնչացնել ոչ միայն Սեւ ծովում, այլ եւ Բալտիկում.

«Մօտենում է Սեւաստոպոլի անկումը, — գրում էր լորդ Պալմերստոնը իր եղբօրը, — երբ տեղի ունենայ այդ դէպքը, պիտի ծագի նոր վտանգ — խաղաղութե՛ն վտանգը, բայց ոչ պատերազմի (ընդգծումը՝ Լորդինն է.—Ն.)։ Աւստրիա պիտի ջանայ մեր վզին փաթաթել անբաւարար խաղաղութիւն»։ *)

«Անբաւարար»ը վերաբերում էր — Բալտեան ծովին։ Պատերազմի վախճանին, երբ տեղի ունեցաւ Փարիզի Խորհրդաժողովը, Անգլիա այստեղ իր ճիգերի գերագոյնը փորձեց նաեւ Բալտիկում ռուս ծովային ուժը փոշիի վերածելու. ու թէեւ իր նըպատակին չհասաւ, բայց, այնուամենայնիւ, յաջողեց պարտադրել Ռուսիոյ Ալանդ կղզիները չամրացնելու։

Իսկ Սեւ ծովում, նախ իրենք՝ ռուսները՝ գաղիքը նախազգալով՝ Սեւաստոպոլի ծովախորշի մէջ խորտակեցին, իրենց իսկ ձեռքով, Սեւծովեան փառաւոր ռազմատորմիղը, որ պատերազմի սկզբին, ահեղ յարձակումով, Սինոպի առջեւ ոչնչացրած էր Թրքական ծովային ուժը, իսկ աւելի ուշ, 1856 Մարտ 18ի փարիզեան դաշինքով, Ռուսիա եւ Թուրքիա պարտաւորուեցին ռազմա-ծովային որեւէ ամ-

*) Ibid, էջ 481:

բուքիւն չկառուցանել Սեւ ծովի ափերին, ռազմատորմիղ չպահել այդ ծովում (արտօնուեցին այնտեղ միայն թեթեւ ռազմանաւեր ունենալու). նոյն դաշինքով Սեւ ծովը «չեզոքացւում» էր, այլ խօսքով՝ հռչակւում էր բաց ու ազատ, իսկ Նեղուցները փակւում էին Ռուսիոյ առջեւ։

Այսքան խորտակիչ եղաւ հարուածը Ռուսիոյ համար առաւելաբար այն պատճառով, որ բաց էին Նեղուցները։

«Հիւանդ մարդը» — ի դէպ, պատմութեանը անցած մի տիտղոս, որ կայսր Նիկոլայ Ա. տուած էր Թուրքիոյ — կրկին փրկուեց, մինչ Ռուսիա մատնուեց ծանրագոյն հիւանդութեան։

Այս դասը Ռուսասանը երբե՛ք չմոռացաւ, եւ երբե՛ք պիտի չկարողանայ մոռանալ։ *)

Երիմի ռուսական ուժերի գերագոյն հրամանատարը՝ իշխան Գորչակով՝ սարսափից բռնուած՝ իր յուշատետրում արձանագրում էր.

«Եթէ պատերազմը չարունակէինք՝ մենք պիտի զրկուէինք Ֆինլանդիայից, մերձ-բալտեան շրջան-

*) Քարոզչական նպատակներով Մոսկուան 1946ին մի ժապաւէն հանած է՝ «Ծովակալ Նախիմով» անուան տակ:

Ժապաւէնը տալիս է Երիմի պատերազմը:

Մինոպի նաւամարտից յետոյ, ուր խորտակուեց թրքական ռազմատորմիղը, գերեվարուած թուրք ծովակալը գանգատւում է ռուսներին՝ ասելով, թէ անգլիացի խորհրդականները, տեսնելով դէպքերի անբարեյաջող ընթացքը, իրեն խաբել եւ անհետացել են.

— **Թոյլ տուէք որ դիտել տամ ձեզ,** — պատասխանում է ծովակալ Նախիմով, — **թէ ամէն ինչ կորցին ընթացած է միօր, երբ Թուրքիա պատերազմած չէ Ռուսիոյ դէմ, բայց ազէօր անխուսափելի եղած է, երբ նա ակամէ կախած է զանազան խորհրդականներից:**

Այս քարոզչական ժապաւէնով Խ. Միութիւնը ուզում է ցոյց տալ իր այսօրուան պահանջների արդարացի լինելը:

ներից, Լեհական Թագաւորութիւնից, արեւմտեան նահանգներից, Կովկասից, Վրաստանից և պիտի գոհանայինք միայն այն բանով, որ երբեմն կոչւում էր Մոսկովեան Մեծ Իշխանութիւն»։*)

Խրիմի պարտութեան պատճառները շատ էին, ի հարկէ. գլխաւորագոյններից մէկը — երկրում տիրող ճորտատիրական կարգերը, որ ռուսական զէնքի պարտութեան կողմնակից էին դարձնում — եւ փաստօրէն զինակից՝ թշնամուն — ոչ միայն ռուս յառաջադէմ մտաւորականութիւնը, այլ և մի մասը զինուորականութեան, որոշ եւ աչքառու դէմքեր թէ՛ մայրաքաղաքում եւ թէ ռազմաճակատի վրայ։

Դաւաճանում էին հայրենի զէնքին այն յոյսով, թէ միայն պատերազմում պարտուելով՝ կարելի է շանել երկրի ներքին քաղաքականութեան մէջ եւ ճորտատիրական կարգերը փոխել։**)

---

*) «Մեծ Խորհրդային Հանրագիտարան», հ. 35րդ, Մոսկուա, 1937, էջ 331:

**) Խրիմի պատերազմի դերակատարներից իշխան Վասիլչիկովը իր «Յուշերում» պատմում է, որ Պասկեւիչը եթէ գիտակցական ընդդիմութեամբ — գաղտնօրէն հրահանգուած, ըստ երեւոյթին, Պետերբուրգից — չնզնէր իր երկու զօրաբանակների տեղաւորումը հարաւարեւմուտից դէպի Խրիմ՝ տարբեր պիտի լինէր պատերազմի ելքը:

«Երէկ Տոլբէքնը,— գրում էր իր եղբօրը Պիրոգով,— ուղղակի ասաւ, որ Սեւաստոպոլի թշնամիները նստած են Պետերբուրգ, որին ի պատասխան նրա համարը՝ Ն.՝ բարձրաձայն արձագանգեց.— **«Թող նամիները Սեւաստոպոլի, բայց բարեկամները Ռուսիո՛յ»**: Եւ Պիրոգովը — ժամանակի մեծագոյն դէմքերից — իր կողմից աւելացնում էր.— **«Եւ ճիշտ է. եթէ Սեւաստոպոլը դիմանայ՝ վա՛յ Ռուսաստանին»**:

Նոյն օրերի լուսաւորութեան նախարարը՝ Նորովը՝ գրում էր.— **«Սեւաստոպոլում օտարները կռւում են Ռուսիոյ ազատութեան համար, իսկ ռուսները կռւում են Նիկոլայ Ա.ի համար»**: (Տե՛ս **Մ. Դարկիյ** — «Ռուս գրականութեան պատմութիւնը», 1939, Մոսկուա, էջ 212—213):

Բայց, այս ճշմարտութեան կողքին, կար պարտութեան նաև միւս հզօրագոյն պատճառը,— անգլեֆրանսական միացեալ ռազմատորմղի ներկայութիւնը Սեւ ծովում եւ պաշարումը Սեւաստոպոլի, որի անկումը ճակատագրական եղաւ Ռուսիոյ համար։

Այս հզօր ու մեծափառ երկիրը, որի հռչակաւոր մարաջախտը՝ Սուվորով (1729—1800)՝ իր բանակներով անցած էր Ալպեանները, որի կայսրը՝ Աղեքսանդր Ա.՝ պարտութեան մատնած էր Մեծն Նապոլէոնին եւ յաղթականօրէն մուտք գործած Փարիզ, եւ որի միւս կայսրը՝ Նիկոլայ Ա.— բուն իսկ գերագոյն վարիչը Խրիմի պատերազմում — սարսափի տակ էր պահած բոլանդակ Եւրոպան՝ «միջազգային ժանդարմ»ի տիտղոսին արժանանալով, — այս անպարտելի Հսկան ազէտներից դառնագոյնը ճաշակեց՝ Սեւ ծովում իր տան դռները բաց գտնելով։

Նեղուցների դերը այնքան մեծ եղաւ Խրիմի անաւոր պարտութեան մէջ, որ այդ դէպքից այս կողմ, վերջին իննսունամեակի բոլոր կարեւոր քաղաքական իրադարձութեանց, բոլոր գաղտնի դաւերի, եւրոպական պետութեանց բոլոր բարեկամութիւնների եւ թշնամութիւնների մէջ հիմնական առանցքներից մէկը մի՛ շտ եղաւ ու միշտ մնաց Նեղուցների հարցը։

ՆԵՂՈՒՑՆԵՐԸ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՈՒԽՏԵՐՈՒՄ

Ռուսիոյ դիրքը Նեղուցներում մինչեւ 1870ը.— Ցար Նիկոլայ Ա.— Ցար Ալեքսանդր Բ.— Նեղուցներ 1870ից այս կողմ.— Լոնդոնի դաշինք.— Շեմբրուեի ուխտ.— Բերլինեան յուսգիրք.— Ռայխշտադ.— Պոլսոյ խորհրդաժողով.— Բուկարեշտի հաշտութիւնը.— Սան Ստեֆանոյ եւ Բերլին.— «Երեք կայսրերի հաշտութիւնը».— Ցար Ալեքսանդր Գ.— Նոր բարդութիւններ.— Բիսմարկ.— Պատերազմական տակոյ.— Միջերկրականեան հաշտութիւն.— Գերմանիան ուս հաշտութիւն.— Ցար Նիկոլայ Բ.— Հայ Դատը եւ Նեղուցները.— Աւստրիան ուս հաշտութիւն.— Բաղդադի երկաթուղին եւ Նեղուցներ (1900 Մարտ 31ի ռուսերուրֆ հաշտութիւնը).— Անգլիան ուս հաշտութիւն.— Բուլգարիա.— Իտալիան ուս հաշտութիւն.— Գերմանիան ուս նոր հաշտութիւն.— Ջարկոյի Լոյսը — Բալկանեան պատերազմներ:

II

Թուրքերը տիրացան Պոլսոյ 1453ին։ Ամրապնդելով հաստատուելով Բիւզանդիոնի վեհափառ ռազմաբերդում՝ նրանք յաղթականօրէն տեղաշարժուեցին դէպի հիւսիս-արեւմուտք եւ դէպի հիւսիս՝ ստանալու ստանձնելու իրենց գրաւման տակ առնելով Դանուբը մինչեւ նրա միջին հոսանքը (Եւրոպայի հարաւ-արեւելքում) եւ Դնէպրի, Դնէստրի ու Դոնի գետաբերանները (հարաւային Ռուսիոյ մէջ)։

Ապահով կռուան հաստատելով Արիմում՝ Թուրքերը փորձեցին հասնել մինչեւ Վոլգայի գետաբերանը եւ իրենց իշխանութեան տակ առնել Հաշտարխանի և Ղազանի խանութիւնները։

Այս նպատակով սուլթան Սելիմ Բ. 1569ին, առաջին անգամը լինելով Թուրքիոյ պատմութեան մէջ, պաշտօնապէս պատերազմ յայտարարեց Ռուսիոյ ինքնակալին՝ Իւան Ահեղին։

Այդ թուականից մինչեւ առաջին համաշխարհային պատերազմը, մինչեւ 1914 թուականը, այդ չորսուկէս դարերի ընթացքին, Ռուսիա տասնրիինգ լուրջ պատերազմներ մղած է Թուրքիոյ դէմ, առանց հաշուի առնելու այն բազմաթիւ փոքր կռիւներն ու անպաշտօն զինաբախումները, որ նոյն ժամանակաշրջանին նա ունեցած է նոյն Թուրքիոյ հետ։*)

Այս դարաւոր պայքարների արդիւնքներից մէկը ա՛յն, որ Ռուսիա այսօր մեր մոլորակի երկու հզօրագոյն կայսրութիւններից մէկն է, մինչ Թուրքիա անցած է ստուարաթիւ փոքրերի շարքը։

Հակառակ, սակայն, ռուսական վէճքի այս փայլուն յաջողութեանց, ռուս երկիրը, այնուամենայնիւ, չկարողացաւ կռուան հաստատել Նեղուցներում։

Անգամ Մեծն Պետրոսը, որ յաջողած էր իր իշխանութիւնը տարածել մինչեւ Սեւ Ծովի ափերը, անզօր եղաւ Սուլթանից իր ռազմատորմիղի համար նաւարկութեան ազատութիւն ստանալ Սեւ Ծովում. կայսրը մեռաւ 1725ին, և մինչեւ այդ թուականը Սեւ Ծովը շարունակեց նկատուել իբրև «Թրքական լիճ»։

Միայն Մեծն Եկատերինայի ժամանակ (1762—1796), համաձայն 1774 Յուլիս 1ի Քուչուք-Քայնարջիի դաշինքի, ռուսական առեւտրանաւերը թէ՛ ազատ նաւարկութեան իրաւունք ստացան Սեւ Ծովում եւ թէ արտօնուեցին ազատօրէն երթեւեկելու Նեղուցներից։

---

*) Ռ. Մենիցկիյ — «Ռուս-թրքական պատերազմներ» («Մեծ Խորհրդային Հանրագիտարան», հ. 49, Մոսկուա, 1941, էջ 867—873)։

Սակայն այդ շրջանին իսկ միշտ իր զօրու էր այսպէս կոչուած «Օսմանեան Կայսրութեան հին օրէնքի»ը, ըստ որին Նեղուցները խաղաղութեան շրջանին գոց էին մնում ամենազգի բոլոր ռազմանաւերի առջեւ։

Այս օրէնքը պահեց իր ուժը նաեւ 1828—1829ի ռուսաթուրք պատերազմից յետոյ. յաղթական Ռուսաստանը գոհացաւ Ադրիանոպոլսի դաշինքով (1829 Սեպտ. 14), որով Նեղուցներից ազատ երթեւեկի իրաւունք էր տրւում միայն առեւտրանաւերին։

Հակառակ քանիցս Թուրքիոյ վրայ տարած իր փայլուն յաղթանակներին, Ռուսիա, մինչեւ 19րդ դարի առաջին կէսը, հաշուի առնելով արտաքին աշխարհում տիրող ընդհանուր կացութիւնը, փաստօրէն պաշտպան կանգնեց Օսմանեան Կայսրութեան պահպանումին Եւրոպայի մէջ։

Մի քանի խօսք դարաշրջանի երկու ռուս ցարերի մասին՝ Նիկոլայ Ա.ի և Աղեքսանդր Բ.ի՝ որոնց ժամանակ պայքարը Նեղուցների տիրացման շուրջ աւելի եւ որոշակի կերպարանք առաւ։

ՑԱՐ ՆԻԿՈԼԱՅ Ա. (1825—1855).— Իր պետութեան քաղաքականութիւնը Թրքական հարցում յատակօրէն ճշտելու համար, ցարը այս նպատակով 1829ին յատուկ Ցանձնախումբ կարգեց, գլխաւորութեամբը իշխան Կոչուբէյի, որին և յանձնեց հարցի ուսումնասիրութիւնը։

Ցանձնախումբը, եզակէտ առնելով այն ակզբունքը, թէ Ռուսիոյ շահերին համապատասխան է Վոսփորում տկար հարեւան ունենալ, միաձայնաբար յանգեց հետեւեալ եզրակացութեան.

«Նկատելով, որ Եւրոպայում Օսմանեան Կայսրութեան պահպանման օգուտները գերազանց են վնասներից. եւ, հետեւաբար, ընդունելով, որ նրա գոյությունը հակառակ է Ռուսիոյ իրական շահերին. այս նկատումներով խոհեմութիւնը պահանջում է կանխել այդ գոյությունը»։*)

Միաժամանակ Ցանձնախումբը յանձնարարում էր պատրաստ լինել պատմութեան դատավճռին, երբ Թուրք պետութեան մահը անխուսափելի պիտի դառնայ Եւրոպայում, արագօրէն ձեռք առնել կարենալու համար բոլոր միջոցները, որպէսզի որեւէ մեծ պետութիւն չկարողանայ գալ եւ գրաւել դէպի Սեւ ծով տանող մուտքերը։

Այս եզրակացութեանց իր լրիւ համամտութիւնը է տալիս Նիկոլայ Ա.։

Գալիս է 1833ը, երբ Սուլթանի իշխանութեան դէմ ըմբոստացած Մեհմեդ Ալին, Եգիպտոսից յաղթականօրէն արշաւում և Սուրիոյ վրայով գալիս ու սպառնում է Պոլսոյ մատոյցներին։

Անաբեկ Սուլթանը դիմում է օգնութեանը կայսր Նիկոլայ Ա.ի, որի բանակները, գլխաւորութեամբը ծովակալ Լազարեւի, 1833 Փետր. 8ին ռազմանաւերից ցամաքանում են կատարում Հունքիար-Իսքելեսի, Վոսփորի ասիական ափում։ Քիչ ուշ, նոյն թուի Յունիս 26ին, նոյն Հունքիար-Իսքելեսիում կնքւում է ռուսաթուրք պաշտպանողական զինակցութիւնը, որի մէկ գաղտնի յօդուածով Թուրքիան, ի փոխարէն այն օժանդակութեան, որ պիտի ստանայ Ռուսիայից, պարտաւորւում է Նեղուցները գոցել օտարազգի ռազմանաւերի առջեւ։

1841ին կնքւում է ծանօթ «համաձայնութիւնը Նեղուցների մասին», որով «Օսմանեան Կայսրութեան հին օրէնքի»ը (այն մասին, թէ Նեղուցները

*) Ա. Մանդելշտամ — «20րդ դարու Ռուսիան թրքական Նեղուցների առջեւ» («Նովոսելիէ», Նիւ Եորք, 1946, թիւ 29—30, էջ 103)։

գոց են օտարազգի ռազմանաւերի առջեւ) տեղ է գրաւում միջազգային իրաւունքի մէջ իբրեւ նրա սկզբունքներից մէկը. այս համաձայնութեան յարում են՝ Անգլիա, Ռուսիա, Ֆրանսա, Պրուսիա, Աւստրիա և Թուրքիա։

Խրիմի պատերազմում պարտուելով՝ Ռուսիա պարտադրուած է լինում ստորագրելու 1856 Մարտ 30ի դաշինքը (Փարիզի), որով խախտւում էր ռուսական գերիշխանութիւնը Սեւ ծովում։ Այդ դաշինքով Սեւ ծովը հռչակւում էր չեզոք։ Նա դառնում էր անմատչելի ոչ միայն ոչ-եզերամերձ պետութեանց, այլ և ռուսական և Թրքական ռազմանաւերի համար. նաեւ Թուրքիա և Ռուսիա զրկւում էին այնտեղ ռազմատորմիղ պահելու և նրա ափերը ռազմազինելու իրաւունքից։

ՑԱՐ ԱՂԵՔՍԱՆԴՐ Բ. (1855—1881).— 1855ին գահ բարձրացաւ Նիկոլայ Ա.ի որդին՝ Աղեքսանդր Բ., որ ռուսական պատմութեան մէջ ծանօթ է «Ցար Ազատարար» տիտղոսով։

Այս կայսեր գահակալութեան շրջանը բացառիկ տեղ է գրաւում բազմադարեան ռուս երկրի պատմութեան մէջ։ Աղեքսանդր Բ. գահ բարձրացաւ այն ժամանակ, երբ իր հօր իսկ՝ Նիկոլայ Ա.ի վկայութեամբ՝ «յեղափոխութիւնը գտնւում էր Ռուսիոյ դռների մօտ»։ Համաժողովրդական այս փոթորիկը սանձելու համար՝ ցարը 1861 Փետր. 19ին արքայական հրովարտակով վերացրեց ճորտատիրական անարգ կարգերը Ռուսիոյ մէջ՝ շուրջ 20 միլիոն ճորտերի ազատութիւն տալով. «նախադասելի է ճորտատիրական կարգերը վերացնել վերից,— ասել էր ցարը Մոսկուայի ազնուականութեան, 1856 Մարտ 30ին,— քան թէ սպասել, որ նրանք իրենք իրենց սկսեն վերացուել վարից»։

Ցարը կատարեց նաեւ մի շարք այլ — դարձեալ չափազանց կարեւոր — բարեփոխումներ երկրում. «մեծ բարեփոխութեանց դարաշրջանը»,— այսպէս որակուած է բարեկարգումների այն շրջանը, որ գլխաւորեց Աղեքսանդր Բ.։ *)

Իր ազ բազուկն էր, թագաւորութեան ամբողջ շրջանին, մեր հռչակաւոր ազգակիցը՝ կոմս Լորիս-Մելիքեան։

Նոյնքան մեծակշիռ դէպքերով լի եղաւ այս գահակալութիւնը երկրի նաեւ արտաքին քաղաքականութեան մէջ, մանաւորապէս Բալկաններում, ուր սլաւ ժողովուրդները ռուսական զէնքի օգնութեամբ իրենց ազատութեան տիրացան։

Այս ցարի ժամանակ է նաեւ, որ Հայ Դատը, առաջին անգամը լինելով դարերից ի վեր, Սան-Ստեֆանոյի եւ Բերլինի դաշինքներով միջազգային հանգամանք առաւ։

Աղեքսանդր Բ. իր հօր գահի հետ միասին ժառանգեց նաեւ 1856ի փարիզեան ամօթալի դաշինքը։ **)

Իր արտաքին քաղաքականութեան առաջնագոյն նպատակը դարձաւ նախ այս ամօթը սրբել ռուս երկրի երեսից և ապա վերականգնել Սեւծովեան փառաւոր ռազմատորմիղը ու վերակալել Ռուսիոյ դարաւոր պայքարը յանուն Նեղուցների եւ Պոլսոյ տիրացման։

---

*) Այս պատմաշրջանին նուիրուած լաւագոյն գործերից մէկը (ռուս լեզուով) նկատուած է մեր անուանի ազգակցի՝ **Դերիգոր Ջանշեանի** ծանօթ աշխատութիւնը՝ «**Մեծ Բարեփոխութեանց Դարաշրջանը**» խորագրով։ 859 էջնոց այս գործի 9րդ հրատարակութիւնը, հայազգի պրոֆ. **Ա. Ջիվելեգեանցի** բնդարձակ կենսագրական-յառաջաբանով, լոյս տեսաւ Ջանշեանի մահից հինգ տարի յետոյ, 1905ին, Պետերբուրգ։

**) Տակաւին փարիզեան սպանիչ դաշինքը չստորագրուած՝ նախատագիրը ցար Նիկոլայ Ա.ին խնայած եւ նրա հոգին տառած տարած էր։

«Ես հանգիստ պիտի չմեռնեմ,— գրում էր ցարը իր որդուն 1861ի Սեպտ.ին,— մինչեւ որ Սեւծովեան ռազմատորմիղը վերակենդանացած չտեսնեմ»։

Աւելի ուշ, երբ 1877–78ի ռուս–Թրքական պատերազմը սկսաւ, ռուս բանակների գերագոյն հրամանատարը այդ պատերազմում՝ մեծ իշխան Նիկոլայ (կայսեր կրտսեր եղբայրը)՝ երբ դիմում է ցարին հրահանգի համար՝ ցարը նրան պատասխանում է միայն մէկ հատիկ բառով — «ՊՈԼԻՍ»։)

Իր Թագաւորութեան ամբողջ չրջանին, 26 տարի չարունակ, ցարը յամառաբար հետապնդեց այս նպատակները,— վերականգնում Սեւծովեան ռազմատորմղի եւ տիրացում Պոլսոյ և Նեղուցների։

*Բայց նա տեսաւ այս նպատակներից միայն առաջինի իրացումը, երկրորդը նրա համար այդպէս էլ մնաց երազ։**)*

Շատանանք այս թռուցիկ ակնարկով և անցնենք առաջ, որովհետեւ մեզ չհագրգռում են առաւելաբար այն դէպքերը, որ տեղի ունեցան Նեղուցների չուրջ 1870ից այս կողմ։

---

*) «Մեծ Խորհրդային Հանրագիտարան», հ. Բ., 1926, Մոսկուա էջ 158—159:

**) Ոգբերգական եղաւ այս «Ազատարար»ի նակատագիրը. գանակալութեան սկզբնական շրջանին մեծ բարեփոխութիւններ մտցնելով երկրում՝ հեռագային ցարը սկսեց նահանջել եւ փորձեց մինչեւ իսկ որոշ ազատութիւններ եւ առնել: Ցեղափոխականների կողմից մի շարք լուրջ մահափորձեր եղան իր կեանքի դէմ.—Կարակոզովի (1866 Ապրիլ 4), Սոլովեովի (1879 Ապրիլ 2), Խալտուրինի (պայթիւն Ձմեռնային պալատում), Ալեքսանդրովսկ երկաթուղայանի մօտ (գեռնափոր անցքի միջոցով) եւ այլն: Միայն 1881 Մարտ 1ին «Ժողովրդական Կամք»ի անաբեկիչներից Ռրսակով կարողացաւ յաջող անաբեկումով վերջ տալ ցարի կեանքին: Այս գործով դատուեցին ու կախուեցին (1881 Ապրիլ 3ին, Պետերբուրգ), Ռրսակովից բացի, ռուս ականաւոր յեղափոխականներից նաեւ Կիբալչիչ, Միխայլով, Ժելիաբով եւ Պերովսկայա (կին):

Առնում ենք 1870 թուականը, որովհետեւ աւելի եւ գնալ և աւելի ընդարձակել մեր խօսքի սահմանները մեզ թոյլ չի տալիս մեր գրքոյկի ծաւալը։

Առնում ենք 1870ը նաեւ այն պատճառով, որ մինչեւ այդ թուականը արդէն տեղի ունեցած էր Խրիմի պատերազմը, ուր Ռուսիոյ թշնամիները՝ բաց գտնելով ռուս երկրի դռները՝ իրենց ռազմանաւերով ու բանակներով խուժած էին Սեւ ծով եւ բուն իսկ ռուսական հողի վրայ ամենէն մահացու հարուածներից մէկը հասցրած ռուս երկրին։ Այդ թուականին, առաջին անգամը լինելով, ռուս ժողովուրդը փորձառաբար տեսաւ, թէ ի՛նչ է իր տան վիճակը, երբ ուրիշների ձեռքն են նրա բանալիները։

Եւ, վերջապէս, առնում ենք 1870 թուականը, որովհետեւ 1869ին Սուէզի ջրանցքը բացուելով՝ բացառիկ կարեւորութիւն ստացաւ Միջերկրականը, և կրկնապէս բարձրացաւ Նեղուցների արժէքը։

Պարզ թուարկումն իսկ քաղաքական ամենէն բնորոշ առաջարկների, լուծումների և միջպետական համաձայնութեանց, որ 1870ից այս կողմ եղած են Նեղուցների չուրջ, պիտի գայ յստակ կերպով վկայելու բացառիկ կարեւորութիւնը այն տեղի, որ աշխարհի տնտեսական և ռազմա–քաղաքական մրցանոգութեանց մէջ գրաւում են Թրքական ջրուղիները։

Անցնենք այժմ դէպքերի արձանագրումին 1870ից այս կողմ։)

---

*) Մեր գրութեան այս գլուխը կազմելիս՝ լայնօրէն օգտուած եմ — յանախ յաւելումներ եւ սրբագրութիւններ կատարելով — մի մեծարժէք եռհատոր գործից, որ 1945ին լոյս տեսաւ Մոսկուա, իբրեւ «Արտաքին Քաղաքականութեան Մատենադարան»ի հրատարակութիւն։

ԼՈՆԴՈՆԻ ԴԱՇԻՆՔԸ (1871 Մարտ 13).— Ֆրանս–պրուսական պատերազմում պարտուած էր Ֆրանսան, այն երկիրը, որ Խրիմի պատերազմում ծանրագոյն հարուածը հասցրեց Ռուսիոյ, Սեւաստոպոլի առջեւ։

Պահը հասած նկատելով՝ Ռուսիան կարողացաւ մեծ պետութեանց պարտադրել փարիզեան դաշնագրի վերաքննութեան իր պահանջը։

Այս վերաքննութիւնը տեղի ունեցաւ Լոնդոն, ուր և կնքուեց 1871ի ծանօթ դաշինքը։

Այս դաշինքով չեղեալ էր հռչակւում Սեւ ծովի չեզոքացումը. մեծ պետութեանց այս մէկ նահանջն արդէն — չեզոքացման վերացումը — մեծ յաղթանակ էր Ռուսիոյ համար։ Դաշինքը, սակայն, պահում էր իր ուժի մէջ այն սկզբունքը, թէ Նեղուցները գոց պէտք է մնան օտարերկրեայ ռազմանաւերի առջեւ. միաժամանակ նոյն դաշինքի 2րդ յօդուածով Սուլթանը արտօնւում է Նեղուցները բանալու բարեկամ եւ զինակից պետութեանց ռազմանաւերի առջեւ, եթէ երբեք նա այդ անհրաժեշտ կը նկատի ի կատարումն փարիզեան ուխտի (1856ի) այն որոշումների, որոնցով ապահովւում է ամբողջականութիւնը Օսմանեան կայսրութեան։

ներից մէկը:

Գործի անունն է — «Պատմութիւն Թիւանա-գիտութեան»:

Գործը լոյս տեսած է խմբագրապետութեամբը ակադեմական Վ. Պոտեմկինի եւ աշխատակցութեամբը ակադեմականներ՝ Տարլէի, Պոտեմկինի եւ պրոֆեսորներ՝ Միճցի, Խվոստովի, Պանկրատովի եւ Կոլչանովսկիի:

Այնտեղ, ուր գլուխը կազմելիս օգտուած ենք այլ աղբիւրներից, գրեթէ միշտ այդ աղբիւրները ծանօթագրութեամբ առանձին յիշատակած ենք:

ՇԷՕՆԲՐՈՒՆԻ ՈՒԽՏԸ (1873 Մայիս–Հոկտ.).— 1873ի Մայիսին Վիլհելմ Ա., ուղեկցութեամբը Բիսմարկի եւ Մոլտկէի, Պետերբուրգ է գալիս և այստեղ, 1873 Մայիս 6ին, Աղեքսանդր Բ.ի հետ կընքում ռուսևգերմանն զինակցութեան ուխտը։ Յաջորդ ամսին, Յունիսին, ռուս ցարը, ուղեկցութեամբը Գորչակովի, առաջին անգամը լինելով Խրիմի պատերազմից այս կողմ, մեկնում է Եւրոպա — բարեկամական մի բացառիկ ցուցական ակտ — ուր Շէօնբրունի մէջ (Վիեննա), 1873 Յունիս 6ին, ստորագրութեամբը երկու միապետների, կընքւում է աւստրևռուս համաձայնութիւնը։ 1873 Հոկտ. 23ին Վիլհելմ Ա. Վիեննա գալով՝ միանում է Շէօնբրունի համաձայնութեան։ Այսպիսով ստեղծւում է պատմութեան մէջ ծանօթ «Երեք Միապետների Զինակցութիւն»ը։

Շուտով կրկին անգամ պզտորւում են ֆրանկևգերման յարաբերութիւնները։ Հաստատ երաշխիք ունենալու համար, որ նոր — ու հաւանական — ֆրանկևգերման զինաբախումին Ֆրանսա մենակ պիտի մնայ, ինչպէս որ մենակ եւ առանձին մնացած էր 1870ին, Բիսմարկ իր դիւանագէտներից Ռագովիցին 1875 Փետր.ին յատուկ առաքելութեամբ ուղարկում է Պետերբուրգ։

Այստեղ ցարը, առանց երբեք ասելու, թէ ինք նպատակ ունի Պոլիսը գրաւելու, ուզում է տեղեկանալ, թէ ի՞նչ պիտի լինի Թուրքիոյ ժառանգութեան խնդիրը, երբ այդ երկիրը քայքայուի։ Բանագնացը կանցլերից լիազօրուած լինելով՝ յայտնում է.

«Գերմանիան ձգտում է օգտակար լինել ռուս քաղաքականութեան և տրամադիր է իւրացնելու ռուսական տեսակէտը մեծ հարցերի մէջ, այսինքն

այն հարցերի, որոնք մեծ են ներկայանում Ռուսաստանի համար»։*)

Ակնարկը, առաջին հերթին, Պոլսոյ և Նեղուցների։

Ի պատասխան այս սիրաբեղումին, ռուս վարչապետը՝ Գորչակով՝ յայտնում է, որ ռուսական դինակցութիւնը հաստատուն մնում է իր ուժի մէջ։

«ԲԵՐԼԻՆԵԱՆ ՅՈՒՇԱԳԻՐ»Ը (1876 Մայիս 13). — Հաղիւ Ֆրանկֆուրտեան նոր պատերազմի վտանգը անցած՝ 1875ի ամրան նախ Հերցեգովինայի եւ ապա Բոսնիոյ մէջ ծայր են տալիս ապստամբական շարժումները Թուրքիոյ դէմ։ Որոշ բարեփոխութիւններ մտցնելու առաջադրութեամբ այս շրջանների մէջ, պահելով հանդերձ Թուրքիոյ հողային ամբողջականութիւնը, Գորչակովի առաջարկութեամբ Բերլինում համախմբուում են երեք միապետները — Ռուսիոյ, Գերմանիոյ և Աւստրո-Հունգարիոյ, — եւ 1876 Մայիս 13ին ստորագրում է այսպէս կոչուած «Բերլինեան Յուշագիր»ը։ Իտալիա եւ Ֆրանսա միանում են այս «Յուշագիրի»ին, սակայն Անգլիա — ոչ։ Դիզրայէլի, իրեն հետ ունենալու համար Թուրքիան և ռուսական գրաւման վտանգից զերծ պահելու համար Նեղուցները և Պոլիսը՝ ընդդիմանում է «Երեք»ների՝ միջամտութեան թրքական գործերին։ Անգլիոյ պաշտպանութիւնը ունենալով՝ Թուրքիա չի յօժարում որեւէ բարեփոխութեան։

1876 Յունիս 30ին Սերբիան պատերազմ է յայտարարում Թուրքիոյ։ Ապստամբ վիճակի մէջ են նաև Բուլգարիան եւ Զերնոգորիան։

*) Ֆուսալիմսկիյ — «1875ի պատերազմական ամանորը», էջ 157:

Անգլիական ռազմատորմիղը, ի պաշտպանութիւն Թուրքիոյ, գալիս խարսխում է Դարդանելի առջեւ։

ՌԱՅԽՇՏԱԴԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ (1876 Յուլիս 8). — Կացութեան բարդացումը նկատի առնելով՝ Աղեքսանդր Բ. և Ֆրանց-Իոզեֆ 1876 Յուլիս 8ին հանդիպում են ունենում Ռայխշտատի ամրոցում (Բոհեմիա), ուր Աւստրիա, ի միջի այլոց, յօժարում է, որ Թուրքիոյ քայքայման դէպքում Պոլսեան նեղուցի Ռուսիոյ։*)

Այստեղ, այս հանդիպումին, ճշտուում են դիմերը այն համաձայնութեան, որ քիչ աւելի ուշ, 1877 Յունուար 15ին, ստորագրուեց Աւստրիոյ եւ Ռուսիոյ միջեւ։

Ըստ Ռայխշտատի համաձայնութեան 2րդ կէտի՝ որեւէ նոր կարգ պէտք չէ հաստատուէր Բալկաններում «առանց մասնակցութեանը մեծ պետութեանց, որոնք երաշխաւորած էին ամբողջականութիւնը Օսմանեան Կայսրութեան»։

Նոյն համաձայնագրի 7րդ կէտի մէջ ասուած էր հետեւեալը.

«Բալկանեան թերակղզու վրայ որեւէ զգալապէս մեծ սլաւ պետութիւն պէտք չէ ստեղծուի ի վնաս ոչսլաւ ցեղերի»։

Շտապենք ասել, որ բուն պատճառը այն մեծ ձախողանքի — մեզ համար վերջացած այնքան եղերական հետեւանքով — որին Ռուսաստանը Սան-Ստեֆանոյից յետոյ ենթարկուեց Բերլինի վեհաժողովում, թագնուած էր ճիշտ այս յօդուածների տակ։

Այս մասին — իր տեղում սակայն։

*) «Ռուսական-գերմանական յարաբերութիւններ 1873—1914 թուականներին», Մոսկուա, էջ 37—39:

Ինչպէս ասացինք, խռոված էր քաղաքական աշխարհը։

Շուտով ծանրանում է կացութիւնը ամբողջ Բալկանների մէջ և անխուսափելի դարձնում «Եւրոպական Համերգ»ի միջամտութիւնը թրքական գործերին։

Դիզրայէլի յոժարում է — մանաւանդ իր հզօր ախոյեանի՝ Գլադստոնի բացած Ղպայքարը նկատի առնելով դանլիճի դէմ — որ որոշ բարեփոխութիւններ մտցուեն Բոսնիոյ, Բուլգարիոյ և Զերնոգորիոյ մէջ, պայմանով սակայն, որ «Պոլիսն իր երջակայքով չէզոքացուի եւ վերածուի ազատ նաւահանգստի... Անգլիոյ պաշտպանութեանը տակ»։ *)

Հակազդելու համար այս ծրագրին, Ռուսաստանը, համամտութեամբը Աւստրիոյ, առաջարկում է բոլոր պետութեանց ռազմանաւերը մտցնել Մարմարա։

Անգլիա, ի հարկէ, մերժում է այս առաջարկը։

ՊՈԼՍՈՑ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ (1876 Դեկտ. 11).— Կացութիւնը ծանրանալով՝ առաջարկութեամբը Ռուսիոյ և համամտութեամբը Անգլիոյ՝ 1876 Դեկտ. 11ին Պոլսոյ մէջ միջազգային խորհրդաժողով է գումարուում, որին Ռուսիոյ կողմից մասնակցում է կոմս Իգնատիեւը, իսկ Անգլիոյ կողմից՝ լորդ Սալիսբերին (հնգկական գործերի նախարարը Դիզրայէլիի — որ այժմ լորդ Բիկոնսֆիլդ անունն էր կրում — դանլիճում)։

Խորհրդաժողովի վերջին՝ Դեկտ. 23ի նիստին, առաջին անգամը լինելով՝ ներս են հրաւիրուում Թուրքիոյ ներկայացուցիչները։

Փրեթէ նոյն օրը, հրամանագրովը Աբդուլ-Համիդի, որ գահ բարձրացած էր 1876 Օգոստ. 31ին, Թուրքիոյ վարչապետ է կարգուում սանմանադրատէր ճանաչուած Միդհատ փաշան։

Խորհրդաժողովը տակաւին իր որոշումները չյայտնած՝ մէկէն սկսում են որոտալ Պոլսոյ թընդանօթները։

Այս խորհրդաւոր համազարկերի ձայնը առնելով՝ անմիջապէս Թուրք պատուիրակներից արտ. գործոց նախարար Սաֆէթ փաշա ոտքի է կանգնում եւ հանդիսաւորապէս յայտարարում.

«Մի մեծ աւար, որ տեղի ունեցաւ նիշտ այս վայրկեանին, փոխեց այն վարչաձեւը, որ 600 տարիներից ի վեր իշխում էր Թուրքիոյ մէջ. հռչակուեց սանմանադրութիւն, որով Նորին Մեծութիւն Սուլթանը երջանկացում է իր Կայսրութիւնը»։

Սաֆէթի յայտարարութեամբ՝ այլեւս աւելորդ էին դատնում Խորհրդաժողովի որոշումները։ Թուրքիան մերժում էր այդ որոշումները։

Այս ամբողջ խաղի բուն հեղինակն էր Անգլիոյ դեսպանը Պոլսոյ մէջ՝ Էլիոտ՝ որ գործում էր ուղղակի հրահանգներովը լորդ Բիկոնսֆիլդի։

Դէպքերը յամառաբար Ռուսիան մղում են դէպի պատերազմ։

ԲՈՒԴԱՊԵՇՏԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ (1877 Յունուար 15).— Ռուսիոյ և Աւստրօ-Հունգարիոյ միջեւ, 1877 Յունուար 15ին, կնքուում է մի գաղտնի համաձայնութիւն, որով Աւստրիա պարտաւորուում է չէզոքութիւն պահել, երբ Ռուսիա պատերազմի բռնուի Թուրքիոյ հետ։ Թէ՛ այս եւ թէ մի այլ յաւելեալ համաձայնութեամբ ճշտուած էին կողմերի քաղաքական և հողային պահանջները։ Այն պարագային, եթէ պատերազմը ամբողջական քայքայում բերէր Թուրքիոյ, Պոլիսը, ըստ Ռայխշդատի աւրա-

*) «Պաշտուրիւն Դիւանագիտութեան», ճ. Բ., էջ 31։

տրօ-Հունգարեռուս դաշինքի (8 Յուլիս 1876), պիտի անցնէր Ռուսիոյ։

Պատերազմից խուսափելու համար՝ Ռուսաստանը կատարում է մի վերջին փորձ եւս. կոմս Իգնատիեւ պատում է եւրոպական պետութեանց մայրաքաղաքները եւ յաջողում գրաւել նոնել «Եւրոպական Համերգ»ի համաձայնութիւնը։ 1877 Մարտ 31ին վեց պետութիւններ ստորագրում են այսպէս կոչուած «Լոնդոնեան Պրոտոկոլ»ը՝ Թուրքիայից համեստ բարեփոխութիւններ պահանջելով քրիստոնեան սլաւ երկրների համար։

1877 Ապր. 12ին Թուրքիան մերժում է այս հաւաքական գիմումը։

Մերժման յաջորդ օրն իսկ, Ապր. 13ին, Ռուսիա զօրակոչի է անցնում, իսկ Ապր. 24ին՝ պատերազմ յայտարարում Թուրքիոյ։

Բիկոնսֆիլդ, պատերազմի լուրը առնելով, մտածում է անմիջապէս գրաւել Դարդանելը։ Սակայն դանլիճի մի շարք ականաւոր անդամների ընդդիմութեանը հանդիպելով, Լորդը, 1877 Մայիս 6ին, իր արտ. գործոց նախարարի՝ Դերբիի միջոցով՝ մի յուշագիր է ներկայացնում Լոնդոնի ռուսական դեսպանին՝ Պ. Շուվալովի, յայտնելով, որ Անգլիա թոյլ պիտի չտայ,— առաջին՝ Սուէզի ջրանցքի պաշարումը Ռուսիոյ կողմից, երկրորդ՝ Եգիպտոսի անգամ առժամեայ գրաւումը, երրորդ՝ Պոլսոյ սեփականացումը եւ Նեղուցների իրաւական փոփոխումը։

Անգլեռուս պատերազմից խուսափելու համար, ռուս կանցլերը՝ Իգնատիեւ՝ իր դեսպանի միջոցով անմիջապէս պատասխանում է անգլիական ծանուցագրին՝ Սուէզի եւ Եգիպտոսի ապահովութեան մասին ամէն հաւաստիացում տալով, միաժամանակ

յայտնելով, որ Ռուսիա Պոլիսը եւ Նեղուցները համեւրոպական հարց է նկատում։ Իր նոյն ծանուցագրով Կոմսը նախազգուշացնում է Լոնդոնը, յայտնելով, որ պատերազմական գործողութեանց բերումով ռուս բանակը թերեւս հարկադրուած լինի Նեղուցների շրջանը առժամաբար իր գրաւման տակ առնելու։

Ռուսական այս վերջին առաջարկը վճռաբար մերժելով՝ 1877 Մայիս 19ին Դերբի դիմում է Աւստրօ-Հունգարիոյ, առաջարկելով միասնաբար դուրս գալ Ռուսիոյ դէմ։ Առաջարկը ընդունելու դէպքում՝ Լոնդոնը խոստանում էր անգլիական ռազմատորմիղը ուղարկել Նեղուցները։ .

Աւստրիա չի ընդառաջում այս ռազմածրագրին։

Մինչ այս մինչ այն Պոլսոյ անգլիական դեսպան Լայարդը Յուլիս 27 թուակիր հեռագրով յայտնում է իր կառավարութեան, որ ռուսական զօրքերը իբրեւ թէ հասած են Ադրիանուպոլսոյ դռներին։ Բիկոնսֆիլդը անմիջապէս հեռագրում է իր դեսպանին՝ առաջարկել Սուլթանին դէպի Նեղուցները «հրաւիրելու» անգլիական ռազմատորմիղը, որ պատրաստ կեցած էր Դարդանելի բերանը՝ Բեզիֆի ծովախորշում։

Նոյն օրերի ռազմական գործողութիւնները, սակայն, անիմաստ դարձրած էին այդ «հրաւէր»ը։

1877 Դեկտ. 10ին ռուսներն առնում են Պլեւնան։

Ռուսիա պատերազմը շահած էր գրեթէ։

Պետերբուրգը յատուկ ծանուցագրով յայտնած էր Գերմանիոյ եւ Աւստրիոյ հաշտութեան իր պայմանները։ Այս վերջինների մէջ էր մտնում նաեւ այն, որ Սեւ ծովի «եզերամերձ պետութիւնները» — խօսքը, ի հարկէ, առաւելաբար Ռուսիոյ մասին էր — իրաւունք պիտի ունենան, կարելի եղած դէպ-

քում, Նեղուցներից իրենց ռազմանաւերն անցկացընելու, բայց միայն «հատ-հատ» և ամէն անգամ Սուլթանի յատուկ թոյլտուութեամբ։

Այսքան համեստ պահանջն իսկ անընդունելի նկատուեց Անգլիոյ կողմից։

Լոնդոնը 1877 Դեկտ. 13 յուշագրով յայտնեց ռուս կառավարութեան, որ Պոլսոյ անգամ առժամեայ գրաւումը ռուս բանակի կողմից պիտի հարկադրէր Անգլիան... «ճախազգուշական միջոցների դիմելու»։

Այս «նախազգուշացում»ի առթիւ տուած իր յատակ և վճռական պատասխանի մէջ Ռուսիա յայտնում էր, որ եթէ ռազմական գործողութիւնները հարկադրեն, իր բանակը առժամաբար պիտի գրաւէ Պոլիսը։

1877 Դեկտ. 24ին Թուրքիա զինադադարի խնդրանքով դիմեց Անգլիոյ միջնորդութեանը։

Ռուսաստանը պահանջեց, որ այդ դիմումը լինի ուղղակի իր գերագոյն հրամանատարին։

1878 Յունուար 8ին Թուրքիա իր զինադադարի խնդրանքը ներկայացրեց ռուս գերագոյն հրամանատար մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչին։

Մեծ յուզում էր Անգլիոյ մէջ։ Յունուար 23ին Լոնդոնը նեռագրում է Դարդանելի բերանը խարբեխած ծովակալ Հորնբիին՝ ռազմանաւերով անցնել Նեղուցները։ Այս հրահանգի շուրջ ծանր տարաձայնութիւն ծագած լինելով դահլիճում՝ նոր հեռագրով հրահանգւում է եռ դառնալ եւ Նեղուցները չմտնել։

Իր հերթին ցարը, անգլեռուս պատերազմից խուսափած լինելու համար, հրամանագրում է իր գերագոյն հրամանատարին՝ Գելիպոլուի գրաւման մասին երբեք չխորհել, իսկ այն պարագային, եթէ Թուրքիա ընդունի զինադադարի պայմանները, չգրաւել նաեւ Պոլիսը, այլ կանգ առնել նրա պարիսպների առջեւ։

1878 Յունուար 31ին ստորագրւում է զինադադարը։

Նորէն խուճապ Լոնդոնում։ Նորէն վախեր, թէ ռուսները պիտի մտնեն Պոլիս, ուր Անգլիա պիտի ուզէր միայն իր դրօշը տեսնել։

Տակաւին 1877ի Օգոստ.ին Բիկոնսֆիլդը հեռագրած էր Պոլսոյ իր դեսպանին՝ Լայարդի.

«Պիտի ուզէի մեր ռազմատորմիղը տեսնել Թուրքիոյ ներքին ջրերում եւ Դելիպոլուն ունենալ մեր ձեռքը իբրեւ նիւթական երաշխիք»։ *)

Ահա այս մթնոլորտի մէջ է, որ 1878 Փետր. 8ին Լոնդոնից հրահանգւում է ծովակալ Հորնբիին՝ մտնել Դարդանել։ Ծովակալը, ըստ հրահանգի, պատրաստ պիտի սպասէր Նեղուցի բերանը եւ անցնէր Դարդանելը, երբ այս մասին իրեն յայտնուէր Սուլթանի «հրաւէր»ը։ Զանազան երկար սպասելուց եւ այս «հրաւէր»ը չառնելուց յետոյ՝ ծովակալը հարկադրւում է կրկին վերադառնալ իր տեղը՝ Բեզիքի ծովախորշը։ Շուտով պարզւում է, որ Սուլթանը յանդգնած չէ նման «հրաւէր» ուղղելու բրիտանական ծովակալին, որովհետեւ ռուս գերագոյն հրամանատարը սպառնացած է, որ այն պարագային, եթէ անգլ. ռազմանաւերը Նեղուցներն անցնեն՝ ինքնանմիջապէս Պոլիսը պիտի գրաւի։

Եւ, իսկապէս, այդ էր ցարի որոշումը, որից յաջորդաբար երկու հրանգ է գալիս իր գերագոյն հրամանատարին,— առաջինը՝ չմտնել Պոլիս, իսկ վերջինը՝ ՄՏՆԵԼ։ **)

Փետր. 12ին ծով. Հորնբիին նորեն հրահանգ է տրւում մտնել Մարմարա, այս անգամ առանց Սուլթանի «հրաւէր»ին սպասելու։

---

*) «Դիւանագիտութեան Պատմութիւն», հ. Բ., էջ 44։

**) Տատիշչև — «Ալեքսանդր Բ.», հ. Բ., էջ 447—448։

Փետր. 15ին ռազմատորմիղը մտնում է Մարմարա եւ յարիսխ նետում Իշխանաց կղզիների առջեւ։ Քիչ յետոյ, Սուլթանի խնդրանքով, ռազմատորմիղը անցնում է Մուդանիա, Մարմարայի ասիական ափը։

Անգլիա եւ Աւստրիա սպառնում են խզել իրենց դիւանագիտական կապերը Ռուսիոյ հետ, եթէ վերջինիս կողմից փորձ կատարուի Պոլիսը գրաւելու։

Նոր բարդութիւններից վախենալով՝ Ռուսաստանը վերջնապէս որոշում է ձեռք քաշել Պոլսից և բանակում է Սան-Ստեֆանոյ, 12 վերստ հեռաւորութեան վրայ Պոլսից, Մարմարայի ափին։

ՍԱՆ-ՍՏԵՖԱՆՈՅ ԵՒ ԲԵՐԼԻՆ.— 1878 *Փետր. 19ին Սան-Ստեֆանոյում ստորագրուում է խաղաղութեան դաշինքը։*

Այս դաշինքով, ի միջի այլոց, Բուլգարիոյ ընդարձակուած սահմանները այնքան էին մօտենում Պոլսին, որ սպառնում էին թէ՛ բուն Պոլսին եւ թէ նեղուցներին։

Այս էր, ի դէպ, գլխաւոր պատճառը այն ընդդիմութեան, որ Անգլիա երեւան բերաւ Սան-Ստեֆանոյի հաշտութեան հարցում։

Սակայն բուն սպառնալիքը Սան-Ստեֆանոյի դէմ գալիս էր ոչ թէ Անգլիայից, այլ Աւստրիայից։

Իր տեղում ասացինք արդէն, որ Թայխշտադի համաձայնութեան 7րդ կէտով Ռուսիա պարտաւորուած էր զգալապէս մեծ սլաւ պետութիւն չստեղծել Բալկաններում։

Ի խախտումն այս յօդուածի, Ռուսիա, առանց Աւստրիոյ համամտութիւնը առած լինելու, Սան-Ստեֆանոյի համաձայնութեամբ Թուրքիոյ պարտադրեց ստեղծումը ճշմարտապէս մեծ Բուլգարիոյ։

Այս քայլը Աւստրիա նկատեց ի՛ր դէմ ուղղուած։ Ռուսիա գրեթէ գտնուում էր նոր զինաբախումի առջև։

*«...Եւրոպական պետութիւնները, եւ դրանց մէջ, գլխաւորաբար, Աւստրիան,— նկատում է իր «Ցուշեր»ում մեծանուն Վիտտէն,— չուզեցին ճանաչել այդ դաշինքը։ Մեզ մնում էր, այդ դաշինքը պահելու համար, Աւստրիոյ դէմ նոր պատերազմ մղել, որին մենք պատրաստ չէինք»։ *)*

Նոյն հարցին անդրադառնալով և վաւերագրերի յիշատակութեամբ հաստատելով, թէ 1878 *Փետր. 19ին Սան-Ստեֆանոյում ստորագրուած համաձայնագրի վերաքննութեան սպառնական պահանջը գալիս էր Աւստրիայից, որի նկատմամբ իր ուխտը դրժած էր Ռուսիա, ուստ մեծանմուտ պատմաբաններից Մ. Պոկրովսկիյ նկատում է.*

*«Ըստ Թայխշտադի աւստրեւռուս համաձայնութեան 2րդ յօդուածի, պատերազմի վախճանին Բալկանեան թերակղզու վրայ որեւէ նոր կարգ պէտք չէ հաստատուէր «առանց մասնակցութեանը մեծ պետութեանց, որոնք երաշխաւորած էին ամբողջականութիւնը Թրքական Կայսրութեան»։ Այսպիսով, Բերլինի վեհաժողովի գումարումը նախատեսնուած էր տակաւին պատերազմը չեղած, եւ սլաւոնասէրների հետագայի չաղակրատանքները այն մասին, որ, իբր թէ, թակարդ լարուած էր (Բերլինում), դէպի ուր Բիսմարկը, իրեն հետ ունենալով անգլիացիներին, հրապուրած և քաշած տարած էր Ռուսաստանը, կարելի է բացատրել միայն այն բանով, որ աւստրեւռուս համաձայնութիւնը գաղտնի պահուած էր սլաւոնասէրներից»։ **)*

Անգլիա միայն օգտուեց առիթից, ուժ տուաւ Աւստրիոյ և նոր վեհաժողովի պահանջը բերաւ, ուր

---

*) Կոմս Ս. Վիտտէ — «Ցուշեր», Բերլին, 1923, էջ 367։

**) Մ. Պոկրովսկիյ — "Ռուսաց Պատմութիւն", Մոսկուա, 2րդ հրատ., հ. Ե., էջ 315։

քննութեան պիտի առնուէր մասնաւորաբար Նեզուցներին վերաբերող իրաւավիճակի հարցը։

Իր հերթին Աւստրիա, օգտուելով Անգլիոյ ընծայած աջակցութիւնից, պահանջեց քննութեան առնել ոչ միայն Նեզուցների հարցը, այլ ընդհանրապէս Սան-Ստեֆանոյի ռուսական դաշինքը իր ամբողջութեանը մէջ։

Ռուսիա ակամայ ընդառաջեց այս պահանջին։ Բիսմարկ — ապագայ վեհաժողովի նախագահը — 1878 փետր. 19ին (այսինքն ճիշտ այն օրը, երբ ստորագրւում էր Սան-Ստեֆանոյի համաձայնութիւնը) Ռայխստագում արտասանած իր նշանաւոր ճառի մէջ պատրաստակամութիւն էր յայտնում կողմերի միջև «ազնիւ միջնորդ»ի դերը կատարել*)։

Բերլինի վեհաժողովի նախաշեմին Անգլիոյ արտ. գործոց նախարարը՝ լորդ Դերբի՝ իբրեւ բողոք Բիկոնսֆիլդի հակառուս ռազմաձեռնարկների դէմ, հրաժարական տուած եւ քաշուած էր ապարէզից՝ իր տեղը զիջելով «ռուսասէր» Սալիսբուրիի։**)

*) Իր նոյն գործի մէջ ռուս պատմաբանը՝ Պոկրովսկիյ, նիգնանֆի արժանացած «ազնիւ միջնորդ»ի՝ Բիսմարկի նասցէին նկատում է.

«Իրականին մէջ Բիսմարկը ինքնագովութիւն չէր անում, երբ ասում էր, որ Բերլինի Վեհաժողովում ինքն Ռուսիոյ շահերի պաշտպանութեանը համար շատ աւելին արած էր, քան ռուս բոլոր լիազօրները միասին առած» (էջ 322)։

**) «Ռուս կառավարութեան համար,— նկատում է պրոֆ. Վ. Խվոստով,— լորդ Դերբիի հրաժարումը նախարարական պաշտօնից մեծ կորուստ էր։ Այս նախարարը Բիկոնսֆիլդի հակառուս քաղաքական տրամադրութիւնները ամենէն աւելի ոռնձողներից մէկն էր։ Սակայն Ռուսիոյ համար մի քանի նշանակում էր նաեւ լէդի Դերբիի կորուստը։ Ինչպէս պարզւում է վերջերս հրապարակուած նոր փաստաթղթերից, նախարարի Տիկինը, բարեկամական յարաբերութեանց մէջ գտնուելով Շուվալովի հետ (Լոնդոնի ռուսական դեսպանը.—Ն.), տագնապի օրերից իսկ ռուս դեսպանին տեղեակ էր պահում այն ամենին, ինչ որ տեղի էր ունենում անգլիական դոմիինում» («Միւսաֆ. Պատմութիւն», հ. Բ., էջ 47)։

Այս վերջինը իր երկրի արտաքին քաղաքականութեան զեկը ստանձնեց՝ առաջին հերթին Ռուսիոյ հետ համաձայնութեան գալու առաջադրութեամբ։

Սակայն այս համաձայնութիւնը կարելի էր կնքել՝ կանխապէս Անգլիոյ վախերը փարատելով։

Այս մթնոլորտի մէջ է անա, որ 1878 Մայիս 30ին, տակաւին Բերլինի Վեհաժողովը չքացուած, ստորագրւում է անգլերուս համաձայնութիւնը, որով բուլգար սանմանները տարւում են Պոլսից դէպի հս., Բալկանեան լեռնաշղթայի պաշտպանութեան գծից այն կողմ։

Նոյն համաձայնութեամբ Անգլիա յօժարում էր Բաթումի, Արդահանի, Կարսի եւ Բեսարաբիոյ կցումին ռուսական հողերին։

Ի փոխարինութիւն այս զիջումների, Անգլիա, 1878 Յունիս 4ին, Պոլսոյ մէջ, մասնակցութեամբը բրիտ. դեսպան Լայարդի, կնքում է այսպէս կոչուած «Կիպրոսեան Համաձայնութիւն»ը։

Ըստ այս համաձայնութեան՝ Անգլիա պայմանագրուեն գրաւման տակ էր առնում Կիպրոսը՝ «զէնքի ուժով» պաշտպանելու համար Թուրքիան ընդդէմ Ռուսիոյ, երբ այս վերջինը, իրեն պահելով «Բաթումը, Արդահանը, Կարսը (Բեսարաբիան չկայ.—Ն.) եւ կամ այս վայրերից մէկնումէկը»՝ փորձի նոր գրաւումներ կատարել Թուրքիոյ ասիական ստացուածքների մէջ։ Նաեւ այն պարագային, երբ Ռուսիա յօժարէր ինքնակամօրէն Թուրքիոյ վերադարձնել Կարսը և իր միւս գրաւումները Հայաստանի մէջ՝ Անգլիա պարտաւորւում էր դարձեալ պարպել Կիպրոսը եւ չեղեալ նկատել ամբողջ համաձայնութիւնը։ Եւ, վերջապէս, նոյն համաձայնութեամբ Սուլթանը յանձնառութիւն էր ստանձ-

նում՝ Թուրքիոյ ասիական հողերի վրայ ապրող իր քրիստոնեայ հպատակների վիճակը բարելաւելու։ Այս յօդուածը Անգլիոյ դիւրութիւն էր ընծայում Թուրքիոյ ներքին գործերին միջամտելու։

Համաձայնութիւնը ստորագրուելուց յետոյ, Սուլթանը, Անգլիոյ հետ իր ունեցած պայմանը խախտելով, հրաժարւում է ֆերման արձակել կղզիի զիջման մասին։ Հակառակ այս փաստի, Անգլիա, այնուամենայնիւ, իր գրաւման տակ է առնում Կիպրոսը (ֆերմանը — «կամովին փոխանցումի մասին» — արձակւում է աւելի ուշ)։*)

Կղզին վերջնապէս կցուեց Անգլիոյ — նկատենք անցողակի — առաջին մեծ պատերազմին, երբ Թուրքիա այդ պատերազմում յարեց Գերմանիոյ։

1914 Նոյ. 5 թագաւորական հրամանագրի մէջ ուղղակի ասուած էր.

«Ն. Մեծութիւնը անհրաժեշտ նկատեց, որ Կիպրոս կղզին կցուի Իր սեպհականութիւններին»։**)

Բերլինի Վեհաժողովը բացուեց անգլերուս եւ անգլերթուրք գաղտնի դաշինքներից յետոյ, 1878 Յունիս 13ին։

Վեհաժողովում բոլոր պետութիւնները Ռուսիոյ դէմ ընդհանուր ճակատ կազմելով՝ կարողացան շատ բան նրանից հետ խլել։***)

*) Մանրամասնութիւններ տե՛ս Թուրքիոյ նախկին արտ. գործոց նախարարի աշխատութեան մէջ — G. Noradounghian — «Recueil d'actes internationaux de l'Empire Ottoman», v. III, էջ 522—526 (մեծ օգտուած են «Դիւանագիտութեան Պատմութիւն»ից, հ. Բ., էջ 47)։

**) «Նովոյէ Վրեմիա», Մոսկուա, 1 Յունուար 1947, թիւ 1։

***) Անգամ Իտալիան այդ Վեհաժողովում փորձում է նորանոր հողերի տիրանալ, ինչպէս որ տիրացած էր 1866ի պատերազմից յետոյ, հակառակ որ այս ժամանակ խորտակիչ կերպով պարտուած էր Կուստոցցայի ճակատամարտում.

«Ի՞նչ իրաւունքով Իտալիա նոր հողեր է պահանջում,— դառնացած հարց է տալիս Վեհաժողովում ռուս դիւանագէտներից մէկը,— մի՞թէ նորէն ճակատամարտ է կորցրած»։

Բաթումի շուրջ սակարկութիւն բանալով*), անգլիական պատուիրակութիւնը, գլխաւորութեամբ Բիկոնսֆիլդի և Սոլզբերիի, փորձում է Սեւ ծովը բաց հռչակել անգլիական ռազմատորմիղի առջեւ, ի խախտումն 1841ի եւ 1871ի համաձայնութեանց։ Սոլզբերիի այս համաձայնութիւնները մեկնաբանում է այն իմաստով, թէ դաշնադրող պետութիւնները յանձնառու եղած են Սուլթանի առջեւ, որ Նեղուցների փակ և կամ բաց լինելու պարագան կախուած պիտի լինի միայն Սուլթանից. ուրեմն, եթէ Սուլթանը արտօնի՝ որեւէ ռազմատորմիղ ազատօրէն Նեղուցներից կարող է անցնել։ Մինչ իրողութիւնն այն էր, որ յիշատակուած համաձայնութիւններով դաշնադրող կողմերը ոչ միայն Սուլթանի, այլ եւ փոխադարձաբար իրարու առջեւ յանձնառու եղած էին, որ Նեղուցները փակ պիտի մնան։

Անգլիոյ նիգերը անցնում են անպատուղ. Վեհաժողովը Նեղուցների նկատմամբ իրագործում է status quo ante-ի սկզբունքը, այլ խօսքով՝ 1841ի եւ 1871ի համաձայնութիւնները մնում են անփոփոխ։

ՑԱՐ ԱՂԵՔՍԱՆԴՐ Գ. (1881—1894). — Գէթ հարմարակի տանք այստեղ բնոյթը նաև այն քաղաքականութեան, որ Ռուսիոյ նախավերջին կայսրը՝ Աղեքսանդր Գ.՝ տանում էր Նեղուցների հարցում։

1882ին դեսպանի հանգամանքով Պոլիս է գալիս ռուսական ակնառուոր դիւանագէտներից Ալ. Նելիդով եւ մնում այնտեղ շուրջ 15 տարի, այդ շրջանին ծառայելով ռուսական երկու գահակալների՝ Աղեքսանդր Գ.ին (մինչեւ 1894ը) և Նիկոլայ Բ.ին (մինչև 1896)։

*) Բիկոնսֆիլդ եւ Սոլզբերի պնդում էին, որ 1878 Մայիս 30ի համաձայնութեամբ իրենք յօժարած են Բաթումի ռուսական «զրաւման» եւ ոչ թէ Բաթումի ռուսական «կցման»...

Նեղուցների վերաբերմամբ պատմութեան համար երկու թանգարժէք յիշատակագիրներ մնացած են ազգեսպանից, մէկը՝ ուղղուած կայսր Ալեքսանդր Գ.ին (1882ին), իսկ միւսը՝ Նիկոլայ Բ.ին (1896ին)։ *)

Իր անդրանիկ յիշատակագրի մէջ ռուսական տեսակէտը հիմնաւորելով Նեղուցների հարցում՝ գեսպանը գրում էր.

«Ինչ վերաբերում է Ռուսիոյ, ապա թւում է աւելորդ պնդել պատմական հակայ կարեւորութեանը, գրեթէ անհրաժեշտութեանը վրայ մեզ համար հաստատուելու Նեղուցներում (Ալեքսանդր Գ. այստեղ մակագրած է.— «ԱՅՈ՛»)։ Ոչ միայն մեր նիւթական ու առեւտրական շահերը և մեր զինուորական ապահովութիւնը հարաւում պաշտպանուած կը լինեն սրանով, այլ եւ մենք մէկէն արեւելքում գրաւած կը լինենք քաղաքական մի դիրք, որին չենք կարող հասնել այլ ճանապարհով։ Մեր ձեռքերի մէջ ունենալով ճանապարհների հանգոյցը բալկանեան երկրներից դէպի Ասիա եւ հակառակը, մենք պիտի տիրանայինք վճռական ազդեցութեան Բալկանեան և Փոքրասիական թերակղզիների ճակատների վրայ։ Բրիստոնեաների ազատագրման, ինչպէս նաև Թուրքիոյ սլաւ ժողովրդների ինքնատիպ զարգացման հարցը այս ձեւով ինքնին լուծուած պիտի լինէր»։

Սակայն ի՞նչպէս տիրանալ Նեղուցներին, երբ մանաւանդ կան ոչ միայն Թուրքիոյ, այլ եւ արեւմտեան պետութեանց յարուցած խոչընդոտները ռուսական ձգտումների դէմ։

Անդրադառնալով այս վերջին երկրներից եկող դժուարութեանց՝ դեսպանը նկատում էր.

*) Այս յիշատակագիրները հրատարակուած են «Պատմիր Դիւանի» 1931ի Երեք յաջորդական հատորներում՝ 46, 47 եւ 48։

«Այս պարագան պարտադրօրէն անհրաժեշտ է դարձնում մեզ համար կանխել մեր մրցորդներին և բոլոր միջոցները ձեռք առնել, որպէսզի այն վայրկեանին, երբ պայմանները առանձնապէս նպաստաւոր ձեւով կը դասաւորուեն մեզ համար, և կամ ուրիշների կողմից Նեղուցների գրաւման վտանգը շատ մօտ կը լինի, որպէսզի այդ վայրկեանին մենք կարող լինենք անվարան կերպով, վստահ մեր ձեռնարկի լիակատար յաջողութեան, անցնել Նեղուցների գրաւման և հաստատուել այնտեղ» (Ալեքսանդրը Գ. այստեղ մակագրած է.— «ՍԱ ԱՄԵՆԷՆ ԳԼԽԱՒՈՐՆ Է»)։

Իսկ ամբողջ զեկուցագրի վրայ ցարը մակագրում է հետեւեալը.

«Այս ամենը շատ բանաւոր է եւ խելացի։ Տայ Աստուած մեզ ապրել միինչեւ այդ երջանիկ եւ մեզ համար արտայոյզ վայրկեանը։ Ես չեմ կորցնում իմ յոյսը, որ վաղ թէ ուշ, սակայն այդ կը լինի, եւ պէ՛տք է որ լինի։ Պլխաւորն է — ժամանակ չկորցնել եւ ձեռքից չտալ յարմար վայրկեանը»։

Ցարը իր բովանդակ կեանքի ընթացքին հաւատարիմ մնաց այս քաղաքականութեան։

Աւելի ուշ թուականով, 1885 Սեպտ. 12ին, ցարը գրում էր զօր. Օբրուչեւին.

«Ըստ իս՝ մենք միայն մէկ գլխաւոր նպատակ պէտք է ունենանք, այդ — Պոլսոյ գրաւումն է՝ միանգամ ընդմիշտ նեղուցներում հաստատուելու եւ պահելու, որ այդ ջրուղիները տեւաբար պիտի մնան մեր ձեռքերում։ Այս է պահանջում Ռուսիոյ շահը, եւ այս պէտք է լինի մեր ձգտումը. ամբողջ մնացեալը, ինչ որ տեղի ունի այսօր Բալկանեան թերակղզում, երկրորդական է մեզ համար»։ *)

*) Ա. Մանկլօսամ — «20րդ դարու Ռուսիան բրմական նեղուցների առջեւ» («Նովոսելիէ», Նիւ Եորք, 1946, թիւ 29—30, էջ 104—105)։

Զարմանալ կարելի է միայն, թէ ի՞նչպէս Աղեքսանդր Գ., որի իմացական կարողութիւնները շատ համեստ էին գնահատուած քաղաքական աշխարհում, կարողացած է այսքան ճիշտ և այսքան յստակ կերպով տեսնել և ըմբռնել Նեղուցների արժէքը իր երկրի համար։

Համաշխարհային երկու մեծ պատերազմները — 1914ի եւ 1939ի — եկան վկայելու, որ Նեղուցների բաղդատմամբ իսկապէս որ երկրորդական է Ռուսիոյ համար արժէքը ոչ միայն Բալկանեան, այլ եւ ուրիշ մի քանի թերակղզիների։

Եթէ մինչեւ այդ պատերազմները Ռուսիա ամբացած լինէր Նեղուցներում, ստոյգ է, որ հիմնապէս տարբեր պիտի լինէր այդ պատերազմների ընթացքը։

1881 Մարտ 1ին գահ բարձրանալով՝ Աղեքսանդր Գ., միշտ ունկնդիր ժամանակի եւ դէպքերի թելադրանքին, Նեղուցների հարցում տարաւ այն քաղաքականութիւնը, որի մասին քիչ վերը խօսեցինք։

Անցնենք իր գահակալութեան չրջանին տեղի ունեցած միջազգային ակտերին։

«ԵՐԵՔ ԿԱՑՍՐՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ» (18 Յունիս 1881).— Բերլինի Վեհաժողովում յստակ եղաւ Ռուսիոյ համար, որ Անգլիա չի ուզում Նեղուցները փակ տեսնել իր ռազմանաւերի առջեւ։ Նեղուցները Անգլիոյ հսկողութեան տակ դնել՝ այս պիտի նշանակէր վտանգի մատնել ապահովութիւնը հազարաւոր վերստ երկարութիւն ունեցող ռուսական այն սահմանների, որ հանդչում էին Սեւ Ծովի վրայ. պիտի նշանակէր միաժամանակ հարաւային Ռուսիոյ ամբողջ առեւտուրը անգլիական ռազմատորմիղից կախման մէջ դնել։

Այս վտանգը դիմագրաւելու համար՝ Ռուսիա առաջին հերթին ձեռնարկում է Սեւծովեան հզօր ռազմատորմիղի կառուցման, որպէսզի նոր դաշինքների կնքումին այլ պետութեանց հետ կարողանայ իր դիրքերը թրքական հարցում աւելի եւս ամրացընել։

1880ին ընկած էր թրքասէր Բիկոնսֆիլդի դահլիճը եւ իշխանութեան եկած Գլադստոնը, այն մարդը, որի քաղաքական նպատակներից մէկն էր համաձայնութեան լեզու գտնել Ռուսիոյ հետ։

Անգլեռուս անջատ համաձայնութիւնից վախենալով՝ Աւստրիա եւ Գերմանիա 1881 Յունիս 18ին առանձին դաշինք են կնքում Ռուսիոյ հետ, ուր երեք միապետները փոխադարձաբար յանձնառու են լինում չեզոք մնալ, եթէ երբեք իրենցից մէկը պատերազմի կը բռնուի մի չորրորդ պետութեան հետ։

Այս չեզոքութիւնը տարածւում էր նաեւ այն դէպքի վրայ, երբ պատերազմը Թուրքիո՛յ հետ կը ծագի, պայմանով, որ պատերազմողը — ի հարկէ, «երեք»ներից ռուսը — իր նպատակները եւ պատերազմի ենթադրեալ արդիւնքները կանխապէս կը հաշտեցնի միւս երկուի ակնկալիքների հետ։

Նոր դաշինքով Գերմանիա եւ Աւստրիա խոստանում էին իրենց դիւանագիտական աջակցութիւնը ընծայել Ռուսիոյ ընդդէմ Թուրքիոյ, երբ այս վերջինը Նեղուցները փակ պահելու սկզբունքից շեղում կատարի ի նպաստ որեւէ երկրի ռազմանաւերի։

Այս կէտը ապահովագոյն նախազգուշացումն էր անգլեթուրք համաձայնութեան հաւանականութեանը դէմ. անգլիական ռազմատորմիղը դիւրութեամբ այլեւս չէր կարող մուտք գործել Սեւ Ծով։

Ռուսիա կարողացաւ այս կարեւոր պաշտպանութիւնը ապահովել իրեն Աւստրիոյ և Գերմանիոյ կողմից, իր հերթին յանձնառու լինելով չեզոք մը-

նալ, եթէ Գերմանիա պատերազմի բռնուի Ֆրանսայի հետ։

ՆՈՐ ԲԱՐԴՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՆԳԼԻՈՅ ԵՒ ՌՈՒՍԻՈՅ ՄԻՋԵՒ (1885ին).— 1878ին Անգլիա Բերլինի Վեհաժողովում դիւանագիտական մեծ յաղթանակ տարած էր Ռուսիոյ վրայ։ Երկու տարի վերջ, 1880ին, թեթեւ վինաբախումից յետոյ, Անգլիա իր հոգատարութեան տակ առաւ Աֆղանիստանը։

Այս յաջողութեանց հակազդելու համար՝ 1884ին Ռուսիա իրեն է կցում Թուրքմէնիստանը (Անդրկասպեան երկրում) և շարժւում դէպի Հերաթ, անմիջական սպառնալիքի տակ առնելով, ըստ անգլիացիների, Հնդկաստանը։

Մի պահ անխուսափելի էր նկատւում պատերազմը։

Կրիմի պատերազմը ցոյց էր տուած, որ Ռուսիոյ ամենէն խոցելի կէտը Սեւ ծովն է. վախ կար, թէ Անգլիա կարող է զօրք ցամաքանել Կովկասում և կրակի տակ առնել Օդեսան։

Անգլիական ռազմատորմիղի մուտքը Սեւ ծով խափանելու համար, Ռուսիա դիմում է Գերմանիոյ և Աւստրիոյ՝ պահանջելով 1881 Յունիս 18ին կընքուած «Երեք Միապետների Համաձայնութեան» գործագրութիւնը։

Բիսմարկ տալիս է այդ խոստումը։

Ռուսիոյ, այսպիսով, յաջողւում է ի դերև հանել անգլեւթուրք համաձայնութեան փորձերը։

Սուլթանը յայտարարում է, որ Նեղուցները զոց պիտի մնան։ Այս ասել էր, որ Սեւ ծովն ու Կովկասը անխոցելի էին այլեւս։

ԲԻՍՄԱՐԿԸ ՌՈՒՍԻՈՅ ԵՒ ՆԵՂՈՒՑՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄ։— Գերման կանցլերը գիտէր, թէ որքան է մեծ Նեղուցների արժէքը Ռուսիոյ համար։

Բերլինի Վեհաժողովում իրեն լքուած զգալով Ռուսիոյ կողմից, Բուլգարիա, այդ Վեհաժողովից յետոյ, փոխանակ Ռուսիոյ համար կամուրջ ծառայելու դէպի Պոլիս, դէպք առ դէպք Ռուսիոյ դէմ մարտարտակի էր վերածւում Պոլսոյ առջև։

Բիսմարկը գիտէր, որ այս լարի վրայ, ամբարտակը վերստին կամուրջ դարձնելու համար, ինք կարող է սակարկութիւններ անել Ռուսիոյ հետ։

1886ին Բիսմարկին անհրաժեշտ էր ռուսական չուկան բաց ունենալ գերման ծանր արդիւնաբերութեան առջև։

Խօսքի բռնուելով ռուս դեսպան Պաւել Շուվալովի հետ և նրան իր աջակցութիւնը խոստանալով բուլգարական հարցում՝ Բիսմարկ յիշեցնում է իր ծառայութեանը մասին Բաթումի հարցում. Բերլինի Վեհաժողովը, ինչպէս յայտնի է, ազատ նաւահանգիստ հռչակած էր Բաթումը. հետագայում Գերմանիա ամէն կերպ աջակցած էր այս նաւահանգիստը ամբողջովին ռուսական դարձնելու։

«Զանցած տարը տարի՝ դուք այդ ջրերում պիտի լեխեք»,— անցողակի նկատում է խորիմաց կանցլերը ռուս դեսպանին։

Աւիթը յարմար գտնելով՝ դեսպանը սկսում է «անտեղեակ» Բիսմարկին բացատրել, թէ ինչ մեծ կարեւորութիւն ունի Ռուսիոյ համար իր ապահովութիւնը Նեղուցների շրջանում։

Կանցլերը նորէն «անտեղեակ» ձեւանալով՝ դեսպանին յիշեցնում է միջազգային դաշինքների մասին, որոնց ուժով Նեղուցները պէտք է որ փակ մնան։

Շուվալով կրկին սկսում է բացատրել Բիսմարկին, որ միայն դաշինքներով կարելի չէ պետութեանց ապահովութիւն երաշխաւորել.

«Մենք պետք է որ նիստաւորութիւն ունենանք,— նկատում է դեսպանը,— կղպանք դնելու մեր դռների վրայ»։

Մի կարճատեւ ու խորհրդաւոր լռութիւնից յետոյ՝ կանցլերը յարում է.

«Է՞ն, ի՞նչ, եթէ դուք այդ կղպանքը դնէք, ապա մեր կողմից դուք, ի հարկէ, ուզելի չէք հանդիպի»։

Այս ղրոյցի մասին իր դեսպանի գոնունակ զեկոյցն առնելով՝ Ալեքսանդր Գ. նրա վրայ մակագրում է.

«ԱՅԴ ԷՐ ՊԱԿԱՀ...»*)

Այդ օրերին խօսք չկար Նեղուցների մասին. հետաքրքրականն այստեղ այն վերաբերումն է, որ եւրոպական դիւանագիտութեան խոշորագոյն դէմքերից մէկը՝ մեծազդեցիկ Բիսմարկը՝ ունէր ընդհանրապէս Ռուսիոյ հանդէպ։

Ամբողջ 28 տարի Բիսմարկը գլխաւորեց իր հայրենիքի — նախ՝ Պրուսիոյ և ապա՝ Գերմանիոյ — կառավարութիւնը, եւ այս ամբողջ շրջանին, մինչև իր հրաժարման թուականը, մինչեւ 1890 մարտ, ատելով հանդերձ ռուս երկիրը՝ միշտ ջանաց բարեկամ մնալ նրան եւ նրա կշիռը օգտագործել իր նպատակների համար։

Հակառակ էր Բիսմարկը գերման պատերազմին Ռուսիոյ դէմ։

«Նման մի պատերազմ, իր ռազմաճակատի անհուն տարածութիւններով,— գրում էր Բիսմարկը,— լի պիտի լինէր վտանգներով։ Կարլոս ԺԲ.ի եւ Նապոլէոնի օրինակները ցոյց են տալիս, որ ամենէն հմուտ ռազմավարներն անգամ դժուարութեամբ են կարողանում մազապուրծ փրկուել դէպի Ռուսիա կատարած իրենց արշաւից»։

*) «Պատմ. Թիւանցգիտութեան», հ. Բ., էջ 81—82:

Պատերազմական բախտն իսկ եթէ ժպտէր Գերմանիոյ, անգամ այդ դէպքում, նկատում է Բիսմարկը, «աշխարհագրական պայմանները անսահմանօրէն դժուարին պիտի դարձնէին մեզ համար սկզբնական յաջողութիւնը իր վախճանին հասցնել»։

Պատասխանելով նրանց, որոնք թեր էին պատերազմին Ռուսիոյ դէմ՝ հեռատես քաղաքագէտը գրում էր.

«Այդ մասին կարելի է վիճել միայն այն դէպքում, երբ նման մի պատերազմով իսկապէս որ կարելի դառնար խորտակել Ռուսիան։ Սակայն նման մի արդիւնք՝ անգամ ամենէն փայլուն յաղթանակներից յետոյ՝ դուրս է մնում ամէն հաւանականութեան սահմաններից։ Որովհետեւ պատերազմի ամենէն բարեյաջող աւարտումով իսկ երբեք կարելի պիտի չլինի քայքայել հիմնական ուժը Ռուսաստանի, այն ուժը, որ բխում է միլիոնաւոր բնիկ ռուսներից... Այս վերջինները, եթէ նրանց մենք մատնատենք անգամ միջազգային դաշինքներով, նոյնքան արագօրէն վերստին պիտի միաձուլուեն իրարու, որքան անդիկի բաժան մասերը։ Ռուս ազգը անխորտակելի կայսրութիւն է, հզօր՝ իր կլիմայով, իր տարածութիւններով եւ իր սահմանափակ պէտքերով...»։*)

Ընդհանուր առումով նոյն մտքերը իրենից առաջ արտայայտած էր պատերազմի մեծ իմաստասէրը՝ Կարլ Կլաուզեւից.

«Ռուսիա իր 1812 թուի պատերազմով վկայեց, — գրում էր Կլաուզեւից,— որ մեծ հողաշխարհով մի պետութիւն կարելի չէ գրաւել (մի բան, որ կա-

*) Նոյն տեղը, էջ 103:

ըելի էր գիտնալ նաեւ մինչեւ 1812ի պատերազմը)»։ *)

Իր գործի երկրորդ հատորում աւելի ընդարձակելով իր խօսքը՝ հեղինակը նկատում էր.

«Ռուսիա մի այնպիսի երկիր չէ, որ կարելի լինէր իսկապէս նուաճել, այսինքն զինուորական գրաւման տակ առնել. բոլոր պայմանների տակ այդ կարելի չէ անել ո՛չ ժամանակակից պետութեանց ուժերով եւ ո՛չ էլ կարելի էր անել այն 500.000 առիւններին օգնութեամբ, որ այդ նպատակով իրեն հետ բերած էր Բոնապարտ։ Նման մի պետութիւն կարող է պարտութեան մատնուել միայն իր սեփական տկարութեամբ եւ ներքին պատակտումների միջոցով։ Իսկ հասնել Ռուսիոյ քաղաքական գոյութեան այդ ներքին տկար կէտերին կարելի է միայն մի այնպիսի ցնցումով, որ թափանցէր ուղղակի երկրի սրտին։ Միայն հզօր թափով Մոսկուային հասնելով՝ Բոնապարտը կարող էր յուսալ խորտակել կառավարութեան քաջութիւնը և ժողովրդի տոկունութիւնն ու հաւատարմութիւնը»։ **)

Բիսմարկ, ինչպէս նաեւ Մոլտկէ (մեծը), այն հատատ համոզումին էր, որ Գերմանիա ի վիճակի չէ միաժամանակ երկու ճակատների վրայ կռուելու, թէ՛ Արեւմուտքում եւ թէ՛ Արեւելքում։ Եւ որովհետեւ Գերմանիոյ հզօրութեան մանացու թշնամին Արեւմուտքի մէջ էր, ուստի երկու մեծ վարիչների անխախտ քաղաքականութիւնն էր միշտ բարեկամ մնալ Ռուսիոյ (բոլոր պայմանների տակ միաժամանակ թշնամի չլինել ե՛ւ Ֆրանսայի, ե՛ւ Ռուսիոյ)։

*) Ե. Զլատուզեից — «Պատերազմի մասին», հ. Ա., 4րդ հր., Մոսկուա, 1937, էջ 246։

**) Ե. Զլատուզեից — «Պատերազմի մասին», հ. Բ., էջ 410։

Համաշխարհային երկու մեծ պատերազմները — մանաւանդ վերջինը, երբ Հիտլեր՝ իրեն հետ ունենալով գրեթէ համայն Եւրոպայի զինական ուժակցութիւնը՝ «հզօր թափով», ինչպէս որ պիտի ասէր Կլաուզեւից, հասաւ ոչ միայն Մոսկուայի, այլ եւ Լենինգրադի ու Ստալինգրադի դռներին — եկան ցոյց տալու, թէ որքա՞ն խորաթափանց միտք եւ աչքուսնէին երկու մեծ դէմքերը, մէկը՝ ռազմավար, իսկ միւսը՝ քաղաքագէտ։

Ռուսիոյ մասին ունեցած այս հիմնական ըմբռնումից էր բխում նաեւ այն վերաբերումը, որ Բիսմարկ ունէր Նեղուցների հարցում,— չընդդիմանալ Ռուսիոյ, բայց եւ դիւրութեամբ չզիջել նրան, այլ տեւաբար սակարկելով՝ այլ տեղեր այլ հարցեր կարգադրել։

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԱՀԱԿՈՉ (1887ի Յունուարին). — «Երեք Միապետների Համաձայնութեան» ժամանակը լրանում էր 1887ին։ Մինչ այդ վատթարացած էին աւստրեւռուս յարաբերութիւնները։ Շփոթ էր վիճակը նաեւ Անգլիոյ մէջ, ուր 1885ին Գլադստոնին փոխարինելու եկած էր «ռուսասէր» Սոլըզբըրին՝ իրեն նպատակ դնելով Գերմանիան զինարշաւի մղել դէպի Ռուսաստան։ Այդ օրերին Գերմանիոյ արտ. գործոց նախարարութիւնը վարում էր կանցլերի զաւակը՝ Հերբերտ Բիսմարկ, որ իր հօրը չափ հաստատամիտ չլինելով հանդերձ գերմանեւռուս բարեկամութեան հարցում, գործում էր, այնուամենայնիւ, հօրը ցուցմունքներով։ «Երեք»ների համաձայնութեան քայքայումը տեսնելով՝ կանցլերը ամէն կերպ աշխատում էր գոնէ գերմանեւռուս բարեկամութիւնը անխախտ պահել։ Այս նպատակով կանցլերը ամէն զիջում արած էր Ռուսիոյ եւ տիրացած ցարի վստահութեան։

«Իրապես երեւում է այժմ, — նկատում էր Ալեքսանդր Գ. իր քաղաքականութեան վարիչներից Լամզդորֆին, — որ Գերմանիան մեզ հետ է բուլգարական խնդրում»։ *)

Այս հարցում վերջնական հասկացողութեան գալու համար՝ ցարը 1887ի սկզբնական օրերին Բերլին է ճամբում իր դիւանագէտներից Պետոր Շուվալովին, որի եղբայրը՝ Պաւել Շուվալով՝ ռուսական դեսպանն էր գերման մայրաքաղաքում։

Եւ ահա, մի օր, խօսակցութեան ժամանակ, ցարի լիազօր պատուիրակը՝ Պետոր Շուվալով՝ առաջարկում է գերման արտ. գործոց նախարարին՝ Հերբերտ Բիսմարկին՝ գերմանեւռուս անլատ դաշինք կնքել ի փոխարէն «Երեք Միապետների Համաձայնութեան»։

Ըստ այս համաձայնութեան՝ Ռուսիա չէզոք պիտի մնար, եթէ Գերմանիա պատերազմի բռնուէր Ֆրանսայի հետ.

«Մեզ համար նոյնն է, — նկատում է Շուվալով, — Ֆրանսա՞ն յարձակած է Գերմանիոյ վրայ, թէ՞, ընդհակառակն, դո՛ւք ձեռնարկած էք պատերազմի Ֆրանսայի դէմ՝ 14 միլիառ ռազմատուգանք պահանջելով եւ կամ մինչեւ իսկ պրուսական մի գօրավարի փարիզեան նահանգապետ կարգելով»։ **)

Փոխարէնը Ռուսիա պահանջում էր Գերմանիայից, — վերահաստատել Ռուսիոյ ազդեցութիւնը Բուլգարիոյ մէջ եւ արգելք չլինել ռուսական տիրակալութեան Նեղուցներում։

«Խորին հանոյքով» — մակագրում է կանցլերը իր զաւակի զեկոյցի վրայ։

*) «Պատմութիւն Դիւանագիտութեան», հ. Բ., էջ 87:

**) Ibid, էջ 87:

Շուտով կազմում է դաշինքի նախագիծը եւ ցարական պատուիրակը այն իր հետ առնելով՝ գալիս է Պետերբուրգ։

Գործը կէս եփած նկատելով՝ Բիսմարկը 1887 Յունուար 11ին իր պատմական ճառերից մէկն է արտասանում Ռայխստագում՝ սպառնալիք կարդալով Ֆրանսայի եւ բարեկամական ջերմ զգացումներ չդայլելով Ռուսիոյ հասցէին։

Քաղաքական բարդ պատճառներով զուր է անցնում ռուսեւգերման համաձայնութեան նաեւ այս փորձը Նեղուցների շուրջ։

ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԵԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ (1887 Փետր. 12). — 1887 Փետր. 12ին, միջնորդութեամբը Գերմանիոյ, ծանուցագրերի փոխանակութեամբ, Անգլիա եւ Իտալիա յանձնառու են լինում պահել status quo-ն Հիւս. Ափրիկէի ծովափնեայ հողերում եւ Միջերկրականի, Ադրիատիկի, Սեւ ծովի եւ Եգէականի ափերում։

«Այն պարագային, երբ որեւէ չարաղէտ դէպքի բերումով, — ասում էր բրիտանական ծանուցագիրը, — անկարելի դառնայ իր ամբողջութեանը մէջ պահպանել status quo-ն, երկու պետութեանց փափագն է, որ որեւէ այլ մեծ պետութիւն իր տիրակալութիւնը չտարածի այս ափերի որեւէ մէկ մասի վրայ»։*)

1887 Մարտ 24ին այս համաձայնութեանը յատուկ յուշագրով միացաւ նաեւ Աւստրօ-Հունգարիան։

Համաձայնութիւնը խորին մէջ կնքուած էր Ռուսիոյ դէմ՝ նրա ոտնձգութիւնները դէպի Վոսփոր եւ Դարդանել խափանելու համար։

*) Ibid, էջ 92:

ԳԵՐՄԱՆԵԻՌՈՒՍ ԴԱՇԻՆՔ (1887 Յունիս 18). — Շուվալովի առաքելութիւնը անցած էր ձախող, բայց Բիսմարկ հրաժարած չէր գերմանեւռուս անջատ համաձայնութիւնը գլուխ հանելու իր ծրագրից։ Այս ուղղութեամբ կանցլերը յատուկ աշխատանք տարած էր իր դիւանագէտներից մասնաւորաբար Ռադովիցի միջոցով, որ այդ օրերին դեսպան կարգուած էր Թուրքիոյ մէջ։

Ցարը, ի վերջոյ, յօժարում է այս դաշինքին, որ կնքւում է 1887 Յունիս 18ին։

Այս նոր դաշինքի 3րդ յօդուածով վերահաստատւում էր 1881ի դաշինքը Նեղուցների փակման մասին։

Դաշինքն ունէր մի յաւելուածական — և գաղտնի — պրոտոկոլ, ուր Գերմանիա յանձնառու էր լինում դիւանագիտօրէն աջակցել Ռուսիոյ, երբ այս վերջինը որոշի «իր վրայ առնել Սեւ ծովի մուտքի պաշտպանութիւնը», նպատակ ունենալով «իր ձեռքերի մէջ պահել ռուս Կայսրութեան բանալիները»։

Այս պրոտոկոլի առթիւ Բիսմարկը նկատած էր ռուս դեսպան Պաւել Շուվալովին.

«Այս համաձայնութիւնը այն տեսակներից է, որ պէտք է պահել եօթը կղպանքների տակ»։ *)

Դաշնագիրը ստորագրած էին Գերմանիոյ կողմից Բիսմարկը, իսկ Ռուսիոյ կողմից դեսպան Շուվալովը։

ՑԱՐ ՆԻԿՈԼԱՅ Բ. (1894—1918). — Ցաջորդ դէպքերին անցնելուց առաջ՝ մի քանի բառով գծենք բնոյթը նաեւ այն քաղաքականութեան, որ Աղեքսանդր Գ.ի մահից յետոյ Նեղուցների հարցում տարաւ իր որդին՝ Նիկոլայ Բ.։

*) Ibid, էջ 94—95:

Նաեւ այս վերջինի գահակալութեան սկզբնական շրջանին Պոլսոյ մէջ ռուսական դեսպանը միշտ նոյն անուանի դիւանագէտն էր — Նելիդով։

Նիկոլայի գահակալութեան զուգադիպում էին հայկական կոտորածները Թուրքիոյ մէջ։ Հաւանական գտնելով կրկնութիւնը այս կոտորածների, որոնց կարող էին յաջորդել քաղաքական նոր բարդութիւններ եւ եւրոպական պետութեանց անխուսափելի միջամտութիւն Թուրքիոյ ներքին գործերին, Նելիդով կազմում է իր երկրորդ ուշագրաւ յիշատակագիրը եւ 1896 Նոյ. 18ին յղում կայսր Նիկոլայ Բ.ին։

Իր այդ յիշատակագրի մէջ դեսպանն այն միտքն է յայտնում, որ այլեւս անկարելի է կեցնել Թուրքիոյ քայքայումը. նա մատնանշում է երկու պատճառ. նախ այն՝ որ Սուլթանը, եթէ իսկ կամենայ, դարձեալ պիտի չկարողանայ զսպել հայկական շարժումը, որովհետեւ, մէկ կողմից՝ նա (Համիդը) գտնւում է հայ յեղափոխականների սպառնալիքի տակ, իսկ, միւս կողմից՝ նա պարտադրուած է հաշուի առնել մոլեռանդութիւնը իր մահմեդական հպատակների, որոնք անթոյլատրելի են համարում որեւէ բարեփոխութիւն հայերի համար. երկրորդ՝ բովանդակ Թուրք երկիրը, անկախ հայկական շարժումից, համատարած խռովքի մէջ է. իբրեւ արդիւնք Թրքական յոռի վարչութեան.

«Սուլթանը ե՛ւ չի կամենում, բայց եւ չի կարող,— նկատում էր Նելիդով,— կեցնել վայրագ կրքերի արտայայտութիւնը իր ժողովրդի մէջ եւ ամենէն դաժան ու զազիր քմահաճոյքը կառավարական շրջանակներում, մանաւանդ գաւառների մէջ»։

Սուլթանի գահընկէցութեան հաւանականութիւնը նախատեսելով՝ դեսպանը անկարելի

չէր գտնում, որ դրսից Թուրքիոյ ներքին կեանքին միջամտութիւն լինի կա՛մ բռնութեամբ եւ կամ խաղաղ միջոցներով։

Այս վերջին պարագային անդրադառնալով՝ նա նկատում էր.

«Եթէ մեծ պետութիւնները յօժարեն միատեղ ճնշման միջոցով Թրքական վարչութիւնը ստիճանաբար փոխարինել միջազգային վարչութեամբ, այսինքն Նեղուցներում Թուրքիոյ տեղ Եւրոպան դնել, ապա դժուարութեանց նման լուծումով անտանելի կացութիւն պիտի ստեղծուէր Ռուսիոյ համար. նրա կենսական շահերը զոհ պիտի բերուէին Եւրոպային, նրա ապահովութիւնը Սեւ ծովում, ինչպէս նաեւ նրա հաղորդակցութիւնը Միջերկրականի հետ մշտապէս կորսուած պիտի լինէին, որովհետեւ Նեղուցներում հաստատուելով՝ անկասկած մեծ պետութիւնները պիտի չտապէին ամբողջն տեղաւորուել այնտեղ, և միայն մէկ-վեցերորդ մասը այդ ընդհանուր ուժի և իշխանութեան պիտի պատկանէր մեզ։

«Պարզ է,— շարունակում էր Նելիդով,— որ մենք չենք կարող թոյլ տալ, որպէսզի Եւրոպան գայ եւ հաստատուի մեր դռների մօտ, Նեղուցներում, որպէսզի մեծ ռազմանաւեր, թո՛ղ թէ մէկական իւրաքանչիւր մեծ պետութիւնից, գան եւ կանգնեն Պոլսոյ առջեւ, առանց որ կանխապէս մենք երաշխաւորած լինէինք մեր ապահովութիւնը Սեւ ծովում՝ ամրանալով Վերին Վոսփորի ափերին։ Սրա համար մեզ անհրաժեշտ է՝ մեր տորմիղն ու ցամաքահանուելիք բանակը — անշուշտ խոր գաղտնապահութեան պայմաններում — միշտ պատրաստ ունենալ»։

Դեսպանի յիշատակագիրը առնելով՝ անմիջական նախագահութեանը տակ կայսր Նիկոլայ Բ.ի՝

հարցը քննութեան է առնում Ցատուկ խորհրդամարմնի կողմից, 1896 Նոյ. 23ին։*)

Ժողովը հրամանագրում էր դեսպանին միջոցներ ձեռք առնել մեծ պետութեանց ներկայացուցիչների հետ՝ «կարգաւորելու և պաշտպանելու համար Օսմանեան Կայսրութիւնը, ամէն կերպ խուսափելով այն միջոցներից, որոնք կարող էին յանգել միջազգային վարչակարգի հաստատման Նեղուցներում»։

Այն պարագային սակայն, երբ Սուլթանը կա՛մ հրաժարուի բարեփոխման ամէն ծրագրից և կամ ընդունի այդ ծրագիրը, բայց ձգձգի նրա գործադրութիւնը, դեսպանին հրահանգւում էր կանխապէս ճշտել մեծ պետութեանց լիազօր ներկայացուցիչների հետ, թէ նրանք ի՛նչ ձեւի ճնշում են ուզում գործադրել Թուրք կառավարութեան վրայ։ Եթէ այդ ճնշումը պիտի լինէր ծովային պարզ ցոյցով Մարմարայում, ապա ժողովը հնարաւոր էր գտնում «մեծ թուով օտարազգի ռազմանաւերի մուտքը Դարդանել, առանց որ ռուսական ուժերի կողմից կանխապէս գրաւուած լինի Վերին Վոսփորը»։ Իսկ եթէ ճնշումը պիտի արտայայտուէր օտար ռազմանաւերի յանկարծական երեւումով Պոլսոյ առջեւ, առանց դեսպանների նախնական համաձայնութեան, ապա դեսպանը Խորհրդամարմնի կողմից լիազօրւում էր «անմիջօրեն նախազդարարել Սեւծովեան ռազմատորմղի ընդհ. հրամանատարին՝ անյապաղ նաւախումբ ճամբելու դէպի Վոսփոր, ցամաքանմասն բանակով միասին»։

Ուշագրաւ է, որ Խորհրդամարմինը հաւանական էր գտնում նաև անմիջական և առանձնակի համաձայնութիւն Սուլթանի և Ռուսիոյ միջեւ.

*) Ս. Վիթոէ — "Ցուեեr„ ն. Ա., 1921, Բերլին, էջ 82—92։

«Բոլոր դէպքերում, — հրանգում էր Ժողովը, — երբ Սեւծովեան նաւախումբը Սեւաստոպոլից շարժուի դէպի Օդեսա, դեսպանին յանձնարարւում է նախագդուշացնել Սուլթանին կայացած անդառնալի որոշումի մասին (ակնարկը՝ Վոսփորի գրաւման.—Ն.) և խոստանալ նրան իր անձի ապահովութիւնը Ռուսիոյ կողմից, եթէ երբեք նա կ'աջակցի եւ կամ գոնէ ոչնչով արգելք չի լինի ռուսական ռազմանաւերի մուտքին Վոսփոր և ցամաքահանուած զօրքերի կողմից որոշ կէտերի գրաւման Նեղուցների զոյգ ափերին՝ ապահովելու համար անցքը դէպի Սեւ ծով» (Նիկոլայ Բ. այստեղ մակագրած է.— «ԱՌԻՄԻՇՏ»)։ *)

Այս երազներով — ընդմիշտ ապահով տեսնելու Ռուսիոյ դիրքը Նեղուցներում — Նիկոլայ Բ. գահ բարձրացաւ եւ իր գահակալութեան ամբողջ չրջանին, որքան կարող էր, ծառայեց այս գաղափարին։

Անցնենք այժմ այն դէպքերին, որոնք տեղի ունեցան 1894ից այս կողմ։

Մենք տեսանք, թէ հայկական կոտորածները ի՛նչ արձագանգ գտան ռուսական արխուցիխում. այդ կոտորածները առիթ ծառայեցնելով՝ ցարը ծրագրում էր գալ և ամրանալ Նեղուցներում։

Տեսնենք այժմ, թէ նոյն կոտորածները ինչ արձագանգ գտան արեւմտեա՛ն աշխարհում։

ՀԱՅ ԴԱՏԸ ԵՒ ՆԵՂՈՒՑՆԵՐԸ (1896).— Եգիպտոսի գրաւման հետեւանքով Անգլիոյ կողմից (1882 Յուլիս 13ին)՝ պղտորած էին անգլեւթուրք յարաբերութիւնները։ Անգլիա նախկին կշիռը Թուրքիոյ մէջ այլեւս չունէր։ Սուլթանը ճիգ էր անում Ռուսիան չտալ՝ նրա օգնութեամբ Անգլիոյ հակազդեցու համար։ Իր հերթին նոյն քաղաքականութիւնն էր վարում նաև Ռուսաստանը։ Բերլինի վեհաժողովում կրած յուսախաբութիւններից յետոյ՝ Ռուսիա առժամաբար հրաժարուեց Պոլսոյ գրաւման եռաղներից, նախընտրելով Նեղուցների մէջ Սեւ ծովի «պահակութիւն»ը վերապահել Սուլթանին։

1894ին ծայր տուին հայկական կոտորածները. նախ՝ Սասնոյ մէջ (1894ին), ապա՝ 1895ին՝ այլ տեղեր։ Վեց մեծ պետութեանց դեսպանները Բարձրագոյն Դրան ներկայացնում են բարեփոխութեանց Մայիսեան ծրագիրը. 1896 Օգոստ. 14ին բուն Պոլսոյ մէջ տեղի է ունենում Բանկ Օտտոմանի ցնցիչ դէպքը։

Առիթը յարմար գտնելով՝ անգլիական ռազմատորմիղը չարժւում է դէպի Դարդանել. անհրաժեշտ էր նախ Սուլթանի յամառութիւնը խորտակել եգիպտական հարցում, պարտադրելով, որ նա վերջնապէս հաշտուի՝ Եգիպտոսի գրաւման մտքին Անգլիո՛յ կողմից, երկրորդ՝ անհրաժեշտ էր Սուլթանի ականջից քաշելով նրան պոկել Ռուսիայից և կըրկին անգլեւթուրք բարեկամութեան բերել։

Անգլիական ռազմատորմղի վերերեւումը Դարդանելի դռների առջև խուճապի մատնած էր Պետերբուրգը։ Լոնդոն ուղղած իր պաշտօնագրով ռուս կառավարութիւնը յայտնում էր, որ այն դէպքում, երբ անգլ. ռազմատորմիղը անցնի Դարդանելը, Ռուսիոյ Սեւծովեան ռազմատորմիղը անմիջապէս պիտի մտնի Վոսփոր։

Նման ծրագրներ որոճում էր նաեւ Սոլըզբերին տակաւին 1895ից սկսած. եթէ Գոշէնի՝ ծովակալութեան առաջին լորդի առարկութիւնը չլինէր այն մասին, թէ Նեղուցներից անցնելով՝ կարելի է այնտեղ թակարդուել, ապա ռազմատորմիղը անպայմա-

*) Ա. Մանդելստամ — (արդէն յիշատակուած աղբիւրը), էջ 105—108:

նօրէն Դարդանել մտնելու հրամանգ պիտի ստանար. եւ արդէն այդ նպատակով Սոլըզբերի գաղտնի բանակցութեանց մէջ էր Վիլհելմ Բ.ի հետ՝ Թուրքիոյ բաժանման շուրջ։*) Դոչէնի առարկութիւնից դժգոհ Սոլըզբերին դառնացած նկատում է ծովակալութեան առաջին լորդին, թէ քանի որ անգլիական ռազմանաւերը ապակուց են չինուած, ապա ինք հարկադրուած է իր քաղաքականութիւնը փոխել եւ այլ միջոցների դիմել։

Սակայն շատ աւելի ուշ պարզւում է, որ ապակուց էին նաև ռուսական ռազմանաւերը։

Մեր յիշատակած դէպքից 18 տարի վերջ, 1913 Նոյ. 23ին, Ռուսիոյ արտ. գործոց նախարար Ս. Դ. Սազոնով, Նեղուցների կապակցութեամբ կազմուած մի մեծարժէք յուշագրի մէջ, ներկայացուած ցար Նիկոլայ Բ.ին, հեղինակաւորապէս վկայում էր.

«Ինչպէս յայտնի է, տակաւին 1895ին, հայկական կոտորածների կապակցութեամբ, խնդիր դրուած էր Պոլսոյ առժամեայ գրաւման մասին մեր

*) Բաժանման դէպքում Անգլիա վերջնապէս պիտի կցէր իւրն Եգիպտոսը, Միջագետքը, Արաբիան եւ Կրետէն։

Աւելի ուշ, 1898ին, երբ Ռուսիա Ծայրագոյն Արեւելքում արդէն տիրացած էր Պորտ-Արտուրի (1897ի Դեկտ.ին), Սոլըզբրրի ցարական կառավարութեան առաջարկեց Չինաստանի եւ Օսմանեան Կայսրութեան բաժանման իր նոկայ ծրագիրը։ Ըստ այդ առաջարկի՝ անդրպարիսպեան Չինաստանը եւ հիւսիսային մասը Բուն Չինաստանի մինչեւ Հուանհէի նոպիտը պիտի կազմէին Ռուսիոյ ազդեցութեան գօտին, իսկ Եան-Ցզի Աւազանը՝ անգլիական։ **Դոլով Թուրքիոյ՝ այսպէս Ռուսիոյ ազդեցութեան շրջանակի մէջ պիտի մնային՝ Փոքր Ասիոյ հիւսիսային մասը, հիւսիսային Միջագետքը եւ Նեղուցները, մինչ Անգլիոյ ազդեցութեան շրջանակի մաս պիտի կազմէին՝ հարաւային Միջագետքը, Արաբիան ու Եգիպտոսը։**

Ռուսիա մերժեց Սոլըզբրրիի այս առաջարկները (տե՛ս «Պատմ. Դիւանագիտ.», հ. Բ., էջ 127)։

գօրքերի կողմից, գիտութեամբն ու համամտութեամբը այդ չրջանի մեր հաւանական մրցորդների մէջ ամենէն վտանգաւորի — Անգլիոյ։ Այդ ծրագրից մենք ստիպուած եղանք հրաժարուել՝ փոխադրական միջոցների պակասի եւ ցամաքային զօրահաւաքի անկատարելիութեան պատճառով»։*)

Մնում է ենթադրել ուրեմն, որ այդ արիւնոտ թուականներին — 1894ից մինչեւ 1897 — երբէ անգլիական և ռուսական ռազմանաւերը «ապակեայ» չլինէին, ապա այսպէս կամ այնպէս լուծուած պիտի լինէր Պոլսոյ եւ Նեղուցների կնճիռը ու նրանց կապակցութեամբ թերեւս նաև Հայկական Հարցը։

Այս տագնապոտ օրերին է անա, որ Ֆրանսայի մեծահմուտ արտ. գործոց նախարարը՝ թրքասէր եւ հայատեաց Հանոտոն՝ գուցէ եւ տեղեակ Անգլիոյ եւ Ռուսիոյ ռազմական վիճակին, հանդէս է գալիս իր հեղինակաւոր միջամտութեամբ։

Մեծ պետութեանց ներկայացուցիչներին Հանոտոն անում է երեք կէտերից բաղկացած հետեւեալ առաջարկը.— 1) ճանաչել Օսմանեան Կայսրութեան անձեռնմխելիութեան սկզբունքը, 2) հրաժարուել ամէն կարգի անջատ եղոյթներից, 3) համատիրութիւն (condominium) չհաստատել Թուրքիոյ մէջ։

Բոլորի կողմից ընդունուում են այս առաջարկները. ընդունողների մէջ առաջիններից է լինում Ռուսաստանը։

Որպէս դառնացած եւ յուսախաբ էր միայն Պոլսոյ ռուսական դեսպանը՝ Նելիդով, որի վառ երեւակայութիւնը ռուսական ռազմանաւերը արդէն բերած էր Պոլսոյ ջրերը, մինչ իրեն հրամցնում էին... Հանոտոյի առաջարկները։ Ռուսիոյ արտ. նախարարութեան վարիչը՝ Շիչկին՝ չփոթանար դեսպանի կողմից, գիտութեամբն ու համամտութեամբը այդ չրջանի մեր հաւանական մրցորդների մէջ ամենէն վտանգաւորի — Անգլիոյ։ Այդ ծրագրից մենք ստիպուած եղանք հրաժարուել՝ փոխադրական միջոցների պակասի եւ ցամաքային զօրահաւաքի անկատարելիութեան պատճառով»։*)

Մնում է ենթադրել ուրեմն, որ այդ արիւնոտ թուականներին — 1894ից մինչեւ 1897 — երբէ անգլիական և ռուսական ռազմանաւերը «ապակեայ» չլինէին, ապա այսպէս կամ այնպէս լուծուած պիտի լինէր Պոլսոյ եւ Նեղուցների կնճիռը ու նրանց կապակցութեամբ թերեւս նաև Հայկական Հարցը։

Այս տագնապոտ օրերին է անա, որ Ֆրանսայի մեծահմուտ արտ. գործոց նախարարը՝ թրքասէր եւ հայատեաց Հանոտոն՝ գուցէ եւ տեղեակ Անգլիոյ եւ Ռուսիոյ ռազմական վիճակին, հանդէս է գալիս իր հեղինակաւոր միջամտութեամբ։

Մեծ պետութեանց ներկայացուցիչներին Հանոտոն անում է երեք կէտերից բաղկացած հետեւեալ առաջարկը.— 1) ճանաչել Օսմանեան Կայսրութեան անձեռնմխելիութեան սկզբունքը, 2) հրաժարուել ամէն կարգի անջատ եղոյթներից, 3) համատիրութիւն (condominium) չհաստատել Թուրքիոյ մէջ։

Բոլորի կողմից ընդունուում են այս առաջարկները. ընդունողների մէջ առաջիններից է լինում Ռուսաստանը։

Որպէս դառնացած եւ յուսախաբ էր միայն Պոլսոյ ռուսական դեսպանը՝ Նելիդով, որի վառ երեւակայութիւնը ռուսական ռազմանաւերը արդէն բերած էր Պոլսոյ ջրերը, մինչ իրեն հրամցնում էին... Հանոտոյի առաջարկները։ Ռուսիոյ արտ. նախարարութեան վարիչը՝ Շիչկին՝ չփոթանար դեսպանի

*) Ա. Մանդելշտամ — «Ռուսական հաղթականութիւնը Թուրքիոյ մէջ առաջին համաշխարհային պատերազմի նախօրէին եւ ընթացքին» («Նովոսելիէ», Նիւ Եորք, 1947, թիւ 31—32, էջ 108)։

պանին գրում էր, որ Հանոտոյի առաջարկները լիապէս համապատասխանում են ռուս Ինքնակալի տեսակէտներին, այն է՝ համախորհուրդ մեծ պետութեանց հետ, քանի տակաւին պայմանները հաստատուած չեն, յետաձգել Օսմանեան Կայսրութեան անկումը։

Այսպիսով, նաև այս անգամ թէ՛ Թուրքիան մնաց ողջ եւ թէ Համիդը շարունակեց վեհափառօրէն բազմած մնալ իր արիւնոտ գահի վրայ...

Հայ Դատի միակ շանսն այն եղաւ, որ Մեծերի թագուն սիրաբանութեանց հետքերով Սուլթանի հետ՝ կրկին անգամ յաւելեալ արիւն քամուեց հայ ժողովրդի երակներից...

Հայկական կոտորածների այս արիւնոտ օրերին, երբ արեւմտեան աշխարհում ծայր տուած էին «հայասիրական» տրամադրութիւնները, գերման դեսպանը Լոնդոնի մէջ՝ կոմս Հացֆելդ՝ տեղեկագրում էր իր կառավարութեան.

«Կա՛մ կը յաջողուի ծրագիրը, այն է՝ ողջ պահել Թուրք պետութիւնը իրական բարենորոգմանց գործադրումով և այդ ձեւով նրան կորզել եւ հանել Ռուսիոյ բացառական ազդեցութիւնից (ընդգծումը՝ մեզանից.—Ն.), եւ կամ այդ ծրագիրը չի յաջողուի, եւ այն ժամանակ գործը կը հասնի փլուզումի ու կը վերջանայ Թուրքիոյ բաժանումով»։ *)

Բուն պայքարը տարուում էր անա այս գծով,— ո՛չ թէ ի շահ հայ ժողովուրդի, այլ յանուն ազդեցութեանց գօտիների...**)

*) «Պատմ. Դիւանգ.», հ. Բ., էջ 119:

**) Այդ երջանին Լոնդոնի թուրք դեսպանատան պատասխանատուներից ոմանք, ինչպէս պարզուում է նոր հրապարակուած ռուսական փաստաթղթերից, կաշառուած էին նոյն քաղաքի ռուսական դեսպանատան կողմից: Կաշառուած պատասխանատուները ռուս դեսպանին ծա-

ԱՒՍՏՐԻԱՅԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ (1897ի).— 1896ին ապստամբուեց Կրետէն, 1897ին Յունաստանը օգնութեան եկաւ իր ցեղակիցներին եւ այսպիսով ծայր տուաւ յոյնաթուրք պատերազմը։

Անակնկալների առջեւն առնելու համար՝ 1897ի Մայիսին Ռուսիա եւ Աւստրիա բարեկամական համաձայնութիւն կնքեցին՝ յանձնառու լինելով status quo-ն պահել Բալկանների մէջ։

Այս համաձայնութեամբ կողմերը ընդունում էին, որ Պոլիսը եւ Նեղուցները համաեւրոպական բնոյթ ունեցող հարցերից են։

Ռուս արտ. գործոց նախարարի՝ Մուրաւեովի նպատակն էր այս ձեւով Արեւելեան Հարցը, ինչպէս որ ասած էր իր նախորդը՝ Լոբանով-Ռոստովսկիյ (մեռած 1896ին)՝ առժամաբար «քնացնել»։

ԲԱՂԴԱԴԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ ԵՒ ՆԵՂՈՒՑՆԵՐԸ (1900 Մարս 31ի ռուսեւթուրք համաձայնութիւնը).— 1887ին գերմանացիք երկաթուղիի կառուցման անդրանիկ արտօնութիւնն են ձեռք ձգում Հայդար-Փաշայից (Վոսփորի ասիական ափում) մինչեւ Իզմիդ (Մարմարայի ափին)։

1898ին Վիլհելմ Բ. ուխտի է գալիս «Սբ. Տեղեր»ը՝ Պաղեստին։ Դամասկոսում ճառ խօսելով՝ կայզերը իրեն բարեկամ է հռչակում 300 միլիոն

խում են, ի միջի այլոց, պատճէնները իրենց դեսպանի երկու կարեւոր տեղեկագիրների, ուղղուած Պոլիս, արտ. գործոց նախարարութեան: Այդ տեղեկագիրներով դեսպանը իր նախարարին փոխանցում էր բոյանդակութիւնը այն զրոյցի խօսակցութեանց, որ ունեցած էր Սոլզբրրիի հետ: Ըստ այդ տեղեկագիրների, Անգլիոյ արտ. գործոց նախարարը խորհուրդ էր տալիս Թուրքիոյ՝ փոխել իր արտաքին քաղաքականութիւնը, անգլիական ուղղութիւն որդեգրել, եգիպտական հարցում չընդդիմանալ Մեծն Բրիտանիոյ, այս բոլորի փոխարէն Անգլիոյ ելեւմտական եւ քաղաքական աջակցութիւնը խոստանալով Թուրքիոյ (տե՛ս «Դիւանգ. Պատմ.», հ. Բ., էջ 119):

մանմեդականների և նրանց խալիֆայի՝ Սուլթանի։ Այս ճառից խորապէս տպաւորուած Աբդուլ-Համիդը, որ կուռան էր որոնում Գերմանիոյ մէջ, 1899 Նոյ. 27ի իրադեռվ Գերման Բանկին արտօնութիւն է տալիս Կոնիայից Բաղդադի վրայով մինչեւ Բասրա երկաթուղագիծ անցկացնելու։

Գերմանիան յայտնապէս տեղաւորուում էր Թուրքիոյ մէջ, ծանր մտահոգութիւններ ստեղծելով, մէկ կողմից՝ Անգլիոյ, իսկ, միւս կողմից՝ Ռուսիոյ համար։

Այս վերջինին մնում էր կա՛մ ղէնքով Գերմանիան դուրս քշել Թուրքիայից եւ կամ խաղաղութեամբ գալ և Գերմանիոյ հետ կողք-կողքի տեղաւորուել Թուրքիոյ մէջ։

Ռուսիա հակում է դէպի այս վերջին միջոցը։

1900 Յունուար 25ին արտ. գործոց նախարար կոմս Մ. Ն. Մուրաւեովը հետեւեալ յիշատակագիրն է ներկայացնում իր կայսեր՝ Նիկոլայ Բ.ին։

Անխուսափելի գտնելով հանդերձ, որ ի վերջոյ պիտի իրականանայ «Ռուսիոյ ցանկալի պատմական կոչումը — հասատուել Վոսփորի ափերին», յիշատակագիրը, այնուամենայնիւ, պահը յարմար չի գտնում պատերազմի համար, այլ առաջարկում է գոհանալ Թուրքիոյ կողմից լինելիք մի փոխարինութեամբ, համարժէք այն զիջումին, որ նա կատարած է Գերմանիոյ.

«Եւ իսկապէս,— նկատում է յուշագիրը,— եթէ Սուլթանը համաձայնուի Սեւ ծովի հարաւային գծով մի որոշ շրջան սահմանել, ուր որեւէ այլ պետութեան ո՛չ երկաթուղային եւ ոչ էլ ուրիշ որեւէ մեծնաշնորհ պիտի չտրուի. եթէ միաժամանակ կարելի լինի պարտադրել Թուրքիոյ Վոսփորը չամրացնելու, ապա այս արդիւնքները առժամաբար կարող են մեզ

համար գոհացուցիչ նկատուել իբրեւ փոխարինութիւն այն մենաշնորհի, որ տրուած է գերմաններին Բաղդադի երկաթուղագիծը կառուցանելու. այս ձեւով մեզ հնարաւորութիւն կը տրուի հանգիստ սպասելու դէպքերի հետագայ զարգացումին թրքական Արեւելքում»։

Թագաւորը իր համամտութիւնն է տալիս այս յուշագրին. տալիս են նաեւ իր նախարարները՝ պատերազմական (զօր. Կուրոպատկին), ծովային (փոխծովակալ Տըիրտով) և ելեւմտական (Ս. Վիտէ)։ *)

Պոլսոյ ռուսական դեսպան Ի. Զինովիեւին յաջողւում է ձեռք բերել զիջումներից միայն առաջինը, այն է՝ Սեւ ծովի աւազանում երկաթուղագծերի կառուցման մենաշնորհը վերապահել միայն ռուս դրամատէրներին. Նեղուցների վարչակարգի խնդիրը մնում է անփոփոխ. այս իմաստով կնքւում է 1900 Մարտ 31ի ռուսեւթուրք համաձայնութիւնը, որ նկատւում է Ռուսիոյ դիւանագիտական մեծ յաղթանակներից մէկը։

Իր հերթին Անգլիա, գերման թափանցումի դէմ պաշտպանուելու համար, 1901ին գրաւում է Շատէլ-Արաբի գետաբերանին կոթնած Կովէյտի շրջանը (Պարսից ծոցափին)։

Ահա այս ժամանակ է, 1899ին, որ ցարական կառավարութիւնը դիմում է Բերլին՝ առաջարկելով պաշտօնական դաշինք կնքել Նեղուցների հարցի շուրջ։

Ռուսական առաջարկով՝ Օսմանեան Կայսրութիւնը պիտի պահեր իր հողային ամբողջականութիւնը, որովհետեւ ռուսական շահերին անհաճոյ է, որ որեւէ օտար ոյժ գայ եւ հաստատուի Նեղուցներում։ Նման վտանգի դէպքում — եւ միայն այդ պա-

*) «Կարմիր Դիւան», ն. 18:

ռագային — Ռուսիոյ պիտի արտօնուեր իր հսկողութիւնը հաստատելու Նեղուցների վրայ։

Եթէ Գերմանիա Ռուսիոյ այս իրաւունքը պաշտօնապէս ճանաչէր՝ Ռուսիա յանձնառու պիտի լինէր խոչընդոտ չհանդիսանալ գերման երկաթուղային ձեռնարկներին Փոքր Ասիոյ մէջ։

Բարդ պատճառներով Գերմանիա չընդառաջեց Ռուսիոյ այս առաջարկին։

ԱՆԳԼԵՒՌՈՒՍ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ (1907 Օգոստ. 31). — *1906ին կոմս Լամզդորֆին յաջորդելով՝ ռուս արտ. գործոց նախարարութիւնը ստանձնում է Իզվոլսկիյ, որ ծանօթ էր իր հակագերման տրամադրութիւններով։ Նոր նախարարը յատուկ աշխատանք է տանում՝ գլուխ հանելու համար անգլեւռուս համաձայնութիւնը։*

Իզվոլսկիյ այն յոյսն էր փայփայում, որ նմանը համաձայնութեամբ թերեւս կարելի դառնայ լուծել նաեւ Նեղուցների հարցը, այնքան կենսական Ռուսիոյ համար։

Յամառ ճիգերից յետոյ, 1907 *Օգոստ.* 31*ին, Ռուսիոյ և Անգլիոյ միջեւ ստորագրում է, վերջապէս, կարեւորագոյն դաշինքներից մէկը՝ Իրանի, Աֆղանիստանի և Տիբետի չուրջ։*

Հակառակ Իզվոլսկիի թափած բոլոր աշխատութեանց՝ անկարելի է դառնում համաձայնութեան մէջ որեւէ յիշատակութիւն անել Պոլսոյ եւ Նեղուցների մասին։ *)

*) 1904—1905ի ռուսաճապոն պատերազմում Ռուսիա թերեւս պարտուեց նաեւ այն պատճառով, որ չկարողացաւ Սեւծովեան իր ռազմատորմիղը Ծ. Արեւելք ճամբել ճապոնի դէմ։ Վախ ունենալով, որ անցքի խնդրանքով եթէ Թուրքիոյ դիմի՝ կարող է մերժում ստանալ, Ռուսիա այդ դիմումը չկատարեց։ Միայն այժմ է պարզուում, որ այդ դիմումը չանելով՝ ռուս կառավարութիւնը կատարած է իր

Գրէյ՝ Անգլիոյ արտ. գործոց նախարարը՝ չի յուժարում Անգլիոյ համար դաշնագրային պարտաւորութիւն դարձնել Իզվոլսկիի այն պահանջը, ըստ որում ռուսական ռազմանաւերը իրաւունք պիտի ունենային ազատօրէն Սեւ ծովից դուրս գալու դէպի Միջերկրական եւ Միջերկրականից ազատօրէն ետ գալու դէպի Սեւ ծով։

Անգլիոյ արտ. գործոց վարիչը չի գտնում, որ արդէն հասունացած է պահը անգլեւռուս համաձայնութեան համար Նեղուցների մասին։ Նա իր վախն է յայտնում, թէ նման համաձայնութեան դէմ կարող են ծառանալ թէ՛ իր երկրի հանրային կարծիքը եւ թէ օտար պետութիւններ։ Միաժամանակ Գրէյ մատնանշում է, թէ ինք Նեղուցների չուրջ համաձայնութեան անհրաժեշտ նախապայմաններից մէկը տեսնում է ոչ միայն ասիական հարցերին վերաբերող համաձայնութեան կնքումի, այլ եւ այդ համաձայնութեան բաւարար գործադրումի մէջ։ Եւ, վերջապէս, Գրէյ յայտնում է, որ ինք չի ուզում նախնական պարտաւորութիւններով կաշկանդել իրեն՝ ապագայում կնքուելիք դաշնագրի նկատմամբ։

Մերժելով մէկտեղ, Գրէյ, այնուամենայնիւ, յոյսի մէկ ինչ-որ աղօտ հետք ձգում է Իզվոլսկիին։

Այս յոյսն է, որ քիչ աւելի ուշ, 1908*ին, երբ Աւստրիա փորձում էր երկաթուղիի կառուցման արտօնութիւն ձեռք ձգել դէպի Եգէական (Սելանիկ),*

իմաստուն քայլերից մէկը։ Մեծն Բրիտանիոյ նրապարակած փաստաթղթերից պարզուում է — տե՛ս British Documents on the origin of the war IV, No. 40, 41, 43 — որ Անգլիա, այդ ժամանակ զինակից ճապոնի, պիտի ընդդիմանար Սեւծովեան ռազմատորմղի անցքին Նեղուցներից՝ անխուսափելի դարձնելով պատերազմը Անգլիոյ եւ Ռուսիոյ միջեւ (տե՛ս Մանդելշտամի յիշատակուած յօդուածը)։

մղեց Իզվոլսկին՝ իր կառավարութեանը աւելի վճռական քաղաքականութեան դիմելու առաջարկ բերելու։

Սակայն, անպատրաստ գտնելով երկիրը նման վճռական քայլերի համար, կառավարութիւնը մերժեց Իզվոլսկիի առաջարկը։

ԲՈՒԻԼԱՌԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ (1908ի).— 1908ի նախասեմին աւստրո-հունգար կառավարութիւնը կարողացաւ Բարձրագոյն Դրան արտօնութիւնն առնել երկաթուղագիծ կառուցանելու համար Նովոբազարի սանջակում, որ անուանապէս թէև պատկանում էր Թուրքիոյ, սակայն 1878ի Բերլինի դաշնագրով գտնւում էր Աւստրիոյ գրաւման տակ։ Այս երկաթուղագիծը բոսնիական գծերը պիտի միացնէր թրքականներին՝ երկարելով ուղղակի մինչեւ Սելանիկ։

Աւստրո-Հունգարիոյ այս քայլը ուղղուած էր յայտնապէս Ռուսիոյ դէմ. օգտուելով Ռուսիոյ առժամեայ տկարութիւնից՝ Հաբսբուրգեան Տունը փորձում էր անջատ քայլերով իր հակառուս և յարձակողական նպատակներին հասնել։

Բալկաններում եւ Փոքր Ասիոյ մէջ ստեղծուած ծանր կացութիւնը քննութեան առնելու համար, 1908 Յունուար 21ին Պետերբուրգում գաղտնի խորհրդակցութիւն է հրաւիրւում, նախագահութեանը տակ վարչապետ Ստոլըպինի։

Այս խորհրդակցութեան մէջ, արտ. գործոց նախարար Ա. Պ. Իզվոլսկիյ, դիմելով իր պաշտօնակիցներին, յայտնում է.

«Պարտք եմ համարում ձեր ուշադրութիւնը հրաւիրել անհրաժեշտութեանը վրայ պարզելու, թէ հնա՞ր է արդեօք հրաժարուել խստօրէն պահպանական այն քաղաքականութիւնից, որին ցարդ հետեւել է Ռուսիան եւ որը մեզ կարող է բերել շատ անշահաւէտ արդիւնքների, թէ՞, ընդհակառակն, ես կարող եմ խօսել մի վճռականութեամբ, որ վայել է մեծ պետութեան արտ. գործոց նախարարին, վստա՞հ, թէ ինք ունի հնարաւորութիւնը կտրուկ կերպով իր շահերը պաշտպանելու»։

Ի պատասխան այս հարցումին՝ պատերազմական փոխ-նախարար զօր. Պոլիվանով յայտնում է, թէ «տակտիկան կարելի չէ կարգաւորուած նկատել մեր բանակը». ծովային նախարար Դիկով աւելացնում է, որ «Սեւծովեան ռազմատորմիղը պատրաստ չէ ռազմական գործողութիւնների», իսկ վարչապետ Ստոլըպինն վճռաբար յայտարարում է, որ «այսօր եւ առ այժմ արտաքին գործոց նախարարը կտրուկ քաղաքականութեան համար ո՛չ մեկ աջակցութիւն չի կարող ակնկալել մեզանից։ Նոր զօրահաւաք կատարել Ռուսիոյ մէջ, — շարունակում է իր խօսքը Ստոլըպինն, — այդ նշանակում է ուժ տալ յեղափոխութեան, որից մենք հազիւ ենք դուրս գալիս։ Նման մի պահի կարելի չէ արկածախնդրութեան գնալ եւ կամ մինչեւ իսկ գործօն կերպով նախաձեռնութիւն երեւան բերել միջազգային գործերում։ Մի քանի տարի վերջ, երբ մենք լիակատար խաղաղութեան կը տիրանանք, այն ժամանակ Ռուսիա նորից կը սկսի խօսել իր վաղեմի լեզուով։ Այլ քաղաքականութիւն, բացի խստօրէն պաշտպանողականից, ներկայիս պիտի նմաներ բանականութիւնը կորցրած կառավարութեան մի խելագար քայլին, եւ այդ քաղաքականութեամբ պիտի վտանգուեր բուն իսկ Գահը»։

Իր խօսքն աւարտելով՝ Ստոլըպինն յանուն կառավարութեան Իզվոլսկիյին մերժում էր որևէ օժանդակութիւն զէնքով, նրան տալով միայն Ռուսիոյ անունը — «լծակ առանց յեցակէտի»՝ իր իսկ բնու-

բոշումով — եւ երկրի յոյսերը կապելով միայն եւ բացառաբար արտ. գործոց նախարարի դիւանագիտական հմտութեան։*)

Ստեղծուած պայմանները նկատի առնելով՝ Իզվոլսկիյ առաջին հերթին որոշում է բարեկամական յարաբերութիւններ հաստատել երիտասարդ-թրքական դահլիճի հետ եւ այս իմաստով խորհրդապահօրէն յանձնարարում է Մանդելշտամին, որ այն ժամանակ Պոլսոյ ռուսական դեսպանատան մէջ առաջին թարգմանի պաշտօն էր կատարում, «ռուսերբուրf մերձեցման ծրագիրը արծարծել երիտասարդթրքական հասարակութեան մէջ»։

Միաժամանակ Իզվոլսկիյ յանուն Ռուսիոյ յայտնում է Բարձրագոյն Դրան, որ հրաժարւում է հակողութեան իրաւունքից Մակեդոնիոյ մէջ, վրատահ, որ երիտասարդ-թրքական կառավարութիւնը սեփական նախաձեռնութեամբ վերջ պէտք է տայ քրիստոնեաների դէմ նիւթուած հալածանքներին, իսկ ինչ վերաբերում է Պոլսոյ եւ Նեղուցներին, ապա նախարարը urbi et orbi բացատրում է, որ Ռուսիա աչք չունի Պոլսոյ վրայ, այլ միայն փափագում է իր ռազմանաւերի համար ազատ երթեւեկի իրաւունք ձեռք բերել Նեղուցներից։

Այս քայլերին զուգահեռ՝ Իզվոլսկիյ փորձում է համաձայնութեան գալ նաեւ Աւստրիոյ հետ, որ այդ ժամանակ պատրաստւում էր իրեն կցել Բոսնիոյ եւ Հերցեգովինայի շրջանները, որոնք Բերլինի դաշինքով (1878ի) գտնւում էին աւստրո-հունգար գրաւումի տակ։

1908 Յունիս 19 թուակիր ծանուցագրով դիմելով Վիեննա՝ Իզվոլսկիյ բաղձանք է յայտնում՝

*) «Կոստանդնուպոլիսը եւ Նեղուցները», հ. Ա., էջ 8—10 (մենք խաղում ենք **Մանդելշտամից**՝ «20դ դարու Ռուսիան թրքական Նեղուցների առջեւ», էջ 113—114)։

միանաբար աւստրո-հունգար կառավարութեան հետ քննութեան առնել զոյգ շրջանների կցման հարցը Նեղուցների հարցի կապակցութեամբ։

Իր հերթին Վիեննան, վախ ունենալով, որ 1908 Յուլիս 24ին վարչապետութեան անցած անգլիասէր Բեամիլ փաշան կարող է Գերմանիայից պոկուել և ընկնել Անգլիոյ ձեռքը, որոշում է ընդառաջել Պետերբուրգից եկած առաջարկին և այս իմաստով 1908 Օգոստ. 27ին իր պատասխանն է յղում Իզվոլսկիյին։

Էրենտալ՝ Աւստրիոյ արտ. գործոց նախարարը՝ տեսակցութեան համար ռուս նախարարին հրաւիրում է Բուխլաու (Աւստրիա), Պետերբուրգի աւստրիական դեսպանի՝ կոմս Բերխտոլդի անձնական ամրոցը։

1908 Սեպտ. 15ին Բուխլաուի մէջ տեղի է ունենում այդ պատմական տեսակցութիւնը Իզվոլսկիյի և Էրենտալի միջև, ուր Իզվոլսկիյ յօժարում է Բոսնիոյ և Հերցեգովինայի վերջնական կցումին Աւստրիոյ, որի փոխարէն Աւստրիա յանձնառու է լինում չընդդիմանալ Նեղուցների բացումին ռուս ռազմանաւերի առջեւ։

Այս համաձայնութեան շուրջ արձանագրութիւններն ու վկաների ցուցմունքները տարբերւում են իրարից։ Ընդհանուրի տպաւորութիւնն այն է, որ Էրենտալ պարզապէս խաբում և խաղի է բերում Իզվոլսկիյին։*)

Ըստ համաձայնութեան՝ Աւստրիա Բոսնիոյ եւ Հերցեգովինայի կցման պիտի ձեռնարկէր, երբ Իզվոլսկիյ, Աւստրիոյ համամտութեամբ զինուած, անցնէր եւրոպական մայրաքաղաքները և յաջողէր

*) **Կոմս Վ. Կոկովցեւ** — «Իմ անցեալից», հ. Ա., 1933, Փարիզ, էջ 332։

առնել համաձայնութիւնը — Նեղուցների գոյավիճակի փոփոխման մասին ի նպաստ Ռուսիոյ — այն բոլոր պետութեանց, որոնք ստորագրած են 1878ի Բերլինեան դաշնագիրը։

Այս նպատակով Իզվոլսկիյ նախ անցնում է Բերխտեսգադէն, ուր 1908 Սեպտ. 26ին հանդիպում է Գերմանիոյ արտ. գործոց նախարար Շէօնին, իսկ այստեղից անցնում է Դեզիոյ և հանդիպում Տիտտոնիին՝ Իտալիոյ արտ. գործոց նախարարին։

Երկուսն էլ ընդհանուր առումով տալիս են իրենց համամտութիւնը։

Հազիւ Փարիզ հասած՝ Իզվոլսկիյ թերթերում կարդում է Ֆրանց-Իոզեֆի 1908 Հոկտ. 6 հրովարտակը, որով Բոսնիա և Հերցեգովինա կցում են Աւստրիոյ։

Ռուս նախարարի համար պարզւում է այլեւս, որ Էրենտալ դաւած է իր դէմ։

Իզվոլսկիյ տեսնում է, այնուամենայնիւ, Ֆըլրանսայի արտ. գործոց նախարար Պիշոնի հետ, որը, համակրօրէն վերաբերուելով հանդերձ ռուսական ծրագրին, առաջարկում է Լոնդոն անցնել և Անգլիոյ համամտութիւնը ապահովել։

Իզվոլսկիյ գալիս է Լոնդոն, ուր, սակայն, Գրէյ, բազմաթիւ առարկութիւններ բերելուց յետոյ, յայտնում է, որ Անգլիա պատրաստ է սիրով բանալու Նեղուցները ԲՈԼՈՐ պետութեանց ռազմանաւերի, այսինքն՝ նաև անգլիական ռազմատորմղի առջեւ դէպի Սեւ ծով...

Ռուսիա փորձում է միջազգային խորհրդաժողով հրաւիրել ստեղծուած անելից դուրս գալու համար, բայց նաև այս ձեռնարկը անցնում է ապարդիւն։

Պատերազմը անշահաւէտ գտնելով՝ Ռուսիա համակերպւում է կատարուած փաստին, առանց փոխարէնը որեւէ բան ստացած լինելու։

ԻՏԱԼԵԻԱՅԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ (1909).— 1909ի Հոկտ.ին Ռակոնիջիի մէջ (Իտալիա) երկու միապետներ՝ Նիկոլայ Բ. և Վիկտոր-Իմանուէլ Գ.՝ հանդիպում ունեցան. այս հանդիպումին ներկայ էին նաև երկու պետութեանց արտ. գործոց նախարարները՝ Իզվոլսկիյ և Տիտտոնի։ Ռակոնիջիի մէջ Իզվոլսկիյ կարողացաւ մի չափով իր վրէժը լուծել Էրենտալից. Տիտտոնի ընդառաջեց իրեն, որովհետեւ ինք եւս Իզվոլսկիյի նման Բոսնիոյ եւ Հերցեգովինայի կցման հարցում խաղի եկած էր նոյն Էրենտալի կողմից։

Այստեղ, Ռակոնիջիում, երկու միապետները գաղտնի դաշինք կնքեցին, ուր, ի միջի այլոց, Իտալիա պարտաւորւում էր «բարեացակամօրեն վերաբերուել դէպի Ռուսիոյ շահերը Նեղուցների հարցում»։ Փոխարէնը նոյն վերաբերումը պիտի ունենար Ռուսիա դէպի Իտալիոյ շահերը Տրիպոլսի եւ Կիրենայիքի մէջ։

Ռակոնիջին նախաքայլն էր այն փոփոխութեան, որ Իտալիա իր քաղաքականութեան մէջ ունեցաւ դէպի «Երրեակ Զինակցութիւն»ը՝ աւելի ուշ քաշուելով նրանից և «Երրեակ Համաձայնութեան» յարելով։

ՌՈՒՍԵԻԳԵՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ (1911 Օգոստ. 19).— Բոսնիոյ, Հերցեգովինայի և յարակից հարցերում ձախողած Իզվոլսկին 1910ին քաշուեց՝ իր աթոռը զիջելով Սազոնովին։

Նոր նախարարը որոշեց մերձեցում ստեղծել Գերմանիոյ հետ՝ հակազդելու համար նաև այն անհաշտ դիրքին, որ Անգլիա ունէր Նեղուցների հարցում Ռուսիոյ նկատմամբ։

Իր միապետին առնելով՝ 1910ի Նոյ.ին Սազոնով եկաւ Պոտսդամ։ Բանակցութիւնները բաղձալի

արդիւնքը չտուին. կարելի չեղաւ տեսակէտների նոյնութիւն ստեղծել երկու երկրների արտ. գործոց վարիչների՝ Կիդերլէն-Վեխտերի և Սազոնովի միջև՝ ընդհանուր համաեւրոպական հարցերի շուրջ համաձայնութիւն կնքելու համար։ Նեղուցները համանգնութիւնից զուրս մնացին։ 1911 Օգոստ. 19ի դաշինքի մէջ չշափուեցին միայն պարսկական եւ թրքական հարցերը (առաւելաբար երկաթուղային)։

ՉԱՐԸԻԿՈՎԻ ԵԼՈՑԹԸ (1911 Հոկտ. 2).— 1911 Սեպտ. 28ին Իտալիա վերջնագիր ներկայացրեց Թուրքիոյ՝ նպատակ ունենալով գրաւել Տրիպոլիսն ու Կիրենայիքը։

Նոյն օրերին լարուած բանակցութիւններ էին տարուում Անգլիոյ և Ֆրանսայի միջև Մարոքի շուրջ։

Ռուսիոյ նոր արտ. գործոց նախարարը՝ Ս. Սազոնով՝ ապաքինումի համար Դաւոս մեկնած լինելով՝ իր աթոռը առժամաբար գրաւած էր Ա. Ներատով։

Պատմական պահը հասած նկատելով՝ Ներատով հրահանգում է Պոլսոյ ռուս դեսպան Զարբիկովին՝ անպաշտօն ձևով ներկայանալ Թուրք կառավարութեան՝ 1900 թուականի Թուրքևռուս համաձայնութեան վերանայման առաջարկով։

Ըստ այս համաձայնութեան, ինչպէս յայտնի է, Սեւ ծովի աւազանում երկաթուղագծերի կառուցման հարցի մէջ նախապատուութիւնը տրուում էր ռուս դրամատէրներին։

Ներատով հրահանգում էր ընդարձակել այս համաձայնութեան սահմանները և քննութեան առնել նաև Նեղուցների հարցը՝ Թուրք կառավարութիւնը զիջումների մղելու համար։ Փոխարէնը՝ Ռուսիա խոստանում էր պահել Թուրքիոյ հողային ամբողջականութիւնը եւ այլ առաւելութիւններ ապահովել Թուրք երկրին։

1911 Հոկտ. 12ին Զարբիկով մասնաւոր կարգով այս առաջարկները ներկայացնում է մեծ վեզիր Սաիդ փաշային։

Պատասխանի համար քանիցս անպտուղ դիմումներ կատարելուց յետոյ՝ յուսահատ դեսպանը իր առաջարկները ի վերջոյ ներկայացնում է պաշտօնապէս, 1911 Նոյ. 14ին, Թուրքիոյ արտ. գործոց նախարար Ասըմ բէյին։

Սակայն լռում է նաև այս վերջինը։

Եւ այս խորհրդաւոր լռութեան մէջ մէկէն առաջին խօսողն է լինում բուն իշխանութեան՝ «Միութեան և Յառաջդիմութեան Կոմիտէ»ի մեծաղդեցիկ բանբերը՝ Հիւսէյն Զահիդ բէյ։

Իր իսկ ստորագրութեամբ «Թանին»ի 1911 Նոյ. 28ի եւ 29ի թուերի մէջ երկու առաջնորդող յօդուածներ զետեղելով՝ Եալչընն յստակ և որոշակի արտայայտւում է ի նպաստ Նեղուցների բացումին, սակայն միայն եւ բացառաբար ռուսակա՛ն ռազմանաւերի համար։

«Երբ Կոմիտէի պաշտօնաթերթի մէջ լոյս տեսան այս յօդուածները,— նկատում է իր յուշերում Զարբիկովի նախկին գործակիցը՝ Մանդելշտամ,— Ն. Զարբիկովը սկսեց ցնծալ՝ իր յաղթանակը տօնելով։ Բայց, աւա՜ղ, յաջորդ օրը նրան բերաւ իր կեանքի ամենէն դառն հիասթափութիւնը,— մեկէն Ռուսիոյ իսկ կողմից ընդհատուեցին բանակցութիւնները»։

Իսկ եղաւ հետեւեալը։

Ռուսական առաջարկները խռովքի մատնած էին քաղաքական աշխարհը։

Պետերբուրգը իր փափագի մէջ աջակցութիւն գտաւ, եւ այն էլ միայն սկզբնական շրջանին, բա-

ցառաբար Գերմանիոյ մէջ. կանցլեր Բեթման-Հոլ-
վեգը եւ արտ. գործոց նախարար Կիդերլենը դէմ
չէին ռուսական պահանջին. դէմ չէր ինքն իսկ
Վիլհելմը. գերման կայսեր միակ պայմանն այն էր,
որ Ռուսիա ջանայ ապահովել իրեն իր պահանջի
մէջ նաեւ կոմս Էրենտալի՝ Աւստրիոյ արտ. գործոց
վարիչի համամտութիւնը։

Ռուսական ձգտումին խստօրէն եւ որոշապէս
դէմ էր սակայն գերման դեսպանը Պոլսոյ մէջ, մե-
ծազդեցիկ բարոն Մարշալ ֆոն Բիբերշտայնը, որ
14 տարի Վոսփորի ափերին ապրելով՝ կարողացած
էր իր հայրենիքին բացառիկ դիրք ապահովել
Թուրք մայրաքաղաքի մէջ եւ Համիդի հոգին իր
ափերի մէջ առնել։

Քաղաքական իր բովանդակ հեղինակութիւնը
ազդեցութեանց կշռի մէջ նետելով՝ բարոն Մարշա-
լը պահանջում է Բերլինից՝ որեւէ զիջում չանել
Ռուսիոյ Նեղուցների հարցում, պնդելով, որ նման
զիջումները ոչ միայն պիտի խորտակեն գերման
երկրի վարկը Թուրք մայրաքաղաքում, այլ և Օս-
մանեան կայսրութիւնը պիտի առաջնորդեն դէպի
կործանում։

Եւ յաջողում է դեսպանը. իր առջեւ տեղի են
տալիս ամէնքը՝ Վիլհելմից մինչեւ կանցլերը եւ
մինչեւ նախարար Կիդերլենը։

Սակայն ընդդիմութիւնը միայն Գերմանիայից
չէր գալիս. Ֆրանսա, որ դէմ էր ռուսական առա-
ջարկին, փոխանակ յանուն Ֆրանսայի ռուսական
առաջարկը յայտնապէս մերժելու, Փարիզի ռուս
դեսպանին՝ Իզվոլսկիյին՝ Լոնդոնի հասցէն է ցոյց
տալիս։ Մինչ Լոնդոնը կանխապէս արդէն խրատած
էր Սուլթանին՝ ռուսական առաջարկը մերժելու։

Իրեն եղած դիմումին Գրէյ տուաւ 1908ի աշ-
նան իր պատասխանը,— Նեղուցները բանալ բոլորի

ու նաեւ անգլիական ռազմատորմիղի առջեւ դէպի
Սեւ ծով։

Այս նշանակում էր նոր համաձայնութեամբ ոչ
թէ տահել, այլ կորցնել Նեղուցների հարցում։

Պատերազմից խուսափելով՝ Ռուսիա ետ առաւ
իր առաջարկը՝ մեղքը իր դեսպանի վզին բարդե-
լով։

«Matin»ի թղթակցին՝ Ստեփան Լօզանին տեսակ-
ցութիւն տալով՝ Սազոնով, որի բացակայութեանը
տեղի ունեցած էր այս քաղաքական «տրագեդիա»ն,
յայտարարում էր.

«Ռուսիա ո՛չ մեկ բան խնդրած է, ո՛չ մեկ բա-
նակցութիւն վարած է, դիւանագիտական ո՛չ մեկ
քայլ կատարած է»։

«Մինչդէպ»ը փակած լինելու համար՝ Զարբիկով
ստիպուած եղաւ 1912ի Մարտին քաշուել իր պաշ-
տօնից։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ (1912—1913 թ.
թ.).— 1912 Հոկտ. 9ին Սեւ-Լեռնցիները կրակ բա-
ցին Թուրքիոյ դէմ. Հոկտ. 17ին պատերազմին մի-
ացան Բուլգարիան եւ Սերբիան, իսկ 18ին՝ Յուն-
նաստանը։

Արագօրէն պարտուելով՝ 1912 Նոյ. 3ին Թուր-
քիա մեծ պետութեանց դիմեց, զինադադար խնդ-
րելով։

Ռուսիա ջերմօրէն կողմնակից էր զինադադարի
եւ խաղաղութեան, որովհետեւ վախ ունէր, թէ
Թուրքիոյ անկումով եւ Բուլգար բանակի մուտքով
Պոլիս, կարող է բարդանալ Նեղուցների հարցը։

Զաթալջայի գծի վրայ Թուրք բանակը կարո-
ղացաւ կեցնել Բուլգարիան։

1912ի Դեկտ.ին միաժամանակ երկու զատ խոր-
հրդաժողովներ գործի լծուած էին Լոնդոնում. ա-

ռաջինում՝ վեց մեծ պետութիւնները, իսկ երկրորդում՝ Բալկանեան ազգերը և Թուրքիա։

Բարդութիւնները նկատի առնելով՝ զուգահեռաբար Ռուսիա զօրքեր էր կուտակում կովկասեան սահմանների վրայ։

Խորհրդաժողովները իրենց աշխատանքը տակաւին չաւարտած, 1913 Յունուար 23ին պետական յեղաշրջում տեղի ունեցաւ Պոլիս՝ իշխանութեան բերելով Երիտասարդ-Թուրքերին, գլխաւորութեամբը Մահմուդ Շեւքեթ փաշայի։

Գերմանիոյ ներշնչումով՝ Թուրքիա դարձաւ անզիջող։

Բալկանեան ազգերը ստիպուեցին նորէն պատերազմի անցնելու։ Ռազմական գործողութիւնները սկսուեցին 1913 Փետր. 3ին։

Այս անգամ եւս Թուրքիան արագօրէն պարտութեան մատնուեց։

Կրկին ծայր տուին Ռուսիոյ վախերը. բուլգար զօրքերը փորձում էին ճեղքել Չաթալջայի գիծը։ Ռուսական ռազմատորմիղը հրամանգ ստացաւ՝ պատրաստ լինել դէպի Վոսփոր շարժուելու։

Դիւանագիտական ճնշումով կարելի եղաւ 1913 Ապրիլ 16ին զինադադար կնքել Բուլգարիոյ եւ Թուրքիոյ միջեւ։ Շուտով զինադադարին յարեցին նաև միւսները։

Երկար ձգձգումներից յետոյ, 1913 Մայիս 30ին, ստորագրուեց, վերջապէս, խաղաղութեան դաշնագիրը Թուրքիոյ եւ բալկանեան ազգերի միջև։

Շուտով յաղթականները պառակտուեցին սակայն. 1913 Յունիս 29ին բուլգարները կրակ բացին սերբերի և յոյների դէմ՝ նոր պատերազմի սկիզբը դնելով։

1913 Յուլիս 10ին Ռումանիա պատերազմ յայտարարեց Բուլգարիոյ։

Այս նոր պատերազմին միացաւ Թուրքիա եւ, զինակցաբար բալկանեան ազգերի հետ, 1913 Յուլիս 16ին յարձակուեց Բուլգարիոյ վրայ։

Պարտուած Բուլգարիան ստիպուած եղաւ խաղաղութիւն խնդրել։

Այս վերջինը կնքուեց Բուքրէշ, 1913 Օգոստ. 10ին։

Պատերազմների այս ամբողջ շարքը վերջացաւ՝ զգալապէս տկարացնելով Ռուսիոյ դիրքը Բալկաններում։

Դրեթէ իր բոլոր կողերից մատնատուած Բուլգարիան չուտով բարեկամ պիտի դառնար բախտակից Թուրքիոյ՝ իր վերին հովանաւորը Գերմանիոյ մէջ տեսնելով։

Ահա այս շրջանին է, 1913ի Նոյ.ին, որ պիտի ձեւաւորուէր գերմանաթուրք համաձայնութիւնը, դիւրութիւն ընծայելով գերման զօր. Լիման ֆոն Սանդերսին, որպէսզի գլուխն անցած 42 գերման սպաների՝ գար և հաստատուէր Պոլսում։

Ըստ համաձայնութեան, զինուորական այս առաքելութիւնը պիտի ունենար ոչ միայն ընդհանուր քննական (inspection) իրաւունքներ, այլ և հրամանատարական լիազօրութիւններ. ենթադրւում էր, որ գերման զօրավարը պիտի ստանձնի մինչև իսկ հրամանատարութիւնը թրքական առաջին զօրամասի, որի բանակավայրը Պոլիսն էր։ Այս դիրքի մէջ հաստատուելով՝ փաստօրէն գերման զօրավարին պիտի փոխանցուէին թէ՛ կարգի պահպանման հոգը Թուրք մայրաքաղաքի մէջ եւ թէ նրա ապահովութեան կապուած խնդիրները։

Քաղաքական աշխարհը — եւ, մասնաւորաբար, Ռուսիան — կատարուած փաստի առջեւ դնելու համար, 1913 Դեկտ. 4ին լոյս տեսաւ սուլթանական

իրադէն, որով Լիմանը Թրքական առաջին զօրամասի հրամանատար էր կարգուում։

Պետերբուրգը դիմեց Անգլիոյ և Ֆրանսայի, առաջարկելով միասնաբար հանդէս գալ Պոլսոյ մէջ և պահանջել, որ, նախ՝ գերման զինուորական առաքելութիւնը միայն ընդհ. քննական պարտակատութիւններ ունենայ (առանց հրամանատարական լիազօրութիւնների), եւ, երկրորդ՝ որ Թրքական «օրինակելի զօրամաս»ի կենտրոնավայրը Պոլսից փոխադրուի կա՛մ Էդիրնէ և կամ Փոքր Ասիա, բացառելով Ռուսիոյ սահմանամերձ շրջանը և Ֆրանսական շաների զօտին։

Լիման ֆոն Սանդերսի Պոլսից դէպի դուռ փոխադրութեան հարցում Անգլիա և Ֆրանսա հաստատօրէն չպաշտպանեցին Ռուսաստանը, որովհետև Պոլիսն էր բնակավայրը անգլ. ծովակալ Լիմպուսի (որին ենթակայ էր Թրքական տորմիղը) և ֆրանսական զօր. Բոմանի (որին ենթակայ էր Թրքական ոստիկան զինուորութիւնը)։ Պահանջել Լիմանի փոխադրութիւնը՝ այս պիտի նշանակէր կասկածելի դարձնել նաև այն առանձնաշնորհեալ դիրքը — որի դէմ, ի դէպ, իր ժամանակին բողոքած չէր Ռուսաստանը — որ Թուրք մայրաքաղաքում գրաւած էին ծով. Լիմպուսը և զօր. Բոմանը։

1913 Դեկտ. 23ին արտ. գործոց նախարար Ս. Սազոնով, մի առանձին յիշատակագրով կացութիւնը ներկայացնելով կայսր Նիկոլայ Բ.ին, առաջարկում էր.

«Այն պարագային, երբ Բարձրագոյն Դուռը դոհացուցիչ պատասխան չտայ մեր պահանջին, քաղաքական տեսակէտով ամենէն նպատակայարմարը պիտի լինէր Ռուսիոյ, Ֆրանսայի եւ Անգլիոյ կողմից միաժամանակ և միասնաբար գրաւումը որոշ

կէտերի Փոքր Ասիոյ մէջ, մի յայտարարութեամբ, թէ յիշեալ պետութիւնները պիտի մնան այդ վայրերում, քանի տակաւին իրենց պահանջները բաւարարուած չեն»։

Իր յիշատակագրի մէջ Սազոնովը անհաւանական չէր գտնում, որ «Բարձրագոյն Դրան վրայ գործադրուած ճնշման հետեւանքով՝ Գերմանիան գործօն կերպով հանդէս գայ Թուրքիոյ պաշտպանի դերում»։

«Սակայն, — նկատում էր նախարարը, — եթէ այդքան էական մի հարցում, ինչպէս գերման զօրավարի հրամանատարական պաշտօնն է Պոլսում բանակած զօրամասի մէջ, Ռուսաստանը հաշտուի ստեղծուած փաստի հետ, մեր զիջողականութիւնը համարժէք պիտի դառնայ քաղաքական մի մեծ պարտութեան, յղի ամենէն կործանարար հետեւանքներով»։

«Ֆրանսայի եւ Անգլիոյ մէջ, — շարունակում էր Սազոնով, — պիտի ամրանայ այն վստանգաւոր համոզումը, թէ Ռուսիա յանուն խաղաղութեան պատրաստ է ամէ՛ն զիջումի»։ Իսկ «մի անգամ նը-ման համոզում մեր բարեկամ զինակիցների մէջ ամրանալուց յետոյ, դժուար չէ այլեւս, որ վերջնապէս խախտուի առանց այն էլ ոչ այնքան հաստատուն միութիւնը Երբեակ Համաձայնութեան պետութեանց միջև»...

1913 Դեկտ. 31ին վարչապետ Վ. Կոկովցեւի նախագահութեամբ Յատուկ Խորհրդամարմինը հրաւիրուում է հարցը քննելու համար։ Լսելուց յետոյ կարծիքները — Ռուսիոյ զինական պատրաստութեան մասին — Խորհրդամարմնին մասնակցող նախարարներից Սուխոմլինովի (պատերազմական նախարար), Գրիգորովիչի (ծովային) եւ զօր. Ժիլինս-

ակի (ընդհ. սպայակոյտի պետ), Խորհրդամարմինը, ի միջի այլոց, որոշում է.

«Այն պարագային, երբ միասեղ բոլորի համար կարելի չլինի սպասիվել ինչպես Ֆրանսայի, այնպես եւ Անգլիոյ գործակցութիւնը Ռուսաստանի հետ, չդիմել նեղման այնպիսի միջոցների (*Թուրքիոյ նը-կատմամբ.—Ն.*), որոնք մեզ կարող են առաջնորդել մինչեւ պատերազմը Գերմանիոյ դեմ»։ *)

Այս գաղտնի որոշումով Ռուսիա փաստօրէն հաշտուում էր այն մտքին, թէ Գերմանիա կարող է տիրական դիրք գրաւել Վոսփորի ափերին։

Սակայն եղաւ անխմանալին. որոշման յաջորդ օրն իսկ, 1913 Նոյ. 1ին, Գերմանիա ինքնակամօրեն հրաժարուեց իր պահանջներից։ Զօր. Լիման ֆոն Սանդերսը Թրքական մարաջախտի տիտղոս ստացաւ, մի բան, որ անկարելի էր դարձնում նրա հրամանատարութիւնը զօրամասի մէջ, Պոլսում. պատուաւորապէս գերման զօրավարին այս դիրքից հանելով՝ նրա տեղ նոր գերմանացի չկարգուեց, եւ այս ձեւով վէճը ինքնին կարգադրուած եղաւ։

Զմոռանանք յիշատակել այստեղ, որ վէճը մի չափով կարգադրուած էր արդէն բուն իսկ Կոկովցեւի կողմից, Բերլինի մէջ։

Այն օրերին, երբ տագնապը սուր կերպարանք առած էր, Ռուսիոյ նախարարական խորհուրդի նախագահը՝ Կոկովցեւ՝ Փարիզից Բերլինի վրայով վերադառնում էր հայրենիք։

Կանխապէս եղած կարգադրութեամբ՝ Վիլհելմ Բ. իր բարձրաստիճան հիւրին՝ Կոկովցեւին՝ ի ներկայութեան կանցլեր Բեթման-Հոլվեգի ընդունում

*) **Ա. Մանդելշտամ** — «Ռուս հաղթականութիւնը Թուրքիոյ մէջ առաջին համաշխարհային պատերազմի նախօրէին եւ ընթացքին» («Նովոսլիէ», Նիւ Եորք, թիւ 31—32, էջ 109—113)։

է Պոտսդամում և պահում նրան ճաշի։ Այդպիսի ճաշի ժամանակ, յարուցուում է Լիմանի առաքելութեան հարցը, եւ վէճը սուր կերպարանք է առնում ռուս վարչապետի եւ գերման կանցլերի միջև։

*«Մենք չենք կարող հրաժարուել հարցի սկզբունքային կողմից,— նկատում է Կոկովցեւը Բեթման-Հոլվեգին,— Լիման ֆոն Սանդերսի ներկայութեան փաստով Պոլսոյ մէջ՝ ինքնին նախաձրչուում են թէ՛ Նեղուցների հարցը եւ թէ Գերմանիոյ գերակայութեան խնդիրը Թուրք մայրաքաղաքում»։ *)*

Կոկովցեւի «Յուշեր»ից դատելով՝ իրեն գրեթէ յաջողուում է կարգադրել կնճիռը։

Երբ Կոկովցեւ վերադառնում է Պետերբուրգ, Սազոնով, որ տեղեակ էր արդէն Պոտսդամի բանավէճին, դառնալով իր վարչապետին, ասում է նրան.

*«Երջանիկ եմ, որ Ձեզ յաջողուեց մէկ ատամ եւս քաշել Բալկաններում տեղի ունեցող խռովիչ դէպքերից»։ **)*

Մեծ պատերազմը պիտի գար վկայելու, որ գերման «ատամ»ը ոչ թէ քաշուած է, այլ հիմնապէս ամրացած է Պոլսում։

«Գերման զինումը լոկ ձեւական է,— նկատում էր ռուս դեսպանը Բերլինում՝ Սվերբէեւ,— այդ զինումով Գերմանիա երբեք չէր զրկուում վճռական ազդեցութիւնից Թուրքիոյ զինուորական գործերի վրայ»։

Ու քանի որ իրողութիւն է այս, ապա, ըստ դեսպանի, «ինչ էլ որ լինէր զօր. Սանդերսը եւ

*) **Կոմս Վ. Կոկովցեւ** — «Իմ անցեալից», հ. Բ., Փարիզ, 1933, էջ 229։

**) Ibid. էջ 252։

ինչ տիտղոս էլ որ կրէր, նա յայտնապէս պիտի կարողանար իր ափերի մէջ կենտրոնացնել զինուորական իշխանութիւնը եւ դառնալ փաստական վարիչը օսմանեան բանակների»։

«Այս զարմանալիօրէն ոչինչ մարդը»,— իր յուշերում այսպէս էր բնորոշում Կոկովցեւը Բերլինի ռուս դեսպանին),— կարողացած էր ճշտիւ նախատեսել գալիքը։*

---

*) Ibid. էջ 87:

ՆԵՂՈՒՑՆԵՐԸ ԱՌԱՋԻՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

Հայաստանը եւ Նեղուցները (1914 Յունուար 26ի Համաձայնագիրը).— Յատուկ Խորհրդամարմնի նիստը (Սազոնովի յիշատակագիրը).— Ռուսիա, Անգլիա եւ Ֆրանսա պատերազմի սկզբին.— Սազոնովի սեպտեմբերեան ծրագիրը (Թուրքիա եւ Հայաստան).—Ռուսիոյ կշիռը.— Ռուսիան պատերազմից հանելու գերման նիզեր.— Սր Էդուարդ Գրէյի յայտարարութիւնը.— 1915 Մարտ 4ի, 8ի եւ 12ի ռուսական, ֆրանսական եւ անգլիական ծանուցագիրները.— Անջատ հաշտութեան նոր նիզեր.— 1915 Մայիս 2ի գերման յարձակման իմաստը.— Սազոնով եւ Շտիւրմեր.— Հրապարակե՞լ թէ չհրապարակել.— Պրոտոպոպով.— Ռումանիոյ դէմ 1916ի գերման գինարշաւի իմաստը.— Տրեպովի 1916 Դեկտ. 2ի յայտարարութիւնը.— Նիկոլայ Բ.ի 1916 Դեկտ. 25ի հրովարտակը.— Բուլգար միջնորդը.— 1917ի ֆրանկեւռուս նոր համաձայնութիւնը.— Փետրուարեան յեղափոխութիւնը. — Ժամանակաւոր Կառավարութեան յայտարարագիրը. — Պ. Միլիւկովի հրաժարականը.— Ժամանակաւոր Կառավարութեան նոր յայտարարութիւնը.— Ա. Կերենսկիի վկայութիւնը.— Եզրափակում:

III

Անմահ Քրիստափորը մի տեղ ասում է.

«1.— Երբ կան հիմնական պատճառներ որեւէ երեւոյթի առաջ գալու համար — առանց ակներեւ «առիթ»ի էլ երեւոյթը զարգանում է։

«2.— Երբ չկան հիմնական պատճառներ — նոյնիսկ խոշոր դէպքերն էլ «առիթ»ի նշանակութիւն չեն ստանում։

«3.— Երբ կան հիմնական պատճառներ — հարկաւոր դէպքում «առիթ» կամ «պատրուակ» երբեք չի պակասիլ։

«4.— Երբ կան հիմնական պատճառներ — դրանց դէմ կռուող բոլոր միջոցները ոչ միայն վնասակար չեն կարող լինել, այլ եւ միանգամայն անհրաժեշտ հակակշիռ պիտի համարուեն»։ *)

Աւստրիական գահաժառանգի՝ Ֆրանց-Ֆերդինանդի սպանութիւնը բոսնիական փոքրիկ քաղաքի՝ Սարաեւոյի մէջ — 1914 Յունիս 28ին, սերբ բանակի սպաների գաղտնի կազմակերպութեան՝ «Սեւ Ձեռք»ի որոշումով — լոկ պատրուակ էր առաջին համաշխարհային պատերազմի բռնկումի մէջ, բայց ոչ պատճառ։

Պատճառները խոր էին եւ նրա՛նք էին բուն աղբիւրը համածաւալ հրդեհի։

Համայն աշխարհը նստած էր խորհրդաւորապէս լուռ հրաբուխի բաց խառնարանների վրայ, որտեղից հրահեղուկը աւերիչ թափով ամէն վայրկեան դուրս կարող էր ժայթքել։

Գործելու միշտ պատրաստ անաղդեցիկ հրաբուխներից մէկը գտնուում էր Ղարդերի եւ անիրաւութեանց դասական երկրի՝ Թուրքիոյ մէջ։

1913ին Թուրքիա կարծես իր հոգեվարն էր ապրում։ Երկու մրցորդ պետութեանց դեսպանները Պոլսոյ մէջ՝ Մ. Գիրս և բարոն Վանգենհայմ՝ իրենց կառավարութիւններին ամենէն մռայլ գոյներով էին ներկայացնում երբեմնի հզօր ու մեծազդեցիկ Օսմանեան Կայսրութեան ներքին վիճակը։ Սակայն միաժամանակ նոյն կառավարութիւնները — թէ՛ ռուս եւ թէ գերմանական — ձգտում էին բարեփոխութեանց միջոցով կասեցնել Թուրքիոյ քայքայումը ու բաժանումը։

«Ռուսիա այդ ժամանակ չհանգրգռուած էր,— նկատում է իր յուշերում Ա. Մանդելշտամ,— որ բարեկարգութիւններ լինեն իրեն սահմանակից Թուրքիոյ հայկական նահանգներում, ուր ժողովուրդը ենթարկւում էր դանդաղ, բայց համակարգուած ոչնչացումի։ Լիակատար անիշխանութիւնը, որ տիրում էր Թրքապատկան Հայաստանում, արդէն անդրադարձած էր ռուսասիրատակ հայերի տրամադրութիւնների վրայ եւ կարող էր շատ աւելի ուժեղ ու վտանգաւոր խռովութիւններ յառաջացընել ամբողջ կովկասում։ Ռուսաստանն ուզում էր, որ խաղաղի Թրքապատկան Հայաստանը եւ այդ իսկ պատճառով 1913 Յուլիս 8ին նա իր վրայառաւ նախաձեռնութիւնը բարեփոխութեանց, որոնք կըրում էին, սակայն, ոչ թէ բացառաբար ռուսական, այլ միջազգային բնոյթ»։

Իր կառավարութեան «անշահախնդրութիւն»ը վկայելու համար բարեփոխութեանց հարցում՝ Մանդելշտամ, կրկին անգամ նոյն խնդրին դառնալով, գրում է.

«Բարեփոխութեանց նախագիծը մշակողը տուղերիս հեղինակն էր — այն ժամանակ առաջին թարգմանը Պոլսոյ ռուսական դեսպանատան մէջ։

«Նախագծի մշակման համար ինձ, ի հարկէ, հրահանգներ տրուած էին, ինչպէս արտ. գործոց նախարարութեան, այնպէս նաև դեսպան Մ. Ն. Գիրսի կողմից։ Այդ հրահանգները քաղաքական որեւէ (ընդգծումը՝ հեղինակինը.—Ն.) նպատակ չէին հետապնդում»։ *)

*) Գր. Միքայէլեան — «Յեղափոխակտեի Մտքերը», 2րդ տպ., Աթէնք, 1931, էջ 24։

*) Ա. Մանդելշտամ — «Ռուսական քաղաքականութիւնը Թուրքիոյ մէջ առաջին համաշխարհային պատերազմի նախօրէին եւ ընթացքին» («Նովոսելիէ», Նիւ Եորք, 1947, թիւ 31—32, էջ 113—114)։

Ի հարկէ, բոլորովին էլ այսպէս չէ. եւ տարօրինակ պիտի լինէր, եթէ իրօք ցարական կառավարութիւնը այսքան անչափանդիր լինէր Հայկական Հարցում։

Ինչպէս յայտնի է, 1914 Յունուար 26ին ստորագրուեց բարեփոխութեանց Համաձայնագիրը։

Այս առթիւ իր մէկ այլ գործում նոյն Մանդելշտամը երեք տասնամեակ առաջ նկատում էր.

«1916 Յունուար 26ի Համաձայնագրի ամենամեծ նշանակութիւնը Ռուսաստանի համար կայանում է նրանում, որ այդտեղ Գուռը պաշտօնապէս ընդունում է ռուսական հովանաւորութիւնը տաճկահայերի վրայ, այսինքն՝ Բերլինի դաշնագրի 61րդ յօդուածից մենք նորից վերադառնում ենք Սան Ստեփանոյի 16րդ յօդուածին»։ *)

Ինչպէս տեսնում էք, բարեփոխութեանց հարցում քաղաքական նպատակ — եւ այն էլ ոչ թէ երկրորդական, այլ չափազանց կարեւոր — Ռուսաստանը հետապնդո՛ւմ էր։

Հին էր այս նպատակը. եթէ մենք Կարլովցիի (Հունգարիա) 1699 Յունուար 26ի հաշտութեան դաշնագիրն ընդունենք որպէս անջրպետ, որից այս կողմ սկսւում է եւրոպական մեծ պետութիւնների միջամտութիւնը Ռուսաստանի և Թուրքիոյ փոխյարաբերութիւնների խնդրին, մի՛շտ Արեւելեան Հարցի կապակցութեամբ, ապա կը տեսնենք, որ միայն այն պարագան, թէ ո՛վ է «հովանաւոր»ը քրիստոնեայ ժողովրդների, կարողացել է հզօրապէս զատել ու զօրել աշխարհի տէրերին, նա հանդիսացել է այն առանցքը, որի շուրջ են դարձել այդ

*) Ա. Մանդելշտամ — «Երիտասարդ-Թուրքերի Պետութիւնը», Էջմիածին, 1916 (տե՛ս գրքի հայերէն թարգմանութեանը կցուած մեր «Յառաջաբան»ը, էջ XVIII)։

պետութեանց արեւելեան քաղաքականութեան բոլոր վերիվայրումները։ Քուչուք-Քայնարջիում (1774) — միայն Ռուսաստանը, իսկ 1840ի և 1841ի Լոնդոնի համաձայնութիւններից յետոյ 1856ի Փարիզի Վեհաժողովում — գրեթէ ամբողջ Եւրոպան. Սան Ստեփանոյում — կրկին միայն Ռուսաստանը, իսկ Բերլինի Վեհաժողովում — նորէն ամբողջ Եւրոպան. 1914 թուի Յունուար 26ի Համաձայնագրով — վերստին միայն Ռուսաստանը... եւ միշտ նոյնը նոյն կախարդական շրջանակում։*)

Ո՛չ, Յունուար 26ի Համաձայնագրով ցարական Ռուսիան ոչ թէ մե՛զ նկատի ունէր, այլ գերազանցապէս իր հետապնդած քաղաքական նպատակը. մենք պատրուակ էինք եւ ոչ պատճառ, մենք միջոց էինք եւ ոչ նպատակ։

Եւ այս պարագան գիտէ՛ր Թուրքը։

«Երբ մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշան, — իր հին գործի մէջ իրաւունքով նկատում էր նոյն Մանդելշտամ, —1914 Յունուար 26ին ռուս հաւատարմատար Կ. Ն. Գուլկեւիչի հետ միասին ստորագրեց այն իրաւաթուղթը, որով Տաճկաստանը պարտաւորւում էր դիմել պետութիւններին Հայկական բարեռորոգութեանց ծանուցագրով, հին Սուլթանը, որ

*) Մեծերի այս թագուն խաղերին թափանցելով՝ խորամիտ Պատրիարքը՝ Ներսէս Վարժապետեան՝ գուր էր աշխատում, որպէսզի Սան-Ստեփանոյի 16րդ յօդուածը Բերլինի Վեհաժողովում "բարեփոխուի այն կերպով, որ յօդուածը մնայ իրեւ Հայոց համար խրախուսիչ յօդուած. Հայաստանը բարեկարգի Հայաստանի համար, եւ Հայկական խնդիրը չէզոքանայ՝ լոկ Հայկական խնդիր ըլլայ» (տե՛ս Լէօ — «Հայոց Հարցի վաւերագրերը», Թիֆլիս, 1915, էջ 123)։

Այդ օրից մինչեւ այսօր Մեծերն իրենց պայքարներով ամէն կերպ աշխատեցան մեր Հարցի «չէզոքացում»ին. նրանք թոյլ չտուին, որ Հայաստանը բարեկարգուի լոկ Հայաստանի համար...

պիտում էր այս տեսարանը Վոսփորի ափում Բէյ-ներբէյի չքեղ ապարանքի պատուհաններից, կարող էր լիակատար իրաւունքով բացագանչել. — «Ալլահը մեծ է, սրա համար չարժէր կառավարութիւններ փոխել»։ *)

Բայց Յունուար 26ի Համաձայնագրի միակ նը-պատակը Ռուսիոյ «հովանաւորութեան» տարածումը չէր Թրքահայերի վրայ։

Եթէ 1913ին Նեղուցների հարցի կարգադրու-թիւնը — ի նպաստ Ռուսիոյ — հնարաւոր լինէր, 1914 Յունուար 26ի Համաձայնագիրը ապահովաբար ծնունդ չէր առնի։

Ապացոյց — նաև այն Յատուկ Խորհրդամար-մինը, որ ճիշդ այդ օրերին նիստի հրաւիրուած էր Պետերբուրգում։

Համաձայնագրով, ինչպէս ասացինք, Նեղուց-ների հարցը չօշափուած չէր, նա մնում էր անլոյծ, մինչ աշխարհ գալիք սպանդի նախերգանքն էր ապրում։

Եւ ահա 1914 Փետր. 8ին, այսինքն Համաձայ-նագրի ստորագրումից հազիւ երկու շաբաթ վերջ, Պետերբուրգում, Յատուկ Խորհրդամարմնի մէջ, քննութեան է առնւում Նեղուցների հարցը։ **)

Քննութեան նիւթը այն յիշատակագիրն էր, որ Սազոնովի 1913 Դեկտ. 23ի մեզ ծանօթ յիշատա-կագրից ուղիղ մէկ ամիս առաջ, 1913 Նոյ. 23ին, նոյն Սազոնովը ներկայացրած էր կայսեր՝ Նիկոլայ Բ.ին։

---

*) **Ա. Մանդելշտամ** — «Երիս.-Թուրքերի Պետութիւնը», էջ XIX:

) Յատուկ Խորհրդամարմինը կառավարական բարձրագոյն օրգան էր, փոփոխուող կազմով, որ նիստի էր հրաւիրում կայսեր հրահանգով եւ բացառիկ դէպքերում: 1914 Փետր. 8ի նիստին մասնակցում էին՝ **Ս. Սազոնով (արտ. գործոց նախարար), **ծով. Դրիգորովիչ** (ծովային նախարար), **զօր. Ժիլինսկիյ** (ընդհ. սպայակոյտի պետ), **Մ. Դիրս** (Պոլսոյ ռուսական դեսպանը) եւ տասնագրգիռվարչութեանց ուրիշ երեք ներկայացուցիչներ:

Նկատի առնելով պատմական կարեւորութիւնը այս յիշատակագրի, մի քիչ աւելի կանգ առնենք նրա վրայ։

Թուրքիան ջախջախիչ պարտութիւններ կրած էր բալկանեան պատերազմներում. յաղթականները — բալկանեան փոքր ազգեր — եթէ չպառակտուէին ներսից, և եթէ Մեծերի պառակտիչ միջամտութիւնները չլինէին դրսից՝ Թուրքիան վաղուց քշուած կը լինէր Պոլսից եւ Նեղուցներից։

Թուրքիոյ այս ծանր պարտութիւնները, տեղեկագրում էր Նիկոլայ Բ.ին իր արտ. գործոց նախարարը, «եւրոպական բոլոր կառավարութեանց մէջ այն համոզումը ստեղծած են, որ այլեւս շատ կարելի չէ յուսալ վերածնունդը այդ պետութեան, եւ որ Թրքական տիրակալութեան տեւականութիւնը ենթակայ է լուրջ կասկածի։ Այս տրամադրութեանց կապակցութեամբ բոլոր մեծ պետութիւններն առանց բացառութեան այժմից իսկ հաշուի են առնում կարելիութիւնը Օսմանեան կայսրութեան քայքայումի եւ մտահոգ են կանխապէս ապահովելու իրենց իրաւունքներն ու շահերը Փոքր Ասիոյ զանազան շրջաններում»։

Նախարարը գտնում է, որ իր հերթին Ռուսիա ևս չի կարող չխորհել ի՛ր շահերի եւ ի՛ր ապահովութեան մասին։

«Կարելի է տարբեր կարծիք ունենալ այն մասին,— նկատում էր Սազոնով,— թէ Ռուսիա արդեօք պէ՞տք է որ ձգտի տիրանալու Նեղուցներին», սակայն անկասկած է, որ տիրող գոյավիճակի փոփոխման դէպքում՝ նա չի կարող թոյլ տալ մի այնպիսի լուծում, որ հաշտ չէ իր շահերին։

Հիմնական հարցը հետեւեալն է.— «Ռուսիոյ շահերի տեսակէտից թոյլատրելի՞ է, որ Թուրքիոյ փո-

խարեն մի այլ պետութիւն գայ եւ տիրանայ Նեղուցներին»։

Նախարարը իր այս հարցումին պատասխանում է բացասաբար։

«Նեղուցների պահպանման բարդ և դժուարին հարցը իրականին մէջ ներկայիս, ռուսական անմիջական շահերի լոյսի տակ, լուծուած է բաւական գոհացուցիչ կերպով։ Թուրքիան այնքան թոյլ չէ՝ որ ընդունակ չլինի սպառնալու մեզ, բայց և այնքան ուժեղ չէ՝ որ հարկադրուած չլինի հաշուի առնելու իրենից աւելի հզօր Ռուսիան»։

Այս պայմաններում «թոյլ տալ, որ Նեղուցները անցնեն որեւէ օտար պետութեան լիակատար իշխանութեանը տակ», նախարարը գտնում էր անհանդուրժելի Ռուսիոյ թէ՛ տնտեսական և թէ ռազմա-քաղաքական շահերի տեսակէտից։

Մասնաւորաբար այս վերջին կէտին դառնալով՝ Սազոնով նկատում էր.

«Արդարեւ, նա, ով տիրում է Նեղուցներին, նա միայն Սեւ եւ Միջերկրականեան ծովերի բանալիները չէ՛, որ առնում է իր ձեռքերի մէջ։ Նա միաժամանակ տիրանում է յարձակողական շարժման բանալիներին դէպի Փոքր Ասիա եւ դառնում իշխանապետող ուժը Բալկաններում»։

Դէմ արտայայտուելով Թուրքիոյ փոխարինումին որեւէ այլ պետութեամբ Նեղուցների մէջ (առանձնաբար յիշատակւում է Բուլգարիոյ անունը, իբրեւ հաւանական տիրակալի), Սազոնով դէմ է խօսում նաև Նեղուցների չեզոքացումին. այդ ջրաճամբարների ապազինման և նրանց վերազինումի արգելքի մէջ նա բաւարար երաշխիք չի տեսնում Սեւ ծովի ապահովութեան համար։

Իր յիշատակագրի վերջին մասի մէջ նախարարը անդրադառնում է թէ՛ Ռուսիոյ ներկայ կացութեան եւ թէ այն միջոցներին, որ 1883ից այս կողմ, վերջին 30 տարիներին, մինչեւ 1913ը, գործադրուած են ի խնդիր ռուսական շահերի պաշտպանութեան։

Իր հետաքրքրական բնոյթը նկատի առնելով՝ թարգմանաբար տանք այդ հատուածը իր ամբողջութեանը մէջ.

«Արդէն 30 տարիներ անցած են այն օրից,— եզրափակում է իր յիշատակագիրը Սազոնով,— երբ հանգուցեալ կայսր Աղեքսանդր Գ.ի վեհապետական կամքով վերածնուեց Սեւծովեան մեր տորմիղը։ Իսկ շուրջ 60 տարիներ անցած են այն ժամանակից, երբ մեր առեւտրական նաւագնացութիւնը սկսուեց Սեւ ծովում։ Այս երկու ձեռնարկներով, որոնց աղբիւրը Ռուսիոյ հզօրանքն էր, մենք նպատակ ունէինք մեր շահերը հաստատել Նեղուցներում։ Հարիւրաւոր միլիոններ ծախսուած են ինչպէս այս գործի, այնպէս նաև Օդեսայի ռազմաշքեղանի զօրքի վրայ, որ նախատեսւում էր համատեղ ռազմագործողութեանց մեր տորմիղի հետ միասին։ Ինչպէս յայտնի է, տակաւին 1895ին, հայկական ջարդերի կապակցութեամբ, խնդիր դրուած էր Պոլսոյ առժամեայ գրաւման մասին մեր զօրքերի կողմից, գիտութեամբն ու հաւանութեամբը այդ շրջանի մեր հաւանական մրցորդներից ամենեն վտանգաւորի — Անգլիոյ։ Այդ ծրագրից մենք հարկադրուեցինք հրաժարուել՝ փոխադրական միջոցների եւ ցամաքային զօրակոչի թերութեանց պատճառով (ընդգծումները՝ մեզանից.—Ն.)։

«Այդ օրից ամբողջ 18 տարիներ անցած են։ Ըստ առաջնոյն հարիւրաւոր միլիոններ են ծախսւում, եւ ըստ առաջնոյն մենք ոչ իսկ մէկ քայլ*

յառաջացած ենք դէպի մեր նպատակը։ Նոր ռազմանաւեր են շինւում, ամէն տարի նոր յատկացումներ են լինում մեր առեւտրական ծովագնացութեան համար։ Մինչ երբ խօսք է ծագում այս կամ այն խոշոր ցամաքանման ձեռնարկի կարելիութեանը մասին՝ կառավարութիւնը կանգ է առնում այդ ձեռնարկի իրագործման գրեթէ անհնարինութեանը առջեւ։

«Անցեալ տարի (այսինքն՝ 1912ին.—Ն.), երբ խօսք դարձաւ մեր զօրքերի շարժման հաւանականութեանը մասին դէպի Պոլիս, պարզուեց, որ երկու ամսուայ մէջ մենք կարող ենք աստիճանաբար փոխադրել միայն երկու զօրամաս, ընդորում փոխադրական նաւերի հաւաքումն ու զօրքի տեղափոխութիւնը այնքան ժամանակ պիտի առնէին, որ մեր ռազմաձեռնարկը պիտի դադարէր անակնկալ լինելուց որեւէ մէկի համար, այլ խօսքով՝ նա ուղղակի անիրագործելի պիտի դառնար, այլեւս չխօսելով այն մասին, թէ թուաքանակը ափսանման սահմանուած նման մի բանակի որքան համապատասխան պիտի լինէր այն առաջադրանքներին, որ այդ բանակը կոչուած է իր կատար ածելու։

«Բայց այժմ խօսք կարող է լինել ոչ միայն անկարելիութեանը մասին լուրջ եւ գործուն ռազմաձեռնարկների ընդդէմ Թուրքիոյ, այլ և անբաւականութեանը մասին մեր ինքնապաշտպանողական միջոցների ընդդէմ ծովային մի ծրագրի, որ մերձաւորագոյն ապագային կարող է իրագործել Թուրքիան։ Համաձայն տուեալների, որ տարբեր ժամանակների մէջ առած է արտաքին գործոց նախարարութիւնը, մեզ մնում է գալ այն եզրակացութեան, որ 1914—1916 տարիների շրջանում Թրքական տորմիղը Սեւ ծովում գերազանցութիւն

ունենայ մեր տորմիղի վրայ թէ՛ իր ռազմանաւերի որակով եւ թէ նրանց հրետանիի ուժով»։

Կացութիւնը այսքան մռայլ ներկայացնելուց յետոյ՝ Սազոնովը եզրափակում էր.

«Թուրքիոյ բայթայումը չի կարող ցանկալի լինել մեզ համար, ուստի մեզ մնում է դիւանագիտական ազդեցութեան սահմաններում ամէ՛ն կարելին անել նման մի վախճան յեռանգելու համար»։ *)

Այս յուշագիրն է ահա, որ ցար Նիկոլայ Բ.ի հրամանով 1914 Փետր. 8ին գրուած էր Յատուկ Խորհրդամարմնի քննութեան։

Ուրեմն, ճիշտ այն օրերին — 1913 Նոյեմբեր— երբ վերջնապէս ձեւաւորուում էր Հայկական Բարեռնորոգութեանց Համաձայնագիրը Պոլսոյ մէջ, այդ նոյն օրերին ռուս երկրի արտ. գործոց վարիչը իր կայսեր արտօնութիւնն էր խնդրում Յատուկ Խորհրդամարմնի քննութեանը դնելու համար Ռուսիան չհանգրգռող բուն խնդիրը՝ Նեղուցների հարցը։

Հայկական բարեռնորոգութեանց մասին խսպառ խօսք չկայ, խօսքը բացառաբար Թրքական ջրուղիների մասին է, որ կարելի է պահել՝ միայն Թուրքիա՛ն փրկելով, ուստի եւ նախարարը արտայայտուում է ի նպաստ Թուրքի՛ոյ պահպանումին։

Հայկական բարեռնորոգութեանց մասին խօսք չկայ նաեւ Յատուկ Խորհրդամարմնի 1914 Փետր. 8ի նիստին, ուր, ի ներկայութեան Պոլսոյ ռուսական դեսպանի, քննութեան էր առնուում Սազոնովի 1913 Նոյ. 23 թուակիր մեզ արդէն ծանօթ յուշագիրը։

Աշխարհում տիրող խառնակ վիճակը նկատի առնելով, Խորհրդամարմինը անհրաժեշտ է գտնում զէնքով գրաւել Նեղուցները, բայց միայն այն դէպ-

*) «Արասնրիյ Արխիւ», հ. VI, էջ 69—76։

քում, երբ փորձ կը կատարուի Պոլսում Թուրքիան փոխարինելու մէկ այլ պետութեամբ։

Միաժամանակ, քանի տակաւին համաշխարհային պատերազմը պայթած չէ, Խորհրդամարմինը որոշում է արագօրէն կարգի բերել Ռուսիոյ զինական ուժերը,— նոր ռազմանաւեր չինել, փոխադրական միջոցները բարելաւել, զօրաշարժի ժամկէտները կրճատել եւ արագացնել, ցամաքանման բանակը մեծացնել և այլն։

Նիկոլայ Բ. 1914 Մարտ 23ին հաստատում է Խորհրդամարմնի այս որոշումները։

1914 Օգոստ. 1ին պայթում է, սակայն, համաշխարհային պատերազմը, և այս որոշումներն իրենց մեծ մասով մնում են լոկ թղթի վրայ։

Դանք պատերազմին։

Էդուարդ Բենեշ, Չեխոսլովակիոյ հանրապետութեան նախագահը, իր մի աշխատութեան մէջ խօսելով առաջին մեծ պատերազմի մասին, նկատում է.

«Համաշխարհային պատերազմը ծագեց ամենեն աւելի անպատեհ ֆայֆայումովը Թրքական Կայսրութեան»։ *)

Անառարկելի է Բենեշի սահմանումը զէթ այն չափով, ինչ չափով Ռուսիոյ մասնակցութիւնը այդ պատերազմը դարձրեց համաշխարհային։

Իսկ Ռուսիա մտաւ պատերազմի, որովհետեւ կար Պոլսոյ եւ Նեղուցների խնդիրը։

Միայն և բացառաբար։

Եթէ Ռուսիոյ հարաւային գոտիների այս կարեւորագոյն բանալիներին տիրանալու հնօրեայ երազը չլինէր՝ Ռուսիա անկասկածելիօրէն պատերազմի չէր

*) Էդ. Բենեշ — «Սլաւ քաղաքականութեան կենդրոն» («Վ. Ռոսիի», 1926, Պրագա, Դիրմ Ժ., էջ 84):

մտնի, և պատերազմն էլ կամ չէր լինի և կամ եղած դէպքում համաշխարհային բնոյթ չէր կրի։

Արագօրէն դէպքերի վրայից անցնելով, պատմական մի կարճատեւ շրջանի մէջ, 1870ից այս կողմ, մենք տեսանք, թէ ինչ բացառիկ տեղ են գրաւում Նեղուցները քաղաքական աշխարհի մտահոգութեանց մէջ։

Ռուս դեսպանը Պոլսոյ մէջ, Բուտենոով, խօսելով Նեղուցների և Թուրքիոյ մասին, աւելի քան մէկ դար առաջ, 1839ին, նկատում էր, որ Ռուսիա, նայած թէ ի՛նչ է Թուրքիոյ դիրքը Նեղուցների հարցում Ռուսիոյ հանդէպ, կարող է լինել «կա՛մ Թուրքիոյ առաջին բարեկամը եւ կամ նրա առաջին թշնամին»։*)

Բայց այսպէս է ոչ միայն Թուրքիոյ նկատմամբ։

Մենք տեսանք, որ առաւելաբար Նեղուցների հետքերով Ռուսիա կա՛մ բարեկամ եւ կամ թշնամի էր դառնում եւրոպական պետութեանց. բարեկամանում էր նրանց՝ որոնք Նեղուցների հարցում իրեն հետ էին, եւ թշնամի դառնում նրանց՝ որոնք իրեն դէմ էին։

Նոյնը նաև եւրոպական պետութիւնները. երբ այս վերջինները ուզում էին Ռուսիան իրենց հետ ունենալ՝ դառնում էին զիջող Նեղուցների հարցում. իսկ երբ այս բարեկամութեան կարիքը սուր կերպով չէին զգում՝ համախմբւում եւ խեղդում էին Ռուսաստանը Նեղուցների ջրերում։

Այս քարդ խաղերի պատկերը երբեք երեւան չեկաւ այնքան յստակ ու որոշ կերպով, որքան առաջին մեծ պատերազմին։

*) «Վոսփորը եւ Դարդանելը» («Ռ. Նովոսի», Փարիզ, 23 Օգոստ. 1946):

Իսկ մենք այս խաղերին կարողացանք իրաղեկ գառնալ, շնորհիւ բացառաբար ռուսական յեղափոխութեան։

1917 Հոկտ. 25ին բոլշեւիկները յեղաշրջումով իրենց ձեռքն առին երկրի իշխանութիւնը. Հոկտ. 27ին Մոսկուրդների Համառուսական 2րդ Համագումարը ընտրեց ժողովրդական Գործավարների Մոսկուրդը. Համագումարը իր անդրանիկ նիստին իսկ որոշեց հրապարակել աշխարհակալ պետութեանց բոլոր գաղտնի դաշինքները. նորընտիր կառավարութիւնը անմիջօրէն անցաւ այս որոշման գործադրութեան. չանցած վեց շաբաթ՝ արդէն հրապարակուած էին գաղտնի փաստաթղթերի ամբողջ եօթը հատորներ, աւելի քան 100 կարեւոր դաշինքներով։

Այս նոյն կարգով հրապարակուեցին նաև Թուրքիոյ բաժանումին վերաբերող գաղտնի դաշինքները։

Հետագային, 1924ին, Կրեմլը այս վերջին դաշինքները, յաւելումներով միասին, լոյս ընծայեց մի առանձին և մեծարժէք գրքով, հետեւեալ խորագիրների տակ.— «Եւրոպական պետութիւնները եւ Թուրքիան առաջին մեծ պատերազմին։ ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐՔԻՈՅ ԲԱԺԱՆՈՒՄԸ։ Նախկին արտ. գործոց նախարարութեան գաղտնի փաստաթղթերով»։

383 մեծագիր էջերից բաղկացած այս հատորին մաս է կազմում Արեւելեան Հարցին մեծանմուտ մի գրչի՝ Ե. Ադամովի 101 էջնոց չափազանց հետաքրքրական մի յառաջաբանը։

Հատորին կցուած է Թուրքիոյ բաժանման հազուագիւտ քարտէսը, գծուած սըր Մարք Սայքսի և ժորժ Պիկոյի կողմից։*)

*) Բուն քարտէսը Ռուսիոյ արտ. գործոց նախարարութեան դիւաններում գտնուած չէ. գրքին կցուած քարտէսը վերանկարուած է

Անցողակի յիշատակենք, որ այս մեծարժէք գործի մէջ բաւական նիւթ կայ նաև Հայ Դատի մասին։

Կարելի չէ խորապէս չցաւել, որ մեծ ծախքերի կարօտ այս գործի ամբողջական թարգմանութիւնը, հայերէն լեզուով, լոյս չտեսաւ տակաւին։*)

«ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐՔԻՈՅ ԲԱԺԱՆՈՒՄԸ» խորագրով հատորը հրատարակուելուց յետոյ, Կրեմլը, աւելի ուշ, լոյս ընծայեց մի նոր — և, ըստ երեւոյթին, դարձեալ չափազանց արժէքաւոր — հատոր եւս, հետեւեալ խորագրի տակ՝ «ՊՈԼԻՍ ԵՒ ՆԵՂՈՒՑՆԵՐԸ»։**)

Դէմ արտայայտուելով գաղտնի դիւանագիտութեան և գաղտնի դաշինքներ հրապարակելով՝ բոլշեւիկները արագօրէն մեծ համակրութիւն շահեցին պատերազմից յոգնած ժողովրդների մէջ և դէպի նոյն բաց դիւանագիտութիւնը մղեցին նաեւ ուրիշներին։

Պետրոգրադի Ֆրանսական դեսպանատան թղթերում պահուած օրինակից։ Այդ քարտէսը վերաբերում է 1917ի ամրան շրջանին, երբ Ասիական Թուրքիոյ բաժանման շուրջ մեծ պետութիւնները բանակցութիւններ էին վարում Իտալիոյ հետ. քարտէսի վրայ նշանակուած են միայն ֆրանսական, անգլիական եւ իտալական զօրիներ. ռուսական զօրին նշանակուած չէ։

*) Երեւանը այս հատորից 1926ին **բաղուածաբար** հրատարակեց միայն անմիջօրէն մեզ վերաբերող փաստաթղթերը՝ «**Հայաստանի առանձնատիպ եւ Անցանցան**» խորագրի տակ, 93 էջնոց մի գրքոյկ, **Ա. Ցովհաննիսեանի** «Առաջաբան»ով եւ **Թ. Աւդալբէգեանի** թարգմանութեամբ (գրքոյկին կցուած են մեր Դատին առընչուած երեք յաւելուածական գրութիւններ)։

**) Այս հատորը, դժբախտաբար, մենք չկարողացանք ունենալ։

Արդէն հազիւ երկու ամիս անցած բոլշեւիկեան յեղաշրջման վրայից, Վիլսընը՝ ամերիկեան հանրապետութեան նախագահը՝ 1918 Յունուար 8ին արտասանած իր պատմական ճառի մէջ հրապարակում էր հանրածանօթ «14 կէտեր»ը, որոնցից առաջինի մէջ ասուած էր հետեւեալը.

«Բոլորին յայտնի խաղաղութեան դաշինքներ, բացօրէն ստորագրուած, որոնցից յետոյ այլեւս չեն լինի որեւէ կարգի գաղտնի միջազգային համաձայնութիւններ, իսկ դիւանագիտութիւնը կը գործի բաց, ի տես ամենքի»։

Իր անձնական քարտուղարին այս բաց դիւանագիտութեան նպատակը պարզելով՝ Վիլսընը ասում էր նրան.

«Բոլշեւիզմի թոյնը միայն նրա համար այսպէս տարածում ունեցաւ, որովհետեւ նա հանդիսանում էր իբրեւ բողոք աշխարհը վարելու ցարդ տիրող կարգաձեւի դէմ։ Այժմ հերթը մերն է, խաղաղութեան վեհաժողովում մենք նոր կարգ պէտք է պաշտպանենք,— եթէ կարելի է՝ բարութեամբ, եթէ հարկ լինի՝ չարութեամբ»։*)

Այսպիսով կրեմլը հարկադրեց, որ պետութիւններն ու դիւանագէտները գէթ մի չափով իրենց գոց դարակները բանան. այս է պատճառը, որ այսօր անհուն նիւթ կայ հրապարակուած Նեղուցների մասին, մասնաւորաբար առաջին մեծ պատերազմի կապակցութեամբ։

Այս նիւթը իր արձագանգը տակաւին չգտաւ հայ մամուլի մէջ։

Ստոյգ է, նորից ենք կրկնում, որ Նեղուցների ռազմա-քաղաքական կշիռը երբեք այնքան յայտնապէս երեւան եկած չէ, որքան այդ եղաւ առաջին մեծ պատերազմին։

*) «Պատմ. Դիւանագիտութեան», հ. Բ., էջ 367:

Շտապենք ասել, որ 1914ի պատերազմին բուն Թուրքիոյ բաժանման խնդիրը առաջին անգամ արծարծուած է ոչ թէ Ռուսիոյ, այլ Անգլիոյ կողմից։

Պատերազմը դեռ նոր սկսուած, 1914 Սեպտ. 3ին, էդ. Գրէյ (Անգլիոյ արտ. գործոց նախարարը), Պոլ Կամբոն (ֆրանսական դեսպանը Լոնդոնում) եւ կոմս Ա. Բէնկէնդորֆ (ռուսական դեսպանը Լոնդոնում), լիազօրութեամբը իրենց կառավարութիւնների, համաձայնութիւն են կնքում Լոնդոնում, ըստ որում, առաջին՝ կողմերից ե՛ւ ոչ մէկը անջատ հաշտութիւն պէտք չէ կնքէր, երկրորդ՝ անջատօրէն, առանց միւս զինակիցների հետ նախնական համաձայնութեան, հաշտութեան պայմաններ պէտք չէ առաջարկէր։*)

1914 Սեպտ. 14ին Սազոնով, ընդունելով Պետերբուրգի ֆրանսական և անգլիական դեսպաններին՝ Մ. Պալէոլոգին և սրբ Բիւկընէնին՝ նրանց յայտնում է ապագայ հաշտութեան ռուսական ծրագիրը — «ուրուագիծը մի նկարի, որի պատառը տակաւին հիւսուած չէ» — 13 կէտերից բաղկացած։**)

Այս 13 կէտերից ե՛ւ ոչ մէկի մէջ ոչ մէկ յիշատակութիւն կայ Թուրքիոյ մասին։

Չկայ ոչ մէկ յիշատակութիւն նաեւ Հայաստանի մասին, չնայած այն բանին, որ ընդամենը մի քանի ամիս առաջ քաղաքական ասխարհը զբաղուած էր նաեւ մեր Հարցով՝ ծնունդ տալով 1914 Յունուար 26ի Համաձայնագրին։

Եւ այս գիտակցական անտեսումը այն ժամանակ, երբ մինչ այդ, 1914 Օգոստ. 18/5 Թուական-

*) «Միջազգային Յարաբերութիւններ Ասիական Դարաշրջանին», հ. VI, մաս Ա., Մոսկուա, 1935, էջ 214—215:

**) Ibid., էջ 248—249:

նով, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե. իր պաշտօնական դիմումն էր ուղղած կովկասեան փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովին, յայտնելով, որ «Բարձրագոյն Դուռը, անպատշաճ ձեւով քաջալերուած Գերմանիայից, կարողացած է ի չիք դարձնել 1914 Յունուար 26ի Համաձայնագիրը, ուստի եւ մեակուած բարեփոխումները այլեւս չեն կարող ոչոմի բաւարարել»։*)

Կաթողիկոսը փոխարքայի միջոցով Ռուսիոյ միջնորդութիւնն էր խնդրում Հայկական Հարցի լուծման ի խնդիր նախնական որոշ քայլեր առնելու, «քանի տակաւին Թրքահայաստանը գտնուում է Թուրքիոյ սահմանների մէջ»։

Կաթողիկոսի այս դիմումը փոխարքան 1914 Օգոստ. 22 գրութեամբ փոխանցում էր Ռուսիոյ վարչապետին՝ Գորեմըիկինին՝ հայանպաստ որոշ թելադրանքներ անելով։

Սազոնով, որին վարչապետը այս ամենին տեղեակ պահած էր, իր 1914 Օգոստ. 30 թուակիր պատասխան-գրութեամբ, նոյն վարչապետին ուղղուած, առ այժմ անպատեհ էր գտնում ի նպաստ հայ ժողովրդի որեւէ խնդիր յարուցանելու,**) թէեւ նոյն Սազոնով, ինչպէս տեսանք, անպատեհ չէր գտնում ամբողջ 13 կէտերով գրեթէ համայն աշխարհի հողային եւ քաղաքական պատկերը վերափոխելու։

Միայն 1914 Սեպտ. 25ին հողաշինարարութեան եւ հողագործութեան նախարար Կրիվոշէին — ըստ Պալէոլոգի մի մարդ, որ թէ՛ իր անձնական հեղինակութեամբ եւ թէ կայսեր մօտ վայելած իր վրա-

*) «Նարեկագոյն Գիրք»ը ամբողջութեամբ հրապարակած է Կաթողիկոսի այս դիմումը։

**) «Միջ. Ծ. Ա. Դարաշրջանին», հ. VI, մ. Ա., էջ 184։

ատութեամբ հանդիսանում էր իբրեւ «նախարարական դանլիճի փաստական նախագահը» — այցելելով դեսպան Պալէոլոգին եւ խօսք բանալով Սազոնովի 13 կէտերից բաղկացած ապագայ հաշտութեան ծրագրի մասին, անդրադառնում է Թուրքիոյ — առանց դարձեալ մեր անունը բերան առնելու — եւ յայտնում, ի միջի այլոց, հետեւեալը.

«Ինչ վերաբերում է Նեղուցներին, նրանք պէտք է լինեն ազատ, Թուրքերը պէտք է քաշուեն Ասիա, եւ Պոլիսը պէտք է չէզոք քաղաք դառնայ, մի իրաւակարգով, որ համանման է Թանձերի մէջ հաստատուած իրաւակարգին»։*)

Այս մասին տեղեկագրելով իր նախարարին՝ Դեկլասսէին՝ Պալէոլոգ նկատում էր.

«Ես լսեցի Կրիվոշէինին, առանց որեւէ կարծիք յայտնելու, բացառութեամբ Պոլսոյ հարցի մասին։ «Այդ մի հարց է,— ասացի ես,— որ անգլիացիներ-

*) Աւելի ուշ, 1915 Փետր. 28ին, երբ ռուս զէնքը անարգել յառաջանում էր ճարաւում, նոյն Կրիվոշէին, յատուկ յուշագրով դիմելով արտ. գործոց նախարար Սազոնովին եւ նրան զգելով մօտաւոր սահմանները այն նոր հողերի — Թուրքիոյ եւ Իրանի մէջ — որ պատերազմի յաղթական վախճանին պիտի կցուեն Ռուսիոյ, «խորհրդաբար» նկատում էր.

«Միւս մարզը (նորանուան երկրի.—Ն.), որ ընկնում է առաջինից (Բաթումից Սամսոն.—Ն.) հարաւ-արեւելք, **Արեւմտեան Ասիայի վերի հոսանքի աւազանն է, որը սովորաբար կոչւում է Հայաստան (Էրզրումի եւ Վանի նահանգները, այլ եւ Բիթլիսի նահանգի մի մասը): Այս երկրաշրջանի մեծ մասը ծովի մակերեսից բարձր դիրք ունի եւ լիովին պիտանի է ռուս գաղթականների համար»** (ընդգծումները՝ մեզանից.—Ն.)։

Հրապարակային յայտարարութեանց մէջ Հայաստանը հային խոստանալով՝ գաղտնի գրութեանց մէջ Կրիվոշէինները այն գրաւում էին ... **«ռուս գաղթականների համար»** (տե՛ս «Ասիական Թուրքիոյ Բաժանումը», էջ 361)։

Ցարական այս պղծութիւնն է անա, որ ռուս երկրի յեղափոխութիւնը ալեց ու տարաւ։

քի կողմից պիտի հանդիպի ամենէն շատ առարկութիւնների»։)*

Հետեւեալ օրը, Սեպտ. 26ին, Պալէոլոգ և Բիւկըլնէն ներկայանում են Սազոնովին։

«Այսօր առաւօտ,— տեղեկագրում էր Պալէոլոգ Փարիզ՝ Դելկասսէին,— անգլիական դեսպանի ներկայութեան ես Սազոնովին փոխանցեցի իմ ունեցած խօսակցութիւնը պ. Կրիվոշէինի հետ։ Սըր Բիւկըլնէնը Պոլսոյ հարցի մասին արտայայտուեց այն իմաստով, ինչ որ ես։

«Պ. Սազոնովը այդ ժամանակ մեզ ասաւ.—

«Պոլսոյ ճակատագրի մասին ես Կրիվոշէինին համակարծիք եմ ոչ բոլորովին, բայց ես կարծում եմ, ինչպէս եւ նա, որ հաշտութիւն կնքելիս՝ մենք մեզ միանգամ ընդմիշտ պէտք է ազատ անցք ապահովենք Նեղուցներից»։

«Նա շարունակեց վճռական շեշտով. «Թուրքերը պիտի մնան Պոլիս և նրա շրջակայքը. իսկ ինչ վերաբերում է Նեղուցների ազատութեան՝ այդ ազատութիւնը պէ՛տք է որ երաշխաւորուի մեզ, եւ ընդսմին առկայութեամբը երեք պայմանների.— առաջին՝ ոչ մէկ ամրութիւն պէտք չէ կառուցուի Դարդանելի երկու ափերին. երկրորդ՝ ծովային ուժերի միջոցով մի յատուկ յանձնախումբ ոստիկանական հսկողութիւն պէտք է տանի Դարդանելում. երրորդ՝ Ռուսաստանը վոսփորի ներքին մուտքում, օրինակ՝ Բէօյիւք-Դերէում, պէտք է ածխակայան ունենայ։

«Այս հարցը կենսական չանագրգռութիւն է ներկայացնում մեզ համար։ Այլեւս կարելի չէ նրա լուծումը յետաձգել»։

---

*) Ibid., էջ 314:

«Սըր Ջորջ Բիւկըլնէնի եւ իմ վրայ պ. Սազոնովի խօսքերը այն տպաւորութիւնը գործեցին, որ նա մեզ ոչ թէ պարզ նախագիծ է յայտնում, այլ ընդունուած մի որոշում»։)*

Նաեւ այս անգամ, Սեպտ. 26ի տեսակցութեան մէջ, հողային ո՛չ մէկ պահանջ Թուրքիայից ու ո՛չ մէկ խօսք նաեւ մեր մասին։)**

---

*) Ibid. էջ 315:

**) Այս զգացումները — ուրացումը Հայ Դատի — նոյնը մնացին մեր ճանչէպ պատերազմի ամբողջ տեւողութեան, մինչեւ ռուսական յեղափոխութիւնը:

Պիտի ուզէին՝ գէթ Ծանօթութեան մէջ պատմական մի փաստ արձանագրել:

1915ի ամրան ծանր ամիսներին, Յուլիս 15ից մինչեւ Սեպտ. 2, ռուս նախարարական դանլիճը խստօրէն զգոնցի նիստեր էր գումարում, ուր քննութեան էին առնում ամենածանրակշիռ հարցերը: Այդ նիստերին արգելուած էր որեւէ մէկին որեւէ ծանօթագրութիւն անել թղթի վրայ: Հակառակ այս արգելքին, նախարարական դանլիճի գործավարի օգնականը՝ Ա. Ծախոնցով՝ ամէն անգամ նիստից տուն դառնալով՝ իրեն համար ամէն ինչ գրի է առնում եւ զգոնցօրէն պահում: Յեղափոխութիւնից յետոյ արտասահման անցնելով՝ Ծախոնցով իր զգոնցի արձանագրութիւններ հրատարակութեան է տալիս: Արձանագրութիւններից պարզւում է, որ նախարարական դանլիճի 1915 Յուլիս 16ի զգոնցի նիստը նուիրուած է եղել մեր Հարցին:

Բացառիկ է այս նիստի բաղմակող արժէքը Հայ Դատի պատմութեանը համար: Մի շարք նախարարների կողմից այդ նիստին արտայայտուած կարծիքներ՝ **Գորեմիկինի** (վարչապետ), **Խվոստովի** (արդարադատութեան նախարար), **Խարիտոնովի** (պետական վերահսկիչ), **Պալիվանովի** (պատերազմական նախարար), **Սազոնովի** (արտ. գործոց նախարար) եւ **Կրիվոշէինի** (երկրագործութեան նախարար) գալիս են վկայելու, թէ որքա՜ն միասիրտ եւ միանոգի էին իրենց հայատեացութեանը մէջ ցարական այս սնանկ եւ խաւարամիտ իշխանաւորները եւ թէ նրանք ի՞նչ դաւեր էին որոնում մեր արիւնոտ Դատի դէմ: (Տե՛ս **Ա. Ի. Ծախոնցով** — "Ծանր Օրեր„ («Դիւան Ռուսական Յեղափոխութեան», գիրք XVIII, Բերլին, 1926, էջ 20—30):

Թուրքիոյ բաժանման գաղափարը, ինչպէս ասացինք, առաջին անգամ ծագում է Անգլիոյ մէջ։

1914 Սեպտ. 28ին, ամփոփելով տպաւորութիւնները իր խօսակցութեանց, որ ունեցել էր բրիտանական «նախարարների եւ պանպանողական կուսակցութեան մեծազդեցիկ անդամների հետ», կոմս Բէնկէնդորֆ՝ ռուսական դեսպանը Լոնդոնում՝ տեղեկագրում էր Սազոնովին։

«Թուրքիոյ հարցը տակաւին մնում է բաց։ Ենթադրում են, որ Թուրքիա, եթէ դուրս գայ մեր դէմ, պէ՛տք է դադարի գոյութիւն ունենալուց (ընդգծումը՝ մեզանից.—Ն.), մի բան, որ առաջ պիտի բերէր Եգիպտոսի իրաւավիճակի փոփոխումը։ Ես երբեք ոչ իսկ հարեւանցիօրէն այստեղ չօշափած չեմ Նեղուցների հարցը։ Ես կասկած չունեմ, որ առեւտուրի ազատութիւնը մտնում է ապագայ անգլիական ծրագրի մէջ։ Ես ենթադրում եմ, թէ այստեղ ապատում են, որպէսզի այս հարցում նախաձեռնութիւնը մենք երեւան բերենք, ժամանակին չփմանմէջ մտնելով Անգլիոյ և Ֆրանսայի հետ»։ *)

Ահա այս վիճակի մէջ էր հարցը պատերազմի սկզբնական օրերին. Թուրքիոյ նկատմամբ գրեթէ ոչ մէկ պահանջ Ռուսիոյ կողմից. նոյնը նաև Անգլիոյ և Ֆրանսայի մէջ. այս վերջինները մինչեւ իսկ դժկամակում են, երբ ռուս նախարարը անպաշտօն ձեւով հարց է դնում Պոլսոյ ոչ թէ իւրացումի, այլ պարզ չեզոքացումի մասին. Անգլիոյ ոստը — Թուրքիոյ հիմնական բաժանումին ձեռնարկել — վերաբերում է այն դէպքին միայն, երբ Թուրքիա պատերազմի մէջ հանդէս կը գայ Գերմանիոյ կողքին։

*) «Միջ. Յարաբերութիւններ Ասիական Թուրաբերանին», հ. VI, մ. Ա., էջ 329:

Շատ շուտով փոխւում է, սակայն, կացութիւնը. պատերազմի վրայից հազիւ մէկ տարի բոլորած՝ արտակարգօրէն առատաձեռն է դառնում քաղաքական աշխարհը Թուրքիոյ հաշուին։

Մի քիչ աւելի կանգ առնենք պատմական այս ուշագրաւ իրադարձութեանց վրայ։

Կանխապէս ասենք, որ կողմերը — թէ՛ Համաձայնականները եւ թէ Զինակիցները — պատերազմի առաջին ամիսներին իսկ տեսան ու համոզուեցին, թէ որքա՛ն մեծ ու բախտորոշ դեր վերապահուած է Ռուսիոյ այդ պատերազմում, ուստի և նրա նկատմամբ, մասնաւորաբար Նեղուցների հարցում, գնացին ամենամեծ զիջումների։

Մենք տեսանք, թէ ի՛նչ էր Ռուսիոյ կշիռը երկրորդ մեծ պատերազմին։

Սակայն նոյնն էր նաև առաջինին։

Իր «Յուշեր»ի մէջ մարաջախտ Ժոֆրը նկատում էր.

«Ֆրանսայի պարտքն է չմոռանալ այն ծառայութիւնները, որ մեզ մատուցեցին մեր ռուս զինակիցները»։ *)

Իր գնահատանքի մէջ աւելի արդար և ճշմարտութեան աւելի մօտ էր դաշնակից Ընդհանուր Հրամանատարը.

«Եթէ Ֆրանսան չջնջուեց Եւրոպայի քարտէսից,— նկատում էր իր «Յուշեր»ի մէջ Ֆոշը,— այդ մեզի համար պարտական ենք Ռուսիոյ»։ **)

Խօսելով այն մասին, թէ ինչպէս Ռուսիա, իր սեփական շահերը զոհելով, 1914 Օգոստ.ի վերջերին

*) Maréch. Joffre — «Mémoires 1910—1917», Փարիզ, հ. Ա., էջ 132 (մեզի մաղում եմ Ռ. Պելեսեից — «Ելեւմուտը եւ Ռազմագիտութիւնը», Փարիզ. 1937, էջ 18):

**) R. Recouly — "Le Mémorial de Foch„, Փարիզ, 1929, էջ 201 (տե՛ս Ռ. Պելեսեի, էջ 18):

հակայ բանակներով դէպի գերման ռազմագծերը տեղաշարժուեց՝ Արեւմուտքում Ֆրանսան փրկելու համար՝ Զըրչիլ նկատում էր իր «Յուշեր»ում.

«Արեւելեան Պրուսիոյ ռազմադաշտերում, վիթխարի եւ դաժան կռիւների մէջ, ընկաւ ռուս բանակի ծաղիկը, եւ այս յարձակման արդիւնքը օգտագործուեց ամենեն վճռական վայրկեանին։ Գերման հրամանատարութեան ջղերը չդիմացան այս հարուածին»։ *)

Միաձայն վկայութեամբը բոլորի, եթէ արեւելքում ռուս բանակները չլինէին, Ֆրանսա իր պատմութեանը մէջ Մարնը չէր ունենայ՝ իբրև իր փառքի եւ փրկութեան ամենէն շքեղ դրուագը։

Ռուսիա առաջին մեծ պատերազմին ռազմաճակատ հանեց 15.500.000 սուին. ռազմական այս վիթխարի ոյժը պատերազմական կշռաթաթերից մէկի մէջ դրուելով՝ ինքնին պիտի վճռուէր միւս թաթի ճակատագիրը։

Եւ որովհետեւ այսքան մեծ էր ռուսական զէնքի արժէքը, որովհետեւ առաջին անգամն էր մարդկային պատմութեան մէջ, որ պատերազմը ստուգիւ կրում էր աննախընթացօրէն աշխարհածաւալ բնոյթ, ուստի աննախընթաց եղան զիջումները պատերազմիկների կողմից նաև Նեղուցների հարցում։

Ռուս պետական վարիչների մէջ մի որոշ թեւ — քանակապէս համեստ, սակայն աղդեցութեամբ զօրաւոր — ընդհանրապէս դէմ էր պատերազմին, բացառաբար Նեղուցները նկատի առնելով։

«Ի՞նչ ենք մենք ակնկալում այս պատերազմից, բացագանչում էր մեծազդեցիկ վիտէն,— Պոլի՞սը,

*) Մ. Պղդանով — "Ժամանակակիցներ", Փարիզ, 1928, էջ 42—43:

խա՞չ Սբ. Սոֆիայի վրայ, վոսփո՞րը, Դարդանե՞լը։ Սակայն մի այնպիսի խելագարութիւն է այս, որի վրայ չարժէ իսկ կանգ առնել»։ *)

Աւելի յոռետես էր Իզվոլսկիյ՝ Ռուսիոյ նախկին արտ. գործոց նախարարը, իսկ պատերազմի շրջանին՝ ռուս դեսպանը Փարիզում, մի մարդ, որ իր քաղաքական հակումներով այնքան մօտ էր դաշնակից երկրներին.

«Ռուսասանը եթէ մինչեւ իսկ տիրանար Պոլսոյ,— իր յուշերի մէջ նկատում է Իզվոլսկիյ,— միեւնոյն է, մարսել պիտի չկարողանար»։ **)

Պատերազմին դէմ էին մանաւանդ արքունիքի շուրջը ծուարած գերմանասէրները, որոնք թէ՛ թիւ ունէին եւ թէ կշիռ։

Հակառակ այս ընդդիմութեան, Ռուսիա, այնուամենայնիւ, մտաւ պատերազմի։

Պատրուակը Սերբիան էր, սակայն բուն պատճառը, ինչպէս ասացինք, Նեղուցներն էին։

1914 Օգոստ. 3ին Գերմանիա պատերազմ յայտարարեց Ֆրանսայի, արագօրէն անցաւ ռազմական գործողութիւնների եւ շուտով հասաւ Մարնին։

Խուճապ էր Ֆրանսայի մէջ։ Իր վտանգուած դաշնակիցը փրկելու համար՝ ռուսական հուժկու բանակը տեղաշարժուեց դէպի Գերմանիա։

1914 Սեպտ. 6ին, Ռուսիոյ բերած հզօր աջակցութեանը շնորհիւ, գերման բանակները կանգ առան Մարնի վրայ։

*) Ռ. Շացկիյ — «Անցեալ հաշտութեան գերմանական առաջարկներ Նիկոլայ Բ.ին» («Ս. Զապիսկի», գիրք XXXV, 1928, Փարիզ, էջ 520):

Այս գլխի շարունակութեան մէջ յանախապէս հաղուածքներ պիտի կատարենք միեւնոյն գրութիւնից: Երբ որեւէ հաղուածքի աղբիւրը Մանօրութեան մէջ յիշատակած չենք, ուրեմն աղբիւրը մնում է միեւնոյնը՝ Ռ. Շացկիի գրութիւնը:

**) «Սովրեմեննիա Զապիսկի», Փարիզ, 1937, գիրք LXIV:

Ֆրանսան փրկուած էր։ Գրեթէ նախաճշտուած էր նաև պատերազմի բախտը։

Բերլինը զգաց իր կրած հարուածի բովանդակ ծանրութիւնը, ուստի որոշեց, մէկ կողմից՝ կռուի մէջ մտցնել Թուրքիան, որին զինակցած էր արդէն 1914 Օգոստ. 2ի դաշինքով, իսկ, միւս կողմից, նոյն Թուրքիոյ հաշուին գաղտնաբար Պետերբուրգի հետ սակարկելով՝ անվատ հաշտութեամբ պատերազմից հանել Ռուսիան։

Դաշնակից ճիգերը զուր անցան, Համաձայնականները չկարողացան պատերազմից ետ պահել Թուրքիան։

«Երբ սկսաւ պատերազմը,— նկատում է իր «Համաշխարհային Պատերազմը» երկհատոր գործի մէջ Կարլ Հելֆերիխ, պատերազմի շրջանի գերմանական նախարարներից,— Պոլսոյ մէջ ոչ մէկ պետական գործիչ չէր կասկածում, որ՝ Համաձայնականները յաղթանակած դէպքում՝ Ռուսիա պիտի գրաւի Պոսֆորը, և այս գործում նրան ոչ ոք պիտի չխանգարի։ Զափազանց յանախ և չափազանց յստակ կերպով վերջին տարիները Ռուսիա յայտարարած է, որ դէպի Պոլիս ճանապարհը ընկած է Բերլինի եւ Վիեննայի վրայով։ Պատերազմը, հետեւաբար, սկզբից իսկ, անկախ այն բանից, թէ Թուրքիան մասնակցում է կամ չի մասնակցում նրան, պատերազմ էր ի խնդիր Թրքական կայսրութեան գոյութեան։ Թուրքիոյ հետեւեալ ընտրութիւնը կը մնար,— կա՛մ ռազմաճակատ իջնել կենտրոնական պետութեանց կողքին, որոնք Թուրք ուժերը կը միացնէին բուն իսկ Թուրքիոյ գոյութեանը սպառնացող վտանգի դէմ ուղղուած պայքարին, եւ կամ անկամօրէն, կրաւորապէս սպասել իր ճակատագրի տնօրինման»։*)

*) «Ասիական Թուրքիոյ Բաժանումը», էջ 54—55:

Խորքին մէջ նոյնն է ասում իր «Ցուշեր»ում նաև պատերազմի շրջանի Թուրք նախարարներից Ջեմալ փաշան.

«Նրանց, որոնք ասում են մեզ, թէ իրերը այս վիճակին պիտի չյանգէին, եթէ մենք չմասնակցէինք համաշխարհային պատերազմին, մենք պատասխանում ենք.— պատերազմին չմասնակցելու պարագային եւս արդիւնքը նոյնը պիտի լինէր, որովհետեւ Անգլիոյ, Ֆրանսայի և Ռուսիոյ աշխարհակալ տենչը երէկուանից չի սկսւում, այլ նա գոյութիւն ունեցած է դարերից ի վեր։ Պատերազմից յաղթական դուրս գալով՝ այս երեք ազգերը անխուսափելիօրէն պիտի բաժանէին մեր երկիրը։ Սովորաբար տկարի և անօգնականի ունեցուածքը բաժանում են։ Այդ ժամանակ պիտի պարտաւորուէինք կրել ամօթն ու ստորնացումը տեսնելու մեզ զբաղուած, առանց պայքարի, այն բանից, որ Աստուած վստահած էր մեր խնամածութեան»։*)

Մանապարտի այս հոգեբանութեամբ Թուրքիան պատերազմի մէջ մտաւ։ 1914 Օգոստ. 10ին «Գէօբէն»ը և «Բրեսլաուս»ն անցան Դարդանելը։ Հոկտ. 29ին և 30ին, հրամանատարութեամբը գերման ծովակալ Սուշոնի, Թրքական ռազմատորմիղը ռմբակոծեց ռուսական սեւծովեան նաւահանգիստները՝ Սեւաստոպոլ, Օդեսա, Թէոդոսիա և Նովորոսիյսկ։ 1914 Նոյ. 2ին Ռուսիա պատերազմ յայտարարեց Թուրքիոյ։

Գերմանիան այժմ աւելի յուսալից էր. պատերազմող Թուրքիոյ հաշուին աւելի դիւրին էր սակարկել՝ անվատ հաշտութեամբ Ռուսիան պատերազմից հանելու համար։ Եւ այս ուղղութեամբ ա-

*) «Ջեմալ փաշայի յիշատակներ» («Հայրենիք», 1925 Յունիս, թերթ թիւ 16ից):

հագին ձիգ սպառեցին գերման վարիչները։ Եւ, ըստ երեւոյթին, խստօրէն գաղտնի։ Այնքան գաղտնի, որ ճակատի հրամանատարներից անգամ գտնաժառանգ իշխանը՝ Վիլհելմ՝ դատելով իր «Յուշեր»ից, լուր իսկ չունէր այս մասին։

Առաջին ծիծեռնակը, որ կենտրոնական պետութիւնները արձակեցին դէպի Պետերբուրգ, այդ Մ. Վասիլչիկովայի — ռուսական արքունիքի պատուոյ տիկիններից, պատերազմի բերումով մնացած Աւստրիա — 1915 Մարտ 10 թուակիր նամակն էր, ուղղուած անձնապէս կայսեր՝ Նիկոլայ Բ.ին։

Իր այդ նամակում Տիկինը գրում էր.*)

«Ինձ մօտ եկան երկու գերմանացի և մէկ աւստրիացի. երեքն էլ նուազ կամ առաւել չափով ազդեցիկ մարդիկ, որոնք յարաբերութեանց մէջ են Աւստրիոյ և Գերմանիոյ արքայական տիրակալների հետ, եւ խնդրեցին հասցնել Ձերդ Մեծութեան հետեւեալը.— «Այժմ ամէնքը ամբողջ աշխարհի մէջ տեսան եւ համոզուեցին, թէ որքան քաջ են ռուսները. ուստի այսօր, երբ պատերազմիկները գրեթէ հաւասար պայմաններում են տակաւին, արդեօք Դո՞ւք, Արքա՛յ, տիրակալդ աշխարհի մեծագոյն կայսրութեան, պիտի չուզէի՞ք լինել ոչ միայն ցարը յաղթական զօրքերի, այլ և ցարը խաղաղութեան... Ձեր մէկ հզօր խօսքը միայն — եւ արեան գետի հեղեղները կը կեցնեն իրենց ահաւոր ընթացքը։ Ո՛չ այստեղ՝ Աւստրիոյ մէջ եւ ոչ էլ Գերմանիոյ — չկայ ատելութիւն Ռուսիոյ հանդէպ։ Պրուսիոյ մէջ կայսրը, բանակը եւ ռազմատորմիղը գիտակցում են քաջութիւնն ու յատկութիւնները մեր

*) Նախկին կայսրուհու՝ Ալեքսանդրա Ֆէոդորովնայի արդէն հրապարակուած «Օրագիր»ից երեւում է, որ Վասիլչիկովան կայսրուհու, ինչպէս եւ կայսեր ամենամօտ անձնաւորութիւնը եղած է։

բանակի, եւ այս երկու երկրներում կայ մեծ հոսանք ի նպաստ խաղաղութեան — հաստատո՛ւն խաղաղութեան — Ռուսիոյ հետ»։

Վերջաւորութեան.— «Ձեր մէ՛կ խօսքը միայն, եւ Դուք Ձեր բազմաթիւ փառապակներին պիտի աւելացնէք նաև անմահութեան պսակը»։

Նամակի մէջ Վասիլչիկովան կայսեր «փառք»երը յիշատակելով — Լահէյի Խաղաղութեան Ատեանը, իր հօր՝ Աղեքսանդր Գ.ի նախարար Լոբանովի ձիգերը՝ «Երեք Միապետների Զինակցութիւն» ստեղծելու և այլն — մատնանշում է գալիք մռայլ ապագան.

«Այժմ ամէն ինչ կործանւում է, իսկ անդին կայ անաւոր դեղին ցեղը, որի դէմ պատնէշը մէկ հատ է — Ռուսիան»։

Բանագնացները Տիկնոջ ցոյց են տալիս նաեւ սպեղանին.

— «Ես հարցրի,— «իսկ Դարդանե՞լը»։ — «Բաւական է ռուս Ցարին բաղձալ, ասացին, եւ անցքը կը բացուի»։

Նամակի բովանդակ հիմը, իմաստ-ու առէջքը ճիշտ այս վերջին բառի տակ էր թագնուած — ԴԱՐԴԱՆԵԼ։

Բանագնացները գիտէին, որ միայն ա՛յս գնով Ռուսիան կարելի է պատերազմից հանել։

Եւ այս «գին»ը մատնանշուած էր արդէն այն հրամանագրի մէջ, որով 1914 Նոյ. 2ին Ռուսիոյ կողմից պատերազմ էր յայտարարւում Թուրքիոյ.

«Թուրքիոյ խելագար միջամտութիւնը այս պատերազմին,— կարդում ենք հրամանագրի մէջ,— պիտի արագացնի դեպքերի անխուսափելի ընթացքը իրեն իսկ՝ Թուրքիոյ համար, եւ պիտի բանայ Ռուսիոյ առջեւ լուծման ճանապարհը պատմական այն խրն-

դիրքերի — Սեւ ծովի ափերին — որոնք նախնիքներից ժառանգ ձգուած են իրեն»։ *)

Պատմական այս խնդիրների համար է անտարակոյս, որ Գերմանիա եւ Աւստրիա, պատերազմի ամենասկզբի օրերին, իրենց ծառայութիւններն էին առաջարկում Ռուսիոյ։

Դաշնակիցները անտեղեակ չէին կենտրոնական պետութեանց խաղերին։

Անգլիական դեսպանը Փարիզում՝ լորդ Բերտի՝ 1915 Մարտ 2 թուականով արձանագրում է իր անձնական օրագրի մէջ.

«Դելկասէն այսօր ինձ ասաւ, որ Գերմանիան լարուած ճիգերով աշխատում է Ռուսիան դաշնակիցներից պոկելու։ Ինքը կարծում է, որ այդ չի յաջողուի Գերմանիոյ, բայց ես իր մէջ որոշ կասկածութիւն նշմարեցի այն իմաստով, որ գուցէ յաջողուի, եթէ երբեք Անգլիա եւ Ֆրանսա որոշակի յոյսեր չտան Ռուսիոյ Դարդանելի մասին»։

Այս նոյն մտահոգութիւնները կային նաեւ Անգլիոյ մէջ. սըր Էդուարդ Գրէյ իր յիշատակների մէջ նոյն օրերին նկատում էր.

«Պետրոգրադից բաղձանք յայտնած են (այնտեղի անգլիացի դիւանագէտները.—Ն.) պարզելու Պոլսոյ խնդիրը, այն մատնանշումով, որ այդ անհրաժեշտ է Սազոնովի կացութիւնը փրկելու համար. բարուր չէր այս, այլ իրական վտանգ»։

Սազոնովը — ամենաջերմ «Համաձայնականներից էր Ռուսիոյ մէջ. նրա անկումով մեծապէս պիտի դիւրանար անջատ հաշտութեան գործը Գերմանիոյ հետ։ Իսկ Սազոնովին կարելի էր իր աթոռի վրայ պահել ոչ թէ Նեղուցների հարցը ձգձգելով, այլ օր առաջ ի նպաստ Ռուսիոյ այդ հարցը լուծելով։

Լոնդոնը տեղեակ էր այս բոլորին։

1915 Մարտ 3ին Լոնդոնի ռուս դեսպանը՝ կոմս Ա. Բէնկէնդորֆ՝ հեռագրում է Սազոնովին բովանդակութիւնը այն զրոյցի, որ նախորդ օրը ինքը ունեցած էր սըր Էդ. Գրէյի հետ։

Անգլիոյ արտ. գործոց վարիչը, ի միջի այլոց, ասում է Բէնկէնդորֆին.

«... Նա (Գրէյը) ասաւ, որ պատերազմի սկզբից իսկ ինքը ապշահար եղած է ի տես այն անընդունելի երեւոյթի, թէ ինչպէս մի այնպիսի հսկայ կայսրութիւն, որպիսին Ռուսաստանն է, կարող է ելք չունենալ դէպի ծով, բացի Արխանգելսկից եւ Վլադիվոստոկից. նման մի երեւոյթ, իր կարծիքով, այլեւս չի կարող շարունակուել, եւ Նեղուցների հարցը պէտք է վճռուի ձեր խաղաքական եւ տնտեսական շահերի համաձայն, իսկ լուծման համապատասխան ուստակ ձեւակերպումը կը գտնուի խաղաղութեան ուրջանին։

«Ես նրան մատնանշեցի մեր նաւային կարծիքի նոր եւ անյաղթահարելի պահանջների վրայ։ Արդէն երկար մտերմաբար յիշատակեցի իրեն ընդհանուր գծերի մէջ այն շրջանը, ուր անհրաժեշտ է Ռուսիոյ հաստատումը։ Այսօր քարտէսի վրայ ես իրեն ցոյց տուի Էնոս-Միդիայի եւ Սակարիայի գիծը եւ աւելացրի, որ անհրաժեշտ է երաշխիքներ գտնել Մարմարայի հարաւում։ Ես նրան ասացի, որ, ըստ իս, պատրանքներ պէտք չէ ստեղծել, եւ որ Ռուսիոյ հաստատումը այս վայրերում, իմ ըմբռնումով, նշանակում է նրանց կցումը Ռուսիոյ։ Ես նրան ասացի, որ, ինչպէս ինձ է թւում, անգլիական հանրային կարծիքը նախապատ-

*) Ս. Զազոնով — «Կայսր Նիկոլայ Բ. Ալեքսանդրովիչ», Բերլին, 1922, էջ 65:

տասնուած է սրան։ Նա ինձ ասաւ, որ ինձ իսկոյն չի կարող արտայայտուել, բայց նա համաձայնուեց, որ ինչ անգլիացիներ մնացած են, որոնց սկզբունքով անկարելի գտնեին Պոլիսը Ռուսիոյ տալու»։

Իր ընդարձակ հաղորդագրութիւնը դեսպանը փակում էր հետեւեալ տողերով.

«Մեր խօսակցութեան հետեւանքով ամրացան իմ տպաւորութիւններն այն մասին, որ, եթէ մինչեւ իսկ խոչընդոտներ ծագեն մեր նպատակների առջեւ Պոլսոյ նկատմամբ, այդ խոչընդոտները աւելի շուտ պիտի գան Փարիզից, քան Լոնդոնից, եւ նիշտ այդ է, որ բաւական ծանրացնում է Գրէյի վիճակը։ Անգլիոյ կողմից աւելի շուտ սպասելի են պահանջներ ռազմական եռաշխիներների մասին»։*)

Դժուար է հաշտուել հաւանականութեանը այն մտքին, թէ Անգլիոյ արտ. քաղաքականութեան ամենէն հմուտ վարիչներից Գրէյ, մի մարդ, որ այնքան ձեռնհասօրէն վարեց իր հայրենիքի արտ. քաղաքականութեան ղեկը ամբողջ 11 տարի, 1905ից մինչեւ 1916, իսպառ լուր չունէր — մինչև առաջին մեծ պատերազմը — այն մասին, թէ Ռուսիա, բացի Արխանգելսկուց (հիւսիսում) եւ Վլադիվոստոկից (ծ. արեւելքում), այլ ելք դէպի տաք ջրերը չունի։

Անգլիոյ արտ. քաղաքականութեան վարիչը այս մասին լուր ունէր անշուշտ։

Փոխուա՛ծ էր Գրէյը, որովհետեւ փոխուած էին քաղաքական պայմանները համայն աշխարհում։

Երէկ Գրէյ դէմ էր Նեղուցների հարցում Ռուսիոյ զիջում անելու, որովհետեւ այդ զիջումը չանելու ուժը երէկ նա ունէր։

*) «Ասիական Թուրքիոյ Բաժանումը», էջ 115—116:

Մինչ այսօր նա ո՛չ այդ ուժն ունէր եւ ոչ էլ այդ հնարաւորութիւնը։

Քիչ վերջը պիտի տեսնենք, որ Գրէյ-Բէնկէնդորֆ մեծակշիռ տեսակցութիւնից հազիւ 24 ժամանց, Ռուսիա, 1915 Մարտ 4 թուականով, ներկայացնում է իր պատմական ծանուցագիրը Դաշնակիցներին՝ նրանցից պահանջելով Նեղուցներն ու Պոլիսը, կից հողաշերտերով, ջրերով ու կղզիներով միասին։

Պիտի տեսնենք նաև, թէ ինչ մեծ պատրաստակամութեամբ Դաշնակիցները յօժարում են ընդառաջել Ռուսիոյ այս պահանջներին։

Պարզ են պատճառները։

Գրէյ Mars 3ին ինքնակամօրէն զիջում էր Ռուսիոյ ա՛յն, ինչ որ Mars 4ին Ռուսիա արդէն պիտի պահանջէր Անգլիայից։

Կանխելով Սազոնովին՝ Անգլիա սիրայօժար զիջում էր Նեղուցները Ռուսաստանին (նրան պատերազմում պահելու համար), որովհետեւ իր հերթին Գերմանիա՝ կանխելով Գրէյին՝ այդ զիջումը Ռուսաստանին կատարած էր արդէն (նրան պատերազմից հանելու համար)։

Եւ, վերջապէս, Գրէյ զիջում էր Նեղուցները, որպէսզի հետագային, որեւէ պարագայի տակ, անկախ ռուսական զէնքի այս կամ այն յաջողութիւնից, հարկադրուած չլինի Թուրքիան ամբողջութեամբ — ոչ իբրև հող եւ ոչ իբրև պետութիւն — Ռուսիոյ զիջելու։

Անգլիան տալիս էր՝ առնելու համար, տալիս էր՝ կանխապէս և համաձայնաբար Թուրքիոյ բաժանման խնդիրը կարգադրելու համար։

Ահա թէ ինչո՛ւ մեզ թւում է ստոյգ, որ Գրէյ անկեղծօրէն կողմնակից էր դարաւոր կռուախնձորը Ռուսիոյ զիջելու։

Իր յուշերի մէջ — «Քսանրոնինգ Տարի» — վաւերագրելով այն փաստը, որ վերջին երկու հարիւրտարիների ընթացքին Եւրոպան և յատկապէս Անգլիան գոցած են Ռուսիոյ առջեւ բոլոր ելքերը դէպի տաք ջրերն ու ովկիանոսները՝ Գրէյը նկատում է.

«... Ովկիանոսը առեւտրական կապերի համար նախատեսուած մեծ ճանապարհն է ազգերի միջև։ Շատ քիչ բացառութեամբ պետութիւններից իւրաքանչիւրը, փոքր կամ մեծ, իր նաւահանգիստներն ունի դէպի միջազգային այդ մեծ պողոտան դուրս գալու համար։ Ռուսաստանը, իր հսկայ տարածութիւններով եւ իր անագին ազգաբնակչութեամբ, նման ելքեր չունէր, անգամ չունէր չառաջող մի նաւահանգիստ իր տորմիլի համար»։*)

Սեւծովեան նաւահանգիստները այս հաշուի մէջ չեն մտնում, որովհետեւ Նեղուցներից նրանց առջև ճանապարհները գոց էին մնում։

Տրամադիր ենք կարծելու, որ Նեղուցների հարցի լուծմանը մէջ, ի նպաստ Ռուսիոյ, 1915ի պատմական օրերին, կա՛յ Գրէյի — մեծ հմտութեան և մտքի լայն հորիզոնների տէր այս մարդու — անձնական մեծ բաժինը։

Այդ պատմական օրերին ընդդիմութիւնը գալիս էր առաւելաբար Ֆրանսայից եւ գալիս էր գերակշռաբար տնտեսական հիմունքով։

Թուրքիոյ տնտեսութեան մէջ ներդրուած եւրոպական դրամագլխում Ֆրանսական մուծանքը առաւելագոյն տոկոսն էր կազմում. առաջին մեծ պատերազմի նախօրէին Օսմանեան պարտքի 60.3%-ը պատկանում էր Ֆրանսային, իսկ մնացեալը՝ Գերմանիոյ, Անգլիոյ, Իտալիոյ և այլ պետութեանց։

*) Ա. Գերենգկիյ — «Սահմանների եւ այլնի մասին» («Նովիյ Ժուրնալ», գիրք է., Նիւ Եորք, 1944, էջ 178)։

Իր գանձելիքը ապահովելու համար՝ Ֆրանսան չափազանց դիւրազգած էր Թուրքիոյ քաղաքական կացութեան մէջ կատարուելիք որեւէ փոփոխութեան նկատմամբ։

Նոյն օրն իսկ, 1915 Մարտ 4ին, Փարիզի ռուս դեսպանը՝ Իզվոլսկիյ՝ յաջորդաբար երկու ընդարձակ հեռագիր է յղում Սազոնովին՝ Նեղուցների շուրջ իր ունեցած խօսակցութեան մասին։ Առաջին հեռագիրը աւելի յոռետես չեչտ ունի. այդտեղ Իզվոլսկիյ ակնարկում է Դելկասէի վերապահանքներին Նեղուցների հարցում և իր վախերը յայտնում ապագայի նկատմամբ, եթէ Պոլսոյ գրաւումը տեղի ունենայ առանց Ռուսիոյ մասնակցութեան.

«Եթէ, ինչպէս որ, դժբախտաբար, կարելի է կռահել Ձեր հեռագրից, — ասում է Իզվոլսկիյ, — Պոլսոյ և Նեղուցների գրաւումը տեղի ունենայ առանց մեր մասնակցութեան, ապա այդ պարագան չափազանց աննպաստ պայմաններ պիտի ստեղծի այդքան հսկայական կարեւորութեամբ մի հարցի լուծմանը համար ի նպաստ Ռուսիոյ»։

Իր հեռագրի վերջաւորութեան Իզվոլսկիյ հետեւեալ խորհուրդն է տալիս Սազոնովին.

«Ստեղծուած կացութեան մէջ ինձ թւում է, որ (հարցի լուծմանը համար) սովորական դիւանագիտական ճանապարհները կարող են բաւարար չլինել, ուստի շարունակում եմ մտածել, որ ներկայի արտակարգ պարագաները յամառաբար պահանջում են անմիջական բացատրութիւններ Ձեր, Դելկասէի եւ Գրէյի միջեւ ոչ միայն Պոլսոյ և Նեղուցների, այլ և Ասիական Թուրքիոյ ապագայի մասին» (ընդգծումը՝ մեզանից. — Ն.)։*)

*) «Ասիական Թուրքիոյ Բաժանումը», էջ 117։

Նոյն օրն իսկ, ինչպէս ասացինք, Իզվոլսկիյ յղում է մի երկրորդ հեռագիր իր նախարարին. առաջինը՝ մինչև Դելկասէի հետ իր տեսնուելը, իսկ երկրորդը՝ նոյն օրն իսկ ունեցած տեսակցութիւնից անմիջապէս յետոյ։

Տանք այդ հեռագիրը ամբողջութեամբ.

«Այսօր Դելկասէն իր նախաձեռնութեամբ խօսեց ինձ Պոլսոյ և Նեղուցների մասին։ Նա ինձ ասաց, թէ հեռագիր առած է Պալէոլոգից (ֆրանսական դեսպանը Պետրոգրադում.—Ն.), որից ինքը կռահում է, որ մեր տեսակէտների մէջ էական փոփոխութիւն յառաջացած է այդ հարցի լուծման նըկատմամբ։ Ոչ շատ առաջ ե՛ւ այստեղ, ե՛ւ Լոնդոնում ենթադրում էին — հիմ ունենալով Պետրոգրադից եկած չափազանց որոշակի հաղորդագրութիւններ — թէ մենք համաձայն ենք Պոլիսը միջազգային վարչութեան տակ դնելու և Նեղուցները չէզոքացնելու։ Գրէյի այն յայտարարութիւնը, թէ Անգլիա, իր կողմից, համամիտ է այդ հարցերի լուծումին մե՛ր բաղձանքների իմաստով, տեղի ունեցած է ճիշտ իբր պատասխան (Պետրոգրադից եկած) այդ հաղորդագրութիւնների։ Այժմ սպասելի են լուրջ առարկութիւններ անգլիական դաշնիճի կողմից մեր ծրագրների դէմ։ «Դուք չէք կարող կասկածել», յարեց Դելկասէն, «իմ անկեղծ պատրաստակամութեանը մասին անել այն ամէնը, ինչ որ ինձանից է կախուած, պաշտպանելու համար Պոլսին տիրանալու ձեր պատմական ձգտումը, սակայն, իմ համոզումով, այդ բաղձանքի իրացումը կախուած է գլխաւորաբար այն բանից, թէ կանխապէս պիտի վճռուի՞ արդեօք Նեղուցների հարցը նրանց լիակատար ազատութեան իմաստով»։ Իմ այն հարցումին, թէ ինքը իրականին մէջ ի՛նչ է հասկանում «լիակատար ազատութիւն» արտայայտութեանը տակ, Դելկասէն պատասխանեց, որ այդ նշանակում է — որեւէ մէկին արգելել Նեղուցները ամրացնելու՝ այս վերջինները ենթարկելով միջազգային մի կազմակերպութեան, որպիսին, օրինակ, Դանուբեան Յանձնախումբն է։ *) Այս անգամ նա սկզբունքային առարկութիւններ չարաւ մեր տիրակալութեան դէմ Նեղուցների երկու ափերի վրայ եւ կարծես հնարաւոր գտաւ նման մի տիրակալութիւն, միայն նկատեց, որ մեր հաստատումը Նեղուցների ասիական ափին կախուած է արդէն ուրիշ հարցից։ Իր խօսքը Թուրքիոյ ասիական սահմանների բաժանումի մասին էր (ընդգծումը՝ մեզանից.—Ն.)։ Խօսակցութեան մէջ նա, ի միջի այլոց, այն միտքը յայտնեց, որ եթէ մենք Նեղուցների մինչև իսկ մէկ ափը գրաւենք, առաւել եւս՝ երկու, ապա, հակառակ ամրացման դէմ եղած արգելքին, մենք, ի հարկէ, փաստական հնարաւորութիւն կունենանք մեր զօրքի և ռազմատորմղի օգնութեամբ ամէն վայրկեան Նեղուցները գոցելու. սրա դէմ սկզբունքային որեւէ առարկութիւն կարելի չէ»։ **)

Հեռագրի վերջաւորութեան Իզվոլսկիյ տեղեկագրում էր իր նախարարին Դելկասէի բաղձանքի մասին՝ մօտ ապագային երեք պետութեանց — Անգլիոյ, Ռուսիոյ և Ֆրանսայի — արտ. գործոց նախարարների համախմբում ունենալ Փարիզի մէջ,

*) Այս Յանձնախումբը հաստատուեց 1856ի փարիզեան դաշինքով. ներազգային բազմաթիւ այլ դաշինքներով — 1865ի, 1871ի, 1878ի, 1883ի, 1885ի եւ 1919ի — զանազան փոփոխութիւններ եղան նրա Կանոնագրի մէջ։ Յանձնախումբը միջազգայնօրէն իրեն վստահուած իրաւասութեամբ ապահովում է պետութեանց առեւտրի ազատութիւնը Դանուբի վրայ։ Յանձնախումբը հաստատուած է Գալացում։

**) «Ասիական Թուրքիոյ Բաժանումը», էջ 117—118։

ուր անմիջական բանակցութեամբ կարելի պիտի դառնար Պոլսոյ և Նեղուցների հարցը վերջնապէս կարգադրել։

Տակաւին այս հեռագիրների պատասխանը չառած, նոյն օրն իսկ, 1915 Մարտ 4ին, Սազոնովը հետեւեալ պատմական հեռագիրն էր յղում Փարիզի և Լոնդոնի իր դեսպաններին.

«Ցիտեցնում եմ իմ No. 879 հեռագիրը։ *)

«Այսօր, անգլիական եւ Ֆրանսական դեսպանների հետ միասնաբար, յիշատակագիր կազմեցի հետեւեալ բովանդակութեամբ.

«Վերջին դեպքերի ընթացքը Նորին Մեծութիւն կայսր Նիկոլայ Բ.ին բերած են այն մտքին, որ Պոլսոյ եւ Նեղուցների հարցը պէտք է կարգադրուի վերջնապէս եւ համաձայն Ռուսիոյ դարաւոր ձգտումներին։

«Հարցի ամէն լուծում պիտի լինէր անբաւարար եւ անհասատ, եթէ երբեք Պոլիս քաղաքը, Վոսփորի արեւմտեան ափը, Մարմարա ծովը եւ Դարդանելը, ինչպէս նաեւ Թրակիոյ հարաւային մասը Էնոս-Միդիա գծով չմիակցուէին Ռուսական Կայսրութեան։

«Հաւասարապէս նաեւ ռազմագիտական անհրաժեշտութիւնը նկատի առնելով, ասիական ափի այն մասը, որ ընկած է Վոսփորի, Սակարիա գետի եւ Իզմիթի ծոցափին մատնանշուելիք կէտի միջեւ, Մարմարա ծովի կղզիները, Իմբրոս եւ Տենեդոս կղզիները պէտք է միակցուեն Կայսրութեան։

*) 1915 Մարտ 2 թուակիր այդ հեռագրով Սազոնովը իր դեսպաններին հրահանգում էր, առաջին՝ ապահովել Մարմարայում գտնուող կղզիների, ինչպէս նաեւ Իմբրոսի եւ Տենեդոսի (ռազմագիտորէն երկու կարեւոր կղզիներ, որոնք Եգէականում գտնում են Դարդանելի բերանը) կցումը Ռուսիոյ. երկրորդ՝ նախապատրաստել Անգլիոյ եւ Ֆրանսայի հանրային կարծիքը Ռուսիոյ տիրակալումի մտքին Պոլսոյ եւ Նեղուցների վրայ։

«Ֆրանսայի եւ Մեծն Բրիտանիոյ յատուկ ատենները յիշեալ երջանում խստօրէն պիտի պահպանուեն։

«Կայսերական կառավարութիւնը սիրում է յուսալ, որ յիշատակուած նկատումները երկու դաշնակից կառավարութեանց կողմից համակրօրէն նկատի պիտի առնուեն։ Ցիշեալ դաշնակից կառավարութիւնները կարող են լիայոյս լինել, որ կայսերական կառավարութեան կողմից իրենք եւս նոյն համակիր վերաբերումին պիտի հանդիպեն իրացումին մէջ իրենց այն ծրագիրների, որոնք կարող են ծագել իրենց մտքէ՝ Օսմանեան Կայսրութեան այլ երջանների նկատմամբ եւ թէ տարբեր վայրերում»։ *)

Այս յիշատակագրի վրայ կայ Նիկոլայ Բ.ի ձեռքով կատարուած հետեւեալ մակագրութիւնը.— «ԼԻՈՎԻՆ ՀԱՄԱՄԻՏ ԵՄ»։

1915 *Մարտ 7 թուակիր նոր հեռագրով, ուղղուած նոյն դեսպաններին, որոնք տակաւին որոշ տարակուսանքներ ունէին հարցի բարեյաջող լուծմանը մասին, Սազոնով հրահանգում էր.*

«Կայսերական կառավարութիւնը պնդում է Վոսփորի ասիական ափի միակցումին վրայ Ռուսիոյ եւ յայտարարում, որ չի կարող հրաժարուել Նեղուցները ամրացնելու իրաւունքից»։ **)

Սազոնով յատուկ հեռագրի մէջ յիշատակում էր մասնաւորաբար Վոսփորի ասիական ափի պարագան և պնդում նրա միակցումի անհրաժեշտութեանը վրայ Ռուսիոյ, որովհետեւ Ֆրանսա, այս կէտում բաժանուելով իր դաշնակից Անգլիայից, յօժար էր Ռուսիոյ զիջելու Վոսփորի միայն եւրոպական ափը, բայց ոչ նաեւ ասիական։ ***)

*) «Ասիական Թուրքիոյ Բաժանումը», էջ 118—119:

**) Ibid., էջ 124, Ծան. 2:

***) **Ն. Մանդելշտամ** — «Ռուսական քաղաքականութիւնը Թուրքիոյ մէջ առաջին համաշխարհային պատերազմի նախօրէին եւ ընթացքին» («Նովոսելիէ», Նիւ Եորք, թիւ 31—32, 1947, էջ 117):

Ի պատասխան Սազոնովի 1915 Մարտ 4 թուակիր յուշագրին, ֆրանսական Դեսպանատունը Պետրոգրադի մէջ, 1915 Մարտ 8ին, հետեւեալ յիշատակագիրն է յանձնում Ռուսիոյ արտ. գործոց նախարարին.

«Իմ կառավարութեան հրահանգով եւ հիմ առնելով Կայսերական Կառավարութեանդ 1915 Mars 4 յիշատակագրով ձեւակերպուած պահանջները, Ֆրանսական դեսպանը պատիւ ունի յայտնելու նորին գերազանցութիւն պ. Սազոնովին, որ կայսերական Կառավարութիւնը կարող է միանգամայն բարեացակամ վերաբերում ակնկալել Հանրապետութեան կառավարութեան կողմից Պոլսոյ եւ Նեղուցների հարցի լուծման մէջ, համաձայն Ռուսիոյ բաղձանքներին։ Այս խնդիրը, այլ եւ այն հարցերը, որոնք շահագրգռում են Ֆրանսան եւ Անգլիան Արեւելքում եւ այլ տեղերում, եւ որոնք կայսերական կառավարութիւնը, իր կողմից, յօժար է լուծելու համաձայն Ֆրանսայի եւ Անգլիոյ բաղձանքներին, իրենց վերջնական լուծումը կը ստանան խաղաղութեան դաշինքում, որը, համաձայն 1914 Սեպտ. 4 յայտարարութեանց,*) պիտի ճնուի հաւասարաբար եւ ստորագրուի միաժամանակ երեք դաշնակից պետութեանց կողմից»։**)

Այս յիշատակագրից հինգ օր վերջ, 1915 Մարտ 12ին, ի պատասխան դարձեալ Սազոնովի 1915 Մարտ 4 թուակիր յիշատակագրին, անգլիական Դեսպանատունը Պետրոգրադի մէջ հետեւեալ յիշատակագիրն է յանձնում արտ. գործոց նախարարին.

*) Ակնարկը՝ Լոնդոնի համաձայնութեան — ոչ թէ Սեպտ. 4, այլ Սեպտ. 5 — թէ անջատ հաւատութիւն պիտի չկնքուի:

**) «Ասիական Թուրքիոյ Բաժանումը», էջ 122—123:

«Այն պարագային, երբ պատերազմը իր յաջողակ վախճանին կը հասնի եւ երբ կ'իրացուեն Մեծն Բրիտանիոյ եւ Ֆրանսայի բաղձանքները ինչպես Օսմանեան Կայսրութեան մէջ, այնպես նաեւ այլ տեղերում, ինչպես որ այդ մատնանշուած է ստորեւ յիշատակուած ռուսական հաղորդագրութեան մէջ, Նորին Մեծութեան կառավարութիւնը համաձայն է կայսերական Կառավարութեան Պոլսոյ եւ Նեղուցների նկատմամբ եղած առաջադրութեան ըստ այն յուշագրի, որի բնագիրը հաղորդուած է Նորին Մեծութեան դեսպանին՝ նորին բարձր գերազանցութիւն պ. Սազոնովի կողմից սոյն թուականի 19 Փետր./4 Մարտին»։*)

Այս պաշտօնական յիշատակագրից զատ, նոյն թուականով մէկ անձնական յուշագրի մէջ Գրէյ լրացուցիչ կերպով յայտնում էր իր պաշտօնակցին՝ Սազոնովին.

«Ինչ որ էլ լինեն անգլիական կառավարութեան ցանկութիւնները եւ որքան էլ նշանակելի լինեն նրանք աշխարհի տարբեր մասերում, այնուամենայնիւ, նրանք չեն կարող պարունակել ե՛ւ ոչ մեկ յոդուած, որ ի վիճակի լիներ վնասելու ռուսական տիրակալութեանը այն տարածութիւնների վրայ, որոնք յիշատակուած են 1915 Mars 4ի (ռուսական) յիշատակագրի մէջ»։**)

Որպէս զգացուած Սազոնովը 1915 Մարտ 20 թուակիր հեռագրով խնդրում էր Լոնդոնի իր դեսպանին՝ Բէնկէնդորֆին՝ յայտնել Գրէյին «Կայսերական Կառավարութեան խորին շնորհապարտութիւնը Մեծն Բրիտանիոյ լիակատար եւ վերջնական հա-

*) Ibid., էջ 124:

**) Ա. Նիկիֆոր — «Նեղուցների նակատագիրը» («Ռուսկիէ Նովոստի», Փարիզ, 31 Մայիս 1946, թիւ 51):

մամտաւթեանը համար Նեղուցների եւ Պոլսոյ հարցի լուծման մէջ, համաձայն Ռուսիոյ փափագներին»։ *)

Զիջումների հարցը ամբողջացրած լինելու համար ասենք, որ Ֆրանսա եւս, ինչպէս նկատում է Ա. Մանդելշտամ, ի վերջոյ յօժարեց Վոսֆորիֆնաև ասիական ափի կցումին Ռուսիոյ, իր այս զիջումը «նախապայմանաւորելով միայն ֆրանսական եւ անգլիական ծրագիրների իրացումովը Արեւելքում եւ այլ վայրերում»։ **)

Իր այս վերջին համամտութիւնը Ֆրանսա տրուաւ քիչ աւելի ուշ, 1915 Ապր. 10ին, Պետրոգրադի ֆրանսական դեսպանատան կողմից Սազոնովին ուղղուած կարճ ծանուցագրով։ ***)

Այսպէս ուրեմն, դարերից ի վեր առաջին անգամը լինելով, Ֆրանսա և Անգլիա յօժարում էին Նեղուցները, Պոլիսը, Մարմարան, իրենց երկու ափերով, ու նաև Դարդանելի մուտքը պաշտպանող կղզիները եգէականում Ռուսիոյ զիջել և այս բոլորին միահամուռը ռուսական ստացուածք նկատել։

Մենք տեսանք, թէ 1870ից այս կողմ — այդպէս նաև մինչեւ 1870ը — եւրոպական պետութիւնները, ու մանաւանդ Անգլիա, որքան անզիջող էին Նեղուցների հարցում, որքան անդրդուելի ռուսական ամենահամեստ պահանջների իսկ նկատմամբ այդ խնդրում։

Եւ յանկարծ... ոչ միայն լայնարձակ զիջում-

*) Ibid.

**) Ա. Մանդելշտամ — «Ռուսական բազմականութիւնը Թուրքիոյ մէջ առաջին համաշխարհային պատերազմի նախօրէին եւ ընթացքին» («Նովոսելիէ», Նիւ Եորք, թիւ 31—32, 1947, էջ 117)։

***) "Ասիական Թուրքիոյ Բաժանումը»։ էջ 134։

ներ, այլ կատարեալ միակցում Ռուսիոյ Նեղուցներով անկշռելի արժէքի տիրացած մէկ ամբողջ շրջանի, որ դարերով կռուախնձոր եղած է պետութեանց միջեւ։

Աւելի ուշ մենք դեռ առիթ պիտի ունենանք առանձին կանգ առնելու պատմական այս կարեւորագոյն դէպքի ներքին պատճառների վրայ, իսկ այժմ չարունակենք մեր խօսքը, ուր ընդհատած էինք։

Ասացինք արդէն, որ Մարտի առաջին իսկ օրերին մեծ մտահոգութիւն կար Լոնդոնի եւ Փարիզի մէջ այն մասին, որ ռուս գերմանասէրները Սազոնովից կարող են խլել իր աթոռը և այսպիսով դիւրացնել անջատ հաշտութեան գործը Ռուսիոյ եւ Գերմանիոյ միջեւ։

Այս վտանգաւոր խաղի առաջը կարելի էր առնել՝ միայն Նեղուցները օր առաջ Ռուսիոյ զիջելով։

Եւ ահա, երբ ֆրանսական դեսպանը Պետրոգրադում՝ Պալէոլոգ՝ ներկայանում է Սազոնովին եւ նրան աւետում իր կառավարութեան 1915 Մարտ 8 յուշագրի մեզ արդէն ծանօթ բովանդակութիւնը, ռուս նախարարը, անկարող զսպելու իր յուզումը, ուրախութիւնից մէկէն բացագանչում է.

«Ձեր կառավարութիւնը մի ծառայութիւն մատուցեց մեր զինակցութեան, որի որքա՜ն մեծ լինելը թերեւս անծանօթ եւ անըմբռնելի մնայ ձեզ»։

Պառակտման առաջին փորձը անցաւ ապարդիւն, սակայն դժուարութիւնները լիովին չհարթուեցին բնաւ։

1915 Մարտ 3ին Պետրոգրադի ճապոն զինուորական կցորդը ծածկագրով հեռաւեալն էր տեղեկացնում իր երկրի սպայակոյտի պետին՝ զօր. Հազե-

գաւային՝ մայրաքաղաքի զեկավար խաւերի մէջ տիրող տրամադրութեանց մասին.

«Խօսք կայ, որ Անգլիա եւ Ֆրանսա գործողութեանց ձեռնարկած են Դարդանելի դէմ այն նպատակով, որպէսզի Թոյլ չտան Նեղուցներու կցումը Ռուսիոյ»։

Ճապոն զինուորական կցորդի կասկածները ուներ նաեւ ինքը Սազոնովը, որին ի պատասխան սըր Բիւկընէն՝ Մեծն Բրիտանիոյ դեսպանը Պետրոգրատում՝ իր 1915 Մարտ 6 յուշագրով — տակաւին Նեղուցներու Ռուսիոյ կցման յուշագիրը Լոնդոնից չառած — յայտնում էր.

«Դարդանելի զինուորական գործողութիւնները ընդհանուր նպատակ են հետապնդում ամենէն անշահախնդիր ձեւով այն պահանջների նկատմամբ, որ այդ շրջանում ունի Ռուսիան, այն յատակ գիտակցութեամբ, որ անմիջական արդիւնքները այդ գործողութեանց օգտաւէտ պիտի լինեն ոչ թէ մեզ, այլ Ռուսիոյ»։

Թէ ի՛նչ մեծ խռովք կար այս խնդրի չուրջ ռուս հասարակութեան մէջ, ապացո՛յց այն նամակը, որ ռուս հանրային կարկառուն դէմքերից իշխան Դր. Տրուբեցկոյը — ջերմօրէն «Համաձայնական» — 1915 Մարտ 9 թուականով գրում էր Սազոնովին.

«Նեղուցները մե՛ր պնտ է լինեն։ Մենք այս կարո՞ղ ենք ստանալ Անգլիոյ եւ Ֆրանսայի հետ ընդդէմ Գերմանիոյ,— աւելի՛ լաւ։ Եթէ կարող չենք՝ այդ դէպքում նախադասելի է, որ նոյնը ստանանք Գերմանիոյ հետ՝ ընդդէմ Անգլիոյ եւ Ֆրանսայի»։

Ցարակցաբար այս նամակին, նոյն Տրուբեցկոյը աւելի ուշ թուականով հեռագրում էր Սազոնովին.

«Մենք չենք կարող անտարբեր լինել այն խնդրին — մե՞նք թէ Դաշնակիցները կը գրաւեն Նեղուցները։ Այն միակ փաստը, որ նրանք այս գործում մասնակից են մեզ, ինքնին ցաւալի է, որովհետեւ այդ փաստը վտանգում է մեր իրաւունքները խնդրի վերջնական կարգադրութեան մէջ։ Իսկ եթէ պատահեր, որ նրանք գրաւեին առանց մեզ, այդ ուղղակի մահացու գործ կը լիներ մեզ համար, որովհետեւ այդ դէպքում Պոլիսը ապագային կը դառնար գերեզմանը մեր այսօրուան զինակցութեան»։

Դարդանելի արշաւի մէջ Դաշնակիցները անգին արիւն տուին.. Նրանք շարժման մէջ դրին 570.000 զինուոր, որից զոհեցին 379.000 հոգի. (Ֆրանսացիները՝ 260.000 զոհ, իսկ անգլիացիները՝ 119.000)։

Թրքական թուերը աւելի խօսուն են. Նրանք գալիս են ցոյց տալու սաստկութեան աստիճանը այն գործողութեանց, որ ձեռնարկուած էին Դարդանելի դէմ։

Ամբողջ պատերազմի տեւողութեան Թուրքիա ընդամէնը 325.000 զինուոր կորցրեց. այս քանակից միայն Դարդանելի պաշտպանութեանը մէջ նա կորցրեց 169.000 հոգի, իսկ մնացեալ բոլոր ճակատների վրայ — 156.000 զինուոր։

548.000 զոհ — ահա ընդհանուր հաշուառքը Դարդանելի ռազմաձեռնարկի մէջ եղած կորուստների։

Ու հակառակ մէկ թէ միւս կողմից թափուած այս առատ արիւնին եւ Դաշնակիցների կողմից Ռուսիոյ տրուած բոլոր հաւատիացումներին եւ խոստումներին՝ ռուսները, այնուամենայնիւ, դըժգոհ էին. Նրանք վախ ունէին, թէ Դաշնակիցները եթէ Պոլիս մտնեն, այնտեղից այլեւս դուրս չեն

ջայ եւ կամ դուրս կը գան. սակայն շատ մեծ գին առնելով։

Այս վախերը զուր անցան սակայն. ձեռնարկը ձախող վերջացաւ. Դաշնակիցները չկարողացան հեղքել ամրութիւնները եւ անցնել Դարդանելը։

Ձախող անցաւ և յունաց թագաւորի՝ Կոնստանդինի փորձը՝ մտնել Պոլիս՝ յոյն բանակների գլուխը անցած՝ Դաշնակիցներին կատարուած փաստի առջեւ գնելով։

Այս առիթով սըր Գրէյը նկատում է իր յուշերում.

«Կոնստանդինի այս ձեռնարկը, եթէ երբեք յաջողէր, սարսափելի տպաւորութիւն պիտի գործէր Ռուսիոյ վրայ։ Սա մէկ անսահման դժբախտութիւն պիտի լինէր։ Մինչև իսկ Ցարի և Սազոնովի հեղինակութիւնը բաւական պիտի չլինէր Ռուսիան պատերազմի մէջ պահելու։ Անգամ մեր իսկ գործողութիւնները Դարդանելի դէմ՝ քիչ մնաց որ քանդէին մեր յարաբերութիւնները Ռուսիոյ հետ»։

Պոլսոյ և Նեղուցների կնճիռը դաշնակից բանակցութեանց սկզբնական շրջանին Գերմանիա անկարող եղաւ օգտագործել Դաշնակիցների դէմ։

Անգլեւ-ֆրանկեռուս համաձայնութիւնը Նեղուցների շուրջ ծանր հարուած եղաւ կենտրոնական պետութեանց պառակտիչ ձիգերի դէմ։

Այս ցնցիչ իրողութեան առջեւ Գերմանիա ստիպուած եղաւ իր դիւանագիտական ռազմավարութիւնը փոխելու. նա այլեւս չէր յայտարարում, թէ «Դաշնակիցները երբեք Պոլիսը չեն գիջի Ռուսիոյ». սրա փոխարէն նա այժմ տարաձայնում էր, թէ «անգամ համաձայնութիւն տալով, Անգլիա երբեք թոյլ չի տայ, որպէսզի Ռուսիա իսկապէս գրաւի Պոլիսը»։

Ահա այս նպատակն է հետապնդում նոյն տիկնոջ՝ Վասիլչիկովայի 1915 Մայիս 27 թուակիր երկրորդ նամակը՝ Գերմանիայից գաղտնի ճանապարհով ուղղուած անմիջօրէն կայսեր՝ Նիկոլայ Բ.-ին։

Նամակի թէ՛ լեզուն (ֆրանսերէն), թէ՛ ձեւը եւ թէ բովանդակութիւնը, այս ամէնը գալիս էր յայտակօրէն ասելու, որ Վասիլչիկովան պարզ արձանագրող է, մինչ նամակի բուն հեղինակը— գերման արտ. գործոց նախարար Ֆոն Եագովն է։

Իր այդ նամակով գերման նախարարը առաջարկում էր.

ա.— Վերջացնել պատերազմը՝ քանի տակաւին պարտուած չկայ իրենց երկսի՝ Գերմանիոյ և Ռուսիոյ միջև։

բ.— Անջատ հաշտութեամբ պատերազմը վերջացնելով՝ «Ռուսիա աւելին կը ստանայ մինչեւ իսկ Դարդանելի հարցում, որ, Գերմանիոյ համոզումով, առաջնագոյն կարեւորութիւն ունի Ռուսիոյ համար»։ մինչ Անգլիա, ըստ նամակի, այսօր իսկ ձգտում է իշխել Սեւ ծովում՝ ծանրագոյն վտանգ ստեղծելով Ռուսիոյ համար ապագայի մէջ, երբ նա պատերազմի կը բռնուի Անգլիոյ հետ։

գ.— Անգլիա երբեք ճշմարիտ բարեկամ եղած չէ իր զինակիցներին. նա սիրում է կրակից չամանակ հանել ուրիշների ձեռքերով. «Անգլիա ձրգտում է գերակշիռ դիրք գրաւել Պոլսոյ մէջ, ուստի, հակառակ իր բոլոր խոստումներին, նա երբեք թոյլ չի տայ Ռուսիոյ՝ այդ քաղաքը գրաւելու եւ կամ, գրաւած դէպքում, այն իրեն պահելու»։

դ.— Ակնարկելով այն վտանգին, որ սպառնում էր գերման եւ ռուս Գահերին՝ Ֆոն Եագովը յայտնում էր.

«Գերմանիոյ համար զարմանալի պիտի չլինէր,

եթէ մի քանի տարի վերջ Անգլիա նոր առաջարկ անէր Գերմանիոյ ընդդէմ Ռուսիոյ. սակայն Գերմանիա ձգտում ունի հաստատուն խաղաղութիւն ստեղծել Ռուսիոյ հետ»։

Ե.— Քաջ գիտենալով, որ ինքը այդ առաջարկով Ռուսիան դաւաճանական դիրքի մէջ է դնում Դաշնակիցների եւ, ի մասնաւորի, զինակից Ֆրանսայի հանդէպ, Վասիլչիկովան (Ֆոն Եագով) յայտնում էր.

«Այստեղ լաւապէս գիտակցում են, որ Ռուսիան չի կարող լքել Ֆրանսան։ Գերմանիան գիտակցում է, որ սա պատուի խնդիր է, ուստի արգելքներ պիտի չդնի արդար համաձայնութեան առջև»։

Զ.— Եւ, վերջապէս, նամակի նախամուտում իսկ, այս բոլոր մտքերի և առաջարկների վրայ մէկ ընդհանուր լոյս սփռելու համար՝ ռուս արքայական զոյգի վստահութեանը տիրացած Ֆոն Եագովի «քարտուղարուհի»ն գրում էր.

«Գերմանիա անկեղծօրեն փափագում է ոչ միայն Ռուսիոյ հետ պատերազմը վերջացնել, այլ եւ Ռուսիոյ բարեկամն ու զինակիցը դառնալ»։

Դարդանելի խոսքումը ահա այսքան վառ յոյսերով թեւաւորած էր գերման նախարարին,— ոչ միայն անջատ խաղաղութիւն, այլ և զինակցութի՞ւն Ռուսիոյ հետ։

Գերմանիան գիտէր, որ երբ կանգուն են ռուս բանակները, լոկ առաջարկներով կարելի չէ Ռուսիան հրապուրել, ուստի որոշեց այդ բանակները խորտակել։

Թագուն նպատակը այն անարկու արշաւին, որին ձեռնարկեց Գերմանիա 1915 Մայիս 2ին, ճիշտ այստեղ է։

Այս արշաւի բուն նպատակը, ինչպէս ասացինք, Ռուսիան գրաւելը չէր. 1915ին տակաւին կենդանի

էր Բիամարկների եւ Մոլտկէների սարսափը ռուսական անծայրածիր տարածութիւններից եւ մարդկային անհատնում պահեստներից. եւ ճիշտ այդ պատճառով գերման սպայակոյտի պետը՝ զօր. Ֆալկէնհայն՝ գրաւման իր ծրագրի մէջ Մոսկուան երբեք նկատի չունէր. նա գիտէր, որ դէպի Մոսկուա յառաջանալով՝ իր բանակները քշած պիտի լինի դէպի մի «անեզր ասխարհ», որտեղից գրեթէ ելք չկայ։*)

Յարձակման նպատակը ռազմապէս սահմանափակ էր. էականը բաղաքակա՛ն նպատակն էր — ղէնքով բարեկամութիւն շահել։

1915ի ամրան անուոր ամիսներին եղաւ նոյնը, ինչ որ կրկնուեց 1941ին. ռուս բանակը կըռուեց մենակ. արեւմտեան ճակատը նրան օգնութեան չեկաւ...

Հակառակ այս տխուր նախադէպին, ռուս բանակը, ճիշտ է, նահանջեց, բայց ճակատը պահեց։

Այնուամենայնիւ, մեծ էր ու ցնցող գերման յաղթանակը։

Արեւմուտքից նոր ուժեր կուտակելով արեւելեան ճակատում՝ Գերմանիա 1915 Մայիս 2ին ձեռնարկեց իր մեծ ու հզօր յարձակումին, որ տեւեց մինչեւ 1915 Սեպտ. 28. պատմական այս հինգ ամիսների մէջ Ռուսիա 350.000 զոհ տուաւ եւ 1.250.000 գերի ու վիրաւոր. միաժամանակ Ռուսիա զրկուեց 227.000 ք. քիլ. տարածութեամբ բերրի ու մեծարժէք հողերից, որոնց վրայ ապրում էր աւելի քան 20 միլիոն մարդ իր քաղաքացիներից։

Այս մեծ վաստակը շահելուց յետոյ, կենտրոնա-

*) "Պատմ. Գիւանագիտութեան", հ. Բ., էջ 277:

կան պետութիւնները, Ռուսիոյ հետ անջատ հաշտութեան միշտ նոյն նպատակը հետապնդելով, անցան աւելի եռուն գործունէութեան։

Նախ Ռուսիա ճամբեցին Վասիլչիկովային՝ երեսուն երես արքայական զոյգի հետ բանակցութիւններ վարելու համար։ Տիկինը Պետրոգրադ հասաւ 1915ի Դեկտ.ին, երբ նահանջը վերջացած էր արդէն. կայսրը, որ Տիկնոջ երկրորդ նամակին պատասխանած չէր, նրան ոչ միայն չընդունեց, այլ և հրահանգեց ձերբակալել և աքսորել Զերնիգովի նահանգը։

Վասիլչիկովայի ճամբորդութեան զուգահեռ, ռուսական բանակների ծանր նահանջի ամենէն դաժնագոյն օրերին, Գերմանիա դիւանագիտական աշխատութեանց անցաւ նաև այլ քաղաքներից։

1915 Յուլիս 20ին Ստոկհոլմի ռուս դեսպանորդը՝ Նեկլիւդով՝ հեռագրում էր Սազոնովին.

«Դոյչէ Բանկ»ի վերատեսուչ Մոնկեբից (Ռուսիոյ մէջ լաւածանօթ մի անձ.—Ն.) փոխանցած է մի ռուսի (դեսպանորդը այս ռուսի անունը չի տալիս.—Ն.) Բերլինի կառավարական շրջանակների ներսի բաղձանքը՝ անջատ հաշտութիւն կնքելու Ռուսիոյ հետ։ Այս նպատակով Գերմանիա պատրաստ է Ռուսիոյ առաջարկելու այն, ինչ որ հնուց մեր նպատակն է կազմում, այսինքն՝ Պոլիսն ու Նեղուցները, փոխարէնը Թուրքիոյ տալով Եգիպտոսը»։

Այս խորհրդաւոր ռուսին Մոնկեբից հրաւիրում է Մալմէ (Շվեդ) և այնտեղ նրան յայտնում գերմանաց առաջարկի մասին։ Ռուսը աւելի ուշ վերադառնում է Ստոկհոլմ և անձամբ ու հանդամանօրէն խօսում դեսպանորդին՝ եղած առաջարկների մասին։ 1915 Յուլիս 28ին Նեկլիւդով խորհրդաւոր

բանագնացի հետ իր ունեցած զրոյցը հեռագրում է Սազոնովին։

Բուն նպատակը — անջատ հաշտութիւնն էր, որի փոխարէն բանագնացը մի շարք խոստումներ բերած էր, որոնց կարգին նաև հետեւեալը.

«Գերմանիա հասկանում է, որ Ռուսիոյ անհրաժեշտ է ունենալ Նեղուցները և ապահովել իրեն նրանց ազատութիւնը։ Սակայն Նեղուցները զէնքով առնել կարելի չէ. անգամ եթէ անգլիացիները եւ ֆրանսացիները կարողանային առնել, միեւնոյն է Ռուսիոյ պիտի չտային։

«Մինչ մենք պատրաստ ենք և կարող ենք այնպէս անել, որ Նեղուցները դառնան ռուս-գերմանա-Թրքական հող, ամրութեանց լիակատար քանդումով»։

Իր տեղում ասացինք, որ 1915ի ամրան ամիսների անարկու յարձակումի բուն նպատակը — դիւանագիտական էր։

Ի հաստատումն այս մտքի՝ Մոնկեբից յանձնարարած է լինում իր պատուիրակին հետեւեալը յայտնելու ռուս դեսպանորդին.

«Ուշացումը (անջատ հաշտութեան.—Ն.) սպառնում է ի դերեւ հանել ամբողջ գործը։ Շուտով յարձակումը պիտի սկսուի, ուստի լաւ է անմիջապէս բանակցութեանց անցնել, որովհետեւ եթէ Վարշաւան գրաւուի (նա գրաւուեց մի քանի օր վերջ, Օգոստ. 5ին.—Ն.), իսկ յետոյ՝ նաև Ռիգան (այս վերջինը գրաւուեց աւելի ուշ.—Ն.), այդ դէպքում դժուար կը լինի գերմանահանրային կարծիքը համոզել անհրաժեշտութեանը մէջ Ռուսիոյ կատարուած այնքան մեծ զիջումների»։

Եւ ուշագրաւն այն է, որ չէզոք երկրների մամուլը շատ բնական էր նկատում ռուս-գերմանական հաշտութիւնը և օրէցօր սպասում էր նրան։

Եւ ինչպէս որ ռուսաճապոն պատերազմի ժամանակ Մուկդէնի և Ցուսիմայի ռուսական պարտութիւնները (1905 Մայիս) ոչ թէ իջեցրին ռուսական թղթադրամի արժէքը, ինչպէս լինում է միշտ նման դէպքերում, այլ, ընդհակառակն, միջազգային սակարաններում այդ թղթադրամի արժէքը բարձրացրին (որովհետեւ բոլորն էլ համոզուած էին, որ շուտով վերջ պիտի գտնի պատերազմը), ճիշտ նոյն ձեւով նաև այս անգամ գերմանն յարձակումը նկատուեց իբրև նախանշան հաշտութեան։

1915 Ցուլիս 23 թուականով Նեկլիւդովը Ստոկհոլմից հեռագրում էր Սազոնովին.

«Գերմանն մամուլն ու գերմանն գործակալները յայտնում են, որ Վիստուլայի շրջանում ծաւալուած կռիւների հետեւանքով անջատ հաշտութիւն պիտի կնքուի Ռուսիոյ և Գերմանիոյ միջեւ, ըստ որում Ռուսիա պիտի ստանայ Նեղուցները, իսկ Գերմանիա՝ Լեհաստանը»։

Նոյն օրերին, գաղտնի աղբիւրներից անջատ բանակցութեանց այս փորձերին տեղեկանալով, յոյն դեսպանը Պետրոգրադի մէջ՝ Կակլամանոս՝ 1915 Օգոստ. 2 թուականով հեռագրում էր Աթէնք՝ վարչապետ Գունարիսին.

«Տեղեկացայ, որ «Դոյչէ Բանկ»ի վերատեսուչը մի չէզոք կառավարութեան միջոցով անջատ հաշտութեան առաջարկ բերած է Ռուսիոյ, հաւաստիացնելով, որ Գերմանիա պիտի կարողանար ապահովել Ռուսիոյ մինչև իսկ Պոլսոյ և Նեղուցների տիրապետութիւնը։ Այս առաջարկը որեւէ արդիւնք տուած չէ»։

Այսպէս շարունակւում է մինչև 1915ի վախճանը, երբ ճարպիկ Կակլամանոսը 1915 Դեկտ. 3

թուականով հեռագրում է իր կառավարութեան բովանդակութիւնը այն գաղտնի հեռագրի, որ Պետրոգրադի ֆրանսական դեսպանը յղած է Փարիզ՝ իր կառավարութեան։

Ըստ այդ հաղորդագրութեան՝ գերման արդիւնաբերողների ընկերակցութեան մէկ ազդեցիկ ուղղակ անդամը Մոսկուա հասնելով, յայտնել է, որ գերման արդիւնաբերողները երաշխաւորում են ընդունել տալ Ռայխստագին անջատ հաշտութեան կնքումը Ռուսիոյ հետ հետեւեալ պայմաններով.— 1) Գերմանիա ընդունում է այն մաքսատուրքը, որ կը մշակեն Մոսկուայի ռուս արդիւնաբերողները, 2) Նեղուցների չեզոքացում, 3) ստեղծում անկախ Լեհաստանի (իբրև միջնորդ պետութիւն), 4) Նպաստաւոր սրբագրում Պրուսիոյ հետ եղած սահմանների, 5) լիակատար պարպում ռուս հողերի թշնամի զօրքերից, 6) ռուսագերման զինակցութիւն ընդդէմ հասարակաց թշնամու՝ ընդդէմ Անգլիոյ։

Անպտուղ անցաւ նաև այս փորձը։

Գերմանիան չյուսահատուեց սակայն։ Եկած էր 1916 թուականը և սարսած ռուսական զէնքը. դժգոհութիւնները պատերազմից և Դաշնակիցներից սկսած էին խաւ առ խաւ վարակել ամբողջ ռուս երկիրը, ուր արքունիքը պատերազմից շատ աւելի նուազ վախ ունէր, քան ներքին յեղափոխութիւնից, որի քաղցրութիւնը նա ճաշակած էր արդէն 1904—5ի ռուսաճապոն ձախող զինաբախումից յետոյ։

Այս կարեւոր իրադարձը հաշուի առնելով՝ Գերմանիա նոր թափով գործի անցաւ՝ հաշտութեան իր ճիգերը յամառաբար շարունակելով 1916ի կէսերից մինչև 1917ի վերջերը, մինչև բոլշեւիկների պատմական վերադարձը արտասահմանից Ռուսաստան։

իր տեղում առիթ ունեցանք յիշատակելու, որ գերման գանժառանգ իշխանը տեղեակ չէր իր կառավարութեան այս գաղտնի աշխատութեանց։

Սակայն նա տեղեակ էր այն տրամադրութեանց — մէկ ամուղղակի արձագանգը գաղտնի աշխատութիւնների — որ պատերազմի շրջանին ձեւ առան գերման սպայակոյտի մէջ Ռուսիոյ նկատմամբ։

Արագ յաղթանակի յոյսերը մարած էին, և գերման վարիչները, ըստ հնաւանդ սովորութեան, սկսած էին ոգեկոչել յիշատակը Բիսմարկների, որոնք այնքան բարձր էին գնահատում Ռուսիոյ բարեկամութեան արժէքը։

Պարտութեան պատճառներին անդրադառնալով՝ գանժառանգ Վիլհելմը իր «Ցուշեր»ի մէջ նկատում է.

«Եթէ մենք զինակցութեան մէջ լինէինք Ռուսիոյ հետ՝ Անգլիա երբեք չէր խիզախի պատերազմի բռնուել մեզ հետ։ Աւելին. գոհ իսկ կը մնար, եթէ միայն այդ զինակցութիւնը չսպառնար Անգլիոյ տիրակալութեան Հնդկաստանում։ Մեր բոլոր ճիգերը ուղղուած պէտք է լինէին նորից վերահաստատելու այն կապերը, որ Բիսմարկից յետոյ խզուեցին՝ մեր հրաժարումովը վերանորոգել դաշինքը. այսպիսով մենք պիտի կարողանայինք խախտել Ֆրանկուռուս համաձայնութիւնը և Ռուսիան մղել դէպի մերձեցում մեզ հետ։ Ի հարկէ, սա նոյնպէս դիւրին գործ չէր, բայց յաղողութիւնը այս ճանապարհի վրայ հնարաւոր էր, եթէ մենք միայն աջակից լինէինք Ռուսիոյ՝ իր ձգտումի մէջ դէպի Դարդանել եւ դէպի Պարսից ծոց։ Ես այն ժամանակ խօսակցութիւններ ունեցայ թուրք քաղաքագէտների հետ և գտայ, որ Դարդանելից ազատ անցքի գաղափարը նրանց մօտ չի հանդիպում բացարձակ արգելքի։ Մեր միւս զինակիցը՝ Աւստրօ-Հունգարիան՝ նա եւս հաղիւ թէ բացարձակ կերպով ընդդիմանար հարցի նման լուծումին»։*)

Պատերազմի շրջանին ահա այս տրամադրութիւններն էին իշխում, ըստ լաւատեղեակ վկայի, գերման սպայակոյտի մէջ։

Եւ ինչ որ Գերմանիա չէր յաջողած անել 1915ին՝ երբ յաղթանակի յոյսերը տակուրին մեծ էին Ռուսիոյ մէջ, ըստ երեւոյթին պիտի կարողանար անել 1916ին և 1917ին, երբ այդ յոյսերը զգալապէս մարած էին։

Ֆրանսական դեսպանը Պետրոգրադում՝ Պալէոլոգ՝ 1916 Յուլիս 24 թուականով հետեւեալ ուշագրաւ երեւոյթն էր արձանագրում իր յուշատետրում.

«Մի տարօրինակ փոփոխութիւն եմ նշմարում Պետրոգրադի քաղաքական շրջանակներում ընդդէմ Պոլսոյ կցումին Ռուսիոյ»։

Դեսպանը մատնանշում է, որ Ռուսիոյ վարիչ շրջանակները կարծես տրամադիր են գոհանալու միայն ազատ անցքով Նեղուցներից, ստեղծումովը, օրինակ, մի չէզոք պետութեան այդ շրջանի մէջ, որի գոյութիւնը երաշխաւորուած պիտի լինէր Մեծերի կողմից։**)

---

*) Նարլ Գոսներ — «Գանժառանգ Վիլհելմի Ցուշերը», 1922, Բերլին, էջ 78—79:

**) Տարօրինակ է մեր մոլորակի բաղաքական պատմութիւնը. մի միտք մէկ անգամ պատմութեան էջերի վրայ արձանագրուելուց յետոյ՝ նա այլեւս չի մեռնում, այլ առիթից առիթ տարբեր ձեւերի տակ շարունակում է նրկնուել: Փարիզ հրատարակուող «Nuit et Jour» հանդէսը իր 1946 Դեկտ. 12ի թուով յայտնում էր, որ ծրագիր կայ՝ Պոլսոյ եւ Նեղուցների շրջանից մի չէզոք հանրապետութիւն ստեղծել, թեւարկութեանը տակ Խ. Միութեան: Ըստ հանդէսի, այս իմաստով 1943 Յուլիս 7ին իբրեւ թէ համաձայնութիւն ստորագրուած է նեղլէն հանմայնավար կուսակցապետ Եանի Եոանիդիսի եւ բուլգար հանմայնավար պետ Դուշան Դակլովի միջեւ (տե՛ս «Ժամանակ», 13 Դեկտ. 1946):

Պալէոլոգը չի ըմբռնում այս փոփոխութեան իմաստը. ինքն իրեն յոգնութիւն իսկ չի պատճառում պրպտելու եւ գիտնալու, թէ ի՛նչպէս Ռուսիոյ նըման մի պետութիւն, որին Անգլիա և Ֆրանսա յատուկ յուշագիրներով զիջած են Պոլիսը, Մարմարան և Նեղուցները (յարակից հողաշերտերով և կըղզիներով), մէկէն պատրաստ է այս ամէնից հրաժարուելու եւ գոհանալու միայն Նեղուցներից ազատ անցքի իրաւունքով։

Ոչ միայն չի հասկանում, այլ մինչև իսկ աւելորդ չի նկատում այս հրաժարումի առիթով խորհրդաժողովը՞ն նկատելու.

«Սա իմաստութիւնն իսկ է։ Սակայն կարելի էր աւելի կանուխ այս մասին խորհել»։

Դեսպանը ըմբռնած չէր ա՛յն, ինչ որ Վիլսոնի սրատես խորհրդականը՝ մեծարժէք յուշերի ծանօթ հեղինակ գնդ. Հաուսը՝ նշմարած էր աւելի առաջ։

Այս վերջինը 1916 Յունուար 11ին հետեւեալ կարծիքն է յայտնում.

«Գերմանիա միայն մէկ թշնամի ունի՝ Անգլիան, ուստի նա յարձակւում է Ռուսիոյ վրայ միայն նրա համար, որպեսզի այս վերջինը անջատ նաւտութիւն կնքի իրեն նեռ, թերեւս աւելի նպաստաւոր քան այն, որ նա կարող էր ստանալ դաշնակից յաղթանակից յետոյ։

«Գերմանիա թերեւս ազատ ձեռքերի առաջարկ անի Ռուսիոյ՝ հարաւի տաք ջրերում»։

Այս լուրերին թերահաւատութեամբ է վերաբերւում, սակայն, անգլ. դեսպանը Փարիզում՝ լորդ Բերտի։

Այս վերջինը 1916ի Հոկտ.ին նկատում է իր յուշատետրում.

«Մարդիկ կան, որոնք խօսում են հաւանականութեանը մասին անջատ հաշտութեան Ռուսիոյ և

Գերմանիոյ միջեւ. բայց չէ՞ որ սա հաւասարազօր պիտի լինէր հրաժարումին Պոլսոյ տիրապետման ամէն երազից»։

Այս Լորդն իսկ, որ այնքան բուռն կերպով դէմ էր Պոլսոյ զիջումին Ռուսիոյ, այժմ մեղմացած էր այսքան. քաղաքական իրադարձութեանց մէջ յառաջացած խոր փոփոխութիւնը այսքան փոխած էր մարդոց մտածումներն ու տեսակէտները։ *)

Պաշտօնապէս առաջին անգամ բուն Պետրոգրադում խաղաղութեան մասին — սակայն ոչ անջատ ռուսեւգերման, այլ ընդհանուր — խօսում է Հիւս. Ամերիկայի և Ճապոնի ռուս նախկին դեսպանը՝ բարոն Ռ. Ռոզէն։

Նա այս մասին 1916ի Մարտի սկզբին ակնարկում է կայսեր մեծ վստահութեանը տիրացած բարոն Ֆրեդերիկսին (արքայական դրան նախարար), այս վերջինի առաջարկով իր խօսածը գրի է առնում Նիկոլայ Բ.ին ներկայացնելու համար (նոյն Ֆրեդերիկսի միջոցով), կայսրը կարդում և հրա-

*) Լորդ Բերտի գլխաւորած է անգլիական դեսպանութիւնը Փարիզում 1905ից մինչեւ 1919։ Թունդ հակաբոլշեւիկ էր եւ ջերմ կողմնակից «առողջապահական սահմանի»ին, որ Կլեմանսօներ ուզում էին հաստատել Ռուսիոյ դէմ Եւրոպայի արեւելքում։

1918 Դեկտ. 6 թուականով Լորդը արձանագրում էր իր օրագրում.

«Զկա՛յ այլեւս Ռուսիան... Նա քայքայուեց, յանձին կայսեր եւ կրօնի չմացաւ հրեը, որ կաշկանդում էր ուղղափառ հաւատին յարած զանազան ազգերի։ Եթէ միայն մենք կարողանանք ձեռք ձգել անկախութիւնը միջնորդ պետութեանց, որոնք Գերմանիոյ սահմանակից են արեւելքում, այսինքն՝ Ֆինլանդիոյ, Լենաստանի, Էստոնիոյ, Ուկրայնայի եւ այլն, ու կարողանանք նպաստել այս կարգի պետութիւններ որոնց կարելի է շաս, այդ դէպքում, ըստ իս, մնացեալը կարելի է բաժին ձգել սատանային եւ թողնել, որ նա իր սեփական իւղի մէջ տապակուի» (տե՛ս **Լորդ Բերտի** — «Անհատական վարագոյրների ետին». Մոսկուա, 1927, էջ 191)։

հանգում է Ռոզէնին՝ ներկայանալ Սազոնովին եւ նրան խօսել խաղաղութեան մասին։

Ռոզէնին լսելով՝ Սազոնովը բուռն կերպով բողոքում է և խնդրում իր այս բողոքի մասին յայտնել բարոն Ֆրեդերիկսին։

Այս մթնոլորտի մէջ է անա, որ յանկարծ, 1916 Յուլիս 7ին, հրաժարւում է Սազոնովը — Դաշնակիցներին նուիրուած մի մարդ — իր տեղը զիջելով գերմանասէր Շտիւրմերին։

Այս փոփոխութիւնը խուճապ է յառաջացնում դաշնակից բանակում եւ ռուս ազատական խաւերում։

Բոլորը տարւում են խորհելու, որ այս փոփոխութիւնը մէկ նախաքայլն է խաղաղութեան բանակցութեանց։

Այս կէտից է անա, որ ծայր է տալիս մի ուշագրաւ փոփոխութիւն Պոլսոյ եւ Նեղուցների հարցի մէջ թէ՛ դաշնակից բանակում եւ թէ Ռուսիոյ մէջ։

Այս ծանրակշիռ խնդիրը պատերազմի սկզբից և ռազմագործողութեանց զուգահեռ՝ անցաւ հետեւեալ երկու ուշագրաւ փուլերից.

ԱՌԱՋԻՆ.— Մինչեւ 1916ը Ռուսիա պնդում է Դաշնակիցների առջեւ, որ հրապարակուի Պոլսոյ և Նեղուցների մասին իրենց միջեւ գոյացած համաձայնութիւնը, ըստ որուն այդ ամբողջ հողաշրջանը կցւում է Ռուսիոյ։

Ռուսիա պնդում է հրապարակումի վրայ՝ երկրին և բանակին կորով ներշնչելու համար։

Դաշնակիցները, սակայն, ընդդիմանում են հրապարակումին։

ԵՐԿՐՈՐԴ.— 1916ի Մարտից (աւելի ճիշտը՝ Սեպտ.ից)-ոյս կողմ հրապարակումի վրայ պնդում են Դաշնակիցները, մինչ այս անգամ, ընդհակառակը, այդ բանին ընդդիմանում է Ռուսիան։

Ցիշատակենք վաւերագիրներից գէթ մի երկուսը։

1916 Սեպտ. 11ին Անգլիոյ Ջորջ թագաւորը հետեւեալ հեռագիրն է յղում Նիկոլայ Բ.ին.

«Ինձ տեղեկացրին, որ կրկնւում է մի լուր, որին որոշ տեղեր նաեւ հաւատում են, թէ Անգլիա տրամադիր է ընդդիմանալու Ռուսիոյ տիրակալումին Պոլսոյ վրայ։

«Այդ կարգի կասկածանքներ իսկ կառավարութիւնը պէտք չէ՛ որ ունենայ։

«Սակայն ինձ ցաւ է խորհել, թէ որեւէ տեղ Ռուսիոյ մէջ կարող են կասկածներ լինել Մեծն Բրիտանիոյ անկեղծութեան եւ նրա նպատակների տեւականութեան մասին»։

Նիկոլայը հեռագրով հետեւեալն է պատասխանում Ջորջ թագաւորին.

«Ես համոզուած եմ, որ իմ կառավարութեան մէկ հակիրճ պաշտօնական հաղորդագրութիւնը այն մասին, թէ Անգլիա եւ Ֆրանսա Պոլսոյ եւ Նեղուցների տիրապետումը Ռուսիոյ կողմից նկատում են մէկ անփոփոխելի նպատակը խաղաղութեան պիտի հանգստացնէր բոլորի մտքերը եւ ցրէր բոլոր տարակուսանքները»։

Ուրեմն, իր այս հեռագրով, Նիկոլայը հաստատում էր այն, ինչ որ Ջորջը փորձում էր անհաւանական նկատել իր Սեպտ. 11ի հեռագրով։

Մի քանի օր վերջ Գրէյը իր սկզբունքային համամտութիւնն է յայտնում Նիկոլայ կայսեր հեռագրին — որին նախապէս յօժարած էր նաեւ Շտիւրմեր — առաջարկելով, սակայն, որ հրապարակումը առժամաբար յետաձգուի, խուսափած լինելու համար այն գէշ հետեւանքներից, որ այդ հրապարակումը կարող է յառաջացնել ամբողջ մուսուլմանաշխարհում։

Հակառակ այս առարկումին, անգլիական կառավարությունը, այնուամենայնիւ, տրամադիր էր դժուարութիւնները յաղթահարելու և համաձայնութիւնը հրապարակելու, և այս առաջադրանքով նա նախաձեռնութիւն ստանձնեց գործի լծուելու Փարիզում եւս, ուր ընդդիմութիւնը նուազ զօրաւոր չէր։

Այս աշխատանքը տակաւին չաւարտած՝ անա Շտիւրմերը 1916 Հոկտ. 13ին հետեւեալ հեռագիրն է քաշում Լոնդոն՝ իր դեսպանին՝ Բէնկէնդորֆին.

«Լորդ Գրէյի հետ ձեր ունեցած բանակցութեանց մէջ բարեհաճեցէք նկատի առնել, որ (*Պոլսոյ և Նեղուցների համաձայնութեան հրապարակումի շուրջ*) խնդիր յարուցանելով, ես երբեք պնդած չեմ, որ անմիջօրէն հրապարակումի թուական ճշտուի»։

Լոնդոնն ու Փարիզը այնքան էին մտահոգ ռուսական այս խաղերով ու վարանքներով, որ Բէնկէնդորֆը, իր ունեցած խօսակցութեանց իբրև արդիւնք, 1916 Հոկտ. 18ին Լոնդոնից հեռագրում էր Պետրոգրադ՝ Շտիւրմերին.

«Ժամանակ չկորցնելու համար Գրէյը արդէն բանակցութեանց մտած է Բրիանի հետ խմբագրութեանը շուրջ այն նախաբանի, որ պիտի կցուի փաստաթղթերին»։

Այս հեռագրի բնագրի վրայ Նիկոլայը 1916 Հոկտ. 25ին հետեւեալ ուշագրաւ դիտողութիւնն է մակագրում.— «ՊԷՏՔ ԶԷ ԱՃԱՊԱՐԵԼ»։

Իսկ սըր Բիւկընէնը, որ 1916 Հոկտ. 21ին հրահանգ է առնում Գրէյից յիշատակուած հարցում գործել ՇՏԱՊ, առանց սպասելու, որ «Ձեր ֆրանսացի պաշտօնակիցը եւս նոյնանման հրահանգներ ստանայ», 1916 Նոյ. 6ին Պետրոգրադից հետեւեալն է հեռագրում Լոնդոն՝ իր նախարարին.

«ՇՏԻՒՐՄԵՐԸ ՏՈՒԵԱԼ ՎԱՅՐԿԵՍՆԸ ԱՆՑԱՐՄԱՐ Է ԴԱՏՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԻ ՀԱՄԱՐ»։

Ցաղորդող օրերին Անգլիա աշխատում է հրապարակումը արագացնել, իր ազդեցութիւնը գործադրելով թէ՛ Լոնդոնում (Բէնկէնդորֆի միջոցով) եւ թէ Պետրոգրադում (Բիւկընէնի միջոցով)։

1916 Նոյ. 9ին ռուս դեսպան Բէնկէնդորֆը Լոնդոնից հեռագրում է Շտիւրմերին.

«Հարտինգի (Անգլիոյ արտ. գործոց փոխ-նախարար, 1916ից մինչև 1920ը.—Ն.) հետ իմ ունեցած զրոյցից պարզուեց, որ անգլիական տեսակէտից յետաձգումի համար այլեւս որեւէ հիմ չկայ» (*ընդգծումը՝ մեզանից.—Ն.*)։

Մինչ Նոյ. 10ին Բիւկընէնը հեռագրում է Գրէյին, թէ Շտիւրմերը երկու անգամ կրկնել է իրեն, որ անապարումի պէտք չկայ հրապարակման հարցում։

Այս խորհրդաւոր երեւոյթի վրայ իր նախարարի ուշագրութիւնը հրաւիրելով՝ դեսպանը հեռագրի վերջաւորութեան աւելացնում էր.

«Ես պատասխանեցի, որ, ըստ իս, հարկ է որևէ սպեղանի գտնել տրամադրութեանց այն բացայայտ անկումի դէմ, որ կայ այստեղ, եւ այս նպատակով հարկ է յայտարարել, որ պատերազմի վախճանին Ռուսիա պիտի ստանայ Պոլիսը»։

Տրամադրութեանց այս անկումը տեսնելով, նաև ֆրանսական դեսպանը Պետրոգրադում՝ Պալէոլոգ՝ առանց իր կառավարութիւնից հրահանգի իսկ սպասելու, յօժարակամութիւն էր յայտնում անմիջապէս Նեղուցների Ռուսիոյ կցման համաձայնութիւնը հրապարակելու։

Իր հերթին ռուս դեսպանը Փարիզում՝ Իզվոլսկիյ՝ Նոյ. 17 հեռագրով յայտնում էր Պետրոգրադ,

որ Ֆրանսական կառավարութիւնը պաշտօնապէս իւրացրել է հրապարակման տեսակէտը։

Այս հրապարակումը տեղի չունեցաւ սակայն, մինչև որ 1916 Նոյ. 23ին Շտիւրմերը իր հրաժարականը չտուաւ։

Միայն Տրեպովի նշանակումով իբրև վարչապետ՝ տրամադրութեանց մէջ որոշ հանգստութիւն հաստատուեց, եւ ռուս կառավարութիւնը կրկին դարձաւ իր հին տեսակէտին — հրապարակել։

Արդ, ի՞նչ բանով բացատրել այն ջղայնութիւնը, որ 1916ին հրապարակման հարցում կար Դաշնակիցների մօտ։

Որոշ է. Գերմանիա դիւանագիտական ճակատում նորէն անցած էր տենդոտ աշխատանքի՝ Ռուսիան պատերազմից հանելու համար։

Այդ պատմական օրերին Պրոտոպոպովը Ստոկհոլմում գաղտնի բանակցութեանց մէջ էր գերման բանագնացի՝ Վարբուրգի հետ։

Պրոտոպոպովը գահի անձնուէրներից էր, ծայրայեղ յետադիմական ու գերմանասէր, աւելի յօժար Ռուսիոյ պարտութեան՝ ռազմաճակատում, քան յեղափոխութեան յաղթանակին՝ երկրում։

Պրոտոպոպովը անդամակցում էր Տրեպովի դահլիճին և արքայական զոյգի աչքն էր կառավարութեան մէջ։

Պալէոլոգը 1916 Նոյ. 3 թուականով իր յուշերի մէջ այսպէս է բնութագրում Պրոտոպոպովի քաղաքական դիրքը պատերազմի և Նեղուցների հարցում։

Զինու զօրութեամբ, ըստ Պրոտոպոպովի, գրաւել Պոլիսն անկարելի է, անկախ այն բանից, որ Անգլիա և Ֆրանսա, հակառակ իրենց խոստումներին, երբեք չեն յօժարի այդ գրաւումին։ «Մինչ

Գերմանիա, ընդհակառակն, պատրաստ է այդ անելու։ Եւ ի՞նչ գեղեցիկ պիտի լինէր այն օրը, երբ ալաւոնականութիւնն ու գերմանականութիւնը հաշտուէին Սբ. Սոֆիայի գմբէթի տակ»...

Այս լուրերի ազդեցութեան տակ անգլիական դեսպանը տեսակցութիւն է խնդրում թագաւորից և Նոյ. 7 թուականով հեռագրում Գրէյին.

«Վաւերագոյն աղբիւրից տեղեկացայ, որ, ըստ Պրոտոպոպովի տեղեկատուութեան Կայսեր՝ իր ուղնեցած զրոյցի մասին գերման պաշտօնատարի հետ Ստոկհոլմում, այս վերջինը իբրև թէ ասած է, որ Գերմանիա պատրաստ է Լեհաստանը պարպելու եւ առարկութիւն չունի Պոլսոյ գրաւման դէմ Ռուսիոյ կողմից։

«Ես հարցրի Կայսեր, — այսպէ՞ս է արդեօք։

«Կայսրն ասաւ, որ չի յիշում, թէ ի՛նչ զրոյցի մէջ հանդիպած է այդ տեղեկատուութեան, սակայն հանդիպած է մէկ թէ երկու անգամ»։

Իր անձնական յուշերի մէջ այս պատմական զրոյցը լրացնելով՝ Բիւկընէն վկայում է, որ Կայսրը տուած է իրեն Պրոտոպոպովի անունը և յայտնած գերման պատրասականութեանը մասին Պոլիսը զիջելու, աւելացնելով, որ ինք, սակայն, վճռած է հաւատարմաբար Դաշնակիցների հետ պատերազմը չարունակել մինչև յաղթական վախճան։

Այս ճակատագրակշիռ օրերին է անա, որ Գերմանիա յարձակման է անցնում ռումանական ճակատի վրայ և խորտակիչ հարուած տալիս ռումէն զէնքին։

1916 Նոյ. 8ին ռուս դիւանագիտական ներկայացուցիչը Բերնում՝ Բիբիկով՝ հեռաւեալն էր հեռագրում Պետրոգրադ՝ արտ. գործոց փոխ-նախարար Ներատովին.

«Գերմանիա գտնում է, որ լեհական հարցի լուծումը մօտեցնում է խաղաղութեան գործը Ռուսիոյ հետ, որովհետեւ կացութիւնը աւելի է պարզում։

«Ռումանիոյ դէմ ձեռնարկուած վճռական յարձակումը եղած է գլխաւորաբար այն նպատակով, որպէսզի ցոյց տուի Ռուսիոյ, որ նա կորցրած է բալկանեան նաւատորմը դէպի Պոլիս». (ընդգծումը՝ մեզանից.—Ն.)։

«Նեղուցներից ազատ անցք Ռուսիան կարող է ստանալ՝ միայն Գերմանիայից անցնելով»։

1915ի ամրան մեծ յարձակումից յետոյ (բուն ռուսական ճակատի վրայ)՝ այս երկրորդ յարձակումը (ռումէն ճակատի վրայ) մի նոր փորձ էր՝ զէնքով Ռուսիոյ բարեկամութիւնը չանելու։

Խոստովանել պէտք է, որ Գերմանիոյ այս փորձերը — զէնքով թէ դիւանագիտութեամբ — զուր չէին անցնում, ի հարկէ։

Օրինակ, 1916 Դեկտ. 2ին Տրեպովը Պետական Դումայում հանդիսաւորապէս յայտարարում էր, որ Դաշնակիցները որոշած են Պոլիսը տալ Ռուսիոյ։

«Ռուս ժողովուրդը պէ՛տք է որ գիտենայ,— աւելացնում էր վարչապետը,— թէ ի՛նչ բանի համար է նա արիւն թափում»։

Այս յայտարարութիւնը, աւա՜ղ, ոչ մէկ արձագանգ չի գտնում ո՛չ Դումայում և եւ ոչ էլ երկրում։

Պալէոլոգը այս առիթով ապշած նկատում է իր յուշերում.

«Անտարբերութեան եւ զարմանքի մէջ ընդունուեց այս յայտարարութիւնը. կարծես թէ Տրեպովը գերեզմանից հանել էր մի ցնորք, որ իր ժամանակին փայփայուած և երկար ժամանակից ի վեր մոռացուած էր»։

Տրեպովի յայտարարութիւնից յետոյ, ինքը կայսրը՝ Նիկոլայ Բ.՝ 1916 Դեկտ. 25ին իր ծանօթ հրովարտակն է ուղղում բանակին և տորմին, աւելանելով, որ պատերազմի վախճանին Պոլիսն ու Նեղուցները պիտի լինեն ռուսական։ *)

Երկրում արձագանգ չի գտնում նաև այս հրովարտակը։

«Կայսրը չափազանց խոնուն է չհասկանալու համար,— իր յուշերում այս հրովարտակի առիթով նկատում է Պալէոլոգ,— թէ ռումանական աղէտը իրենից առած է ամէն հաւանականութիւն Պոլիսը գրաւելու և թէ իր ժողովուրդը վաղո՞ւց հրաժարած է բիւզանդական երազից»։

Հրովարտակը, ֆրանսական դեսպանի տպաւո-

---

*) Ինչպէս իր տեղում ասացինք, 1914 Նոյ. 2ին Ռուսիա պատերազմ յայտարարեց Թուրքիոյ. այս առթիւ հրապարակուած կայսերական հրամանագրի մէջ ակնարկ կար Նեղուցների հարցի լուծման մասին: Հրամանագիրը հրապարակելուց յետոյ՝ 1914 Նոյ. 26ին ցար Նիկոլայ Ա., առաջին անգամ լինելով, այցելեց Կովկաս:

Թիֆլիս հասնելով, նոյն օրն իսկ, Նոյ. 26ին, ցարը ազօթելու գնաց նախ ուղղափառների — ռուս եւ վրացի — Սիոնի Մայր Տաճարը, յետոյ եկաւ Հայոց Վանքի. Մայր Եկեղեցին, ուր իրեն դիմաւորեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե., իսկ այսեղից էլ ազօթելու գնաց մահմեդականների մզկիթը:

Նոյ. 29ին ողջոյնի եւ հաւատարմութեան ուղերձներով ցարին ներկայացան անդրկովկասեան երեք գլխաւոր ժողովուրդների — հայ, վրացի եւ թաթար — պատուիրակութիւնները:

Լաւատեղեակ Ռուսիոյ դարաւոր տենչին Նեղուցների հարցում՝ միայն հայ պատուիրակութիւնը իր ուղերձի մէջ անդրադարձաւ այս խնդրին:

Պատուիրակութեան նախագահը՝ Սամսոն Ցարուքիանեան՝ խօսքն ուղղելով ցարին, մաղթում էր.

«Թո՛ղ ռուսական դրօշը ազատօրէն ծածանուի Վոսփորի եւ Դարդանելի վրայ» (Ս. Վրացեան — «Հայրենիք» — «Տարեգիրք-Տարեցոյց», 1947, Պոսթրն, էջ 126):

բութեամբ, տարբեր բան չէր, «քան մի իւրատիպ քաղաքական կտակ»։

Մինչ ռուս երկրում տեղի էին ունենում այս մեծակշիռ դէպքերը, անդին Գերմանիա յամառաբար շարունակում էր իր ճիգերը՝ Ռուսիոյ հետ անջատ հաշտութեան երազին հասնելու համար։

1917ի Փետր.ին, տակաւին յեղափոխութիւնը չծագած, անակնկալաբար բուլգար դիւանագէտ Ռիզովը, իբրև Գերմանիոյ բանագնաց, նախ ներկայանում է Ստոկհոլմի ռուս դեսպանորդին՝ Նեկլիւդովին, բայց այստեղ փոքրիկ ձախողանքի հանդիպելով, անմիջապէս մեկնում է Քրիստիանիա եւ բանակցութեանց մէջ մտնում Նորվեգիոյ ռուս դեսպանորդի՝ Գուլկեւիչի հետ։

Այս վերջինը Պետրոգրադից եղած հրահանգի վրայ ընդունում է Ռիզովին և հանգամանօրէն լսում նրան։

1917 Փետր. 4ին Գուլկեւիչը հետեւեալն է հեռագրում Պետրոգրադ՝ արտ. գործոց նախարար Պոկրովսկիին.

«Ինձ ներկայացաւ բուլգար դեսպան Ռիզովը, որ յատուկ այս նպատակով եկած է Բերլինից, խընդրելու համար ինձ, որպէսզի հեռագրեմ Ձեզ Գերմանիոյ փափագի մասին՝ անջատ հաշտութիւն կնքելու Ռուսիոյ հետ ամենանպաստաւոր պայմաններով։

«Ես չճապարեցի գիտնալու այդ պայմանների մասին, սակայն Ռիզովը չտապեց հասկացնել ինձ, որ Գերմանիա պատրաստ է Սեւ ծովից ազատ անցք ապահովելու ոչ միայն մեր առեւտրական նաւերին, այլ և զինուորական ու ծովային ուժերին։

«Նա այնպէս ցոյց տուաւ, որ իբրև թէ խօսում է իր անձնական պատասխանատուութեամբ՝ աղէտներից փրկելու համար մեզ, սակայն իմ մէջ ոչ մէկ

կասկած ձգեց այն մասին, որ այդ նա անում է գերմանացիների՝ յանձնարարութեամբ»։

Գուլկեւիչը, որ հաւատում էր Դաշնակիցների յաղթանակին և հաւատարիմ էր ընդհանուր միութեան, իր նախարարին խորհուրդ էր տալիս մերժել եղած առաջարկը՝ նրա մէջ Գերմանիոյ տկարութիւնը տեսնելով։

Գէշ ընդունելութեան հոտը առնելով՝ Ռիզովը 1917 Փետր. 5ին բաժանւում է Գուլկեւիչից, նրան նախազգուշացնելով, որ եթէ նա եղածի մասին ռուս կառավարութիւնից բացի ուրիշ մէկին որեւէ բան յայտնի, ինք ամէն ինչ պիտի ուրանայ։

Հակառակ այս սպառնալիքին՝ Գուլկեւիչը դաշնակից դեսպաններին տեղեկացնում է Ռիզովի առաջարկի մասին։

Մենք մտանք Փետրուար ամսուան յորձանուտի մէջ, երբ ծագեց ռուսական Մեծ Յեղափոխութիւնը։

Փետրուարը — ալեկոծ ծով է ռուս պատմութեան մէջ։

Իրարից անկախ և յաճախ իրար դէմ դաւելով՝ գործում էին երկրի քաղաքական ոյժերը։

Թագուհիի շուրջ ծուարած մթին դէմքերն ու բարձրաստիճան արքայականները Գերմանիոյ հետ անջատ հաշտութեան ծրագիրներ էին որոճում՝ նըպատակ ունենալով բանալ ճակատը և գերմանական ուժ ներս առնել, նրա օգնութեամբ Գահը անսասան պահելու համար։

Մի այլ թեւ, չափաւոր սահմանադիր-միապետականներից բաղկացած, գլխաւորութեամբը Ա. Գուչկովի, ծրագրում էր պալատական յեղաշրջում կատարել, ձերբակալել արքայական զոյգին և թագաւորի եղբօրը՝ Միխայիլին կայսր հռչակել, պատերազմը աւելի մեծ թափով շարունակելու համար։

Իսկ կառավարութիւնը, իսպառ անտեղեակ երկրի մէջ տիրող կացութեան, դաշնակից երկրների հետ նորանոր համաձայնութիւններ էր կնքում, — այս անգամ ծանուցագրերի փոխանակութեան ձեւի տակ, — միշտ ի խնդիր Նեղուցների կցումին Ռուսիոյ։ *)

1917ի սկզբին ռուս արտ. գործոց նախարար Ն. Պոկրովսկիյ, որ նախարար կարգուած էր 1916ի Սեպտ.ին, յատուկ ծանուցագրով դիմում է Ֆրանսական կառավարութեան և յայտնում, որ իր կառավարութիւնը պատրաստ է գալիք Հաշտութեան վեհաժողովում պաշտպանելու Ֆրանսայի պահանջները Ալզաս-Լորէնի և Սաարի աւազանի վրայ, ինչպէս նաև պնդելու, որ Հռենոսի ձախ ափին ընկած գերման հողերից կազմուի մի առանձին «անկախ և չէզոք պետութիւն, որը գրաւուած պիտի մնայ ֆրանսական զօրքերից», մինչև լրիւ իրագործումը Գերմանիոյ և նրա զինակիցների կողմից ապագայ խաղաղութեան դաշինքի բոլոր պայմանների։

Իր պատասխան-ծանուցագրի մէջ ֆրանսական կառավարութիւնը հաստատում էր նախապէս կընքուած համաձայնութիւնը Պոլսոյ և Նեղուցների մասին, միաժամանակ ընդունելով Ռուսիոյ աղատութիւնը իր արեւմտեան սահմանները գծելու հարցի մէջ։**)

Իր ժողովրդից իսպառ կտրուած եւ նրա ծոցում խմորուող տրամադրութիւններին իսպառ անծանօթ կառավարութիւնը ոչ միայն նորանոր համաձայնութիւններ էր կնքում, այլ և ծրագրում էր 1917 Փետրուար 21ին ցամաքանում կատարել Վոսփորի ափին...

Մինչ անդին երկիրը եռում ու եփում էր՝ 1917 Փետր. 27ի Մեծ Յեղափոխութեան առջեւ դնելու համար համայն աշխարհը...

1917 Մարտ 1ին — գուգադիպաբար ճիշտ Մարտ 1ին (1881ի) յեղափոխականների ձեռքով սպանուած էր Նիկոլայ Բ.ի մեծ հայրը՝ Աղեքսանդր Բ. — կայսրը Նիկոլայ Բ. հրաժարուեց գահից։

Երկրի իշխանութեան ղեկը իր ձեռքն առաւ ժամանակաւոր կառավարութիւնը, գլխաւորութեամբը նախ իշխան Լվովի, ապա՝ Կերենսկիի։

Ժամանակաւոր կառավարութեան առաջին քայլերից մէկն այն եղաւ, որ իր արտ. գործերի նախարարը՝ պրոֆ. Պ. Ն. Միլիւկով՝ 1917 Մարտ 4ին շրջաբերական գրութեամբ դիմեց արտասահմանեան բոլոր ռուս դիւանագիտական ներկայացուցիչներին յայտնելով, որ նոր կառավարութիւնը «անփոփոխ յարգանքով պիտի շարունակի վերաբերուել դէպի միջազգային այն բոլոր յանձնառութիւնները, որոնք կնքուած են տապալուած կառավարութեան կողմից (ընդգծումները՝ մեզանից.—Ն.), եւ կողք-կողքի Ռուսիոյ փառաւոր զինակիցների հետ պիտի տանի պայքարը հասարակաց թշնամու դէմ մինչև վերջը, անսասան եւ անխոնջ կերպով»։

Ի պատասխան այս շրջաբերական գրութեան, Ֆրանսական եւ անգլիական կառավարութիւնները իրենց հերթին յայտնում են, որ իրենք եւս որոշած են պահպանել այն բոլոր դաշինքները, որ կնքուած են Ռուսիոյ հետ։

1917ի Ապրիլի սկիզբը տեսակցութիւն ունենալով «Temps»ի թղթակցի հետ՝ Միլիւկով կրկին ան-

*) Նեղուցների կցումը Ռուսիոյ ապահովուած էր նաեւ Սայքս-Պիկոյ համաձայնութեամբ (1916ի), որին պիտի անդրադառնանք իր տեղում։

**) «Պատմ. Դիւանագիտութեան», հ. Բ, էջ 288։

գամ հաստատում է Ռուսիոյ պահանջքը Նեղուցներու վրայ։

Սակայն մէկէն, բոլորովին անակնկալ ձեւով, 1917 Ապր. 9ին հրապարակուում է Ժամանակաւոր կառավարութեան պատմական յայտարարագիրը, հինգապէս տարբե՛ր բովանդակութեամբ։

Իր այդ յայտարարագրով Ժամ. Կառավարութիւնը ի յուր աչխարհի յայտնում էր.

«Ազաս Ռուսիոյ նպատակը ոչ թէ տիրակալութիւնը է այլ ժողովրդների վրայ, ոչ թէ բռնագրաւումն է նրանց ազգային ստացուածքի, ոչ թէ սեփականացումն է օտար հողերի, այլ ամրացումը հաստատուն խաղաղութեան, ժողովրդների ինքնորոշման հիմունքով»։

Իր նոյն յայտարարագրով Ժամ. Կառավարութիւնը միաժամանակ յայտնում էր, որ ինք լիովին պիտի յարգի այն բոլոր յանձնառութիւնները, որ ստանձնած է Դաշնակիցների հանդէպ։

Այս վերջին նախազգուշացումը հիմ առնելով՝ Միլիւկով, որ Նեղուցների հարցում հինգապէս տարբերւում էր միւս նախարարներից, Ապր. 14ին հեռագրում է Փարիզի և Լոնդոնի ռուս դեսպաններին.

«Նկատելով, որ յանձնառութիւնները երկկողմանի են, մենք երբեք չենք հրաժարւում մեր իրաւունքից ապահովելու Ռուսիոյ կենսական շահերը, որոնք յիշատակուած են յատուկ համաձայնութեանց մէջ»։

Սակայն Ժամ. Կառավարութիւնը 1917 Մայիս 5ի իր նոր հաղորդագրութեան մէջ հաստատում է 1917 Ապր. 9ի իր պատմական յայտարարագիրը, որ խորքին մէջ տարբեր բան չէր, քան հրաժարում Պոլսից եւ Նեղուցներից։

Այսքան խոր տարաձայնութիւն ունենալով Նեղուցների հարցում կառավարութեան հետ՝ Միլիւկովը Մայիսին քաշւում է կառավարութիւնից, իր տեղը զիջելով Մ. Տերեշչենկոյին։ *)

Նոր (ու վերակազմուած) կառավարութիւնը 1917 Մայիս 19ին շատ աւելի որոշակի կերպով ճշտում է իր դիրքը, յայտարարելով, որ ինք վճռած է ընդհանուր հաշտութիւն կնքել «առանց բռնակցումների եւ առանց բռնատուգանումների, ժողովրդների ինքնորոշման հիմունքով»։ **)

Դաշնակից պետութեանց այլ բան չէր մնում, քան ողջունել յեղափոխական Ռուսիոյ այս անշահախնդրութիւնը...

Մի տեղ իր յուշերի մէջ Ժամ. Կառավարութեան նախկին պետը՝ Ա. Կերենսկիյ՝ նկատում է.

«Միայն Պոլսից հրաժարման փաստը (Ժամանակաւոր Կառավարութեան կողմից) իր հետեւանքներով հաւասար էր Թուրքիոյ դէմ չհռուած մէկ մեծ ճակատամարտի։ Ռուսական յեղափոխութիւնից յետոյ տրամադրութիւնները Պոլսոյ ղեկավար շրջանակների մէջ սկսան արագօրէն և սաստկապէս փոխուել։ Գարնան Թուրքիա բոլորովին պատրաստ էր անջատաբար պատերազմից դուրս գալու։ Այս ուղղութեամբ նախնական ամբողջ աշխատանքը տարաւ արտ. գործոց նախարար Տերեշչենկոն, գործակ-

*) Այս անուանի ռուսի՝ Պ. Միլիւկովի ողջ գիտակցական կեանքի մեծագոյն եռազներից մէկը եղաւ — տեսնել ռուսական դրօր Պոլսում եւ Նեղուցների վրայ։ Ռուս ծայրագոյն ձախ հոսանքները իրենց ախոյեանի այս ընթացքը բնաղատելով՝ նրա հեղինակին երբեմնապէս կրկնակ մականուն էին տալիս, հեգնաբար կոչելով — Միլիւկով-Դարդանելսկիյ։

**) Ա. Մանդելշտամ — «Ռուսական քաղաքականութիւնը Թուրքիոյ մէջ առաջին համաշխարհային պատերազմի նախօրէին եւ ընթացքին», էջ 118—120։

*ցաքար Պոլսոյ ամերիկեան դիւանագէտների հետ։ (Ինչպէս յայտնի է, Հիւս. Ամերիկան պատերազմ յայտարարած չէր ո՛չ Թուրքիոյ և ոչ էլ Բուլգարիոյ)։ Եւ Թուրքիա խաղաղութիւն պիտի ստորագրէր, հաւանաբար, Նոյեմբերին։ Թուրքիոյ հետ պատերազմից դուրս գալու համար հասունանում էր նաև Բուլգարիան»։ *)*

Նոյեմբերը չեկած, եկաւ, սակայն, Հոկտեմբերը, և իշխանութիւնն անցաւ բոլշեւիկներին։

Գահի խորտակումով Գերմանիա կորցրած չէր Ռուսիոյ հետ անջատ հաշտութեան իր վերջին յուսակայանը։

*Այս փորձին նա անցաւ նաև բոլշեւիկների ժամանակ ու յաջողեց 1918 Մարտ 3/17ին գլուխ հանել Բրեստ-Լիտովսկի խաղաղութեան դաշինքը, ուխտերից «ամենեն գազանայինը, բռնաբարականն ու սոռնացուցիչը», ինչպէս որ պիտի ասէր ինքն իսկ Լենին։ **)*

Ի՞նչ պարզեց մեզ առաջին մեծ պատերազմը։

Փորձենք մի քանի կէտերի մէջ սեղմ տողերով ամփոփել մեր տպաւորութիւնները։

Ա.— Այն մի քանի փաստերը, որ նարցին վերաբերող անհատնում նիւթից — իր մի մասով նրապարակուած, իսկ իր մեծ մասով՝ գաղտնի — յիշատակեցինք մենք, յստակօրէն գալիս են ցոյց տալու այն բացառիկ կշիռը, որ ունեին Նեղուցները առաջին մեծ պատերազմին, միջպետական յարաբերութեանց մէջ։

*) **Ա. Կերենսկիյ** — «Դաշնակիցները եւ Ժամանակաւոր Կառավարութիւնը» («Ս. Զապիսկի», Գիրք LV, 1934, Փարիզ, էջ 281—282)։

) **Լենին — «Ամբողջական Գործերը», հ. XXIV, էջ 59 (մենք քաղում ենք "Դիւանագիտութեան Պատմութիւն„ից, հ. III, էջ 63)։

Բ.— 1914 Օգոստ. 10ին «Գեօբէն»ը եւ «Բրեսլաու»ն Դարդանելն անցնելով եւ 1914 Հոկտ. 29ին եւ 30ին, հրամանատարութեամբ ծով. Սուլթանի, ռուսական նաւահանգիստները ռմբակոծելով՝ եկան մի աւելորդ անգամ եւս վկայելու, թէ որքան մեծ է Ռուսիոյ սպառնացող վտանգը, երբ բաց են իր տան դռները։ *)

Գ.— Ճիշդ այս պարագան նկատի առնելով՝ Ռուսիա մտաւ պատերազմի՝ գրեթէ բացառաբար Նեղուցներին տիրանալու փափագով։

Դ.— Նեղուցների շուրջ սասկաբար սակարկելով հանդերձ, մեծ պետութիւնները — թէ՛ Համաձայնական եւ թէ Զինակից — նրանց միակ իրաւատէրը — բնական եւ հասկանալի, արդար եւ իրաւացի — նկատում էին Ռուսաստանը։

Ե.— Պատմութեան մէջ առաջին անգամը լինելով՝ Անգլիա եւ Ֆրանսա յօժարում էին Նեղուցները զիջել Ռուսիոյ։ **)

*) Ըստ երեւոյթին՝ մինչեւ իսկ ցամաքանցումի վտանգը կար։

«**Զոր. Լիմանն Ֆոն Սանդերսը**,— վկայում է մի գրիչ,— **պնդում էր Օրեստ ցամաքանցումի վրայ՝ թերեւացնելու համար աւստրիական նակատի աջ թեւի վրայ եղած ճնշումը**» (Comm. M. **Lacher** — «La guerre turque dans la guerre mondiale», Փարիզ, 1926, էջ 73)։

Նոյն եղիճակը, նիմ առնելով «Օսմանեան Պետութեան Համաշխարհային Պատերազմի Պատճառական Պատմութեան» տուեալները, գալիս է վկայելու, որ այդ ցամաքանցումը արդէն սկզբից իսկ նախատեսուած էր 1914ի Օգոստ.ի համար (ibid., էջ 83)։

**) Քանի որ այսման երկար կանգ առանց առաջին մեծ պատերազմին տեղի ունեցած անջատ նուաստութեան փորձերի վրայ, անցողակի յիշատակենք այստեղ մի չափազանց ուշագրաւ եւ տակաւին չլուսաբանուած դէպք եւս։ Այս դէպքը կարեւորութիւն է ստանում միայն նրա վկայի անձը նկատի առնելով,— Հիւս. Ամերիկայի նախկին դեսպանը Բերլինում Դոդ՝ որ ըստ ամենայնի մի յուշգրող, հոգեպէս ազնուական եւ արժէքաւոր մարդ էր։

Իր յուշերում Դոդ պատմում է, որ նուչակաւոր յուշգրող **Karl**

Անցնենք այժմ հարցի նորագոյն շրջանին, երբ իշխանութեան տէրը բոլշեւիկներն էին։

---

von Wiegand իրեն պատմել է, թէ 1918ի Ապրիլին թնոր Վիլսընի անձնական խորհուրդարից՝ գնդ. Հաուսից նամակ է առնում, ուր իրեն առաջարկում է Շվեդիոց Գերմանիա անցնել եւ գաղտնաբար խաղաղութեան առաջարկ անել Գերմանիոյ յանուն Ամերիկայի։ Սակայն, տակաւին գործի չձեռնարկած՝ Wiegand նոր հրահանգ է ստանում ոչինչ չանելու։ (Տե՛ս «Ambassador Dodd's Diary», Լոնդոն, 1941, էջ 32—33)։

ՆԵՂԼՈՒՑՆԵՐԸ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՇՐՋԱՆԻՆ

1917 Դեկ. 7ի դեկրետը.— Բրեստի դաշնագիրը.— Վիլսընի «14 կէտերը».— Մուդրոսի զինադադարը.— Խրիմի դասի երկնումը.— Քէմալական շարժումը.— 1920 Յունուար 28ի «միխ».— Սեւր.— Լոնդոնի խորհրդաժողովը.— Լոյդ Ջորջ (Բեֆիր Սամի եւ Օրլանդոյ).— Վալտեր Լիպմանի բացատրագիրը.— 1921 Մարտ 16ի ուխտերը (թուրքերուս եւ անգլերուս).— Կարսի դաշնագիրը.— Ճենովայի խորհրդաժողովը.— 1922ի բրնական յարձակումը.— Լօզան.— Տազնապահար ափարանը.— «Չինցրլմէն նամանայնութիւն»ներ.— Մոնտրէոյի դաշինքը.— Դէպքերի զարգացումը.— Պատերազմ։

IV

Համառուսական Խորհուրդների երկրորդ համագումարը 1917 *Նոյ.* 8*ին* (*Հոկտ.* 26) *հրապարակեց խաղաղութեան իր ծանօթ հրամանագիրը* (*դեկրետ*)։

Խորհրդային իշխանութիւնը բոլոր պատերազմիկներին առաջարկում էր խաղաղութիւն կնքել — առա՛նց բռնակցումների և առա՛նց բռնատուգանումների։

Այս նոյն հիմունքով 1917 *Դեկտ.* 7*ին* (*Նոյ.* 24) *նոյն իշխանութիւնը հրապարակեց «Ռուսիոյ և Արեւելքի բոլոր աշխատաւոր մուսուլմաններին» ուղղուած դեկրետը, որով ինքը հրաժարւում էր Պոլսից։*

Զինադադարի հրամանագիրը ընդունուած եւ հաղորդուած էր բոլոր պետութեանց 1917 *Նոյեմ.* 21*ին։*

Բանակցութիւնները Գերմանիոյ հետ զինադադարի շուրջը սկսուեցին 1917 *Դեկտ.* 3*ին* (*Նոյ.* 20),

Բրեստ-Լիտովսկի մէջ։

Բուն խաղաղութեան բանակցութիւնները սկսուեցին 1917 *Դեկտ.* 22*ին, դարձեալ նոյն քաղաքի մէջ։*

Գերմանիան ներկայացնում էր արտ. գործոց նախարար Ֆոն Կիւլմանը, Աւստրո-Հունգարիան՝ արտ. գործոց նախարար կոմս Չերնինը, Բուլգարիան՝ արդարադատութեան նախարար Պոպովը, իսկ Թուրքիան՝ մեծ վեզիր Թալէաթ փաշան։ *)

Ռուսական պատուիրակութիւնը գլխաւորում էր Եոֆֆէն։ **)

Այս բանակցութիւնները չարունակուեցին ապագնապներով և ընդհատումներով ու վերջացան 1918 *Մարտ* 3*ին։*

---

*) Թալէաթի անունը յիշատակելով — **նոյն** օրերին իսկ, երբ Թալէաթը Բրեստ է եւ Պոլիս տանային վերադարձած չէ — "Պատմութիւն Դիւանագիտութեան„ը նրան մերթ **բէյ** է անուանում (տե՛ս հ. Բ., էջ 319), մերթ **փաշա** (տե՛ս նոյն հատոր, էջ 334):

Ռուսական նին ու ծանօթ թափթփածութիւն...

**) Բրեստի խաղաղութեան ժողովին հինգ պետութեանց կողմից մասնակցում էին աւելի քան 400 մարդիկ:

Բանակցութիւններ Ռուսիոյ հետ երկու անգամ խզուեցին Բրեստի մէջ: Խաղաղութեան հարցի շուրջը խոր տարաձայնութիւններ կային ոչ միայն Ռուսիոյ եւ գերման **կոալիցիոնի** միջեւ, այլ եւ բուն իսկ համայնավար վարիչների միջեւ: Այս խզումների եւ ներքին տարաձայնութեանց հետեւանքով՝ Ռուսիա մասնակցեց Բրեստի խաղաղութեան ժողովին պատուիրակների **երեք** տարբեր կազմերով:

Բանակցութեանց **առաջին** շրջանը տեւեց 1917 Դեկտ. 3ից (միջոցներ տմարով) մինչեւ 1918 Յունուար 1: Այս շրջանին ռուսական պատուիրակութեան անդամակցում էին,— Եոֆֆէ (նախագահ), Կամենեւ, Պոկրովսկիյ, Բիցենկոյ, Պալովիչ, Ալեքսաեր, Սամոյլոյ, Լիպսկիյ, Յեպլիհ. պատուիրակութեան քարտուղարն էր Կարախան:

Այս պատուիրակութեան կազմի մէջ էր նաեւ բանաստեղծ Վլատան Տէրեան:

Բանակցութեանց **երկրորդ** շրջանը տեւեց 1918 Յունուար 1ից մինչեւ 1918 Փետր. 13: Այս շրջանին ռուսական պատուիրակութեան՝

Ռուսիա տեղի տուաւ գերման վերջնագրի առջեւ և Բրեստում ստորագրեց դաշինքներից, մի անգամ էլ կրկնենք Լենինի խօսքերը՝ «ամենեն գազանայինը, բռնաբարականն ու սոռնացուցիչը»։

Այս դաշինքով, ի դէպ, ամենեն մահացու հարուածներից մէկը տրուեց Հայ Դատին։ *)

Անցողակի յիշատակենք այստեղ, որ Բրեստում, բանակցութեանց սկզբնական շրջանին, Թուրքերը պահանջում էին, որպէսզի Ռուսիա անմիջապէս

վերը յիշուածներից բացի՝ անդամակցում էին — Տրոցկիյ (նախագահ), Կարելին, իսկ ազգային հարցերում՝ խորհրդականների հանգամանքով՝ Ռադեկ, Սուչկա, Բոբինսկիյ եւ Միցկեւիչ-Կապսուկաս:

Այս պատուիրակութեան մէջ Տէրեանը չկար:

Բանակցութեանց **երրորդ** շրջանը տեւեց 1918 Մարտ 1ից մինչեւ 1918 Մարտ 3: Այս վերջին շրջանին պատուիրակութեան անդամակցում էին — Սոկոլնիկով (նախագահ), Զիլերին, Կարախան, Եոֆֆէ, Պետրովսկիյ:

Տէրեանը չկար նաեւ այս կազմի մէջ:

---

*) Ինչպէս յայտնի է, Տրոցկիյ Բրեստում չստորագրեց խաղաղութեան դաշինքը. ուժ չունենալով ընդդիմանալու Գերմանիոյ, բայց եւ չյօժարելով նրա առաջարկած ծանր պայմանները ընդունելու՝ Տրոցկիյ մեկնեց Բրեստից, յայտարարելով, որ Խորհրդային Ռուսիա վերջացնում է պատերազմը, բայց խաղաղութիւն չի ստորագրում — **«ո՛չ պատերազմ, ո՛չ խաղաղութիւն»:**

Այս վերջինը ստորագրուեց առաւելաբար Լենինի պահանջով:

Ընկ. Լիպարիտ Նազարեանց այդ օրերին գտնւում էր Պետրոգրատ: Բրեստի առնչութեամբ մեր մի հարցումին պատասխանելով՝ ընկ. Նազարեանց 1947 Փետր. 17 թուականով գրում էր տոքերիս հեղինակին.

«Երբ Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը ստորագրուած էր արդէն, մի տեսակցութեան միջոցին, որ ունեցայ Տրոցկիի հետ, այս վերջինը ասաւ.— **«Ես ինձ երջանիկ եմ զգում, ընկ. Նազարեանց, որ ստիպուած չեղայ ստորագրելու հայերիդ համար այդքան դաժան մի դաշնագիր»:**

քաշի Կովկասեան ճակատից իր զօրքերը եւ դաշինքով պարտաւորուի չմիջամտել ուրիշների գործերին։

1918 Փետր. 23ի գերման վերջնագրով Թուրքիա պահանջում էր Ռուսաստանից՝ չտապ պարպել գրաւուած բոլոր Թրքական հողերը Անատոլիայի մէջ եւ ճանաչել իրաւաշնորհների (capitulation) ջնջումը։

Վերջնագիրը ներկայացնելուց յետոյ, ամենավերջին վայրկեանին, Թուրքերը գերման նախագահի բերանով պահանջում են իրենց վերադարձնել նաեւ Արդահանի, Կարսի եւ Բաթումի շրջանները։

Ռոզընբերգ, այս առաջարկն անելով, յանուն գերման պատուիրակութեան աւելացնում էր.

«Մենք, այնուամենայնիւ, այս պահանջի վրայ չենք պնդում, չմեղադրուելու համար բռնակցման ձգտումների մէջ»։ *)

Գերման պատուիրակի լուսաբանութիւնից պարզւում էր, որ ինքը Թուրքերի հետ է նրանց պահանջի մէջ (Արդահան, Կարս և Բաթում շրջանները վերադարձնելու մասին), սակայն դէմ չէ, որ այս պահանջը մաս չկազմէ դաշինքի։

Ինչպէս յայտնի է, Փետր. 23 լոյս Փետր. 24 գերման վերջնագրի մէջ այս երեք շրջաններն էլ մտան և այս յաւելումով 1918 Փետր. 24ին վերջնագիրը ընդունուեց ռուս պատուիրակութեան կողմից։ **)

*) «Պատմ. Դիւան.», հ. Բ., էջ 344։

**) Ինչպէս ասացինք, ռուսական երկրորդ պատուիրակութիւնը գլխաւորում էր Տրոցկին։ Խօսելով այս պատուիրակութեան տարած ափաստանքի մասին Բրեստում, «Մեծ Խորհրդային Համայնագիտարան»ը գրում է.

«Խորհրդային պատուիրակութիւնը, նախագահութեանը տակ ընկ.

Պոլիսն ու Նեղուցները յատուկ մաս չկազմեցին դաշինքին (եւ ոչ էլ նրա «Լրացուցիչ» բաժնին), որովհետեւ Ռուսաստանը կանխապէս հրաժարուած էր նրանցից։

Փետրուարեան յեղափոխութիւնը արագացրեց Ամերիկայի մուտքը պատերազմի մէջ։

1917 Ապր. 17ին Միացեալ Նահանգները պատերազմ յայտարարեցին Գերմանիոյ։

1918 Յունուար 8ին Վիլսընը Կոնգրեսին ուղղեց «14 կէտեր»ից բաղկացած իր պատմական պատգամը։

Իրաւակարգի գծով խորհրդային իշխանութեան հետ դաշնակից երկրների տարաձայնութիւնները աւելի չխորացնելու և ռազմա-քաղաքական կացութիւնը աւելի չբարդացնելու համար՝ խորհրդաց նախագահը իր պատգամի 6րդ կէտով յայտարարում էր.

Տրոցկիի, ... կառոդացաւ խիզախօրէն եւ վճռաբար յեղափոխական ձեռնոց նետել ափարհակալ պետութեանց պատուիրակներին... եւ մայր առ մայր հոդամերկել գերման պայմանների կեղծ ժողովրդավարոգին։ Զմերժելով քնկ. Տրոցկիի մեծ ծառայութիւնները Բրեստի բանակցութեանց մէջ («զեղեցկօրէն օգտագործած է այդ բանակցութիւնները քարոզչութեան նպատակներով»), ինչպէս ասած է Լենին...» եւ այլն (տե՛ս «Համայնագիտարան», հ. Է., Մոսկուա, 1927, էջ 437—462)։

Նոյն հարցի մասին խօսելով, աւելի ուշ, նոյն Մոսկուան իր ոչ նուազ կարեւոր մէկ այլ հրատարակութեան մէջ վկայում է.

«Գերմանների դիւանագիտական յարձակումը իր նպատակին հասաւ միայն Տրոցկիի դաւանանութեան հետեւանքով... Տրոցկին ընդունեց, որ ուկրայնական պատուիրակութիւնը անկախ է։ Դրանով իսկ նա դաւանանաբար ընդառաջ գնաց գերման ափարհակալներին» (տե՛ս «Պատմ. Դիւանագիտութեան», հ. Բ., 1945, էջ 334—335)։

Այս տարբերութիւնը այն պատճառով, որ մէկը գրուած է 1927ին, իսկ միւսը՝ 1945...

— Գերմանիոյ կողմից պարպումը ռուսական ամբողջ հողամասի։ «Ռուսական հարց»ի կարգաւորումը մի այնպիսի ձեւով, որ Ռուսիոյ երաշխաւորէր «մնացեալ ազգերի ամենէն լիակատար և ազատ աջակցութիւնը՝ ունենալու համար անարգել և լայն հնարաւորութիւն անկախ որոշում առնելու իր սեփական քաղաքական զարգացման և իր ազգային քաղաքականութեան մասին եւ նրան ապահովելու սիրալիր ընդունելութիւն ազատ ազգերի ընկերակցութեան մէջ այն իրաւակարգով, ինչ իրաւակարգ որ նա կ'ընտրի իրեն համար»։

Հակառակ այս բարեացակամութեան, Ամերիկա Ռուսիոյ հետ ամենէն ուշ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատող պետութիւններից մէկը եղաւ։

Պատգամագրի 2րդ կէտի մէջ ասուած էր.

— Խաղաղութեան թէ պատերազմի ժամանակ առեւտրական ծովագնացութեան համար բացարձակ ազատութիւն։

Խորքին մէջ այս կէտը ուղղուած էր այն պետութեան դէմ — Մեծն Բրիտանիա — որ ծովերի փաստական տէրն էր։

Իսկ պատգամագրի 12րդ կէտի մէջ, որ մեզ ամենէն աւելի է շահագրգռում, ասուած էր հետեւեալը.

«Օսմանեան Կայսրութեան տաճկական մասերը իրենց ժամանակակից կազմով պէտք է ստանան ապահով ու հաստատուն վերապահութիւն։ Իսկ ներկայիս Թուրք իշխանութեան տակ գտնուող միւս ժողովուրդները պէտք է ստանան ապահով երաշխիք իրենց գոյութեան համար, այլ և բացարձակապէս անխախտելի պայմաններ՝ ի խնդիր ինքնօրէն զարգացման։

«Դարդանելը միւս բաց պէտք է մնայ նաւերի ազատ անցքի եւ բոլոր ազգերի առեւտրի համար, միջազգային երաշխիքներով»։

Այս վերջին՝ — մեր կողմից ընդգծուած — տողերով չօշափուում էին Ռուսիոյ ամենէն կենսական շահերը. ճիշտ է, Դարդանելի բացումով ռուսական նաւերը դիւրութիւն էին ստանում դէպի բաց ջրերը նաւարկելու Սեւ ծովից, ուր բանտուած էին նրանք (մի ազատութիւն, որին միշտ ձգտել է Ռուսաստանը), սակայն միաժամանակ նաև ուրիշներ դիւրութիւն էին ստանում Սեւ ծով մտնելու (մի չարիք, որի դէմ նա միշտ մաքառել է)։

Օրերը խառնակ էին, անկայուն էր վիճակը Խորհուրդների աշխարհում՝ Ռուսիոյ մէջ, ուստի և Կրեմլը գրեթէ լուռ անցաւ Վիլսընի պատգամագրի վրայից։

Շուտով հասան 1918ի սեպտեմբերեան պատմական օրերը. Ֆրանչէ դ'Էսպերէն, գլուխն անցած 670.000նոց բանակի, աւելի քան 2.000 թնդանօթներով (ընդդէմ Զինակիցների 400.000նոց բանակի), Սեպտ. 14ին Սելանիկի ճակատից յարձակման անցաւ եւ արագօրէն քայքայեց Թշնամի ուժերը։*)

Բուլգարիան Սեպտ. 27ին զինադադար խնդրեց, եւ Սեպտ. 29ին զինադադարի պայմանները ստորագրեց Սելանիկում։

---

*) Այդ բախտակիր օրերին ռազմանակատի մէկ այլ կէտում, Բագուում, հայ զինական ոյժերը օրհասական կռիւ էին մղում տասնիկ հորդաների դէմ. եթէ նրանք **տեղեակ** լինէին, թէ Դաշնակիցները Սեպտ. 14ին յաջողաբար յարձակման են անցել բալկանեան ճակատում, իրենց ճիգերի թերեւս գերագոյնը փորձէին՝ մի քանի օր աւելի դիմանալու, որով եւ ճիմից փոխած կը լինէին հեռագայ դէպքերի ամբողջ ընթացքը...

Բագուն, ինչպէս յայտնի է, անձնատուր եղաւ 1918 Սեպտ. 15—16ին...

Շուտով հերթը հասաւ նաև Թուրքիոյ, որի սրբազգ պարտութեան մէջ ճակատագրական դեր խաղացած էր Բագուն, դէպի ուր Ինվերը զգալի ուժեր նետած էր ասիական ճակատից։

1918 Հոկտ. 30ին, Մուդրոս նաւահանգստում, Լեմնոս կղզու վրայ, Թուրք պատուիրակները՝ Ռէուֆ, Սաադուլլահ և Հիքմեթ՝ բարձրացան անգլիական «Ագամեմնոն» ռազմանաւը և այնտեղ ստորագրեցին իրենց պարտադրուած զինադադարի պայմանները։

Թուրքերը պիտի պարպէին՝ Արաբիան, Միջագետքը, Սուրիան, Հայաստանը, Կիլիկիոյ մի մասը։

Սակայն Անդրկովկասից նրանք անմիջօրեն եւ ամբողջութեամբ պիտի չքաշուէին...

Զինադադարի առաջին յօդուածում ասուած էր.

«Դարդանելի եւ Վոսփորի բացում եւ ազատ մուտք դէպի Սեւ ծով»։

Դաշնակից բանակներն դիւրութիւն էին տալիս անմիջապէս Դարդանելն անցնելու և գրաւելու Պոլիսը։

Դիպուածաբար չէ, որ զինադադարի առաջին պայմանի մէջ խօսւում էր ոչ թէ եղէի մասին (Սեւ ծովից), այլ մուտքի մասին (դէպի Սեւ ծով)։

1918 Նոյ. 11ին զինադադար ստորագրած էր նաև Գերմանիան, եւ այսպէս բոլոր զինակից ոյժերը տրորուած և փռուած էին դաշնակից յաղթական բանակների ոտքերի առջեւ։

Մնում էր միայն Ռուսաստանը, մի ալեկոծ ովկիանոս, որտեղից յուսահատ փորձեր էին կատարւում Ասիոյ և Եւրոպայի դժգոհ զանգուածները հին աշխարհի դէմ ոտքի հանելու։

Բաղաքացիական կռիւը ծայր առած էր Ռուսիոյ մէջ, ծայրագոյն արեւելքից մինչև արեւմուտք, ծայրագոյն հիւսիսից մինչև հարաւ։

1918 Նոյ. 14ին Անգլիոյ պատերազմական դաշնակիցը որոշեց.

ա.— Զէնքով և զինամթերքով օգնել զօր. Դենիկինին։

բ.— Սպանների լրացուցիչ կազմեր և լրացուցիչ զինամթերք ճամբել Սիբիր։

գ.— Օմսկի կառավարութիւնը (ծովակալ Կոլչակի) de facto ճանաչել իբրև Ռուսիոյ կառավարութիւն։

Այս որոշումներն առնելու յաջորդ օրն իսկ, 1918 Նոյ. 15 լոյս Նոյ. 16, անգլիական եւ ֆրանսական ռազմանաւերը մտան Սեւ ծով։

Նրանք գնացին իրենց ազդու աջակցութիւնը բերելու այն ուժերին, որոնք երկրի ներսը կեանքի եւ մահուան կռիւ էին մղում խորհրդային իշխանութեան դէմ։

Պատմութիւնը մի անգամ եւս եկաւ փորձով ցոյց տալու ռուս երկրին, թէ որքան մեծ է նրան ապառնացող վտանգը, երբ բաց են իր տան դռները։

Իր դէմ ծառացած ուժերը խորտակելու համար՝ խորհրդային իշխանութիւնը պայքար էր տանում թէ՛ երկրի ներսը և թէ նրա սահմաններից դուրս։

Այս վերջին մարզում նա իրեն աջակից ունէր, մէկ կողմից՝ Ասիոյ դժգոհ ժողովուրդները, իսկ, միւս կողմից՝ պատերազմի մէջ պարտուած երկիրները։

Միայն պատմութիւնը պիտի գայ պարզելու այն դերը, որ ունեցաւ մասնաւորաբար խորհրդային Ռուսիան քէմալական շարժման կազմակերպումի մէջ։

Այսօր իսկ ստոյգն այն է, որ Քէմալը գրեթէ ոչի՛նչ պիտի կարողանար անել, եթէ երբեք իրեն հետ՝ իբրև աջակից ուժ՝ Ռուսիան չունենար։

Քէմալական շարժումը, մանաւանդ իր սկզբնական շրջանին, կարող էր ծաւալուել ու խորանալ միայն Արեւմուտքի դէմ՝ որ եկած ու տիրացած էր Թրքապատկան հողերին, բայց ոչ Ռուսիոյ դէմ՝ որ պատերազմի վախճանին Թուրքիոյ բախտակից երկիր դարձած էր։

Դժգոհներն իրենց անդրանիկ համագումարն ունեցան Այդընի մէջ՝ իբրև նշանաբան առնելով հետեւեալը,— «Ազատագրում Իզմիրի»։

Երկրորդ համագումարը տեղի ունեցաւ Տրապիզոնի մէջ, հետեւեալ կարգախօսի տակ,— «Պաշտպանութիւն Տրապիզոնի իրաւունքներու»։

Երրորդ կարեւորագոյն համագումարը, նախագահութեանը տակ Մուստաֆա Քէմալի, տեղի ունեցաւ Էրզրում, 1919ի Յուլիս–Օգոստ.ին. այս համագումարին մասնակցում էին գլխաւորաբար պատուիրակները Տրապիզոնի և արեւելեան վեց նահանգների՝ Վան, Բիթլիս, Խարբերդ, Սեբաստիա, Էրզրում և Տիգրանակերտ։

Էրզրումի համագումարի փակումից անմիջապէս յետոյ, 1919ի Սեպտ.ին, տեղի ունեցաւ Սեբաստիոյ համագումարը, հետեւեալ նշանախօսքի տակ,— «Պաշտպանութիւն Անատոլիայի եւ Եւրոպական Թուրքիայի իրաւունքներու»։

Միաժամանակ Սեբաստիոյ համագումարում որոշուեց ստեղծել Կուա Միլիէ (Ազգային Ոյժ) կուսակցութիւնը, որի նպատակը պիտի լինէր «Պաշտպանութիւնը թուրք ազգային իրաւունքներու». համագումարում իսկ ընտրուեց այս նորաստեղծ կուսակցութեան Գործադիր Կոմիտէն, նախագահութեամբ Մուստաֆա Քէմալի։

Ահա այդ օրերին է, որ Անատոլիա խմբուած ուժերի որոշումով Պոլսոյ մէջ գումարուեց Թրքական Խորհրդարանը։

Քէմալը Պոլիս չեկաւ, այլ մնաց Սեբաստիա։

Խորհրդարանը որոշեց դատի տալ Ֆերիդ փաշայի դահլիճը (զինադադարը ստորագրած լինելու եւ զինադադարի պայմանները պահած չլինելու համար), պահանջել հրաժարումը Ալի Ռիզայի դահլիճի և նրա փոխարէն վարչապետութեան կոչել Սելիհ փաշային (գործակցութեամբը «Կուա Միլիէ»ի մի քանի անդամների), դահլիճկեց անել սուլթան Մահմուտ Զ.ին և նրան փոխարինել իր դահաժաժանգներից մէկով, եւ Դահն ու Խորհրդարանը փոխադրել Փոքր Ասիա։

1920 Յունուար 28ի նիստին Խորհրդարանը քննարկեց վեց կէտերից բաղկացած Թուրքիոյ ծանօթ «Ազգային Ուխտ»ը։

«Ուխտ»ի 4րդ կէտի մէջ ասուած էր հետեւեալը.

«Մահմեդականների խալիֆայութեան աթոռանիստ, Սուլթանի և Օսմանեան կառավարութեան մայրաքաղաք Կ. Պոլսոյ ապահովութիւնը, այլ եւ ապահովութիւնը Մարմարա ծովի պէտք է պաշտպանուեն ամէն մէկ վտանգի դէմ։ Այն պարագային միայն, երբ այս հիմնական սկզբունքը պահպանուի, ընդունելի պիտի լինեն այն բոլոր որոշումները, որոնք կը կնքուեն մեր և ուրիշ պետութեանց միջև՝ Նեղուցների ազատ նաւարկութեան մասին»։ *)

---

*) Ա. Աբեղեան — "Թուրքիոյ Ազգ. Ուխտը„ («Հայրենիք», 1923, թիւ 11, էջ 109):

Անցոդակի կրկնենք այստեղ Աբեղեանի դիտողութիւնը այն մասին, որ Թուրքիա բռնագրաւեց նաեւ Սուրմալուի գաւառը, որի մասին եւ ո՛չ մէկ յիշատակութիւն կայ «Ուխտի մէջ, եւ որ թրքական սեփականութիւն երբէք եղած չէ:

Զեփին եւ խորհին մէջ այս կէտով չեղեալ էր ճաշակում Մուդրոսի զինադադարի առաջին պայմանը։

Անկասկած է, որ հարցի այս կերպ ձեւաւորումի մէջ կար Ռուսիոյ ազգու մասնակցութիւնը. բաց նեղուցները հաւասարապէս վտանգում էին թէ՛ Թուրքիան եւ թէ Ռուսաստանը. երբ Պոլսոյ տէրը Ռուսաստանը չէ, ապա նախընտրելի է (Ռուսիոյ համար), որ նրա տէրը Թուրքիան լինի։

Անգլիական իշխանութիւնները ըմբոստ Խորհրդարանը ցրեցին և նրա անդամների մի զգալի մասը ձերբակալելով՝ աքսորեցին Մալտա։

Աւելի քան քառասուն հոգի կարողացան խոյս տալ ձերբակալումից եւ անցնել Փոքր Ասիա։

Խորհրդարանի ցրման լուրը առնելով՝ «Անատոլիայի եւ Եւրոպական Թուրքիոյ Իրաւունքների Պաշտպանութեան Կ. Կոմիտէն» յայտարարեց, որ, նկատի առնելով Պոլսոյ գրաւման փաստը Դաշնակիցների կողմից, և այն իրողութիւնը, որ Խորհրդարան այլևս գոյութիւն չունի եւ Սուլթանը գերութեան մէջ է, Կ. Կոմիտէն որոշած է Առժամեայ Կառավարութիւն հաստատել եւ նոր Խորհրդարան հրաւիրել Էնկիւրիի մէջ։

1920 Ապրիլ 24ին — այսինքն ճիշտ այն օրը, երբ, հինգ տարի դրանից առաջ, ձեռնարկուած էր հայ ժողովրդի ցեղային բնաջնջումին — Էնկիւրիի մէջ կատարուեց հանդիսաւոր բացումը նոր Խորհրդարանի՝ Ազգային Մեծ Ժողով անունի տակ։

Ժողովին մասնակցում էին մօտ 300 պատգամաւորներ, որոնցից 50 հոգի մոլլաներ, 10—15 հոգի փաստաբաններ, 12—15ը՝ սպայակոյտի սպաներ, իսկ մնացածները՝ վաճառական-առեւտրականներ.

կէս-բանուորական խաւերը ժողովում միայն 2—3 ներկայացուցիչ ունէին։ *)

Ժողովին նախագահում էր Մուստաֆա Քէմալը։

Վերջնական ձեւաւորում առնելով՝ ժողովը հինգ կէտերից բաղկացած մի յատուկ յայտարարագրով դիմեց բոլոր պետութեանց, ուր իրեն Թուրք երկրի միակ օրինաւոր տէրը հռչակելով, բողոքում էր Պոլսոյ գրաւման, նախկին Խորհրդարանի ցրումի և նրա անդամների աքսորի դէմ եւ յայտարարում, որ Սուլթանը անգլիական գերի է, ուստի և անընդունելի են նրա կողմից արձակուած բոլոր հրամանագրերն ու ֆէրմանները։

Յայտարարագրի 4րդ կէտի մէջ ասուած էր հետեւեալը.

«Պոլսոյ կառավարութեան բոլոր դաշինքներն ու համաձայնութիւնները, կնքուած օտար կառավարութեանց հետ, յայտարարւում են չեղեալ»։ **)

Անտարակոյս, նաեւ այս յայտարարագրի մէջ կար Ռուսիոյ մեծ մասնակցութիւնը։

Կային, անշուշտ, նաեւ այլ պետութեանց խաղերը, սակայն քէմալական պայքարի սկզբնական շրջանին Նեղուցների հարցը նոր հանգրուանի մէջ էր մտնում առաւելաբար Թուրքեւռո՛ւս ձիգերով։

Կրեմլի կարեւոր հրատարակութիւններից մէկում խորհրդային գրիչներից պրոֆ. Ի. Մինց, խօսելով այդ օրերի մասին, նկատում է.

«Արտաքին աշխարհում պաշտպանութիւն ոռնելով՝ Մուստաֆա Քէմալը իր լիազօրին Մոսկուա ղրկեց մի յատուկ նամակով, ուղղուած Խորհրդային Կառավարութեան։ Իր այդ նամակով Քէմալը յայտ-

*) Մ. Պաւլովիչ — «Քէմալական շարժումը Թուրքիոյ մէջ» («Կրառնայեա Նով», 1921, Մոսկուա, էջ 221)։

**) Ibid., էջ 222։

նում էր, որ նոր Թուրքիան ուզում է ձեռ-ձեռքի խորհրդային Ռուսիոյ հետ պայքարել օտարերկրեայ բռնագրաւիչների դեմ եւ առ այդ Ռուսիայից ակընկալում է նիւթական եւ բարոյական աջակցութիւն։

«Իբրեւ արդիւնք այս դիմումին՝ Խ. Ռուսիան եւ Քեմալական Թուրքիան դիւանագիտական ներկայացուցիչներով փոխանակութիւն կատարեցին։

«Երկու պետութեանց միջեւ կայացած համաձայնութեամբ՝ հիմնովին փոխուեց ուժերի փոխ-յարաբերութիւնը Մերձաւոր-Արեւելքում»։ *)

Քեմալական Թուրքիոյ «ուխտ»երն ու «յայտարարագիր»ները գէթ ձեւապէս արգելք չեղան յաղթականների աշխատութեանց շարունակումին։

1920 *Օգոստ.* 10*ին ստորագրուեց Սեւրի դաշնագիրը։*

Ըստ այս դաշինքի.—

ա.— Պոլիսը մնում էր իբրեւ Սուլթանի աթոռանիստ քաղաք։ Այն դէպքում սակայն, երբ Թուրքիա ճշտօրէն չգործադրէր դաշինքը, Դաշնակիցները իրենց էին վերապահում Պոլսոյ մասին առնուած որոշման վերաքննութիւնը։

բ.— Վոսփորը, Մարմարան և Դարդանելը, խաղաղութեան թէ պատերազմի ժամանակ, բաց պէտք է լինէին, առանց դրօշի խտրութեան, բոլոր պետութեանց առեւտրական և պատերազմական թէ՛ նաւերի եւ թէ սաւառնակների համար։

գ.— Այս նոր օրինակարգին հսկելու համար ստեղծւում էր Նեղուցների մի յատուկ Յանձնախումբ, որին մէկական ներկայացուցչով (Շական ձայնով) պիտի մասնակցէին հետեւեալ պետութիւնները,— Հիւս. Ամերիկա (եթէ կամենայ), Անգլիա,

*) «Պատմութիւն Դիւանագիտութեան», հ. Գ, էջ 96։

Ֆրանսա, Իտալիա, Ճապոն եւ Ռուսիա (երբ այս վերջինը Ազգաժողովին կ'անդամակցի), եւ մէկական ներկայացուցչով (ու մէկական ձայնով) հետեւեալ պետութիւնները,— Յունաստան, Ռումանիա, Բուլգարիա եւ Թուրքիա (վերջին երկուսը երբ կ'անդամակցեն Ազգաժողովին)։

դ.— Յանձնախումբը պիտի գործէր բոլորովին անկախ տեղական (Պոլսոյ) ոստիկանութիւնից եւ պիտի ունենար իր դրօշը եւ իր սեփական ոստիկանութիւնը։

ե.— Թուրքիան Դաշնակիցներին պէտք է յանձնէր իր ռազմատորմիղը, իրեն պահելով միայն 6 *ականակիր եւ* 7 *փոքր նաւեր (պատերազմական)։*

զ.— Նեղուցների և կղզիների ամրութիւնները պէտք է քանդուէին։ Միւս ամրութիւնները կարելի էր պահել, սակայն կանխապէս ապազինելով։

Սեւրը յուսահատութեան չմատնեց Թուրքիան. Դաշնակիցները փաստօրէն պառակտուած էին արդէն, եւ նրանցից իւրաքանչիւրը Թուրքիան ոչ թէ պատուհասելու, այլ, ընդհակառակն, այն սիրաշահելու մասին էր խորհում։

Տակաւին Սեւրը չստորագրուած՝ Թուրքիան տեղեակ էր արդէն Դաշնակիցների միջեւ տիրող խոր տարաձայնութեանց։

1919*ի Խաղաղութեան Խորհրդաժողովի մէջ անգլիական պատուիրակութեան քարտուղարներից Հարոլդ Նիկոլսը — գրագէտ եւ քաղաքական մարդ — իր յուշերի մէջ խօսելով Փարիզում գումարուած բրիտանական դահլիճի* 1919 *Մայիս* 19*ի նիստի մասին, ուր քննութեան դրուած էր Թուրքիոյ խնդիրը, արձանագրում է.*

«Բըրզընը պահանջում էր Թուրքերին քշել Եւրոպայից եւ — մեծ ցաւով — հաշտւում էր յունա-

կան գոտիի մոքի հետ Իզմիրում։ Մոնտեգիւնին։ Միլները դէմ էին, որ նոր արգելքներ յարուցուեն Թուրքերին։ Ջըրչիլը ուզում էր, որ հանգիստ ձգեն Թուրքերին, բայց խնդրում էր ամերիկացիներին տալ Պոլսոյ եւ Նեղուցների, ինչպէս նաեւ Հայաստանի (Տրապիզոնով միասին) մանդատը. Բալֆուրն ուզում էր Պոլսոյ մանդատը տալ ամերիկացիներին, Իզմիրը՝ Յունաստանին, իսկ մնացեալը — Թուրքիոյ՝ իբրեւ անկախ պետութեան, օտարերկրեայ խորհրդականների հսկողութեան տակ։ Լոյդ-Ջորջը խուսափում էր իրեն կաշկանդելուց որոշակի որեւէ յանձնառութեամբ»։ *)

Այսքանը — միայն մէկ դահլիճի մէջ, աւելի խոր տարաձայնութիւններ բոլորի միջեւ...

Եւ այս ամենի մասին գիտէր Թուրքը. նրա սրատես հայեացքը նշմարած էր արդէն, որ Դաշնակիցների միջեւ «սրտակից համաձայնութիւն»ը (entente cordiale) իր տեղը վաղուց զիջած է «սրտակից պառակտում»ի (rupture cordiale), ինչպէս որ քիչ աւելի ուշ պիտի խոստովանէին իրենք իսկ դաշնակից թերթերը։

1920 Մարտ 19ին ամերիկեան Մերակոյտը երկրորդ ընթերցումով հրաժարուեց վաւերացնել Վերսայլի դաշինքը,— անուղղակի իօրէն մի ապդու ապակցութիւն Թուրքիոյ մղած պայքարին։

Տակաւին Սեւրի դաշնագրի մելանը չչորացած՝ հրաւիրուեց Լոնդոնի Խորհրդաժողովը (1921 Փետր.-Մարտ), ուր, մասնակցութեամբը Անգլիոյ, Ֆրանսայի, Իտալիոյ, Ճապոնի, Գերմանիոյ, Յունաստանի եւ Թուրքիոյ (այս վերջին երկրից երկու պատուիրակութիւններ, մէկը՝ Պոլսոյ կառավարութեան կողմից, իսկ միւսը՝ Էնկիւրիի), վերաքննութեան դրուած էր նաեւ Սեւրի դաշինքը։

Թուրք պատուիրակութիւնները — Պոլսոյ եւ Էնկիւրիի — համաձայնաբար Խորհրդաժողովին ներկայանալով՝ պահանջում էին, ի միջի այլոց, երաշխիքներ տալ իրենց, որ Նեղուցների ազատութիւնը պիտի չվտանգի Թուրքիոյ ապահովութիւնը եւ վեհապետութիւնը։

Իտալացիները կողմնակից էին Սեւրի վերաքննութեան. Բրիանը կողմնակից էր մասնակի սրբագրումների դաշնագրի մէջ. անջատ բանակցութեանց մէջ էր նաեւ Անգլիան Թուրք պատուիրակութեանց հետ, որոնցից Պոլիսը (գլխաւորութեամբ մեծ վեզիր Տեւֆիկ փաշայի) գրեթէ կշիռ չունէր Խորհրդաժողովում։

«Լոյդ Ջորջը առանձին զրոյց ունեցաւ,— գրում է Կրեմլի պատասխանատու գրիչներից պրոֆ. Ի. Մինց,— Էնկիւրիի թուրք պատուիրակութեան ճախագահ Բեֆիր Սամի բեյի հետ, որ մինչ այդ եղած էր Մոսկուա։ Մի քանի հարցում ուղղելով նրան Խորհրդային Ռուսիոյ մասին, Լոյդ Ջորջը առաջարկում է նրան Թուրքիոյ հոգատարութեան տակ առնել Անդրկովկասը Բազուի նաւթահորերով միասին»։ *)

Խոստովանել պէտք է, որ Լոյդ Ջորջն ընդհանրապէս գձձի եղած չէ նման պարգեւների մէջ։

Կոմս Կ. Սֆորցա — որ, ի դէպ, մասնակցում էր Լոնդոնի Խորհրդաժողովին — վերջերս իր լոյս ընծայած աշխատութեան մէջ — «L'Italia dal 1914 al 1944 quale io la vidi» («Ինչպէս որ ես տեսայ Իտալիան 1914ից մինչեւ 1944») — պատմում է.

*) Ա. Նիկոլսքի — «Ի՞նչպէս էր տիեզերում խաղաղութիւնը 1919ին», Մոսկուա, 1945, էջ 263։

*) «Պատմ. Գիտանազիտութեան», հ. Գ, Մոսկուա, 1945, էջ 99-100։

«Մի անգամ Փարիզում, երբ Օրլանդոն գանգատւում է, թէ Դաշնակիցները Իտալիոյ գաղթային ե՛ւ ոչ մեկ մանդատ տուին, Լոյդ Ջորջը առաջարկում է նրան բռնագրաւել Վրաստանը»։ *)

*Զուր չէ, որ 1919ի Խաղաղութեան Խորհրդաժողովին մասնակիցներից մէկը սրամտաբար նկատել էր, որ «Լոյդ Ջորջը Ռուսիոյ մասնատման գլխաւոր նեղիչներից մէկը լինելով՝ Վիլսընին շարունակ խօսում էր ժողովուրդների ինքնորոշման մասին»։ **)։*

Լոյդ Ջորջի կողմից եղած առաջարկը Բեքիր Սամիին — Անդրկովկասի հոգատարութեան մասին — տարօրինակ ոչինչ ունի իր մէջ։

Ինչ որ մութ էր երէկ, մի զգալի չափով լոյսի տակ է այսօր, չնորհիւ մասնաւորաբար հրատարակութեանը այն «Դիւան»ի, որ պատկանում է Վիլսընի մերձաւորագոյն գործակիցներից գնդապետ Հաուսի։

Իր «Դիւան»ի Դ. հատորում (էջ 148—157) գընդապետը պատմում է, որ 1918ի Հոկտ.ին ամերիկեան կառավարութիւնը մի բացատրագիր է կազմում եւ գաղտնաբար յղում մի կարգ պետութեանց այն մասին, թէ ի՛նչպէս պէտք է ըմբռնել այն «14 կէտերը»ը, որ հրապարակած էր Վիլսընը 1918 Յունուար 8ի իր պատգամագրով։

Այդ բացատրագրի բուն հեղինակներն էին ամերիկեան քաղաքական գրիչներից Ֆրէնկ Կոբբ եւ մեզ ծանօթ Վոլտըր Լիպմանը, որ նաև այսօր ներկայանում է իբրև ամերիկեան քաղաքականութեան լաւագոյն բանբերներից մէկը։

---

*) **Ն. Զորեանեան** — «Կարլոյ Սէմորցայի յիշատակներ» («Իզվեստիա», 1946 Սեպտ. 22)։

) **Ե. Ալդանով — «Ժամանակակիցներ», Փարիզ, 1928. էջ 183։

Բացատրագրից պարզւում է, որ Վիլսընը նկատի ունէր Ռուսիայից զատել ոչ միայն մերձ-բալտեան երկրները (Լիտուանիա, Լետոնիա և այլն), այլ եւ «Թերեւս Ուկրայնան» ու նաև Միջին Ասիան (Անդրկասպեան երկրները՝ Թուրքմենիստան, Ուզբեկիստան, Տաճիկիստան, Խըրխըզստան.—Ն.)։ «Շատ կարելի է,— ասուած էր բացատրագրի մէջ,— որ թերեւս հարկ լինի Միջին Ասիան հոգատարութեան հիմունքով դնել վարչութեանը տակ որեւէ պետութեան, սահմանափակ մանդատով»։

Խօսելով Կովկասի մասին՝ բացատրագիրն ասում էր.

«Կովկասը, հաւանաբար, նկատի առնուի իբրեւ մի մասը Թրքական Կայսրութեան»։ *)

Ուզում ենք ասել, որ Լոյդ Ջորջը մի չափով ընդհանուր ծրագիր էր չչափում, երբ Բեքիր Սամիին առաջարկում էր Թրքական հոգատարութիւն հաստատել Անդրկովկասի վրայ։

Այս մթնոլորտի մէջ, բնական է, որ պարտուած Թուրքիան սկսած էր խօսել յաղթականի լեզուով։

1921 Մարտ 11ին Բրիանը և Սֆորցան (իտալ. պատուիրակութեան նախագահը) հետեւեալ առաջարկն են անում Թուրքերին, իսկ Լոյդ Ջորջը եւ Քըրզընը՝ յոյներին.

ա.— Դաշնակից զօրքերից պարպել Պոլիսը։

բ.— Ընդունել Թուրքերի անդամակցութիւնը Թուրքիոյ մէջ հաստատուած դաշնակից ելեւմտական-վերահսկիչ կոմիտէին։

գ.— Ճանաչել Թրքական վերապետութիւնը Իզմիրի վրայ՝ այնտեղ պահելով, սակայն, յունական քաղաքապահ զօրքը։

---

*) **Մ. Մարինին** — «Վոլտր Լիպմանի ամենահակակ ծրագիրները» («Գրաւոր», 12 Յունիս 1946)։

դ. — ճանաչել Հայաստանի անկախութիւնը։

Կողմերը — թէ՛ Թուրքերը և թէ յոյները — այս առաջարկներից դժգոհ մնալով՝ Լոնդոնի Խորհրդաժողովը վերջանում է ձախողանքով։

Մասնաւորաբար Թուրքերը խիզախաբար պայքարեցնում էին Խորհրդաժողովը, որովհետև կանխապէս և անջատ դաշինքներով կողմերի հետ առանձնագոյնը արդէն ապահոված էին իրենց։

Խորհրդաժողովը տակաւին չվերջացած՝ Ֆրանսայի և Թուրքիոյ արտ. գործոց նախարարները — Բրիան և Բեքիր Սամի բէյ — յանուն իրենց երկրների անջատ համաձայնութիւն ստորագրած էին, որով Ֆրանսացիք կրճատում էին իրենց ազդեցութեան շրջանակը Թուրքիոյ մէջ՝ փոխարէնը արոչ մենաշնորհներ ձեռք ձգելով Կիլիկիոյ, Դիարբեքիրի և Սեբաստիոյ մէջ։

Իսկ ուղղակի թէ՛ դաշնակից դատին և թէ հայ ժողովուրդին դաւաճանելով՝ իր հերթին Սֆորցա՝ Իտալիոյ արտ. գործոց նախարարը՝ նոյն Բեքիր Սամիի հետ յանուն Իտալիոյ անջատ ուխտ էր կնքում 1921 Մարտ 12ին, պարտաւորուելով վերջնական հաշտութիւն կնքելիս՝ պաշտպանել Թուրքերի բոլոր պահանջները։

Սակայն արտակարգօրէն ուշագրաւն ու նշանաւոր ցուցականը այս չէ, այլ այն, ինչ որ տեղի ունեցաւ —հիշա նոյն օրը, 1921 Մարտ 16ին— միաժամանակ թէ՛ Լոնդոնում և թէ Մոսկուայում.

«1921 Մարs 16ին Անգլիա ստորագրեց համաձայնութիւն մը Սովեսներու հետ,— գրում է հանգուցեալ Ա. Խատիսեան,— որով վերջինները կը պարտաւորուէին հրաժարուիլ պրոպագանդէ անգլիական գաղութներու մէջ, իսկ անգլիական կառավարութիւնը կը պարտաւորուէր չպաշտպանել այն

ճորակազմ պետութիւնները, որոնք կազմուած էին նախկին ռուսաց կայսրութեան երկիրներեն։ Այդ առաջին հարուածն էր Հայաստանին, որովհետև Անգլիան արդէն կը պարտաւորուէր չօգնել հայերուն՝ իրենց անկախութիւնը վերականգնելու պայքարին մէջ»։ *)

Խօսելով այս մեծակշիռ համաձայնութեան մասին — այնքան սերտօրէն կապուած, ի միջի այլոց, Հայ Դատին — Մոսկուայի գրիչներից պրոֆ. Մինց նկատում է «Արտաքին Քաղաքականութեան Մատենադարանի հրատարակութեամբ լոյս ընծայուած մեզ ծանօթ գործի մէջ.

«1921 Մարտ 16ին յաջողութեամբ վերջացան երկար ժամանակից ի վեր տարուող բանակցութիւնները անգլիական կառավարութեան հետ՝ տնտեսական և քաղաքական համաձայնութիւն կնքելու մասին։ Այդ դաշինքի էական պարունակութիւնը կայանում էր հետեւեալում։ Խորհրդային Ռուսիոյ եւ Մեծն Բրիտանիոյ կառավարութիւնները փոխադարձաբար պարտաւորուում էին,— առաջին՝ հեռու մընալ ամեն թշնամական արարքից եւ պրոպագանդայից միմեանց հանդէպ։ Երկրորդ՝ մէկ և միւս պետութեան հպատակները իրաւունք էին ստանում իրենց հայրենիքները վերադառնալու, եւ դաշնադրող կողմերի միջեւ վերահաստատուում էին առեւտրա-քաղաքական յարաբերութիւնները (այստեղ թուում է մանրամասները.—Ն.)։

«1921 Մարտ 16ի առեւտրական համաձայնութիւնը գալիս էր ասելու, որ բրիտանական կառավարութիւնը de facto ճանաչում է Խորհրդային Ռու-

*) Ալ. Խատիսեան — «Հայասանի Հանրապետութեան Ծագումն ու Զարգացումը», Աթէնք, 1930, էջ 299:

պիան, թէև կողմերի միջև տակաւին բաց էին մնում վիճելի հարցերը։ 1921 Մարտ 23ին Լոյդ Ջորջը Համայնքների Պալատում յայտարարում էր, որ անգլեխորհրդային համաձայնութեամբ Անգլիա փաստօրէն ճանաչած է լինում Խորհրդային Ռուսաստանը» (բոլոր ընդգծումները՝ մեզանից.—Ն.)։ *)

Ուշադիր ընթերցողը նկատեց անշուշտ, որ խօսքը ոչ միայն առեւտրական, այլ եւ գերազանցօրէն քաղաքական դաշինքի մասին է. de facto ճանաչել Խորհրդային Ռուսիան՝ այս նշանակում էր ճանաչել նրա իշխանութիւնը այն բոլոր հողերի վրայ (որ ասել է՝ նաև Հայաստանի, Վրաստանի եւ Ազրբէյջանի), ուր փաստօրէն տարածուած էին Խորհուրդները. պարտաւորութիւն ստանձնել «հեռու մնալու ամէն թշնամական արարքից և պրոպագանդայից» Ռ. Ռուսիոյ դէմ՝ այս նշանակում էր ջպաշտպանել այլեւս իրաւունքները այն երկրների, որոնց անկախութիւնը Անգլիա նախապէս ճանաչած էր իր իսկ կողմից կնքուած միջազգային դաշինքներով։

1921 Մարտ 16ի անգլեխորհրդային համաձայնութիւնը տարբեր բան չէր, քան Սեւրի դաշնագրի բացայայտ եւ հանդիսաւոր ուրացումը։

Ու ճիշտ նոյն օրը, 1921 Մարտ 16ին, նոյնքան բացայայտ ու հանդիսաւոր կերպով, նոյն Սեւրը գերեզմանւում էր նաև Մոսկուայում։

Այդ օրը քէմալական պատուիրակութիւնը, անդամակցութեամբը Եուսուֆ Քէմալ բէյի, Ռիզա Նուրիի (նախարարներ) և Ալի Ֆուադ փաշայի, Մոսկուայի հետ կնքում էր ռուսաթուրք ծանօթ ուխտը։

*) «Պատմութիւն Դիւանագիտութեան», Մոսկուա, 6. Գ., էջ 113—114:

Մոսկուայի ուխտով Թուրքիան, առաջին անգամը լինելով, ձեռք-ձեռքի Ռուսիոյ հետ պաշտօնապէս հրապարակ էր իջնում՝ միասնական ուժերով իր պայքարը արեւմտեան աշխարհին դէմ տանելու համար։

Ուխտի առաջին յօդուածով Ռուսիա յանձնառութիւն էր ստանձնում չճանաչել որեւէ միջազգային ակտ (օրինակ՝ Սեւրը), որ բռնի պարտադրուած է Թուրքիոյ և ընդունուած ու վաւերացուած չէ նրա Ազգ. Մեծ Ժողովի կողմից։

Նոյնիմաստ յանձնառութիւն ստանձնում էր, ի հարկէ, նաև Թուրքիա Ռուսիոյ նկատմամբ։

Նեղուցների մասին Ուխտի մէջ հեռեւեալ խիստ ուշագրաւ յօդուածը կար (5րդ).

«Ապահովելու համար Նեղուցների ազատութիւնը եւ բոլոր ժողովրդների ազատ նաւարկութիւնը Նեղուցներից, պայմանագիր կողմերը համաձայն են Սեւ ծովի և Նեղուցների միջազգային կանոնագրի մշակումը վստահելու մի յատուկ Խորհրդաժողովի, կազմուած առափնեայ երկրների ներկայացուցիչներից (ընդգծումը՝ մեզանից.—Ն.), պայմանով, որ Խորհրդաժողովի որոշումները չվտանգեն Թուրքիոյ լիակատար վերհսկողութիւնը, ինչպէս և նրա մայրաքաղաքի՝ Պոլսոյ ապահովութիւնը»։ *)

Այսպիսով, մի կարեւոր սկզբունք — Նեղուցներում իրաւատէր են միայն Սեւծովեան պետութիւնները — որ այսօր սուր տարաձայնութեանց աղբիւր է դարձած, մէկ կողմից՝ Խ. Միութեան, իսկ, միւս կողմից՝ Թուրքիոյ, Անգլիոյ և Ամերիկայի միջեւ, երէկ, 1921ին, ռուսաթուրք փոխադարձ համաձայ-

*) «Ժողովածու Գործող Դաշինքների», հ. Ա., Մոսկուա, 1924, էջ 156:

նութեամբ, եկած և հաստատուն տեղ գրաւած էր ուխտի մէջ։

Եւ այսպէս այն պարզ պատճառով, որ երէկ Թուրքիա պէտք ունէր Ռուսաստանի՝ Պոլսից հանելու համար մի մեծ պետութիւն, որ Մուդրոսի համաձայնութեամբ (զինադադարի) եկած և գրաւած էր Նեղուցները, այնտեղ՝ մշտնջենապէս մնալու փաստագով...

Ուխտը միաժամանակ՝ ընդունում էր, որ «երկու ժողովուրդներից մէկի համար ստեղծուած ամենդժուարութիւնը՝ վատթարացնում է նաեւ միւսի դրութիւնը»։

1921ի Մարտին այսքան մօտ, այսքան եղբայրական էին Թուրքւխորհրդային յարաբերութիւնները...

Քսանչորսնգ տարի առաջ Թուրքիա ընդունում էր, որ Սեւ ծովի և Նեղուցների օրինակարգի մշակումը պէտք է կատարուի միայն այդ ջրերը եզերող պետութեանց կողմից, մինչ այսօր Թուրքիա հակառակ տեսակէտի վրայ է պնդում՝ նաև հեռաւոր պետութեանց — մասնաւորաբար Անգլիոյ և Ամերիկայի — մասնակցութիւնը անհրաժեշտ գտնելով։

«Կարելի՞ է թոյլատրել,— բացագանչում է «Ուլուս»ի քաղաքական խմբագիրը՝ Էմէր,— որպէսզի Նեղուցների իրաւավիճակի կարգադրութիւնից հեռու մնան պետութիւններ, որոնք դարերի ընթացքին այդ հարցի մէջ իրենց համար կենսական կարեւորութիւն ունեցող խնդիր տեսած են»...*)

Մոսկուայի ուխտը կնքելուց եօթը ամիս վերջ, 1921 Հոկտ. 13ին, տեղի ունեցաւ Կարսի պատմական Խորհրդաժողովը, մասնակցութեամբը Ռուսիոյ,

---

Մ. Սամբուլով — «Ինչն է ազդում թուրքերի ընթացքի վրայ։ Նեղուցների հարցում» («Ալիք», Թեհրան, 27 Նոյ. 1946)։

Թուրքիոյ և անդրկովկասեան երեք հանրապետութեանց՝ Հայաստանի, Վրաստանի և Ազրբէյջանի։

Մոսկուայի ռուսաթուրք ուխտի մէջ կար հետեւեալ յօդուածը (15րդ)։

«Ռուսաստանը պարտաւորւում է (Թուրքիոյ առջեւ.—Ն.) անհրաժեշտ քայլերը առնել Անդրկովկասի Հանրապետութեանց մօտ, որպէսզի այս վերջինները հետագային Թուրքիոյ հետ կնքելիք իրենց դաշինքների մէջ ճանաչեն տուեալ դաշնագրի (այսինքն՝ Մոսկուայի.—Ն.) այն յօդուածները, որոնք անմիջօրէն վերաբերում են իրենց»։*)

Խորհրդային գրիչներից լաւատեղեակ Բ. Բորեան, խօսելով զոյգ դաշինքների մասին — Մոսկուայի եւ Կարսի — արդար իրաւունքով նկատում էր.

«1921 Հոկտ. 13ի «բարեկամութեան դաշինք»ը թէ՛ ըստ էութեան եւ թէ ըստ ձեւի, քաղաքական տեսակէտից, չէր հանդիսանում իբրև միջազգային իրաւական ըմբռնումի մի ինքնուրոյն ակտ, այլ այդ դաշինքը կրկնում և հաստատում էր այն ուխտը, որ 1921 Մարտ 16ին Մոսկուայում կնքուած էր Ռուսիոյ և Թուրքիոյ միջեւ»։**)

Ճիշտ այս պատճառով, Կարսի դաշնագիրը իր 2րդ և 9րդ յօդուածներով կրկնում էր այն, ինչ որ ասուած էր Մոսկուայի դաշնագրի առաջին և հինգերորդ յօդուածների մէջ։

Նաև այս դաշնագրով Թուրքիա ընդունում էր, որ Սեւ ծովի և Նեղուցների օրինավիճակի մշակման

---

*) «Ժողովածու Գործող Դաշինքների», հ. Ա., Մոսկուա, 1924, էջ 158։

) **Բ. Բորեան — «Հայասեաց», հ. Բ., 1929, Մոսկուա, էջ 300—301։

կարող են մասնակցել այն պետութիւնները միայն, որոնք եզերում են այդ ջրերը։*)

Արեւելքում, գլխաւորութեամբ Ռուսիոյ, ճակատ էր ստեղծւում Արեւմուտքի դէմ, անկարելի դարձնելով Եւրոպայի տնտեսական կեանքի կարգաւորումը։

1922 Յունուար 6ին Կանի մէջ տեղի է ունենում դաշնակից Գերագոյն Խորհուրդի նիստը. այդտեղ Լոյդ Ջորջի առաջարկով ընդունւում է Ճենովայի մէջ հրաւիրել միջազգային մի լայն Խորհրդաժողով՝ Եւրոպայի եւեմտա-տնտեսական կեանքը կարգաւորելու համար։

Իրականին մէջ այս Խորհրդաժողովը հրաւիրւում էր Խորհրդային Ռուսիոյ հետ որոշ լեզու գրտնելու նպատակով։

Ճիշտ այս պատճառով Կանի մէջ որոշուեց յատուկ աշխատանք տանել՝ Լենինին այդ Խորհրդաժողովին բերելու համար։

1922 Յունուար 7ին Իտալիա յանուն Գերագոյն Խորհուրդի հետեւեալ դիմումն է ուղղում Մոսկուա, Հռոմի խորհրդային առեւտրական պատուիրակութեան միջոցով.

«Իտալական կառավարութիւնը, համամտաբար անգլիական կառավարութեան հետ, գտնում է, որ Լենինի անձնական մասնակցութիւնը յառաջիկայ Խորհրդաժողովին զգալապէս պիտի դիւրացնէր Եւրոպայի տնտեսական հաւասարակշռութեան հարցի լուծումը։ Արտաքին գործոց Արքայական Նախարարութիւնը խնդրում է ռուսական առեւտրական պատուիրակութիւնից՝ ամենաշտապ կերպով Արքայական կառավարութեան բաղձանքի մասին տեղեակ պահել Մոսկուան, խնդրելով, որ Լենինը չմերժի իր մասնակցութիւնը բերել մատնանշուած Խորհրդաժողովին»։*)

Ռուս բանուորութիւնը, վստահութիւն չունենալով Արեւմուտքի հանդէպ, միտինգներում քուէարկուած բանաձեւերով արգելեց Լենինի մեկնումը արտասահման, սակայն Խորհրդային Կառավարութիւնը ընդունեց հրաւէրը եւ որոշեց Չիչերինի գլխաւորութեամբ մասնակցել Խորհրդաժողովին։

Պատուիրակութեան մեկնումից առաջ, 1922 Փետր. 22ին, Մոսկուայում խորհրդային ութ հանրապետութեանց մասնակցութեամբ Խորհրդաժողով տեղի ունեցաւ, ուր բոլորն էլ իրենց շահերի պաշտպանութիւնը — Ճենովայում վարուելիք բանակցութեանց մէջ — փոխանցեցին Ռ. Ռուսիոյ պատուիրակութեան։

Մոսկուայի խորհրդաժողովին մասնակցում էր նաեւ Հայաստանը։

Ճենովայի Խորհրդաժողովը բացուեց 1922 Ապր. 10ին, քաղաքի շքեղագոյն ապարանքներից San Giorgioի մէջ։**)

Խորհրդաժողովին մասնակցում էին 29 երկրներ, իսկ Անգլիոյ գաղթապետութեանց հետ միասին՝ 34։

Այս Խորհրդաժողովը Եւրոպայի բազմադարեան

*) Նոյն սկզբունքը Թուրքիա ընդունած է նաեւ այն դաշնագրի մէջ, որ աւելի ուշ, 1922 Յունուար 21ին, կնքած է խորհրդային հանրապետութիւններից Ուկրայնայի հետ։ Այլ խօսքով՝ երեք դաշինքների մէջ Թուրքիա այս սկզբունքը նուիրագործած է իր ստորագրութեամբ։

*) «Պատմ. Դիւանագիտութեան», հ. Գ., էջ 152։

**) Ճենովայի բուն հեղինակը Լոյդ Ջորջն էր. ուստի հետագային, երբ Խորհրդաժողովը ձախողեց, ոմանք սրամտաբար առաջարկում էին San Giorgioն վերանուանել... Palazzo San Lloyd Giorgio։

պատմութեան մէջ մեծագոյնն էր իր անդամների քանակով։

Խորհրդային պատուիրակութեան առաջին գործերից մէկը եղաւ պնդել, ի միջի այլոց, մասնակցութեանը վրայ Թուրքիոյ, որ հրաւիրուած չէր Խորհրդաժողովին։

Այդ առաջարկը մերժուեց, սակայն, այն առարկութեամբ, թէ Թուրքիա ասիական պետութիւն է, մինչ Խորհրդաժողովին մասնակցում են բացառաբար եւրոպական պետութիւնները։

Իրողութիւնն այն էր սակայն, որ Թուրքիան իր մի մասով նաեւ եւրոպական էր։

«Եւրոպական»ը զոհ գնաց «ասիական»ին այն պարզ պատճառով, որ Թուրքիա եթէ գար Խորհրդաժողովի, իրեն հետ պիտի բերէր Սեւ ծովի, Նեղուցների եւ Մերձաւոր ու Միջին Արեւելքի կնճռոտ հարցերը՝ Խորհրդաժողովում տիրող մթնոլորտը աւելի եւս ծանրացնելով։

Անկախ այս բոլորից՝ Խորհրդաժողովը ծանրօրէն ձախողեց։

Նրա արգանդից անակնկալաբար աշխարհ եկաւ մի տարօրինակ ծնունդ — Ռապալլոն։

1922 Ապր. 16ին ստորագրուեց ռուսգերմանական բարեկամութեան ուխտը՝ «ցնցումի մատնելով բովանդակ աշխարհը», ինչպէս որ ասում էր ամերիկեան դեսպանը Իտալիոյ մէջ՝ Չայլդ։

Առանց որեւէ գրական գործ արձանագրած լինելու՝ Ճենովայի Խորհրդաժողովը 1922 Մայիս 11ին կնքեց իր մահկանացուն։

Նոյն արդիւնքը ունեցաւ նաեւ Լահէյի Խորհրդաժողովը (15 Յունիս—20 Յուլիս 1922), որ ձեւին ու խորքին մէջ կազմում էր Ճենովայի պարզ շարունակութիւնը։

Կացութիւնը գնալով զգալապէս ծանրանում էր։

1922 Սեպտ. 22ին Խորհրդային կառավարութիւնը, յատուկ ծանուցագրով դիմելով Անգլիոյ, Ֆրանսայի, Իտալիոյ, Իւգոսլաւիոյ, Բուլգարիոյ, Ռումանիոյ, Յունաստանի և Եգիպտոսի, առաջարկում էր Խորհրդաժողով հրաւիրել մասնակցութեամբ այն բոլոր երկրների — առաջին հերթին՝ սեւծովեան — որոնք չանագրգռուած են մերձ-արեւելեան տագնապի կարգաւորումով։

Այս առաջարկը մեծ պետութեանց մօտ ընդունելութիւն չգտաւ։

Կար այն յոյսը, թէ յունական բանակներով Թուրքիան սարսելով՝ այս վերջինը կարելի է պոկել Խ. Ռուսաստանից և այսպիսով աւելի դիւրացնել կնճռոտ հարցերի լուծումը։

Այսպէս չեղաւ սակայն։

1922 Օգոստ. 26ին Թրքական զօրքերը անակնկալաբար յարձակման անցնելով՝ հինգ օրուայ մէջ, Աֆիոն-Փարսիսարի շրջանում, ջախջախեցին յունական գլխաւոր ուժերը, իսկ Սեպտ. 2ին էլ գերի առան յունական զօրքերի ընդհանուր հրամանատարին՝ զօր. Տրիկուցիսին։

Սեպտ. 9ին Թուրքերն արդէն Իզմիր էին. յոյն գերիների թիւը հասնում էր 50.000ի։

Բէմալական ոյժերը յաղթականօրէն մօտենում էին Պոլսին և Նեղուցներին։

Բրիտանական դահլիճը արտակարգ նիստ գումարելով՝ Սեպտ. 15ին հեռագրով դիմում է գաղթապետութեանց և նրանց օժանդակութիւնը խնդրում, յայտարարելով.

«Դաշնակիցների պարտութիւնը և կամ նրանց կողմից Պոլսոյ ամօթալի պարպումը՝ մեզ կարող է

լուրջ հետեւանքների առաջ դնել Հնդկաստանում և մահմեդական այլ ժողովրդների մոտ...»։*)

Արձագանգելով այս անակոչին՝ աստրալիական վարչապետ Իւղ յայտարարում էր խորհրդարանի մէջ.

«Կայսրութեան շահերը Միջագետքում, Արաբիոյ և Հնդկաստանի մէջ սերտօրէն կապուած են այն հարցին, թէ որո՛նց ձեռքերի մէջ է արդեօք Դարդանելը»։**)

Նոյն ձեւի արտայայտութիւններ եղան նաեւ Նոր Զելանդիայի խորհրդարանում։

Անգլիոյ կացութիւնը աւելի եւս ծանրացաւ նրանով, որ Սեպտ. 19ին ֆրանսացիները քաշուեցին Զանաք-Գալէի դիրքերից, իսկ քիչ աւելի ուշ ֆրանսացիներին հետեւելով, իտալացիները նոյնպէս պարպեցին Դարդանելը և մեկնեցին։

Ի տես այս կացութեան՝ Անգլիա անօգուտ գըտաւ պատերազմը Թուրքիոյ դէմ։

Այս վերջինը, յայտնապէս խաղաղութեան դաշինքը խախտելով, իր կամքն էր պարտադրում մեծ յաղթականներին։

Սըր Էդուար Գրիգ, որ լորդ Մոյնի սպանութիւնից յետոյ 1944ի Նոյ.ին յաջորդեց նրան իբրև Մեծն Բրիտանիոյ նախարարը Արեւելքում, նոյն թուականին Լոնդոնում լոյս ընծայած իր մէկ հետաքրքրական գրքոյկում նկատում էր.

«Այժմ ընդհանրապէս մոռացուած է, — խոստովանում էր հեղինակը, — թէ առաջին երկիրը, որ խախտեց 1919ի խաղաղութեան կարգադրութիւնը (սեթլման), Ճապոնը չէր, այլ՝ Թուրքիան»։***)

---

*) «Պատմ. Դիւանագիտութեան», հ. Գ., էջ 207:

**) «Պատմ. Դիւանագիտ.», հ. Գ., էջ 208:

***) **Սըր Էդ. Գրիգ** — «Բրիտանական արտաքին խաղաքաղաքականութիւնը», Լոնդոն, 1944, էջ 112:

Անդրադառնալով քէմալական յառաջացումին՝ հեղինակը վկայում էր, որ յոյները, որոնք «մի քանի զօրաբաժիններ ունէին Զաթալջայի գծի վրայ, արտօնութիւն խնդրեցին Պոլիսը գրաւելու (ուր թրքական զօրքեր գրեթէ չկային.—Ն.)», բայց, հակառակ անգլիացիների տուած համամտութեան, անկարող եղան այս ձեռնարկին անցնելու, որովհետեւ ֆրանսացիները, որոնք անջատ քաղաքականութիւն էին վարում թուրքերի հետ, դէմ էին այս ձեռնարկին։

Մուդրոսից այս կողմ ստեղծուած «անպատիւ կացութիւնը» Գրիգ բացատրում էր նաեւ նրանով, որ «Թուրքիոյ պարտութիւնից յետոյ նրան պարտադրուած պայմանները ընդհանրապէս a priori պայմաններ էին», իբրեւ հետեւանք այն բանի, որ այդ օրերին բուն Անգլիոյ մէջ արտաքին քաղաքականութիւնը հակընդդէմ ուժերի ձեռքը իբրև զէնք էր ծառայում ներքին հակամարտութեանց մէջ։*)

Այսպէս թէ այնպէս իրողութիւնն այն է, որ յաղթական Դաշնակիցները նահանջեցին պարտուած Թուրքիոյ առջեւ։

1922 Սեպտ. 23ին Անգլիա, Ֆրանսա և Իտալիա բանակցութեանց առաջարկով դիմեցին Էնկիւրի, Թուրքիան հրաւիրելով մի Խորհրդաժողովի, ուր պիտի լինեն պատուիրակները նաեւ Ճապոնի, Ռումանիոյ, Իւգոսլաւիոյ և Յունաստանի։

Դաշնակիցները խոստանում էին խաղաղութիւն կնքելուց յետոյ իրենց զօրքերը քաշել Պոլսից, Թուրքիոյ վերադարձնել Արեւելեան Թրակիան (Էդիրնէով միասին), եւ Թուրքերին առնել Ազգաժողովի մէջ։

---

*) Ibid., էջ 169:

Դաշնակիցները խոստանում էին, տակաւին Խորհրդաժողովը չաւարտած, յունական զօրքերը եւ Քաւեալ դէպի մի գիծ, որ կը ճշտուի դաշնակից հրամանատարութեան կողմից։

Այս վերջին հարցի կարգաւորումի համար 1922 Հոկտ. 3ին զինուորական խորհրդակցութիւն հրաւիրուեց Մուդանիոյ մէջ։

Թուրքերը անզիջող էին իրենց պահանջների մէջ։ Անգլիական զօրքերի ընդհ. հրամանատարը՝ Հարինգտըն՝ դիմելով Համեթի՝ ասում էր նրան.

«Մենք պիտի քաշուենք. Ձերդ Գերազանցութիւն, սակայն մենք ուզում ենք քաշուել պատուով»։ *)

Թուրքերը նախ խզում են բանակցութիւնները և ապա Հոկտ. 10ին կրկին վերսկսում։ Համաձայնութիւնը ստորագրւում է Հոկտ. 11ին, մի շարք առաւելութիւններ ապահովելով Թուրքիոյ իբրեւ յաղթականի։

Յոյն բանակի ծանր պարտութիւնը երկրում արձագանգում է պետական յեղաշրջումով. գահից հրաժարւում է Կոնստանդին թագաւորը, իսկ հինգ նախարարներն էլ ձերբակալւում եւ ենթարկւում են մահապատժի, ընդհ. հրամանատարի հետ միասին։ 1922 Հոկտ. 13ին Յունաստանը միանում է Մուդանիոյ զինադադարին։

Յունական պարտութիւնը տագնապ ստեղծեց նաև Անգլիոյ մէջ. 1922 Հոկտ. 19ին Լոյդ Ջորջը քաշուեց վարչապետութիւնից՝ իր տեղը զիջելով Բոնար Լոուի։ Արտ. գործոց նախարարութիւնը յանձնուեց լորդ Քըրզընի, որ արդէն վարում էր այդ նախարարութիւնը 1919ից սկսած։

---

*) «Պատմ. Դիւանագիտ.», հ. Գ., էջ 208։

Համաձայնութեան գալով Ֆրանսայի և Իտալիոյ հետ, Քըրզընը Լոզանի Խորհրդաժողովի գումարման ձեռնարկեց, այնտեղ թէ՛ Թուրքիոյ հետ հաշտութեան գործը գլուխ հանելու և թէ յարակից մի շարք հարցեր — Մերձաւոր Արեւելքի և Ռուսիոյ կապուած — կարգաւորելու համար։

Խորհրդաժողովին հրաւիրուած էին նաև Ռուսիա, Ճապոն, Ռումանիա, Իւգոսլաւիա, Յունաստան և Բուլգարիա (այս վերջինը՝ Ռուսիոյ պահանջով)։

Ուշագրաւ է Ռուսիոյ մասնակցութեան պարագան։

1922 Հոկտ. 27ին Անգլիոյ դիւանագիտական գործակատարը Մոսկուայում՝ Պիտերս՝ յանուն իր կառավարութեան մասնակցութեան հրաւէր ուղղելով Ռուսիոյ, նախազգուշացնում էր, որ Ռուսիա պիտի մասնակցի միայն «հողային և զինուորական հարցերով զբաղուող յանձնախումբ»ի աշխատութեանց, և այն էլ բացառաբար այն նիստերին, ուր պիտի քննուի Նեղուցների հարցը...

Այս էր Ռուսիոյ դիրքը Լոզանում...

Խորհրդային տեսակէտը լայնօրէն աշխարհի առջեւ արծարծելու համար, հրաւէր ստացած օրն իսկ, 1922 Հոկտ. 22ին, Լենինը տեսակցութիւն է տալիս «Observer» և «Manchester Guardian» թերթերի Մոսկուայի թղթակից Ֆարբմանին, որի այն հարցումին, թէ «ի՞նչ է ռուսական ծրագիրը Նեղուցների հարցի մէջ», Լենինը յայտարարում է.

«Նեղուցների նկատմամբ մեր ծրագիրը — առայժմ, ի հարկէ, մօտաւոր — իր մէջ պարունակում է, ի միջի այլոց, հետեւեալը։

«Առաջին՝ բաւարարում Թուրքիոյ ազգային ձգտումների։

«Երկրորդ՝ Նեղուցների փակում բոլոր ռազմանաւերի համար թէ՛ խաղաղութեան և թէ պատերազմի ժամանակ։ Այս — մերձաւորագոյն առեւտրական չէն է բոլոր պետութեանց, ոչ միայն նրանց, որոնց հողերը անմիջօրէն տարածւում են դէպի Նեղուցները, այլ և բոլոր միւսների։

«Երրորդ՝ Նեղուցների նկատմամբ մեր ծրագիրը պահանջում է — լիակատար ազատութիւն առեւտրական ծովագնացութեան համար»։ *)

Մեծ պետութեանց միջև տեղի ունեցած բարդ խաղերից յետոյ, 1922 Նոյ. 20ին, Լօզանում բացուեց Խորհրդաժողովը, մասնակցութեամբը Անգլիոյ, Ֆրանսայի, Իտալիոյ, Ճապոնի, Թուրքիոյ, Յունաստանի, Իւգոսլաւիոյ, Բուլգարիոյ, Ռումանիոյ և Ռուսիոյ (որի պատուիրակները Լօզան հասան ուշ, Նոյ.ի վերջերին)։

Ամերիկան միայն «դիտող»ներ ունէր, գլխաւորութեամբ դեսպան Չայլդի։

Խորհրդաժողովում անգլիական պատուիրակութիւնը գլխաւորում էր Բըրզընը, ֆրանսականը՝ Պուանկարէն, իտալականը՝ Մուսոլինին, Թրքականը՝ Իսմեթը, իսկ ռուսականը՝ Չիչերինը։

Խորհրդաժողովի առաջին «նստաշրջան»ը (մինչեւ խզումը) տեւեց 1922 Նոյ. 20ից մինչև 1923 Փետր. 4։

Նեղուցների Յանձնախմբի 1922 Դեկտ. 4ի նիստին խօսք առնելով՝ խորհրդային պատուիրակութեան նախագահը՝ Չիչերին՝ մի ընդարձակ ու ծրագրային ճառ է արտասանում, իր պետութեան տեսակէտները պարզելով քննութեան ենթակայ հարցերի մասին։

*) «Պատմ. Դիւանագիտ.», հ. Գ., էջ 211։

Չիչերինը խօսում է յանուն Ռուսիոյ, Ուկրայնայի և Վրաստանի, այսինքն այն հանրապետութեանց, որոնց սահմանները ողողւում են Սեւ ծովի ջրերով։

Ռուս պատուիրակութեան նախագահը յայտարարում է, որ ինքը պիտի ձգտի Նեղուցների հարցում ընդունելի դարձնելու հետեւեալ սկզբունքը.

«Առեւտրական ծովագնացութեան և խաղաղ ծովային հաղորդակցութեանց մշտատեւ ազատութիւնը Վոսփորում, Մարմարա ծովի մէջ և Դարդանելում պէտք է բացարձակապէս ապահովուած լինի և ենթակայ չլինի որեւէ սահմանափակումի։

«Խաղաղութեան պահպանումը Սեւ ծովում եւ ապահովութիւնը նրա ափերի, ինչպէս և խաղաղութեան պահպանումը Մերձաւոր Արեւելքում եւ ապահովութիւնը Պոլսոյ՝ պէտք է հաստատուն կերպով երաշխաւորուած լինեն, իսկ այս նշանակում է, որ Դարդանելը և Վոսփորը ինչպէս խաղաղութեան, այնպէս նաև պատերազմի ժամանակ տեւաբար փակ պէտք է մնան բոլոր երկրների պատերազմական եւ սպառազէն նաւերի ու նաև պատերազմական օդանաւերի համար, բացառութեամբ Թուրքիոյ»։ *)

Նեղուցների փակման կարեւորութեանը անդրադառնալով՝ Չիչերինը մատնանշում էր մասնաւորաբար Թարմագոյն դէպքը՝ Մուդրոսի զինադադարի պարագան, որով դաշնակից ռազմանաւերը արտօնուեցին Սեւ ծով մտնելու և գրաւելու ռուսական Օդեսա, Նիկոլաեւ, Խերսոն, Սեւաստոպոլ, Բաթում և այլ նաւահանգիստները։

Ռուս պատուիրակութեան նախագահը մատնա-

*) «Պատմ. Դիւանագիտութեան», հ. Գ., էջ 216։

նչում էր, որ Նեղուցների փակման հարցում նոյնանում են Ռուսիոյ և Թուրքիոյ շահերը, և իբրեւ ապացոյց բերում էր 1920 Յունուար 28ի Թրքական «Ազգային Ուխտի 4րդ յօդուածը, ուր առաջադրուած էր նոյն պահանջը։

Այնքան էր ջերմ Թրքական շահերի այս պաշտպանութիւնը Չիչերինի կողմից, որ Քըրզըն ուժ առաւ դիտել տալու, որ ռուս պատուիրակութիւնը կարծես խօսում է ոչ միայն Ռուսիոյ, Ուկրայնայի և Վրաստանի անունից, այլ և... Թուրքիոյ։

Ի հարկէ, պղատոնական չէր այս սէրը. Թուրքիոյ շահերը պաշտպանելով՝ Չիչերին միաժամանակ պաշտպանած էր լինում բուն իսկ Ռուսիոյ շահերը։

Մեծերը, հակառակ լինելով հանդերձ ռուսական տեսակէտներին, չպատասխանեցին Չիչերինին. չխօսեց անգամ Քըրզընը. առարկութիւններ բերին միայն փոքրերը՝ Ռումանիա և Բուլգարիա։

Ընդարձակ պատասխանով հրապարակ եկաւ Անգլիոյ արտ. գործոց նախարարը միայն Ցանձնախմբի Դեկտ. 6ի նիստին։

Ըստ Քըրզընի՝ Ռուսիա ձգտում է իր միահեծան տիրակալութիւնը հաստատել Սեւ ծովի վրայ, արգելք լինել որեւէ այլ պետութեան մասնակցութեանը Նեղուցների վրայ հաստատուելիք հակակշռի մէջ և այդ հակակշիռը վերապահել միայն ու բացառաբար Թուրքիոյ, որ պիտի լինի իրականին մէջ Ռուսիոյ զինուորական պահակը Նեղուցների գրոնների։

Այլ խօսքով՝ Ռուսիա նպատակ ունի, ըստ Քըրզընի, Սեւ ծովը վերածել ռուսական լճի եւ այնտեղ վարուել ինչպէս իր տանը մէջ, մինչ Անգլիա ձգտում է Նեղուցներում նոյն օրինավիճակը հաստատել, ինչ որ հաստատուած է Պանամայի, Սուէզի և Քիլի ջրանցքներում։

«Համաձայնական»ների ծրագիրը արծարծելով՝ Քըրզընն առաջարկում էր.

ա.— Լիապէս ազատ և բաց հռչակել Նեղուցները, օրուայ և գիշերուայ բոլոր ժամերին, առանց երբեք դրօշը նկատի առնելու և առանց սրեւէ տուրք կամ մաքս գանձելու ամէն կարգի ռազմանաւերի, օժանդակ պատերազմական նաւերի, ռազմական փոխադրանաւերի, օդանաւակիրների և օդանաւերի համար։

բ.— Առաւելագոյն քանակը ռազմանաւերի, որ որեւէ պետութիւն կարող է մտցնել Նեղուցներից՝ դէպի Սեւ ծով ուղղելու համար, աւելի ուժ պիտի չունենայ, քան ունի սեւծովեան հզօրագոյն տերմզի տէր պետութիւնը։

գ.— Պետութիւններից որեւէ մէկը միաժամանակ երեք ռազմանաւերից աւելի չի կարող մտցնել Սեւ ծով, պայմանով, որ այդ նաւերից միայն մէկը կարող է գերազանցել 10.000 տոնը։

դ.— Իսպառ քանդել Նեղուցների ամրութիւնները և այս ապազինուած շրջանում չունենալ ո՛չ մէկ ծովային կայան ու ո՛չ մէկ հաստատուն մարտկոցային սարքուածք։

ե.— Ապազինուած շրջանում հսկողութիւնը իրագործելու համար՝ միջազգային Ցանձնախումբ հաստատել, մասնակցութեամբը Ֆրանսայի, Անգլիոյ, Ճապոնի, Ռուսիոյ, Ամերիկայի, Թուրքիոյ, Յունաստանի, Ռումանիոյ, Իւգոսլաւիոյ եւ Բուլգարիոյ, նախագահութեանը տակ Թուրքի։

Այս ծրագրին թեր են արտայայտուում Ֆրանսա և Իտալիա, դէմ է խօսում Չիչերին։ *)

---

*) Իր ճառից մէկ կարեւոր հատուած բերուած է գրքոյկիս 20—21 էջերի վրայ։

Յանձնախմբի Դեկտ. 8ի նիստին հրապարակ է գալիս Ըմեթը և յայտարարում հետեւեալը.

ա.— Թուրքիա միշտ յարգած է Նեղուցների մասին եղած միջազգային դաշինքը եւ երբեք խախտած չէ այլ պետութեանց շահերը։

բ.— Թուրքիա յօժար է Նեղուցներից ազատ անցք տալու առեւտրական նաւերին ուղեկցող թեթեւ ռազմանաւերին։

գ.— Յօժար է ազատ հոչակելու Նեղուցները առեւտրական տորմի համար։

դ.— Յօժար է Նեղուցների ապաքինման, բացառութեամբ Վոսֆորի,*) պայմանով, որ երաշխաւորուի ապահովութիւնը Նեղուցների, Պոլսոյ եւ Մարմարայի։

Ըմեթի ճառից պարզւում է ռուս պատուիրակութեան համար, որ որոշ համաձայնութիւն է գոյացած Անգլիոյ եւ Թուրքիոյ միջև։

Նոր եւ ընդարձակ ճառով հրապարակ գալով եւ առարկելով Ըմեթի և յատկապէս Քըրզընի դէմ, Չիչերին պնդում էր իր տեսակէտների վրայ, պահանջելով, մասնաւորաբար, Նեղուցների փակումը բոլոր պետութեանց ռազմանաւերի համար, որ ասել է՝ նաև Ռուսիոյ։

Ուրիշների մուտքը դէպի Սեւ ծով արգելելու համար, Ռուսիա գնում էր այսքան մեծ զոհողութեան, այսինքն յօժարում էր իր ռազմանաւերը բանտուած պահել սեւծովեան նաւահանգիստներում եւ զուրկ մնալ հնարաւորութիւնից իր ծովային ուժերը փոխադրելու դէպի Բալտեան ծով և կամ Մայրագոյն Արեւելք (ռուսական)։

Հարցի լուծման համար Քըրզընն առաջարկում է հիմ առնել Թրքական ծրագիրը, միաժամանակ

*) Դարդանելի մասին խօսք չկայ...

գնտրելով մասնագէտներից բաղկացած մի Յանձնախումբ. ծրագրից բխող ռազմա-տեքնիկական խընդիրները լուսաբանելու համար։

Ռուս ներկայացուցիչը այս Յանձնախմբի մէջ չի առնում, Քըրզընի այն առարկութեամբ, թէ Յանձնախմբի քննութեանը ենթակայ պիտի լինեն միայն Դաշնակիցներին և Թուրքիոյ վերաբերող խնդիրները։

Այս իրաւազրկումի դէմ ուղղուած ռուս պատուիրակութեան բողոքը մնում է անհետեւանք։

Կացութեան ծանրութիւնը նշմարելով, խորհրդային պատուիրակութիւնը գնում է նոր զիջումների և 1922 Դեկտ. 18ին Յանձնախմբի հինգերորդ նիստին ներկայացնում իր նոր առաջարկները։

Ըստ այս նոր ծրագրի՝ Ռուսիա յօժարում էր.

ա.— Լիազօրել Թուրք կառավարութիւնը՝ բոլորովին արտակարգ դէպքերում եւ յատուկ նպատակների համար թոյլ տալու Նեղուցներից թեթեւ ռազմանաւերի անցքը, բացառութեամբ ընդծովեաների։

բ.— Լիազօրել Թուրք կառավարութիւնը՝ անցքի նման արտօնութիւն տալու նաև պատերազմի ժամանակ, երբ Թուրքիան պատերազմիկ չէ, եւ երբ ռազմանաւերը (թեթեւ) պատկանում են չեզոք պետութեան։

գ.— Իսկ երբ պատերազմիկ է Թուրքիան՝ ռազմանաւերի անցքը Նեղուցներից ենթակայ է մնում միշտ բացառաբար Թուրքիոյ կամքին։

Խորհրդային այս նոր առաջարկները, հակառակ իրենց հաշտարար բնոյթին, Խորհրդաժողովը, պընդումովը լորդ Քըրզընի, իր 1922 Դեկտ. 19ի նիստին մերժում է քննութեան առնել։

Անշուշտ — եւ անպատշաճ — բանակցութիւններով Անգլիա եւ Թուրքիա զրեթէ համաձայնած էին Նեղուցների հարցի շուրջ։

1923 Փետր. 1ին, երբ Խորհրդաժողովը քննութեան էր առնում Քըրզընի առաջարկները, խորհրդային պատուիրակութիւնը հրապարակ եկաւ իր վճռական բողոքով, յայտնելով, որ առանց Ռուսիոյ, Ուկրայնայի և Վրաստանի համաձայնութեան չի՛ կարող վճռուել Նեղուցների հարցը։

Ինչպէս յայտնի է, ճիշտ այդ օրերին յարաբերութիւնները Թուրքիոյ և Դաշնակիցների միջեւ սուր կերպարանք ստացան տարբեր հարցերի շուրջ. Անգլիան ունէր Մոսուլի խնդիրը, Ֆրանսան՝ իր առնելիքի հարցը Թուրքիայից (պահանջում էր պարտքի վճարումը կատարել ոսկիով), Իտալիան՝ ամենէն իրաւազրկուածը Դաշնակիցների մէջ՝ եռազում էր գէթ այս անգամ կրակից մի քիչ շագանակ հանել իրեն համար ուրիշների ձեռքերով։

Տարբեր ակնկալիքներով երեք դժգոհները միացան և 1923 Յունուար 1ին յանուն Անգլիոյ, Ֆրանսայի և Իտալիոյ վերջնագրային առաջարկ ներկայացրին Թուրքիոյ՝ նրանից պահանջելով Նեղուցների մասին մշակուած համաձայնութիւնը ստորագրելու։

Պատասխանի համար տրւում էր հինգ օր։

Մինչեւ Փետր. 4 որեւէ պատասխան չառնելով (հակառակ անպաշտօն ձեւով եղած միջամտութեանց փորձերին, մանաւանդ ամերիկացիների կողմից)՝ անգլիացիները և ֆրանսացիները ձգեցին Լօզանը և մեկնեցին։

Խորհրդաժողովը ձախողած էր։

Նոր բանակցութիւնները վերակսուեցին նոյն Լօզանի մէջ, խզումից աւելի քան երկու ամիս յետոյ, 1923 Ապրիլ 9ին։

Այս անգամ խորհրդային պատուիրակութիւնը մասնակցութեան հրաւէր իսկ չստացաւ Խորհրդա-

ժողովից, հակառակ այն փաստի, որ, Փետր. 7ին Լօզանից մեկնելով, պատուիրակութիւնը յատուկ գրութեամբ նախազգուշացրած էր Խորհրդաժողովի քարտուղարութիւնը եւ խնդրած՝ նոր Խորհրդաժողովի վայրի եւ թուականի մասին լուր տալ իրեն Հռոմի խորհրդային դեսպանի՝ Վորովսկիի միջոցով։

Ի պատասխան այս վերջինի բողոքին, ուղղուած քարտուղարութեան, թէ ինչո՞ւ խորհրդային պատուիրակութիւնը մասնակցութեան հրաւէր ստացած չէ, քարտուղարութիւնը յայտնում է, որ նոր Խորհրդաժողովին Նեղուցների հարցը այլեւս քննութեան պիտի չառնուի, իսկ ռուս պատուիրակութիւնը հրաւիրուած չէ, որովհետեւ նրա նախագահը՝ Չիչերին՝ նախորդ Խորհրդաժողովի 1923 Փետր. 1ի նիստին յանուն Ռուսիոյ, Ուկրայնայի և Վրաստանի յայտարարած է, որ իրենք պիտի չստորագրեն Նեղուցների շուրջ կայացած համաձայնութիւնը։

Քարտուղարութիւնը ուզում էր տեղեկանալ, թէ ռուս պատուիրակութիւնը մնո՞ւմ է արդեօք իր նախկին տեսակէտին։

Ռուս դեսպանը՝ Վորովսկիյ՝ իտալական կառավարութեան խողովակով բողոքում է իր երկրի նը-կատմամբ կիրառուած այս քմահաճ մեկուսացումի դէմ, յայտարարելով, որ խորհրդային պատուիրակութիւնը երբեք ասած չէ, թէ պիտի չստորագրի Նեղուցների մասին եղած համաձայնութիւնը։

Հակառակ այս նահանջին՝ Վորովսկիյ մինչեւ Ապր. 27 որեւէ պատասխան չի առնում, ըստ երեւոյթին այն ձեւական հիմունքով, որ հարցումը իրեն՝ Վորովսկիին ուղղուած էր Խորհրդաժողովի քարտուղարութեան կողմից, մինչ ինքը իր բողոք-պատասխանը հասցէագրած էր Խորհրդաժողովի անգամ-

ներից իտալական կառավարության ներկայացուցչին, բայց ոչ Բարոնի կառավարության։

Պատասխան չառնելով՝ Վորովսկիյ Ապր. 27ին ինքը անձամբ գալիս է Լոզան, ուր տեղեկանում է, որ Բերլինի զուիցերիական ներկայացուցչությունը Մոսկուայից մեկնած խորհրդային դիւանագիտական սուրհանդակին Լոզան անցնելու վիզէ չէ տուած։

Բացատրության համար Զուիցերիոյ արտ. գործոց նախարարությունը դիմելով՝ այս վերջինը Վորովսկիին խորհուրդ է տալիս Խորհրդաժողովի գլխաւոր քարտուղարին դիմելու։

Վորովսկիյ անմիջապէս դիմում է քարտուղարին՝ խնդրելով միջադէպը հարթել։

Լոզանից հեռախօսով յայտնում են ռուս դեսպանին, որ իրեն չեն պատասխանի, մինչեւ որ Խորհրդային Ռուսիան Խորհրդաժողովի գլխաւոր քարտուղարության 1923 Ապր. 12 նամակի պատասխանը չտայ։

Զուր մի քանի օր եւս սպասելով՝ Վորովսկիյ, իբրեւ բողոք, այս ամբողջ նամակագրությունը Ապր. 30ին հրապարակում է մամուլի մէջ։

Խորհրդաժողովի քարտուղարությունը միայն 1923 Մայիս 2ին յայտնում է Վորովսկիին, որ նրա Ապր. 27 թուակիր նամակը չի կարող պատասխան նկատել այն հարցումին, որ ուղղուած էր իրեն՝ քարտուղարության՝ Ապր. 12 նամակով։

Այլ խօսքով՝ խորհրդային պատուիրակության մուտքը Լոզան թոյլատրելուց առաջ Խորհրդաժողովը ուզում էր ստոյգ հաւաստիք ունենալ այն մասին, որ պատուիրակությունը Լոզան է գալիս ոչ թէ բողոքի ճառ արտասանելու, այլ Նեղուցների շուրջ արդէն գոյացած համաձայնությունը ստորագրելու և վաւերացնելու։

Ի տես այս բոլորի, Կրեմլը հրահանգում է իր դեսպանին ձգել Լոզանը և վերադառնալ Մոսկուա։

Ուր ամիս տեւող բանակցությունների յետոյ, 1923 Յուլիս 24ին, ստորագրում է, վերջապէս, Լոզանի համաձայնությունը։

Ահա այդ համաձայնության բացառաբար Նեղուցներին վերաբերող հատուածի հիմնական կէտերը։

ա.— Խաղաղության թէ պատերազմի ժամանակ Նեղուցները բաց պէտք է մնան առեւտրական և ռազմական — ծովային և օդային — նաւերի համար։

բ.— Վոսփորը և Դարդանելը պէտք է ապազինուեն, և նրանց ափերին կառուցուած ամրությունները պէտք է քանդուեն։

գ.— Առաւելագոյն քանակը ռազմա-ծովային ուժերի, որ որեւէ պետութիւն պիտի մտցնի Նեղուցները այնտեղից դէպի Սեւ ծով ուղղելու համար, աւելի ուժ պէտք չէ ունենայ, քան ունի սեւծովեան հզօրագոյն տորմիղին տէր պետությունը։

դ.— Պետություններից որեւէ մէկը միաժամանակ երեք ռազմանաւերից աւելի չի կարող մտցնել Սեւ ծով, եւ այդ նաւերից միայն մէկը իր տակառաչափով կարող է գերազանցել 10.000 տոնը։

ե.— «Նեղուցների Յանձնախումբ» անուանուած Գոլսոյ մէջ հաստատուում է միջազգային մի յանձնախումբ, անդամակցությամբ Ֆրանսայի, Մեծն Բրիտանիոյ, Իտալիոյ, Ճապոնի, Բուլգարիոյ, Յունաստանի, Ռումանիոյ, Ռուսիոյ (Ուկրայնան և Վրաստանը չկան), Իւգոսլաւիոյ և Թուրքիոյ։ *)

---

*) Մատնանշենք մի փոքրիկ, բայց ուշագրաւ կէտ եւս. Լոզանի որոշումով՝ «Գէօրէնթ եւ «Բրեսլաուս», որոնք առաջին պատերազմին

Հետագային, եթէ Ամերիկան միանար Լոզանի դաշնագրին, իրաւունք պիտի ունենար Ցանձնախմբին անդամակցելու։

Այսպիսով, հակառակ Ռուսիոյ կողմից Թուրքիոյ ընծայուած մեծ աջակցութեան — թէ՛ միջնեռ Լոզան եւ թէ Լոզանում — Թուրքիա, այնուամենայնիւ, միացաւ Անգլիոյ եւ ստորագրեց մի համաձայնութիւն, որ ուղղուած էր Ռուսիոյ կենսական շահերի դեմ։

1923 *Յուլիս 24ին Լոզանի համաձայնութիւնը ստորագրեցին Մեծն Բրիտանիա, Ֆրանսա, Իտալիա, Ճապոն, Յունաստան, Ռումանիա և Իւգոսլաւիա՝ մէկ կողմից, իսկ Թուրքիա՝ միւս։*

Նոյն օրն իսկ, Յուլիս 24ին, դաշնագրին միացան նաև Բելգիան և Պորտուգալիա։

Ստորագրումից մի քանի օր առաջ, Յուլիս 17ին, Խորհրդաժողովի քարտուղարութիւնը հեռագրով տեղեկացնում էր Մոսկուա, որ նեղուցային համաձայնութիւնը պիտի ստորագրուի Յուլիս 24ին, միաժամանակ յայտնելով, որ Ռուսիա եթէ իր ուժի մէջ չի պահում իր պատուիրակութեան 1923 Փետր. 1ին արած յայտարարութիւնը Խորհրդաժողովում, ապա համաձայնութիւնը պէտք է ստորագրի կա՛մ բոլոր պետութեանց հետ միասին, Յուլիս 24ին, Լոզանում, և կամ ամենաուշը մինչեւ Օգոստ. 14ը՝ Պոլսում։

նենգօրէն մտած էին թրքական ջրերը եւ առանց դաշնակից պետութեանց համաձայնութեան դարձած թրքական ռազմանաւեր, նկատուեցին թրքական սեփականութիւն. Գերմանիան այլեւս չէր կարող ի էնդիր այդ ռազմանաւերի տուէէ պահանջ դնել ո՛չ թուրք կառավարութեան եւ ոչ էլ թուրք երկրի բաղաքացիներից...

Խորհրդաժողովը կարծես եկաւ թէ՛ զոյգ ռազմանաւերին եւ թէ նրանց Սեւ ծով մտցնողներին ասելու այն, ինչ որ նման դէպքերում սովորաբար ասում է մեր ժողովուրդը — «վարձքերնիդ կասա՛ռ»...

Կատարուած փաստի առջեւ գտնելով իրեն եւ իրական վախ ունենալով, որ՝ դուրս մնալով «Նեղուցների Ցանձնախումբից՝ կարող է բոլորովին մեկուսացումի մատնուել, Ռուսիա յօժարեց ստորագրել հետեւեալ վերապահանքով.

*«Եթէ համաձայնութեան կիրառման փորձը ցոյց տայ,— ասուած էր ռուսական պատասխանի մէջ,— որ այդ համաձայնութեամբ բաւականաչափ պաշտպանուած չեն առեւտրական շահերը և ապահովութիւնը խորհրդային հանրապետութեանց, ապա ստիպուած պիտի լինենք դաշինքի գործադրութիւնը առկախելու մասին խնդիր յարուցանել»։**)

*Ստորագրութիւնը տեղի ունեցաւ, Ռուսիոյ առաջարկով, ոչ թէ Պոլիս, այլ Հռոմ, 1923 Օգոստ. 14ին։***)

Այսքան երկար կանգ առանք Լոզանի դաշնագրի վրայ, որովհետեւ խորհրդային շրջանի ամենէն կարեւոր վաւերաթղթերից մէկն է այդ դաշինքը Նեղուցների մասին։

Ռուսիոյ դռները գոցում եւ բացում էին, առանց իր կարծիքը մինչեւ իսկ լրջօրէն հաշուի առնելու։

Լոզանում Ռուսիա աւելի կշիռ չունէր, քան ունէր փոքր պետութեանց մէջ փոքրագոյնը։

Մեզ նման չէր անշուշտ, բայց, համեմատութիւնները պահելով հանդերձ, խորքին մէջ գրեթէ մեզ բախտակից էր։

---

*) Լոզանի մասին տե՛ս «Պատմ. Դիւանագիտութեան», հ. Գ., էջ 204—231։

) Անցոգակի մատնանշենք, որ Խորհրդային կառավարութիւնը, հիշե է, **ստորագրած է Լոզանի պայմանագիրը, սակայն խորհրդային պետութիւնը ռամմանագրօրէն **վաւերացրած** չէ այդ դաշինքը։

Անօրինակ դաժանութեամբ, իրաւ է, Լոզանում Հայ Դատը թաղեցին, բայց ի վերջոյ այդպէս վարուեցին նաև Ռուսիոյ հետ։

Առաջին պատերազմին ի խնդիր դաշնակից դատի 15½ միլիոնոց մի բանակ ռազմաճակատ հանելով՝ Ռուսիա պատերազմից դուրս եկած էր ցնցուած և ուժաքամ, Ֆուստի և իրեն այլեւս հայտնի առնող չկար։

Մոսկուայից մեկնած ռուս դիւանագիտական սուրհանդակին մինչև իսկ վիզէ չէին տալիս՝ Լոզան անցնելու համար...

Այն պետութիւնը, որ տակաւին մի քանի տարի առաջ դաշնակից կառավարութիւնների կողմից վեց անգամ կրկնուած վաւերաթղթերով պիտի ստանար Նեղուցները, Պոլիսը, Մարմարան, կարեւոր հողաշերտեր այս ջրերի ասիական եւ եւրոպական ափերին, յարակից կղզիներով միասին, իբրեւ իր անդառնալի սեփականութիւնը, այսօր իր դիրքին և անուան անվայել պայմաններում գալիս էր վաւերացնելու մի դաշինք, որ փաստօրէն ընդունուած էր առանց իր մասնակցութեան եւ իրականին մէջ ի՛ր դէմ ուղղուած էր։

Լոզանը Անգլիոյ յաղթանակն էր, բայց ոչ նաև իր դաշնակիցների՝ Ֆրանսայի և Իտալիոյ։

Իր խախտուած դիրքերը Միջերկրականում եւ Բալկաններում վերահաստատելու համար՝ Ֆրանսան անջատաբար բարեկամութեան դաշինք կնքեց Թուրքիոյ հետ 1926 Մայիս 30ին։

Ֆրանսայի այս քայլին Մեծն Բրիտանիա պատասխանեց անգլեւթուրք բարեկամութեան նոր դաշինքով, կնքուած Ֆրանսականից անմիջապէս վերջ, 1926 Յունիս 5ին։

Իսկ Իտալիան, որ իրեն նկատում էր Միջերկրականի դերին, մինչ ուզում էր նրա բացարձակ տիրակալը դառնալ, այդ օրերին «ութ միլիոն սուինների անունից ոչ թէ բարեկամական զգացումներ էր շռայլում Թուրքիոյ հասցէին, այլ յայտնապէս ապառնալիքներ էր տեղում նրա դէմ՝ իր աշխարհատենչ հայեացքը դէպի Արեւելք ուղղելով։

Այս դաշինքներն ու տենչերը իրենց մէկ ինչոր ծայրով միշտ ուղղուած էին Մոսկուա. Ռուսիոյ դէմ։

Իր յուշերի մէջ խօսելով Ֆրանսայի արտ. գործոց նախարար Բրիանի հետ ունեցած գաղտնի տեսակցութեան մասին, Ֆրանս-գերմանական սահմանին մօտ Տուարի կոչուած վայրում, 1926 Սեպտ. 27ին, Շտրեզեմանը վկայում էր, որ այդտեղ, այդ գաղտնի հանդիպումին, խօսք դարձած է նաև այն մասին, որ Ուկրայնան և Վրաստանը ուզում են անջատուել Ռուսաստանից, «մասնաւորաբար այս երկու երկրները ուզում են լինել անկախ»...*)

Սակայն անգործ նստած չէր նաև Ռուսաստանը։ Թէ՛ այս խաղերին հակազդելու և թէ իր խախտուած դիրքը Արեւելքում վերահաստատելու համար, մանաւանդ Լոզանից յետոյ, Ռուսիա 1925 Դեկտ. 17ի բարեկամութեան դաշինքով արդէն կապուած էր Թուրքիոյ։**)

Ինչպէս յայտնի է, 1927 Մայիս 12ին Անգլիոյ ներքին գործոց նախարարի հրահանգով անակնկալաբար խուզարկուեց անգլեւխորհրդային բաժնե-

*) «Պատմ. Դիւան.», հ. Գ., էջ 353:

**) Աւելի ուշ, 1929 Այր. 1ին, Ռուսիա բարեկամութեան մի նոր դաշինքով դարձեալ կապուեց Թուրքիոյ: Նոյն տարուայ Դեկտ. 17ին ստորագրուեց 1925ի դաշնադրութեան երկարաձգման պրոտոկոլը: Այս այն դաշինքն է, որ 1945 Մարտ 19ին, Եալտայի խորհրդաժողովից յետոյ, Խ. Միութիւնը չեղեալ հռչակեց:

տիրական ընկերակցութեան՝ «Արկոս»ի չէնքը Լոնդոնում։

1927 Մայիս 27ին Անգլիա խզեց իր առեւտրական եւ դիւանագիտական կապերը Ռուսիոյ հետ։

Եւրոպական 24 ազգերից եւ ոչ մէկը, սակայն, որոնք նոյնպէս առեւտրական և դիւանագիտական յարաբերութեանց մէջ էին Ռուսիոյ հետ, Անգլիոյ օրինակին չհետեւեց։

Մինչ մէկ կողմից այսպէս լարւում էին պետութեանց յարաբերութիւնները, միւս կողմից խաղաղասիրական ինչ-որ ձիգեր էին կատարւում։

1929 Յուլիս 24ին ուժի մէջ մտաւ Բրիան-Կելլոգ Ուխտը (կնքուած 1928 Օգոստ. 27ին), որով պետութիւնները հրաժարւում էին պատերազմից՝ իբրև ազգային քաղաքականութեան միջոցից։

Յուլիս 24ին 44 պետութիւններ արդէն փարած էին այս Ուխտին, մէջը հաշուելով նաև Ռուսիան։

Ուխտը ուժի մէջ հռչակուելուց յետոյ, նրա հեղինակներից Արիստիդ Բրիան՝ Ֆրանսայի արտ. գործոց նախարարը՝ յատուկ յիշատակագրով դիմեց Եւրոպայի 27 պետութեանց, առաջարկելով բոլորի մասնակցութեամբ «Եւրոպական Դաշնակցային Միութիւն» ստեղծել։

Այս 27 պետութեանց մէջ չկար Ռուսիան, այն երկիրը, որի եւրոպական հողամասը (առանց ասիականը հաշուելու) կազմում էր բուն Եւրոպայի 45%ը։ Ռուսիա հրաւիրուեց աւելի ուշ, միայն տնտեսական գործակցութեան խնդիրների քննութեանը մասնակցելու համար։

Համ-Եւրոպա ստեղծելու ձիգերը անցան անպտուղ. տարբեր նկատումներով Անգլիա, Գերմանիա եւ Իտալիա դէմ դուրս եկան այդ ծրագրին։

Դէպքից դէպք ծանրանում էր մթնոլորտը քաղաքական աշխարհում։

1933 Յունուար 31ին Հիտլերն իշխանութեան եկաւ Գերմանիոյ մէջ։

1933 Մարտ 27ին Ճապոնը քաշուեց Ազգաժողովից։

1933 Սեպտ. 2ին Հռոմում ստորագրուեց իտալեւ-խորհրդային «բարեկամութեան, ոչ-յարձակման եւ չեզոքութեան ուխտ»ը։ Արժանի է յիշատակութեան, որ «բարեկամութիւն» բառը կցուում էր դաշինքին Մուսոլինիի յատուկ խնդրանքով։

1933 Հոկտ. 14ին Ազգաժողովից քաշուեց նաև Գերմանիան։

1934 Փետր. 9ին Աթէնքի մէջ Յունաստան, Ռումանիա, Թուրքիա և Իւգոսլաւիա ստորագրեցին «Բալկանեան Ուխտ»ը։

1934 Յուլիս 25ին Վիեննայում սպանուեց Աւստրիոյ դիկտատորը՝ Դոլֆուս։

1934 Սեպտ. 15ին Ազգաժողովին անդամակցող 30 երկրներ դիմեցին Մոսկուա, խնդրելով Ռուսիոյ՝ իր անդամակցութիւնը բերել ժրնեւեան Հաստատութեան, յանուն խաղաղութեան գործի։

Ռուսիա ընդունեց այս առաջարկը, եւ Լիգայի Ընդհանուր Ժողովի 1934 Սեպտ. 18ի նիստի որոշումով — ընդդէմ Հոլանդայի, Պորտուգալիայի և Զուիցերիոյ ձայների — Ռուսիան Ազգաժողովի անդամ հռչակուեց, միաժամանակ մնայուն աթոռ ստանալով նրա Խորհուրդի մէջ։

1934 Հոկտ. 9ին Մարսէյլի մէջ սպանուեցին Իւգոսլաւիոյ Աղեքսանդր թագաւորը և Ֆրանսայի արտ. գործոց նախարար Բարտուն։

1935ի Հոկտ. 4ին սկսուեց իտալեւ-հապեշ պատերազմը։

1935 Յունուար 13ի հանրաքուէով Սաարի շրջանը անցաւ Գերմանիոյ։

1935 Մարտ 16ին Գերմանիա հրաժարուեց Վերսայլի դաշնագրի զինուորական պարտադրանքներից։

1935 Մայիս 2ին ստորագրուեց Ֆրանկո-խորհրդային փոխադարձ օգնութեան ուխտը։

Նոյնանման ուխտ ստորագրուեց Ռ. Մոսքուեան և Չեխոսլովակիոյ միջև 1935 Մայիս 16ին։

1936 Մարտ 7ին գերման զօրքերը գրաւեցին Հռենոսի շրջանը։

1936 Յունուար 15ին Լոնդոնում գումարուեց մեծ պետութեանց ծովային խորհրդաժողովը՝ որոշ չափ սահմանելու համար պետութեանց ծովային սպառազինումի համար։

Այս խորհրդաժողովը վերջացաւ ձախողանքով։

Պատմական այս մի քանի դէպքերը հապճեպով յիշատակեցինք՝ լոկ ընթերցողի յիշողութեանը մէջ թարմացնելու համար քաղաքական այն մթնոլորտը, որի մէջ Լոզանի նեղուցային համաձայնութեան վերաքննումի հարցը ծագեց։

Աշխարհը փորձ դիւանագիտութեան գծած յարդարուն և կատարուն ճամբաներով անդանդաղ ընթանում էր դէպի պատերազմ։

Ազգերը հեւինեւ վիթխարի գումարներ էին վատնում սպառազինումի վրայ։

Այս մեծակշիռ իրազարձութեանց կապակցութեամբ՝ կրկին անգամ հրապարակ եկաւ միջազգային քաղաքականութեան մեծագոյն հարցերից մէկը։

Մեր խօսքը — Նեղուցների մասին է։

Օգտուելով բարենպաստ պայմաններից՝ Թուրքիա նախաձեռնարկ եղաւ հարցի վերարծարծման, նպատակ ունենալով գերիշխան տէրը դառնալ Նեղուցների և կրկին պողպատել Ջրային այդ կարեւորագոյն ճամբաները։

Արդէն 1935ի վերջաւորութեան, իտալեհապէշ պատերազմի կապակցութեամբ, Անգլիա ձեռնարկած էր սերտ բարեկամութեամբ Թուրքիոյ կապուելու։

Կար այն վախը, թէ Անգլիա և Իտալիա կարողեն պատերազմի բռնուել Միջերկրականում։

Օրէցօր ամրանում էր «Առանցք»ը (Բերլինի եւ Հռոմի միջև)։

Անգլեւիտալ պատերազմի մէջ եթէ Գերմանիա օգնէր Իտալիոյ՝ այդ դէպքում մի զգալի չափով Ֆրանսա իր արժէքը պիտի կորցնէր Անգլիոյ համար, որովհետեւ ռազմապէս, կամայ թէ ակամայ, պիտի կապուէր արեւմտեան ճակատին։

Այս պայմաններում բացառիկ արժէք էր ստանում Թուրքիան իր ծովակայաններով արեւելեան Միջերկրականում, իր ռազմախարիսխներով, իր Նեղուցներով, իր գրաւած աշխարհագրական դիրքով, քաղաքական իր մեծ կշիռով Բալկաններում և իր բանակով։

Իր հերթին նաև Թուրքիա մեծապէս չահագրգռուած էր Անգլիոյ բարեկամութիւնը չահելու, որովհետեւ Անգլիոյ հաւանական թշնամին՝ Իտալիան իրական թշնամին էր Թուրքիոյ, այն երկիրն էր, որի հայեացքները միշտ յառած էին մնում դէպի Արեւելք, դէպի Թրքական հողերը։

Հասարակաց թշնամին բարեկամ էր դարձրած երկու երկրներ՝ Անգլիա և Թուրքիա։

Այս բարեկամութեան արտայայտութիւնն էր այն «Հեռագրագրեն համաձայնութիւն»ը, որ 1935ի Դեկտ.ին Անգլիա կնքեց Թուրքիոյ հետ։

Քիչ վերջ նոյնանման համաձայնութիւններ Անգլիա կնքեց նաև Յունաստանի և Իւգոսլաւիոյ հետ։

Այս համաձայնութիւններով կողմերը փոխադարձ օգնութիւն էին խոստանում իրարու Միջերկրականի մէջ այն դէպքում, երբ Իտալիա յարձակողականի անցնի։

Պանը յարմարագոյնը նկատելով՝ 1936 Ապր. 10ի ծանուցագրով Թուրքիա դիմեց Նեղուցների համաձայնութիւնը ստորագրող պետութեանց, առաջարկելով վերանայնութեան առնել Լօզանի դաշինքը։

Բոլոր պետութիւնները, մէջը հաշուելով նաև Ռուսիան, տուին իրենց համաձայնութիւնը, բացառութեամբ Իտալիոյ, որ դժգոհ մնացած էր իտալեհապէշ պատերազմի ժամանակ իր նկատմամբ կիրարկուած տնտեսական պատժամիջոցներից (կիրարկողների մէջ էր նաև Թուրքիան). Իտալիան դժգոհ էր նաև «ջենտլմէն համաձայնութիւն»ներից՝ այս վերջինները նկատելով իր դէմ ուղղուած։

Ուշագրաւ էր նաև Ռուսիոյ դիրքը։

Լօզանի դաշնագրով Նեղուցների փաստական տէրը դարձած էր Անգլիան՝ այն օրերին աշխարհի հզօրագոյն ծովային ոյժը։

Նեղուցների ափերին բազմելով՝ Անգլիա այնտեղ ուժեր հաւասարակշռող չէր, այլ ինքն իսկ հզօր և ինքնանկախ ոյժ էր։

Այլ էր Թուրքիոյ պարագան, Անգլիոյ բաղդատմամբ մի թոյլ ու տատանուող ոյժ, որ դիւրութեամբ կարող էր ջեզոք մնալ որոշ զինաթախումների ժամանակ, իսկ որոշ դէպքերում էլ կարող էր մինչև իսկ Ռուսիոյ բարեկամ դառնալ։

Ընտրութեան հարց չկար Ռուսիոյ համար. եթէ ինքը չէ՝ Նեղուցների տէրը, ապա ամէն տեսակէտից նախընտրելի է, որ նրանց տէրը Թուրքիան լինի, բայց երբեք Անգլիան, այս կամ այն քղզի տակ։

Հարցի վերաքննութեան համար հրաւիրուած խորհրդաժողովը բացուեց Մոնտրէոյի մէջ (Զուիցերիա), 1936 Յունիս 22ին։

Վիճաբանութիւնները բուռն կերպարանք առան գլխաւորաբար երկու հիմնական հարցերի շուրջ.

Առաջին.— Արտօնե՞լ արդեօք սեւծովեան պետութեանց ռազմանաւերին՝ ազատօրէն Սեւ ծովից դուրս գալու։

Երկրորդ.— Արտօնե՞լ արդեօք այլ պետութեանց ռազմանաւերին՝ ազատօրէն Սեւ ծով մտնելու։

Իրարու դէմ ճակատած էին առաւելաբար երկու երկրներ՝ Անգլիա և Ռուսիա։

Անգլիա, ընդունելով հանդերձ, որ անհրաժեշտ է որոշ պայմաններ սահմանել ռազմանաւերի մուտքի համար դէպի Սեւ ծով, միաժամանակ, այնուամենայնիւ, պնդում էր, որ այս պայմանները պէտք է սահմանել անխտրաբար բոլորի համար. այլ խօսքով պահանջում էր, որ պետութիւնները — սեւծովեան և ոչ-սեւծովեան — այս հարցում դրուեն նոյնանման պայմանների մէջ. երկրորդ՝ այն տեսակէտն էր պաշտպանում, որ Սեւ ծովը լիճ չէ, այլ բաց ծով, ազատօրէն մատչելի բոլորին, այնտեղ թէ՛ ռազմափորձեր կատարելու և թէ ձուկ որսալու համար...

Այլ տեսակէտ էր պաշտպանում Ռ. Միութիւնը. մատնանշելով այն փաստը — յամառ և անուրանալի — որ սեւծովեան պետութիւնները արտաքին աշխարհին՝ Միջերկրականին և ովկիանոսներին կապուելու միայն մէկ ճանապարհ ունեն՝ Նեղուցները, եւ որ այդ պետութեանց համար Սեւ ծովը իրենց տունն է, իրենց հողերի շարունակութիւնը, բայց միայն ջրային կերպարանքով, Ռուսիան պնդում էր, որ սեւծովեան պետութեանց ծովային ուժերի ելքը

Սեւ ծովից դէպի բաց աշխարհ, ուրիշների բաղդատմամբ, աւելի նոյնատեսակ պայմանների մէջ դրուի, մինչ, ընդհակառակն, ուրիշների ծովային ուժերի մուտքը դէպի Սեւ ծով, բաղդատմամբ սեւ-ծովեան պետութեանց, դրուի աւելի սեղմ պայմանների տակ։

Այս Խորհրդաժողովին Ռուսիա չէր պահանջում, որ այլ պետութեանց ռազմածովային ուժերի մուտքը իսպառ արգելուի դէպի Սեւ ծով. նրա միակ պահանջն էր, որ այս իրաւունքը խստօրէն սահմանափակուի։

Ուշադրաւ էր Ճապոնի դիրքը այս Խորհրդաժողովի մէջ. մօտաւոր ապագային, ըստ երեւոյթին, հաւանական նկատելով որեւէ զինաբախում իր եւ Ռուսիոյ միջեւ, Ճապոնը դէմ չէր, որպէսզի օտար որեւէ ռազմանաւի մուտք արգելուի դէպի Սեւ ծով (քանի որ ինք Ծայր. Արեւելքից իր ռազմատորմղով պիտի չգար մինչև Սեւ ծով՝ Ռուսիոյ դէմ կռուելու համար), սակայն նոյն Ճապոնը միաժամանակ պահանջում էր, որպէսզի գրեթէ նոյն կարգի արգելքներ սահմանուեն նաև սեւծովեան պետութեանց ծովային ուժերի ելքի համար դէպի բաց ծովեր ու ովկիանոսներ (որ ասել է՝ արգելք դրուի նաեւ Ս. Միութեան սեւծովեան ռազմատորմղի առջեւ ազատօրէն դէպի Ծ. Արեւելք նաւարկելու, ուր Փուսիա եւ Ճապոն ճակատած էին իրարու դէմ)։

Խորհրդաժողովում յայտնի դարձաւ, որ Թուրքիա, արտաքնապէս բարեկամ մնալով Ռուսիոյ, խորքին մէջ գործում է նրա կենսական շահերի դէմ։

Թուրք պատուիրակութիւնը, հետեւողութեամբ անգլիականի, ձգտում էր արգելքներ յարուցանել մասնաւորաբար սեւծովեան պետութեանց ռազմա-

ծովային ուժերի ելքի առջեւ Սեւ ծովից դէպի Միջերկրական եւ ովկիանոսներ, միաժամանակ այլ պետութեանց ծովային ուժերին որոշ դիւրութիւններ ընծայելով իրենց մուտքի համար դէպի Սեւ ծով։

Իր հողային ստացուածքների դէմ սպառնալիք տեսնելով ոչ թէ բարեկամ Ռուսիոյ, այլ բնական Իտալիոյ կողմից, Թուրքիա նախընտրում էր նեղուցների հարցում Անգլիոյ հետ լինել՝ այս վերջինի պաշտպանութիւնը իրեն ապահովելու համար Միջերկրականում Իտալիոյ դէմ, որի պատկառելի ոյժերը խարսխած էին Երկոտասան կղզիների, մասնաւորաբար Լերոսի և Հռոդոսի կայաններում՝ պատեհ ժամին Թուրքիոյ դէմ խոյանալու համար։

Անգլեթուրք մերձեցումը Խորհրդաժողովում այնտեղ հասաւ, որ Թուրք պատուիրակութեան նախագահը՝ արտ. գործոց նախարար դոկտ. Արաս՝ եւ յայտարարեց, որ ինք հրաժարւում է նոր համաձայնութեան իր նախագծից և առաջարկում է վիճաբանութեան հիմ առնել անգլիական նախագիծը։

Այս վերջինը, ի դէպ, Ռուսիոյ համար աւելի անընդունելի էր, քան Թրքականը։

Սակայն, այլեւս Լօզանի օրերը չէին, երբ կարելի էր Ռուսիոյ դիւանագիտական սուրհանդակին վիզէ իսկ չտալ և առանց Ռուսիոյ մասնակցութեան նեղուցային համաձայնութիւն կնքել։

Այդ օրերը — մթին և նուաստացուցիչ — անդառնալիօրէն պատմութեան անցած էին այլեւս։

Տակաւին երեկ, երկու տարի առաջ, երբ կացութիւնը նուազ տագնապալի էր, 30 պետութիւններ հաւաքաբար խնդրում էին Մոսկուայից գալ Ժընեւ և անդամակցել Ազգաժողովին՝ միանաբար

բոլորին սպառնացող վտանգի դէմ ծառանալու համար, մինչ այսօր, այդ թուականից երկու տարի վերջ, վտանգը դարձած էր աւելի անարկու, իսկ Ռուսիոյ աջակցութեան պէտքը՝ աւելի հրամայական։

Նորէն Ռուսիոյ կամքի հակառակ և առանց Ռուսիոյ համաձայնութեան դաշինք կնքել՝ այս պիտի նշանակէր կրկնապէս ամրացնել Իտալիոյ և Գերմանիոյ դիրքը քաղաքական աշխարհում։

Այս պարագան յստակօրէն գիտակցում էր նաեւ ռուս պատուիրակութիւնը, ուստի այս վերջինը, Խորհրդաժողովի աշխատութեանց ամենէն տագնապալի ժամին, յայտարարեց, որ Ռուսիա չի դնի իր ստորագրութիւնը մի համաձայնութեան տակ, որ ուղղուած է իր շահերի դէմ։

Անմիջօրէն անգլիական և թրքական պատուիրակութիւնները կապուեցին իրենց կենտրոններին՝ Լոնդոն և Էնկիւրի։

Իզմիրից և Ամերիկից հրահանգներ եկան պատուիրակութեանց՝ ռուսական հիմնական պահանջները ընդունելու։

1936 Յուլիս 20ին Մոնթրէոյի մէջ ստորագրուեց նոր համաձայնութիւնը Նեղուցների մասին։

Ահա նրա հիմնական կէտերը.

ա.— Վերահաստատւում էին Թուրքիոյ վենապետական իրաւունքները Նեղուցների և կից հողաշրջանների վրայ։ Թուրքիա արտօնւում էր ամրացնելու այս շրջանները և զինական ուժեր պահելու այնտեղ։

բ.— Նեղուցների Միջազգային Յանձնախումբը դադարում էր գոյութիւն ունենալուց։

գ.— Հոկողութեան իրաւունքը Նեղուցներից երթեւեկող նաւերի վրայ փոխանցւում էր Թուրքիոյ։

դ.— Սեւծովեան պետութեանց ծովային ուժերին Նեղուցներից ազատ անցքի իրաւունք էր տրւում, առանց լուրջ սահմանափակումների։

ե.— Ոչ-սեւծովեան պետութեանց ծովային ուժերի մուտքի համար դէպի Սեւ ծով հաստատւում էին խիստ սահմանափակումներ։ Այդ պետութիւնները արտօնւում էին Սեւ ծով մտցնելու թեթեւ վերջրեայ նաւեր եւ փոքր ու օժանդակ ռազմանաւեր։ Միաժամանակ Սեւ ծով մտնող այս նաւերի ընդհանուր տակառաչափը պէտք չէ 15.000ից բարձր լինէր, իսկ նաւերի ընդհանուր թիւը՝ 9ից աւելի։ Միաժամանակ բոլոր պետութեանց Սեւ ծովում գտնուող ռազմանաւերի ընդհանուր ջրածաւալը պէտք չէ գերազանցէր 30.000ը, իսկ միայն մէկ պետութեանը՝ 20.000ը։ Ոչ-սեւծովեան պետութեանց ռազմանաւերի Սեւ ծովում մնալու տեւողութիւնը պէտք չէ անցնէր 21 օրից։

զ.— Պատերազմի ժամանակ, երբ Թուրքիան պատերազմիկ չէ, որեւէ պետութեան ռազմանաւերի անցում Նեղուցներից արգելւում էր։

է.— Պատերազմի ժամանակ, երբ Թուրքիան պատերազմիկ է, պետութեանց ռազմանաւերի անցման հարցը կարգաւորւում էր բացառապէս Թուրքերի հայեցողութեամբ։ Նոյն ձեւով կարգաւորւում էր նաեւ այն ժամանակ, երբ Թուրքիան թէև պատերազմիկ չէ, սակայն իրեն համարում է պատերազմի սպառնալիքի ենթակայ։

ը.— Համաձայնագրի 24րդ յօդուածով Թուրքիան պարտաւորւում էր դաշնադրող կողմերին պարբերաբար հաշիւ ներկայացնել Նեղուցներից երթեւեկող նաւերի մասին (մի բան, որ նա, ի դէպ, չկատարեց երկրորդ համաշխարհային պատերազմի ամբողջ շրջանին)։

բ. — Համաձայնագրի տեւողութեան համար ժամանակ էր սահմանուում մինչեւ 1956 թուականը. համաձայնագիրը կարելի էր վերաքննել մասնակցութեամբ Մոնթրէօն ստորագրող բոլոր պետութեանց։

Այս պայմանները լրիւ չէին ապահովում Սեւծովի առափնեայ պետութեանց շահերը, բայց, բաղդատելով Լօզանի պայմանագրի հետ, նրանք մի զգալի քայլ էին կազմում դէպի առաջ, դէպի այդ պետութեանց արդար իրաւունքների ճանաչումը։

Միայն երկրորդ պատերազմը չեչտուած ակնառութեամբ պիտի գար մատնանշելու ընդհանրապէս պայմանագրի թերիները, ինչպէս նաեւ այն, թէ խստագոյն յօդուածներն իսկ ոչինչ են, երբ սեւծովեան պետութեանց ապահովութեան միակ հակիչը նեղուցներում Թուրքիան է, որի թողտուութեան հետեւանքով — գիտակից և նենգամիտ — թշնամի ռազմանաւեր միշտ կարող են ներթափանցել Սեւծով։

Լօզանի պայմանագիրը ստորագրող բոլոր պետութիւնները, բացառութեամբ Իտալիոյ, նոր համաձայնութիւնը ստորագրեցին. Իտալիա իր ստորագրութիւնը տուաւ 1938ին, փոխարէնը որոշ հարցերում յատուկ շահեր ապահովելով իրեն Բալկանների մէջ։ Իսկ Գերմանիա, որ մասնակցած իսկ չէր Լօզանի Խորհրդաժողովին (1923), այս անգամ, 1937ին, նոր համաձայնութեան առիթով, իր «վերապահանք»ները ներկայացրեց Թուրք կառավարութեան, որոնք վերջինիս կողմից մերժուեցին։

Ե. Միութիւնը նոր համաձայնութիւնը ստորագրող առաջին պետութիւններից մէկը եղաւ՝ նրա մէջ իր խոշոր յաղթանակներից մէկը տեսնելով։

Ինչպէս ասացինք, Մոնթրէոյի համաձայնագիրը ստորագրուեց 1936 Յուլիս 20ին։ Հազիւ մէկ տարի անց այս Թուրականից, քաղաքացիական կռիւները արդէն բուռն կերպարանք առած էին Սպանիոյ մէջ։ Այս կռիւները, ճիշտ է, ներքին քաղաքացիական բնոյթ էին կրում և մղւում էին ձեւապէս սպանիական հողի վրայ, սակայն իրականին մէջ եղածը քողարկուած պատերազմ էր, մասնակցութեամբը արտաքին ուժերի։

Հակախորհրդային կռուի ճակատներից մէկը բացուած էր ճիշտ այստեղ, Սպանիոյ մէջ։

Իտալական ընդծովեանները գործում էին քողարկուած եւ Միջերկրականում խորտակում մանաւանդ այն փոխադրանաւերը, որոնք՝ իտալական իշխանութեանց տեղեկութեամբ՝ օգնութիւն էին հասցնում Ֆրանկոյի դէմ ճակատող ուժերին։

Այս ընդծովեանները խորտակեցին նաեւ խորհրդային «Տիմիրեազեւ» և «Բլագոեւ» նաւերը։

Այս իւրատիպ ծովամէնութեան դէմ կռուելու համար, 1937 Սեպտ. 10ին յատուկ Խորհրդաժողով հրաւիրուեց Նիոնի մէջ (Ժընեւի մերձակայքը), մասնակցութեամբը Ս. Միութեան, Անգլիոյ, Ֆրանսայի, Թուրքիոյ, Եգիպտոսի, Ռումանիոյ, Բուլգարիոյ, Յունաստանի եւ Իւգոսլաւիոյ։

Իտալիա եւ Գերմանիա, որոնք նոյնպէս հրաւիրուած էին Խորհրդաժողովին, հրաւէրը մերժեցին։

Սպանիոյ հրաւէր չուղղուեց՝ երկրի խառնակ վիճակը նկատի առնելով։

Խորհրդաժողովը որոշեց կռուել ծովամէնների դէմ. շահագրգռուած կառավարութիւնները իրենց վրայ առան Միջերկրականի պաշտպանութիւնը ըստ շրջանների։

Անգլիական եւ ֆրանսական ռազմատորմիղները պարտականութիւն ստանձնեցին՝ ծովագնացու-

թեան պատուիրանը պահովելու բաց ծովի մէջ մինչեւ Դարդանել։

Սորոդոժոդովը, ուր մի շարք տարաձայնութիւններ ծագեցին սպանիական հարցի շուրջը, մասնաւորաբար Ի. Միութեան հետ, առանց մեծ արդիւնքների փակուեց Սեպտ. 14ին։

Արագօրէն զարգանում էին դէպքերը։

1936 Նոյ. 25ին ստորագրուեց «Հակակոմինտերն Ուխտ»ը Գերմանիոյ եւ Ճապոնի միջեւ։

1937 Նոյ. 6ին Իտալիա միացաւ այս Ուխտին։

1938 Մարտ 18ին տեղի ունեցաւ Աւստրիոյ «անշլուս»ը Գերմանիոյ հետ։

1938 Ապր. 16ին կնքուեց անգլեւիտալ համաձայնութիւնը։

1938 Սեպտ. 29ին լոյս Սեպտ. 30 ստորագրուեց Մինիխի դաշնագիրը։

Մի պահ այնպէս թուաց, թէ Արեւմուտքը արդէն ձեւ առաւ ու կազմակերպուեց՝ Արեւելքի դէմ ճակատելու համար։

Ի. Միութիւնը տենդօրէն պատրաստուում էր այս տեղ, պատմակշիռ զինաբախումին.

Ճիշտ այդ օրերին լոյս տեսաւ ծանօթ ձեռնարկը՝ «Պատմութիւն Համամիութենական Համայնավար Կուսակցութեան»։

Նրա վերջին գլխում, խօսելով աշխարհի բոլոր ժողովրդներին եւ, առաջին հերթին, Ի. ՄԻՈՒԹԵԱՆ սպառնացող վտանգի մասին, ձեռնարկի հեղինակները — մի յատուկ ցանձնախումբ, կարգուած կուսակցութեան Կենտկոմի կողմից — վկայում էին.

«Այս վտանգի գոյութիւնը պերճախօս կերպով հաստատուում է ստեղծումովը «Հակակոմինտերն Բլոկ»ի՝ Գերմանիայ, Իտալիայ եւ Ճապոնի միջեւ։»*)

Այս վկայութեան վրայից դեռ լրիւ տարին չբոլորած, բացուեց Համ. Համայնավար Կուսակցութեան XVIII համագումարը, ուր Ստալին, 1939 Մարտ 10ին, հրապարակ եկաւ իր պատմական զեկուցումով։

Այդ զեկուցումի որոշ մասերը նոյնութեամբ տեղ գտած էին արդէն ամիսներ առաջ լոյս տեսած «Պատմութեան» ձեռնարկի մէջ, մի աւելորդ ապացոյց, որ դէթ այդ մասերը կազմած է անձնապէս Ստալինը։

Մտած էր նաեւ գալիք պատերազմին վերաբերող այն հատուածը, որից քիչ վերը յիշատակուած դարձ, բայց ծանրակշիռ պարբերութիւնը — Գերմանիոյ, Իտալիոյ եւ Ճապոնի միջեւ կնքուած «Հակակոմինտերն Բլոկ»ի մասին — արդէն ՅԱՊԱՒՈՒԱԾ էր։**)

Այլեւս խօսք չկար այն մասին, որ այս «Բլոկ»ը անմիջօրէն սպառնում է Ի. Միութեան։

Ընդհակառակն. բացերեւապէս վկայում էր, իր իսկ՝ վարիչի բերանով, որ գերմանեւխորհրդային զինաբախումի համար այլեւս «տեսանելի հիմեր չկան»։***)

Ինչպէս ասացինք, այս զեկուցումը տեղի ունեցաւ 1939 Մարտ 10ին, գերմանեւխորհրդային ծանօթ ուխտից — 1939 Օգոստ. 23 — ամիսներ ա-

---

*) «Պատմութիւն Համամիութենական Համայնավար Կուսակցութեան», Մոսկուա, 1938, էջ 319—320։

**) Ի. Ստալին — «Հաշուետու Զեկուցում Կուսակցութեան 18րդ Համագումարին՝ Կ. Կոմիտէի ափխատանքի մասին», Մոսկուա, 1939 (բաղդատել «Զեկուցման» 16 եւ 17րդ էջերը "Պատմութեան" ձեռնարկի 319 եւ 320րդ էջերի հետ)։

***) Ի. Ստալին — «Հաշուետու Զեկուցում», էջ 14։

ռաջ. բայց այդ ուխտից ամիսներ առաջ իսկ կողմերի միջև արդէն ձշտուած էին նրա հիմերը, եւ ճիշտ այդ պատճառով էլ «Զեկուցման» մէջ յապաւուած էր —կրկնենք մի անգամ եւս— «Հակ. Բլոկ»ին վերաբերող այն հատուածը, որ տեղ գտած էր «Պատմութեան» ձեռնարկի մէջ։

Եւ այսպէս, ի տես ապշանար աշխարհի, եղաւ անիմանալին. մէկէն փլաւ այն ռազմաձակատը, որ Միւնիխի գծով կառուցուած էր Հ. Միութեան դէմ. «Կոմինտերն»ի դէմ զինուած բանակները իրենց հրանօթների բերանները ուղղեցին «Դեմոկրատիա»յի դէմ։

1939 Մարտ 15ին տեղի ունեցաւ Չեխոսլովակիոյ բռնակցումը Գերմանիոյ։

1939 Մայիս 22ին իտալիագերման «Հակակոմինտերն Ուխտ»ը վերածուեց «Զինակցութեան Ուխտ»ի։ Ճապոնը այս «Ուխտ»ին միացաւ աւելի ուշ. 1940 Դեկտ. 11ին։

1939 Մայիս 12ին հրապարակուեց անգլիաթուրք փոխադարձ օգնութեան յայտարարութիւնը, ուր ասուած էր.

«Սպասելով վերջնական համաձայնութեան կընքումին՝ անգլիական և թրքական կառավարութիւնները յայտնում են, թէ որեւէ յարձակողական արարքի պարագային, որ կարող է պատերազմի յանգել Միջերկրականի մէջ, իրենք յանձնառու եղած են ազդուօրէն գործակցելու և փոխադարձաբար իրարու ամէն օգնութիւն ընծայելու։»*)

Այս յայտարարագրին միացաւ Ֆրանսան։

1939 Օգոստ. 19ին ստորագրուեց գերմանեխորհրդային առեւտրական համաձայնութիւնը, իսկ

*) «Պատմ. Դիւանագիտութեան», հ. Գ., էջ 684։

Օգոստ. 23ին՝ գերմանեխորհրդային ոչ-յարձակման ուխտը։

1939 Սեպտ. 1ին գերման բանակները տեղաշարժուեցին դէպի Լեհաստան։

Սեպտ. 3ին Անգլիա և Ֆրանսա պատերազմ յայտարարեցին Գերմանիոյ։

Սկսուեց երկրորդ համաշխարհային պատերազմը, որ տեւեց եւրոպական հողերի վրայ 5 տարի, 7 ամիս, 6 օր։

1945 Մայիս 8ին Գերմանիա վար դրաւ իր զէնքերը և գնաց ան-պայման անձնատուութեան։

Մասնաւորաբար Եւրոպայում պատերազմը անցաւ երեք զատ հանգրուաններից։

Առաջին պատերազմը տեղի ունեցաւ միայն Գերմանիոյ և Լեհաստանի միջեւ. Հ. Միութիւնը աւելի ուշ մտաւ այս պատերազմին. այս պատերազմը սկսուեց 1939 Սեպտ. 2ին եւ վերջացաւ նոյն ամսու Սեպտ. 26ին։

Երկրորդ պատերազմը սկսուեց 1940 Ապր. 9ին, գերման ներխուժումով դէպի Դանիա և Նորվեգիա, ու տեւեց մինչև 1941 Մայիս 28, երբ «Առանցք»ը տէր էր այլեւս բովանդակ Եւրոպային։

Այս երկու պատերազմներին գործում էր 1939 Օգոստ. 23ի գերմանեխորհրդային ոչ-յարձակման ուխտը։

Երրորդ պատերազմը սկսուեց 1941 Յունիս 22ին, գերման յարձակումով Հ. Միութեան վրայ, ու տեւեց գրեթէ չորս տարի։ Այս երրորդ պատերազմը վերջացաւ 1945 Մայիս 8ին, աննախընթաց յաղթանակ բերելով դաշնակից զէնքերին։

Տակաւին գրուած չէ երկրորդ մեծ պատերազմի պատմութիւնը. նրա լրիւ պատմութիւնը պիտի գրուի շատ ուշ։ Եւ այն ժամանակ միայն յստակ պի-

տի լինի բոլորին, թէ որքա՞ն մեծ, որքա՞ն բախտակչիռ դեր ունեցան Նեղուցները — Վոսփոր եւ Դարդանել — այդ պատերազմի մէջ։

Ներանք փակ մնացին Խ. Միութեան առջեւ ոչ միայն այն ժամանակ, երբ Խ. Միութիւնը բարեկամ էր Գերմանիոյ, իսկ Թուրքիան՝ իբրեւ թէ թշնամի, այլ փակ մնացին Խ. Միութեան առջեւ նաեւ այն ժամանակ, երբ նա թշնամի էր Գերմանիոյ, իսկ Թուրքիան՝ իբրեւ թէ բարեկամ Դաշնակիցներին, որոնց բարեկամն ու զինակիցն էր Խ. Միութիւնը։

Ոչ միայն փակ մնացին՝ ծանրագոյն տագնապների մատնելով ռուս երկիրը և պատերազմը աւելի երկարաձգելով, այլ և գաղտնաբար բացուեցին այդ Նեղուցները, բայց միայն... թշնամի՛ ռազմանաւերի առջեւ։

Կրկնուեց այն, ինչ որ տեղի ունեցած էր առաջին մեծ պատերազմին։

Յատակ էր ամենքի համար, որ այս երկրորդ պատերազմին ռուսական զէնքը եթէ երբեք յաղթանակի, ապա Նեղուցների խնդիրը իր բովանդակ ծանրութեամբ ու կշիռով պիտի գայ սեղանի վրայ և ենթարկուի հիմնական փոփոխութեան։

Այս գործն է ահա, որ ձեւ առաւ 1946 Օգոստ. 8ի խորհրդային ծանուցագրով, ուղղուած Թուրքիոյ։



ՆԵՂՈՒՑՆԵՐԸ ԵՐԿՐՈՐԴ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

«Ուժերի հաւասարակշռութիւն։— «Հիւանդ մարդը եւ իր «առողջ» բժիշկները։— 1915 Մարտեան յուսագիրների իմաստը.— «Սայֆո-Պիկոյ-Սազոնով համաձայնութիւնը» (Թուրքիա եւ Հայաստան).— Բրնզի, Բեւինի եւ Զրչիլի յայտարարութիւններ.— Մոսկուայի, Թեհրանի, Եալթայի եւ Պոսդամի խորհրդաժողովներ.— Խ. Միութեան դիրքը Նեղուցների հարցում 1939ից այս կողմը։

V

Դարերով անլոյծ մնաց Նեղուցների կնճիռը։

Բուն պատճառը — Թուրքիան չէ։

Հարցը Թուրքիայից աւելի մեծ է։ Հարցը շատ աւելի ծանրութիւն ունի, քան ունի ինքը Թուրքիան, որ միայն նրա ձեւական տէրն է։

Դարերով Թուրքիան բազմած է մնում Նեղուցների ափերին, որովհետեւ Բիւզանդիոնի ժառանգութեան շուրջ աշխարհի հզօրները չեն կարողանում լեզու գտնել իրարու հետ։

Թուրք հրապարակագրութեան ամենէն փայլուն գրիչը՝ Հիւսէյն Ջահիդ (Եալչին)՝ անդրադառնալով այս հարցին, նկատում էր.

«Տկար, գողահար Օսմանեան կայսրութիւնը կարողացաւ դարերով երկարել իր հոգեվարը, հակառակ եւրոպական ամենէն մեծ ու հզօր պետութեանց ընչաքաղցութեան, անաւոր թշնամութեանց, կրկնակի յարձակումներին և յաղթանակներին։

«Ինչո՞ւ։ Տկարներին պահպանող այդ ոյժը մի փոքր տարագ էր — ուժերի հաւասարակշռութիւն»։*)

Ճիշտ է Ջանիգը. մասնաւորաբար Պոլիսն ու Նեղուցները պահողը տկար ու գողանար Թուրքիան չէր, այլ... «ուժերի հաւասարակշռութիւն»ը։

Արձագանգելով Ջանիգին՝ Բէյրութի թերթերից «Լ'Օրիան» իր 1940 Յուլիս 1ի թուով գրում էր.

«Ռուսական էջքը դէպի Վոսփոր, ինչ որ հիմա հաւանական է նկատւում, պիտի քանդի այն հաւասարակշռութիւնը, որի վրայ 500 տարի ապրեց հին աշխարհը»։**)

Մեծերը ի՞նչպէս էին ըմբռնում այս ամենաբուժի՞չ «հաւասարակշռութիւն»ը։

Առաջին մեծ պատերազմի նախասեմին, ցարական Ռուսիոյ արտաքին քաղաքականութեան վարիչը՝ Ս. Սազոնով՝ Նեղուցներին (և Թուրքիոյ) նուիրուած իր գաղտնի տեղեկագրի մէջ գրում էր.

«Տկար Թուրքիան չանուէտ է Ռուսիոյ, և մենք ոչ միայն նրա անհետացումը պէտք չէ արագացնենք, այլ, ընդհակառակն, ամէն կերպ մենք պէտք է դանդաղեցնենք նրա քայքայման ընթացքը, որովհետեւ մենք տակաւին չգիտենք, թէ Թուրքիոյ աւերների վրայ ի՛նչ պիտի վերածնի»։***)

Մասնաւորելով իր խօսքը Նեղուցների մասին՝ հեղինակը այն միտքն էր արծարծում, որ Սեւ ծովը կա՛մ բաց ծով պէտք է մնայ (երբ Նեղուցների տէրը Թուրքիան է) և կամ պէտք է դառնայ «mare clausum» — փակ ծով (պայմանով, որ նրա բանալիները գտնուեն Ռուսիոյ ձեռքում)։*)

Նոր չէ, այլ բաւական հին է պետական այս իմաստութիւնը։

Հին Ռուսիոյ վարչապետներից կոմս Վ. Կոչուբէյ յայտարարում էր 1802ին.

«Ռուսիան թուրքերից աւելի խաղալ հարեւանցներ չունի, եւ այդ պատճառով մեր քաղաքականութեան հիմնական սկզբունքը պէտք է լինի — պահպանել մեր բնական թշնամիների ուժը»։

Աւելին. «Բոլոր միջոցներով աջակցել պահպանումին մի պետութեան, որի տկարութիւնն ու գէս վարչութիւնը թանգարժէք երաշխիքներ են մեր ապահովութեան»։**)։

Ցարական Ռուսիոյ պետական անուանի դէմքերից Կ. Նեսելրոդէ, այն մարդը, որ 1816ից մինչև 1856 վարեց իր պետութեան արտաքին քաղաքականութիւնը (իսկ 1845ից մինչև 1856ը իր ձեռքերի մէջ ունեցաւ նաեւ երկրի վարչապետութիւնը), յաւատեղեակ Թուրքիոյ արժէքին եւ անդրդուելիօրէն թշնամի նրա գոյութեան, այնուամենայնիւ, անհրաժեշտ էր գտնում պահել «հիւանդ»ին և մինչեւ իսկ պաշտպանել նրան.

«Այս վիճակը աւելի ձեռնտու է մեզ, — ասում էր հին ազուէսը, — ո՛չ աւելի ընդարձակուեմ եւ ոչ էլ Թուրքիոյ տեղ նոր պետութիւններ ստեղծեմ, որոնք մի օր մեզ կարող են մրցակից լինել»։

*) «Եռնի Սաբան», 30 Յունիս 1940 (մեջ բաղած եմ «Ազդակ»ի 1940 Յուլիս 18ի թուից)։

**) «Ազդակ», 2 Յուլիս 1940։

***) Նոմա Վ. Նոկոլցեւ — «Իմ անցեալից», հ. Բ., 1933, Փարիզ, էջ 254։

*) Սազոնովի գաղտնի տեղեկագիրը հնչազային հրապարակած են բոլշեւիկ պատմաբան Պոկրովսկին Ռուսիոյ մէջ, իսկ Ֆէնն՝ Ամերիկայի մէջ։

**) Լ. Գալբերստադ — «Արեւելեան Հարցը 19րդ դարու առաջին կէսին» («Ընթերցումի գիրք նոր շրջանի պատմութեան», հ. Ե. 1917, Մոսկուա, էջ 426)։

Նոյն տեսակէտներն էին արծարծում նաև այն երկու կայսրները — Ալեքսանդր Ա. և Նիկոլայ Ա. — որոնց արտաքին քաղաքականութիւնը վարեց Նեսելրոդէ աւելի քան քառասուն տարի.

«Իմ բաղաքական ուղղութեան հիմնական սկզբունքներից մէկը պիտի լինի, — *յայտարարում էր Ա-ղեքսանդր Ա.* (1777—1825), — պահել Օսմանեան Կայսրութիւնը, որի տկարութիւնն ու ներքին կազմալուծումը հրաշիք են վնասելու իր անկարողութեան»։ *)

Իր յայտարարութեանց մէջ աւելի յստակ եւ իր կեցուածքի մէջ աւելի վճռական էր Ալեքսանդրի յաջորդը՝ Նիկոլայ Ա. (1796—1855)։

1853 *Յունուար 9ին անգլիական դեսպան Սէյմուրին ընդունելով՝ կայսրը ասում է նրան.*

«Հիւանդ ունենք մեր բազուկների վրայ (*ակնարկը՝ Թուրքիոյ.—Ն.*). մեծ դժբախտութիւն պիտի լինի՝ եթէ մեռնի, առանց որ անհրաժեշտ միջոցները ձեռք առնուած լինեն»։

Նոյն կայսրը, որ քաղաքական աշխարհում տիրացած էր «միջազգային ժանդարմ» տիտղոսին, քիչ աւելի ուշ, 1853 Փետր. 21ին, նոյն դեսպանին ընդունելով, կրկնում էր նրան.

«Ես Պոլսոյ տեւական գրաւումը չեմ ուզում. չեմ ուզում, որ անգլիացիները կամ Ֆրանսացիները գրաւեն այն. չեմ էլ ուզում, որ Յունաստանը մեծանայ, հզօր պետութիւն դառնայ եւ փորձուի Բիւզանդական Կայսրութիւն կերտել։ Չեմ հանդուրժի, որ Թուրքիան բաժանուի փոքր պետութեանց եւ ապաստանավայր դառնայ Եւրոպայի յեղափոխականների համար։ Նրման կարգադրութիւններ ընդունելուց առաջ՝ պիտի

*) Գորչաքով — «Վոստոր եւ Դարդանելը», էջ 43

պատերազմեմ մինչեւ վերջին փամփուշտն ու վերջին զինուորը»։ *)

Այս նոյն ձեւով դատում ու գործում էին — դարերից ի վեր ու դարեր շարունակ — նաև Իուսիոյ մրցորդ ոյժերը, գլխաւորութեամբ Անգլիոյ։

Նրանք նոյնպէս մեծ գուրգուրանքով «հիւանդ»ին խնամում և պահում էին նեղուցների վրայ, որովհետեւ այդ ջրերը աւելի «առողջ»ին և աւելի հզօրին չէին ուզում զիջել։

Ճիշտ տեղն է նկատել, սակայն, որ խօսքը միայն Նեղուցների մասին չէ։

Ջեւապէ՛ս այդպէս է, բայց ոչ իրականին մէջ։

Խորքին մէջ Մեծերը երբեք դէմ չեն եղած «հիւանդ»ի մահուան։

Ապացո՛յց — այն տեւական մասնատումները, որոնց ենթարկուեց Թուրքիան դարերից ի վեր։

Մեծերը դէպք առ դէպք այս «հիւանդ»ից մասեր պոկեցին եւ կերան, «հիւանդ»ին՝ իբրեւ խորհրդանշական ամբողջութիւն՝ իր անկեալ վիճակում պահելով հանդերձ։

Թուրքիոյ ամեն մահը չէ, որ դժբախտութիւն էր նկատում կայսր Նիկոլայ Ա.։

«Մեծ դժբախտութիւն պիտի լինի, — *ասում էր կայսրը*, — եթէ (Թուրքիա) մեռնի, առանց որ անհրաժեշտ միջոցները ձեռք առնուած լինեն»։

Խնդրի բովանդակ ծանրութիւնը թաղնուած է այն բառերի տակ, որ մենք ընդգծեցինք։

Թուրքիոյ մահը մեծ դժբախտութիւն է այն դէպքում միայն, երբ նրա մահից առաջ անհետացողի ժառանգութեան շուրջը «միջոցներ ձեռք առնուած» եւ ժառանգորդների միջև համաձայնութիւններ կնքուած չեն։

*) Ibid.

Իսկ երբ այս կարգադրութիւնները կանխապէս եղած են արդէն, այդ դէպքում Թուրքիոյ մահը ոչ թէ դժբախտութիւն չէ, այլ մեծ բախտաւորութիւն է իր ժառանգորդների համար։

Ի՞նչպէս եղաւ, որ՝ դարերից ի վեր առաջին անգամը լինելով՝ առաջին մեծ պատերազմին Անգլիա եւ Ֆրանսա յօժարեցին ռուսական սեփականութիւն նկատել Վոսփորը, Պոլիսը, Մարմարան ու Դարդանելը, յարակից հողաշերտերով ու կղզիներով միասին։

Եղաւ այդպէս, որովհետեւ «հիւանդ»ի ամբողջական ժառանգութեան չուրջը նրանք կանխապէս, տակաւին մահը չհասած, որոշ համաձայնութեան եկած էին արդէն։

Այս ոսկի ջրերն ու ոսկի հողերը պահանջելով՝ Ռուսիան, Փարիզի եւ Լոնդոնի իր դեսպանների միջոցով նոյն երկրների կառավարութեանց ուղղած իր 1915 Մարտ 4 ծանուցագրով, ի միջի այլոց, հետեւեալ յանձնառութիւնն էր ստանձնում.

«Ցիսեալ դաշնակից կառավարութիւններ կարող են լիայոյս լինել, որ կայսերական (ռուս) կառավարութեան կողմից նոյն համակիր վերաբերումին կ'արժանանան (իրենք եւս) իրացումի մէջ իրենց այն ծրագրերի, որոնք կարող են ծագել իրենց մօտ ինչպէս Օսմանեան Կայսրութեան այլ շրջաններում, այնպէս եւ տարբեր վայրերում»։ *)

Ընդառաջելով Ռուսիոյ բաղձանքներին՝ ֆրանսական կառավարութիւնը ռուս կառավարութեան ուղղած իր 1915 Մարտ 8 ծանուցագրով, ի միջի այլոց, կրկնում և հաստատում էր հետեւեալը.

*) «Ասիական Թուրքիոյ Բաժանումը», էջ 119:

«Կայսերական (ռուս) կառավարութիւնը կարող է միանդամայն բարեացակամ վերաբերում ակնկալել Հանրապետական կառավարութեան կողմից Պոլսոյ և Նեղուցների հարցի լուծման մէջ, համաձայն Ռուսիոյ բաղձանքներին։ Այդ հարցը, ինչպէս նաև այն հարցերը, որոնք ծանագրգռում են Ֆրանսան եւ Անգլիան Արեւելքում եւ այլ տեղերում, եւ որոնք կայսերական կառավարութիւնը, իր կողմից, յօժար է լուծելու համաձայն Ֆրանսայի եւ Անգլիոյ բաղձանքներին, իրենց վերջնական լուծումը կը գտնեն խաղաղութեան դաշինքում...»։ *)

Նոյն միտքն էր կրկնում նաև Անգլիան՝ ռուս կառավարութեան ուղղած իր 1915 Մարտ 12 ծանուցագրով.

«Այն դէպքում, եթէ պատերազմը կը հասնի իր յաջողակ վախճանին եւ եթէ կ'իրականանան Մեծն Բրիտանիոյ եւ Ֆրանսայի բաղձանքները ինչպէս Օսմանեան Կայսրութեան մէջ, այնպէս եւ այլ վայրերում, ինչպէս որ այս մատնանշուած է ներքոյիշեալ ռուսական հաղորդագրութեան մէջ,— Նորին Մեծութեան կառավարութիւնը կը համաձայնուի կայսերական կառավարութեան՝ Կոնստանդնուպոլսի ու Նեղուցների վերաբերեալ յուշագրին, որի բնագիրը Նորին Մեծութեան դեսպանին հաղորդել էր Նորին բարձր գերազանցութիւն Սազոնովը սոյն տարուայ Փետրուարի 19/Մարտի 4ին»։ **)

Ընդգծումները ամէն տեղ — մէկ թէ միւս ծանուցագրում — մենք կատարեցինք։

Ինչպէս տեսնում էք, անգիջելի դիրքեր չէին Պոլիսը եւ Նեղուցները. այս դիրքերը զիջելով՝ ո՛չ պիտի կործանուէին եւ ոչ ալ պիտի տկարանային

*) Ibid., էջ 123:
**) Ibid., էջ 124:

Անգլիան և Ֆրանսան. եւ զիջել կարելի էր Պոլիսն ու Նեղուցները ոչ միայն 1915ին՝ մեծ պատերազմի բերումով, այլ և նրանից առաջ՝ տարբեր պատճառներով և տարբեր պարագաների տակ։

Մէկ հիմնական պայմանով սակայն. զիջողները իրենց զոհողութեան փոխարժէքը Ռուսիայից պէ՛տք է որ ստանային, որովհետեւ զիջումը անշահախնդիր զգացումների գեղում չէր, այլ շահախնդրական մի գործարք, մի տիպար տուր-և-առ, ուր տալ պէտք էր՝ առնելու համար։

Do ut des-ի սկզբունքն էր բուն աղբիւրը այն համաձայնութեանց, որ 1915ի Մարտին կնքուեցին Անգլիոյ, Ֆրանսայի և Ռուսիոյ միջեւ։

Եւ որովհետեւ Ռուսիան յօժարեց որոշ — եւ չափազանց կարեւոր — զոհողութեանց, ուստի և Պոլիսն ու Նեղուցները ստացաւ։

Այս տուր-եւ-առի անջնջելի փաստը, տեղի ունեցած 1915ին, ինքնին գալիս է վկայելու, որ Նեղուցների բուն արժէքը մի զգալի չափով Նեղուցներից դուրս է։

Ինչպէս որ մի զգալի չափով — չեշտենք անցողակի — Թրքապատկան Հայաստանի արժէքը եւս դուրս է բուն Թրքահայաստանից։

Եթէ այսպէս չլինէր, մասնաւորաբար Անգլիա Թրքական հարցում — ծովային և ցամաքային — երբեք զիջման պիտի չգնար։

Իր աշխարհացրիւ ստացուածքների ապահովութիւնը երաշխաւորելու համար՝ Անգլիա իր ձեռքին ռազմա-քաղաքական երկու զէնք ունի՝ յարձակողական և պաշտպանողական։

Եթէ Անգլիոյ ծրագրների մէջ Ռուսիոյ դէմ միայն յարձակումը լինէր, ապա նա Նեղուցներից երբեք չէր հրաժարուի։

Բայց որովհետեւ Անգլիոյ ծրագրների մէջ էականը իր կայսրութեան պաշտպանութիւնն է, ապա նա որոշ դէպքերում կարող է Նեղուցներից — ինչպէս և Թրքապատկան Հայաստանից — իսպառ հրաժարուել իսկ, պայմանով, որ կանխապէս ապահովուեն իր շահերը և իր պաշտպանողական նպատակները։

Հիմնականը Անգլիոյ համար Հնդկաստանն է և ոչ Թրքապատկան Հայաստանը, Մայր Կղզուց դէպի Հնդկաստան տանող ճամբաներն են — ծովային և ցամաքային — եւ ոչ Նեղուցները։

Բաղդատմամբ Հնդկաստանի և դէպի առասպելական հարստութեանց այս հսկայ աշխարհը տանող ծովային և ցամաքային ճամբաների — Միջերկրական-Արաբական Երկրներ և Իրան — չատ համեստ է արժէքը Նեղուցների և Թրքապատկան Հայաստանի։

1892ին, երբ Ռուսիա իր պահանջներն էր ներկայացնում Միջին Արեւելքի նկատմամբ, լորդ Քըրզըն՝ տարիներով մտերիմ գործակիցը Սոլըզբըրիի, իսկ այդ թուականին Հնդկական գործերի փոխ-նախարարը անգլիական դահլիճում, անծայրցաստմով յայտարարում էր.

«Այդ կարգի նպատակներ կարելի է հեռացնել՝ միայն դէմ գնալով միջազգային բարոյականութեան, արհամարհելով բաղաքակիրթ ազգերի կարծիքը եւ մխրճուելով մի պատերազմի մէջ, որ պիտի «դղրդար բեւեռից բեւեռ»։ *)

Երիտասարդ Լորդը, որ ջիչ ուշ աւելի բարձր գիրքերի հասնելով՝ աւելի պիտի խորացնէր իր հասկացողութիւնը, միջազգային անբարոյականութիւն և

*) Էդ. Ռէն-Ֆորի — «Ռուս-անգլիական մրցակցութիւնը Մի[illegible]չին Արեւելքում» («Հայրենիք», 15 Յուլիս 1944)։

բարբարոսութիւն էր տեսնում Ռուսիոյ ոտնձգութեանց մէջ Միջին Արեւելքի նկատմամբ, որովհետեւ ինքը այս աշխարհամասը —Միջին Արեւելք— նկատում էր իբրև ապահովագոյն պատնէշը Հընդկական Ովկիանոսի Բրիտանական կայսրութեան պաշտպանութեան հարցում։

Լորդերի Պալատի 1903 Մայիս 5ի նիստին Ռուսիոյ դէմ բուռն ճառ արտասանելով՝ լորդ Լեմինգտըն պաշտպանում էր բրիտանական իրաւունքները Հարաւային Իրանի վրայ՝ Պարսից ծոցը նկատելով հնդկական սահմանների պաշտպանութեան ամբարտակը։ *)

«ԵՍ ՊԻՏԻ ՆԱԽԸՆՏՐԷԻ ՌՈՒՍԻԱՆ ՏԵՍՆԵԼ ՊՈԼՍՈՒՄ,— նոյն նիստին յայտարարում էր լորդ Էլէնբորոյ,— ՔԱՆ ՏԵՍՆԵԼ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՈՐԵՒԷ ՁԻՆԱՄԹԵՐԱՆՈՑ ՊԱՐՍԻՑ ԾՈՑՈՒՄ»։ **)

Անգլիոյ համար ամենէն էականը ճի՛շտ այս վերջինն է — Պարսից ծոցը — Արաբական Աշխարհով միասին։

Երկու կարեւորագոյն ճամբաներ ապահովում են Անգլիոյ տիրակալութիւնը այս անծայրածիր հողերի վրայ. այս հանապարհներից մէկը Հնդկական ովկիանոսը միացնում է Միջերկրականին (Կարմիր ծովի եւ Սուէզի վրայով), իսկ միւսը՝ Հնդկական ովկիանոսը միացնում է Իրանին եւ Միջագետքին (Պարսից ծոցի և Շատ-էլ-Արաբի վրայով)։

Էականը ՀՆԴԿԱԿԱՆ ՈՎԿԻԱՆՈՍՆ է, որովհետեւ այնտեղ է բուն կայսրութիւնը։

---

*) Լենին — «Աշխարհակալութեան պատմութեան վերաբերող ժամանակագրական ադիւսակներ», Մոսկուա, 1940, էջ 27:

**) Ibid., էջ 27:

Կարեւորը այն մատոյցներն են — ՊԱՐՍԻՑ ԾՈՑ և ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ — որոնք ապահովում են Անգլիոյ տիրակալութիւնը այդ ովկիանոսի վրայ։

1915ին Անգլիա յօժարեց Ռուսիան բերել Պոլիս և Թրքահայաստան, որովհետեւ իր հերթին Ռուսիա յօժարեց Զի՛ջնել Պարսից ծոց և Թրքահայաստանից ստանալի հարաւ, դէպի Արաբական Աշխարհը։

Դաշնակիցներից Պոլիսը և Նեղուցները ստանալու փոխարէն, Ռուսիա, նրանց ուղղած իր 1915 Մարտ 4 ծանուցագրով, խոստանում էր «հնամակիր վերաբերում ունենալ իրացումին մէջ այն ծրագրեերի, որոնցի կարող են ծագել իրենց մոտ ինչպես Օսմանեան կայսրութեան այլ շրջաններում, այնպես եւ տարբեր վայրերում»։

Այս «տարբեր վայր»երի մէջ առաջնագոյնը Իրանն էր, որի շուրջ (ու նաև Աֆղանիստանի և Տիբետի) երկար մաքառումներից յետոյ Անգլիա եւ Ռուսիա 1907ին կնքեցին, վերջապէս, ծանօթ անգլեռուս դաշինքը։*)

Ըստ այդ դաշինքի, ինչպէս յայտնի է, Իրանը բաժանւում էր երեք գօտիների,— Հիւսիսային եւ կամ ռուսական ազդեցութեան գօտի (790.000 ք. ք. տարածութեամբ), Հարաւային և կամ անգլիական ազդեցութեան գօտի (355.000 ք. ք. տարածութեամբ), Միջին և կամ չեզոք գօտի (490.000 ք. ք. տարածութեամբ)։

1915 մարտեան ծանուցագիրներով յօժարելով Պոլիսը և Նեղուցները զիջել Ռուսիոյ, միաժամա-

---

*) Ըստ մի կարգ աղբիւրների՝ այս դաշինքը կնքուած է 1907 Օգոստ. 31ին (տե՛ս, օրինակ, Ադամովի «Առաջաբան»ը՝ «Ասիական Թուրքիոյ Բաժանումը» գրքի մէջ, էջ 36). ըստ այլ աղբիւրների՝ նա կնքուած է 1907 Օգոստ. 31ին (տե՛ս, օրինակ, Լենինի «Աշխ. պատմութեան վերաբերող ժամ. աղիւսակներ»ը, էջ 39):

նակ Անգլիա և Ֆրանսա համաձայնած էին, որպէս-զի վերջնական լուծումները իրենց ստանալիքի մասին — «ինչպէս Օսմանեան Կայսրութեան մէջ, այնպէս նաեւ այլ տեղերում» — տրուեն միայն պատերազմի վախճանին, «խաղաղութեան դաշինքում, որը պէտք է քննուի հաւասարապէս եւ ստորագրուի միաժամանակ երեք դաշնակիցների կողմից»։

Եւ ահա Անգլիա, առանց պատերազմի վախճանին սպասելու և առանց հաւասարապէս, բոլորով միասին, Ֆրանսան էլ մէջը հաշուելով, իր պահանջները դաշնակիցների հետ քննած լինելու, անջատաբեռն դիմում էր Ռուսիոյ և փորձում օր առաջ կանխիկի վերածել այն, ինչ որ հետագային պիտի ստանար Իրանում։

Անգլիական դեսպանը Պետրոգրադի մէջ՝ սըր Ջ. Բիւքէնէն՝ 1915 Մարտ 12ին իր կառավարութեան անունից մի ընդարձակ ծանուցագիր ներկայացնելով Ռուսիոյ արտ. գործոց նախարար Ս. Սազոնովին և վկայելով, որ, համաձայն Դաշնակիցների միջև գոյացած նախնական իրաւախոհութեան, Ռուսիա պիտի ունենայ Պոլիսը և Նեղուցները, որ ասել է՝ «բովանդակ պատերազմի ամենեն թանգարժէք վաստակը», դեսպանը, իր նախարարի՝ սըր Էդուարդ Գրէյի անունից խնդրում էր Անգլիոյ ապագայ բաղձանքներից մէկը՝ այն, որ վերաբերում է Իրանի շուրջ կնքուած 1907ի անգլեռուս համաձայնութեան, նախնական վերանայման ենթարկել այսօր իսկ՝ «չէզոք գօտին իբրեւ անգլիական գօտի ճանաչելու իմաստով»։ *)

Եւ Սազոնով Լոնդոն ուղղած իր 1915 Մարտ 20 ծանուցագրով հաստատում էր «կայսերական կառա-

*) «Ասիական Թուրքիոյ Բաժանումը», էջ 126:

վարութեան համաձայնութիւնը՝ Իրանի չէզոք գօտին միակցելու անգլիական գօտիին»։ *)

Իր հերթին նոյնն էր անում նաև Ֆրանսան, 1915 Մարտ 16ին անջատաբար դիմելով Ռուսիոյ և խնդրելով նրա համամտութիւնը այն մասին, որ պատերազմի վախճանին Կիլիկիան և Սուրիան (Պաղեստինով միասին) պիտի նկատուեն իբրեւ ֆրանսական սեփականութիւն։ **)

Այսքանը հապճեպով, տաքը-տաքին, ինչպէս որ ժողովուրդն է ասում։

Անդին կայ կարեւորագոյնը՝ «Սայքս-Պիկոյ» անուամբ ծանօթ համաձայնութիւնը — մի ուխտ, որ անմիջօրէն ծնունդ առած էր 1915ի մարտեան ծանուցագիրների քաղաքական արգանդից — որով Ասիական Թուրքիան ենթարկւում էր հինգական բաժանումի։ ***)

Իրականին մէջ այս ուխտը աշխարհ պիտի գար պատերազմի յաղթական վախճանին միայն, սա-

*) Ibid., էջ 131:

Ռուս կառավարութիւնը խնդրում էր միայն, որ չէզոք գօտիից Սպանաց եւ Եզոի բաղամեներ իրենց մեծաքակ վայրերով, ինչպէս եւ այդ գօտիից սեպի նման դէպի հիւսիս, դէպի ռուսական սահմանը երկարող Զուլֆազարի շրջանը միակցուեն ռուսական գօտուն. ապա ռուս կառավարութեան հեռ հատախորհուրդ ունենալ երկաթուղիների կառուցման հարցերը չէզոք գօտու մէջ, խնդրում էր ճանաչել ռուս կառավարութեան գործունէութեան լիակատար ազատութիւնը,— մանաւանդ տնտեսական եւ ելեւմտական հարցերի մէջ,— հիւս. Իրանում եւ բարեացակամօրէն նկատի առնել ռուսական շահերը Ռուսիոյ սահմանակից հիւս. Աֆղանիստանում։

**) Ibid., էջ 129:

***) Վիլսոն, Հիւս. Ամերիկայի նախագահը, առաջին անգամ լսելով այս համաձայնութեան մասին, մէկէն բացագանչում է.— «Այնպէս է հնչում ականջիս, որ կարծես խօսքը բէյի վաճառման նոր ընկերակցութեան մասին լինէր — ՍԱՅՔՍ-ՊԻԿՈ՛Յ» («Դիւանագ. Պատմ.», հ. Գ., էջ 36):

կայն նրա ծնունդը եղաւ ժամանակից առաջ, 1916ի գարնան ամիսներին, որովհետեւ այդ շրջանին, Կուտ-էլ-Ամարայի մէջ, անգլիական զօրքը, հրամանատարութեամբը զօր. Տաուզէնդի, անձնատուր եղած էր, մինչ ռուսական բանակները յաղթականօրէն յառաջանում էին դէպի Միջագետք՝ Բիթլիսի եւ Մուշի փէշերից իջնելով դէպի Մոսուլ և Բաղդադ։

Վախ ունենալով, որ կովկասեան բանակը, գրաւելով դէպի Մոսուլ, Բաղդադ եւ Պարսից ծոց տարածուող հողաշրջանները, հետագային կարող է այնտեղ հաստատօրէն ամրանալու փափագ ունենալ, Դաշնակիցները արագացրին Թուրքիան մասնատելու սանմանուած իրենց համաձայնագրի ստորագրումը։

Անգլիա և Ֆրանսա այս կենսական հարցի շուրջը կանխապէս համաձայնութեան գալուց յետոյ՝ բաժանման իրենց նախագիծը 1916 Մարտ 9ին ներկայացրին Ռուսիոյ։ Որոշ — եւ չափազանց ուշագրաւ — սակարկումներից եւ սրբագրութիւններից յետոյ համաձայնութիւնը պաշտօնապէս ստորագրուեց Ռուսիոյ եւ Ֆրանսայի միջեւ 1916 Ապր. 26ին (համամտութեամբը Անգլիոյ), իսկ Անգլիոյ եւ Ֆրանսայի միջեւ՝ 1916 Մայիս 9ին եւ 16ին (համամտութեամբը Ռուսիոյ)։

Ըստ այս համաձայնութեան՝ Անգլիա ստանում էր Միջագետքը Բաղդադով միասին (բայց առանց Մոսուլի)։ Արաբիոյ մեծագոյն մասը նկատւում էր իբրեւ անգլիական ազդեցութեան գօտի։ Պաղեստինը ենթարկւում էր միջազգային հակակշռի, սաեայն Անգլիա ստանում էր Հայֆա և Ակրա նաւահանգիստները։

Ֆրանսա ստանում էր Սուրիան, Փոքր Հայքը, Կիլիկիան, Քուրդիստանի մեծ մասը եւ մինչև իսկ

Արեւելեան Անատոլիայի մէկ մասը։ Իսկ իբրեւ ազդեցութեան գօտի՝ նա ստանում էր Արաբիոյ այն մասը, որ ընկած էր Նէջդից դէպի հիւսիս, ու նաև Մոսուլի շրջանը (քարիւղաբեր հողերով միասին)։

Ռուսիա, ի լրումն Պոլսոյ եւ Նեղուցների, որոնց տիրացած էր յատուկ համաձայնութեամբ, ձեռք էր բերում Տրապիզոնի, Կարնոյ, Բայազիդի, Վանի եւ Բիթլիսի շրջանները, Քուրդիստանի մի մասը եւ Սեւ ծովի առափնեայ գօտում մի հողաշերտ, Տրապիզոնից դէպի արեւմուտք։ Ռուսիոյ փոխանցուող հողերի վրայ եղած ֆրանսական երկաթուղային առանձնաշնորհումները պահում էին իրենց ուժը։

Իտալիա «երեք»ներին բաժնեկից դարձաւ աւելի ուշ, 1916ի Օգոստոսին Գերմանիոյ պատերազմ յայտարարելուց յետոյ միայն։ Ըստ համաձայնութեան՝ Իտալիա ստանում էր Ադալիոյ, Կոնիայի, Այդընի եւ Իզմիրի շրջանները։

Նաեւ այս անգամ, «Սայքս-Պիկոյ Համաձայնութեան» մթին ճամբաների վրայ, նահատակուեց մեր արիւնոտ Դատը։

Ռուսիոյ հետ տակաւին համաձայնութիւնը չստորագրած, 1916 Մարտ 12ին, Անգլիոյ լիազօր պատուիրակը՝ սըր Մարք Սայքս՝ մի գլուխ-գործոց գրութեամբ դիմում էր Պետրոգրադի իր ցեղակից դեսպանին՝ սըր Ջ. Բիւկընէնին՝ խնդրելով բացատրել Սազոնովին, թէ ռուս միապետութեան համար ինչ մեծ չարիք պիտի լինէր տիրացումը անկազմակերպ եւ ամբողջական Հայաստանին՝ «լի յեղափոխական կազմակերպութիւններով, որոնք տեւական կապի մէջ են Կովկասում եւ Իրանում գործող յեղափոխական կազմակերպութեանց հետ»։ Տիրանալ ամբողջական Հայաստանին եւ Վանն ու Կարինը

կենտրոն դարձնել այս նորաստեղծ երկրին՝ այս նը-չանակում էր, ըստ հնարամիտ դիւանագէտի, այդ նոր երկրի քաղաքական ամբողջ իշխանութիւնը յանձնել արեւելահայերի՝ *այս տիպար «անիշխանա-կան-ընկերվարական» ձեւը», այս նշանակում էր նը-րա՛նց ենթարկել* «Փոքր Հայքի կղերամիտ եւ պահ-պանողական հայերին», *որոնք* «երբեք փափագ ու-նեցած չեն միասեղ լինելու» *այդ անիշխանական-յեղափոխականների հետ...**)

Մինչ Հայաստանը՝ իբրեւ երկիր եւ պետու-թիւն՝ եթէ անցնի Ֆրանսային, եւ այս նորաստեղծ երկրի մէջ մտնեն «Հայասանցի պատմական գաղա-ւերը՝ Զէյթուն, Հաջրն, Մուշաղրն, Տիգրանակերտ, Սեբաստիա եւ այն շրջանը, ուր իշխած է հայոց վերջին թագաւորը (*ակնարկը՝ Լեւոն Զ.-ի, որ մեռաւ Փարիզ* 1393*ին.*—Ն.), ինչպէս նաեւ խաչակիրների շրջանից մնացած Եդեսիոյ դքսութիւնը, ուր թագա-ւորած է Գուիտոն Լուսինեանը», *այդ դէպքում, ըստ մեր «ռուսապաշտ» անգլիացու,* «հայ պատմական

*) Ակնարկութեան ստատուտներ միշտ չէ, որ այսպէս դատած են. նրանց համար, նայած տեղին եւ ժամանակին՝ «յեղափո-խականներ մի՛ր արեւելահայեր եղած են, մեր արեւմտահայեր...

Յարակոն վարչապետներից մեծանուն Վիթտէն իր «Ցուտեր»ի մէջ հայ եկեղեցական կալուածների յարմունիս գրաւման խնդրին անդրադառնալով՝ ի պատասխանութիւն «յեղափոխական» արեւելահայերի գրում էր.

«Ի դէպ, վերջին տարիներին, իբրեւ հետեւանք Թուրքիոյ մէջ թրքահայերի դէմ ձեռնարկուած հալածանքների, բազմահազար յեղափոխականացած թրքահայեր բնակութեան համար անցած էին Կովկաս: Փորձ յեղափոխականներ, որոնք սխեցին, ի նարկէ, յեղափոխակա-նացնել ռուսահպատակ իրենց եղբայրներին եւ հաւատակիցներին» (տե՛ս մեր յօդուածը՝ «Յարակոն վարչապետի յուշերից», «Հայրենիք» ամսագիր, 1946 Մարտ-Ապրիլ, էջ 51):

Ըստ Սայմսերի՝ «փորձ յեղափոխականներ ռուսահայերն էին, ըստ Վիթտէնների՝ թրքահայերը...

ազգայնականութեան կիզակենտրոնը՝ այս շրջանը կը դառնայ, որ արդեն մոռացել է Վանի եւ Էրզրումի ժողովրդական երգերն ու աւանդութիւնները, որոնք աղբիւր են հանդիսանում հայկական անիշխանական-ընկերվարական քարոզչութեան»:

Այս ամբողջ իմաստութիւնները — միշտ ի շահ եւ ի փառս Ռուսիոյ — այսքան առատաձեռ-նօրէն չռայլելուց յետոյ, Մարք Սայքս հարկ էր հա-մարում իր եզրափակիչ խօսքի մէջ առանձնապէս յիշատակելու հետեւեալ «մանրամասնութիւնը» (բա-ռ՝ իրենն է.—Ն.).

«Ես անձնապէս պիտի ասէի, թէ լաւ պիտի լինէր — եթէ երբեմ կարելի լինէր այս — որ Մուշի հո-վիտը կցուէր Ֆրանսական շրջանին, որովհետեւ այս ձեւով Ռուսասանը ազատուած կը լինէր յեղափո-խական գործունէութեան մի օջախից, եւ կովկասա-եան յեղափոխականների քարոզչութեան առջեւ յար-մարագոյն շրջաններից մէկը գոցուած կը լինէր»*)

Հայկական երգե՞ր, աւանդութիւնն ե՞ր, ընկեր-վարութի՞ւն եւ յեղափոխութի՞ւն, խաչակիրնե՞ր եւ կղերա-պահպանողական «սիրեցեա՛ք» հայեր, Ռու-բինեան եւ Լուսինեան թագաւորնե՞ր, ու նաեւ ան-հուն սէ՞ր դէպի Ռուսիան եւ դէպի ռուսական մի-պետութիւնը...

Ոչ թէ դիւանագիտական մի պարզ բացատրա-գիր, այլ բազմաւէտ գիտանքներով ճոխացած մի յոգնաբեղո՞ւն աշխատանք...

Զգիտենք, որեւէ դիւանագէտ երբեւէ արուեստ-ի եւ բանասիրութեան մարզերից այսքան փաստ-արկներ քաղա՞ծ է արդեօք քաղաքական իր մի չիլ դրոյթը հիմնաւորելու համար...

*) «Ռուսական Թուրքիոյ Բաժանումը», էջ 158—159:

«Անչանախնդիր» ղեկացումների այս յորդ աշխարհի մէջ մեր նրբին.դիւանագէտը — աւա՜ղ, մոլորաչափիլ և վրիպալուր — ուզում էր թագցնել իր մէկ հատիկ սրբազնասուրբ նպատակը միայն,— յունենալ Ռուսիան իբրեւ դրկից պետութիւն Մոսուլի շրջանում, ուր գտնւում էին Սայֆսերին այնքան սիրելի քարիւղաձորերը...*)

Բայց մի՞թէ նոյնը չէ նաև այսօր. մի՞թէ վերջապէս նոյն Ռուսիան իբրեւ դրկից չունենալու համար չէ՛, որ կրկին նոյն դաւերը նիւթւում են մեր փոքր հայրենիքի դէմ, անգամ ներգաղթի հարցում, եւ մինչև իսկ Թուրքի կողմից, որ միշտ —

*) Պայքարը Մեծերի միջեւ, մասնաւորաբար Մոսուլի շուրջ, շարունակուեց նաեւ այս համաձայնութիւնից յետոյ եւ իր անդրադարձը ունեցաւ նաեւ մեր Դատի վրայ:

Ինչպէս յայտնի է, 1920ի Ապրիլին, Սան Ռեմոյում գումարուած Դաշնակիցների Գերագոյն խորհուրդի դիմումի վրայ, նախագահ Վիլսընը ընդունեց իրաւարարութիւնը Հայաստանի արեւմտեան սահմանների մասին՝ Տրապիզոն, Էրզրում, Վան եւ Բիթլիս նահանգների միջից, եւ իր ընդունած լինելը Մայիս 17ին հեռագրեց Փարիզի ամերիկեան դեսպանին՝ Ուէյսին: 1920 Օգոստ. 10ին ընդունուեց Սեւրի դաշնագիրը, որի 89րդ յօդուածով Հայաստանի սահմանների որոշումը ձգւում էր Վիլսընին: 1920 Հոկտ 18ին Սեւրի վաւերացուած պատճէնը Խաղաղութեան Վեհաժողովի Քարտուղարութեան կողմից յղուեց Մ. Նահանգների Նախագահին, եւ նա 1920 Նոյ. 27ին արձակեց իր վճիռը:

Անդրադառնալով այս դէպքին՝ Հ. Դ. Ղազարեան նկատում է **«Ուիլսընեան Հայաստանը»** խորագրով իր մի շահեկան յօդուածում.

«Եղերական կէտը այն է, որ Լորդ Քըզընը, **Քարիյն Օքիսի** աջակցով, 1920 Դեկտ. 16ին խնդրեց ամերիկեան պետական քարտուղարութենէն թերթերու մէջ չհրատարակել նախագահ Ուիլսընի վճիռը: Աւելի աճեցուցեց էր 2.000.000 հայերու արիւնը սակարկելու համար թուրքին նեռ եւ փոխարէնը ստանալու համար Մոսուլի իւղերը» (Ս. Վրացեան — «Հայրենիք» — «Տարեգիրք-Տարեցոյց», 1945, Պոսթըն, էջ 121):

ու միա՜յն — մեր «բարիք»ը խորհելով՝ դէմ է մեր հայրենադարձին, դէմ է, որ մենք ձգում ենք օտարութեան փրկարա՞ր ափերը եւ վերադառնում հորդային Հայաստան, ուր թրքական ժողովրդավա՞ր կարգերն ու ազատութիւնները չկան...

Շտապենք ասել, որ այն օրերին տարբեր չէին տրամադրութիւնները նաև Պետրոգրադի մէջ։

Մենք տեսանք, որ Կրիվոշէյինները Հայաստանը դրաւում էին... «ռուս դաղթականների համար», իսկ ինքը ցարը Հայաստանը մատնատում եւ դրաւում էր իր երկրի... «ռազմագիտական» նպատակների համար։

Այս կողոպուտի շուրջ 1916 Մարտ 13ին ունկընդրութեան արժանանալով կայսեր մօտ՝ Ֆրանսական դեսպանը Պետրոգրադում՝ Մորիս Պալէոլոգ՝ Հայաստանի շուրջ հետեւեալ զրոյցն է ունենում Նիկոլայ Բ.ի հետ.

«... Ես խնդրում եմ Ձերդ Մեծութիւնից,— դիմում է դեսպանը ցարին,— որ Դուք Ձեր ամբողջ ուշադրութիւնը դարձնէք այն դաշնագրին, որ Ցըրանսան և Անգլիան կնքել են Փոքր Ասիոյ վերաբերմամբ։ Սազոնովը վաղը զեկուցում կը տայ Ձեզ նրա մասին։ Ես չեմ կասկածում, որ Ձեր կառավարութիւնը բարեացակամ վերաբերմունք ցոյց կը տայ Հանրապետութեան օրինական բաղձանքներին»։

«Այնուհետեւ ես թւում եմ համաձայնութեան հիմունքները (յայտնէ չէ, թէ Պալէոլոգի այս «հիմունք»ների մէջ կա՞ր արդեօք Սայքսի այն չքնաղ գիւտը, որ «կղերա-պանպանողական» արեւմտահայերը չեն ուզում միատեղ լինել «անիշխանական-ընկերվարական» արեւելահայերի հետ.—Ն.)։

«Կայսրը առարկում է Հայաստանի ենթադրեալ կազմակերպման դէմ։

«— Այս կէտը ամենաբարդ խնդիրներից մէկն է, — ասում է ցարը, — ես այն դեռ ես չեմ քննել իմ նախարարների հետ։ Անձամբ ես չեմ երազում որեւէ հողային նուաճում ձեռք բերել Հայաստանում, բացի Էրզրումից եւ Տրապիզոնից, որոնցից ռազմագիտական տեսակէտից հարկաւոր են Կովկասին» (ընդգծումները՝ մեզանից.—Ն.)։ *)

Ցարի համար հայ ժողովուրդ չկայ, որի արիւնոտ Դատը անթիւ անգամներ իր սեղանին եկած է, այլ կայ միայն... «ռազմագիտութիւն»։ **)

Ու նոյնը նաեւ իր նախարարների համար։

«Մայքս-Պիկոյ Համաձայնագիրի մասին իր կարծիքը յայտնելով՝ ծովային նախարարութիւնը՝ կառավարութեան ուղղած իր 1916 Մարտ 20 յիշատակագրի մէջ խօսելով դէպի արեւմուտք երկարող ռուսական սահմանների մասին՝ նկատում էր.

«Եթէ մենք մեր արեւմտեան ենթադրեալ սահմանը այնպէս երկարենք, որ մեր տիրակալութեան մէջ առնենք նաեւ Սինոպը, ապա մենք այս ձեւով որոշ քանակութեամբ թուրք-օսման նորանպատակներ կ՚առնենք մեր մէջ։ Այս պարագան հազիւ թէ էական անյարմարութիւն ունենայ իր մէջ, որովհետեւ Ռուսիոյ սահմանների մէջ մենք արդէն կարեւոր քանակութեամբ մուսուլմաններ ունենք եւ առ այժմ գրեթէ հիմք չունենք կասկածելու նրանց օրինապահութեանը մասին, իսկ պատերազմի վախճանին, նոր ծայրերկրի կազմակերպման շրջանին, բաւական ազգաբնակութիւնից կարելի է սպասել աւելի մեծ անդորրութիւն, քան, օրինակ, հայ ժողովուրդից, որի երակներում առանձնապէս անհանգիստ արիւն է հոսում» (ընդգծումները՝ մեզանից.—Ն.)։ *)

Հիմ առնելով նոյն «Մայքս-Պիկոյ Համաձայնութիւնը», որով Հայաստանը անգամանատում եւ նրա միայն մի մասն էր անցնում Ռուսիոյ, արտգործոց նախարար Սազոնովը 1916 Յունիս 14/27ին մի յիշատակագրով դիմում է կովկասեան փոխարքայ մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչին՝ նրա կարծիքը առնելու համար այն իրաւակարգի մասին, որ պիտի հաստատուի ռուսական իշխանութեան տակ ամբողջացած հայկական հողերի վրայ։

«Ինչպէս յայտնի է, — գրում էր նախարարը փոխարքային, — ծայրայեղ ուղենիշները, որոնց սահմաններում մեր մօտ սովորաբար դրւում է Հայկական Հարցի լուծումը, երկու հոսանքներ են կազմում. մէկը — հայ ազգայնականների ձգտումն է դէպի լիակատար ինքնավարութիւն, Ռուսիոյ հովանիի տակ, այն իրաւակառոյցով, որ մենք առաջարկում էինք 1913ին (ակնարկը՝ 1914 Յունուար 26ի բարեփոխութեանց.—Ն.), իսկ միւսը — սրանից հակառակն է, ա՛յն, որ ձգտում է հայերի քաղաքական արժէքը զերոյի իջեցնել եւ նրանց տեղը մուսուլմաններին դնել» (ընդգծումները՝ մեզանից.—Ն.)։

Քաղաքական այս երկու նշանաձողերի միջեւ թիավարելով եւ մատնանշելով, որ «Ռուսիոյ կողմից այժմ գրաւուած Մեծ Հայաստանի մէջ հայերը

---

*) Մ. Պալէոլոգ — «Ցարական Ռուսիան», 1923, Մոսկուա, էջ 73—74:

**) Նոյնն էր նաեւ իր նախորդների համար.

«Այս ազգը,— գրում էր մեր մասին ցար Ալէքսանդր Ա.,— իւր բազմամարդութեամբ զսպելով Վրաստանին սահմանակից՝ մենայուսալի միջոցը կարող է լինել մեր ազգայնութեան ուժը մեծացնելու եւ միեւնոյն ժամանակ Բիսորոնէութիւնն առաջին կապն ամրապնդելու» (տե՛ս «Մեր յոդուածը՝ «Մի ուշագրաւ Հայ», "Հայրենիք" ամսագիր, 1946 Մայիս-Յունիս, էջ 59)։

*) «Ռուսական Թուրքիոյ Բաժանումը», էջ 176:

երբեք մեծամասնութիւն չեն կազմած», իսկ այժմ, վերջին կոտորածներից յետոյ, «Թուական այս յարաբերութիւնը փոխուած է, բայց ոչ ի նպաստ հայերի», ուստի եւ «հայկական ինքնավարութիւնը նման պայմանների տակ իրականին մէջ պիտի առաջնորդէր դէպի մեծամասնութեան մէկ անարդար ստրկացումը փոքրամասնութեան կողմից»։

Այս անարդար «ստրկացում»ը չստեղծելու համար՝ «արդար» նախարարն առաջարկում էր մեր հողերի վրայ «հայերին շնորհել, որոշ սահմանների մէջ, դպրոցական եւ եկեղեցական ինքնակայութիւն, լեզուից օգտուելու իրաւունք, ինչպէս նաեւ քաղաքային եւ գիւղական ինքնավարութիւն՝ ընտրութեանց ժամանակ միշտ տարբեր ազգութեանց միջեւ թուաքանակի տոկոսային յարաբերութիւնը պահելով»։

Եւ որպէսզի «արդարութեան» դէմ որեւէ մեղանչում արած չլինի՝ «արդարամիտ» նախարարը առաջարկում էր մեր հողերի վրայ «նոյն սկզբունքները գործադրել նաեւ ոչ-քրիստոնեայ տարրերի նկատմամբ, որքան որ այդ թոյլ կը տան տեղական պայմանները եւ այդ տարրերի մշակութային զարգացման աստիճանը»։ *)

1916 Յուլիս 3/16 գրութեամբ պատասխանելով Սազոնովին՝ փոխարքան գրում էր.

«... Ես բոլորովին համամիտ եմ Ձեզ, որ պէտք է, եւ միանգամայն կարելի, հայերին տալ դպրոցական և եկեղեցական ինքնակայութիւն, իրենց եկեղեցական դրամագլուխներն ու կալուածները կառավարելու իշխանութիւն (հեղինակը, ըստ երեւոյթին, դեռ յիշում էր, որ 1903 Յունիս 12ի կայսերական հրամանագրով մեր եկեղեցական կալուածները մեզանից խլուած և 1905 Օգոստ. 1ի հրամանագրով մեզ այդ կալուածները ետ տրուած էին. այս չնորհն է, որ նա ապահովում էր մեզ.—Ն.), լեզուից օգտուելու իրաւունք, պայմանով, սակայն, որ բոլոր պաշտօնական դեպքերում առաջնութիւնը տուի ռուս լեզուին (ընդգծումը՝ մեզանից.—Ն.), ու նաև քաղաքային ու գիւղական ինքնավարութիւն՝ ընտրութեանց ժամանակ միշտ տարբեր ազգութեանց միջեւ թուաքանակի տոկոսային յարաբերութիւնները պահելով»։

Եւ որպէսզի, հետեւողութեամբը Սազոնովի, «արդարութեան» դէմ որեւէ մեղանչում կատարած չլինի, իր հերթին «արդարամիտ» փոխարքան տարապէս կրկնում էր.

«Նոյն սկզբունքները հարկ է գործադրել ոչ-քրիստոնեայ տարրերի նկատմամբ, որքան որ այդ թոյլ կը տան տեղական պայմանները եւ այդ տարրերի մշակութային զարգացման աստիճանը»։ *)

Այս էր վերաբերումը այն ժողովրդի հանդէպ, որի մասին հպարտանքով և գոհունակութեամբ կովկասեան փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովը 1914 Օգոստ. 22/9 թուականով տեղեկագրում էր Պետերբուրգ՝ վարչապետ Գորեմըիկինին.

«Բովանդակ հայ ժողովուրդը ուղղակի պատերազմ է տենչում Թուրքիոյ դէմ»։ **)

Դիւրահաւատ հայ ժողովուրդը տենչում էր այս պատերազմը ի խնդիր իր հայրենիքի ազատագրման, մինչ ցարական իշխանաւորները օգտագործում էին այս հաւատքը ընդդէմ նոյն հայրենիքի...

*) «Ասիական Թուրքիոյ Բաժանումը», էջ 208—209:

*) «Ասիական Թուրքիոյ Բաժանումը», էջ 212:

**) «Միջազգային Յարաբերութիւններ Աշխարհակալութեան Դարաշրջանին», հ. VI, մ. Ա., Մոսկուա, 1935, էջ 183:

Ինչո՞ւ կատարեցինք այս յետադարձ ակնարկը։

Լոկ ասելու համար, որ Ռուսիա բնաւ ձրիաբար չստացաւ ո՛չ Պոլիսն ու Նեղուցները եւ ոչ էլ Հայկական Նահանգները։

Այն միտքը հաստատելու համար, որ մասնաւորաբար Անգլիա կարող է զիջել ե՛ւ Նեղուցները, և՛ Հայկական Նահանգները, պայմանով, սակայն, որ ռազմա-քաղաքական համարժէք զիջումներով — հողային եւ տնտեսական — երաշխաւորուած լինի իր կայսրութեան ապահովութիւնը, եւ պաշտպանուած լինեն իր շահերը։

Այդպէս էր երէկ, նոյնն է և այսօր։

«Թայմ էնդ Տիդ» հանդէսը իր 1947 Փետր. 1ի թուով յայտնում էր, որ 1947 Մարտ 10ին Մոսկուայում գումարուելիք արտ. գործոց նախարարների Խորհրդաժողովում Բեւինը Խ. Միութիւնից Նեղուցների մասին նախ երաշխիք պէտք է ստանայ եւ նոր միայն նրա հետ համաձայնութեան գայ։

«... Ապահով պէտք է լինել,— գրում էր հանդէսը,— որ ռուսները մտադիր չեն Նեղուցներից մինչեւ Հնդկաստան իրենց ձախակողմեան բոլոր կազմակերպութիւնները քաջալերելու՝ որպէս խորհրդային-համայնավար ծաւալումի յառաջապահները... Նման երաշխիք ձեռք բերելուց յետոյ միայն կարելի պիտի լինէր ձեռնարկել բանակցութիւնների՝ այս շրջանում անգլեւռուս շահերը լաւագոյնս ապահովելու համար»։

Քիչ աւելի ուշ, 1947 Փետր. 20 թուականով, նոյնն էր կրկնում նաև «Ստար» (Լոնդոն), ասելով, որ Մոսկուայում, 1947 Մարտ 10ի Խորհրդաժողովի մէջ, պիտի քննուեն, ըստ արժանահաւատ աղբիւրների, «Միջերկրականին և Միջին Արեւելքին կապուած հարցերը, ինչպէս և ծովային ու գետային հաղորդակցութեանց խնդիրները»։

Եթէ զիջումներն ու երաշխիքները փոխադարձ չեն, նորից ենք կրկնում, անգամ աշխատաւորական Անգլիան — որ երբեք յօժար չէ մէկ թիզ իսկ իր աշխարհածաւալ կայսրութիւնից ուրիշին զիջելու — ռուսական ազդեցութեան ծաւալումին, բացայայտ թէ քողարկուած, պիտի ընդդիմանայ ամենաբուռն կերպով։

Այլ խօսքով՝ հարցերի կարգադրման նախախիմը վերատին պիտի մնայ հին ու ծանօթ դաստակարգը — «ուժերի հաւասարակշռութիւն»։

Անցեալ մեծ պատերազմին դաշնակից և յաղթական Մեծերը Մերձաւոր և Միջին Արեւելքի մէջ հետեւեալներն էին՝ Իտալիա, Ֆրանսա, Ռուսիա եւ Անգլիա։

Այս երկրները, «ուժերի հաւասարակշռութեան» հիմունքով փոխադարձ զիջումներ կատարելով, կարողացան մասնաւորաբար Թուրքիոյ կապուած հարցերը — ծովային թէ ցամաքային — կարգադրել։

Այսօր հին Մեծերից չկան Իտալիա և Ֆրանսա. նրանց փոխարինելու եկած է Ամերիկա. Մերձաւոր և Միջին Արեւելքի մէջ այսօր փաստօրէն Երեք Մեծեր կան միայն՝ Խ. Միութիւն, Մեծն Բրիտանիա և Հիւս. Ամերիկա։

Եւ այսօր, կրկին ու դարձեալ, համաձայնաբա՛ր կարելի պիտի դառնայ Թուրքիոյ վերաբերող հարցերը — ծովային և ցամաքային — կարգադրել։ Եթէ երբեք «ուժերի հաւասարակշռութեան» հիմունքով իրաւախոհութիւն գոյանայ Խ. Միութեան, Անգլիոյ և Ամերիկայի միջեւ։

«Ռուսական տեսակէտը որոշ է,— գրում էր Ամերիկայի կիսապաշտօնական գրիչներից Վոլտըր Լիպման,— եթէ Ռուսիա իր հակակշռի տակ չունենայ Թուրքիան՝ նրա կառավարութիւնը եւ բանակը,

ապա Մեծն Բրիտանիա եւ Ամերիկա, պատերազմի պարագային, պիտի գործածեն ոչ միայն Ներուցները Սեւ ծով մտնելու համար, իրենց անբաղդատելիորեն հզօր ռազմատորմիղներով, այլ եւ պիտի գործածեն Թուրքիոյ հիւսիսային եզերքները, Սեւ ծովի վրայ, իբրեւ խարիսխ օդանաւային եւ զինուորական գործողութեանց՝ Խ. Միութեան ամենախոցելի շրջանի դեմ։ Եւ Ռուսիա գիտէ, թէ այստե՛ղ է իր Աֆիլլէսեան կրունկը։ Որովհետեւ այս կէտից աւելի դիւրին է խոցել քաղաքականօրէն ամենեն նուազ «ապահով» խորհրդային հանրապետութիւնը՝ Ուկրայնան։ Այս կէտից «թշնամի զնդակի հասողութեան շրջագծի մէջ» պիտի լինեն քարիւղանոցները, հանքածուխով հարուստ շրջանները եւ Խ. Միութեան պարենաւորումի գլխաւոր վայրերը»։

Այս պատկերը գծելով՝ վճռաբար վկայագրում էր ամերիկեան բանբերը.

*«ՄԻՄԻԱՑՆ ՈՒԺԵՐԻ ՀԱՒԱՍԱՐԱԿՇՌՈՒԹԻՒՆԸ ԿԱՐՈՂ Է ՎԵՐՋ ՏԱԼ ՈՒԺԻ ՄՐՑԱԿՑՈՒԹԵԱՆ»։ *)*

Մի այնպիսի հաւասարակշռութիւն, սակայն, որ հաստատուած լինի Խ. Միութեան ամենէն տկար կէտի վրայ՝ նրան պարտադրելէն խաղաղութեան մէջ պահել կարենալու համար։

Այս կէտը այնտե՛ղ կարող է լինել, ուր Խ. Միութիւնը անկարող է յարձակողականի անցնել և ստիպուած է պաշտպանողականի վրայ մնալ, եւ ուր իր հակառակորդները, ընդհակառակն, պարտադրուած չեն պաշտպանողականի վրայ մնալու և կարող են պատերազմի ժամանակ յարձակողականի անցնել եւ լուծում ձեռք բերել։

*) Ա. Լիպմանն — «Մնայուն խաղաղութիւն կարո՞ղ է գոյութիւն ունենալ Արեւմուտքի եւ Արեւելքի միջեւ» ("Ազատ Օր", Ա-թէնք, 24 Սեպտ. 1946):

Այս կէտը — արեւելեան Միջերկրականն է (Նեղուցներով միասին)։

Ներկայիս աշխարհի և ո՛չ մէկ անկիւնում, ըստ Լիպմանի, Խ. Միութիւնը և Անգլիա ու Ամերիկա իրենց բախտակիցներ ուժերով չեն հանդիպում իրարու այնպէս, ինչպէս Թուրքիոյ կամ Մերձաւոր Արեւելքի մէջ.

«Միացեալ Նահանգներու նեմարիս եւ իրապաշտ քաղաքականութիւնը, — *գրում է Լիպմանն*, — պէտք է կայանայ ամերիկեան զօրութեան ամրացումին մէջ մէկ որոշ կէտի վրայ, ուր, պատերազմի պարագային, Խ. Միութիւնը սկզբից իսկ պիտի գտնուի պաշտպանողականի վրայ։

«Այս կէտը յայտնապէս արեւելեան Միջերկրականի մէջ է, Սեւ ծովի ուղղութեամբ։

«Միացեալ Նահանգներու ծովային եւ օդային զօրութիւնը կարող է կենտրոնացուել նիշտ այստեղ, Թուրքիոյ այս կենտրոնի մօտիկը, եւ այստեղից էլ, հետեւաբար, կարող է առաւելագոյն արդիւնքով հակակշռել Կարմիր Բանակի յարձակողական զօրութիւնը։

«Միացեալ Նահանգներու համար բնաւոր է գործածել իր լաւագոյն միջոցներ՝ հիմից խզուած ուժերի հաւասարակշռութիւնը վերականգնելու համար»։ *)

Լիպմանը կարծում է, որ անգլեւամերիկեան ուժերը իր մատնանշած այդ կէտում կենտրոնացնելով եւ խախտուած հաւասարակշռութիւնը վերահաստատելով՝ Անգլիա և Ամերիկա ի վիճակի պիտի լինեն «ՁԷՁՈՒԱՑՆԵԼ» Թուրքիան, որ ասել է՝

*) Ա. Լիպման — "Այժմ Ամերիկային է մնում որոշելը» («Գազէտ դը Լօզան", 26 Սեպտ. 1946):

խաղաղութեամբ լուծել Թրքական ծանրագոյն կընճիռը։

Տարաբախտաբար, հեղինակը մեզ չի պարզում, թէ ի՛նչ է հասկանում «չեզոքացում» ասելով։

Այս բառը, ինչպէս իր տեղում ասացինք, գալիս է Կրիմի պատերազմից. Փարիզի վեհաժողովը (1856թ) որոշեց «չեզոքացնել» Սեւ ծովը, որ նշանակում էր՝ բաց ու ազատ հոչակել այդ ջրերը։

Սակայն Փարիզում խօսքը ծովի մասին էր, բայց ո՛չ գամաքի, ո՛չ Թուրքիոյ։

Որտե՞ղ արդեօք, որ Լիպմանը նոյն գաղափարը որոճում է այսօր նաև Թրքական ցամաքի, աւելի ճիշտը՝ բովանդակ Թուրքիոյ նկատմամբ,— Թուրքիան ո՛չ ինձ եւ ո՛չ քեզ, այլ մեզ բոլորիս՝ բաց ու ազատ...

Աւելի ուշ, 1946թ Դեկտեմբեր, երբ մինչ այդ «Զորսների արտ. գործոց նախարարները Նիւ Եորքում արդէն եկած էին որոշ իրաւախոհութեան եւ փոխադարձ զիջումներով մի շարք ծանրակշիռ խնդիրներ լուծած, Լիպման՝ անդրադառնալով Մոսկուայի կողմից կատարուած այս զիջումների ներքին պատճառներին՝ ի լուսաբանութիւն իր հիմնական տեսակէտի — ուժեր կենտրոնացնելով արեւելեան Միջերկրականում՝ ազդել Կրեմլի վրայ — գրում էր.

«Կրեմլը ընդունեց այն իրողութիւնը, թէ կարմիր Բանակն ու իր գործակալները՝ Հինգերորդ Զորասիւնը՝ չեն կարող յառաջանալ դէպի Իրան, Թուրքիա և Ցունաստան։ Կրեմլը կարծում էր, թէ կարող էին։ Բայց նրանք ետ մղուեցին Միջերկրական ուղարկուած մեր ուժերի կողմից (ակնարկը այն այցելութեանց, որ ամերիկեան ռազմանաւերը տուին Թուրքիոյ.—Ն.), մի քայլ, որ ուղղեց ուժերի կշիռը Կրեմլի իրապաշտներին միանգամայն հասկանալի լեզուով»։ *)

Տարբեր մօտեցումով, սակայն խորքին մէջ միշտ նոյն «ուժերի հաւասարակշռութիւն»ը ելակէտ առնելով, ամերիկեան գրիչներից Վ. Շինան գրում էր «Ասիա»յի մէջ.

«Եթէ պատերազմ ծագի Միացեալ Նահանգների և Ռուսիոյ միջև՝ ռուսերը պիտի գրաւեն Նեղուցները մեր առաջին հիւլէական ռումբը պայթելուց առաջ։ Իսկ եթէ պատերազմ չծագի՝ ո՞ւր է վտանգը ռուսական հակակշռից։

«Ես այս վէճի ելքը տեսնում եմ նրա մէջ, որ Նեղուցները անխուսափելիօրէն — աշխարհագրական դիրքով, բնութեամբ և տրամաբանութեամբ — պէ՛տք է տրուեն Ռուսիոյ։

«Մեր դիւանագէտների համար շատ աւելի իմաստուն պիտի լինէր սակարկել, փոխանակ ընդդիմանալու։

«Ռուսների բաց ծով դուրս գալու բաղձանքը շատ է զօրաւոր, եւ նրանք իրենց այս պահանջին գոհացում տալու համար շատ զոհողութիւններ պիտի ստանձնեն։

«Մենք, փոխանակ 1860 թուականի սկզբունքները կրկնելու, նորից ուսումնասիրենք խնդիրը եւ որոշենք, թէ ո՛րն է լաւագոյն լուծումը, արդեօք ի՛նչ առանձնաշնորհումներ կարող ենք ստանալ Նեղուցների նոր համաձայնագրին յօժարելու պարագային։ Սրանով մենք ամենայառաջադէմ քայլը արած կը լինենք ի խնդիր խաղաղութեան»։ **)

---

*) **Վ. Լիպման** — «Կայունութեան պահ մը» («Հայրենիք», 9 Յունուար 1947):

) **Վինսրոբ Շինան — «Նեղուցների հարցը» («Հայրենիք», 11 Հոկտ. 1946):

Ի՞նչ կատարուեց այս ուղղութեամբ պատերազմից այս կողմ։

1939 Յունիս 24ին, Էնկիւրիի մէջ, Ֆրանսական դեսպանի և Թուրքիոյ արտ. գործոց նախարարի միջև ստորագրուեց այն ակտը, որով Լեռնային Սանջակը (Սուրիոյ) փոխանցուում էր Թուրքիոյ։

Այս ակտով, ձեւապէս և փաստօրէն, Թուրքիա բացած եղաւ երկրորդ համաշխարհային պատերազմը, որովհետեւ Էնկիւրին ձրիաբար ստանում էր Սանջակը ոչ իբրև խաղաղութեան, այլ իբրեւ պատերազմի վարձք։

Անիմանալի են աշխարհի բաները։

Այն երկիրը, որ 1939 Յունիս 24ի ակտով հանդիսացաւ առաջին պատերազմիկը երկրորդ համաշխարհային մեծ սպանդի մէջ, կարողացաւ փաստօրէն դուրս մնալ այդ պատերազմից, եւ միայն 1945 Փետր. 23ին, երբ պատերազմը գրեթէ վերջացած էր արդէն, ակամայ «պատերազմ» յայտարարելով Գերմանիոյ և Ճապոնի դառնալ վերջին պատերազմիկը բոլոր երկրների մէջ։

Թուրքիա ձեւապէս դուրս մնաց պատերազմից, սակայն Թրքական բարդ կնճիռը միշտ կապուած մնաց պատերազմին։

Այսպէս եղաւ մանաւանդ Հ. Միութեան առընչութեամբ։

Ահա մի քանի պաշտօնական թուականներ եւ ակտեր, որոնք մատնում են այդ կապը մեր ցոյց տուած ուղղութեամբ։

1939ին Մայիս 12ին, ինչպէս իր տեղում մատնանշեցինք արդէն, հրապարակուեց փոխադարձ օգնութեան անգլեւթուրք յայտարարագիրը, որին միացաւ նաև Ֆրանսան։ *)

*) Տե՛ս գրքոյկիս 248րդ էջը։

1939 Սեպտ. 26ին Թուրքիոյ արտ. գործոց նախարարը՝ Սարաջօղլու՝ մեկնեց Մոսկուա, ուր մնաց շուրջ մէկ ամիս և որտեղից 1939 Հոկտ. 17ին ձեռնունայն վերադարձաւ իր հայրենիքը։ Ստոյգ յայտնի չեղաւ, թէ ինչո՞ւ գնաց և ինչո՞ւ եկաւ։

1939 Հոկտ. 19ին Էնկիւրիի մէջ կնքուեց անգլեւֆրանկեթուրք զինակցութիւնը (մի յատուկ պրոտոկոլով, ուր յայտնուում էր, որ զինակցութիւնը Հ. Միութեան դէմ ուղղուած չէ)։

1941 Յունիս 18ին, գերմանեւռուս պատերազմից հինգ օր առաջ, կնքուեց գերմանեթուրք բարեկամութեան ուխտը։

Այս ուխտից յետոյ, 1941ի վերջերին, Իդընը՝ Անգլիոյ արտ. գործոց նախարարը՝ մեկնեց Մոսկուա և տեսակցեց Ստալինի հետ։ *)

1943 Հոկտ. 19ից մինչեւ Հոկտ. 30, Մոսկուայի մէջ, տեղի ունեցաւ Դաշնակիցների՝ Անգլիոյ, Ամերիկայի և Հ. Միութեան արտ. գործոց նախարարների պատմական խորհրդաժողովը, կարեւորագոյնը պատերազմի շրջանի դաշնակից բոլոր հաքոյթների մէջ։

Մոսկուայից Գահիրէ դառնալով՝ Իդընը այստեղ 1943 Նոյ. 5ին հանդիպում ունեցաւ Թուրքիոյ արտ. գործոց նախարար Մենեմէնջիօղլուի հետ։

1943 Նոյ. 28ից մինչեւ Դեկտ. 2, Թեհրանի մէջ, տեղի ունեցաւ Երեք Մեծերի՝ Չըրչիլի, Ստալինի և Ռուզվելտի անդրանիկ հանդիպումը։

1943 Դեկտ. 4ից մինչեւ Դեկտ. 7 տեւեց Գահիրէի խորհրդաժողովը՝ մասնակցութեամբ Չըրչիլի, Ռուզվելտի և Թուրքիոյ հանրապետութեան նախագահ Ըսմեթի, որ այս նպատակով Էնկիւրիից Ռուզվելտի օգնաւով եկած էր Գահիրէ։

*) Իդընի անդրանիկ այցելութիւնը Մոսկուա տեղի ունեցած է 1935 Մայիս 28ին։

1945 Փետր. 5ից մինչև Փետր. 13ը տեւեց Երեք Մեծերի՝ Ռուզվելտի, Ստալինի և Չըրչիլի երկրորդ Խորհրդաժողովը՝ Եալտայում։

Այստեղ «Երեք»ները որոշեցին, որ այն ազգերը, որոնք առ 1 Մարտ 1945 պատերազմ յայտարարած չեն Գերմանիոյ և Ճապոնի դէմ, Միացեալ Ազգերի գալիք Համաժողովին պիտի չմասնակցեն։ Այս որոշումը հիմ առնելով՝ Թուրքիոյ Ազգ. Մեծ Ժողովը իր 1945 Փետր. 23ի լիագումար նիստի մէջ, 401 երեսփոխանների միաձայն քուէով, պահանջուած պատերազմը յայտարարեց, սակայն ոչ թէ կռուելու, այլ երկու ամիս վերջ, 1945 Ապր. 25ին, Սան Ֆրանչիսկոյում գումարուելիք խաղաղութեան Ժողովին մասնակցելու համար։

1945 Մարտ 19ին Մոսկուան յատուկ ծանուցագրով նախազգուշացրեց Թուրքիան, որ հին հիմերով այլեւս պիտի չնորոգի 1925ի ռուսաթուրք բարեկամութեան ուխտը։

1945 Յուլիս 17ից մինչև Օգոստ. 2 տեղի ունեցաւ Պոտսդամի Խորհրդաժողովը, մասնակցութեամբը Ստալինի, Չըրչիլի (որին Յուլիս 25ին փոխարինեց Անգլիոյ նոր վարչապետը՝ Էտլի) և Տրումբնի (որ փոխարինում էր մեռած Ռուզվելտին)։

1945 Սեպտ. 11ին Լոնդոնում բացուեց հինգ մեծ պետութեանց արտ. գործոց նախարարների Խորհրդաժողովը, որ վերջացաւ ձախողանքով Հոկտ. 2ին։

Այս ձախողանքը դարմանելու համար, 1945 Դեկտ. 16ից մինչև 1945 Դեկտ. 26, նոր Խորհրդաժողով գումարուեց Մոսկուայում, բայց այս անգամ մասնակցութեամբը ոչ թէ հինգ, այլ միայն երեք մեծ պետութեանց՝ Անգլիոյ, Ամերիկայի և Խ. Միութեան արտ. գործոց նախարարների. այս նոր

Խորհրդաժողովը վերջացաւ «լիակատար համաձայնութեամբ»։

Արդ, մեր յիշատակած այս բոլոր դէպքերում, այս համաձայնութեանց և Խորհրդաժողովների մէջ, Խ. Միութեան կապակցութեամբ Թուրքիոյ խնդիրը — ծովային և ցամաքային — քննուե՞ց թէ չքննուեց։

Այն ծանուցագիրը, որ Նեղուցների հարցի շուրջ Խ. Միութիւնը 1946 Օգոստ. 8ին ներկայացրեց Թուրքիոյ, անակնկա՞լ էր քաղաքական աշխարհի համար, թէ՞ այդ աշխարհը մի չափով նախապատրաստուած էր այդ ծանուցագրին։

Մենք այս հարցումների պատասխանը, տարաբախտաբար, չունենք։

Ու չենք կարծում, թէ շուտով պիտի ունենանք։

Շատ ուշ, մեզ փոխարինող սերունդները միայն, կարող պիտի լինեն լրիւ տեղեակ դառնալ բովանդակ անցած–դարձածին։

Միայն կցկտուր վկայութիւններ ունենալով հանդերձ, մեզ իրաւունք ենք տալիս, այնուամենայնիւ, յայտարարելու, որ մեր յիշատակած բոլոր հանդիպումներին և Խորհրդաժողովներին Թրքական խնդիրը չէր կարող չքննուել։

Այն հարցը, որ առաջին մեծ պատերազմին, ինչպէս տեսանք, աղբիւր հանդիսացաւ քաղաքական այնքան բարդ խաղերի եւ այնքան ծանրակշիռ բանակցութեանց ու համաձայնութիւնների՝ երկրորդ համաշխարհային պատերազմին չէր կարող անուշադրութեան մատնուել։

Քննութիւնից չէր կարող դուրս մնալ մի երկիր, որ այս վերջին՝ երկրորդ մեծ պատերազմին՝ փաստօրէն առաջին և վերջին պատերազմիկը եղաւ,

կարծես ինք բացաւ և ինք գոցեց պատերազմը՝ միաժամանակ ինք — որ գիտցաւ հմտաբար քաղաքական բոլոր լարերի վրայ խաղալ — պատերազմից դուրս մնալով։

Ինքն իսկ Թուրքիան զգում էր, որ մասնաւորաբար 1941 Յունիս 22ից այս կողմ, երբ ծայր տուաւ գերմանեւռուս զինաբախումը, չէր կարող իր հարցը Դաշնակիցների կողմից քննուած չլինել՝ համախորհուրդ Խ. Միութեան հետ։

Այն մի քանի գաղտնի փաստաթղթերը, որ գերման արտ. գործոց նախարարութեան դիւաններից առնելով հրատարակութեան տուաւ Մոսկուան — փաստաթղթեր, որոնք ընդգրկում են 17 ամսեայ մէկ կարճատեւ շրջան միայն, 1941 Մայիս 14ից մինչև 1942 Դեկտ. 9 (ամբողջ 1943ի փոթորկալի տարեշրջանից միայն 9 Մայիս թուակիր մէկ անարժէք փաստաթուղթ կայ բերուած) — մատնում են այն խոր տագնապը, որ ապրում էր Թուրքիան Խ. Միութեան առնչութեամբ։

1941ի վերջերին, ինչպէս ասացինք, Իդէնը մեկնած էր Մոսկուա և տեսակցած Ստալինի հետ։

Գերման դեսպանը Էնկիւրիի մէջ՝ Ֆոն Պապընը՝ 1941ի տարեշրջանը ընդգրկող իր քաղաքական տեսութեան մէջ, նուիրուած Թուրքիոյ և հասցէագրուած Բերլին՝ արտ. գործոց նախարարութեան, անդրադառնալով այդ տեսակցութեան, 1942 Յունուար 5 թուականով գրում էր.

«Վերջերս պ. Սարաջօղլուի եւ պ. Նումանի (Մենեմէնջիօղլու) հետ ունեցած իմ զրոյցներից ցոյց է բխում է, որ Ռուսիայից ամէն բան կարելի է սպասել։ Թրքական կառավարութիւնը եթէ մինչեւ իսկ որեւէ պաշտօնական հաստատում չստանայ այն հողային պահանջների մասին, որ ցնցուած են Իդենի եւ Ստալինի միջեւ, նա, այնուամենայնիւ, պիտի ենթադրի, որ նման պահանջները համապատասխանում են բոլշեւիկների իրական փափագներին»։*)

Խօսքը Խ. Միութեան՝ Թուրքիայի՛ց ունեցած հողային պահանջների մասին է։

Ֆոն Պապընի հաղորդագրութեան մէջ տեղ գտած «ցորեն բխում է» դարձուածքը գալիս է վկայելու, որ մէկ այլ ու տակաւին չհրապարակուած հաղորդագրութեան մէջ — ուղղուած, անշուշտ, Բերլին — գերման դեսպանը դարձեալ խօսած է Խ. Միութեան հողային պահանջների մասին Թուրքիայից։

Թուրք վարիչները այս պահանջները «համապատասխան» էին գտնում բոլշեւիկների «իրական փափագներին», որովհետեւ նրանք տեղեակ էին այս վերջիններին։

Տեղեակ էին կա՛մ գերման աղբիւրներից (թէ՛ մինչև 1939 Օգոստ. 23ի գերմանեւռուս ուխտը եւ թէ այդ ուխտից այս կողմ, մինչև 1941 Յունիս 22ը, մինչեւ գերմանեւռուս պատերազմը), կա՛մ դաշնակից աղբիւրներից (թէ՛ գերմանեւռուս ուխտին նախորդող շրջանին, 1939 Ապր. 15ից մինչեւ 1939 Օգոստ. 25, երբ Անգլիա և Ֆրանսա 132 օրեր տեւող ամուլ բանակցութիւններ էին վարում Խ. Միութեան հետ Մոսկուայի մէջ, թէ՛ 1939 Հոկտ. 19ի անգլեւֆրանկեւթուրք զինակցութեան շրջանին, եւ թէ 1941 Յունիս 22ից այս կողմ, երբ Անգլիա նոր զինակցութեամբ կապուեց Մոսկուայի) եւ կամ տեղեակ էին ուղղակի խորհրդային աղբիւրներից (թէ՛ այն անմոռաց օրերին, 1939 Սեպտ.

*) «Գերմանիոյ Արտ. Գործոց Նախարարութեան փաստաթղթերը», հ Բ., «Գերման հաղթականութիւնը Թուրքիոյ մէջ» (1941—1943թ.թ.), Մոսկուա, 1946, էջ 59:

26ից մինչեւ 1939 Հոկտ. 17, երբ Սարաջօղլուն ինչ որ բանակցութիւններ էր վարում Մոսկուայում, և թէ այդ թուականից այս կողմ, մինչև Պապընի 1942 Յունուար 5 տեղեկագիրը)։

Նոյն տագնապը — նաև Նեղուցների նկատմամբ։

«Թուրքերը յստակօրէն գիտակցում են,— 1942 Դեկտ. 9 թուականով տեղեկագրում էր Պոլսոյ գերման ընդհ. հիւպատոսը՝ Զայլերը՝ Բերլին՝ արտ. գործոց նախարարութեան,— թէ անգլիացիների յաղթանակը միաժամանակ պիտի նշանակի յաղթանակը Ռուսիոյ, որ ասել է՝ վերջ Թուրքիոյ տիրակալող դիրքին Նեղուցներում»։ *)

Վերստին մնում է ենթադրել, թէ թուրքերը մի բան գիտէին — ու գիտէին դարձեալ քիչ վերը մատնանշած մեր աղբիւրներից — երբ ասում էին, որ դաշնակից բլոկը պատերազմը չհասած դէպքում՝ Թուրքիոյ և Ս. Միութեան դիրքերը պիտի փոխուեն Նեղուցներում։

Դաշնակից աղբիւրներից, ինչպէս ասացինք, մենք միայն կցկտուր վկայութիւններ ունենք այս մասին։

Ինչպէս իր տեղում նկատեցինք, գաղտնիքների վրայից վարագոյրի ծայրը առաջին անգամ բարձրացնողը եղաւ Հիւս. Ամերիկայի պետական քարտուղարը՝ Ջէյմս Բըրնզ՝ Ուաշինգտընում 1945 Հոկտ. 10ին արտասանած իր ճառի մէջ։

Խօսք առնելով մամուլի հաւաքոյթում՝ Բըրնզ յայտարարում էր.

«Պոտսդամի խորհրդաժողովում համաձայնութեան եկած էին երեք Մեծերը անջատաբար չբփ�

*) Ibid., էջ 132:

ման մէջ մտնելու Թուրքիոյ հետ՝ Մոնտրէոյի համաձայնութեան վերաքննութեան մասին՝ Դարդանելի միջազգայնացման հիմունքով»։

Իր հաղորդագրութեան վերջաւորութեան՝ «Լոյսերը»ը հետեւեալ բառերով էր եզրափակում Բըրնզի խօսքը.

«Յաւակնելով գաղտնի մանրամասնութիւններ տալ Պոտսդամի խորհրդաժողովի մասին, Ջ. Բրնզ ասաւ, որ Ռուսիա որոշապէս խարիսխներ պահանջած է Դարդանելում եւ պահանջած է Հայաստանին վերադարձնել ռազմագիտօրէն երկու կարեւոր լեռնաշղթաներ՝ Կարս եւ Արդահան»։ *)

Չենք կարծում, որ Հիւս. Ամերիկայի պետական քարտուղարը այսքան պատասխանատու մի յայտարարութիւն անէր, եթէ երբեք այդ՝ յայտարարութիւնը իրականութեան համապատասխան չլինէր։

Ի պաշտպանութիւն մեր այս պնդումին՝ մենք ունենք Անգլիոյ արտ. գործոց նախարարի՝ Բեւինի յայտարարութիւնը, որ աւելորդ չենք նկատում մի անգամ եւս յիշատակել այստեղ, պատմական իր բացառիկ արժէքը նկատի առնելով։

Համայնքների Տան մէջ խօսած իր 1946 Փետր. 21ի ճառի մէջ Բեւինը յայտարարում էր.**)

«Կարո՞ղ եմ մի քանի խօսք անել Թուրքիոյ մասին։ Սա մի հարց է, որ ի յայտ է գալիս մեծ չափով Միջին Արեւելքի հակամարտութեան մէջ։ Ե՛ս այս հարցը արծարծեցի Մոսկուայում (ընդգծուած է մեր կողմից)։

*) «Le Progrès Egyptien» (Գահիրէ), 11 Հոկտ. 1945:

**) Բեւինի ճառը այս անգամ տալիս ենք այն թնոգրից, որ Գահիրէի բրիտ. դեսպանատան մամուլի եւ տեղեկատուութեանց նիւղը տրամադրած էր թերթերին:

մը՝ մեզանից.—Ն.) և անկեղծօրէն պիտի խոստովանեմ Խորհրդարանի առջեւ, թէ Նորին Վեհափառութեան կառավարութիւնը վրդովուած էր այն բանով, որ ջղերի պատերազմ է այս՝ երկու կողմից էլ առաջնորդուած դէպի մամուլի հակաճառութիւն։ Ինձ պարտաւոր եմ զգում ասելու այս ժողովին եւ աշխարհին, թէ միջազգային խաղաղութեան դէմ մեծագոյն վտանգներից մէկը մամուլի հակաճառութիւններն են, շատ յաճախ սխալ տուեալներով, որոնք առաջ են բերում թիւրիմացութիւններ եւ մարդկանց պահում ոստումի դիրքում։ Այն համոզումին եմ, թէ շատ դէշ բան է այս։ Հակամարտութեան մէջ երկու կէտեր կան,— մէկը՝ Դարդանելն է, իսկ միւսը՝ երկու նահանգները»։

Այս վերջին կէտին անդրադառնալով՝ նախարարը յայտարարում էր.

«Երկու նահանգների պարագային, ինչպէս ես եմ ըմբռնում իմ կարդացածը, Թուրքիոյ և Ռուսիոյ միջև սահմանագլուխը հաստատուած էր ոչ թէ յաղթականի կամ յաղթուածի կողմից, այլ պարտուած Թուրքիոյ և տարաբախտ Ռուսիոյ կողմից, որ անցեալ պատերազմից ելած էր ոչ շատ լաւ, առանց որ ինքն այդ բանում յանցանք ունենար։ Հետեւաբար, կարելի չէ ասել, թէ պարտադրուած սահմանագլուխ է այս։ Կայ այդ նահանգներում ապրող ժողովրդի տեսակէտը եւս, բայց որքան ես կարողացած եմ այն ուսումնասիրել՝ բնակչութեան այնպիսի տեղափոխութիւն եղած է (նախարարը չի ուզում գաղթ եւ կոտորած ասել.—Ն.), որ ազգութեան խնդիր այլեւս մնացած չէ (նախարարը չի ուզում ասել, որ այդ նահանգներում հայ այլեւս մնացած չէ.—Ն.)։ Հետեւաբար, քանի որ սահմանագլուխը գծուած էր կարծեմ նոյնինքն Սպարապետի

կողմից, ցաւալի է, որ նա այժմ նիւթ է դառնում հակամարտութեան և ջղերի պատերազմի»։

Ապա Նեղուցների միջազգայնացման տեսակէտն արծարծելով՝ Բեւինը հետեւեալ ընդհանուր յայտարարութիւնն էր անում.

«Անկեղծօրէն պիտի ասեմ, որ չեմ ուզում Թուրքիան փոխակերպուած տեսնել արբանեակ պետութեան։ Ուզում եմ, որ Թուրքիան անկախ եւ ազատ պետութիւն մնայ»։*)

Ինչպէս տեսնում էք, խորքին մէջ Բեւինը կրկնում էր այն, ինչ որ իրենից առաջ ասած էր Բրընդ։

Մեզ այստեղ չանագրգռում են Բեւինի խօսակցութեանց վայրը և ժամանակը սակայն։

Ո՞ւր և ե՞րբ նա հ. Միութեան հետ խօսած է Դարդանելի և հայկական երկու շրջանների մասին։

Իր յայտարարութեան այդ մասը քիչ վերը մենք ընդգծեցինք արդէն. նա խօսած է Մոսկուայում և այդ խնդիրները այնտեղ յուզած է ինքը։

Իսկ Մոսկուայում, իբրև պետական անձ, Բեւինը եղած է միայն 1945ի վախճանին, այն Խորհրդաժողովին, որ տեղի ունեցաւ Անգլիոյ, Ամերիկայի և հ. Միութեան արտ. գործոց նախարարների մասնակցութեամբ և տեւեց 1945 Դեկտ. 16ից մինչև Դեկտ. 26։

Ուրեմն, նաև Մոսկուայի դեկտեմբերեան Խորհրդաժողովում (1945ի) արծարծուել եւ քննուել են Նեղուցների և հայկական հողերի հարցերը։**)

---

*) Այս վերջին հատուածը (Նեղուցների մասին) հաղած ենք Գոլոսոյ «Ժամանակ» թերթի 1946 Փետր. 22ի թուից։

) Անցողակի յիշատակենք այստեղ, որ հ. Միութեան Գործավարների Խորհուրդը գաղթահայութեան դէպի Հայաստան յվերադարձի մասին իր որոշումը հրապարակեց **1945 Դեկտ. 3ին, այսինքն 14 օր առաջ Մոսկուայի Խորհրդաժողովից, ուր Բեւին յուզեց հայկական հողերի հարցը։

Անդրադառնալով Նեղուցների հարցին՝ նոյնն էր վկայում նաև Չըրչիլը 1946 Մարտ 15ին Նիւ Եորքում արտասանած իր ճառի մէջ.

«Պոտսդամում անգլիացիք և ամերիկացիք Խ. Միութեան առաջարկեցին,— յայտարարում էր Պոտսդամի դերակատարներից Չըրչիլ,— երաշխիք Նեղուցների լիակատար ազատութեան մասին, խաղաղութեան և պատերազմի ժամանակ, թէ՛ ռազմական և թէ առեւտրական նաւերի համար։ Թուրքիա պիտի տար այս երաշխիքը։ Բայց մեզ ասուեց, թէ այս բաւական չէ, թէ Խ. Միութիւնը ուզում է Նեղուցներից ներս մի ամրոց, որտեղից նա պիտի կարողանար իշխել Պոլսոյ վրայ։ Սա Նեղուցները քանալ ասել չէ՛, սա Նեղուցները փակել ասել է, յօգուտ միայն մէկ ազգի»։ *)

Ուրեմն, վկայութեամբը երեք պատասխանատու վարիչների —Բըրնզ, Բեւին և Չըրչիլ —, Թուրքիոյ մասին, նրա նկատմամբ ունեցած խորհրդային պահանջների կապակցութեամբ, խօսք դարձած է դաշնակից երկու խորհրդաժողովների մէջ, նախ՝ Պոտսդամ եւ ապա՝ Մոսկուա։

Բայց «Իզվեստիա», Խ. Միութեան պաշտօնական օրգանը, վկայում է, որ Նեղուցների մասին (ու թերեւս ոչ միայն Նեղուցների...) խօսք դարձած է է՛լ աւելի առաջ, Խրիմի խորհրդաժողովում.

«Սեւծովեան Նեղուցների և նրանց օրինավիճակի փոփոխման մասին,— յայտարարում էր պաշտօնաթերթը՝ իր խմբագրական սիւնակներից,— հարց ծագած է տակաւին Խրիմում, երեք մեծ պետութեանց խորհրդաժողովում»։ **)

Այս նոյնը հետագային, 1947 Մարտ 25ին, հաստատեց նաեւ Ուաշինգտընը։

*) «Յուս.», 18 Մարս 1946։

**) «Իզվեստիա», 18 Օգոստ. 1946։

Այս վկայութիւնները բաւ պէտք է համարել ընդունելու համար, որ Խրիմ, Պոտսդամ եւ Մոսկուա, 1945ին տեղի ունեցած այս երեք խորհրդաժողովներում, խօսուած է այն պահանջների մասին, որ Խ. Միութիւնը ունի Թուրքիոյ նկատմամբ։

Խօսուած է և աւելի՛ առաջ։

Ահա բարձրօրէն հեղինակաւոր Բեւինի վկայութիւնը այս մասին։

Անդրադառնալով Նեղուցների հարցին, Անգլիոյ արտ. գործոց նախարարը Համայնքների Տան մէջ խօսած իր 1946 Հոկտ. 22ի ճառում, ինչպէս մի անգամ յիշատակեցինք արդէն, յայտարարում էր.

«Վերջին ԵՐԵՔ-ՉՈՐՍ տարիների ընթացքին գումարուած միջազգային ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆԵՐԻՆ, ինչպէս նաեւ ԹՈՒՐՔ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԵՏ իր ունեցած թղթակցութեան մէջ (*դարձեալ վերջին ԵՐԵՔ-ՉՈՐՍ տարիների ընթացքին.*—Ն.) խորհրդային կառավարութիւնը բացորոշապէս յայտնած է, թէ ուզում է անպայման խարիսխ ունենալ Նեղուցների շրջանում, ինչ որ իրականին մէջ Նեղուցների հակակշիռը պիտի յանձներ Խ. Միութեան եւ ոչ թէ այն ցամաքային պետութեան (*ակնարկը՝ Թուրքիոյ.*—Ն.), որ բացայայտօրէն ամենից աւելի շահագրգռուած է այդ ջրուղիով»։ *)։

Ամէն տեղ ընդգծումները մենք կատարեցինք։

Մեծն Բրիտանիոյ արտ. գործոց նախարարի հանգամանքով խորհրդարանի ամբիոնից 1946 Հոկտ. 22ին ի լուր աշխարհի վկայել, թէ Խ. Միութիւնը խարիսխներ պահանջած է ՎԵՐՋԻՆ ԵՐԵՔ-ՉՈՐՍ ՏԱՐԻՆԵՐԻՆ, այս նշանակում է պաշտօնապէս վաւերագրել, որ նա այս խարիսխները պահանջած է

*) «Ցառաջ», 25 Հոկտ. 1946 («Ցառաջ»ը Բեւինի ճառը թարգմանած է բնագրից)։

1942ից այս կողմ. աւելի ճիշտը՝ այն օրից ի վեր, երբ Իդրն, առաջին անգամը լինելով երկրորդ մեծ պատերազմի շրջանին, իր անդրանիկ այցելութիւնը տուաւ Մոսկուա՝ Ստալինին, 1941ի վախճանին։

Թուրք վարիչները՝ Սարաջօղլու և Նուման Մենեմէնջիօղլու՝ մի քան գիտէին անշուշտ, երբ մտահոգօրէն պնդում էին էնկիւրիի գերման դեսպանին, թէ այդ տեսակցութեան, տեղի ունեցած Իդրնի եւ Ստալինի միջև, խօսք դարձած է նաև Ռուսիոյ հողային պահանջների մասին Թուրքիայից, ինչպէս որ Ֆոն Պապընը 1942 Յունուար 5ին տեղեկագրում էր Բերլին՝ արտ. գործոց նախարարութեան։

Նեղուցների առնչութեամբ տեղեակ լինելով նաև իր զինակցի՝ Թուրքիոյ կառավարական Թղթածարներին, Բեւինը հեղինակաւորապէս վկայում էր, որ Խ. Միութիւնը խարիսխներ պահանջած է ոչ միայն միջազգային Խորհրդաժողովներում, այլ և ուղղակի Թուրքիայից՝ «կառավարութեան հետ իր ունեցած թղթակցութեան մէջ»։

Բայց մի՞թէ իր պահանջը միայն խարիսխներ եղած են Նեղուցներում. մի՞թէ հողային այլ պահանջներ Խ. Միութիւնը, իրեն մաս կազմող այլ Հանրապետութեան անունից, ունեցած չէ Թուրքիայից։

Մենք տեսանք, որ Խ. Միութիւնը, վկայութեամբը Բերնզի, Պոտսդամում պահանջած է Հայաստանին վերադարձնել Կարսի և Արդահանի լեռնաշրջանները։

Արդ, մի՞թէ այս մասին — ընդհանրապէս Հայաստանի հողային պահանջների մասին — խօսք եղած է միայն Պոտսդամում, բոլորովին մէկէն եւ անակնկալ կերպով։

Չենք կարծում։

Նորից ենք պնդում, որ մասնաւորաբար Խ. Միութիւնը Թրքական հարցը արծարծած է սկզբից իսկ, ոչ միայն այն օրերին, երբ ինքը տակաւին պատերազմի մտած չէր (1941 Յունիս 22), այլ եւ այն օրերին, երբ գերմանաբեղեն պատերազմն իսկ սկսուած չէր (1939 Սեպտ. 1)։

Համոզուած ենք, որ 1939 Մարտ 9ին, երբ բացուեց Համամիութենական Համայնավար Կուսակցութեան 18րդ համագումարը, քաղաքական աշխարհը գիտէր արդէն, թէ Խ. Միութիւնը գալիք պատերազմից ի՛նչ ակնկալիքներ ունի Թուրքիոյ նկատմամբ։

Սակայն փորձել հիմնաւորել մեր համոզումը՝ այս պիտի նշանակէր չափազանց շեղուել մեր նիւթից, ուստի չատանանք այս մի քանի խօսքերով։

Մի բան, սակայն, աւելի քան ստոյգ է և բոլորովին դուրս ամէն կարգի վէճերից։

Խ. Միութիւնը երկրորդ համաշխարհային մեծ պատերազմին հանդէս եկաւ երկու տարբեր դերերի մէջ, — մինչև 1941 Յունիս 22 նա բարեկամ էր Գերմանիոյ, իսկ այդ թուականից այս կողմ, մինչեւ Գերմանիոյ վերջնական անձնատուութիւնը, թշնամի էր նրան։

Ոչ մէկ հիմ կայ ենթադրելու, թէ Խ. Միութիւնը Թուրքիայից պահանջներ ունէր այն ժամանակ միայն, երբ ինքը թշնամի էր Գերմանիոյ եւ դաշնակից՝ Անգլիոյ (որ Թուրքիոյ զինակիցն էր)։

Եւ թէ, ընդհակառակն, Խ. Միութիւնը պահանջներ չունէր Թուրքիայից, երբ բարեկամ էր Գերմանիոյ և խզուած էր Անգլիոյ հետ (որ միշտ բարեկամական յարաբերութեանց մէջ էր Թուրքիոյ հետ)։

Տրամաբանականն այն պիտի լինէր, որ Խ.

Միութիւնը Թուրքիայից պահանջներ չունենար առաջի՛ն դէպքում՝ երբ Թուրքիա դաշնակիցն էր իր դաշնակցի՝ Անգլիոյ, բայց ոչ վերջին դէպքում՝ երբ նա զինակիցն էր իր հակառակորդի՝ Անգլիոյ։

Իրողութիւնն այն է սակայն, որ հ. Միութիւնը միշտ նոյն դատը ունեցաւ Թուրքիոյ նկատմամբ, թէ՛ այն դէպքում՝ երբ բարեկամ էր Գերմանիոյ, եւ թէ՛ այն դէպքում՝ երբ բարեկամ էր Անգլիոյ և Ամերիկայի։

Փոխուում էին հ. Միութեան բարեկամները, բայց ոչ հ. Միութեան պահանջները Թուրքիոյ նըկատմամբ։

Պատմութիւնը մի օր պիտի գայ վկայելու, որ այս պահանջները նոյնն էին նաեւ այն օրերին, երբ հ. Միութիւնը 1939 Օգոստ. 23ի ուխտով կապուեց Գերմանիոյ եւ մնաց հաւատարիմ այդ ուխտին մինչեւ 1941 Յունիս 22, մինչեւ Գերմանիոյ անակընկալ յարձակումը հ. Միութեան վրայ։*)

Խուզարկու միտքը Թուրքիայից ունեցած հ. Միութեան հողային պահանջների հետքը պիտի գտնէ նաեւ այն դիմումի մէջ, որ 1939 Մայիս 24ին — այսինքն տակաւին 1939 Օգոստ. 23ը չեկած — էջմիածինը ուղղեց հ. Հայաստանի կառավարութեան՝ կաթողիկոսական ընտրութեան համար արտօնութիւն խնդրելով։

*) «Թուսանգերման գաղթի բանակցութիւններ» խորագրով մի յօդուածում «Թայմ» խօսում է այն պահանջների մասին — ծովային եւ ցամաքային — որ հ. Միութիւնը հեռապնդած է Թուրքիոյ նկատմամբ, Բերլինի հետ ունեցած իր գաղտնի բանակցութեանց մէջ («Թայմ»ի յօդուածը տե՛ս — «Հայրենիք», 1 Յունուար 1947)։

Տե՛ս նաեւ Դ. Դալինի հեգեմոնական յօդուածը՝ «Ընթացիկ հարցերի մասին» («Սոց. Վեսնիկ», Նիւ Եորք, 23 Նոյ. 1946)։

Ինչպէս որ պիտի գտնի եւ այն արտօնութեան մէջ, որ 1940 Յունիս 7ին տուաւ կառավարութիւնը՝ «1940 թուին էջմիածնի վանքի տերիտորիայում եկեղեցական ժողով գումարելու՝ արտասահմանեան ներկայացուցիչների մասնակցութեամբ», Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրելու համար։

Այս մասին աւելին — մի այլ տեղ և մի այլ առիթով։

Այստեղ այսքանով գոհանանք։

ՆԵՂՈՒՑՆԵՐԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԱԽՃԱՆԻՆ.

Խ. Միութեան արտ. քաղաքականութիւնը.— Հիւսիսի "նեղուց„ներ (Շպիցբերգէն).— Խ. Միութեան 1946 Օգոստ. 8ի ծանուցագիրը.— Թուրքիկ ակնարկ.— Մեկնութիւն ծանուցագրի.— Թուրքիոյ պատասխանը.— 1946 Օգոստ. 19ի, 20ի եւ 22ի ծանուցագիրներ՝ ամերիկեան, անգլիական եւ բրիական.— Խ. Միութեան 1946 Սեպտ. 24ի երկրորդ ծանուցագիրը.— 1946 Հոկտ. 4ի, 9ի եւ 18ի ծանուցագիրներ՝ անգլիական, ամերիկեան եւ բրիական.— Խարխափումներ.— Պոսդամ (17 Յուլիս—2 Օգոստ. 1945).— Նիւ Եորք (23 Հոկտ.—15 Դեկտ. 1946). — Սպառնալիքներ եւ սակարկումներ.— Անտես «կրակ»ի տեսանելի «ծուխը».— 1947 Մարտ 10ի Մոսկուայի Խորհրդաժողովը եւ 1947 Մարտ 12ի անակնկալ ռումբը.— Հիւսիսային Ամերիկայի Նախագահը 1946ին եւ 1947ին (Տրումընի 1946 Ապր. 6ի ճառը).— Բրնզի 1946 Փետր. 26ի ճառը.— Սարաջոլուի 1947 Մարտ 7ի յայտարարութիւնը.— Ծոյսի առկայծող կանթեղը.— Հայ Դաս:

VI

Պետութիւնները չեն սիրում իրենց սահմաններին ուժեղ հարեւան ունենալ, թո՛ղ թէ բարեկամ։ Չեն սիրում նաև թշնամի հարեւան ունենալ, թո՛ղ թէ թոյլ։

Այսպէս է նաև Խ. Միութիւնը։

Նա նոյնպէս ձգտում է իրեն շրջապատուած տեսնել ոչ միայն թոյլ, այլ եւ բարեկամ պետութիւններով։

Թէ՛ թոյլ եւ թէ բարեկամ,— ահա ինչ որ պետութիւնները երազում են տեսնել իրենց սահմանների վրայ։

Հին հիւանդ «չղթան», որով Խ. Միութիւնը դրսից գօտեւորած էին իր «բարեկամ»ները և որին նրանք «առողջապահական» անունն էին տուած — cordon sanitaire — այժմ կրեմլը ուզում է ճշմարտօրէն հաստատուն և առողջապահիկ դարձնել, իր շուրջն ունենալ — արեւելքից արեւմուտք և հիւսիսից հարաւ — ոչ թէ թշնամի, այլ բարեկամ պետութիւններ։

*Միայն վերջին պատերազմում Խ. Միութիւնը եօթը միլիոն զոհ տուաւ. թշնամի յարձակման ենթարկուեց իր երկրից մի հողամաս, ուր ապրում էր 88 միլիոն մարդ, գրեթէ կէսը Խ. Միութեան ազգաբնակչութեան. գրաւման շրջանին թշնամին մասամբ կամ ամբողջովին քանդեց ու հրդեհեց 1.710 քաղաքներ, աւելի քան 70.000 գիւղեր և աւաններ, 6 միլիոն շէնքեր, 31.850 արդիւնաբերական ձեռնարկներ, 65.000 քիլ. երկարութեամբ երկաթուղագծեր, 36.000 պոստ-հեռագրական հաստատութիւններ, 4.100 երկաթուղայաններ, 40.000 հիւանդանոցներ և բուժայաններ, 84.000 դպրոցներ, 43.000 մատենադարաններ և այլն, և այլն, եւ այլը։ Այս աւերածութեանց հետեւանքով 25 միլիոն մարդ անպատսպար մնաց։ *)*

---

*) 1946 Յունիս 6ին անգլիական կառավարութիւնը հրապարակեց իր «ճերմակ Գիրքը» պատերազմական կորուստների մասին։ Թուերը ընդգրկում են պատերազմի ամբողջ շրջանը, 1939 Սեպտ. 3ից մինչեւ 1945 Օգոստ. 14ը։

Այս ամբողջ շրջանին Անգլիա 357.116 զոհ տուած է, որ կազմում է մօտաւորապէս **մէկ-երրորդը** առաջին մեծ պատերազմին Անգլիոյ ունեցած զոհերի։

Այսքան նուազ եղաւ զոհերի թիւը հակառակ այն իրողութեան, որ առաջին մեծ պատերազմը աւելի կարճ տեւեց՝ մօտ երկուքնուկէս, ու նաեւ հակառակ այն փաստի, որ առաջին մեծ պատերազմին ճապո-

Խ. Միութիւնը իր կրած վնասների գումարը, ըստ Արտակարգ Պետական Ցանձնախմբի գնահատման, հասցնում է 679 միլիառ ռուբլու (ռուբլին՝ 1941ի արժէքով), մի վիթխարի գումար, որ մատչելի չէ մարդկային պարզ բանականութեան։*)

Այս գումարը հաւասար է 1913 թուականի Ռուսիոյ հարիւր տարուան ելեմտացոյցին. իսկ Ռուսիոյ այդ թուականի ելեմտացոյցը — մօտաւորապէս 3 միլիառ 400 միլ. ռուբլի — հաւասար էր մի գումարի, որի մեծութեանը չէր հասնում ե՛ւ ոչ մէկ պետութեան բիւջէ ամբողջ աշխարհում։

Իր պատմութեան ընթացքին պարբերաբար այս կարգի աւերածութեանց ենթարկուելով, անաւորապէս տուժելով և տառապելով, Խ. Միութիւնը արդար իրաւունքով չի ուզում այլեւս բաց ձգել իր սահմանները եւ իր հարեւանութեան մէջ իրեն թշնամի երկրներ ունենալ։

Այս նոյն հիմունքով Խ. Միութիւնը վերջին պատերազմին փորձեց կարգաւորել իր յարաբերութիւնները նաև Նորվեգիոյ հետ (հիւսիսում) եւ Թուրքիոյ հետ (հարաւում)։

Մի քանի խօսք — նախ Նորվեգիոյ մասին։

Նորվեգիոյ հիւսիսային ծայրամասից շուրջ 750 քիլ. այն կողմ, Նորվեգիոյ և Գրէօնլանդիայի միջև,

---

նր Անգլիոյ նեռ էր, մինչ երկրորդին՝ նրա դէմ էր։

357.116 սպանուածները սռորաբաժանւում են հետեւեալ ձեւով.— 264·443 հոգի՝ ռազմաճակատներում, 32.078 հոգի՝ տարբեր սպասարկութեանց մէջ (ձկնորսային տրմիդ, առեւտրական նաւազնացութիւն, կանանց օժանդակ խմբեր եւ այլն), 60 595 հոգի՝ խաղաղ ազգաբնակչութիւնից (ռմբակոծումների զոհ)։

---

*) Մանրամասները տե՛ս «Հաղորդագրութիւն Արտակարգ Պետական Ցանձնախմբի» («Գրական», 13 Սեպտ. 1945)։

տարածւում է Սւալբարդեան արշիպեղագոսը, որի կենտրոնակէտն է Շպիցբերգէն կղզին։

Արշիպեղագոսի տարածութիւնն է 36.000 ք. ք. (աւելի մեծ քան Խ. Հայաստանը, որի տարածքն է 29.964 ք. ք.)։

Արշիպեղագոսի միակ հարստութիւնը իր քարածուխն է, որ արտահանւում է Շպիցբերգէն կղզում, տարին 600—650 հազար տոն, որից աւելի քան 400 հազար տոնը սպառում է Խ. Միութիւնը։

Երկար տարիներ այս լերկ կղզեխումբը կառավարեց եղած է Նորվեգիոյ, Շվեդի և Ռուսիոյ միջև։

Կղզիներից միայն մէկը — Մեդվեժիյ — փաստօրէն պատկանում էր Ռուսիոյ։

Առաջին մեծ պատերազմի վախճանին, 1920 Փետր. 9ին, Փարիզում կնքւում է մի դաշինք, որով արշիպեղագոսը, որ մինչ այդ ոչ ոքի էր (res nullius), նկատւում է սեփականութիւնը Նորվեգիոյ, պայմանով, որ ո՛չ Նորվեգիա ինքը և ոչ էլ իր արտօնութեամբ ուրիշ որեւէ մէկը իրաւունք չունենայ այդ կղզիների վրայ ամրութիւններ կառուցանելու և այնտեղ ռազմա-ծովային խարիսխներ հաստատելու։ Կղզեխումբը միայն դաշնագրող կողմերը կարող էին օգտագործել՝ թէ՛ առեւտրական նպատակներով եւ թէ այնտեղ կայաններ հաստատելով։

Դաշինքը ստորագրեցին՝ Մեծն Բրիտանիա (իր գաղթապետութեանց հետ միասին), Ամերիկա, Ֆրանսա, Իտալիա, Ճապոն, Դանիա, Հոլանդա, Շվեդ, Սպանիա և Նորվեգիա։

Ստորագրողների մէջ Ռուսաստանը չկար, նա այդ թուականին բացակայում էր միջազգային կեանքից։

1924 Փետր. 16ին, երբ Նորվեգիան ձեռք առաւ

կղզիները, Ֆ. Ռուսաստանը եւս ճանաչեց նրա գերիշխանութիւնը կղզեխումբի վրայ, այս վերջինի մէջ հաշուելով նաև Մեդվեժիյ կղզին։

Ապահովելով Ռուսիոյ ճանաչումը կղզեխմբի տիրացման հարցում՝ Նորվեգ կառավարութիւնը 1924 Փետր. 22ին փարիզեան դաշինքը ներկայացրեց երկրի խորհրդարանին՝ Ստորտինգին՝ եւ ստացաւ նրա վաւերացումը։*)

Երկրորդ համաշխարհային պատերազմը եկաւ յստակօրէն ցոյց տալու թէ՝ ռազմա-քաղաքական և թէ տնտեսական այն բացառիկ կարեւորութիւնը, որ այդ կղզեխումբը ունի Ֆ. Միութեան համար։

Ճիշտ այս նկատումներով 1944ի աշնան, երբ ռուս զօրաբաժինները գրաւած էին Նորվեգիան, Ֆ Միութիւնը դիմեց Նորվեգ կառավարութեան, որ այդ ժամանակ գտնուում էր տարագրութեան մէջ, Լոնդոն, առաջարկելով վերանայման ենթարկել 1920ի փարիզեան դաշինքը. Նորվեգ կառավարութիւնը ընդառաջեց եղած առաջարկին եւ միասնաբար Ֆ. Միութեան հետ ձեռնարկեց դաշնագրի վերաքննութեան։

Կողմերի փոխադարձ համաձայնութեամբ, այս բանակցութիւնները, քանի տակաւին նրանք ամբողջացած չեն վերջնական համաձայնութեամբ եւ դաշնագրով, գաղտնի պէտք է պահուէին։

*) Ֆ. Միութեան վերջնական յարումի համար 1920 թուի դաշինքին՝ Նորվեգ կառավարութեան զեկոյցը տալիս է 1935 թուականը (տե՛ս "Պրաւդա„յի եւ "Իզվեստիա„յի 1947 Յունուար 19ի թուերը), մինչ ուրիշ թերթեր եւ հեռագրական գործակալութիւններ տալիս են 1925 թուականը (տե՛ս «Ն. Նովոստի», 17 Յունուար 1947, «Ժամանակ», 11 Յունուար 1947 եւ այլն)։ Ճիշտը, հաւանաբար, 1925ն է. «Պրաւդա»յի եւ «Իզվեստիա»յի յիշատակած 1935ը տպագրութեան պարզ վրիպակ պէտք է նկատել։

Սակայն «Թայմզ»ը, «ի խախտումն բարեկամ պետութեանց միջև ընդունուած սովորոյթի», ինչպէս նկատում էր Նորվեգիական «Արբայդերբլադետ» թերթը, իր 1947 Յունուար 10ի թուով մի յոդուած է հրապարակում՝ հարցը ամենքի սեփականութիւնը դարձնելով։*)

«Համապատասխան ատեանները Լոնդոնում գտան անհրաժեշտ, — նկատում էր անգլիական մամուլի մեծազդեցիկ օրգանը, — համաշխարհային հանրային կարծիքի լուսարձակը դարձնել դեպի այդ կնճռի շուրջ վարուող բանակցութիւնները»։**)

Իսկ չվեդական թերթերից «Դագենս Նիւհետը» բացէիբաց գրում էր.

«Ռուսական խարիսխները Սառուցեալ ովկիանոսում — ատրճանակ են՝ Հիւս. Ամերիկայի սրտին ուղղուած»։***)

«Շպիցբերգէնի վրայ խորհրդային դիտաւորութիւնները մի աւելորդ պատճառ են, — անակնկալում էր մէկ այլ գրիչ, — որ Միացեալ Նահանգները հիւլէական ռումբի գաղտնիքը միայն իրենց վերապահեն։ Հիւլէական ռումբը ամերիկեան գերագոյն ապահովութիւնն է։ Շպիցբերգէնը խորհուրդներին անցնելով՝ Ռուսիա օդային գծով պիտի գտնուի կանադայի և Մ. Նահանգների շատ մօտիկը»։****)

Հարցի սահմանները աւելի ընդարձակելով՝ ամերիկեան պարբերականներից «Թայմ» իր 1947ի

*) Ե. Վիկսորով — «Միջազգային տեսութիւն» («Պրաւդա», 19 Յունուար 1947)։

**) Նարլիդաեել — «Միջազգային հարցերի շուրջ» («Իզվեստիա», 17 Յունուար 1947)։

***) Ibid.

****) Գարլ Վիկանդ — «Շպիցբերգէնից մինչեւ Պարդանել խորհուրդներ դիրք են գրաւում» («Ազաս Օր», 19 Մարս 1947)։

յունուարեան թուի մէջ այս առթիւ մի յօդուած զետեղելով — Գրէօնլանդիայի քարտէսով միասին— պրում էր.

«Նկատելով, որ Խ. Միութիւնը ուզում է թափանցել Շպիցբերգէն, գինուորական շրջանակները Ուաշինգտընի մէջ գտնում են, որ հասած է յարմար վայրկեանը Դանիայից, եթէ կարելի է, Գրէօնլանդիան գնելու»։ *)

Ուաշինգտընից թէեւ այս լուրը հերքուեց, սակայն տարբեր աղբիւրներից եկան պնդելու, որ անպաշտօն բանակցութիւններ, այնուամենայնիւ, տարուում են՝ կղզին կամ կապալով վերցնելու (99 տարուան համար) եւ կամ ուղղակի գնելու (մէկ միլիառ դոլար վճարելով)։

Թիւրիմացութիւնները կանխելու եւ միջազգային հանրային կարծիքը առարկայօրէն լուսաբանելու համար՝ հարկադրաբար հրապարակ եկան շահագրգիռ կողմերը, Խ. Միութիւնը՝ «ՏԱՍՍ»ի միջոցով, իսկ Նորվեգիան՝ ուղղակի պաշտօնապէս, իր Արտ. Գործոց Նախարարութեան անունից։

Որոշ մանրամասներ տալով բանակցութեանց մասին՝ «ՏԱՍՍ» իր 1947 Յունուար 15ի զեկոյցի մէջ յայտնում էր.

«1920ի դաշինքով իսպառ նկատի առնուած չեն Խ. Միութեան ապահովութեան շահերը Հիւսիսում, ինչպէս նկատի առնուած չեն նաև նոյն Միութեան կարեւոր տնտեսական շահերը։ Ինչ վերաբերում է Խ. Միութեան ապահովութեան հարցին, ապա, ինչպէս այդ առանձնապէս ցոյց տուաւ երկրորդ համաշխարհային պատերազմը, Շպիցբերգէն կղզինե-

*) Նաբլիւդաթել — «Միջազգային հարցերի շուրջ» («Իզվեստիա», 1 Փետր. 1947)։

րը, ուր գտնուում է ելքը դէպի ովկիանոս, արեւմտեան ուղղութեամբ, այդ տեսակէտով բացառիկօրէն կարեւոր նշանակութիւն ունեն Խ. Միութեան համար Հիւսիսում»։

Շարունակութեան մէջ մատնանշելով նաև կղզիների տնտեսական նշանակութիւնը՝ զեկոյցը եզրափակում էր.

«Խորհրդային–նորվեգիական բանակցութեանց ժամանակ հասկացողութիւն գոյացաւ կողմերի միջեւ Շպիցբերգեն կղզիների միասեղ պաշտպանութեան անհրաժեշտութեանը մասին։ Այս կապակցութեամբ, 1920ի դաշնագրի վերանայման նպատակով, կողմերը որոշած էին խորհրդակցել նաեւ համապատասխան դաշնակից կառավարութեանց հետ»։*)

Շատ աւելի ուշագրաւ եւ ամբողջական է այն զեկոյցը, որ հրապարակեց «ՏԱՍՍ»ից անմիջապէս յետոյ, 1947 Յունուար 17ին, Նորվեգիոյ Արտ. Գործոց Նախարարութիւնը։

Հարցի լիակատար լուսաբանումի համար բերենք մի քանի քաղուածքներ.

«Նորվեգ կառավարութեան համար պարզ էր,— ասուած է այդ զեկոյցի մէջ,— որ Շպիցբերգէնի շրջանի պաշտպանութեանը կապուած են քաղաքական խոշոր շահեր։ Նորվեգիական եւ դաշնակից նաւերը տեւաբար եւ մեծ կորուստներով լողում էին այդ ջրերում։ Նորվեգ կառավարութիւնը յայտնեց Խ. Միութեան կառավարութեան, որ ինքը միանգամայն գիտակցում է, թէ պատերազմը հարցը դրած է նոր կացութեան մէջ»։

Շարունակելով իր զեկոյցը՝ Նախարարութիւնը յայտնում էր.

*) "Իզվեստիա", 15 Յունուար 1947։

«Նորվեգ կառավարութիւնը իր համամտութիւնը յայտնեց՝ միասնաբար խորհրդային կառավարութեան հետ քննելու հնարաւորութիւնները նոր դաշնագրի ստորագրման Նորվեգիոյ եւ Խ. Միութեան միջեւ, արշիպեղագոսի օգտագործման մասին ռազմական նպատակներով։ Ճշտակատար քննութիւններից յետոյ Խ. Միութեան արտ. գործոց նախարարի եւ նորվեգ դեսպանի միջեւ Մոսկուայում, 1945ի Ապրիլին, նորվեգ կառավարութիւնը տեղեկացրեց, որ ինքը համաձայն է հարցի մասին ստորագրելու մի առժամեայ միասնական յայտարարութիւն, ուր, ի միջի այլոց, պէտք է մատնանշուի, որ Նորվեգիոյ եւ Խ. Միութեան կառավարութիւնները ցանկանում են, պահելով հանդերձ Նորվեգիոյ գերիշխանութիւնը Շպիցբերգենի վրայ, իրագործել արշիպեղագոսի միատեղ պաշտպանութիւնը, որով կարելի պիտի դառնար լաւապէս ապահովել երկու երկրների անվտանգութիւնը եւ այս ձեւով դաշինքը դարձնել միջազգային ապահովութեան կառոյցի օղակներից մէկը»։

Այս բանակցութեանց, ըստ զեկոյցի, «նորվեգ կառավարութեան կողմից տեղեակ են պահուած, գիտութեամբը Խ. Միութեան, թէ՛ Մեծն Բրիտանիան եւ թէ Միացեալ Նահանգները, ընդորում այս վերջինները չեն հակազդած այդ բանակցութեանց»։

Վերջին անգամ բանակցութիւններ եղած են — մի՛շտ ըստ նոյն զեկոյցի — 1946ի Օգոստոսին՝ Նորվեգիոյ արտ. գործոց նախարար Լանգէի եւ Խ. Միութեան արտ. գործոց նախարար Մոլոտովի միջեւ՝ Փարիզում, իսկ 1946ի Նոյեմբերին՝ Նիւ Եորքում։

Այս վերջին բանակցութեանց տեղեակ են պահուած այն բոլոր պետութիւնները — Մեծն Բրիտանիա, Միացեալ Նահանգներ, Դանիա, Ֆրանսա,

*Շվեդ, Հոլանդա — որոնք ստորագրած էին 1920ի փարիզեան դաշինքը»։**)

Զոյգ զեկոյցներից — թէ՛ Նորվեգիոյ եւ թէ Խ. Միութեան — յստակ է հետեւեալը.

ա. — Նորվեգիա եւ Խ. Միութիւն յօժարած են միասնաբար պաշտպանել Շպիցբերգենի արշիպեղագոսը։

բ. — Միասնական պաշտպանութեան մէջ հրանի արգելք չեն տեսած, որ Նորվեգիա շարունակի պահել իր գերիշխանութիւնը արշիպեղագոսի վրայ։

գ. — Անգլիա եւ Ամերիկա, բանակցութեանց սկզբից մինչեւ 1946 Նոյ., որեւէ բողոք չեն յայտնած այս առթիւ։

դ. — Նորվեգիա եւ Խ. Միութիւն անշնչատաբար իրաւախոհութեան գալով՝ վերջնական համաձայնութեան համար հարցը պէտք է ներկայացնեին դաշնակից պետութեանց հաւանութեան եւ վաւերացումին։**)

---

*) «Նորվեգիոյ Արտ. Գործոց Նախարարութեան զեկոյցը Շպիցբերգենի հարցի շուրջ» (տե՛ս «Պրաւդա»յի եւ «Իզվեստիա»յի 1947 Յունուար 19ի թուերը)։

**) Զուգանմանութիւն տեսնելով Շպիցբերգենի եւ Նեղուցների հարցերում՝ Թուրքիոյ Ազգ. Մեծ Ժողովը, նախագահութեանը տակ Քեազիմ Կարաբեքիրի, 1947 Յունուար 24ին յատուկ նիստ է գումարում, ուր այս առթիւ գրաւոր հարցապնդումով հրապարակ է գալիս Սամսոնի երեսփոխան պրոֆ. Զեմիլ Բիլսելի եւ լուսաբանութիւն պահանջում կառավարութիւնից.

«**Շպիցբերգենի արշիպեղագոսը մինչեւ 1924-25ը անտէր էր,**— յայտարարում է Բիլսելի,— **այդ պատճառով այս խնդիրը կարելի չէ բաղդատել Նեղուցների հարցի հետ, որ իր եռին ունի 500 տարուայ մի պատմութիւն**»։

Պատասխանելով երեսփոխանին՝ արտ. գործոց նախարար Հասան Սակա, ի միջի այլոց, յայտարարում է.

"**Ճիշտ չէ Նորվեգիոյ արշիպեղագոսի եւ մեր Նեղուցների վարչաձեւի միջեւ բաղդատական եւ իրաւական որեւէ**

Գանք Նեղուցներին։

Ի. Միութեան համար իւրատիպ Նորվեգիա է հարաւում Թուրքիան, եւ Շպիցբերգենեան իւրաքանչիւր կղզիներ են, շատ աւելի ծանրակշիռ հանգամանքով, Թրքական Ջրուղիները։

Բացառաբար Նեղուցներին վերաբերող խորհրդային պահանջները քաղաքական աշխարհի սեփականութիւնը դարձան 1946 Օգոստ. 8ին, երբ Ի. Միութեան Արտ. Գործոց Նախարարութիւնը նոյն թուականը կրող պաշտօնական ծանուցագրով դիմեց Թուրքիոյ։*)

Եւ որովհետեւ այդ ծանուցագիրը պատմականօրէն առաջին մեծակշիռ փաստաթուղթն է, ուստի

ճմանութիւն փնտռել։ Ո՛չ իրաւական կացութիւնն, ո՛չ աշխարհագրական դիրքի եւ ոչ էլ ռազմագիտական տեսակէտով այս խնդիրը որեւէ կապ չունի Նեղուցների խնդրի հետ» («Ժամանակ», 25 Յունուար 1947)։

Ի պատասխան նախարարի այս յայտարարութեան՝ բուռն ծափահարութեանց մէջ երեսփոխանները բացագանչում էին.— «Ճի՛շտ է, ճի՛շտ է»։

Ի հարկէ, ճիշտ չէր ո՛չ նախարարի եւ ոչ էլ երեսփոխանների մեկնութիւնը։ Ճշմարիտ բոլորը գիտէին, որ Շպիցբերգէն եւ Նեղուցներ — սրանք տարբեր տարիներ եւ ճման հարցեր են։

---

*) Հաւատարիմ ռուսական թափթփածութեան, խորհրդային մամուլում ծանուցագրի համար իբրեւ թուական մատնանշւում է կա՛մ 1946 Օգոստ. 7ը եւ կամ Օգոստ. 8ը։ Վերոգրեալն այն է սակայն, որ նոյն օրերը՝ նաեւ խորհրդային զոյգ ծանուցագրերի մէջ. առաջին ծանուցագրում մատնանշւում է Օգոստ. 8ը (տե՛ս «Պրաւդա», 1946 Օգոստ. 14), իսկ երկրորդում՝ նոյն առաջին ծանուցագրի համար՝ Օգոստ. 7 (տե՛ս «Իզվեստիա», 1946 Սեպտ. 28)։ Ուրիշներ ճման վաւերաթղթերի համար նշում են սեղամ ժամն ու վայրկեանը, մինչ ռուսը անփութօրէն խաղում է անգամ օրերի հետ։ Հիմ առնելով առաջին ծանուցագիրը՝ երկու թուականներից մեզի ընտրեցինք Օգոստ. 8ը։

մի քիչ աւելի հանգամանօրէն կանգ առնենք նրա բովանդակութեանը վրայ։

Սակայն նախապէս — երկու խօսք այս առթիւ։

Այն բազմաթիւ փաստերից, որ Նեղուցների հարցի կարգաւորման առնչութեամբ մենք յիշատակեցինք՝ մեր նիւթը պատմութեան վերջին եօթանասնամեակից քաղելով, դժուար չէ կողմերի շահերն ու ձգտումները ճշտել այս կենսական ջրուղիներում։

Լոկ Ռուսիոյ կապակցութեամբ մենք ուզում ենք այս ձգտումները որոշ բանաձեւումի վերածել, որպէսզի ընթերցողին աւելի յստակ դառնայ տարբերութիւնը այն պահանջների, որ Ի. Միութիւնը ներկայացրած է իր 1946 Օգոստ. 8 ծանօթ ծանուցագրով։

Եթէ մենք նպաստաւորութեան սկզբունքը ելակէտ առնէինք, այսինքն՝ Ռուսիոյ առաւելագոյն պահանջներից աստիճանաբար իջնէինք մինչև նրա նուազագոյն պահանջները, ապա երկու հիմնական հարցերում — ո՞վ է իրաւատէրը Նեղուցներում եւ ի՞նչ են իր իրաւունքները — պիտի ունենայինք հետեւեալ տախտակը.

ՆԵՂՈՒՑՆԵՐԻ ԻՐԱՒՈՒՆՔԸ ԵՒ ԻՐ ԻՐԱՒՈՒՆԴՆԵՐԸ
(բացառաբար Ռուսիոյ նկատի առնելով)

Ա.— Նեղուցների միակ գերիշխան տէրը ինքն է, եւ միայն իր նաւերը — ռազմական եւ առեւտրական — ազատ երթեւեկի իրաւունք ունեն։

Բ — Նեղուցների միակ գերիշխան տէրը ինքն է, սակայն միջազգային դաշինքներով իր իրաւունքները սահմանափակուած են բոլոր պետութեանց առեւտրական նաւերի ազատ երթեւեկի հարցում։

Գ.— Նեղուցների վերապետության իրավունքը պատկանում է Թուրքիայի, սակայն նրանց պաշտպանության իրավունքն ու պարտականությունը — ի խնդիր Սև ծովի բոլոր առափնեայ պետությանց ապահովության — պատկանում է միասնաբար թե՛ Թուրքիայի եւ թե Ռուսիայի, իսկ Նեղուցներում գործող օրինակարգի վրայ հսկողությունը պատկանում է այն բոլոր պետություններին, որոնք եզերում են Սև ծովը եւ Նեղուցները։ Այդ դեպքում միայն սեւծովեան պետությանց ռազմանաւերը ազատ երթեւեկի իրաւունք ունեն, իսկ նոյն իրաւունքը ունեն այլ պետությանց միայն առեւտրանաւերը։

Դ.— Եթե Ռուսիան Թուրքիայի հետ գինակցաբար պահակ չէ Նեղուցներում՝ ապա նախադասելի է, որ՝ իբրեւ գերիշխան ու պահակ՝ Նեղուցներում մնայ միայն եւ բացառաբար Թուրքիան, առանց իր կողքին ուրիշ որեւէ մեկին ունենալու (հաւանաբար կամ առանձին), եւ կամ առանց իր տեղը ուրիշ որեւէ մեկին զիջելու (անգամ Յունաստանին կամ Բուլգարիայի)։ Այդ դեպքում, երբ Թուրքիան է միակ տերը, ազատ երթեւեկի իրաւունք ունեն միայն ռուսական ռազմանաւերը, իսկ բոլոր մնացեալ պետությանց՝ միայն առեւտրանաւերը։

Ե.— Նեղուցների միակ գերիշխան տերը Թուրքիան է. այս ջրուղիներից ազատ անցքի իրաւունք ունեն, առանց լուրջ սահմանափակումների, միայն սեւծովեան պետությանց ծովային ոյժերը, իսկ միւս պետությունները այս իրաւունքը ունեն խիստ սահմանափակումներով։

Զ.— Եւ, վերջապես, Նեղուցների միակ գերիշխան տերը Թուրքիան է, եւ ազատ երթեւեկի իրաւունք ունեն բոլոր պետությանց ռազմանաւերը, բացառությամբ Ռուսիայի. այս վերջինը չունի իրաւունք նաեւ ո՛չ Սեւ ծովի ափերը ամրացնելու եւ ոչ էլ այդ ծովում ռազմատորմիղ պահելու։

Մենք ճշտեցինք լոկ հիմնական սկզբունքները. կարելի բոլոր վիճակները մեր վեց կէտերով չսպառեցինք անշուշտ. եւ պէտք էլ չկար. սակայն այդ վեց կէտերի լոյսի տակ աւելի տեսանելի է իրաւաքաղաքական պատկերը Ի. Միութեան այսօրուան պահանջների։

Երիմի պատերազմից յետոյ Ռուսիան այն վիճակի մէջ էր՝ ինչ որ մենք ճշտած ենք մեր Զ. կէտով. իսկ Մոնտրէոյից յետոյ մօտաւորապէս այն վիճակի մէջ՝ ինչ որ սահմանած ենք մեր Ե. կէտով. այսօր Ի. Միութիւնը ուզում է ապահովել իրեն այն վիճակը՝ ինչ որ ճշտած ենք մենք մեր Գ. կէտով։

Նեղուցների նկատմամբ Ի. Միութիւնը ձգտում է կիրառել ճիշտ նոյն սկզբունքները — եւ ճիշտ նոյն ձեւերով — ինչ որ նա 1944ից այս կողմ գործադրած է Շպիցբերգէն կղզիների միատեղ պաշտպանութեան հարցում Նորվեգիոյ հետ։

Դառնանք 1946 Օգոստ. 8ի ծանուցագրին։

Այս վերջինի մէջ տեղ գտած են հետեւեալ հիմնական մտքերը.

ա.— Ամենից առաջ մատնանշւում է այն փաստը, որ 1936ին Մոնտրէոյում կնքուած համաձայնութիւնը այլեւս «չի համապատասխանում Սեւծովեան պետութեանց ապահովութեան շահերին և չի ստեղծում այնպիսի պայմաններ, որոնց գոյութեամբ անկարելի պիտի լինէր Նեղուցները օգտագործել Սեւծովեան պետութեանց դէմ՝ թշնամական նպատակներով», ինչպէս որ ցոյց տուաւ վերջին պատերազմը։

բ.— Ի հաստատումն այս մտքի՝ 1941ի, 1942ի եւ 1944ի տարեշրջաններից դէպքեր են յիշատակ-

ում, երբ թշնամի ռազմանաւեր, խախտելով Մոնտրէոյի համաձայնագրի պայմանները, Թուրք կառավարութեան գիտութեամբ Նեղուցներից անցած են Սեւ ծով և կամ Սեւ ծովից՝ դէպի Եգէական։

գ.— Յիշատակւում են այն բողոքագրերը, որ պայմանագրի խախտման այս դէպքերի առիթով խորհրդային կառավարութիւնը ուղղած է Թուրք կառավարութեան՝ նրան պատասխանատու գտնելով այս խախտումների համար։

դ.— Այս բոլորը նկատի առնելով՝ «Խորհրդային կառավարութիւնը առաջարկած է 1945ի Օգոստոսին Բերլինում գումարուած Խորհրդաժողովին,*) մասնակցութեամբը Մեծն Բրիտանիոյ, Հիւ. Ամերիկայի Միացեալ Նահանգների եւ Ֆ. Միութեան, քննել այն հարցը, որ Նեղուցների օրինավիճակը, հաստատուած Մոնտրէոյի համաձայնութեամբ, ժամանակակից պայմաններին չի համապատասխանում այլեւս, ուստի եւ անհրաժեշտ է նոր օրինավիճակ հաստատել»։

ե.— Ընդառաջելով Ֆ. Միութեան այս առաջարկին՝ Բերլինի Խորհրդաժողովը առած է հետեւեալ երկու որոշումները.

Առաջին.— «Երեք կառավարութիւնները ընդունում են, որ Նեղուցների պայմանագիրը, կընքուած Մոնտրէոյում, ներկայ ժամանակի պայմաններին չի համապատասխանում, ուստի եւ պէտք է վերանայուի»։

*) Ծանուցագիրը Խրիմի Խորհրդաժողովի մասին չի խօսում, որին ակնարկած էր "Իզվեստիա„ն իր 1946 Օգոստ. 18ի խմբագրականով. չի խօսում թերեւս այն պատճառով, որ Խրիմում Նեղուցների շուրջ միայն **նախնական** բանակցութիւններ եղած են, սակայն հարցի մասին վերջնական **որոշում** այնտեղ առնուած չէ։

երկրորդ.— «Երեք կառավարութիւնները համաձայն են, որ՝ իբրեւ յաջորդ քայլ՝ տուեալ հարցը անմիջական բանակցութեանց նիւթ կազմի երեք մեծ պետութիւններից իւրաքանչիւրի և Թրքական կառավարութեան միջեւ»։

գ.— Ի կատարումն այս որոշման, Հիւս. Ամերիկայի և Մեծն Բրիտանիոյ կառավարութիւնները արդէն յատուկ յիշատակագիրներ ներկայացրած են Թուրքիոյ, առաջինը՝ 1945 Նոյ. 2ին, իսկ երկրորդը՝ 1945 Նոյ. 21ին, յիշատակագիրներ, որոնց ծանօթ է Խորհրդային կառավարութիւնը։

Այս բոլորը մատնանշելուց յետոյ, ծանուցագիրը ճշտում է այն սկզբունքները, որոնց հիմունքով պէտք է մշակուի Նեղուցների նոր օրինակարգը։

Ահա այդ սկզբունքները.

«1.— Նեղուցները միշտ բաց պէտք է լինեն բոլոր երկրների առեւտրանաւերի անցումին համար։

«2.— Նեղուցները միշտ բաց պէտք է լինեն Սեւ ծովեան պետութեանց ռազմանաւերի անցումին համար։

«3.— Չի թոյլատրւում ոչ-Սեւծովեան պետութեանց ռազմանաւերի անցումը Նեղուցներից, բացառելով յատուկ նախատեսուած դէպքերը։

«4.— Օրինավիճակի հաստատումը Նեղուցների համար՝ իբրեւ ծովային միակ ճամբայի, որ տանում է Սեւ ծովից դէպի դուրս եւ դրսից դէպի Սեւ ծով, պատկանում է իրաւասութեանը Թուրքիոյ եւ միւս Սեւծովեան պետութեանց։

«5.— Թուրքիան եւ Ֆ. Միութիւնը, որպէս առաւել շահագրգռուած եւ ձեռնհաս տէրութիւններ թէ՛ առեւտրական նաւագնացութեան ազատութեան եւ թէ՛ Նեղուցներում անվտանգութեան պահպանման հարցերում, պէտք է համատեղ միջոցներով կազմակեր-

պեն Նեղուցների պաշտպանութիւնը, կանխելու համար նրանց օգտագործումը այլ պետութիւնների կողմից՝ Սեւծովեան պետութիւնների թշնամական նպատակներով»։ *)

Այս ծանուցագիրը ներկայացնելով թուրք կառավարութեան՝ Մոսկուան նրա պատճէնը՝ թէ՛ ինք անմիջօրէն եւ թէ իր դեսպանների միջոցով՝ Լոնդոն և Ուաշինգտոն՝ յանձնում է անգլիական և ամերիկեան կառավարութեանց։ **)

Փորձենք հասկանալ իմաստը այս պատմական փաստաթղթի։

Արձանագրենք նախ այն, ինչ որ անվիճելի է այս ծանուցագրի մէջ.

ա. — Մոնտրեոյի պայմանագրի փոփոխման հարցը Պոտսդամում սեղանի վրայ եկած է Խ. Միութեան նախաձեռնութեամբ։

բ. — Անգլիա եւ Ամերիկա համամիտ գտնուած են այս փոփոխումին, անշուշտ ի նպաստ Սեւծովեան պետութեանց։

գ. — Անգլիա, Ամերիկա եւ Խ. Միութիւն համամիտ գտնուած են, որ իբրեւ նախապայմ այս փոփոխումին՝ իրենցից իւրաքանչիւրը անմիջօրէն բանակցութեանց մտնի Թուրքիոյ հետ, զուգահեռաբար միւս երկսին տեղեակ պահելով թէ՛ իր կատարած ձեռնարկին եւ թէ ստացուած արդիւնքին։

---

*) Ծանուցագիրը ամբողջութեամբ հրատարակութեան տրուած է «Իզվեստիա»յի եւ «Պրաւդա»յի 1946 Օգոստ. 14ի թուերով։

**) Ամերիկեան թերթերը յայտնեցին, որ Թուրքիոյ ուղղուած խորհրդային ծանուցագրի պատճէնը Ուաշինգտոնում ստացուելով՝ անմիջապէս Սպիտակ Տան մէջ գաղտնի խորհրդակցութիւն է հրաւիրուել, մասնակցութեամբը արտաքին գործոց, բանակի եւ ծովային նախարարութեանց պատասխանատու ներկայացուցիչների։ Խորհրդակցութեան մէջ որոշուել է մերժել խորհրդային պահանջները։

Փանք այժմ ծանուցագրի վիճելի կէտերին։

Իրականին մէջ Խ. Միութեան պահանջները ոչ հինգ են եւ ոչ չորս, այլ միայն երեք.

1.— *Նեղուցները բաց՝ օրուան բոլոր ժամերին՝ բոլորի բոլոր առեւտրանաւերի համար։*

2.— *Նեղուցները բաց՝ օրուան բոլոր ժամերին՝ միայն Սեւծովեան բոլոր պետութեանց բոլոր ռազմանաւերի համար՝ Սեւ ծովից դէպի բաց ծովեր եւ բաց ծովերից դէպի Սեւ ծով։*

3.— *Նեղուցները փակ՝ օրուան բոլոր ժամերին՝ ոչ-Սեւծովեան բոլոր պետութեանց բոլոր ռազմանաւերի համար, բացառելով նախատեսուած դէպքերը։*

Եթէ մարդկային խօսքը որոշ նուիրականութիւն ունենար, իսկ դատինքը՝ արժէք, Խ. Միութիւնը իր երեք պահանջներով, որոնց շուրջ գրեթէ վէճ չկայ, պէտք է գոհանար։

Սակայն քաղաքակրթութիւնը մեզ բերած է այն կէտին — անգամ այսօր, երբ տրորուած են Գերմանիա, Իտալիա եւ Ճապոն, եւ յաղթական են բացառաբար դեմոկրատիկ ոյժերը — ուր ո՛չ ոք ոչ ոքի խօսքին չի հաւատում եւ ո՛չ ոք ոչ մէկ դատինքի որեւէ արժէք չի տալիս։

Պաղաղութեան ուխտերն իսկ այսօր տարբեր բան չեն, քան շարունակութիւնը պատերազմի. նը-բանք զինադադարի պարզ պրոտոկոլներ են։

Եւ որովհետեւ այս է մեր աշխարհի ընդհանուր բարոյականը, ուստի Խ. Միութիւնը երաշխիքներ է սահմանում՝ իր երեք պահանջների գործադրութիւնը ապահովելու համար։

Ծանուցագրի 4րդ և 5րդ կէտերը մատնանշում են ճիշտ այս երաշխիքները։

Խ. Միութիւնը ուզում է երաշխիք ունենալ, որ երբ Սեւծովեան ռազմանաւերը կամենան դուրս գալ

Սեւ ծովից և կամ դրսից Սեւ ծով գալ՝ կարողանա՞ն այդ բանն անել. այլ խօսքով՝ ուզում է, որ որեւէ այլ պետութիւն, եթէ կամենայ իսկ խախտել դաշինքը և ուժով ընդդիմանալ Սեւծովեան ռազմանաւերի մուտքին և ելքին՝ չկարողանայ այդ անել։

Նոյնը նաև այն դէպքում, երբ ոչ Սեւծովեան պետութիւնների մօտ փափագ կայ դաշինքը խախտելու և բռնութեամբ դէպի Սեւ ծով խուժելու. Խ. Միութիւնը ուզում է երաշխիք ունենալ, որ այն դէպքում իսկ, երբ նրանք կամենան նման քայլ առնել, չկարողանան այն իրագործել։

Տարաբախտաբար, նման միայն մեկ երաշխիք կայ եւ ոչ երկու. այդ այն է, որ Խ. Միութիւնը իր զինուած ուժերով կը գայ և կը խարսխի Նեղուցների վրայ, իր տան դռների պահակութիւնը, Թուրքիոյ հետ միասին, ինք կատարելով։

Ահա այս է, որ Խ. Միութիւնը պահանջում է իր ծանուցագրի 5րդ կէտով։

Այս երբեք չի նշանակում, որ Խ. Միութիւնը ուզում է սեփականացնել Նեղուցները։

«Ռուսաստանը Նեղուցների հարցում,— նկատում էր Փարիզի ռուս պարբերաթերթը,— անշեղօրէն ձգտած է — ու չի կարող չձգտել — երկու նպատակի. նախ՝ Նեղուցներից ազատ նաւարկութեան իրաւունք իր արտաքին առեւտուրի համար ինչպէս խաղաղութեան, այնպէս և պատերազմի ժամանակ. երկրորդ՝ երաշխիքներ, որ «կողմնակի» ռազմա-ծովային որեւէ ոյժեր չեն մտնի Սեւ ծով, ինչպէս այդ եղաւ 1854ին, 1919ին և մասամբ 1942ին։ Գործնապէս այդ երբեք չի նշանակում, որ Ռուսաստանն ուզում է իրեն «բռնակցել» Պոլիսը, այլ այդ նշանակում է, որ նա ուզում է միանա-

բար Թուրքիոյ հետ մասնակցութիւն ունենալ Նեղուցների պաշտպանութեան մէջ»։

Տիրացման գաղափարին դառնալով՝ պարբերաթերթը նկատում էր.

«Պոլսին անմիջօրէն տիրանալու գաղափարը մեր մէջ այլ կերպ ծագած չէ, քան սուր կարիքի տակ. եւ ուշագրաւ է, որ պատմութեան բովանդակ ընթացքին այդ իմաստով հարցը որոշակի և միջազգայնօրէն դրուած է միայն մէկ անգամ, եւ այն էլ դրուած է Անգլիոյ կողմից (ընդգծումը՝ մեզանից.— Ն.), որը 1914ի վախճանին ինքը Պոլիսն առաջարկեց Ռուսաստանին, մի բան, որ հետագային իր վաւերացումը գտաւ 1915ի Մարտ ամսուայ լոնդոնեան պրոտոկոլի մէջ»։ *)

Խորհրդային ծանուցագրի 5րդ կէտով տիրակալութիւն չէ որ առաջարկւում է, այլ համատիրութիւն Թուրքիոյ հետ, այս վերջինի վեհապետութեան պահպանումով Նեղուցների վրայ։

Իսկ ծանուցագրի 4րդ կէտով, ինչպէս ասացինք, Խ. Միութիւնը պահանջում է — միշտ նոյն մտահոգութիւններից մղուած — Նեղուցների օրինավիճակի հաստատումը վերապահել բացառաբար Սեւ ծովի առափնեայ պետութեանց։

Իր տեղում յիշատակեցինք արդէն, որ քէմալական Թուրքիան խորհրդային հանրապետութեանց հետ կնքած իր երեք դաշինքների մէջ — Խ. Միութեան, Անդրկովկասեան Հանրապետութեանց և Ուկրայնայի — այս սկզբունքը ընդունած էր արդէն։

Այս փաստը ինքնին ապացոյց է, որ խորհրդային պահանջը Թուրքիոյ դէմ չէ, եթէ միայն Թուրքիան Խ. Միութեան հետ է։

*) «Վոսքոր եւ Դարդանել» («Ի. Նովոստի», 23 Օգոստ. 1946)։

Այս պանանջի մէջ Ռ. Միութեանն ընդդիմանալով՝ Թուրքիան մատնում է իր թագուն, բոլոր պայմանների տակ Ռ. Միութեան հանդէպ ո՛չ բարեկամական նպատակները։

Ռ. Միութեան պանանջի հիմունքը որոշ է։

Ջրային այն բոլոր ճամբաները, որոնք որեւէ տեղ չեն փակւում, այլ բաց են աշխարհագրապէս, ցամաքները ցամաքներին կապելով և ազգերը՝ ազգերին, այլ խօսքով՝ միջազգային են իրենց բնոյթով, ինչպէս, օրինակ, Սուէզի ջրանցքն է, նման ճամբաները ենթակայ պէտք է մնան միջազգային հսկողութեան։

Բոլորին ծառայելով՝ այս բոլորից իւրաքանչիւրը իր մասնակցութիւնը պէտք է ունենայ այդ ճամբաների օրինավիճակի հաստատումին մէջ։

Այլ է պարագան ջրային այն ճամբաների համար, որոնք աշխարհագրապէս բաց չեն, այլ փակ են. ունեն ոչ թէ երկու, այլ միայն մէկ ծայր. տարանց (տրանզիտ) գծեր չեն, այլ դրսից (ուր ելքեր կան) գալիս եւ փակւում են ներսը (ուր ուրիշ ոչ մէկ ելք չկայ). այլ խօսքով՝ բնութեան կողմից նախատեսմանուած չեն բոլորի համար, այլ ծառայում են միայն սահմանափակ թուով պետութիւնների, ինչպէս, օրինակ, Սեւ ծովի պարագան է, որ իրականին մէջ ծով չէ (թէեւ այդպէս է կոչւում), այլ լիճ է։

Արդար է եւ իրաւացի, որ նման ճամբաների օրինավիճակի հաստատման մէջ մաս ունենան այն պետութիւնները միայն, որոնց պատկանում և որոնց ծառայում են նրանք. ուրիշներ կարող են երբեք ոտք իսկ չդնել Սեւ ծով, նրանց գոյութեան համար երբեք պարտադիր չէ մուտքը Սեւ ծով. այդպէս չէ պարագան Սեւ ծովի առափնեայ պետութեանց համար. նրանք, ուզեն թէ չուզեն, արտաքին աշխարհին կապուելու համար՝ պարտադիր միայն մէկ ճանապարհ ունեն— Նեղուցները, անմիջական շարունակութիւնը իրենց սեփական ջրային տան՝ Սեւ ծովի։

Այս կէտին անդրադառնալով՝ Ֆրանսացի պատմագէտ և նախկին արտ. գործոց նախարար Գաբրիէլ Հանոտոյ, որ ժամանակին Պոլսոյ մէջ դիւանագիտական պաշտօն էր վարում, սրանից երեսուն տարի առաջ բալկանեան պատերազմի մասին իր գրած գործի մէջ նկատում էր.

«Սեւ ծովը ան-ելք է։ Նրա ճակատագիրը միայն առափնեայ պետութիւնները կարող է շտապրգռել։ Սեւ ծովը ներքին ծով լինելով՝ նրա օրինավիճակը կախում պէտք է ունենայ միայն իրեն առնչուած ազգերի կամքից։ Պէտք է, որ Ռուսիա, Թուրքիա, Ռումանիա եւ Բուլգարիա համաձայնութեան գան իրենց հասարակաց շահերի շուրջ։ Սեւ ծովեայ պետութեանց դաշնակցութիւնը լուծումներից մէկը պիտի լինէր անշուշտ, և Նեղուցների հարցը այդ դաշնակցութեան կողմից պիտի կարգադրուէր ճիշտ այնպէս, ինչպէս մէկ տան բնակիչներ հաստատում են իրենց տան մուտքի և ելքի կանոնները։ Անհասկանալի է, թէ ի՛նչպէս այսքան բնական և բաղձալի մի համաձայնութիւն ձգձգւում է այսքան երկար ժամանակից ի վեր»։*)

Ահա ճիշտ այս է, որ Ռ. Միութիւնը պահանջում է իր ծանուցագրի 4-րդ կէտով։

Ի՞նչ պատասխանեցին խորհրդային ծանուցագրին՝ լինի՛ Թուրքիան, լինեն Անգլիան եւ Ամերիկան։

---

*) Ա. Սամբուլով — "Ի՞նչն է ազդում թուրքերի ընթացքի վրայ Նեղուցների խնդրում» («Ալիք», Թեհրան, 27 Նոյ. 1946)։

Հիմնականը Թուրքիոյ պատասխանն է, որովհետեւ, անուղղակի և անպաշտօն բազմաթիւ աղբիւրներից դատելով, այդ պատասխանը խմբագրուած է համամտութեամբը Անգլիոյ և Ամերիկայի։ Իր տեղում պիտի տեսնենք, որ գրեթէ տառապէս նոյնն են նաև անգլիական և ամերիկեան պատասխանները խորհրդային ծանուցագրի հինգ պահանջների նկատմամբ։

Փորձենք մի քանի սեղմ տողերի մէջ ամփոփել Թուրքիոյ պատասխանը, որ Էնկիւրիի խորհրդարանական դեսպանի միջոցով 1946 Օգոստ. 22ին յանձնուեց Մոսկուային, միաժամանակ նոյն պատասխանի պատճէնը Թուրք կառավարութիւնը յղեց թէ՛ Մոնտրէոյի պայմանագիրը ստորագրող մնացեալ պետութեանց և թէ Հիւս. Ամերիկային։

Ահա այդ ծանուցագիր-պատասխանի հիմնական մտքերը.

ա.— Թուրքիա հերքում է Մոնտրէոյի պայմանագրի խախտման դէպքերը պատերազմի շրջանին. եղած աննշան խախտումները նա համարում է «մի քանի նաւերի ծպտուած անցք», որոնցից ոմանք «արձանագրուած չէին ռազմանաւերի միջազգային տարեգրքի մէջ». այս խախտումները Թուրքիա վերագրում է ոչ թէ Նեղուցների վարչութեան (նրա թերի կառոյցին), այլ պայմանագրի թերի տեքստին։

բ.— Թուրքիա յայտնում է, որ Պոտսդամից յետոյ, 1945 Նոյ. 2 թուականով, Ամերիկեան կառավարութիւնից ծանուցագիր առած է, ուր առաջարկւում է վերաքննել Մոնտրէոյի պայմանագիրը եւ «այն պատշաճեցնել ներկայ պայմաններին». ամենամերիկեան առաջարկները, ըստ Թուրք պատասխանի, «առաւել կամ նուազ չափով համանման են

խորհրդային ծանուցագրի առաջին երեք կէտերին»։ Թուրքիա յայտնում է, որ ինք «մի կարգ պայմաններով ու վերապահումներով այս թելադրութիւնները պատրաստ է ընդունելու իբրև հիմ վիճաբանութեան»։

գ.— Թուրքիա վճռաբար մերժում է խորհրդային ծանուցագրի 4րդ կէտը. չի ընդունում, որ Նեղուցների վարչաձեւի հաստատումին մասնակցեն միայն Թուրքիան և Սեւծովեան պետութիւնները, իսկ միւս չահագրգռուող պետութիւնները այդ մարմնից դուրս մնան, մի բան, որ դէմ է Մոնտրէոյի պայմանագրի տառին և ոգիին, այլ առաջարկում է նախկին կազմը պահել, առաւել Հիւս. Ամերիկան. Թուրքիան չի մոռանում անցողակի յիշատակել, որ Մոնտրէոյի համաձայնութեան պայմանաժամը լրանում է 1956ին։ *)

դ.— Թուրքիա նոյնքան վճռաբար մերժում է խորհրդային ծանուցագրի 5րդ կէտը, «այն գտնելով ներկայ Թուրքիոյ գերիշխանութեան և ապահովութեան». յայտնում է, որ վճռած է իր ստացուածքը «ոգի ի բռին պաշտպանել ընդդէմ ամէն յարձակումի». իբրև վստահագոյն երաշխիք, ի պաշտպանութիւն Ս. Միութեան ապահովութեան, Թուրքիան տալիս է Միացեալ Ազգերի Կազմակերպութեան հացէն.

---

*) Անկարող հերքելու այն յամառ փաստը, որ Սեւ ծովը գոց ծով է, կիսապաշտօնական «Ուլուսը» իր 1946 Սեպտ. 30ի թուով գրում էր.

«Սեւ ծովը չի կարող գոց ծով նկատուել, քանի որ իր ափերը պատկանում են բազմաթիւ պետութեանց. աւելին. միջազգային բնոյթ ունեցող մի գետ՝ Դանուբը՝ թափւում է նրա մէջ»։

Կիսապաշտօնականները «մոռանում» է, սակայն, որ Դանուբը Սեւ ծով թափուելով՝ այդ ծովի համար երկրորդ ելք չի կազմում, այլ իր ակունքներով գնում եւ անհետանում է Սեւ Անտառի մթին խորքերում, Սեւ ծովից 1750 մղոն հեռու։

«Նոյնիսկ կատարելապէս անհաւանական պարագային, — յայտնում է Թրքական ծանուցագիրը, — երբ Խ. Միութիւնը պիտի մտահոգուէր, որ Սեւ ծովի իր դիրքերը կարող են վտանգի ենթարկուել Նեղուցների միջոցով Միջերկրականից գործուելիք յարձակման հետեւանքով, Թուրք կառավարութեան կարծիքով Խ. Միութիւնը այդ պարագային պէտք է վստահի աղդուութեանը Միացեալ Ազգերի Կազմակերպութեան, որին կապուած է Թուրքիա*)։

Թրքականին յար և նման պատասխաններ տուած են ռուսական ծանուցագրին նաև Ամերիկան և Անգլիան, Ուաշինգտընի և Լոնդոնի խորհրդային դեսպանատանց միջոցով, առաջինը՝ 1946 Օգոստ. 19ին, իսկ երկրորդը՝ 1946 Օգոստ. 20ին. անգլիական պատասխանը 24 ժամ ուշացած է, որովհետեւ՝ նախ քան իր յանձնումը՝ Փարիզի մէջ քննուած է Խաղաղութեան Խորհրդաժողովի բրիտ. Գաղթապետութեանց ներկայացուցիչների կողմից, գլխաւորութեամբ Բեւինի։

Իր ծանուցագրով Ամերիկեան Կառավարութիւնը յայտնում էր, որ ընդունում է խորհրդային ծանուցագրի մէջ մատնանշուած հինգ առաջարկներից առաջին երեքը, սակայն մերժում է վերջին երկուսը, որոնք վերաբերում են Նեղուցների հսկողութեան և պաշտպանութեան.

«Ամերիկեան Կառավարութիւնը գտնում է, — ասուած էր ծանուցագրի մէջ 4րդ կէտի նկատմամբ, — որ Նեղուցների օրինավիճակով չհագրգռուած

*) Թրքական ծանուցագիրը միաժամանակ հրատարակած են կիսապաշտօնական «Ուլուսը» եւ պոլսանայ թերթերից «Ժամանակ»ը իրենց 1946 Օգոստ. 24ի թուերով. մենք մեր հաղուածները կատարեցինք «Ժամանակ»ից։

են բոլոր պետութիւնները, որոնց կարգին նաեւ Հիւս. Ամերիկան»։

Իսկ ինչ վերաբերում է 3րդ կէտին՝ ապա ծանուցագիրը յայտնում էր.

«Միայն Թուրքիան պէտք է ճանաչուի այն միակ պետութիւնը, որ պատասխանատու է Դարդանելի պաշտպանութեան համար»։

Ամերիկեան ծանուցագիրը առանձնաբար չեշտում էր այն պարագան, որ «Նեղուցների հարցը պէտք է քննուի և լուծուի համաձայն Միացեալ Ազգերի Ուխտին»։

Առ այդ մատնանշում էր միջազգային Խորհրդաժողովի գումարման անհրաժեշտութիւնը, այլ խօսքով՝ չէր ընդունում, որ ուղղակի համաձայնութեամբ Թուրքիոյ եւ Խ. Միութեան միջեւ Նեղուցների հարցը կարող է իր լուծումը գտնել։

Ուղղակի համաձայնութեան այս արգելքը բացառիկ արժէք ունի. նոյն արգելքը կայ նաեւ բրիտանական ծանուցագրի մէջ։

Անգլիա եւ Ամերիկա չեն ընդունում, որ Խ. Միութիւնը և Թուրքիան, ուղղակի բանակցութեամբ և համաձայնաբար, առանց իրենց, կարող են կարգաւորել Նեղուցների խնդիրը. այլ խօսքով՝ ձեւապէս և փաստօրէն չեն ընդունում, որ այս ջրուղիների վրայ վերապետական իրաւունքները պատկանում են Թուրքիոյ։ Այս ջրերում Թուրքիոյ հետ միասին իրաւակից նկատելով նաև իրենց՝ Անգլիա և Ամերիկա յօժար են միայն նախնական բանակցութեանց, բայց ոչ հարցի վերջնական կարգաւորութեան։ Եթէ, օրինակ, վաղը Թուրքիան եւ Խ. Միութիւնը յայտարարեն, որ իրենք արդէն համաձայնած եւ որոշած են զինակցաբար Նեղուցները պաշտպանել, Անգլիան եւ Ամերիկան կարող

են այս փաստի մէջ ոչ թէ բացառաբար Թուրքիոյ եւ Խ. Միութեան վերաբերող casus foederis տեսնել, այլ կարող են այս փաստը իրենց համար casus belli նկատել։ *)

Ամերիկեան ծանուցագիրը անհրաժեշտ է դասում նաև հետեւեալ նախազգուշացումն անելու.

«Եթէ Դարդանելը յարձակման թիրախ հանդիսանայ, և կամ եթէ նրա համար յարձակման վտանգ ծագի, ստեղծուած կացութիւնը պէտք է ենթարկուի քննութեանը Միացեալ Ազգերի Ապահովութեան Խորհուրդի»։ **)

Նոյն մտքերն է կրկնում, ինչպէս ասացինք, նաև անգլիական ծանուցագիրը։

Արդէն այս վերջինը տակաւին չյանձնուած, կիսապաշտօնաթերթը «Թայմզ»՝ իր 1946 Օգոստ. 15ի խմբագրականի մէջ անդրադառնալով Նեղուցների հարցին, գրում էր.

«Առաջարկն այն մասին, որ Նեղուցները բացլինեն Սեւծովեան պետութեանց ռազմանաւերի անցումին համար եւ գոց՝ բացառիկ դէպքերը նկատի չառնելով՝ այլ պետութեանց ռազմանաւերի համար, — զգալի փոփոխութիւն պիտի լինէր Մոնտրէոյի պայմանագրի մէջ ի նպաստ Խորհրդային Միութեան։ Այդ փոփոխութիւնը արդարանում է ինչպէս պայմանագրի ոչ բոլորովին բաւարար գործողութեամբը պատերազմի ժամանակ, այնպէս նաև Խ. Միութեան ռազմագիտական չափերովը Նեղուցների մէջ»։ *)

Սրանից աւելին Մեծն Բրիտանիան յօժար չէ ընդունելու. մասնաւորաբար խորհրդային ծանուցագրի 4րդ և 5րդ պահանջների նկատմամբ նա լրիւ եւ ամբողջութեամբ Թուրքիոյ և Ամերիկայի հետ է։ **)

Երեքներն իրենց պատասխանները յանձնեցին, ուրեմն, հետեւեալ կարգով. — Ամերիկան՝ Օգոստ. 19ին, Անգլիան՝ Օգոստ. 20ին, իսկ Թուրքիան՝ Օգոստ. 22ին։

Այլ խօսքով՝ ձեւապէս և փաստօրէն Թուրքիան կրկնում էր այն, ինչ որ իրենից առաջ ասած էին արդէն — անշուշտ իր իսկ գիտութեամբն ու հաւանութեամբը — Անգլիան և Ամերիկան։

1946 Սեպտ. 24ին Խ. Միութիւնը Էնկիւրիի իր դեսպանի միջոցով Թուրք կառավարութեան յանձնեց իր երկրորդ ծանուցագիրը։

Ձեւապէս այս վերջինը պատասխան էր Թուրքիոյ 1946 Օգոստ. 22ի յուշագրին, սակայն խորքին մէջ նա հիմ ունէր նաև Ամերիկայի Օգոստ. 19ի եւ Անգլիոյ Օգոստ. 20ի յուշագիրները։

*) Հիւս. Ամերիկայի Պետական Վարչութիւնը, իր 1946 Սեպտ. 30ի յայտարարութեան մէջ զուգակիցն անելով Դարդանելի եւ Պանամայի, ի միջի այլոց, ասում էր.

«Միացեալ Նահանգների կառավարութիւնը բոլոր ազգերից ստացած է Պանամայից՝ այնտեղ կայաններ ունենալու համար. մինչ Թուրքիա անփոփոխ կերպով դէմ է, որ Խ Միութիւնը կայաններ ունենայ իր հողի վրայ» ("Հայրենիք", 8 Հոկտ. 1946)։

Իրողութիւն է սակայն, որ Թուրքիա, եթէ թեր իսկ լինէր Խ Միութեան կայաններ տալու, դարձեալ չէր կարող տալ, որովհետեւ տալուն դէմ են Անգլիան եւ Ամերիկան, որոնք իրաւապէս Նեղուցների տէրը չլինելով՝ փաստօրէն այդ իրողների տէրը իրենց են նկատում։

Իր տեղում պիտի անդրադառնանք, թէ Ամերիկա ի՛նչ ձեւով իրաւունք ստացաւ Պանամայում կայաններ ունենալու։

**) «Ռուսկիյա Նովոստի» (Փարիզ), 23 Օգոստ. 1946, թիւ 67։

*) «Սեւծովեան Նեղուցների ճարցի մասին» («Իզվեստիա», 18 Օգոստ. 1946)։

**) Բրիտանական ծանուցագիրը տե՛ս "Ցուս.", 22 Օգոստ. 1946։

Այս երկրորդ ծանուցագրով Ի. Միութիւնը նոյնութեամբ կրկնում էր իր առաջին ծանուցագրով ներկայացրած պահանջները։

Այս տեսակէտից զոյգ ծանուցագրերի մէջ ոչ մէկ տարբերութիւն չկայ։

Տարբերութիւնը — լոկ փաստարկութեան մէջ է. երկրորդ ծանուցագիրը — ի դէպ, առաջինի բաղդատմամբ բաւական ընդարձակ — ճոխացած է ուշագրաւ առարկումներով։

Թուենք դրանցից գլխաւորները.

ա.— Ի. Կառավարութիւնը իր գոհունակութիւնն է յայտնում այն առթիւ, որ 1946 Օգոստ. 8 ծանուցագրով իր մատնանշած «երեք սկզբունքները Թրքական Կառավարութիւնը պատրաստ է ընդունելու իբրեւ հիմ». միաժամանակ իր զուսպ դժգոհանքն է աւելացնում, որ Էնկիւրին, ընդունելով հանդերձ, այդ սկզբունքների առնչութեամբ «հեռագայիցն մի քանի վերապահումներ ունի անելիք»։

բ.— Ծանուցագիրը մատնանշում է, որ՝ առաջին երեք սկզբունքները ընդունելով՝ Թուրք Կառավարութիւնը ինքնին ընդունած է լինում, թէ Սեւ ծովի առափնեայ պետութիւնները արտօնեալ վիճակ պէտք է ունենան Նեղուցներում. այս պարագան, ըստ ծանուցագրի, պէ՛տք է, որ իր արտայայտութիւնը գտնի Նեղուցների օրինավիճակի մէջ, մի բան, որ պակասում էր Մոնտրէոյի պայմանագրին։

գ.— Համատեղ միջոցներով Նեղուցների պաշտպանութեան սկզբունքին գալով՝ ծանուցագիրը յայտնում է.

«Թուրք Կառավարութիւնը մերժում է այդ սկզբունքը՝ առանց, սակայն, որեւէ որոշակի առարկայ լսած լինելու Խորհրդային Կառավարութեան կողմից այս մասին, անգամ միասնական քննութեան փորձ չկատարելով այդ առաջարկների շուրջ Խորհրդային Կառավարութեան հետ»։

Այս ուշագրաւ պարագան չնչելով՝ ծանուցագիրը աւելի վճռաբար կրկնում է.

«Հակառակ Թուրք ծանուցագրի մէջ տեղ գտած (մերժման.—Ն.) տեսակէտին Խորհրդային Կառավարութիւնը մնում է այն կարծիքին, որ ՄԻԱՑՆ (ընդգծումը՝ մեզանից.—Ն.) համատեղ միջոցներով Թուրքիան և Ի. Միութիւնը կարող են ապահովել ինչպէս առեւտրական նաւագնացութեան ազատութիւնը, այնպէս և անվտանգութիւնը Նեղուցներում»։

Եւ՝ իբրեւ ըմբերանող փաստ՝ յիշում է 1914 Օգոստ. 10ի Թուականը, երբ «Գէօբէն»ն ու «Բրեսլաու»ն, համամտութեամբը Թուրք Կառավարութեան, անցան Դարդանելն ու մտան Մարմարա, հեռագային գերման ծովակալ Սուշոնի գլխաւորութեամբ Սեւ ծովի ռուսական նաւահանգիստները ռմբակոծելու համար։

դ.— Ծանուցագիրը, անշուշտ որոշ հիմ ունենալով, հետեւեալ նախազգուշացումն է անում.

«Եթէ Թուրքիան, հրաժարուելով Ի. Միութեան առաջարկից, սրիչ՝ ոչ-Սեւծովեայ պետութեանց հետ միասնաբար զինուորական ձեռնարկներ կատարի Նեղուցներում, ապա հասկանալի է ինքնին, որ իր այս քայլով նա պիտի գտնուի ուղղակի հակասութեան մէջ Սեւծովեայ պետութեանց ապահովութեան շահերի հետ»։

ե.— Անդրադառնալով միջազգային Խորհրդաժողովի գումարումի խնդրին՝ ծանուցագիրը յայտնում է.

«Խորհրդային կառավարությունը կարծում է, որ նման խորհրդաժողովի գումարումին պէտք է նախորդի հարցի ըստ հնարաւորին լիակատար քննությունը անմիջական բանակցությանց միջոցով չահագրգիռ կառավարությանց միջև, ինչպէս որ այս պարագան նախատեսած է Բերլինի խորհրդաժողովը»։*)

Այս ծանուցագրին եւս զատ յուշագիրներով պատասխանեցին թէ՛ Անգլիա, թէ՛ Ամերիկա եւ թէ Թուրքիա։**)

Անգլիան իր պատասխանը Թուրքիոյ, Խ. Միութեան (և մնացեալներին) յանձնեց 1946 Հոկտ. 4ին, Ամերիկան՝ Հոկտ. 9ին, իսկ Թուրքիան՝ Հոկտ. 18ին։***)

Ուշագրաւ է՝ այն, որ նաև այս անգամ Թուրքիան խորհրդային ծանուցագրին պատասխանում էր ամենից վերջը, Անգլիոյ և Ամերիկայի յուշագիրները — ուղղուած թէ՛ իրեն և թէ Խ. Միութեան — առնելուց յետոյ։****)

Այս պատասխանների պաշտօնական պատճէնները, ամբողջական թարգմանութեամբ, դժբախտաբար, չհրապարակուեցին։

*) «Իզվեստիա», 28 Սեպտ. 1946:

**) Մեզ կարելի չեղաւ ստուգել, թէ ի՛նչ էր իմաստը «Մոյզրը»ի 1946 Հոկտ 15 այն հեռագրին, թէ խորհրդային ծանուցագրի պատճէնը, ըստ Էնկիւրիի ձայնասփիւռին, Անգլիոյ եւ Ամերիկայի յանձնուած չէր:

***) Այս ծանուցագրերի պատճէնը դրկուած չէր միայն Ճապոնին (իբրեւ թշնամի պետութեան), իսկ Ամերիկայի կողմից՝ նաեւ Բուլգարիոյ, որի հետ Ամերիկան այդ օրերին դիւանագիտական կապ չունէր։

****) Ընդհանրապէս այն պարագան, որ Նեղուցների դիւանագիտական պատասխանութեան հարցի մէջ «անկախ» Թուրքիան, ձեւական իրաւաբէրը այդ ջուղիների, ոչ թէ «առաջնորդի», այլ «հեռագրական գործակալութիւններն ու թերթերը, իրենց տեղեկութիւնները «արժանահաւատ աղբիւր»ներից քաղելով, յայտնում էին, որ այս պատասխանները չէին տարբերւում նախապէս խորհրդային առաջին ծանուցագրի առթիւ տրուած պատասխաններից։

Այս ենթադրութեան մէջ անհաւանական ոչինչ չկայ, ի հարկէ։

Բնական է խորհել, որ վէճի ենթակայ երկու գլխաւոր հարցերի մէջ Անգլիա, Ամերիկա և Թուրքիա իրենց հիմնական առարկումները պահում են։

Իսկանն այն է, թէ նրանք, այս առարկումները ընդհանուր առումով պահելով հանդերձ, որոշ զիջումներ, այնուամենայնիւ, անո՞ւմ են թէ ոչ։

Աւելի որոշ. Թուրքիոյ հարցը «Մեծ Երեք»ներից Անգլիոյ և Ամերիկայի համար վերջնապէս նախանշուա՞ծ է արդեօք, անվերաքննելի և անփոփոխելի ձեւով, թէ՞ այդ հարցը տակաւին կարող է

«ուղղի դեր էր կատարում (Անգլիոյ եւ Ամերիկայի բաղդատմամբ), գրուած է նաեւ «Պրաւդա»յի ուշագրութիւնը:

Անդրադառնալով այս ուշագրաւ փաստին, ուր Թուրքիա, ձեւապէս իր անկախութիւնը պահելով, **փաստօրէն** կրկնում էր Անգլիոյ եւ Ամերիկայի խօսքերը, պատասխանները նկատում էր.

«Նախնական գեղերի մոտ, հոյրիշխանութեան շրջանին, կար «կուվատա»ի սովորոյթ: Երեխային ծնում էր մայրը, սակայն ծնողական իրաւունքները տնտեսութեան խաղում էր հայրը: Այս վերջինը ընկնում էր անկողին եւ ցաւագին ճիչեր արձակում: Ցեղոյ նորածինին զատնաբար խոթում էին նոր անկողինը ու ինչ վերջը հանդիսաւորապէս յայտարարում, որ յդի հայրը անփորձ ազատուել է ծնողական երկունքից» (Դ. Զասլաւսկիյ — «Գրական կուսակցը անգլեամերիկեան խորիզով», «Պրաւդա», 29 Հոկտ. 1946):

Արդար լինելու համար պիտի ասենք, որ այսօր անխտրաբար բոլոր փոքր ժողովրդները «կուվատա»յի այս տեսարանն են խաղում Մեծերի ձեռքին...

աղբիւր հանդիսանալ նորանոր բանակցութեանց եւ սակարկութիւնների։

Արտակարգօրէն դժուար է պատասխանել այս հարցումներին։

Դիւանագիտութիւնը երբեք այնքան գաղտնի եղած չէ, որքան այսօր է, երբ — ճիշտ հակառակը այս երեւոյթին — մարդկութիւնը իր բովանդակ պատմութեան մէջ երբեք խօսքի այնպիսի հեղեղ տեսած չէ, ինչպիսին նա տեսնում է այսօր։

Երբե՞ք տպագրական մեքենան այսքան անհատնում քանակութեամբ տպագիր թուղթ նետած չէ հրապարակ, երբե՞ք բեմերից այսքան ճառ խօսուած չէ մարդկութեան, երբե՞ք այսքան մեծ թուով մարդիկ այսքան մեծ «ազատութեամբ» կարծիք յայտնած և այսքան անհուն քանակութեամբ քուէ տուած չեն աշխարհը յուզող հարցերի շուրջ։

Հակառակ այս բացայայտ իրողութեանց, Սուտը երբեք այնքան վեհափառօրէն իշխանապետած չէ աշխարհի վրայ, ինչպէս որ իշխանապետում է այսօր։

«Ղուրքս հնդուր ճանփա չ'է գնում, շատացիլ է խալխի սուտը»,— աւելի քան հարիւր յիսուն տարի առաջ աւաղում էր մեր անմոռաց Սայաթ Նովան, երբ իր ժամանակ Սուտը պտտում էր կամ ոտքով (քերանից բերան և թաղից թաղ) և կամ ձիով (քաղաքից քաղաք), երբ նա՝ այդ Հազարգլխանի Հրէշը՝ հազիւ էր տեղաւորուում գրամեքենայի վրայ եւ մեծ դժուարութեամբ հասնում միայն հարիւրաւորների, շատ-շատ հազարաւորների ականջին...

Մինչ այսօր Սուտը թեւեր առած՝ անթել եւ թելաւոր հեռագրականներից հեղեղում է աշխարհը և ռադիոկայաններից երկվայրկեանների մէջ կտրում բեւեռից բեւեռ փռուող տարածութիւնները

և թունաւորում անհամար միլիոնաւորների հոգիները...

Զափազանց դժուար է այս պայմաններում մօտաւոր հաւանականութեամբ իսկ ճշտել բնոյթը այն խաղերի, որ Մեծերի կողմից տարուում են աշխարհը ալեկոծող հարցերի շուրջ։

Այս ճշմարտութիւնը գիտակցելով հանդերձ՝ փորձենք գծել այն ճանապարհը, որ թրքական հարցում Մեծերը անցան Պոտսդամից այս կողմ, մինչեւ 1947 Մարտ 10ի Մոսկուայի Խորհրդաժողովը։

Մեր նիւթը — հրապարակուած կարծիքներն ու որոշումներն են, գրեթէ բացառաբար թերթերի եւ պարբերականների մէջ։

«Թերթը — պատմութեան վայրկեանային սլաքն է,— ասում է Շոպենհաուէրը։

Եւ ճիշտ է. հեռագրական այն հաղորդագրութիւնների մէջ, որ մենք պիտի յիշատակենք մեզ մատնոող հարցի պատասխանը գտնելու համար, նրանց մէջ մենք տեսնում ենք պատմութեան «սլաքի» ճօճումները, նրա երերումը։

Ինչ որ պարզ լուր է այսօր, պատմական փաստ պիտի դառնայ վաղը։

Արդ, Անգլիա և Ամերիկա թրքական հարցում միշտ նոյն և մի կարծի՞քը ունեցան, անփոփոխ եւ անսակարկելի, թէ՞ նրանք, դէպք առ դէպք, ըստ տեղի և ժամանակի, մեզ անյայտ պատճառներով, այդ կարծիքը փոփոխեցին։

Մեզ թւում է, որ եղաւ այս վերջինը։

Այսօր, երբ գրում ենք այս տողերը — 1947 Ապրիլ 10 — քաղաքական աշխարհն ու քաղաքական մարդիկ այն չեն, ինչ որ էին 1945ին, գերմանն անձնատուութիւնից անմիջապէս յետոյ։

Այդ թուականից այս կողմ, այս վերջին երկու ծանրակշիռ տարիներին, փոխուած է աշխարհն իր

քաղաքական կերպարանքով, և փոխուած են վարիչներն իրենց մտածումներով։

Նոյն փոփոխութիւնները աշխարհն ու իր վարիչները ապրած են նաև Մեծաւոր և Միջին Արևելքին կապուած խնդիրներում։

Մասնաւորաբար Թրքական հարցում Մեծերը պատերազմի վախճանից այս կողմ անցած են հետևեալ երեք գլխաւոր փուլերից.

ա.— ՊՈՏՍԴԱՄ (17 Յուլիս 1945 — 2 Օգոստ. 1945)։

բ.— ՆԻՒ ԵՈՐՔ (23 Հոկտ. 1946 — 15 Դեկտ. 1946)։

գ.— ՄՈՍԿՈՒԱ (10 Մարտ 1947)։

1945 Մայիս 2ին, ինչպէս յայտնի է, խորհրդային բանակները գրաւեցին գերման մայրաքաղաքը և Յաղթանակի դրօշը բարձրացրին Բերլինի վրայ։

1945 Մայիս 8ին Գերմանիան վերջնապէս վար դրաւ զէնքը։

1945 Յուլիս 17ին, ընդհանուր ցնծութեան եւ վառ յոյսերի մէջ, տեղի ունեցաւ «Երեք»ների Խորհրդաժողովի բացումը Պոտսդամում։*)

Եւ այստեղ էլ Մեծերն առան իրենց պաշտօնական որոշումը Նեղուցների մասին։

Մինչեւ Պոտսդամ նրանք այս մասին խօսակցութիւններ ունեցած էին անչուշտ, սակայն որոշումը զատ յօդուածով (16րդ) առաջին անգամ այստեղ առնուեց նրանց կողմից։*)

Ահա բնագիրը այդ որոշումին, որ ամերիկեան կոնգրեսի պահանջով 1947 Մարտ 25ին հրապարակեց Պետական Վարչութիւնը.

«Երեք կառավարութիւնները ընդունում են,— ասուած է Պոտսդամի համաձայնութեան բնագրի մէջ,— որ Նեղուցների վերաբերմամբ Մոնտրէոյի համաձայնութիւնը պէտք է վերանայուի, որովհետեւ ներկայ պայմաններին։ Որոշուեց, որ այս հարցի մասին ուղղակի խօսակցութիւններ տեղի ունենան կառավարութիւններից իւրաքանչիւրի եւ Թուրքիոյ միջեւ»։**)

Աւելին ոչինչ չկայ այդ որոշումի մէջ. խօսք չկայ ո՛չ Նեղուցների միջազգայնացման, ոչ նոր խորհրդաժողովի և ոչ էլ այն մասին, թէ նոր համաձայնութիւնը պէտք է ենթարկուի վաւերացմանը այն պետութիւնների, որոնք ժամանակին ստորագրած են Մոնտրէոյի Պայմանագիրը։

Այսքան մեղմ, հանդուրժող և բարեացակամ էր ոգին այն որոշումին, որ հիմ ծառայեց խորհրդային ծանուցագրին։

Այսպէս եղաւ ոչ այն պատճառով՝ որ Անգլիա եւ Ամերիկա Պոտսդամում անտեղեակ էին Ս. Միու-

*) Պոտսդամի խորհրդաժողովին, 1945 Յուլիս 17ից մինչեւ Յուլիս 25, մասնակցում էին Հարրի Տրումըն, Ի. Ստալին եւ Ուինսթըն Չըրչիլ (իրեն հետ ունենալով Կ. Էթլիին)։ Մասնակցում էին նաեւ «Երեք»ների արտ. գործոց նախարարները՝ Ջէյմս Բրնզ, Վ. Մոլոտով եւ Էնթրնի Իդըն, ինչպէս նաեւ Սպայակոյտերի պետերը։ Խորհրդարանական ընտրութեանց մէջ Չըրչիլը պարտուելով՝ Յուլիս 25ից մինչեւ Օգոստ. 2ը Պոտսդամում նրան փոխարինում էր Էթլիին, իսկ Իդընին՝ Էռնստ Բեւինը։

*) Կոնգրեսի պահանջով հրապարակելով Թեհրանի, Եալտայի եւ Պոտսդամի որոշումները՝ Հիւս. Ամերիկայի արտ. քարտուղարութիւնը՝ իր պաշտօնական պատգամախօսի բերանով՝ խոստովանում էր, որ, իրոք, Եալտայի մէջ (ուրեմն Պոտսդամից ամիսներ առաջ), խօսակցութիւններ եղած են Մոնտրէոյի Պայմանագրի մասին, ինչպէս որ ժամանակին այս պարագան մատնանշում էր «Իզվեստիա»ն իր 1946 Օգոստ. 18ի խմբագրականով. սակայն թէ ի՞նչ խօսակցութիւններ եղած են, պատգամախօսը, տարաբախտաբար, չէր ասում (տե՛ս «La Bourse Egyptienne», Գահիրէ, 1947 Մարտ 25)։

**) «Յուս.», 27 Մարտ 1947։

թեան իրական փափագներին. ճիշտ հակառակը. Զըրչիլի, Բըրնզի եւ Բեւինի ճառերից եւ յայտարարութիւններից — արդէն յիշատակուած մեր կողմից — մենք տեսանք, որ նրանք ոչ միայն ըստ բիւ տեղեակ էին այդ փափագներին — խարիսխներ ունենալ Դարդանելում եւ Կարսն ու Արդահանը կցուած տեսնել Ս. Հայաստանին — այլ և խօսակցութիւններ ունեցած էին այդ մասին։

Այսպէս լինելով հանդերձ՝ Անգլիա եւ Ամերիկա վճռաբար ընդդիմացած չէին Ս. Միութեան պահանջին, այլ որոշած էին, որ «ճարցի մասին ուղղակի խօսակցութիւններ տեղի ունենան կառավարութիւններից իւրաքանչիւրի եւ Թուրքիոյ միջեւ»։

Այս որոշումից ինքնին և լռելեայն բխում էր նաև այն հաւանականութիւնը, թէ ուղղակի խօսակցութեանց միջոցին կարող է Ս. Միութեան եւ Թուրքիոյ միջեւ եթէ ոչ վերջնական, գէթ նախնական համաձայնութիւն գոյանալ խորհրդային պահանջների շուրջ։

Այս հաշտարար մթնոլորտը երկար չտեւեց սակայն։

Շուտով տեղի ունեցաւ «Հինգ»երի Խորհրդաժողովը Լոնդոնում (11 Սեպտ. 1945 — 2 Հոկտ. 1945), որին յաջորդեց «երեք»ների Խորհրդաժողովը Մոսկուայում (16 Դեկտ. 1945—26 Դեկտ. 1945), ուր — թէ՛ Լոնդոն եւ թէ Մոսկուա — պարզուեց, որ տարաձայնութիւնները աստիճան առ աստիճան խորանում են Մեծերի միջեւ։ *)

*) Հինգ Մեծերի արտ. գործոց նախարարների Խորհուրդը, իբրեւ մնայուն մարմին, ստեղծուեց Պոտսդամում. նորաստեղծ մարմնի քարտուղարութիւնը հաստատուեց Լոնդոնում. այս մարմինը պարբերաբար Խորհրդաժողովներ պիտի չումարէր՝ արտ. գործոց փոխ-նախարարների

Մոսկուայի Խորհրդաժողովն իսկ, որ հրաւիրուած էր «Լոնդոն»ի ձախողանքը դարմանելու համար, արտաքնապէս թէեւ վերջացաւ «լիակատար համաձայնութեամբ», սակայն ի վիճակի չեղաւ Մեծերի միջեւ վերահաստատելու վաղեմի բարեկամական յարաբերութիւնները։

Այս լարուած, անվստահութեամբ լի մթնոլորտում էր, որ տեղի ունեցաւ Միացեալ Ազգերի Կազմակերպութեան Ընդհանուր ժողովի առաջին նըստաշրջանի առաջին մասի գումարումը Լոնդոնում, 1946 Յունուար 9ից մինչեւ 1946 Փետր. 15ը։

Զգուշուած յարաբերութիւնների այս տխուր պատկերը համայն աշխարհին տեսանելի դարձաւ մանաւանդ «Զորսների — Բըրնզ, Բիդոյ, Բեւին և Մոլոտով — Խորհրդաժողովում, գումարուած Փարիզ, 1946 Ապր. 25ին։ Այս Խորհրդաժողովի առաջին մասը փակուեց 1946 Մայիս 15ին, ապա, մէկ ամիս վերջ, Յունիս 15ին, վերաբացուեց նոյն Խորհրդաժողովի երկրորդ մասը, որ տեւեց մինչև 1946 Յուլիս 11ը։

«Զորսների Խորհրդաժողովի մռայլ եւ մատնոցիչ պատկերը լրիւ հայելիացաւ մանաւանդ Խաղաղութեան Վեհաժողովի մէջ, որ 21 ազգերի մասնակցութեամբ 1946 Յուլիս 29ին բացուեց Փարիզում, Լիւքսէնբուրգի սրահների մէջ, Ժ. Բիդոյի նախագահութեան տակ։

Խաղաղութիւն չէր այս, այլ կատարեալ պատերազմ... միայն թէ գրչով և ճառերով։

մարմնի կողմից իրեն փոխանցուած ճարցերի վերջնական լուծումներ ձեւաւորելու համար։

Լոնդոնի սեպտեմբերեան Խորհրդաժողովը այս Խորհուրդի անդրանիկ հաւաքոյթն էր, իսկ Մոսկուայինը՝ երկրորդ։

Այս խռովայոյզ շրջանին էր անա, 1946 Օգոստ. 8ին, որ մէկէն աշխարհ եկաւ Թուրքիոյ ուղղուած խորհրդային ծանուցագիրը, Մոնտրէոյի Պայմանագրի վերաքննութեան համար սահմանուած պայմանաժամը լրանալուց հազիւ մի քանի ժամ առաջ։ *)

Պարզ քմահաճոյքի խնդիր չէր անշուշտ, որ Խ. Միութիւնը իր ծանուցագրի յանձնումը այսքան ուշացրեց։ Պոտսդամի Խորհրդաժողովը փակուեց 1945 Օգոստ. 2ին, մինչ խորհրդային ծանուցագրի յանձնումը տեղի ունեցաւ աւելի քան մէկ տարի վերջը, 1946 Օգոստ. 8ին, երբ մինչ այդ, շատ ամիսներ առաջ, Անգլիա և Ամերիկա իրենց ծանուցագրերը նոյն հարցի մասին արդէն յանձնած էին Թուրքիոյ։

Կարելի բոլոր ենթադրութեանց մէջ ամենէն հաւանականը թերեւս այն է, որ 1945 Օգոստ. 2ից մինչև 1946 Օգոստ. 8ը, Խ. Միութիւնը, համաձայն Պոտսդամի որոշումի տառին և ոգիին, անպաշտօն խօսակցութեանց մէջ էր Թուրքիոյ հետ՝ խաղաղութեամբ և համաձայնաբար Նեղուցների հարցը նրա հետ կարգադրելու համար։

Խօսակցութեանց մէջ էր, ըստ երեւոյթին, Օգոստ. 2ից էլ առաջ։

Պէտք չէ մոռանալ, որ Խ. Միութիւնը Եալտայի Խորհրդաժողովից յետոյ, Թուրքիոյ ուղղած իր 1945 Մարտ 19ի ծանուցագրով, չեղեալ հռչակած էր 1925 Դեկտ. 17ի փարիզեան Թուրքեւխորհրդային ուխտը՝ նրա վերանորոգումի համար նոր հիմերի պահանջը մատնանշելով։

*) Ա. Հաճրի — «Նեղուցների պատերազմի տեղի պիտի չունենայ» («Ցուս.», 6 Մարտ 1947)։

1946 Օգոստ. 8ի խորհրդային ծանուցագիրը բնական շարունակութիւնն էր 1945 Մարտ 19ի ծանուցագրի՝ իր մէջ պարունակելով բացառաբար Նեղուցներին վերաբերող հիշատ այս «հիմերը»։

Ենթադրելի է ուրեմն, որ Խ. Միութիւնը 1945 Մարտ 19ից մինչև 1946 Օգոստ. 8ը իր գերագոյնն էր փորձում՝ լեզու գտնելու համար Թուրքիոյ հետ։

Իր այս ճիգի մէջ ձախողած լինելով՝ Կրեմլը ամենավերջին ժամին՝ 1946 Օգոստ. 8ին՝ իր ծանուցագիրը յանձնեց Թուրքիոյ։

Անգլիա և Ամերիկա, որ տակաւին ծանուցագիրը չյանձնուած լրիւ տեղեակ էին խորհրդային պահանջներին, կանխապէս, մինչև այդ ծանուցագիրը, Լոնդոնի և Մոսկուայի Խորհրդաժողովներից յետոյ, Զըրչիլի, Բըրնզի եւ Բեւինի ճառերով և յայտարարութիւններով, ինչպէս նաև Թուրքիոյ յանձնած իրենց ծանուցագիրներով, արդէն ճշտած էին իրենց վճռական ընդդիմութիւնը այդ պահանջներին։

Այս յայտարարութիւնների մէջ այլեւս չկար այն հաշտ և հանդուրժող ոգին, որ տեղ գտած էր Պոտսդամի որոշման մէջ։

Սակայն չկար այս ոգին ընդհանրապէս բոլոր հարցերի շուրջ և Մեծերի ամբողջական յարաբերութեանց մէջ։

Նեղուցները մէկ օղակն էին կազմում քաղաքական այն բարդ շղթայի մէջ, որ կարծես մաս առ մաս քակւում և կորցնում էր իր ամբողջական պատկերը։

Այս պայմաններում Մեծերից չէր կարելի ակնկալել Նեղուցների հարցի լուծումը, երբ անլոյծ էին մնում բոլոր խնդիրները։

Խաղաղութեան վեհաժողովը փակուեց 1946 Հոկտ. 15ին։

Ազգերի այս գերագոյն ատեանի աշխատութիւնները տեւեցին շուրջ երեք ամիս և վերջացան ընդհանուր առումով չափաւոր եւ անորոշ որամադրութիւնների մէջ։

Այս խառով մթնոլորտի մէջ, խաղաղութեան վերահաստատման փակումից ընդամէնը ութ օր վերջ, 1946 Հոկտ. 23ին, Նիւ Եորքում տեղի ունեցաւ Միացեալ Ազգերի Կազմակերպութեան Ընդհանուր ժողովի առաջին նստաշրջանի երկրորդ մասի բացումը։

Ընդհանուր ժողովին զուգահեռ, նոյն քաղաքի մէջ, բացուեց «Զորս»երի արտ. գործոց նախարարների խորհրդաժողովը, որ քիչ յետոյ պիտի դառնար յաջողագոյններից մէկը նոյնանման բոլոր խորհրդաժողովների մէջ։

1946ի Հոկտեմբերը թերեւս ամենեն տագնապալի, ամենեն բունաւոր ամիսն է Մեծերի յետպատերազմեան յարաբերութեանց մէջ։

Առաւելաբար այս ամսուայ մէջ է, որ վարիչները — Զըրչիլ (Հոկտ. 7ին), Սմըտս (Հոկտ. 12ին), Բեւին (Հոկտ. 22ին), Էտլի (Հոկտ. 23ին), Զըրչիլ (Հոկտ. 25ին), Մոլոտով (Հոկտ. 29ին) — իրենց ամենէն մարտաշունչ ճառերը արտասանեցին։

Նաեւ այս ամսուայ մէջ է, որ Դաշնակիցները՝ Անգլիա եւ Ամերիկա՝ արտայայտութեանց զանազան ձեւերով կրկին անգամ Նեղուցների հարցում որոշապէս դիրք ճշտեցին Թուրքիոյ կողքին։

Սակայն մէկէն, 1946 Նոյ. 4ից յետոյ, երբ տեղի ունեցաւ «Զորսերի մէկ դռնփակ նիստը Նիւ Եորքում, կարծես փոխուեց մթնոլորտը քաղաքական աշխարհում՝ մի պահ մարդկութեան այն ցոյցը ներշնչելով, թէ պատերազմի շրջանի բարեկամական յարաբերութիւնները թերեւս կրկին վերահաստատուեն Մեծերի միջև։

Շուտով այս մթնոլորտը փոխանցուեց նաև Ազգերի Ընդհանուր ժողովին, որ յաջողաբար կարողացաւ 391 նիստ գումարել և 71 հարց քննել, որոնց մէջ մի քանիսը բաւական ծանրակշիռ։*)

Մասաւորապէս այս շրջանին է, որ մի շարք կնճիռներ — Գերմանիոյ արբանեակ պետութեանց հետ խաղաղութեան դաշինքների կնքում, զինաթափութեան շուրջ նախնական համաձայնութիւն, Դանուբեան հարցի որոշ կարգաւորում, Միացեալ Ազգերին անդամակցող երկրների յարաբերութեանց խզում Սպանիոյ հետ, Տրիեստի հարցի կարգադրութիւն, «ինքնավարութեան» վերացում Իրանեան Ատրպատականում և Իրանի հողային ամբողջացում, «ինքնավար» Քրդաստանի հաշուեյարդար, Հիւլէական Ուժի շուրջ նոր առաջարկներ, Քննիչ Ցանձնախումբի առաքում Յունաստան և այլն, և այլն, — այս և այս կարգի մի շարք հարցեր այս շրջանին է, որ այսպէս կամ այնպէս իրենց լուծումը — թո՛ղ թէ առժամանակեայ — գտան։

Ասացինք արդէն, որ 1946ի Հոկտեմբերը ամենէն տագնապալի ամիսն էր Մեծերի փոխյարաբերութեանց մէջ։

Սակայն միաժամանակ, որոշ իմաստով, նա նաեւ յուսալից ամիսներից մէկն էր։

Ռազմատենչ ճառերին եւ մռայլ գուշակութեանց զուգահեռ՝ զանազան աղբիւրներից խորհրդաւոր լուրեր էին տեղում այն մասին, թէ փոխադարձ զիջումներով թերեւս կարելի լինի կարգաւորել խ. Միութեան պահանջների խնդիրը Թուրքիոյ հետ։

---

*) «Ընդհանուր ժողովի առաջին նստաշրջանը» («Իզվեստիա», 17 Դեկտ. 1946)։

Պարզ է, որ Մեծերը, մեկ կողմից՝ փոխադարձաբար սպառնում էին միմեանց, իսկ, միւս կողմից՝ սակարկում։

Մի քիչ աւելի կանգ առնենք այս վերջին — մեզ աւելի չանհագրգռող — ուղղութեամբ տարուած աշխատանքների և եղած արտայայտութեանց վրայ։

Տրամադիր ենք կարծելու, որ մասնաւորաբար Անգլիա և Ամերիկա — էական չէ Թուրքիոյ դիրքը — մեր մատնանշած շրջանին հակուած էին երկու գլխաւոր հարցերում որոշ *ընդառաջումներ անելու Խ. Միութեան։*

Ինչպէս ասացինք, Խ. Միութիւնը իր երկրորդ ծանուցագրով Թուրք կառավարութեան դիտել էր տալիս մասնաւորաբար երկու պարագայ.

Առաջին.— *Որ Թուրքիա փորձ իսկ արած չէ տեղեկանալու, թէ համատեղ ի՛նչ միջոցներով Խ. Միութիւնը ծրագրած է կազմակերպել Նեղուցների պաշտպանութիւնը, առանց որ երբեք վնասած լինի Թուրք վեհապետութեանը այդ ջրերում։*

Երկրորդ.— *Որ, նախ քան միջազգային խորհրդաժողովի գումարումը, նախընտրելի պիտի լինէր անմիջական բանակցութիւններով կարելի բոլոր տարաձայնութիւնները հարթել եւ որոշ նոյնութիւն ստեղծել տեսակէտների միջև։*

Մամուլի մէջ լոյս տեսած մի կարգ հրատարակութիւններ հիմ առնելով՝ տրամադիր ենք կարծելու, որ Խ. Միութեան այս երկու թելադրութեանց, ըստ երեւոյթին, վճռաբար դէմ չէին ո՛չ Ամերիկան եւ ոչ էլ Անգլիան։

«Ալ Ահրամ»ը 1946 Հոկտ. 9 *թուականով հեռագրում էր Գոլսից.*

«Համաձայն Անգլիոյ եւ Ամերիկայի թելադրութեանց, Թուրքիա ուղղակի խօսակցութեանց պիտի

ձեռնարկի Մոսկուայի հետ, կանխաւ համաձայնութիւն փնտռելով Խ. Միութեան հետ՝ Նեղուցների հարցին նուիրուած խորհրդաժողովից առաջ։

«Թուրքիա պիտի մղի Խ. Միութիւնը ճշտելու, թէ ի՛նչ է նշանակում իր ծանուցագրի 5րդ կէտը — «Նեղուցների հասարակաց պաշտպանութիւն»։

«Թուրքիա դէմ է խարիսխների ամէն զիջումի Ռուսիոյ, բայց թերեւս կարողանար ճնշել երկկողմանի մի համաձայնութիւն, Նեղուցների հասարակաց պաշտպանութեան ի խնդիր, մի կարգ որոշեալ կէտերի շուրջ»։ *)

Ի լրումն այս հաղորդագրութեան, փարիզեան լուսատեղեակ ռուս շաբաթաթերթի մէջ գրեթէ նոյն թուականով կարդում ենք.

«Լոնդոնեան թերթերի վերջին տեղեկութեանց համաձայն, Էնկիւրիի մէջ ներկայիս բանակցութիւններ են տարւում ի խնդիր Նեղուցների օրինավիճակի վերանայման. այդ բանակցութեանց մասնակցում են Թուրքիոյ արտ. գործոց նախարարութեան գլխաւոր քարտուղարը եւ Էնկիւրիի մէջ անգլիական, ամերիկեան եւ խորհրդային դեսպանները։

«Խորհրդային ներկայացուցիչը պնդում է այն բանի վրայ, որ 1921ին Թուրքիոյ իսկ կողմից ընդունուած սկզբունքը, որով Նեղուցների հսկողութեան պիտի մասնակցէին միայն Սեւծովեան պետութիւնները, ընդունուի նաեւ այժմ։

«Թրքական նախարարութեան ներկայացուցիչը պահանջում է, սակայն, որ այս իրաւունքը ճանաչուի նաեւ Մեծն Բրիտանիոյ համար»։ **)

---

*) "Ցուս", 10 Հոկտ. 1946:

**) «Ռուսկիա Նովոստի», 11 Հոկտ. 1946, թիւ 74:

Միայն Մեծն Բրիտանիոյ. Թերթը այս մասին ոչինչ չէր ասում։

Մի աւելի ուշագրաւ հեռագիր «ԱՖՊ»ի գործակալութիւնը 1946 Հոկտ. 19 թուականով տալիս էր Փարիզից.

«Ֆորէյն Օֆիսի անպաշտօն պատգամախօսները թէեւ շարունակում են հասկացնել, թէ բրիտ. կառավարութիւնը ոչ մէկ առաւելութիւն է տեսնում Նեղուցների ներկայ գոյավիճակը փոխելու մէջ, բայց պատճառներ կան կարծելու, թէ խնդիրը ռակարիութեան շուրջ է դառնում։*)

«Արդարեւ, Մեծն Բրիտանիա հակառակ է օտար ամէն խարսխի հաստատման Դարդանելի շրջանում, սակայն Լոնդոնի շրջանակները կարծում են, թէ վերջին պատերազմի դասերը եկան ցոյց տալու, որ Նեղուցների պայմանագիրը իր ներկայ վիճակի մէջ, որեւէ պատերազմի պարագային, սպառնում է քըրֆական չէզոքութիւնը վտանգել աւելի, քան պաշտպանել այն»։

Իր գոց մտքի չակերտները աւելի բանալով՝ գործակալութիւնը շարունակում էր.

«Լոնդոնի Թրքական դեսպան Աչըգալընի այն յայտարարութիւնը, թէ Թուրքիա առանձինն կարող է պաշտպանել Նեղուցները, շահագրգռութեամբ ուսումնասիրւում է Լոնդոնում. սակայն բրիտ. մայրաքաղաքի մէջ աւելի հակուած են կարծելու, թէ թուրքերի իսկ շահի համար նախընտրելի է՝ իրենց

*) Այս կապակցութեամբ Լոնդոնի ձախակողմեան շաբաթաթերթերից «Նիւ Սթէյթսմէն էնդ ոնը Նէյշընս» իր 1946 օգոստոսեան թուից մէկում գրում էր.— «Դարդանելի խնդիրը պէտք չէ առանձին նկատի առնել, այլ պէտք է փորձել խորհուրդների հետ քննիչանուր կարգադրութիւնն գալ ամբողջ Արեւելքի նկատմամբ»։

միջոցների համապատասխան պատասխանատուութիւն սահմանել։

«Միջազգային այն կարգադրութիւնները, որոնք — ինչպէս, օրինակ, Մոնտրէոյի Պայմանագիրը իր այժմու վիճակի մէջ — պիտի հարկադրեին Թուրքիան, պատերազմի պարագային, պատասխանատու լինել մի Դրան, որ ինք դժուարութեամբ պիտի կարողանար գոցել մեծ տերութեան բին, այս պարագան պիտի վտանգէր Թուրքիան, ինչպէս նախորդ պատերազմին եղաւ՝ նրան ենթարկելով երկու պատերազմիկների յաջորդական վրիժառութեանց։

«Եթէ միջազգային վիճաբանութիւններ բացուեն Նեղուցների շուրջ, հաւանական է, որ Լոնդոնը, մերժելով հանդերձ այն, ինչ որ պիտի վտանգէր Թրքական վերապահութիւնը Դարդանելի ափերին, պաշտպան հանդիսանար լայն ազատութեան ինչպէս պատերազմի, այնպէս նաեւ խաղաղութեան ժամանակ, Նեղուցներից երթեւեկի հարցում»։*)

Այս խորհրդաւոր հաղորդագրութիւնները մի ինչ որ աղբիւր — աւելի՛ լուրջ եւ աւելի՛ պաշտօնական — ունէին անշուշտ։

Օրինակ, 1946 Նոյ. 15 թուականով «Ռոյտըր»ը հեռագրում էր Էնկիւրիից.

«Կայ այն կարծիքը, թէ Մեծն Բրիտանիոյ դեսպանը Էնկիւրիում՝ սըր Կելլի՝ երէկ երեկոյ Թուրքարտաքին գործոց նախարար պ. Հասան Սակային յայտնած է բովանդակութիւնը այն նոր յուշագրի (ընդգծումը՝ մեզանից.—Ն.), որ Ս. Միութեան կողմից ուղարկուած է բրիտ. կառավարութեան, Նեղուցների հարցի եւ Մոնտրէոյի դաշնագրի վերաբերմամբ»։

*) «Ցուս.», 21 Հոկտ. 1946։

Գործակալությունը միաժամանակ յայտնում էր, որ «ցարդ խորհրդային կառավարությունը այդ յուշագրի պատճէնը հաղորդած չէ Էնկիւրիի կառավարութեան»։

«Ռոյտերը»ի հեռագրից դժուար չէր կռահել, որ Մոսկուան իր նոր ծանուցագրով կրկին պնդում էր անհրաժեշտությունը վրայ՝ «Նեղուցների հարցը Թուրքիայ հետ կարգադրելու ուղղակի՝ համաձայնությամբ»։ *)

«Ռոյտերը»ը մենակ չէր իր այս հաղորդագրությամբ։

Գործակալությունը — «ԱՖՊ» — յայտնելով, որ խորհրդային կառավարության կողմից նոր յուշագիր է սպասում Էնկիւրի, աւելացնում էր.

«Թուրք պաշտօնական շրջանակները թէեւ ասում են, թէ անօգուտ է որեւէ նոր դիմում, սակայն միաժամանակ նաեւ այն կարծիքն են յայտնում, թէ Նիւ Յորքում Երեք Մեծերի միջեւ տեղի ունեցող խօսակցութիւններից կարելի պիտի լինի նշեալ Ռուսիոյ նպատակները Նեղուցների հարցում»։ **)

«Ցամենայն դէպս, ասում են այդ շրջանակները, Երեք Մեծերը կարող են որոշումներ առնել, որոնք ընդունելի լինեն Թուրքիոյ համար, բայց այս պարագան որեւէ ձեւով յանձնառություն տակ չի դնում Թուրքիան, մինչեւ որ որոշում չառնուի մի ժողովի կողմից, ուր մասնակցած է նաեւ ինքը Թուրքիան»։ ***)

Այս հեռագրից մէկ օր վերջ, 1946 Նոյ. 20 Թուականով, «Էլ Միսրի»ի լոնդոնեան թղթակիցը

*) "Ցուս.„, 16 Նոյ. 1946:
**) «Ցուս.», 19 Նոյ. 1946:
***) "Ցուս.„, 20 Նոյ. 1946:

տալիս էր ամփոփումը «Դէյլի Տելեգրաֆ»ի դիւանագիտական թղթակցի մէկ կարեւոր յօդուածին, ուր նրա հեղինակը յայտնում էր, թէ «Ռուսաստանը շարունակում է պնդել, որ իր եւ Թուրքիոյ միջեւ տեղի ունեցող պատօնական խօսակցությունները լինեն ուղղակիորեն, առանց որ որեւէ ուրիշ օտար պետություն միջամտի նրանց»։

Ըստ թղթակցի՝ Ռուսիա այն համոզումին է, որ «երկուստեք խօսակցությանց մէջ յաջողության առիթներ աւելի մեծ պէտք է լինեն, քան որեւէ միջազգային համաժողովում»։

Խորհրդային հիմնական պահանջները մնում էին նոյնը, հետեւեալ յաւելումով.

«Ռուսիա պահանջում է,— ըստ թղթակցի,— թուրք եւ ռուս փորձագէտներից կազմել մի մասնաւոր յանձնախումբ՝ «ճամակարգելու համար Դարդանելի եւ Վոսփորի պատպանությունը», եւ կարգադրելու հնարամտ այն միւս ռազմական խնդիրները, որոնք պիտի ծագեն իբրեւ հետեւանք այս պատպանության»։ *)

Այս հեռագրից երեք օր վերջ, «ԱՖ» գործակալությանն մի նոր հեռագիր, դարձեալ Լոնդոնից, գալիս էր վկայելու, որ, ըստ Անգլիոյ արտ. գործոց նախարարության մէկ պատգամախօսին, «խորհրդային կառավարությունը կրկնում է իր պահանջը թուրք կառավարության՝ «ուղղակի վինաբանության մասին Մոնտրեոյի Պայմանագրի շուրջ»։

Ըստ նոյն հեռագրին՝ «Մեծն Բրիտանիան ընդդիմանում է այս պահանջին, վախ ունենալով, թէ երկկողմանի վինաբանությունները կարող են յանկարծ «բանակցությանց փոխուել»։ **)

*) «Ցուս.», 20 Նոյ. 1946:
**) «Ցուս.», 23 Նոյ. 1946:

Այլ խօսքով՝ եթէ Լոնդոնը երաշխիք ունենայ, որ ռուսական թուրք անջատ խօսակցութիւնները դաշինքով պիտի չվերջանան, առանց Անգլիոյ և Ամերիկայի գիտութեան և համամտութեան, ապա բնական դէմ չէ այդ խօսակցութիւններին։

Խորքին մէջ նոյնն էր վկայում 1946 Դեկտ. 2ին մամուլին արած իր յայտարարութեամբ նաև Թուրք վարչապետը՝ Ռեջեբ Պեքեր.

«Մեր երկրիդ ծանուցագրից յետոյ,— յայտարարում էր այս վերջինը,— խորհուրդները հասկացրին — ոչ թէ մեզ, այլ Մեծն Բրիտանիոյ՝ մեկը շահագրգռող երկրներից — թէ Նեղուցների հարցում նրանք ուզում են բուրեների հետ գլուխ-գլխի խօսակցութիւն ունենալ, նախ քան խորհրդաժողովի գնալը»։ *)

Այս խորհրդաւոր բառերի — խօսակցութիւն, բանակցութիւն — իմաստին թերեւս կարելի լինի թափանցել մէկ այլ հեռագրից, որ ժամանակին, շուրջ երկու տարի առաջ, Պոտսդամի Խորհրդաժողովից անմիջապէս յետոյ, քաշած էր «Ակրամ»ը Լոնդոնից.

«Խորհրդային առաջարկն այն մասին,— ասուած էր այդ հեռագրի մէջ,— որ Մոնտրէոյի Պայմանագրի որոշ կէտերը սրբագրման ենթարկուեն, իր մէջ «յեղափոխական» ոչինչ ունէր։ Այսպէս էր (այսինքն՝ «յեղափոխական».—Ն.) աւելի խորհրդային երկրորդ առաջարկը, ուր խօսւում էր Թուրքևխորհրդային երկողմանի դաշնագրի մասին։ Անգլիացիների և ամերիկացիների կարծիքով՝ դաշնագիրը պէտք չէ բանակցութեանց առարկայ լինի միայն Թուրքիոյ և Խ. Միութեան միջև»։ **)

*) «Ցուս.», 2 Դեկտ. 1946։

**) «Ցուս.», 9 Օգոստ. 1945։

Ընդգծումները մենք կատարեցինք։

Խօսքը, ուրեմն, տեսակէտների պարզ փոխանակումի մասին չէր։

Պոտսդամում, ըստ երեւոյթին, Խ. Միութիւնը փորձած էր վերջ տալ Նեղուցների միջազգային հանգամանքին, իսպառ հրաժարուել Մոնտրէոյից եւ այս վերջինը փոխարինել բացառաբար Թուրքեւխորհրդային երկկողմանի դաշինքով։

Մի քաղուածք եւս, եւ փակենք այս հարցը։

Հանրածանոթ Հ. Ջանիդը (Նալչը) «Թանին»ի էջերից ազդարարում էր.

«Իրականին մէջ մեզ ոչինչ չի ապահովում այն հաւատիքը, թէ Անգլիա և Ամերիկա վճռաբար պիտի ընդդիմանան Խորհուրդների ամէն ծաւալումին Նեղուցների մէջ։ Անդարմանելին միշտ կարող է պատահել։ Թուրքիա՛ն է, որ յարձակում պիտի կրի։ Ռուսական ծանուցագիրը չի ծածկում, որ եթէ «ուրիշ պետութեան հետ նախազգուշական միջոցներ ձեռք առնենք», մեր այս քայլը իրեն դէմ ուղղուած սպառնալիք պիտի նկատի։ Սա բացէիբաց ցոյց է տալիս, թէ ի՛նչ պիտի լինի վաղուան պատրուակը, և թէ ինչե՞ր է պատրաստում Մոսկուան։ Այս ընթացքով անհաւանական չէ, որ երբորդ ծանուցագրից յետոյ խօսքը զէնքին անցնի։ Այդ պարագային Անգլիա և Ամերիկա պէտք է յստակօրէն պարզեն իրենց դիրքը։ Վասնզի ռուսները հաւանական են նկատում, որ Անգլիա և Ամերիկա մեզ կարող են առանձին ձգել։ Մենք չենք բաժանում այս կարծիքը։ Ընդհակառակն. Անգլիա Էնկիւրիի դաշնագրով յանձնառու եղած է օգնութեան գալ Թուրքիոյ, եթէ այս վերջինը յարձակման ենթարկուի եւրոպական որեւէ պետութեան կողմից։ Միայն անհրաժեշտ է, որ Լոնդոնն ու Ուաշինգտոնը

անյապաղ Մոսկուային այն համոզումը ներշնչեն, թէ Թուրքիոյ դէմ ամէն յարձակում նրանք պատերազմի յայտարար նշան պիտի նկատեն»։*)

Նոյն օրերին տեղի էր ունենում նաև հետևեալ ուշագրաւ դէպքը։

Շուրջ վեց ամիսներից ի վեր Թափուր էր Թըրքական դեսպանի աթոռը Մոսկուայում. Սարտերը մեկնած էր, եւ իր տեղը նորը եկած չէր։ Միայն 1946ի Նոյ. 25ին Թուրքիոյ նոր դեսպանը՝ Ֆաիք Զիննի Աբդուլ՝ Էնկիւրիից գնացք էր առնում դէպի Մոսկուա։

«Այս համբորդութեան մէջ բացառիկ երեւոյթ էր ա՛յն,— հեռագրում էր Էնկիւրիից «ԱՖՊ»ի թղթակիցը,— որ Թրքական Սպայակոյտի և Արտաքին գործոց նախարարութեան ամենաբարձր անձնաւորութիւնները դեսպանին ողջերթ մաղթելու համար եկած էին կայարան։ Նշանակալից է այն կարեւորութիւնը, որ ընծայւում է Թրքական նոր ներկայացուցչի առաքելութեան»։**)

Դեսպանը Մոսկուա հասնելով՝ 1946 Դեկտ. 9ին տիրալիր հանդիպում էր ունենում արտաքին փոխնախարար Վ. Դեկանոզովի հետ։

Որտեղի՞ց էին գալիս այս բոլոր հեռագրական գործակալութեանց, թերթերի և թղթակիցների գրեթէ նոյնիմաստ հաղորդագրութիւններն ու յօդուածները։

Մի՞թէ այս անգամ բացառութիւն լինելով, թէև «ծուխ» կար, բայց «կրակ» չկար։

Ձենք կարծում։

Մնում ենք այն համոզումին, որ այս բոլոր ահակոչերն ու խորհրդաւոր հաղորդագրութիւնները

*) «Ցուս.», 26 Նոյ. 1946:

**) «Ցուս.», 27 Նոյ. 1946:

չէին լինի, եթէ երբեք լռութեան մէջ համապատասխան ուժերի կողմից մի լուրջ աշխատանք տարուած չլինէր՝ համաձայնութեան որոշ եզր գտնելու համար։

Բոլոր երեւոյթներից դատելով՝ այս լուրջ աշխատանքը տարուած էր, եւ տարուած էր ոչ առանց արդիւնքի։

Այս յեղաշրջիչ գործը, ինչպէս ասացինք, կատարուած էր Նիւ Եորքում, ուր Միացեալ Ազգերի Ընդհանուր ժողովին զուգահեռ գործում էր «Չորս»երի արտ. գործոց նախարարների խորհրդաժողովը։

Սովորաբար լաւատեղեակ «Ժուռնալ դը Ժընեւ»ի Ամերիկայի թղթակիցը այս առթիւ գրում էր իր թերթին.

«Երեք Մեծերը հարիւրից աւելի նիստեր գումարած էին գլուխ գլխի՝ առանց որեւէ լուծման յանգելու, բայց մի քանի ժամուայ մէջ նրանք կարողացան համաձայնուել Տրիեստի, Դանուբի մասին, ինչպէս նաեւ Իտալիոյ, Ռումանիոյ, Հունգարիոյ եւ Ֆինլանդիայի հետ կնքուելիք դաշնագրերի շուրջ»։*)

Ու նաեւ բազմաթիւ ուրիշ հարցերի, աւելացընենք մեր հերթին, որոնց թուարկումն այստեղ աւելորդ ենք համարում։

Այս համոզումին իբր ապացոյց նաև այն արտայայտութիւնները, որ աշխարհի վարիչ դէմքերի և մամուլի վարիչ օրգանների կողմից եղան Միացեալ Ազգերի վերջին (Նիւ Եորքի) Ընդհ. ժողովից յետոյ։

Հիւրընկալութեան համար չնորհակալիքի կարճ պատգամագիր մը ուղղելով Բըրնզին՝ Մոլոտովը վկայում էր.

*) «Ռ. Ռուսիան ի՞նչ պատնառներով փոխած է իր դիրքը միջազգային հաղորդակցութեան մէջ» («Ժամանակ», 30 Դեկ. 1946):

«Ես համոզված եմ, որ Նիւ Եորք կատարուած խոշոր աշխատանքը՝ լինի՛ արտ. գործոց նախարարների Խորհուրդի, լինի՛ Միացեալ Ազգերի Ընդհանուր Ժողովի կողմից՝ նախատեսմանուած է ծառայելու խաղաղութեան ամրացումի գործին և միջազգային գործակցութեան խորացումին. այդ աշխատանքը գոհունակութեամբ պէտք է ընդունուի համայն աշխարհի ժողովուրդների կողմից»։ *)

«Մերձեցում ունեցանք ռուսների հետ,— Ամերիկայից Անգլիա դարձին իր հերթին յայտարարում էր Բեւինը,— եւ փոխադարձ զիջումներ կատարեցինք համաձայնութեան գալու համար։ Ո՛չ ոք իր կարծիքը ուզեց քողարկել դիւանագիտական դարձուածքների տակ»։ **)

Իսկ տակաւին Լոնդոն չհասած, «Քուին Էլիզաբեթ» նաւի վրայ իսկ, անդրադառնալով «Զորաների նախնական և արդիւնալից աշխատանքին, նոյն Բեւինը յայտարարում էր.

«Լաւ Խորհրդաժողով եղաւ. ես այժմ տեսնում եմ խաղաղութեան արեգակի ծագումը»։ ***)

Իսկ Լոնդոն հասնելով՝ աւելացնում էր.

«Հիմա աւելի քան երբեք, արտ. գործոց նախարար դառնալուցս ի վեր, վստահալից եմ տեւական խաղաղութեան հաստատումին համար»։

Նոյնիմաստ յայտարարութիւններ — նաև Բրնզի կողմից։

Նոյնն էին վկայում նաև մամուլի վարիչ օրգանները։

«Միացեալ Ազգերի Ընդհ. Ժողովի վերջին նըստաշրջանը,— գրում էր «Նիւ Եորք Թայմզ»ը,—կազմում է պատմութեան դարձակէտը»։ *)

«Բոլոր մեծ պետութիւնների պատուիրակութեանց ներկայացուցիչների յայտարարութիւնները,— նկատում էր «Պրաւդա»ն,— կատարուած դրական աշխատանքի մասին՝ լինի՛ արտ. գործոց նախարարների խորհուրդի, լինի՛ Միացեալ Ազգերի Ընդհ. Ժողովի կողմից՝ դիւանագիտական խաղաղասիրական սովորական արտայայտութիւններ չեն։ Նրանք արտացոլում են վերանորոգուած հաւատքը դեպի միջազգային գործակցութիւնը, այն հիմնաւոր լաւատեսութիւնը, որ երեւան է գալիս առաջադրուած մեծ աշխատանքի հեռանկարների գնահատման հարցում»։ **)

Մեծերն այս լեզուն խօսում էին պատերազմի օրերին, բայց ոչ գինադադարից այս կողմ։

1945 Սեպտ.ից ի վեր առաջին անգամն էր, որ նրանք այսքան ջերմ հաւատք և յոյս էին դնում իրենց յայտարարութեանց մէջ։

Առանձնաբար կանգ առանք Բեւինի վկայութեանց վրայ, որովհետեւ որոշ շրջանակներում այն կարծիքը կար, թէ համաձայնութիւնը գոյացած է ոչ թէ «Զորաներից երեք դլխաւորների, այլ առաւելաբար Հիւս. Ամերիկայի և Ի. Միութեան միջեւ»։ ***)

*) «Ռ. Նովոստի», 27 Դեկտ. 1946:

**) «Ազդակ», 22 Դեկտ. 1946:

***) «Ցուս.», 16 Դեկտ. 1946։

*) Ռ. Լէսճիեւ — «Միջազգային տեսութիւն» («Պրաւդա», 22 Դեկտ. 1946):

**) Ibid.

***) Ֆրանսայի ազդեցիկ օրգաններից «Լը Մոնդ»ի հետ տեսակցութիւն ունենալով՝ Հայոցների Պալատի "ըմբոստ„ երեսփոխանների պարագլուխներից Կրոսման հետեւեալ ձեւով էր բացատրում այն համաձայնութիւնը, որ գոյացած էր Մեծերի միջեւ, Նիւ Եորք.

«Ես ենթադրում եմ,— յայտարարում էր Կրոսման,— որ եղածը մեծ յեղաշրջում է միջազգային հաղորդակցութեան մէջ: Այս բանի մէջ զուտ չէ դերը այն յաղթանակի, որ Հիւս. Ամերիկայի վերջին բնա-

Անգլիոյ արտ. գործոց վարիչի անվերապահ յայտարարութիւնները ապացոյց են, որ համաձայնութիւնը բոլորի միջև էր։

Այս կապակցութեամբ կրկին պիտի ուզէինք անդրադառնալ միշտ նոյն — վերջին ու երրորդ — յուշաթղթին, որ Խ. Միութիւնը 1946 Նոյ. 10ին ուղղեց անմիջօրէն Անգլիոյ։ *)

1946 Նոյ. 14 թուականով «Լոյսը»ը հաղորդագրում էր.

«Իր նոր յուշաթղթով Մոսկուան որոշ ու վճռական եզրակացութիւններ է հաղորդում, տեղեկատուութեան ձեւի տակ, ըստ որում հաւանական է նկատուում, որ շուտով խօսակցութիւններ սկսուեն Նիւ Եորքի մէջ երեք արտ. գործոց նախարարների՝ Մոլոտովի, Բըրնզի և Բեւինի միջև»։

Այստեղ ուշագրաւն այն է, որ Նոյ. 14ին արդէն խօսք կար Նիւ Եորքում կայանալիք բանակցութեանց մասին նեղուցների շուրջ։

Այս վարկածին անդրադառնալով՝ Էնկիւրին իր հերթին 1946 Նոյ. 18 թուականով հաղորդագրում էր.

«Ենթադրւում է, թէ Խ. Միութեան կողմից 8—10 օր առաջ (ստոյգը՝ Նոյ. 10ին.—Ն.) անգլ. կառավարութեան յանձնուած նոր յուշաթղթի հիմունքով՝ այժմ չփուններ են տեղի ունենում մեծ պետութեանց միջև (Նիւ Եորքում.—Ն.)։ Լոնդոնի թուրք դեսպանը՝ Ջ. Աչըգալը՝ այսօր Էնկիւրի ժամանեց Լոնդոնից և անմիջապէս տեսակցութիւն ունեցաւ արտ. գործոց նախարար Հառան Սակայի հետ։

Առնելով Խ. Միութեան Նոյ. 10ի յուշագիրը, Անգլիա 1946 Նոյ. 21ին հրապարակում էր նրան տուած իր պատասխանը։

Ամփոփելով այս պատասխանի բովանդակութիւնը՝ «Լոյսը»ը Նոյ. 21 թուականով հաղորդագրում էր.

«Պոտսդամի համաձայնութեամբ, ճիշտ է, ընդունուած էր Ռուսիոյ, Միաց. Նահանգների և Անգլիոյ մասնակի տեսակցութեանց սկզբունքը, տեսակէտների փոխանակութեան սահմաններում (Նեղուցների հարցի շուրջ.—Ն.), սակայն այս պարագան երբեք չի ենթադրում լայն իմաստով ուղղակի բանակցութիւնների ազատութիւն՝ շահագրգռուող որեւէ կողմի համար»։

Այս ամփոփումից պարզ էր, որ Մոսկուան իր Նոյ. 10 ծանուցագրով փորձում էր ապահովել իրեն Անգլիոյ համամտութիւնը՝ ուղղակի համաձայնութեան գալու համար Թուրքիոյ հետ։

Անգլիոյ պատասխանը ոչ թէ անդրադարձ մերժում էր, այլ Պոտսդամի համաձայնութեան մեկնութիւն. այս մեկնութեան շուրջն է ահա, որ տարուել են խորհրդաւոր բանակցութիւնները Նիւ Եորքի մէջ։

ռութեանց մէջ շանեցին Հանրապետականները, որովհետեւ այս վերջինները շատ աւելի դիւրին է համաձայնութեան գալ Խ. Միութեան հետ, քան Դեմոկրատներին։ Մինչեւ իսկ անհաւանական չէ, որ ազդեցութեանց գօտիների բաժանում եղած է։ քերեւս Ամերիկա հրաժարած է որեւէ շահերից Արեւելեան Եւրոպայի մէջ, եւ փոխարէնը Խ. Միութիւնը հրաժարած է ծաւալումից (expansion) Մ. Արեւելքի մէջ»։

Իսկ փարիզեան քերթերից «Սամրդի-Սուար» նոյն հարցի մասին միջազգային մամուլի կարծիքներ մէկտեղելով՝ իր գրութեան հետեւեալ քննիանուր խորագիրը տուած էր.— **«Մինչ Խ. Միութիւնը մօտենում է Ամերիկային, մեկուսացած Անգլիան երեսով դառնում է դէպի Եւրոպա»** (Ի. Նովոսթի», 3 Յունուար 1947)։

---

*) 1946 Նոյ. 10 խորհրդային յուշաթղթի մասին մենք ոչինչ չգաւնք խորհրդային մամուլի մէջ. մեր տեղեկութիւնները արեւմտեան մամուլից են։

«Թասվիր», իր 1946 Նոյ. 19ի թուի մէջ անդրադառնալով Խ. Միութեան կողմից Անգլիոյ ուղղուած Նոյ. 10 ծանուցագրին (ուղղակի բանակցութեանց մասին Թուրքիոյ հետ), հետեւեալ խիստ նշանակալից տողերն էր գրում.

«Խ. Միութիւնը եթէ յարգի մեր անկախութեան եւ նոգային ամբողջականութեան իրաւունքները եւ Էնկիւրի ուղարկի իր իրաւասու ներկայացուցիչներին՝ բուրք կառավարութիւնը խաղաղասէր ոգիով կարող է ընդունել նրանց նեռ ճիման մէջ մտնելու խորհրդային առաջարկութիւնը: Այս ձեւով թերեւս խաղաղ լուծման յանգի մի խնդիր, որ միջազգային ամենեն կենսոս հարցերից է։ Թուրքիա միշտ խաղաղութեան հաւատարմագոյն պահակներից մեկը եղած է։ Ահա թէ ինչո՞ւ գրեթէ բացորոշ է, որ Թուրքիա պիտի ընդունի նաեւ Ռուսիոյ հետ գլուխ-գլխի խօսակցելու խորհրդային առաջարկութիւնը»։

Որեւէ թուրք թերթ այսքան զիջողական ոգիով որեւէ տող 1946 Օգոստ. 8ից այս կողմ, երբ Խ. Միութեան առաջին ծանուցագիրը յանձնուեց Թուրքիոյ, տակաւին գրած չէ։

Ներելի չէ ենթադրել, թէ «Թասվիր» այսքան ծանրակշիռ յայտարարութիւններ էր անում բացառաբար ի՛ր անունից, առանց իր կառավարութեան անպայմանօրէն համամտութիւնը ունենալու։

Աւելին. դժուար է հաւատալ, թէ այս քողարկուած նահանջի մէջ չկար թելադրանքը նաեւ մեծ ուժերի, որոնք Նեղուցների հարցում պաշտպան կանգնած են Թուրքիոյ։

Կրկին գալիս ենք այն կէտին, թէ ծանրագին տագնապներից յետոյ համաձայնութեան որոշ հիմեր Մեծերի միջեւ Նիւ Եորքում ճշտուած էին կարծես։

«Բոլորի ընդհանուր համոզումով (խօսքը եւրոպական մամուլի մասին է.—Ն.),— գրում էր Փարիզի ռուսական շաբաթաթերթը, — բանակցութիւնները (Նիւ Եորքում) բարենպաստ ընթացք ստանալ։ Խ. Միութեան հաշտարար կեցուածքի շնորհիւ։ սակայն անգլիական թերթերի մի մասը, անկարող լինելով հերքել այս բացայայտ ճշմարտութիւնը, լուրջ դէմքով, այնուամենայնիւ, հետեւեալ հարցումն է անում.— արդեօք ի՞նչ յետին նպատակներ ունեն Խ. Միութեան ներկայացուցիչները և չլինի՞ թէ գործը ըստ էութեան աւելի վատթարանայ, քան էր նախապէս։

«Այս բոլորի ետին կարծես թագնուած է պաշտօնական Անգլիոյ հիմնական մտահոգութիւնը Բրիտանական կայսրութեան արտաքին դիրքերի մասին, մասնաւորաբար Մերձաւոր Արեւելքի մէջ...»։*)

Պարբերականի ակնարկը անգլիական մամուլի մի մասի դժգոհութեանը նկատմամբ — բանակցութիւնների բարեյաջող ընթացքից — բոլորովին զուր չէր։

Փարիզեան մեծ օրաթերթերից մէկը Խ. Միութեան հաշտարար կեցուածքի մասին իր գրութիւնը Լոնդոնից խորագրած էր այսպէս.

«Անգլիական քաղաքական շրջանակներին մըտահոգութիւն է պատճառում այն տարօրինակ երեւոյթը, որ խորհրդային պատուիրակութիւնը զիջումների է գնում, առանց փոխարէնը որեւէ բան պահանջելու»։

Ձենք կարծում, թէ զիջումները այսքան միակողմանի էին։ Երեք Մեծերի նկատմամբ կարելի է խօսել փոխադա՛ռ զիջումների, բայց երբեք նրանցից որեւէ մէկի միակողմանի նահանջի մասին։

*) «Դիզբեութիւնը Լոնդոնում» (խմբագրական), «Ռուսկիա Նովոստի», Փարիզ, 13 Դեկտ. 1946, թիւ 83:

Եթէ համաձայնութիւն պիտի հաստատուի Մեծերի միջև, ապա այդ համաձայնութիւնը պէտք է հաստատուի նաև Նեղուցների, եւելի ճիշտը՝ Թրքական հարցի շուրջ։

Այսպէս էր Նիւ Եորքի զոյգ ժողովներիդ — Ընդհանուր և «Զորս»երի — յետոյ, մինչև 1947 Մարտ 12։

1947 Յունուար 2ին Տրումընի հրամանագրով կառավարութիւնը զրկուում էր 53 պատերազմական առանձնաշնորհներից։ Յունուար 7ին մարաջախտ Մոնտգոմըրի այցելութիւն էր տալիս Մոսկուա եւ Յունուար 10ին տեսակցում Ստալինի հետ։ Յունուար 8ին Բիրնզը հրաժարուում էր պետական քարտուղարի պաշտօնից՝ իր տեղը զիջելով Ա. Միութեան բարեկամ ճանաչուած զօր. Մարշալին։ Յունուար 15ին Բարուխը հրաժարուում էր Հիւլէական Ցանձնախմբի նախագահութիւնից՝ իր տեղը զիջելով եւելի հաշտարար Ուարրէն Օսթընին։ Յունուար 17ին կնքուում էր անգլեֆրանսական զինակցութիւնը։ Մարտ 3ին Ստալինը հրաժարուում էր Ազգ. Պաշտպանութեան նախարարի պաշտօնից՝ իր աթոռը զիջելով զօր. Բուլգանինին։ *) Փետր. 27ին յատուկ ծանուցագրով Անգլիան յայտնում էր Հիւս. Ամերիկային, որ Մարտ 31ից յետոյ ինք այլեւս վիճակի պիտի չլինի իր օժանդակութիւնը շարունակելու Թուրքիոյ և Յունաստանին։ Հեռագրական գործակալութիւնները ստէպ-ստէպ անդրադառնում էին Նեղուցներին, յայտնելով, որ Թրքական հարցը պիտի քննուի Մոսկուայում։

*) Ազգ. Պաշտպանութեան նախարարի պաշտօնից հրաժարուելով հանդերձ, Ստալինը, այնուամենայնիւ, պահում էր վարչապետի, գերագոյն հրամանատարի եւ Կոմկուսի Կ. Կոմիտէի քարտուղարի պաշտօնները։

Այս նոյն ժամանակաշրջանին «Արեւելեան Բլոկ»ը, որ քաղաքականապէս Թուխս նստած էր արդէն Մերձաւոր և Միջին Արեւելքում, 1947 Յունուար 11ին Էնկիւրիի մէջ աշխարհ բերաւ իր հերթական ձագերից մէկը՝ Թուրքեանդրյորդանանեան ուխտը։

Ամէնքը օրեր հաշուելով՝ ակնդէտ սպասում էին 1947ի Մարտ 10ին, երբ Մոսկուայում պիտի բացուէր «Զորս»երի արտ. գործոց նախարարների խորհրդաժողովը։

Աշխարհի յուսացածը այս ժողովից խաղաղութիւն էր, բայց երբեք պատերազմ։

Սակայն եղաւ անիմանալին։

1947 Մարտ 10ին դեռ նոր բացուած Մոսկուայի խորհրդաժողովը, մասնակցութեամբը Ժ. Բիդոյի, էր. Բեւինի, զօր. Մարշալի և Վ. Մոլոտովի, մէկէն, Մարտ 12ին, հիւլէական ուժի սաստկութեամբ քաղաքական մէկ անաւոր ռումբ պայթեց Ուաշինգտընում՝ ապշանար աշխարհը խռովքի եւ ցնցումի մատնելով։

Այդ օրը հանդիսաւորապէս՝ Կոնգրեսի միացեալ երկու ժողովների առջեւ՝ թէ՛ Ներկայացուցիչների Տան և թէ Ծերակոյտի՝ Նախագահ Տրումանը կարդաց իր պատգամը, ուր շտապ 400 միլիոն դոլար էր խնդրում՝ Յունաստանին և Թուրքիոյ օգնութեան գալու համար։

«Վտանգի մէջ են մեր երկրի արտաքին քաղաքականութիւնը եւ ազգային ապահովութիւնը, — յայտարարում էր Տրումընը, — եւ կացութեան լրջութիւնն է, որ ինձ մղած է ներկայանալու Կոնգրեսի երկու ժողովների հասարակաց նիստին։

Խօսելով Յունաստանի մասին՝ Նախագահը յայտարարում էր։

«Միացեալ Ազգերի նպատակն է պահպանել խաղաղութիւնը, սակայն այս նպատակին կարելի պիտի չլինի հասնել, եթէ Միացեալ Նահանգները պատրաստ չլինեն օգնելու ազատ ժողովրդներին՝ պահպանելու համար իրենց ժողովրդավար հաստատութիւնները այն շարժումների դեմ, որ մենաշնորհական վարչակարգերը ուզում են պարտադրել իրենց։

«Եթէ Ցունգասանը վերանայ իբրեւ անկախ պետութիւն, այս պարագան խորունկ անդրադարձում պիտի ունենայ եւրոպական ազգերի վրայ, որոնց ժողովուրդները պայքարում են մեծ դժուարութեանց դեմ, պահպանելու համար իրենց ազատութիւնն ու անկախութիւնը...»։

Նոյն մտահոգութիւնը Նախագահի կողմից՝ նաև Թուրքիոյ նկատմամբ.

«Թուրքիոյ ապագան անտարակոյս նուազ կարեւոր չէ ազատութիւնը սիրող ազգերի համար, քան Ցունգասանի ապագան։

«Թուրքիոյ ազգային ամբողջականութեան պահպանումը, — *չարունակում էր պատգամը*, — կենսական է Միջին Արեւելքի մէջ կարգի պահպանումին համար»։

Իր պատգամի տարողութեան մասին գաղափար տուած լինելու համար թէ՛ Կոնգրէսին եւ թէ նրա միջոցով համայն աշխարհին՝ Նախագահը յայտարարում էր.

«Ես կատարելագէս գիտակ եմ այն ընդարձակ անդրադարձումներին, որ կարող են ծագել, եթէ Միացեալ Նահանգները օգնեն Ցունգասանին եւ Թուրքիոյ»։

Այս «անդրադարձում»ների բնոյթն ու սահմանները գծելով՝ Նախագահը յայտարարում էր.

«Մենք մտնում ենք դժուարին ճանապարհի մէջ։

Միացեալ Նահանգները 341 միլիառ դոլարով ընպաստած են երկրորդ համաշխարհային պատերազմին՝ շահելու համար յաղթանակը։ Այս յատկացումը եղաւ, որպէսզի խաղաղութիւն եւ ազատութիւն հաստատուեն մեր աշխարհի մէջ։ *)

«Եթէ մենք, ԱՅՍ ԲԱՆՏՈՐՈՇ ՎԱՅՐԿԵԱՆԻՆ (*ընդգծումը՝ մեզանից.—Ն.*), չօգնենք Ցունգասանին եւ Թուրքիոյ, մեր այս վերապահանքի ազդեցութիւնը մեծ տարողութեամբ ի յայտ պիտի գայ թէ՛ Արեւմուտքի եւ թէ Արեւելքի մէջ։

«Ուրեմն, խնդրում եմ Կոնգրէսից արտօնել, որքան որ շուտ կարելի է անել այդ, յատկացումը մատնանշուած գումարների, որոնք պիտի ծառայեն անհրաժեշտ արտադրութեանց եւ հայթայթումների գնումին»։ **)

Աւելի հիմնաւորելու համար յատկացման անհրաժեշտութիւնը, Նախագահը պարզում էր իր տեսակէտները նաև մարգիային «զոյգ ապրելակերպ»երի մասին.

«Աշխարհի պատմութեան այս վայրկեանին՝ գրե-

---

*) Մոսկուայի Խորհրդաժողովի մէջ խօսք առնելով եւ Խ. Միութեան կրած զոհողութեանց պատկերը գծելով՝ Մոլոտովը յայտարարում էր, որ երկրորդ մեծ պատերազմին Խ. Միութիւնը մասնակցած է 485 միլիառ դոլարով, որից 357 միլիառը՝ պատերազմական ծախք, իսկ 128 միլիառը՝ նիւթական կորուստ, որ քշնամին պատճառած է իր աւերածութիւններով («Ռ. Նովոստի», 21 Մարտ 1947)։

**) Ամերիկեան Դեռակոյսի 1947 Մարտ 12ի նիստին հանրապետական ծերակուտականներից Բրուկս բուռն կերպով յարձակուելով ռամկավար ծերակուտական Պեպպրի վրայ՝ յայտարարում էր.

«Եթէ մենք յաջողած լինէինք արգելել փոխ-վարձու օրէնքի ընդունումը Խ. Միութեան՝ պատերազմի տեղութեան, այսօր պէտք պիտի չունենայինք 400 միլիոն շնորհելու Ցունգասանին եւ Թուրքիոյ։ Աւելի իմաստուն բան եղած պիտի լինէր թողնել, որ Գերմանիան կլանի Ռուսիան, քան թէ այս վերջինին օգնել եւ այժմ սնիպուել պայքարել համայնավարութեան սպառնալիքի դեմ ամբողջ աշխարհում»։

թէ բոլոր ազգերը պարտաւոր են ճշտել մէկը կամ միւսը այն սահմանումներից, որոնք պարզում են իրենց ըմբռնումները մարդկային ապրելակերպի մասին։

«Ապրելակերպի այս ձեւերից մէկը հիմնուած է մեծամասնութեան կամքի վրայ եւ ի յայտ է գալիս ազատ հիմնարկներով, ներկայացուցչական կառավարութեամբ եւ անբռնադատ ընտրութիւններով, անհատական ազատութեանց երաշխաւորութեամբ, խօսքի եւ կրօնքի ազատութեամբ եւ քաղաքական ամէն հնարաւոր բացակայութեամբ։

«Միւս ապրելակերպը հիմնուած է փոքրամասնութեան կամքի վրայ եւ բռնութեամբ պարտադրուած է մեծամասնութեան։ Այս ապրելակերպը դիմում է անաբեկման եւ հնարաւորի, հակակշռուած մամուլի եւ ձայնափիւռի, նախասահմանուած ընտրութիւնների վրայ՝ անհատական ազատութեանց ջնջումով»։

Նախագահը աւելացնում էր — ամփոփելով եւ հանրապետական կուսակցութեանց երկարատեւ ծափերի մէջ — թէ, այս երկրորդ կերպից խուսափելու համար, Միացեալ Նահանգները պարտաւոր են օգնել ազատ ժողովրդներին — իսկ ազատների մէջ առաջին հերթին Թուրքիոյ և Յունաստանի — իրենց ըմբռնած ձեւով ազատօրէն իրենց ապագան կերտելու։

Նախագահը նախազգուշացնում էր, որ Ամերիկան ոչ միայն դրամ պիտի տայ, այլ նաև մասնագէտներ պիտի ուղարկի Յունաստան եւ Թուրքիա՝ յատկացուած դրամի օգտագործման վրայ հսկելու, ինչպէս նաև այս երկրները տնտեսապէս եւ ռազմապէս վերակազմակերպելու համար։

Տարօրինակ էր նաեւ մէկ այլ պարագայ։

1947 փետր. 27 ծանուցագրով Անգլիա տեղեկացրած էր Միացեալ Նահանգներին, որ Մարտ 31ից յետոյ ինքն այլեւս ի վիճակի չէ իր օգնութիւնը շարունակելու Թուրքիոյ եւ Յունաստանին...

Նախագահի յայտարարութեամբ՝ Ամերիկան — 171 տարի առաջ բրիտանական մի անշուք գաղութ, իսկ այսօր մեծազօր ու մեծափարթամ մի հասարակապետութիւն — գալիս էր Միջերկրականի՝ Անգլիոյ թափուր տեղը գրաւելու.

«Մեծն Բրիտանիան տեղեկացուած է Միացեալ Նահանգներին, — *վկայում էր նախագահական պատգամը,* — թէ իր ունեցած դժուարութեանց բերումով ինքն այլեւս ի վիճակի չէ օժանդակելու Թուրքիոյ եւ Յունաստանին եւ թէ, հետեւաբար, այդ օժանդակութիւնը միմիայն Միացեալ Նահանգները կարող են հայթայթել»։ *)

Նախագահը իր ճառի մէջ թէեւ որոշակի որեւէ անուն տուած չէր, սակայն յստակ էր ամբողջ աշխարհին, որ ճառը ուղղուած էր Խ. Միութեան դէմ։

«Պիտի ուզէի, որ աշխարհը գիտենայ, — Մեբակոյտի ամբիոնից յայտարարում էր նրա մեծազգեցիկ անդամներից Թոմ Կանելլի, — թէ Նախագահի առաջարկը (օգնութեան գալու Թուրքիոյ եւ Յունաստանին.—Ն.) անմիջօրէն ուղղուած է Ռուսիոյ դէմ»։ **)

Այս պարագան յակոնէ-յանուանէ ճշտեցին նաեւ ուրիշ ճառախօսներ։

Խօսք առնելով Ներկայացուցիչների Տան արտ. գործերի Յանձնախմբի առջեւ՝ արտ. փոխքարտուղարը՝ Դին Էյճսըն՝ յայտարարում էր.

---

*) «Յուս.», 13 Մարտ 1947։

**) «Յուս.», 11 Ապրիլ 1947։

«Եթե անմիջական օժանդակութիւն չլինի՝ պիտի փլի յունական տնտեսութիւնը, եաս ծանր կերպով պիտի խախտուի կառավարութեան իշխանութիւնը, որով այս վերջինը ի վիճակի պիտի չլինի ապահովելու կարգի պահպանումը եւ իր վարչական ապասարկութեանց գործունեութիւնը»։

Ցունաստանից դէպի հարեւան երկրները անցնելով՝ Էյմսը յայտարարում էր.

«Դժուարին հարցեր են ներկայանում Թուրքիոյ արեւելքը եւ հարաւը գտնուող երկրների համար։ Այս ազգերը ուզում են հասատել եւ զարգացնել իրենց ազատ հիմնարկները եւ անհատական ազատութիւնները, սակայն դէպքերը կարող են ստիպել, որ նրանք ընթանան տարբեր համբայով։ Պետք չունեմ շեշտը դնելու Միջին Արեւելքի ազգերին վիճակուած վախճանի վրայ, երբ երբեմ փլչէին Յունաստանը եւ Թուրքիան, եւ եթե ամբողջատիրական վարչակարգերգային հաստատուելու այդ երկրների մէջ»։

Է՛լ աւելի ընդարձակելով իր խօսքի սահմանները՝ Էյմսը նախագուշակում էր.

«Զարմանալի չպիտի չլինեն ասել, թէ Յունաստանի եւ Թուրքիոյ մէջ ծայր տուած դէպքերին շատ մօտից պիտի հսկեն այն ժողովուրդները, որոնք բնակւում են Դարդանելի եւ Չինական ծովի միջեւ»։ *)

Նոյն Էյմսը իր խօսքին աւելի ընդհանրական բնոյթ տալով՝ ազդարարում էր.

«Համայնավարների տիրապետութեամբ որեւէ կառավարութեան գոյութիւն ասիայի որեւէ մասի մէջ՝ վտանգաւոր է Միացեալ Նահանգների ապահովութեան համար»։ **)

*) «Յուս.», 21 Մարտ 1947:
**) «Յուս.», 22 Մարտ 1947:

*Անկախ այս յայտարարութիւններից՝ կառավարութիւնը կոնգրէսի անդամներին բաշխում է «գաղտնի փաստաթուղթ»եր պարունակող մի տեղեկագիր, ուր վկայութիւններ կան այն մասին, թէ Ս. Միութիւնը ձգտում է, ի միջի այլոց, «Պարսից ծոցի վրայ ելք ապահովել իրեն», «ռուսական ուղղութիւն տալ քուրդ քաղաքականութեան եւ Թուրքիոյ մէջ հորհուրդներին նպաստաւոր վարջաձեւ հաստատել», *) ինչպէս նաեւ «որոշ ռազմագիտական գօտիներ ձեռք ձգել Թուրքիոյ հիւսիս-արեւելքում»։ **)*

Նոյն տեղեկագրի մէջ կար Էդուին Վիլսընի՝ Էնկիւրիի մէջ ամերիկեան դեսպանի մէկ վկայութիւնը, ուր նա՝ շատ մռայլ ներկայացնելով Թուրքիոյ կացութիւնը՝ եզրակացնում էր.

«Թուրքիոյ անկումով փաստօրէն համայնավարազդեցութեան ենթակայ պիտի լինեն Իրանը, Իրաքը, Արաբիան եւ միւս ազգերը, եւ այսպիսով ամբողջ Միջին Արեւելքը պիտի անցնի Ռուսիոյ ձեռքը»։ ***)

Այս «գաղտնիք»ները հրապարակելով՝ կառավարական տեղեկագիրը յայտարարում էր.

«... *Թուրքերը վճռաբար միացած են արտաքին ճնշումին դիմադրելու համար։*

«... Միջին Արեւելքի հողային ամբողջականութիւնը եւ անկախութիւնը անհրաժեշտ են համաշխարհային կայունացման համար. քուրդերը հաստատուն հաւատիք են ուզում, թէ որեւէ հարուած իրենց վերապահութեան եւ իրենց ամբողջականութեան դեմ պիտի չհաջողուի»։

*) «Ժամանակ», 24 Մարտ 1947:
**) «Յուս.», 24 Մարտ 1947:
***) «Ժամանակ», 31 Մարտ 1947:

Ակնարկելով խորհրդային պահանջին Կարս-Արդահան շրջանի վրայ՝ կառավարական տեղեկագիրը յայտարարում էր.

«ՉԵՆՔ ԿԱՐՈՂ ԱՐԴԱՐԱՑՆԵԼ ԱՅՍ ՅԱՒԱԿՆՈՒԹԻՒՆԸ Ո՛Չ ՊԱՏՄԱԿԱՆ, Ո՛Չ ՕՐԻՆԱԿԱՆ ԵՒ ՈՉ ԻԼ ՅԵՂԱՅԻՆ ՀԻՄՈՒՆՔՈՎ».

«Ո՛չ մէկ ցեղագրական արդարացում» գտնելով նաև վրացական պահանջների մէջ (Թուրքիոյ նրկատմամբ)՝ նոյն տեղեկագիրը վկայում էր.

«Վրաստանի յաւակնութիւնները բովանդակում են ոչ միայն վրացիների եւ Վրաստանի խնդիրը, այլ նաեւ Հայաստանի եւ Ազրբէյջանի (պարսկական.—Ն.), ինչպէս եւ Ռուսիոյ եւ Իրանի միջեւ ներկայ յարաբերութեանց ամբողջ կնճիռը».*)

Թէ՛ թեր եւ թէ դէմ արձագանգներ ունեցաւ Նախագահի պատգամը։

Կոլորադոյի ռամկավար ծերակուտական Ջոնսընը՝ 1947 Մարտ 18ին հանդէս գալով Ծերակոյտի մէջ՝ յայտարարում էր.

«Ներգուցների մասին Անգլիոյ-Թուրքիոյ-Ռուսիոյ անհամաձայնութեանը խառնուել, այն էլ մեր դրամները տրամադրելով, ուրիշ բան չէ, եթէ ոչ միջազգայնօրէն անձնասպանութիւն գործել։ Թուրքիոյ հանդէպ անսիրելիութեան զգացում տածելուց զատ՝ մենք ուրիշ պարտականութիւն չունենք».**)

«Համաշխարհային հիմունքով ապահովութիւն, — «Տրումընի վարդապետութեան» դէմ յայտարարում էր Միացեալ Նահանգների նախկին փոխ-նախագահ Հէնրի Ուոլաս, — այս նշանակում է միջազգայնացում Դարդանելի, Պանամայի և Սուէզի ջրանցքների։ Եթէ Միացեալ Ազգերի կազմակերպութիւնը տկար է՝ զօրացնենք, եթէ յենարան չունի՝ յենարան լինենք».*)

Նոյն Ուոլաս Ապրիլին Լոնդոն անցնելով՝ անակնկալում էր.

«Ռուսիոյ հետ պատերազմ — սա պիտի լինէր աշխարհի մեծագոյն ողբերգութիւնը։ Եւրոպայի ժողովուրդները նայում են խորհրդային հսկային և ամերիկեան հսկային, որոնք պատրաստւում են մահացու պայքարի։ Այդ ժողովուրդները գիտեն, թէ իրենք պիտի գտնուեն երկու կրակի միջև եւ այդ իրենց մահը պիտի լինի։

«Եթէ հասկացողութիւն չգոյանայ Ռ. Միութեան հետ,— նորից էր աղդարարում Ուոլաս,— անխուսափելի է երրորդ համաշխարհային պատերազմը»։

Անդրադառնալով իր երկրի քաղաքականութեան՝ Առեւտուրի նախկին նախարարը ասելացնում էր.

«Կարող է լինել, որ յառաջիկայ երեք ամիսները տեսնեն հաստատումը ամերիկեան մի այնպիսի քաղաքականութեան, որ մեզ ուղղակի պատերազմի է տանում»։**)

Տարբեր շունչով էին խօսում նրանք, որոնք համամիտ էին Նախագահին.

«Պահանջենք Ռ. Միութիւնից զինաթափ լինել, — յայտարարում էր հանրապետական (Միչիգանի ներկայացուցիչ) Կրաֆորդ, — սպառնալով, հակառակ պարագային, իր դէմ գործածել մեր հիւլէական ռումբերը եւ տնտեսական զօրութիւնը»։***)

Իր համամտութիւնը յայտնելով Կրաֆորդին, հանրապետական Վոլտրը ժիր ասելացնում էր.

*) «Յուս.», 24 Մարտ 1947։
**) «Ժամանակ», 20 Մարտ 1947։

*) «Յուս.», 2 Ապր. 1947։
**) «Յուս.», 10 Ապր. 1947։
***) «Յուս.», 2 Ապր. 1947։

«Մենք գտնուում ենք երկընտրանքի առջեւ, — կամ նուաստացուցիչ անձնատուութիւն եւ կամ պատերազմ։ Մենք անգլո-սաքսոններ ենք։ Մենք չենք հպատակուիլ»։*)

Մի ուրիշը՝ Զեստրը Մերոյ՝ Ծերակոյտի արտ. Յանձնախմբի անդամներից՝ յայտարարում էր.

«Եթէ նախագահ Տրումընի Յունաստանին օգնելու ծրագիրը չորդեգրուէր, Ամերիկան իր յարձակողական և ծաւալողական քաղաքականութեամբ պիտի կարողանար մօտ ժամանակին հակակշռել Միջերկրականն ու ամբողջ Միջին Արեւելքը՝ այսպէս վտանգի մատնելով Միացեալ Նահանգների քարիւղային շահերը այս շրջանում»։

Պատերազմի հաշիւները տեսնելով՝ նոյն ծերակուտականը աւելացնում էր.

«Ամերիկան այսօր ի վիճակի չէ պատերազմելու, բայց ի վիճակի պիտի լինի 15—20 տարուց։ Եթէ Յունաստանը խորհրդային ազդեցութեան տակ ընկնէր՝ շուտով այս ազդեցութիւնը պիտի տարածուէր մինչև Սպանիա և Հնդկաստան։ Մեզ համար նուազ սուղի պիտի նստէր հիմա՛ գործելը, քան թէ ապագայում»։**)

Իսկ Նախագահի արտաքին հարաբերութեան հարցերով զբաղուող Բաղուան՝ Ֆրանսայի արտ. գործոց նախարարութեան ներկայացուցիչը՝ խօսք առնելով մամուլի հաւաքոյթի մէջ՝ դողդողալով յայտարարում էր.

«Անկասկած է, որ այս ճառից պիտի դողդողան Օդանաւորդների Տան ապակիները Մոսկուայում»։***)

*) «Յուս.», 2 Ապր. 1947:
**) «Յուս.», 8 Ապր. 1947:
***) «Պրաւդա», 16 Մարտ 1947:

Ակնարկը՝ եգիպտական ոճով գեղազարդուած այն սրահին, ուր տեղի էին ունենում «Զորա»երի նիստերը։

Շատ աւելի ուշագրաւ էին այն մտածումները, որ փարիզեան «Ֆիգարոյի» խմբագրական սիւնակներից արծարծում էր ծանօթ հրապարակագիրը՝ Վոլտրը Լիպման.

«Ոչ մեկ ազգ եւ ոչ էլ ազգերի որեւէ խմբաւորում չի կարող ցամաքային բաւարար ուժ կուտակել՝ կարմիր բանակի յարձակումին դէմ դնելու համար. առաւել եւս չի կարող այդ բանակը եւ մղել։

«Պէ՛տք է միջամտել, — պնդում էր Լիպման, — Յունաստանի եւ Թուրքիոյ հարցերին։ Այս երջանիներն աւելի լաւ կերպով, քան աշխարհի մէջ ուրիշ որեւէ տեղ, ռազմագիտօրէն դիւրութիւն են ընձայում ամերիկեան զինուորական զօրքին՝ ձախողեցնելու խորհրդային զինուորական զօրութեան ծաւալողականութիւնը։ Ամերիկեան ոյժը կայանում է անպարտ պահեստների մէջ իր հեռաւոր ազգերի, որ կարող է միջամտել Եւրոպայից Ասիա տարածուող խորհրդային ընդարձակ սահմանների երկայնքին, մինչ Մ. Նահանգների զօրութիւնը ծովային է եւ օդային։ Այս կարգի ծովային եւ օդային մի ոյժ այն ժամանակ միայն կարող է ձախողանքի մատնել կարմիր բանակը, երբ գործի Ամերիկեան կենսակենտրոնին ազդող հեռաւորութիւնից (այսինքն՝ մօտիկից.—Ն.)։ Ռազմագիտական միակ մուտքն ճամբան — ամբողջ պատմութիւնը ապացուցած է՝ այս եւ ռուսները գիտակ են այս բանին — Սեւ ծովից երկարում է դեպի Ուկրայնա եւ Կովկաս։ Իսկ Սեւ ծովի մուտքը գտնում է Արեւելեան Միջերկրականում, Եգեանից սկսելով եւ անցնելով Դարդանելից, գտնում է Յունաստանի եւ Թուրքիոյ միջեւ»։

Եզրակացնելով՝ Լիպմանը հաստատում էր.

Պետք է հաւատարակցութիւնը հաստատել այնտե՛ղ, ուր Ռ. Միութեան յարձակման կարելիութիւններ հակակշռում են հակայարձակման մեր կարելիութիւններով: Միայն այն ժամանակ զոր. Մարշալը պիտի կարողանար վիճել գլխաւոր հարցերի շուրջ Ստալինի հետ, փոխանակ երկրորդական հարցերի մասին բանակցելու Մոլոտովի հետ»։ *)

Լաւագոյն ձեւով Լիպմանը պարզում էր իմաստը այն աջակցութեան, որ Ամերիկան ուզում է ընծայել թէ՛ Յունաստանին (որ մեծ պատերազմին եղած է Ամերիկայի հետ) եւ թէ Թուրքիոյ (որ նոյն պատերազմին դաւած է Ամերիկայի դէմ)։

Տարբեր չէին նաև մամուլի օրգանների արտայայտութիւնները։

Պաշտօնական յայտարարութեանց, ինչպէս նաև կառավարական փոխատուութեան իմաստը մեկնաբանելով՝ մեծազդեցիկ «Նիւ Եորք Թայմզ»ը գրում էր.

*«Փոխատուութեան նպատակն է հնարաւորութիւն տալ Թուրքիոյ եւ Յունաստանին, որպէսզի նրանք ի վիճակի լինեն դիմադրել Ռ. Միութեան եւ նրա արբանեակների կողմից ի գործ դրուած այն ճնշումին, որով այս վերջինները ձգտում են ռուսահամայնավար հոսանքի մէջ առնել Թուրքիան եւ Յունաստանը։ Աշխարհն այս ձեւով կ՚իմանայ, թէ Միացեալ Նահանգները որոշած են առաջնորդ հանդիսանալ այն ազգերին, որոնք վճռած են սանձահարել ռուսական ծաւալապաշտութիւնը եւ զօրացնել արեւմտեան ազատութեանց սահմանները»։ **)*

Նոյնն էին արտայայտութիւնները մամուլի նաև

*) «Le Journal d'Egypte», 10 Apr. 1947:

**) «Ազդակ» (խմբ.), 19 Մարտ 1947:

միւս օրգանների, բացառութեամբ, ի հարկէ, խորհրդային և pro-խորհրդային թերթերի։

Մոսկուայի զոյգ պաշտօնաթերթերից «Իզվեստիա» իր խմբագրական սիւնակներից նկատում էր.

*«Տրումընի այն փաստարկը, թէ Միացեալ Նահանգները իբրեւ թէ նպատակ ունեն պաշտպանել Յունաստանը և Թուրքիան ամբողջատիրական պետութեանց ծաւալապաշտութեան դէմ — բնաւ նոր չէ։ Այս փաստարկից օգտւում էր նաև Հիտլերը, երբ փորձում էր իր ծաւալողական քաղաքականութիւնը բացատրել այն բանով, թէ ինք «քաղաքակրթութիւնն է պաշտպանում բոլշեւիկների դէմ»։ *)*

Նախագահի պատգամը իր ջերմ արձագանգը գտաւ մանաւորապէս Էնկիւրիի մէջ.

«Միացեալ Նահանգները հասկացած են,— յայտարարում էր Թուրք քաղաքական դէմքերից մէկը՝ «ԱՖՊ»ի Էնկիւրիի թղթակից Անդրէ Կլոյին,— թէ իրենց սահմանագլուխը Նեղուցների ափերին է եւ Կարսի սարահարթերի վրայ։ Պարզ է, թէ ի՛նչ կարելի է ակնկալել ամերիկեան օժանդակութիւնից, եւ թէ ի՛նչ հեռանկարներ է բաց անում աշխարհի առջեւ Նախագահի ճառը»։ **)*

Իր հերթին կառավարական կիսապաշտօնաթերթը՝ «Ուլուս»՝ այս «սանմանագլուխ»ներին դառնալով՝ ցաստմով լի յօդուածի մէջ վկայում էր Ռ. Միութեան հասցէին.

«Հաւասական պաշտպանութեան անունով մեզանից խարիսխներ էին ուզում Նեղուցների մէջ։ Սպառնալիք կատարելով՝ ուզում էին հողեր կորզել Արեւելեան Նահանգներից, անարդարորէ՛ն եւ առ ոչինչ համարելով գործող դաշինքները»։ ***)

*) «Իզվեստիա», 15 Մարտ 1947:

**) «Ցուս.», 14 Մարտ 1947:

***) «Ճառաջ», 28 Մարտ 1947:

Իսկ Ռեջեբ Պեքիր՝ Թուրքիոյ վարչապետը՝ որ իրեն ապահոված էր արդէն Անգլիոյ եւ Ամերիկայի հոլոր պաշտպանութիւնը՝ 1947 Ապր. 2ին ճառ խօսելով Իզմիրի մէջ եւ իր խօսքը հասցէագրելով Ս. Միութեան՝ յայտարարում էր.

«Շատ հաւանական է, որ այս օրերս, մի օր կանուխ ինչ արձանագրում, մենք մեզ գտնենք պատերազմի մէջ»։*)

*Արդ, ինչո՞ւ պայթեց այս փոթորիկը եւ այն էլ զուգադիպաբար ճիշտ այն օրերին, երբ Մոսկուայի մէջ գումարուած էր պատմական Խորհրդաժողովներից մէկը, որին մասնակցելու համար դաշնակից երկրներից հարիւրաւոր մարդիկ մեկնած էին Մոսկուա՝ իրենց հետ արտասանմանեան մամուլի հարիւրաւոր թղթակիցներ տանելով։**)*

Ի՞նչպէս ըմբռնել այս «առեղծուածը, պահուած ծածկարանում եւ պարուրուած գաղտնիքով», ինչպէս որ սիրում է ասել Ս. Միութեան հասցէին ոճի վարպետներից Չըրչիլը։

Եւ ինչո՞ւ խառնել այս գործի մէջ Յունաստանը, ինչո՞ւ առաջնութիւնը նրա՛ն տալ, եւ ինչո՞ւ առանձնաբար նրա՛ կապակցութեամբ «բախտորոշ» հռչակել վայրկեանը...

«Գաղտնի» փաստաթղթերը օգտագործելով՝ կառավարական տեղեկագիրը՝ ուղղուած Ներկայացուցիչների Տան կից գործող արտ. Յանձնախմբին, վկայում էր.

*) "Ցուս.", 4 Ապր. 1947։

**) Մոսկուա մեկնած անգլիական պատուիրակութիւնը բաղկացած էր 150 հոգուց, իսկ ամերիկեանը՝ 80. բազմամարդ էր նաեւ Ֆրանսական պատուիրակութիւնը։ Ըստ մի տեղեկութեան՝ թղթակիցների թիւը հասնում էր մօտ 600ի։

«Թրքական Նեղուցների գոյավիճակը սահմանող Մոնտրեոյի համաձայնութեան վերաբերութեան համար վարուող բանակցութիւնները գտնւում են մեռեալ կէտի վրայ, որովհետեւ Ս. Միութիւնը յամառում է իր բաղձանքների մէջ՝ մասնաւոր առանձնաշնորհումներ պահանջելով այս ծովային ճամբաների հակակշռի եւ պաշտպանութեան մէջ»։*)

Եւ ճիշտ այս նպատակով, որպէսզի «մեռեալ կէտ»ի գամուած չմնան ամէն կարգի բանակցութիւնները, հրաւիրուեց «Զորս»երի Խորհրդաժողովը. արդ, ինչո՞ւ այդ ժողովի գլխի վրայից անհաշտ յայտարարութիւններ անել, երբ նոյն ժողովում հաշտարար ոգիով ճիգ պէտք է կատարուէր անլոյծ մնացած հարցերը լուծելու...

Մենք այս հարցումների պատասխանը չունենք, սակայն զուր չենք նկատում, իբրեւ անուղղակի պատասխան, յիշատակել այստեղ այն ճառը, որ ասուեցաւ քան մէկ տարի առաջ, 1946 Ապր. 6ին, Զիկագոյի մէջ, «Բանակի Օրն»ան հանդիսութեան, արտասանեց Տրումէն՝ Միացեալ Նահանգների Նախագահը.

«Դիւրին է տեսնել, — *յայտարարում էր Նախագահը,* — թէ ի՛նչպէս Մերձաւոր եւ Մայրագոյն Արեւելքները կարող են բուռն մրցակցութեան պատճառներ դառնալ պետութեանց միջեւ, եւ թէ ի՛նչպէս այս մրցակցութիւնը կարող է յանկարծ վնասի փոխուել։

«Միացեալ Ազգերը իրաւունք ունեն պնդելու վեհապետութեանը եւ ամբողջականութեանը վրայ Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկրների, եւ այն իրողութեան վրայ, թէ նրանք պէտք չէ վտանգի են-

*) «Ցուս.», 24 Մարտ 1947։

թարկուեն, ոչ ճնշումով (դրսից.—Ն.) եւ ոչ էլ բա-
փանցումով (ներսից.—Ն.)»։

Իր երկրին փոխանցելու համար այն միտքը, թէ Մերձաւոր Արեւելքը — Թուրքիա, Իրան և Յունաստան — ո՛րքան մօտ է Ամերիկային և շահերով ո՛րքան նոյնացած նրան, Տրումընը բացատրում էր.

«Չկայ մեկ հատիկ երկիր, որեան էլ հեռու մեզանից, որ չպարտադրուեր մի օր խաղաղութեան սպառնացող դեպքերին։ Ցիշենք առաջին համաշխարհային պատերազմը՝ որ սկսուեց Սերբիոյ մէջ, յիշենք Վերսալի դաշնագիրը՝ որ խզուեց նախ Մանչուրիոյ մէջ, եւ յիշենք համաշխարհային երկրորդ պատերազմը՝ որ պայթեց Լեհաստանի մէջ։ Մեր արտաքին քաղաքականութիւնը պէտք է համաշխարհային լինի»։

Իսկ այս քաղաքականութիւնը համաշխարհային լինելու համար անհրաժեշտ է, որ համաշխարհային չափանիշով էլ, ըստ Նախագահի, զօրաւոր լինի Ամերիկան.

«Գիտենք, — *հեղինակաւորապէս վկայում էր Նախագահը,*— թէ արդիական պատերազմը մեզանից պահանջում է ամբողջական զօրաշարժ բոլո՛ր մարդոց եւ բոլո՛ր ուժերի։ Գիտենք նոյնպէս, որ մեր հեռոսական դաշնակիցները (*գալիք նոր պատերազմին.—Ն.*) թերեւս մեզ երկու տարի կամ աւելի ժամանակ պիտի չտան պատրաստուելու համար (*ինչպէս որ տուին այս պատերազմին.—Ն.*)։ Յառաջիկայ անգամին — եթէ պէտք լինի մի յառաջիկայ անգամ եւս — մենք թերեւս յարձակման առաջին թիրախը դառնանք»։ *)

Արդ, մէկ տարի առաջ ինչո՞ւ Նախագահը արտասանեց այս ճառը, երբ մանաւանդ որոշ էր, որ

*) «Յուս.», 8 Այր. 1946:

ճառը, արտասանուած լինելով ի պաշտպանութիւն Իրանի, Թուրքիոյ և Յունաստանի, ուղղուած չէր ո՛չ Կուբայի եւ ոչ էլ Սան-Դոմինիգոյի դէմ...

Սակայն, շատ աւելի ուշագրաւ էր արտ. քարտուղար Բըրնզի ճառը, որ նա արտասանեց Նախագահի ճառից քիչ աւելի առաջ՝ 1946 *Փետր.* 26*ին՝ Անդրծովեան Մամուլի Ակումբում, Բեւինի* 1946 *Փետր.* 21*ի պատմական ճառից անմիջապէս յետոյ։*

Խօսելով որոշապէս ի պաշտպանութիւն Թուրքիոյ եւ Իրանի եւ իր ճառը հաստիագրելով Խ. Միութեան՝ Բըրնզ յայտարարում էր.

«Եթէ մեծ պետութիւնները վճռականութիւնը չունենան Միացեալ Ազգերի Ուխտը պաշտպանելու, ապա անկարելի կը դառնայ պատերազմի կանխարգելումը։

«Պարտէ կը զգամ նախանձեցնել Ամերիկայի դիրքը։

«Որեւէ յարձակումի առաջն առնելու համար՝ մենք որոշած ենք գործողութեան դիմել»։

Դառնալով մեծ պետութեանց փոխյարաբերութիւններին՝ Բըրնզը վկայում էր.

«Մեծ պետութիւնները ծանր պատասխանատուութիւններ ունեն, որովհետեւ նրանք օժտուած են խաղաղութիւնն ապահովելու զօրութեամբ, եթէ միայն կամենան։ Այս պետութեանց փոխադարձ դիրքը այնպէս է, որ նրանցից որեւէ մէկը չի կարող խանգարել խաղաղութիւնը, եթէ երբեմ միւսները Միացեալ Ազգերի Ուխտը պաշտպանելու հարցի մէջ միացած են։

«Պիտի ուզէի յստակ լինի ամբարիշտ, որ իրաւունքը պաշտպանելու գործի մէջ մենք մեր տեղը պիտի գրաւենք միւս մեծ պետութեանց կողքին»։

Աւելի որոշ դարձնելով իր խօսքը՝ Բըրնզը յայտարարում էր.

«STATUS QUOՆ ԻՐ ՄԻՋ ԹԷԵՒ ՆՈՒԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՆՓՈՓՈԽ ՈՉԻՆՉ ՈՒՆԻ, ՍԱԿԱՅՆ ՄԵՆՔ ՉԵՆՔ ԿԱՐՈՂ ԱՆՏԱՐԲԵՐ ՄՆԱԼ ԴԷՊԻ ԱՅԴ ԳՈՅԱՎԻՃԱԿԻ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ, ՈՒԽՏԱԳԻՐԸ ԱՐԳԵԼՔ Է ԱՄԷՆ ԲՌՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ. ՄԵՆՔ ԱՆԿԱՐՈՂ ԵՆՔ ԱՐՏՕՆԵԼ ՈՐԵՒԷ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ, ՈՐ ԿԱՏԱՐՈՒԱԾ Է ՃՆՇՈՒՄՈՎ (դրսից.—Ն.) ԿԱՄ ՆԵՐՔԻՆ ԹԱՓԱՆՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ (ներսից.—Ն.)»։

Եւ որովհետեւ այս մեկնութիւնը տանում էր դէպի խզում այ՛ն պետութեան հետ, որ բռնահարուածով — դրսից կամ ներսից — պիտի փորձէր փոփոխութիւն մտցնել տիրող գոյավիճակի մէջ, ուստի Բրրնզը ճչտում էր իր երկրի դիրքը նաեւ այս հարցում.

«Նկատի պէտք է առնել նաեւ այն իրողութիւնը, որ Միացեալ Ազգերի Ուխտագրի պաշտպանութեան հարցում, մեծ պետութիւններից մէկի հետ ունեցած որեւէ լուրջ տարակարծութեան պարագային — լինի այդ վեճոյի միջոցով կամ առանց վեճոյի — մենք դարձեալ չենք կարող անտարբեր մնալ»։

Աւելի պարզ, յստակ ու մեկին դարձնելով իր խօսքը՝ Բրրնզը վճռաբար յայտարարում էր.

«ԵԹԷ ՈՒԽՏԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ ԵՒ ՍԿՀՋԲՈՒՆՔՆԵՐԻՆ ՀԱԿԱՌԱԿ ՈՅԺ ԳՈՐԾԱԾՈՒԻ, ԵՒ ԿԱՄ ՍՊԱՌՆԱԼԻՔ ԼԻՆԻ ՈՒԺԻ ՄԻՋՈՑՈՎ՝ ՄԵՆՔ ԱՆԿԱՐՈՂ ԵՆՔ ԴՐՍԻՑ ԴԻՏՈՂԻ ԴԵՐԻ ՄԷՋ ՄԸՆԱԼ»։ *)

Խօսքը բացառաբար Խ. Միութեան մասին էր. աւելի որոշ՝ այն պահանջների, որ Մոսկուան ունէր Իրանի եւ, մասնաւորաբար, Թուրքիոյ նկատմամբ՝

*) "Ալլաս", 2 Մարտ 1946:

նեղուցների և հայկական հողերի ընդարձակման հարցերում։

Հիւս. Ամերիկան Բրրնզի բերանով ի լուր աշխարհի յայտարարում էր, որ այս երկու երկրների պաշտպանութիւնը — զենքի դեմ զենքով — իր վրայ է առնում Ամերիկան։ Անշուշտ ոչ առանձին, այլ զինակցաբար Անգլիոյ հետ, որ անթիւ չահերով միաձուլուած էր Թուրքիոյ և Իրանի կեանքին։

Ցնծատօն էր Էնկիւրիի մէջ։ Ցանձին Ամերիկայի Թուրքիան գտած էր իր դատի հզօրագոյն պաշտպանին։

Զոյգ ճառերից — Բեւինի և Բրրնզի — մի քանի օր վերջ, 1946 Մարտ 7ին, Թուրքիոյ վարչապետ Սարաջօղլուն, լայն տեսութեամբ հրապարակ գալով մամուլի ամսական հաւաքոյթին, յայտարարում էր.

*«Լոնդոնի վիճաբանութիւնների փակումից անմիջապէս յետոյ՝ բրիտանական արտաքին նախարարը ընդարձակ զեկուցում տուաւ Համայնքների Պալատում։ Ձեւը, որով պարզուած են այդ հարցերը, ամրացրին բարեկամական կապերը Մեծն Բրիտանիոյ և Թուրքիոյ միջեւ այնքան ուժգնօրէն, որ աւելացրին մեր հաւատքը մեր իսկ ըմբռնումների մասին եւ մեր ճակատագրի հանդէպ։ Ազգիս և երկրիս անունից չնորհակալութիւն եմ յայտնում պ. Բեւինին։ Այս փոխադարձ արտայայտութիւնները, հակառակ որ տեղի են ունենում հեռուից հեռու, ցոյց են տալիս, որ շատ զօրաւոր է բարեկամութիւնը Թուրքիոյ եւ Մեծն Բրիտանիոյ միջև»։ *)*

*) Թեհրանի խորհրդաժողովը, ինչպէս վկայում էր Հիւս. Ամերիկայի Պետ. Վարչութիւնը. Թուրքիոյ մասին նեղեւեալ որոշումը առած էր.

"Որոշուեց, որ զինուորական տեսակէտից շատ փոխա-

Աւելի վճռական էր Թուրք վարչապետի վկայութիւնը Բըրնգի ճառի մասին.

«Ինչ վերաբերում է Ամերիկայի արտ. քարտուղարի վերջին ճառին, — յայտարարում էր Սարաջօղլուն, — նա պիտի մնայ պատմական և անհաւասարելի, եթէ երբեք գործքերը գան պսակելու բանաձեւուած բաղձանքները։ Այս ճառը, որ խափանում է ամէն յարձակման ճանապարհ եւ «ո՛չ» է ընդդիմանանում ամէն կարգի սպառնալիքների, յայտնում է Ամերիկայի որոշումը՝ ամէն գնով յարգել տալու Միացեալ Ազգերի Պայմանագիրը։ Եթէ աշխարհի բոլոր ազգերը, մեծ թէ փոքր, անկեղծորէն ընթանան այս ճառի ցոյց տուած ճանապարհով, այն ժամանակ նրանք վերջնապէս գտած պիտի լինեն նաև ճանապարհը այն դրախտի, որի մասին խօսում են զանազան կրօնքներ»։ *)

Այս նոյն Սարաջօղլուն, որ Թրքական «դրախտ»ում իրեն այսքան հզօրապէս պաշտպանուած էր զգում թէ՛ Անգլիոյ եւ թէ Ամերիկայի կողմից, իր քիչ վերը յիշատակուած ճառից մէկ ամիս վերջ, «Միսուրի»ի այցելութեան առթիւ Թրքական ջրերը, երբ հարցում եղաւ իրեն, թէ ի՛նչ պիտի լինէր Թուրքիոյ դիրքը խորհրդային պահանջների հանդէպ, խիզախաբար յայտարարում էր.

«Մենք պիտի կուռենք նոյնիսկ այն պարագային, երբ Մեծն Բրիտանիան եւ Ամերիկան գտնուեն մեր վրայ յարձակում գործող պետութեան կողմին»։ *)

Արդ, ինչո՞ւ իրարու ետեւից — 1946 Փետր. 21ին, Փետր. 26ին եւ Ապր. 6ին — արտասանուեցին այս խրոխտ և մարտաշունչ ճառերը՝ Բեւինի, Բըրնգի և Տրումընի կողմից։

Եւ ինչո՞ւ նոյն ճառերը, նոյն ոգիով եւ գրեթէ նոյն բառերով, մէկ տարի վերջ, դարձեալ առաջնորդութեամբը Միացեալ Նահանգների միեւնոյն Նախագահի՝ Տրումընի՝ կրկնւում են նորից։

Եւ ինչո՞ւ երկու դէպքում էլ աշխարհը ցնցումի է մատնւում յատկապէս Մերձ-Արեւելեան երկրների և առանձնաբար Թուրքիոյ կապակցութեամբ։

Ուշագրաւ է նաեւ այն, որ բոլոր յայտարարութեանց մէջ յամառաբար յիշատակւում է Ամերիկան շահագրգռող երկրներին — Յունաստան, Թուրքիա և Իրան — ոչ միայն դրսից, այլ և ներսի՛ց սպառնացող վտանգի մասին։

Ներսի վտանգը, իր ռազմա-քաղաքական հեռեւանքներով, համակշիռ եւ զուգանման է նկատւում դրսի վտանգին։

Որեւէ փոփոխութիւն, օրինակ, Թուրքիոյ վարչաձեւի մէջ, որ յառաջացած է ներսից — կա՛մ պետական անակնկալ հարուածով (coup d'état) եւ կամ համաժողովրդական յեղափոխութեամբ — այս փո-

---

գելի է, որպէսզի Թուրքիա պատերազմի մեջ Դաշնակիցների կողմին, տարուան (1943) վերջաւորութիւնից առաջ» («La Bourse Egyptienne», 25 Մարտ 1947):

Հակառակ այս որոշումին, «ըստ զօրաւոր բարեկամութեամբ» Անգլիոյ կապուած Թուրքիան ոչ միայն պատերազմի չմտաւ Դաշնակիցների կողմին, այլ եւ շարունակեց յայտնապէս աջակցել Գերմանիոյ, ստոյգ գիտենալով, որ նեռազային պիտի մնայ անպատիժ։ Աւելին. օգտուելով պատերազմի վախճանին Դաշնակիցների միջեւ ծայր տուած երկպառակութիւնից՝ «Ուլուսն» իր 1947 Մարտ 12ի թուով, ի միջի այլոց, յայտնում էր, որ Թուրքիա չմասնակցեց պատերազմին, որովհետեւ Դաշնակիցներից ոմանք երկրորդ ճակատը ուզում էին բանալ Արեւմուտքում, մինչ ուրիշներ՝ Բալկաններում («Յուս.», 15 Մարտ 1947):

*) «Յուս.», 9 Մարտ 1946:

*) «Յուս.», 8 Ապր. 1946:

փոխութիւնը Հիս. Ամերիկան կանխապէս անընդունելի է հռչակում՝ նրա մէջ «թափանցում» տեսնելով և, հետեւաբար, այս «թափանցում»ը casus belli նկատելով, ինչպէս որ casus belli պիտի նկատէր որեւէ բռնադատում դրսից։

Այսպիսի պայման — եւ այսքան որոշակի ձեւով — Հիս. Ամերիկան դրած չէ իր մեծ դաշնակցին՝ Խ. Միութեան՝ որեւէ այլ երկրի կապակցութեամբ։

Ինչո՞ւ եթէ Թուրքիոյ կամ Յունաստանի մէջ ներքին յեղափոխութեամբ եւ կամ պետական հարուածով վարչաձեւ փոխուի՝ այդ «թափանցում» պիտի նկատուի, իսկ եթէ նոյն բանը նոյն ձեւով կատարուի, օրինակ, մի Ռումանիոյ, Իտալիոյ եւ կամ Ֆրանսայի մէջ՝ «թափանցում» պիտի չնկատուի և, հետեւաբար, այս ձեւով casus belli պիտի չստեղծուի Ամերիկայի համար։

Մենք այս հարցումների և առեղծուածների պատասխանը, դժբախտաբար, չունենք։ Դիտենք միայն, որ Անգլիա եւ Ամերիկա վճռած են չհանդուրժել, որպէսզի յիշատակուած երկրների ռազմա-քաղաքական կացութեան մէջ փոփոխութիւն կատարուի հետեւեալ երեք ձեւերից որեւէ մէկով,— կա՛մ «թափանցում»ով (ներսից), կա՛մ ճնշումով (դրսից) և կամ համաձայնութեամբ (երկկողմանի դաշինքով՝ Խ. Միութեան եւ տուեալ երկրի միջեւ)։

Այլ խօսքով՝ նրանք որոշակի հասկացնում են, թէ ռազմա-քաղաքական որեւէ փոփոխութիւն, յատկապէս այս երկրների մէջ, կարող է լինել միայն եւ բացառաբար մէկ ճանապարհով, այն է՝ «ԵՐԵՔ»ՆԵՐԻ (որ ասել է՝ բոլորի) փոխադարձ համաձայնութեամբ։

Իսկ այս նպատակին հասնելու համար նրանք

տեւական սակարկումների մէջ են՝ մե՛րթ բանակցելով, մերթ իրարու սպառնալով։

Պոտսդամի մէջ «երեք»ները բաղդատաբար հաշտ էին, ուստի կարելի եղաւ այնտեղ Նեղուցների մասին մեզ ծանօթ որոշումը առնել։

Պոտսդամից անմիջապէս յետոյ, յատկապէս Լոնդոնում գումարուած «Հինգ»երի խորհրդաժողովից՝ 1945 Սեպտ.ից այս կողմ, մինչեւ 1946ի վերջերը, կարճ դադարներով, այնքա՛ն ծանրացաւ մթնոլորտը քաղաքական աշխարհում եւ այնքա՛ն դարձաւ հեղձուցիչ, որ մի պահ թւում էր, թէ պատերազմը անխուսափելի է այլեւս։

Սակայն Նիւ Եորքում, մէկէն եւ անիմանալի պատճառներով, յատկապէս 1946 Նոյ. 4ից այս կողմ, փոխուեց այս մթնոլորտը և խաղաղութեան մի կազդուրիչ հով անցաւ աշխարհի վրայից։

Տարաբախտաբար, երկար չտեւեց այս սակարկուած խաղաղութիւնը։

1947ի սեմին դեռ հազիւ ոտք դրած՝ արդէն նշմարւում էին նշանները քաղաքական դողէրոցքի հերթական նոպաների։ Այն փաստն իսկ, որ «Թայմըզ»ը 1947 Յունուար 10ին նախազդարարող յօդուած էր զետեղում Շպիցբերգէնի շուրջ վարուող բանակցութեանց դէմ — մի հարց, որի մէջ 1944—45ին Դաշնակիցները, թէեւ անպաշտօն ձեւով, սակայն գործած են համամիտ — այս փաստն իսկ դալիս էր վկայելու, որ դարձեալ «մի բան հոտած է Դանիոյ մէջ»։

Նոյն «Թայմզ»ը, քիչ աւելի ուշ, 1947 Մարտ 10ին — այսինքն ճիշտ այն նոյն օրը, երբ Մոսկուայում բացւում էր «Չորս»երի խորհրդաժողովը — անդրադառնալով գերման խնդրին՝ գրում էր.

«Վերջնական եւ միաձայն որոշումներ գերմանական հարցերի մասին ընդհանրապես երբե՛ք պիտի չընդունուեն»։ *)

Այդ իսկ պատճառով Լոնդոնի մեծազգեցիկ օրգանը յայտարարում էր.

«Պոտսդամի համաձայնութիւնը այսպէս թէ այնպէս վերանայման պէտք ունի»։ **)

Նոյն խնդրին դառնալով՝ «Թայմսը»ի դիւանագիտական մեկնաբանը վկայում էր.

«Գերման կնճռի լուծման ամէն փորձ՝ պէտք է սկսուի Պոտսդամի համաձայնութեանց վերանայումով»։ ***)

Արձագանգելով «Թայմզ»ին՝ իր հերթին գրում էր «Նիւ Եորք Հերալդ Տրիբիւն»ը.

«Պոտսդամի որոշումը, որ մեզ գրաւում է իր տրամաբանութեան պարզութեամբ, արդէն մաշած եւ ուժասպառուած է դեպքերից»։ ****)

Նոյն էին, ի հարկէ, նաեւ վարիչների կարծիքները։

---

*) 30 նիսաբրի մէջ, 1947 Յունուար 14ից մինչեւ Փետր. 25ը, մեկնուած էր Գերմանիոյ հեռ Հաշտութեան Դաշնագրի նախագիծը "Զորս„երի արտ. գործոց փոխ-նախարարների խորհուրդի կողմից, գումարուած Լոնդոն։ Նախագծի մշակմանը մասնակցած էին 16 պետութիւններ՝ իրենց գրաւոր եւ բերանացի առաջարկներով (Հնդկաստանը եւ Չինաստանը եւս հրաւիրուած լինելով՝ զանազան պատճառներով մասնակցած չէին)։ Նախագիծը, բաղկացած մօտ 400 մեծածաւալ էջերից, ներկայացուած էր Մոսկուայի Մարս 10ի խորհրդաժողովին (Ժուկով — «Գերմանիոյ դէմ պայմարած պետութեանց մասնակցութեան մասին՝ Հաշտութեան Դաշնագրի մշակմանը մէջ», «Պրաւդա», 17 Մարս 1947)։

) **Նաբլիւդաթել — «Միջազգային հարցերի շուրջ» («Իզվեստիա», 14 Մարս 1947)։

***) Ibid.

****) **Մ. Մարինին** — "Միջազգային տեսութիւն„ («Պրաւդա», 23 Փետր. 1947)։

1947ի Փետր.ին մեծ ճառ խօսելով ամերիկեան Ներակոյտի մէջ, Ֆլորիդայի ռամկավար ծերակուտականը՝ Պեպպըր՝ յարձակուելով Հանրապետական կուսակցութեան վրայ, նրա պարագլուխներից Դալլեսի հասցէին յայտարարում էր.

«Դալլեսը ձգտում է հաշուեյարդարի ենթարկել Պոտսդամի համաձայնութիւնը...»։ *)

Նաեւ քաղաքական ծովը լի է վտանգներով, երբ նա ալեկոծ է ներսից եւ ոչ դրսից, երբ թէեւ խաղաղ է իր մակերեսը, բայց պտուտկած են իր ընդյատակեայ ջրերը, ուստի Յունուարից մինչեւ Մարտ տեւող այս խռովալի ալեկոծութիւնը մէկէն պարզեց իր սպառնական պատկերը ճիշտ Մոսկուայի խորհրդաժողովի օրերին, Միացեալ Նահանգների Նախագահի 1947 Մարտ 12ի աշխարհացնցիչ պատգամով...

Սակայն, այս անձգնաղղորդ ռումբն իսկ ապացոյց չէ տակաւին, թէ խաղաղութեան գործը վըտանգուած է վերջնապէս, եւ պատերազմը անխուսափելի է։

Արձակուած ռումբի ընդհանուր տպաւորութիւնը գէթ մի չափով մեղմելու համար՝ արտաքին

---

*) «Պեպպրի մեծ ճառը Ներակոյտում» («Իզվեստիա», 9 Փետր. 1947)։

Ի դէպ, Պոտսդամի որոշումով գերման ծանր ռազմարդիւնաբերութիւնը հաշուեյարդարի պիտի ենթարկուէր։ Այս որոշման խախտումի մէջ Անգլիան եւ Ամերիկան ամբաստանելով՝ Մոսկուայի մարտումի մէջ Անգլիան եւ Ամերիկան ամբաստանելով՝ Մոսկուայի մարտումի մէջ Անգլիան եւ Ամերիկան խորհրդաժողովում արտասանած իր ճառի մէջ Մոլոտովը վկայում էր, որ առ Մարս 1947 թ. Միութիւնը հաշուեյարդարի ենթարկած է իր ազդեցութեան գօտում գտնուած գերման 733 ռազմագործարանների 675ը (92%), մինչ նոյն ժամանակաշրջանին Անգլիա եւ Ամերիկա իրենց ազդեցութեան գօտիներում գտնուած գերման 1554 ռազմագործարանների հաշուեյարդարի ենթարկած էին միայն 34ը (2%)։ Այս թուերը խորհրդաժողովում չհերքուեցին ո՛չ Բեւինի եւ ոչ էլ գոր. Մարշալի կողմից («Ի. Նովոստի», 21 Մարս 1947)։

փոխ–քարտուղար Ֆին Էյճսըն Մերակոյտի արտաքին գործերի Յանձնախմբի առջեւ յայտարարում էր.

«Մեր առաջարկները երբեք չեն նախատեսում զօրքերի առաքում Յունաստան եւ Թուրքիա։ Մեզանից խնդրուեց այդպէս չանել, եւ մենք էլ որեւէ անհրաժեշտութիւն չենք տեսնում եւ ոչ էլ որեւէ մտադրութիւն ունենք այդպէս անելու»։*)

Պետական վարչութիւնն իսկ, որ կանխապէս իր հրապարակած «փաստաթուղթ»երով լարուած մթնոլորտ էր ստեղծած երկրի մէջ, 1947 Ապր. 4ին 46 էջնոց մի նոր պաշտօնագիր հրապարակելով, որով պատասխանում էր մի խումբ ծերակուտականների 111 հարցումներին (Թուրքիոյ եւ Յունաստանին տրուելիք ամերիկեան օժանդակութեան կապակցութեամբ), յայտարարում էր.

«Խ. Միութիւնը երբեք արդար պիտի չլիներ, եթէ օժանդակութեան ծրագիրը մեկնաբաներ իբրեւ մեր կողմից բացորոշապես ոչ–բարեկամական մի արարք, որ կարող է ծնունդ տալ հակադարձ միջոցների»։

Մասնաւորելով իր խօսքը Նեղուցների շուրջ՝ պաշտօնագիրը յայտարարում էր.

«Յունաստանին եւ Թուրքիոյ ընծայուած օժանդակութեամբ Միացեալ Նահանգները իրենց ընկերակից չեն նկատում Դարդանելի պահպանումին (*Թուրքիոյ հետ.—Ն.*)։ Միացեալ Նահանգները ոչ մեկ մասնաւոր պատասխանատուութիւն չեն ստանձնում Նեղուցների հարցում»։**)

Լաւատեղեակ ընդհանուր կացութեան, Բեւին՝ Մեծն Բրիտանիոյ արտ. գործոց նախարարը՝ 1947 Փետր. 21ին, տակաւին Տրումընի 1947 Մարտ 12ի

*) «Յուս.», 25 Մարտ 1947:

**) «La Bourse Egyptienne», 4 Ապր. 1947:

պատգամը չհրապարակուած, հարկ էր տեսնում Համայնքների Տան ամբիոնից յայտարարելու, թէ իրեն՝ «անընդունելի է որեւէ պատերազմ Մեծն Բրիտանիոյ, Միացեալ Նահանգների եւ Խ. Միութեան միջեւ, եւ թէ նման կարելիութիւն ո՛չ իսկ ներկայացած է կառավարութեան որեւէ անդամի կամ որեւէ կուսակցութեան մտածումի մէջ»։

Երբ նոյն Համայնքների Տան մէջ 1947 Մարտ 6ին երեսփոխան Չիլլիաքուսի կողմից հարցում է լինում վարչապետ Էտլիին այն մասին, թէ Մոսկուայի Խորհրդաժողովի նախատեսութեամբ ինչ է վիճակի՞ է արդեօք հաւատեալու Բեւինի կողմից Փետր. 21ին Խորհրդարանին եղած յայտարարութիւնը, Էտլի անվարան եւ վճռաբար պատասխանում է — «ԱՅՈ՛»։

— «Բայց քանի որ պատերազմի կարելիութիւնը չէք նախատեսում որեւէ Տէրութեան հետ,— շարունակում է իր հարցումը պ. Չիլլիաքուս,— այդ դէպքում ինչո՞ւ, ուրեմն, զինեալ ուժեր էք պահում, որոնք եռապատիկ աւելի գերազանց են նախապատերազմեանից, եւ այսպիսով խափանում էք մեր ճարտարարուեստի բարգաւաճումը»։

*— «Այս հարցումը կարելի է անել որեւէ ազգի,— պատասխանում է Էտլի,— որ զինեալ ուժեր է պահում»։**)*

Իսկ Միացեալ Ազգերի Կազմակերպութեան քարտուղարը՝ Տրիգվի Լի՝ որ լաւատեղեակ էր ընդհանուր կացութեան, 1947 Ապր. 1ին խօսք առնելով Օսլոյի մէջ գումարուած մամուլի հաւաքոյթում՝ յայտարարում էր.

«Պատերազմի հաւանականութիւն չկայ յառաջիկայ տարիների ընթացքին. մեծ ազգերի միջեւ տա-

*) «Յուս.», 7 Մարտ 1947:

ռակարծութիւնները այնպէս չեն, որ պատերազմի վախ ներշնչեն մեզ»։ *)

Ուզում ենք ասել, որ մինչեւ պատերազմը դեռ կարելիք բաւական ճանապարհ կայ։

Ի վերջոյ անյոյս խաւար չէր անգամ Նախագահի 1947 Մարտ 12ի ճառի մէջ. անգամ այստեղ, այս աշխարհացնցիչ պատգամի մէջ, կար մէկ յուսատու խօսք, որ մարդկութեան ցոյց էր տալիս ոչ թէ պատերազմի, այլ խաղաղութեան ճանապարհը։

Կրկին անգամ յորդորելով կոնգրեսը՝ «օգնելու ազատ եւ անկախ ժողովրդներին (առաջին հերթին՝ Յունաստանի և Թուրքիոյ.—Ն.), որպէսզի նրանք պահեն իրենց ազատութիւնը», Նախագահը յայտարարում էր.

«ԱՇԽԱՐՀՈՒՄ ՏԻՐՈՂ ՎԻՃԱԿԸ ԱՆՓՈՓՈԽԵԼԻ ՉԷ, ԵՒ STATUS QUOՆ ԵՒՍ ՆՈՒԻՐԱԿԱՆ ՉԷ։ ՍԱԿԱՅՆ ՉԵՆՔ ԿԱՐՈՂ ԹՈՅԼ ՏԱԼ, ՈՐ, ՄԻԱՑԵԱԼ ԱԶԳԵՐԻ ՈՒԽՏԱԳԻՐԸ ԽԱԽՏԵԼՈՎ, ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՒԵՆ STATUS QUOԻ ՄԷՋ, ԿԱՄ ԲՌՆՈՒԹԵԱՄԲ (դրսից.—Ն.) ԵՒ ԿԱՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՆԱՐԻՄԱՑ ԹԱՓԱՆՑՈՒՄՆԵՐՈՎ (ներսից.—Ն)»։ **)

Ուրեմն, եթէ չկայ status quo*ի խախտման այս երկու փորձերից ո՛չ մէկը եւ ոչ էլ միւսը — ո՛չ բռնութիւնը՝ դրսից և ոչ էլ յեղաշրջող թափանցումը՝ ներսից — այդ դէպքում տիրող գոյավիճակներն ու դաշինքները մի՛չտ* ֆնեելի են և մի՛չտ փոփոխելի։

*) «Յուս.», 2 Ապր. 1947:

**) Այս կարեւոր հատուածը թարգմանելու համար մենք մեր տրամադրութեան տակ ունեինք թէ՛ «Յառաջ»ը (1947 Mars 19) եւ թէ «Ուլուս»ը (1946 Mars 16), որոնք երկուսն էլ Նախագահի ամբողջական ճառի թարգմանութիւնը կատարած են բնագրից: Նախագահի ճառի բնագիրը մենք մեր տրամադրութեան տակ, դժբախտաբար, չունեինք:

Այս է Նախագահի մեծակշիռ յայտարարութեան ամբողջ իմաստը։

Փնտռուելիք հարցերի մէջ — գէթ անցողակի յիշատակենք այստեղ — առաջնագոյն տեղերից մէկը բռնում են «Միացեալ Նահանգների քարիւղային շահերը ամբողջ Միջին Արեւելքում եւ Միջերկրականում», ինչպէս որ նկատում էր իր ճառի մէջ ծերակուտական Զեստրը Մերոյ։

Տրումընի Մարտ 12ի ճառից երկու շաբաթ առաջ, ըստ «Դէյլի Մէյլ»ի, ամերիկեան երկու մեծազօր նաւթային ընկերութիւնները՝ «Ստէնդարդ Օյլ» և «Սոկոնի Վակում»՝ միանալով «Անգլօ-Իրանեան Նաւթ»ին՝ կազմած էին «Մերձ-Արեւելեան Նաւթմուղների Ընկերակցութիւն»ը, կառուցանելու համար 1.500 քիլմ. երկարութեամբ մի նաւթմուղ, որ Իրանն ու Քուվէյտը պիտի միացնէր Միջերկրականին։

Նախապէս, մինչև այս համաձայնութիւնը, «Արաբ-Ամերիկեան Նաւթ»ը (այսինքն՝ միշտ նոյն «Ստէնդարդ Օյլ»ը), ստացած լինելով ամբողջ Արաբիոյ նաւթահորերի օգտագործման մենաշնորհը, որոշած էր Արաբական թերակղզին նաւթմուղով կապել Միջերկրականին. այս ծրագիրը չտապ իրագործելու համար՝ Ընկերութիւնը այժմ 250 միլիոն դոլարի թարմ գրամագլուխ էր դնում գործի մէջ։

Ամերիկացիները ծրագրած են զատ նաւթմուղով իրարու կապել նաև Իրաքն ու Պաղեստինը։)

Այսպիսով, երեք գլխաւոր նաւթմուղները, որոնց միջոցով մերձ-արեւելեան քարիւղը պիտի հոսի դէպի Միջերկրական, գտնուում են ամերիկացիների ձեռքը։

*) «Ռ. Նովոստի», Փարիզ, 4 Ապր. 1947:

Իսկ այս տարբեր բան չի նշանակում, ըստ ամերիկացիների, քան այն, որ Հիւս. Ամերիկայի «խաղաքաղաքական սահմանները» անցնում են Թուրքիոյ եւ Յունաստանի վրայից...

Զյուսանատուենք սակայն. տակաւին մարած չեն խաղաղութեան վերջին յոյսերը։

Do ut des։ Հնարաւորութիւնները անհուն են, որովհետեւ անթիւ են սակարկուելիք հարցերը եւ անսահման՝ իրաւախոհութեան հեռանկարները։

ՀԱՑ ԴԱՏ։— Թրքական խնդրին մաս է կազմում նաեւ մեր Հարցը։ Եթէ Մեծերի փոխադարձ համաձայնութեամբ պիտի լուծուի Նեղուցների կնճիռը, ապա պէտք է լուծուի նաեւ մեր Դատը։ Նա հրապարակ եկաւ այն ժամանակ, երբ Թրքական Ջրուղիների դարաւոր կնճիռը պատշաճապէս տակաւին քննութեան իսկ դրուած չէր։

1945 Մայիս 7ին իր ծանօթ Յուշագիրը ներկայացնելով Սան-Ֆրանչիսկոյում գումարուած Միացեալ Ազգերի Ընդհ. Ժողովին՝ Հայ Դատի Ցանձնախումբը այդ Յուշագիրը փակում էր հետեւեալ տողերով.

«Թէ՛ արդար եւ թէ մարդասիրական լուծում մը պիտի ըլլար պետութեանց կողմէ առաջարկուած եւ նախագահ Ուիլսընի կողմէ իբր բուն Հայաստան սահմանագծուած Հայաստանի այն մասը, որ ցարդ թուրքերուն ձեռքը կը մնայ ամուլ եւ ամայի, կցել այժմու սահմանակից Հայ Հանրապետութեան։

«Այսպէս, խաղաղասէր եւ գործունեայ ժողովուրդ մը, որուն կրած բազմապիսի եւ երկարատեւ անիրաւութիւնները յանախ միջազգային խռովութեանց առաջնորդած են, պիտի կարողանար դառնալ իր հայրենի երկիրը եւ աշխատիլ խաղաղութեան եւ անդորրութեան մէջ»։ *)

*) «Յուշագիր Հայկական Հարցի մասին» (Հրատ. «Յուս.»ի, Գահիրէ, 1945, էջ 11)։

Այս դիմումից աւելի քան մէկ ամիս վերջ, 1945 Յունիս 16ին, Էջմիածնի մէջ գումարուում է Ազգային Եկեղեցական Ժողովը, 118 պատգամաւորների մասնակցութեամբ։

Իր բացումը կատարելով՝ Համաժողովը Խ. Միութեան Ժող. Գործ. Խորհուրդի նախագահ մարաջախտ Ստալինին յղում է ողջոյնի մի հեռագիր, որի վերջաւորութեան ասուած էր.

«Ձեր ճնորհիւ իրականացուած է հայ ժողովուրդի ազատագրութիւնը ու հայկական պետականութեան վերածնումը եւ մենք հաստատ հաւատացած ենք, որ Ձեր օժանդակութեամբ կ'իրականանան նեղման ու հալածանքների հետեւանքով տարագիր դարձած արտասահմանեան հայերի իղձերը եւ նրանք կը վերադառնան իրենց Հայրենիքը՝ Սովետական Հայաստան»։ *)

Նոյն Համաժողովը իր փակման նիստին, 1945 Յունիս 25ին, միաձայնութեամբ քուէարկում է մի նոր հեռագիր — դարձեալ Խ. Միութեան Ժող. Գործավարների Խորհուրդի նախագահին ուղղուած — նրա վերջաւորութեան հետեւեալ բաղձանքը յայտնելով.

«Մենք մեծ յոյս ունենք, որ Սովետական Միութեան պետական եւ քաղաքագիտական իմաստութիւնը կը գտնի նաեւ միջոց ու հանգամանք վերացնելու այն անարդարութիւնը, որին ենթարկուեց մեր ժողովուրդը առաջին համաշխարհային պատերազմի ընթացքին»։ **)

1945 Նոյ. 27ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ Գէորգ Զ.՝ հայ ժողովուրդի անունից դիմում է ուղղում երեք մեծ պետութեանց՝ Անգլիոյ, Ամե-

*) «Էջմիածին», 1945, Յունիս—Յուլիս, էջ 7:

**) Ibid., էջ 8:

րիկայի եւ Ի. Մխուբեան առաջնորդներին՝ Կ. Լատլիի, Հ. Տրումբնի եւ Ի. Սաալինի՝ իր դիմումը փակելով հետեւեալ տողերով.

«Թուրքիան եւ նորա բարեկամները՝ վիժեցնելու համար Հայկական Դատը՝ յայտարարում են, թէ ներկայ Թուրքիան դեմոկրատիկ իրաւակարգ ունի, նա նին Թուրքիան չէ, եւ հայերը, եթէ կամենան, կարող են վերադառնալ իրենց նախկին բնակավայրերը։ Սակայն հայ ժողովուրդը անցեալի անթիւ փորձերից գիտէ, որ գոյութիւն չունի նին եւ նոր Թուրքիա, նա միեւնոյն Թուրքիան է, եւ հայ ժողովուրդը, ինչպէս եւ եւրոպական դեմոկրատիան, լաւ գիտեն թուրքական խոստումների արժէքը։

«Միակ ելքն է Թուրքա-Հայաստանի ազատագրումը եւ կցումը Սովէտական Հայաստանին։

«Ուստի, վերջին խնդրում ենք, որ Թուրքիայի հայկական վիլայէթները միացուեն Սովէտական Հայաստանին, որպէսզի հայութիւնը ամբողջանայ հաւաքուելով հայրենի երկրում եւ ապահովութեան ու խաղաղութեան մէջ շարունակէ իր ընդհատուած քաղաքակրթական աշխատանքը եւ ի յայտ բերէ իր անուրանալի ստեղծագործական պոտենցիալը»։*)

---

*) «Էջմիածին». 1945, Նոյ.—Դեկտ., էջ 9—10:

Ի դէպ, ընդունուած է կրկնել շարունակ, թէ Խ. Միութեան 16 Հանրապետութեանց մէջ Խ. Հայաստանը ամենափոքրն է:

Նա ամենափոքրն է իր տարածութեամբ, բայց ոչ իր բնակչութեամբ:

Խ. Միութեան Գերագոյն Խորհուրդը իր 1947 Փետր. 25ի նիստի մէջ որոշեց փոխել Սանմանադրութեան 13րդ յօդուածը, ուր Հանրապետութեանց թուարկումը կատարուած է կամայականօրէն, եւ սրանից յետոյ այդ յօդուածի մէջ Հանրապետութիւնները դասաւորել ըստ բնակիչների թուի՝ առաւելագոյնից նուազագոյնին իջնելով:

Այս փոփոխութիւնը ընդունուած եւ օրէնքի կարգ անցած լինելով՝ այժմ 16 Հանրապետութեանց մէջ Հայաստանը բռնում է 13րդ

Բազմաթիւ այլ դիմումներ եւս եղան ուրիշ հայ կազմակերպութեանց կողմից — միշտ Մեծ Պետութեանց ուղղուած — ուր միշտ նոյն բաղձանքն էր յայտնուում,— աջակցութեամբն ու համամտութեամբը Մեծերի ամբողջացնել հայ հողը, եւ Միացեալ Հայաստանի մէջ համախմբել եւ ամբողջացնել հայ ժողովուրդը։

Հայ ժողովրդի այս բաղձանքը, մանաւանդ ոգեւորական շրջանին, լայն արձագանգ գտաւ թէ՛ անգլօ-սաքսոն աշխարհում և թէ Խ. Միութեան մէջ։

Սակայն հետագային, որքան աւելի խորացան տարաձայնութիւնները Մեծերի միջև, այնքան աւելի պակասեց հետաքրքրութեան եւ համակրանքի աստիճանը մեր Դատի շուրջ։

Փոքր ժողովրդների կեանքը ընթանում է Մեծերի բարդ շահերի մթին համբաներով։

Մեր Դատը, անկախ մեր կամքից, միշտ կապուեց մեզ հետ առնչութիւն չունեցող այս կամ այն հարցին, որովհետեւ այդպէս էր պահանջում Մեծերից մերթ մէկի, մերթ միւսի շահը։

Դժուար է գուշակ լինել ու նախատեսել, թէ ի՛նչ պիտի լինի մանաւանդ այս անգամ։

Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքին եւ վախճանին ծնունդ առան միջազգային տարողութեամբ եւ կշիռով մի շարք քաղաքական ակտեր, որոնք կրկնապէս ուժ են տալիս բազմիցս անիրաւուած մեր Դատին։

տեղը (Սանմանադրութեան 13րդ յօդուածում): Իրենից յետոյ գալիս են Թուրքմենների, Իսաերի եւ Կարելօ-Ֆինների Հանրապետութիւնները, Վրաստանը բռնում է 6րդ տեղը, իսկ Ազրբէյջանը՝ 7րդ («Կոմսոմոլսկայա Սրեդա» 27 Փետր. 1947):

1941 *Օգոստ. 14ին Ուաշինգտընում հրապարակուեց Ատլանտեան Ուխտը, որի 2րդ յօդուածում կարդում ենք.*

«Պիտի չճանաչեն (*ուխտակիցները՝ Անգլիա եւ Ամերիկա.—Ն.*) հողային ոչ մեկ փոփոխութիւն, որ համապատասխան չէ շահագրգիռ ժողովրդների ազատօրէն արտայայտուած կամքին»։*)

1925 *Դեկտ. 17ին Փարիզում կնքուած Թուրքա-խորհրդային դաշինքը չեղեալ հռչակելով՝ Թուրքիոյ ուղղած իր 1945 Մարտ 19ի ծանուցագրով Խ. Միութիւնը, ի միջի այլոց, յայտարարում էր.*

«... Խ. Միութիւնը անհրաժեշտ է համարում նշել, որ յատկապէս երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցած խոր փոփոխութիւնների հետեւանքով՝ այդ պայմանագիրը այլեւս չի համապատասխանում նոր իրականութեանը եւ կարիք ունի լուրջ բարելաւման»։**)

Պոտսդամի մէջ որոշելով Հինգ Մեծերի արտ. գործոց նախարարների մնայուն խորհուրդ ստեղծել՝ Երեք Մեծերը այդ խորհուրդին սահմանում էին, ի միջի այլոց, հետեւեալ պարտականութիւնները.

«Իբրեւ անմիջական գործ, իրեն յատուկ, խորհուրդը պիտի արտօնուի Միացեալ Ազգերին... առաջարկելու հողային խնդիրների մասին կարգադրութիւններ, որոնք պիտի տեւեն Եւրոպայի մէջ (*իսկ Եւրոպայի մէջ են ինչպէս Խ. Միութիւնը, այնպէս նաեւ նրան մաս կազմող Խ. Հայաստանը.—Ն.*) պատերազմի վախճանի բերումով»։***)

*) "Աշխարհի վերակազմութեան ընդհանուր պայմաններ», («Ցուս.», 15 Օգոստ. 1941):

**) «Սով. Հայաստան», 28 Մարտ 1945:

*) «Պոտսդամի Խորհրդաժողովի Պաշտօնական Զեկոյցը» («Ցուս.» 6 Օգոստ. 1945):

Խորհուրդը նաեւ պարտականութիւն պիտի ունենար, ըստ Երեք Մեծերի որոշման՝

«... Շարունակելու նախապատրաստական աշխատանքները, անհրաժեշտ՝ խաղաղութեան կանոնագրութեանց համար, ինչպէս նաեւ գբաղուելու այն հարցերով, որոնք դէպք առ դէպք կարող են խորհուրդին ենթարկուել՝ յիշեալ խորհուրդին անդամակցող կառավարութեանց փոխադարձ համաձայնութեամբ»։*)

Եւ, վերջապէս, Միացեալ Ազգերի Ուխտագիրը իր 14րդ յօդուածով սահմանում էր հետեւեալը.

«Վերապահութեամբը յօդուած 12rդի տրամադրութեանց՝ Ընդհանուր ժողովը կարող է յանձնարարել միջոցներ, ընդունակ ապահովելու խաղաղ յարդարումը ամէն կացութեան — ինչ որ էլ լինի սրա ծագումը — որ իրեն կը թուի թէ ունի ընդհանուր շահին վնաս հասցնելու եւ կամ ազգերի միջեւ բարեկամական յարաբերութիւնները վտանգելու բնոյթ, հաւանելով նաեւ այն կացութիւնները, որոնք առաջ կը գան խախտումից ներկայ Ուխտագրի տրամադրութիւնների, ուր արտայայտուած են Միացեալ Ազգերի Նպատակները եւ Սկզբունքները»։**)

Արդ, նկատելով, որ մեր հայրենիքի այսօրուան սահմանները «չեն համապատասխանում ժողովրդների ազատօրէն արտայայտուած կամքին».

Նկատելով, որ «լուրջ բարելաւման» *կարիք ունի նաեւ մեր սահմանային խնդիրը Թուրքիոյ հետ.*

Նկատելով, որ «Հինգ»երի Խորհուրդը պարտականութիւն ունի նաեւ մեր «հողային խնդիրը ներ-

*) «Պոտսդամի Խորհրդաժողովի Պաշտօնական Զեկոյցը» («Ցուս.», 4 Օգոստ. 1945):

**) "Charte des Nations Unies», Փարիզ, 1945, էջ 6:

կայացնելու Միացեալ Ազգերի Կազմակերպութեան».

Եւ, վերջապէս, նկատելով, որ Միացեալ Ազգերի Ընդհանուր Ժողովը պարտականութիւն ունի «ամէն կնճռութեան խաղաղ յարդարման» միջոցները որոնելու, որպէսզի կարելի լինի թէ՛ «ընդհանուրի շահը ապահովել եւ թէ ազգերի միջեւ բարեկամական յարաբերութիւնները պահել»,—

Այս բոլոր նկատումներով մեր Դատը, որ անժամանցելի է և բազմիցս նուիրագործուած է միջազգային դաշինքներով, սպասում է իր արդար լուծումին թէ՛ Մեծերից՝ որոնք իրենց ձեռքն առած են աշխարհի բախտը, եւ թէ Միացեալ Ազգերի Կազմակերպութիւնից՝ որ իր մէջ պիտի մարմնաւորի Արդարութեան և Խղճի վսեմ սկզբունքը և ճշմարիտ Խաղաղութեան բարձր նպատակը։

ՆԵՂԱՒՈՑՆԵՐԸ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԴԱՏԸ

Մեծերի «ամուսնութիւնը» ցրեի հեռ.— Յեռադարձ հայեացք.— Փոխադարձ վախեր.— Սուէզ, Պոնամա, Դարդանել.— Հանակիր ձայներ.— Երէկ եւ այսօր.— Պատերազմ եւ խաղաղութիւն.— Երեմ Մեծերը եւ իրենց «կենսագիծ»ները.— Ալաւ ափարհի ոյժը.— Հնգեակացեր եւ Նեղուցներ.— Արեւելք եւ Արեւմուտք.— Նոր «Օսմանեան Կայսրութիւն».— Հիւլէական դարաշրջանի սեմին.— Պատմութեան 1915ի դասը։

VII

Վենետիկ, Դոժերի հռչակաւոր Պալատում, կախուած է իտալական ամուսանի նկարիչներից Տիեպոլոյի մի գեղեցիկ նկարը, որ խորհրդաւորում է Վենետիկի և Նեապոլի ամուսնութիւնը»։

Հին Վենետիկը ամէն տարի տօնակատարում էր Ծովերի ամուսնի՝ Նեապոլի ամուսնութեան հանդէսը Վենետիկի հետ։

Այս հանդէսներից ամենէն շքեղը կատարուեց 1177ին, երբ հաշտուելու համար Վենետիկ էին եկած Պապը (Ալեքսանդր) և Բարբարոսա կայսրը։ Ամէնքը թափօրով գիմում են Լիդոյ կղզին, ուր Պապը գոժ Սեբաստին Զիանին յանձնում է մի մատանի հետեւեալ խօսքերով.

«Ա՛ռ, ո՛վ գոժ, այս մատանին, որպէս մի կապ, որ պիտի պահի ծովը Վենետիկի իշխանութեան ներքոյ. այս մատանիով կը հարսնացնես ծովը, եւ թող յաջորդ սերունդներն իմանան, որ Վենետիկի զէնքը իշխել է ալիքների վրայ, և թող

ծովը հպատակուի այդ իշխանութեան, ինչպէս կինն իր ամուսնուն»։

Պատրիարքը օրհնում է մատանին և այն նետում ծովը՝ ասելով.

«Մո՛վ, մենք քեզ հարսնացնում ենք ի նշան մեր կատարեալ և յարատեւ իշխանութեան։ *)

Նման մի ամուսնութիւն կնքած էր նաև Մեծն Բրիտանիան աշխարհի բոլոր նեղուցների, ծովերի և ովկիանոսների հետ։

Այս ամուսնութիւնը յարատեւեց գրեթէ հարիւր յիսուն տարի, մասնաւորաբար Աբուքիրիցի (1799) և Տրաֆալգարիցի (1805) այս կողմ։

Սակայն նոյնը չէ աշխարհը այսօր, ինչ որ էր երէկ։

Եւ, հետեւաբար, այսօր ոչ միայն չի կարող, այլ եւ պէտք չէ ծովերի վրայ նոյն քաղաքականութիւնը լինի, ինչ որ կար երէկ։

Ուղիղ է և իմաստուն ոչ այն քաղաքականութիւնը, որ փոփոխուող պայմաններում միշտ մնում է նոյնը, այլ ուղիղ է և իմաստուն լոկ այն քաղաքականութիւնը, որ՝ փոփոխուող պայմաններին յարմարուելով՝ փոփոխւում է նաև ինք։

Երէկ Անգլիա՝ իբրև տիրակալը ծովերի՝ իրեն նշանաբան ունէր — Three Power Standard։ այսինքն՝ ունենալ մի ռազմատորմիղ, որ իր հզորութեամբ հաւասար լինէր երեք մեծ պետութեանց ծովային ուժին (այս «երեք»ը հետագային իշաւ «երկուս»ի և ապա «մէկ»ի — հզօրագոյնին ուժեղների մէջ)։

*) Ա. Սիեարոնեան — «Ծովոյվածու եկերի», Ն. Դ., Բասրա, 1946, էջ 52—53:

Եւ, ծովերի վրայ իշխելով, ցամաքի վրայ Անգլիան հետեւում էր «փայլուն մեկուսացումի» — Splendid Isolation — քաղաքականութեան։

Այսօր, սակայն, երբ Հիւս. Ամերիկան համաշխարհային առեւտրատորմիղի 60%ը ունի իր տրամադրութեան տակ (մինչ Անգլիան՝ միայն 15%ը)։*) երբ նոյն Ամերիկան՝ Անգլիոյ բաղդատմամբ՝ ռազմածովային կրկնակ ուժ ունի,**) և երբ Խ. Միութիւնը իր ազդեցութեան գօտի մէջ առած է Արեւելեան Եւրոպան, Անգլիան, միշտ ունկնդիր կացութեան թելադրանքներին, ձիգ է անում դուրս գալու իր «փայլուն մեկուսացում»ից և դառնալու պատկառելի ցամաքային ուժ, հռչակաւոր կղզին՝ Մեծն Բրիտանիա՝ որ դարեր ապրեց մեկուսի՝ սերտօրէն կապելով եւրոպական ցամաքին եւ այս վերջինի հետ միասին կազմելով մի նոր ու վիթխարի կայսրութիւն։

Էականը Անգլիոյ համար ապահովութիւնն է «Բրիտանական Մեծ ճամբայ»ի — The Great British Main։

Ի՛նչ փոյթ, թէ երէկ նա այս ապահովութիւնը ձեռք էր բերում միայն ծովերի վրայ իշխելով, մինչ վաղը նա նոյն ապահովութիւնը ձեռք պիտի բերի՝ Հին Աշխարհին միաձուլուելով և նրա հետ միասին ցամաքային հզօր ուժ դառնալով։

Նոյնքան փոխուած են պարագաները նաեւ Խ. Միութեան նկատմամբ։

*) Ա. Լէոնիդով — «Ի՛նչ ծրագիրներ կան բացուած Ֆերմանիոյ անդամատման եղին» («Նոր Ժամանակներ», Մոսկուա, 14 Մարտ 1947, թիւ 11, էջ 5):

**) Ի. Լեմին — «Ցեսպատեսրազմական ձգտումները Հիւս. Ամերիկայի արտ. քաղաքականութեան մէջ» («Բոլշեւիկ», Մոսկուա, 1946, թիւ 22, էջ 59):

Երբեկ Ռուսիա գալարուելով ելք էր փնտռում դէպի բաց ծովերը, մինչ այսօր, երբ նա դարձած է մեր մոլորակի երկրորդ հզօրագոյն հասարակապետութիւնը, իրաւունքով իրեն համար պատշաճ տեղ է պահանջում նոյն ծովերի վրայ։

Կարծես եկած է պատմական այն պահը, երբ ուրիշներին եւս — որոնց կարգին նաեւ Հ. Միութեան — թոյլ պէտք է տրուի գէթ մի չափով «համուսնանալու» գոնէ որոշ նեղուցների, ծովերի եւ օվկիանոսների հետ։

Մի յետադարձ հայեացք։

Մենք տեսանք, որ առաջին մեծ պատերազմին Անգլիա և Ֆրանսա, պատերազմի ամբողջ տեւողութեան, 1915 Մարտից այս կողմ, հետեւեալ վաւերաթղթերով ՃԱՆԱՉԱԾ ԷԻՆ Ռուսիոյ սեփականատիրական իրաւունքները Պոլսոյ և Նեղուցների վրայ.

1.— Ֆրանսա՝ 1915 Մարտ 8 ծանուցագրով, իսկ Անգլիա՝ 1915 Մարտ 12 ծանուցագրով։ *)

2.— Անգլիա՝ 1915 Մարտ 12 յաւելուածական ծանուցագրով, ուր Նեղուցների փոխարէն Անգլիա պահանջում էր Իրանի «չեզոք զօտի»ն կանխապէս անգլիական նկատել։**)

3.— Ֆրանսա՝ 1915 Մարտ 16 յաւելուածական ծանուցագրով, ուր Նեղուցների փոխարէն Ֆրանսա պահանջում էր Կիլիկիան, Սուրիան եւ Պաղեստինը կանխապէս Ֆրանսական նկատել։***)

4.— 1916 Ապր. 26 «Սայխս-Պիկոյ-Սազոնով» Համաձայնութեամբ (վերջնապէս վաւերացուած 1917ի Օգոստ.ին), ուր Անգլիա եւ Ֆրանսա, իրենց բաժինն առնելով Ասիական Թուրքիոյ մէջ, վերջնապէս նանաչում էին Ռուսիոյ իրաւունքները Պոլսոյ, Նեղուցների եւ յարակից ջրերի, առափնեայ հողերի եւ կղզիների վրայ։*)

5.— 1917 Փետր. 14ի Ֆրանկեւռուս անջատ — եւ գաղտնի — համաձայնութեամբ, ուր Ֆրանսա, այս համաձայնութեամբ յատուկ շահեր ապահովելով իրեն, մի աւելորդ անգամ եւս յանձնառու էր լինում հեռագային պաշտպանել Ռուսիոյ պահանջները Պոլսոյ եւ Նեղուցների վրայ։**)

6.— Եւ, վերջապէս, Անգլիոյ եւ Ֆրանսայի պատասխանները Ռուսիոյ 1917 Մարտ 4 շրջաբերական յուշագրին, ուր դաշնակից երկու երկրները յայտնում էին ժամանակաւոր Կառավարութեան, թէ իրենք որոշած են պահպանել այն բոլոր դաշինքները, որոնք պատերազմի շրջանին կնքուած են Ռուսիոյ հետ։ Խօսքը, ի հարկէ, առաջին հերթին վերաբերում էր այդ դաշինքներից ամենեն հիմնականներին, որոնց ուժով նուիրագործուում էին Ռուսիոյ իրաւունքները Պոլսոյ եւ Նեղուցների վրայ։***)

---

*) Տե՛ս գրքոյկիս էջ 152—153:

**) Անդ, էջ 262—263:

***) Անդ, էջ 263:

*) Անդ, էջ 265:

**) Անդ, էջ 180:

Այս համաձայնութիւնը գլուխ հանուեց Պետրոգրադի մէջ, ուր 1917 Յունուար 9ից մինչեւ 1917 Մարտ 3 տեղի էր ունենում Միջդաշնակցային խորհրդաժողով, մասնակցութեամբը Անգլիոյ (Լորդ Ալֆրեդ Միլներ), Ֆրանսայի (Պասսոն Դուտերզ), Իտալիոյ (Վիսորիոյ Շալոյեա) եւ Ռուսիոյ (Ն. Պոկրովսկիյ եւ ուրիշներ):

Այսպէս, անգլիացիներից եւ իտալացիներից գաղտնի, ֆրանսական դեսպան Պալէոլոգի եւ ցարական արտ. գործոց նախարար Ն. Պոկրովսկիի միջեւ փոխանակուած ծանուցագրերով կնքուեց այս համաձայնութիւնը (տե՛ս Լ. Ալդրովանդի Մարեսկոթի — «Դիւանագիտական Պատերազմ», Մոսկուա, 1944, էջ XI եւ 77):

Գրքին հեղինակը՝ Լ. Ալդրովանդի Մարեսկոթի — իտալացի ականաւոր դիւանագէտներից — անձնապէս մասնակցած է յիշատակուած Միջդաշնակցային խորհրդաժողովին:

***) Տե՛ս գրքոյկիս էջ 181:

Ըստ ռուսական ասքի՝ «ինչ որ կը գրես գրչով, չես կարող ջնջել կացինով»։

1946 Օգոստ. 8ին, երբ Ֆ. Միութիւնը Նեղուցների հարցի մասին յանձնում էր Թուրքիոյ իր ծանօթ ծանուցագիրը, նա գիտէր անշուշտ միջազգային այն ուխտերի եւ համաձայնութեանց մասին — միշտ Նեղուցների շուրջ — որոնց թուարկումը կատարեցինք քիչ վերը։

Ֆ. Միութիւնը գիտէր, որ իր ծանուցագրի մէջ ոչի՛նչ կայ արտառոց և ընդվզեցուցիչ ո՛չ դաշնակից երկրների և ոչ էլ աշխարհի հանրային կարծիքի համար։

Տարբերութիւնը նրանում էր միայն, որ, առաջին՝ Ֆ. Միութիւնը իր 1946 Օգոստ. 8ի ծանուցագրով շատ աւելի չափաւոր էր Նեղուցների հարցում, քան եղած էր իր նախորդը՝ ցարական կառավարութիւնը՝ առաջին մեծ պատերազմին։

Եւ, երկրորդ՝ որ դաշնակից երկրները այսօր շատ աւելի անզիջող են այս չափաւոր պահանջների իսկ նկատմամբ, քան էին երէկ, երբ նրանք այնքան առատաձեռնաբար նոյն Ռուսիոյ զիջում էին ե՛ւ Պոլիսը, ե՛ւ Նեղուցները, ե՛ւ յարակից հողաշերտերն ու կղզիները։

Ֆ. Միութեան պահանջները, ինչպէս իր տեղում նկատեցինք, ո՛չ չորս են եւ ոչ հինգ, այլ միայն երեք։

Երեւոյթի ծանրութեանը արժանի կարեւորութեամբ նորից ենք ընդգծում, որ խորհրդային այս երեք պահանջներին ընդառաջելու հարցի մէջ համամիտ են թէ՛ Անգլիան, թէ՛ Ամերիկան եւ թէ Թուրքիան։

Վէճը այժմ դառնում է միայն և բացառաբար եռաբախիների շուրջ։

Անկե՞ղծ է այն զիջումը, որ հակառակորդ ուժերի կողմից կատարուում է այսօր Ֆ. Միութեան՝ իր երեք պահանջների մէջ։

Եթէ այո՛, ապա զիջում պէ՛տք է կատարուի նաև եռաբախիների հարցում։

Ֆ. Միութիւնը միայն Սեւ ծովի ափերին 2.000 քիլմ. երկարութեամբ սահմաններ ունի. նա չի կարող այս կենսագծերի պաշտպանութիւնը ուխտաբղթի վստահել, երբ ուխտադրժումի այնպիսի անարկու փաստ կայ, ինչպէս գերման ռազմանաւերի ապակընկալ մուտքն էր Մարմարա 1914ի Օգոստոսին։

1946 Մարտ 15ին Նիւ Եորքում արտասանած իր ճառի մէջ անդրադառնալով Ֆ. Միութեան պահանջին — խարիսխ ունենալ Նեղուցներում— Զըրչիլը զայրոյթով բացագանչում էր.

«Սա՝ Նեղուցները բանալ ասել չէ, սա՝ Նեղուցները փակել ասել է, յօգուտ միայն մէկ ազգի»։

Աւելի ընդարձակելով իր խօսքի սահմանները՝ նոյն վարիչը մէկ տարի վերջ յատուկ յօդուածի մէջ նկատում էր.

«Բրիտանական եւ ամերիկեան կառավարութիւնները Նեղուցների մասին մարաջախտ Ստալինին ներկայացրին ուղղամիտ (correct) եւ լայն տարողութեամբ առաջարկներ։ Այս կառավարութիւնները առաջարկեցին վերահաստատել Մոնտրէոյի Պայմանագիրը՝ Նեղուցները դնելու համար այն օրինավիճակի տակ, ինչ օրինավիճակ որ ուներ Սուէզի ջրանցքը, այսինքն՝ ազատ անցք բոլոր ազգերի բոլոր ռազմանաւերի եւ առեւտրանաւերի համար, խաղաղութեան թէ պատերազմի ժամանակ։ Այս հիմունքով կնքուած մի դաշնագիր, որին մասնակից պիտի լինեին նաեւ Ֆ. Միութիւնը եւ Թուրքիան, պիտի երաշխաւորուեր

Մեծն Բրիտանիոյ եւ Միացեալ Նահանգներուն կողմից։ Բայց այս կարեւոր ապահովութիւնը բաւարար չնկատուեց։ Մարաջախտ Ստալինն անմիջապէս պահանջեց Նեղուցներուն մէջ հաստատումը խորհրդային մի ամրոցի, որ բնականաբար պիտի իշխեր Պոլսոյ վրայ, եւ կամ հաստատումը նմանօրինակ մի խարիսխի Յունաստանի մէջ՝ Սելանիկ կամ Դեդեաղաջ։ Միաժամանակ բացարձակապէս մերժուեց Դանուբի վրայ նաւարկութեան ազատութեան մասին ամերիկեան պահանջը, որին ուժ տուաւ Մեծն Բրիտանիան։

«Ցոյց տալ խորհուրդներուն կողմից ի յայտ բերուած փառասիրութիւնները՝ այս չի նշանակում տուն տալ (suggérer) այն մտքին, թէ խորհրդային Կառավարութիւնը պատերազմ է ուզում եւ կամ պիտի փորձի այդ փառասիրութիւնները իրագործել պատերազմի միջոցով։ Խորհրդային Կառավարութիւնը բաղձանքն ունի խաղաղութեան եւ Առատութեան։ Եթէ նա լուրջ ընդդիմութեան չբախէր, պիտի ընդլայնէր իր գործունէութիւնը՝ արտաքին նշման ստացումով եւ համայնավար ներքին դաւադրութեամբ։ Իսկ եթէ ընդդիմութիւն լինի իրեն, դիւանագիտական գետնի վրայ, այնպէս, որ տեսանելի լինեն նոր պատերազմի հեռանկարները ընդդէմ միացեալ նպատակի (coalition) — նոյնիսկ հզօր կամ աւելի հզօր՝ քան ինք — այդ դէպքում, իմ կարծիքով, նա իր փառասիրութիւնները պիտի ջնջուցնի, գոնէ յառաջիկայ մի քանի տարիների ընթացքին, մինչեւ խզումի տագնապալի կէտը»։*)

Զբաղեցնող յօդուածից լրիւ քաղեցինք Նեղուցներին վերաբերող հատուածը, որովհետեւ այդտեղ, առաջին անգամը լինելով, կարելի մանրամասնութեամբ տրուած է խնդիրը իր ամբողջութեանը մէջ։

Նաեւ այս հատուածից յստակ է, որ Ամերիկան իրական երաշխիք պահանջած է իր ապահովութեան համար, — Նեղուցներում սեփական խարիսխ ունենալ՝ այնտեղից թշնամի ռազմանաւերի մուտքը դէպի Սեւ ծով արգելելու համար։

Եւ այստեղ է խորհրդային պահանջի ծանրութեան կենտրոնը, նրա բովանդակ արժէքը։

Դարդանելի պաշտպանութիւնը, ըստ Վոլտերի Լիպմանի, Ամերիկան կարող է ապահովել միայն Դանուբի վրայ։

«Բացայայտ է, — նկատում է ամերիկեան հեղինակաւոր սիւնակագիրը,— որ ռուսներին այժմ մտահոգողը այդ չէ... Դարդանելի խնդիրը Նեղուցները բանալու հարց չէ... Ռուսները ներկայիս ոչ թէ Դարդանելը բաց պահելու հարցով են զբաղուած, այլ փա՛կ պահելու»։*)

Ամերիկեան «ՆԵԹ» գործակալութիւնը մեկնաբանելով Պետական Վարչութեան 1946 *Սեպտ.* 30 *յայտարարութեան իմաստը* (Նեղուցների մասին)՝ *իր հերթին գրում էր։*

«Դիտողները չեն հաւատում, որ Ամերիկան նպատակը միմիայն երաշխաւորութիւնն է խորհրդային պատերազմական և առեւտրական նաւերի ազատ անցքի համար այդ Նեղուցներից, այլ պնդում են, թէ իր նպատակն է լինել մի այնպիսի դիրքի մէջ, որ իրեն դիւրութիւն տար Նեղուցները փակելու»։

*) **Ուինսթըն Չըրչիլ** — «Ուսիոյ դիտաւորութիւնները եւ Ամերիկեան միջամտութիւնը» («Le Progrés Egytien», 14 Ապր. 1947)։

*) Ա. Լիպմանն — «Խաղաղութիւն՝ հաստատած ռիսքով» («Դաղես դը Լոզան», 18 Սեպտ. 1946)։

«Պարզ խօսելով, — հեռագրում էր գործակալութիւնը, — Ռուսիոյ վախը այն բանի մէջ է, որ Թուրքիա ձեղքուածք է կազմում Խ. Միութեան «ապահովութեան գօտի»ի մէջ։ Այդ գօտին երկարում է Բալտիկից մինչև Սեւ ծով։

«Ռուսիոյ ըմբռնումով, Արեւմտեան Պեռուքեանց հեռ պատերազմի պարագային, Թուրքիա կարող է թոյլ տալ, որ անգլիական եւ ամերիկեան ռազմանաւերը անցնեն Դարդանելից եւ Վոսփորից, իսկ մեր օդանաւակիր ռազմանաւերն էլ յարձակում գործեն Խ. Միութեան հարաւային թիկունքի վրայ»։ *)

Եւ ճիշտ է. խնդրի բովանդակ ծանրութիւնը թագնուած է մեր կողմից ընդգծուած ճիշտ այս տողերի տակ։

Եթէ Խ. Միութեան դռները բաց պէտք է մնան թշնամի բանակների առջեւ, այլեւս ի՞նչ է արժէքը այն ապահովութեան, որ տրւում է Ռուսիոյ։

Խորհրդային երեք պահանջները ընդունելով՝ Երկու Մեծերը ինքնին ընդունած են լինում բաց պահել Նեղուցները յօգուտ միայն Սեւծովեայ պետութեանց եւ փակ՝ միւս բոլոր երկրների առջեւ։

Արդ, Մեծերը այս սկզբունքը կա՛մ ընդունած են, կա՛մ ընդունած չեն։

Կարելի չէ միաժամանակ ե՛ւ ընդունել, ե՛ւ չընդունել։

Այդպէս կարելի է այն դէպքում միայն, երբ տրամադիր ես միայն թղթի վրայ ընդունելու (այս կամ այն դաշինքում), բայց երբեք գործի մէջ։

Եւ Խ. Միութիւնը ճիշտ սրա դէմքէ, որ պայքարում է այսօր՝ կրկին անգամ անցեալի վտանգալի անակնկալների առջեւ չգտնուելու համար,

*) «Միացեալ Նահանգներ եւ Ռուսիա Դարդանելի մասին» («Հայրենիք», 8 Հոկ. 1946)։

երբ մանաւանդ այսօր իսկ, խաղաղութեան եւ բարեկամութեան այս կուսական շրջանին, Լիպմանները չեն վարանում բաց ու յստակ բառերով յայտարարելու.

«Ռուսական տեսակէտը որոշ է. եթէ Ռուսիա իր հակակշռի տակ չունենայ Թուրքիան՝ նրա կառավարութիւնը եւ բանակը, ապա Մեծն Բրիտանիա եւ Ամերիկա, պատերազմի պարագային, ոչ միայն պիտի գործածեն Նեղուցները Սեւ ծով մտնելու համար՝ իրենց անբաղդատելիօրէն հզօր ռազմատորմիղներով, այլ եւ պիտի գործածեն Թուրքիոյ հիւսիսային եզերքները, Սեւ ծովի վրայ, իբրեւ խարիսխ օդանաւային եւ զինուորական գործողութեանց՝ Խ. Միութեան ամենախոցելի ետնամասի դէմ։ Եւ Ռուսիա գիտէ, թէ այստե՛ղ է իր ամենախոցելի կէտը»։

Եւ որովհետեւ Խ. Միութիւնը գիտէ, թէ այստե՛ղ է իր ամենախոցելի կէտը, ուստի եւ իրական երաշխիքներ է ուզում ոչ միայն Նեղուցներում, այլ եւ ձգտում է վրացական պահանջների գծով թոյլ չտալ, որպէսզի «Թուրքիոյ հիւսիսային եզերքները, Սեւ ծովի վրայ», իր դէմ գործածուեն։

Լիպմանների գրչով ճիշտ գծուած է Թուրքիոյ ռազմա-քաղաքական կարեւորութիւնը Խ. Միութեան ինքնապաշտպանութեան հարցում։

Այսօր յստակ է այլեւս այն քաղաքականութիւնը, որ վարում է Խ. Միութիւնը իր բոլոր սահմանների վրայ։ Իրենց երկարութեամբ այս սահմանները — այսօր աւելի քան 60.000 քիլոմ. — մի անընդգրկելի մեծութիւն են կազմում։ Սեփական ուժերով միշտ պահակ կանգնել այս սահմանների վրայ՝ այդ նշանակում է պետութեան նիւթական միջոցները մի զգալի չափով ապառել միայն այս նպատակի համար։ Այս առաջնագոյն հոգը իր

հնարաւոր նուազագոյնին իջեցնելու նպատակով՝ Խ. Միութիւնը, անցեալի դառն փորձերից խրատուած, ձգտում է իր բոլոր սահմանների երկայնքին բարեկամ պետութիւններ ունենալ եւ այս ձեւով իր չորս բոլորը ապահով «պաշտպանութեան գօտի» ստեղծել։

Սակայն 60.000 քիլմ. երկարութեամբ սահմանագիծը ամէն տեղ նոյն արժէքը չունի։

Այսօր, ստեղծուած պայմանների մէջ, երբ արեւմուտքում՝ ջախջախուած է գերման ոյժը, իսկ ծայր. արեւելքում՝ ճապոնականը, Խ. Միութեան համար արտակարգօրէն բացառիկ արժէք է ստանում այն սահմանագիծը — հազիւ 4.000 քիլմ. — որ հարաւում Նեղուցներից երկարում է ընդհուպ մինչեւ Կասպից ծով։

Վնասահ կարելի է ասել, որ այս սահմանագիծը — նորից ենք շեշտում, այսօրուա՛ն պայմաններում — միւս բոլոր սահմանների արժէքն ունի։

Պատճառները երկու են, առաջին՝ արտաքին, իսկ երկրորդ՝ ներքին։

Արտաքնապէս միայն հարաւի կարճ սահմանագիծն է, որ Խ. Միութեան դէմ արդի ռազմաքերի բոլոր պահանջների համաձայն լրիւ ռազմաճակատ կազմելու բոլոր դիւրութիւններն է տալիս — ծովային, օդային և ցամաքային։

Նեղուցներից ամէն վայրկեան թշնամի ռազմատորմիղներ կարող են խուժել դէպի Սեւ ծով։

Նոյն ծովի թրքական առափնեայ օդախարիսխներից (հիւսիսային) միշտ հզօր օդային ոյժեր կարող են ընկերանալ ռազմածովային ուժերին եւ անարգել արշաւել դէպի խորհրդային հող։

Միաժամանակ թշնամի ցամաքային բանակներ միշտ ի վիճակի են տեղաշարժուելու հարաւից՝

թրքական եւ պարսկական սահմաններից՝ եւ թափանցելու Անդրկովկաս։

Բոլոր տեսակի զէնքերով նման միատեղ յարձակումի համար՝ հարաւից բացի՝ ոչ մէկ ուրիշ հատուած, բովանդակ Խ. Միութեան սահմանների երկայնքին, այսքան դիւրութիւններ չի տալիս։

Բայց կայ բացառիկ կարեւորութիւնը նաեւ ներքին պատճառի։

Հարաւից յարձակուելով՝ թշնամին իրը թիրախ ունի Խ. Միութեան ռազմա-տնտեսական հզօրանքի առաջնագոյն վայրերը,— Ուկրայնան (Խ. Միութեան հացի շտեմարանը), Դոնեցի աւազանը (երկրի քարածուխի և հանքանիւթի կարեւորագոյն կենտրոնը) և Կովկասը (ուր գտնւում է Խ. Միութեան քարիւղային հարստութիւնը)։

Նաև այսպէս վայր, ուր մի հսկայ երկրի համար այսքան մեծ կարեւորութեամբ կենսաղբիւրներ կենտրոնացած լինէին, Խ. Միութիւնը դարձեալ չունի։

Այս զոյգ պատճառներով Խ. Միութեան հարաւային սահմանների խնդիրը, գլխաւորութեամբ Նեղուցների, արտակարգօրէն բացառիկ կարեւորութիւն է ստանում։

Խորքին մէջ Արեւելեան Հարցն է, որ լայնաբաձակ սահմանների մէջ եւ շատ աւելի խոր հիմունքներով, բայց միայն «Նեղուցներ» նեղ ու սահմանափակ նշանաստախտակի տակ, կրկին անգամ հրապարակ է գալիս։

Նեղուցների մէջ խարիսխներ ձեռք բերելով՝ Խ. Միութիւնը առաջին հերթին ի չիք է դարձնում 1939ի անգլեւ-թուրք զինակցութիւնը, ընդհանրապէս անկարելի է դարձնում այդ կարգի ամէ՛ն զինակցութիւն, առանց Խ. Միութեան համամտուա-

թեան և մասնակցութեան, առաւել եւս ընդդէմ Խ. Միութեան։

Այսքան խոր բնոյթ ունի այն պահանջը, որ այսօր և առ այժմ Խ. Միութիւնը դնում է միայն Նեղուցների հարցում։

Աւելի լայնօրէն խօսելով՝ դժուար չէ նշմարել, թէ ո՛ւր է «բաց-ու-գոց»ի «խորհրդաւոր» գաղտնիքը։

Նեղուցներից կարելի է յարձակում գործել Խ. Միութեան դէմ (եթէ Նեղուցները Խ. Միութեան ձեռքը չեն)։

Նեղուցներից կարելի է յարձակման ենթարկուել Խ. Միութեան կողմից (եթէ Նեղուցները Խ. Միութեան ձեռքն են)։

Առաջին պարագան նկատի առնելով՝ Խ. Միութիւնը ուզում է Նեղուցները գոց պահելու իրաւունք ունենալ (իր դէմ յարձակումը արգելելու համար). իսկ երկրորդ պարագան նկատի առնելով՝ Խ. Միութիւնը ուզում է Նեղուցները բաց պահելու իրաւունք ունենալ (իր յարձակումը ուրիշների դէմ դիւրացնելու համար)։

Ճիշտ հակառակն է միւս երկու Մեծերի պահանջը։

Նեղուցներից դիւրաւ Խ. Միութեան դէմ յարձակուել կարենալու համար՝ Անգլիա և Ամերիկա ձգտում են Ջրային այս ռազմուղիները բաց պահելու իրաւունք ունենալ։ Եւ ընդհակառակն. Ջրային այս ռազմուղիներից դիւրութեամբ Խ. Միութեան կողմից յարձակման չենթարկուելու համար՝ ուզում են այս «հիդրօ-ստրատ»ները գոց պահելու իրաւունք ձեռք ձգել։

Խ. Միութիւնը իր նպատակին կարող է հասնել՝ Թուրքիոյ հետ նաև ինք լինելով Նեղուցների պահակը։

Անգլիա և Ամերիկա իրենց հետապնդած նպատակին կարող են հասնել, եթէ՝ Նեղուցների հարցում Թուրքիոյ հետ լինելով՝ կարողանան այնպէս անել, որ այդ Ջրանամբանների միակ պահակը լինի ձեւապէս Թուրքիան, իսկ փաստօրէն լինեն նաև իրենք։

Նկատի պէտք է առնել, որ Խ. Միութիւնը, բաղդատմամբ Անգլիոյ և Ամերիկայի, գրաւում է շատ աւելի աննպաստ դիրքեր։

Միայն այն փաստը, որ մեր աշխարհի 4/5ը իրականօրէն գտնւում է կա՛մ ուղղակի և կամ անուղղակի հսկողութեանը տակ Անգլիոյ և Ամերիկայի, ու միայն 1/5ը բաժին է մնում Խ. Միութեան («ազդեցութեան գօտի»ներով միասին), միայն այս մէկ հատիկ պարագան լրիւ արդարացնում է Խ. Միութեան բոլոր վախերը։

Նոյնն է պարագան նաև Միջերկրականի նկատմամբ։

Հորհրդային փոխ-ծովակալներից Վ. Բելլի նը-կատում է.

«Անգլիա իր ձեռքերի մէջ է պահում Միջերկրականի բոլոր մուտքերի դռները և գրաւում է միջերկրականեան բազմաթիւ երկրների հողերը, ուր իրեն են պատկանում քարիւղի գլխաւոր աղբիւրները և նրանց խողովակները (պայպ-լայն)։ Շնորհիւ իր բազմաթիւ նաւային և օդային կայաններին — Ջիբրալտարի, Հիւս. Ափրիկէի, Մալտայի, Իտալիոյ, Յունաստանի, Իրաքի, Անդրյորդանանի, Պաղեստինի և Կիպրոսի մէջ — նա ի վիճակի է ամբողջովին հակակշռելու Միջերկրականի, Բալկանների, Փոքր Ասիոյ և Կարմիր ծովի ծովային նշանակէտերն ու եզերքները»։ *)

---

*). Բելլի — «Միջերկրականի կացութեան շուրջ» («Temps Nouveaux», Մոսկուա, 1 Սեպ. 1946, թիւ 17):

Սակայն Անգլիա հակակշռում է ուղղակի նաև Դարդանելի ճանապարհը, որովհետև անուղղակիորէն իր ազդեցութեան գօտիի մէջ են մտնում Եգէական ծովը, Երկոտասան կղզիները եւ Ցունաստանը։

Եւ Անգլիան մենակ չէ Միջերկրականում, իրեն հետ է նաև Ամերիկան։

Պատերազմի ժամանակ ամերիկեան ծովուժը կարսխած էր Պոր Լիէօտէյի մէջ (Ֆրանսական Մարոք)։ իսկ այսօր նա ոչ միայն այդ խարիսխն է պահում, այլ և նոր կայաններ ունի Պալերմոյում և Սիկիլիոյ ուրիշ կէտերում։

«Միացեալ Նահանգները պէտք է դառնան «միջերկրականեան տէրութիւն»,— բաց կերպով յայտարարում են այսօր Լիպմանները, հակառակ այն իրողութեան, որ 9.000 քիլմ. երկարութեամբ մի հեռաւորութիւն Հիւս. Ամերիկան բաժանում է Միջերկրականից։

Ամերիկեան ծերակուտականներից Պեպպըր, ի տես այս երեւոյթի, անակնկալում էր.

«Միացեալ Նահանգներն ու Անգլիան ուզում են Միջերկրականը բրիտանական լիճ դարձնել»...*)

Նուազ արդար չէ հ. Միութիւնը, երբ Նեղուցների վարչութեան հարցում պահանջում է մասնակցութիւնը բացառաբար Սեւծովեան պետութեանց։

Մանաւորաբար Սուէզի և Պանամայի պարագան գալիս է առաւել ամրապնդելու հ. Միութեան իրաւա-բարոյական դիրքերը։

Սուէզը մեկ ծայր չունի, ինչպէս Դարդանելն ու Վոսփորը (որոնք փակւում են Սեւ ծովում), այլ երկու. Սուէզի ջրանցքը ճշմարտօրէն միջազգային

*) Նոյն տեղը։

ճանապարհ է։ Այս է պատճառը, որ 1888ի միջազգային դաշինքով ջրային այդ ճանապարհը դրուեց դաշինքը ստորագրող բոլոր պետութիւնների միջազգային հսկողութեանը տակ։*)

Իրողութիւնն այն է, սակայն, որ 1888ից այս կողմ միջազգային այդ ցանձնախումբը ոչ իսկ մէկ անգամ, իբրեւ բացառութիւն, տակաւին հրաւիրուած չէ։**)

Կայ աւելի էականը սակայն։

1936 Օգոստ. 26ին Անգլիա դաշինք կնքեց Եգիպտոսի հետ, ուր յատուկ յօդուած կայ այն մասին, որ Սուէզի ջրանցքի պաշտպանութիւնը պիտի

*) Սուէզի ջրանցքը առաջին անգամ փորուած է մեր թուականութիւնից 2000 տարի առաջ. միայն Նեխոյ փարաւոնի ժամանակ 120.000 ստրուկներ «զոհ զնացած են նրա կառուցումին»։ Մեր թուականութեան 776ին Աբբասեան խալիֆաներից Աբու-Ջաֆար-էլ-Մանսուրի հրամանով գոցուած է ջրանցքը՝ իբրեւ ռազմամիջոց ըմբոստացած Մեքքայի եւ Մեդինայի դէմ։ Միայն 1854 Նոյ. 30ին նախկին ֆրանսական հիւպատոսը Եգիպտոսում Ֆերդինանդ Լեսեպս — ֆրանսական կայսրունու ազգականներից եւ մտերիմ բարեկամը Եգիպտոսի փոխարքայ Մոհամմեդ Սայիդի — այս վերջինից ժեռման է ստանում նոր հեռագօրութիւններ կատարելու համար։ Անգլիան դէմ էր ձեռնարկին. առանձնաբար պայքարում էր լորդ Պալմերստոնը, վախ ունենալով, թէ ջրանցքի կառուցումով կարող է վտանգուել Հնդկաստանի ապահովութիւնը։ Սակայն Լեսեպսին յաջողւում է յաղթահարել այս դժուարութիւններ եւ բաժնեթիրական հիմունքով մի ընկերակցութիւն ստեղծել՝ ջրանցքի կառուցումը գլուխ հանելու համար։ Աշխատանքներ սկսւում են 1859 Ապր. 25ին եւ վերջանում 1869 Օգոստ. 15ին. հանդիսաւոր բացումը կատարւում է 1869 Նոյ. 17ին։ Հուն ջրանցքի երկարութիւնն է, ինչպէս իր տեղում ասացինք, 160 քիլմ. (բաց այլ հաշիւների՝ 173 քիլմ.). լայնքը՝ 60ից մինչեւ 150 մետր։ ջրանցքը սահմանափակներ չունի. նաւի անցումը ջրանցքից տեւում է 12—13 ժամ. Սուէզը կարող է օրական 24 նաւ բաց թողնել (մանրամասներ տե՛ս André Siegfried — «Suez, Panama et les routes maritimes mondiales», 1945, Փարիզ)։

**) «Պատմութիւն Դիւանագիտութեան», հ. Գ., էջ 220։

կայսրուի միացեալ անգլեւեգիպտական զինական ուժերով։ Խաղաղութեան ժամանակ Անգլիա այս շրջանում պիտի պահի ոչ աւելի քան 10.000 զինուոր եւ 400 ռազմօդանաւ։ Պատերազմի ժամանակ, նայած պէտքին, Անգլիա այս քանակը կարող է բարձրացնել։*)

Արդ, 1936ին Եգիպտոս միջազգայնօրէն ճանաչուած անկախ երկիր էր, ինչպէս որ անկախ է այսօր Թուրքիան։ այս հիմունքով, իբրեւ անկախ երկրի հետ, Անգլիա երէկ իրեն իրաւունք էր վերապահում, ուղղակի բանակցութեամբ Եգիպտոսի հետ, Սուէզի ռազմա-քաղաքական իրաւավիճակը ճշտելու, մինչ նոյն իրաւունքը նա այսօր զլանում է ոչ նուազ անկախ և գերիշխան Թուրքիոյ։

Երկրորդ՝ Անգլիա այս զատ դաշինքը կնքում էր Եգիպտոսի հետ, առանց առնելու համամտութիւն այն միւս պետութեանց, որոնք ստորագրած էին 1888ի պայմանագիրը։**)

Եւ, վերջապէս, երրորդ՝ 1936 Օգոստ. 26ի ուխտով Անգլիա երէկ հնարաւոր էր գտնում միացեալ անգլեւեգիպտական զինական ուժերով պաշտպանութիւնը մի ջրանցքի, որ անցնում է եգիպտական հողից, մինչ նոյն Անգլիա այսօր հնարաւոր չի գտնում միացեալ ռուսաթուրք զինական ուժերով պաշտպանութիւնը մէկ այլ ջրանցքի, որ անցնում է թրքական հողից։

*) Վ. Նիկիֆին — «Պատմութեան դասերը» ("Ի. Նովոստի", 30 Օգոստ. 1946, թիւ 68)։

**) Ճիշտ նոյն եղանակով ու միակողմանի ակտով Անգլիա 1914 Դեկտ. 5ին իր նողը հրաւիրեց Կիպրոս կղզին, երբ 1878 Յունիս 4ի անգլերուրք դաշինքով նա գրաւած էր այդ կղզին միայն պայմանական ձեւով։ հնազայի դաշինքներ — Սեւրի՝ 10 Օգոստ. 1920, եւ Լօզանի՝ 24 Յուլիս 1923 — այս կցումը նուիրագործեցին։

Երկու չափի եւ երկու կշռի այս քաղաքականութիւնը չի կարող չամրացնել Ա. Միութեան դիրքերը համաշխարհային հանրային կարծիքի մէջ։

Նոյնն է պարագան նաեւ բրիտանապատկան միւս Նեղուցների նկատմամբ, — Ջիբրալտար՝ որ Ատլանտեանը կապում է Միջերկրականին, Ադէն՝ որ կարմիր ծովը կապում է Արաբական ծովին, Սինգափուր՝ որ Հար. Ջինական ծովը կապում է Հնդկական ովկիանոսին. սրանք բոլորը երկու ծայրով ճշմարիտ միջազգային ուղիներ են, որոնց վերայ, սակայն, միայն մէկ ազգ հաստատած է իր գերիշխան վերապետութիւնը։

Տիպար միջազգային ճանապարհ է նաեւ այն միւս ջրանցքը — Պանաման։*)

*) Արեւելեան այս ցուցին կտրում է Պանամայի պարանոցը Հարաւային եւ Կենտրոնական Ամերիկայի միջեւ եւ կապում Ատլանտեան եւ խաղաղական ովկիանոսները Քարու։ Ջրանցքը կրճատում է Լիվրպուլից (Անգլիա) մինչեւ Սան Ֆրանցիսկոյ 9.500 միլմ. երկարութեամբ մի տարածութիւն, իսկ մինչեւ Նիւ Եորք՝ 14.500 միլմ.։ Երկարութիւնն է 81.6 միլմ., կառուցումը տեւած է 34 տարի (1884—1914)։

1850ի անգլեւամերիկեան դաշինքով՝ ջրանցքի կառուցումը պիտի կատարուէր երկու պետութեանց կողմից, իսկ կառուցումից յետոյ պիտի մնար չեզոք, նոյն պետութեանց հոգատարութեան տակ։ Սակայն 18 Նոյ. 1901ի անգլեւամերիկեան նոր դաշինքով նիր չեղեալ նկատուեց, եւ ջրանցքի կառուցումի իրաւունքը ամբողջութեամբ անցաւ Ամերիկային։

Կոլումբիայի հանրապետութիւնը, որի հողերի միջից պիտի անցնէր ջրանցքը, 1903ին մերժեց այդ իրաւունքը տալ Ամերիկային։

1903 Նոյ. 3ին «յեղափոխութիւն» ծագեց Պանամա քաղաքում, այս ամբողջ շրջանը անջատուեց Կոլումբիայից եւ ինքն իրեն անկախ հռչակեց. 1903 Նոյ. 13ին Հիւս. Ամերիկան ճանաչեց Պանամայի անկախութիւնը։

Անկարգ դառնալով՝ Պանաման անմիջապէս, նոյն թուականին իսկ, 10 միլիոն դոլարի ծախեց Ամերիկային ջրանցքի հողաշերտը (8ական միլմ. լայնքով երկու թեւերի վրայ)։ Այս գումարից բացի՝

Բայց այստեղ մինչև իսկ անուանապես չկայ այն Ցանձնախումբը, որ թղթի վրայ ունէր Սուէզը։

Բացառիկ արժէքով միջազգային մի կենսաճանապարհ է Պանաման, որ իր երկու ծայրերով երկու ովկիանոսներ — որոնցից մէկը՝ Խաղաղականը՝ աւելի մեծատարած, քան մեր Հինգ Ցամաքները — կապում է իրար։ Իր բնոյթով ու դիրքով համաշխարհային ու միջազգային այս ուղին պատկանում է միայն Ամերիկային և գտնւում է միայն նրա մենաշնորհեալ հսկողութեանը տակ։

Երկու ովկիանոսներին հսկած երկրներն իսկ մաս չունեն այս ճանապարհի վարչութեանը մէջ։

Սակայն երբ նոյն բացառիկ իրաւունքը պահանջւում է Սեւծովեան պետութեանց համար — որոնց արտօնեալ դիրքը նեղուցներում նկատւում է բնական եւ իրաւացի, արդար եւ հասկանալի — այն ժամանակ մի անխմանալի պատճառաբանութեամբ այս պահանջը նկատւում է վրդովիչ։

Մի առիթով հռչակաւոր Լորդը — կիտչըներ — ասած է, որ Սուէզի ջրանցքն անցնելով՝ կարելի է մոռանալ տասը պատուիրանները։

Այսօր, տարաբախտաբար, այս պատուիրանները մոռացւում են՝ տակաւին Սուէզին իսկ չմօտեցած։

Երկու չափի եւ երկու կշռի այս քաղաքականութիւնը — ասա՛ և կրկնի՛ր — դարձեալ ու վերատին չի կարող չզօրացնել Հ. Միութեան իրաւաբարոյական դիրքերը աշխարհի հանրային կարծիքի մէջ։

Ամերիկան պարտաւորուեց տարեկան 250.000 դ. տուրք վճարել։ Ջրանցքը հզօրապէս ամրացուած է. ունի ուժեղ պահապազօրք. շրջանը կառավարւում է յատուկ նահանգապետով, նշանակուած Ամերիկայի կողմից։

Նիւ Եորքի համալսարանի միջազգային իրաւունքի ուսուցչապետ Կլայդ Իգլիսը — այն մարդը, որ Միացեալ Ազգերի Ուխտագրի մշակման դժուարին գործում ներկայացնում էր իր հայրենիքը — ամերիկեան «Հարպերս» պարբերականի մէջ յօդուած գետեղելով իր երկրի խորական քաղաքականութեան դէմ՝ գրում էր։

«Եթէ մենք գտնում ենք, որ մեր ազգային ապահովութեան համար անհրաժեշտ է, որպէսզի Պանամայի ջրանցքը գտնուի ամերիկեա՛ն, բայց ոչ միջազգային վարչութեան տակ, ապա ի՞նչպէս կարող ենք սպասել մենք, որ Ռուսիա փափագ յայտնի միջազգայի՛ն հսկողութիւն հաստատելու Դարդանելի վերայ»։ *)

Նոյն գաղափարն էր արծարծում նաև լոնդոնեան պարբերականներից «Նիւ Ստէյտսմէն էնդ դը Նէյշըն»։

«Մենք չենք կարող հաւատալ, — գրում էր պարբերականը,— թէ ամերիկեան կառավարութիւնը պիտի յօժարէր, օրինակ, ընդունել Պանամայի ջրանցքի հակակշռումը այլ պետութեանց կողմից։ Իսկ շրջանային ապահովութեան սկզբունքի վրայ հաստատուած մեր աշխարհում Դարդանելը նոյնքան խորհրդային ազդեցութեան գօտու մէջ է, որքան Պանաման՝ ամերիկեան»։ **)

Հէնրի Ա. Ուոլլը — Ռուզվելտի դանլինում առեւտրի քարտուղար — 1946 Յուլիս 23ին Տրումընին ուղղած իր նշանաւոր նամակում ջատագովելով Հիւս. Ամերիկայի և Հ. Միութեան սերտ գործակցութիւնը՝ գրում էր։

---

*) «Ամերիկեան ուսուցչապետի կարծիքը Հիւս. Ամերիկայի հաղթականութեան մասին» («Գրաւդա», 8 Յունիս 1946)։

**) Տե՛ս պարբերականի 1946 Օգոստ. 20ի թիւը։

«Օրինակ, մեզանից շատերը հատատապես համոզուած են մեր դիրքի զօրաւորութեան՝ երբ մենք թելադրում ենք միջազգայնացում եւ զինաթափում Դանուբի եւ Դարդանելի մասին, բայց սարսափում եւ բարկանում ենք, երբ ո՛րեւէ ոուս մեզ հակառաջարկ է անում միջազգայնացնելու եւ զինաթափելու Սուեզը կամ Պանաման։ Բայց մենք պարտաւոր ենք ընդունել, որ այս վերջինները Դանուբի եւ Դարդանելի նման հարցեր են ռուսների համար։ Մենք հարիւրուած ենք հաշուի առնել, թէ Ռուսիա ի՛նչ բան է նկատում կարեւոր իր սեփական ապահովութեան համար համաշխարհային կարգի կառուցումի մէջ՝ իբրեւ նախապայման խաղաղութեան եւ զարգացման։ Մենք պատրաստ պէտք է զսնուենք նրա պահանջները կատարելու նիւթ նոյն հիմունքով, ինչ հիմունքով որ մենք եւ անգլիացիները կատարում եւ ջափում ենք մեր պահանջները ի խնդիր մեր ապահովութեան»։ *)

Երբեմնապէս բողոքի ձայները միակողմանի արդարութեան դէմ արտայայտւում են շատ աւելի բուռն զայրոյթով։

Ամերիկեան գրիչներից Վինսընթ Շանին, որի անունը քանիցս յիշատակեցինք, անվերապահ համոզումով Ռ. Միութեան իրաւունքները պաշտպանելով, գրում էր.

«Իրողութիւն է, որ Նեղուցների հիւսիսը եւ հարաւը կային ժողովուրդներ, որոնք զանազան ցեղերի և կրօնքների էին պատկանում, եւ թուրքերը 500 տարի առաջ եկան և նուաճեցին նրանց։ Ուսչինգտընի կառավարութիւնը այնպէս է դատում, թէ Պաղեստինի արաբները, որոնք 1300 տարիներ

*) «Ուղղի նոտոկը Տրումբենին» («Գրաւդա», 20 Սեպտ. 1946)։

բից ի վեր այս երկրումն են ապրում, բնիկներ չեն եւ որեւէ իրաւունք չունեն իրենց բնակած երկրի վրայ, մինչ թուրք թափառաշրջիկները, որոնք Պոլսոյ ծովափը հասան 1453ին և իրենց իշխանութիւնը պարտադրեցին ուրիշներին՝ սրբազնասուրբ են»։

Հեղինակը չի ընդունում, որ «թափառաշրջիկ»ը իրականին մէջ այսքան «սրբազնասուրբ» է։

Չի ընդունում, որ Թուրքիա իր դիրքով եւ կշռով աւելի իրաւունքներ ունի Նեղուցների վրայ, քան ունի Ռուսիա։

Չի ուզում հաշտուել այն մտքին, որ իր հայրենիքի այլին «թուրքերի ազգային իրաւունքները բարոյապէս կարող են աւելի գերադաս լինել, քան ռուսների բնական, աշխարհագրական իրաւունքները»։

«Եթէ Միացեալ Նահանգների կառավարութիւնը Ռուսիոյ դիրքին մէջ լինէր, — նկատում է Վ. Շինան, — վաղո՞ւց գրաւած կը լինէր Նեղուցները», երբ մանաւանդ ստոյգ է, որ «աշխարհի մէջ կարելի չէ գտնել մէկ այլ ջրանցք, որ արժէքաւոր լինէր եւ միաժամանակ թողուէր տկար պետութեան պաշտպանութեան տակ»։

Ապա դառնալով Նեղուցներին՝ հեղինակը գրում է.

«Կենտրոնական Ամերիկայի ժողովուրդներ որեւէ իրաւունք չունեն Պանամայի ջրանցքի վրայ։ Սպանիա իրաւունք չունի Ջիբրալտարի վրայ, կամ Իտալիա՝ Մալտայի վրայ, սակայն թուրքերը կարծես թէ երկնքից են նետանկուել իբր պահապաններ Դարդանելի եւ Վոսփորի վրայ, եւ անպատճառ այդ Նեղուցները իբրեւ սեփականութիւն պէտք է պահեն եւ իրաւազրկեն Ռուսիոյ 130.000.000նոց ժողովուր-

դը՝ նրան բանտուած պահելով ցամաքի վրայ, ինչպես որ եղած է հարիւրաւոր տարիներից ի վեր»։ *)

1947 Յունուար 6ին հրապարակային ճառ խօսելով Բրուսելում և Ֆ. Միութեան հողային պահանջներին դառնալով՝ Անգլիոյ Աշխատաւորական կուսակցութեան նախկին նախագահը՝ պրոֆ. Հարոլդ Լասկի՝ յայտարարում էր.

«Երբ Ֆ. Միութիւնը հողամաս է պահանջում՝ բացագանչում են,— «Աշխարհակալութի՜ւն», իսկ երբ Միացեալ Նահանգները խաղաղական հարաւային կղզիներն են պահանջում եւ կամ խարիսխներ են ուզում Իսլանդիայում, այն ժամանակ ասում են,— «Քաղաքակրթութեան փրկութի՜ւն»։ **)

Լասկի իր խօսքը եզրափակում էր՝ յայտարարելով.

«Ֆ. Միութիւնը խաղաղութիւն է ուզում, եւ մենք այս խաղաղութիւնը նրա հետ պէ՛տք է որ կառուցենք»։

Աւելի բուռն էր բողոքը աշխատաւորական ներեսփոխաններ Ֆրէդ Լոնգտընի և Ժ. Սիլվերմէնի, Բիրմինգեմի մէջ, 1947 Փետր. 17ին.

«Ինչո՞ւ ռուսների իրաւունքը պիտի ջնաճաջեինք Թուրքիոյ մէջ, Դարդանելի հարցի շուրջ,— բացագանչում էր Ֆ. Լոնգտընը,— երբ մենք եւ ամերիկացիք ռազմագիտական կէտեր ունենք աշխարհի զանազան կողմերում»։ ***)

Ահա կարծիքը նաև Ռուզվելտի զաւակին՝ Էլիոթի, որ իր մեծանուն հօրը հետ ներկայ եղած է պատերազմի չրջանի գրեթէ բոլոր կարևորագոյն խորհրդաժողովներին և որ, հետեւաբար, լաւատեղեակ է այն

*) Ա. Շիհան — «Նեղուցներ» («Հայր.», 11 Հոկ. 1946):

**) «Յուս.», 8 Յունուար 1947:

***) "Յուս.„ 18 Փետր. 1947:

ընդհանուր մթնոլորտին, որ իշխում էր այդ խորհրդաժողովներում։

Հանդէս գալով Նիւ Եորքի մշակութային մէկ մեծ ընկերակցութեան հաւաքոյթին, Է. Ռուզվելտ, ըստ «Նիւզուիք» պարբերաթերթի, յայտարարում էր.

«Միացեալ Նահանգները պէտք չէ միջամուխ լինեն Դանուբի շրջանի անցուդարձերին։ Ամերիկեան զինուորները չկռուեցին նրա համար, որպէսզի միջազգային վարչակարգ հաստատուի Դանուբի աւազանի կամ Նեղուցների շրջանի մէջ։

«Պէ՛տք է որ խորհուրդները,— ինքնին հասկանալի է այս — տիրական մաս ունենան Սեւ ծովի Նեղուցների հակակշռի մէջ։ Նրանք միամիտ պիտի լինեին, եթէ համաձայն զսնուէին այդ ջրուղիների միջազգայնացումին, բացառութեամբ այն դէպքի, երբ Միացեալ Նահանգները իրենք իրենց հերթին կը համաձայնուէին Պանամայի ջրանցքի միջազգայնացումին, իսկ Մեծն Բրիտանիան կ'ընդուներ միջազգային վարչակարգ հաստատել Սուէզի եւ Ջիբրալտարի համար»։ *)

Բայց նոյնը պէտք է անել ոչ միայն Դարդանելի և Դանուբի, այլ բոլո՛ր ջրանցքների ու բոլո՛ր մեծ գետերի նկատմամբ, որոնք յայտնապէս միջազգային հանգամանք ունեն։

Հռենոսը ոռոգում է Զուիցերիոյ, Գերմանիոյ, Ֆրանսայի և Հոլանդայի հողերը՝ ունենալով մօտաւորապէս եռակի արժէքը Դանուբի։

Էլբան կտրում և անցնում է Չեխոսլովակիոյ և Գերմանիոյ հողերից։

*) «Յուս.», 28 Նոյ. 1946:

Նեղոսը ընդարձակ տարածութիւնների վրայ գրկում է Հաբեշիստանի, Սուդանի և Եգիպտոսի արդաւանդ դաշտերը։

Կանադան և Հիւս. Ամերիկան միանաբար շահագործում են Հուդսընի և Լաբրէնտիայի ջրային ընդարձակ ճանապարհը։

«Միջազգայնացո՛ւմ ռազմագիտական օրջանների, — յանուն խաղաղութեան և համագործակցութեան պահանջում էր Հէնրի Ուոլաս, — մեջը հաշուելով նաեւ Դարդանելը, Սուեզը եւ Պանաման»։*)

Այս կարգի կոչերը մնում են անարձագանգ սակայն. միջազգայնացում — հնարաւոր և իրական — չի պահանջւում այնտեղ՝ ուր չկայ Ս. Միութիւնը, մինչ պահանջւում է այնտեղ՝ ուր նա կայ։

Այս խտրական վերաբերումն է, որ Նեղուցների հարցում բազմացնում է համակիր ձայները ի նպաստ Ս. Միութեան պաշտպանած դատի։

Եւ ճիշտ այս հանգամանքն է, որ իրաւունք է տալիս խորհրդային գրիչներից Կ. Սերեոժինին գրելու.

«Սուէզի և Պանամայի ջրանցքներով շահագործուած են շատ պետութիւններ։ Եթէ հարկ է խօսել «հաւասար հնարաւորութեանց» սկզբունքի մասին, ապա այդ սկզբունքը ամենից առաջ այստե՛ղ պէտք է կիրարկել»։ Որովհետեւ «այդ ջրանցքները իրենց աշխարհագրական դիրքով և բնոյթով միշտ եղած են ճշմարտօրէն միջազգային հաղորդակցութեան ճամբաներ և ծառայած են աշխարհի տարբեր մասերում տեղաւորուած երկրներին և ժողովուրդներին։ Այս ժողովրդների կենսական շահերը պահանջում են, որպէսզի իրաւ միջազգային վարչակարգ հաստատուի Սուէզի և Պանամայի ջրանցքներում»։*)

Ցարդ դիտակցօրէն չանդրադարձանք մի ուշադրաւ կէտի։

Մենք տեսանք, թէ որքան բուռն կերպով Անգլիա և Ամերիկա ընդդիմանում են Ս. Միութեանը Նեղուցների հարցում. չեն ուզում ո՛չ խարիսխ տալ նրան այդ ջրուղիների ափերին և ոչ էլ բացառիկ իրաւունքներ՝ այդ ջրաճամբաներին հաստատուելիք վարչամարմնի մէջ։

Սակայն չէ՞ որ մասնաւորաբար Անգլիա իր 1915 Մարտ 12 պատմական յուշագրով Ռուսաստանին ոչ միայն խարիսխ և հսկողութեան իրաւունք էր խոստանում Նեղուցների մէջ, այլ և յօժարում էր պատերազմի յաջողակ վախճանին նրա անդառնալի սեփականութիւնը նկատել ե՛ւ Նեղուցները, ե՛ւ Պոսֆորը, ե՛ւ Մարմարան (յարակից հողաշերտերով եւ կղզիներով միասին)։

Ինչո՞ւ այս մասին ոչ ոք ձայն-ծպտուն չի հանում, ո՛չ Անգլիան և ոչ էլ Ս. Միութիւնը։

Ինչո՞ւ երբէք ամէն բան կարելի էր զիջել. իսկ այսօր կարելի չէ ոչ իսկ խարիսխ տալ։**)

---

*) «Ուոլասի նառը միջազգային կացութեան մասին» («Ցուս.», 15 Ապր. 1947):

*) Ն. Սերեոժին — «Համաշխարհային ծովային ճամբաները եւ միջազգային յարաբերութիւններ» («Նոր ժամանակներ», Մոսկուա, 1947, թիւ 2, էջ 31):

**) Լոնդոնի պարբերականներից "Cavalcade„ իր 1946 Նոյեմբերով յայտնում էր, որ իբրեւ թէ Միացեալ Նահանգների նախագահ Ռուզվելտը զաղտնի համաձայնութեամբ Ս. Միութեան հետ յօժարած էր հետեւեալ զիջումին.

«Ամերիկայի Միացեալ Նահանգների նախագահը ընդունում է, թէ Ս. Միութեան համար կենսական է ազատ անցք ունենալ դէպի Միջերկրական, ինչպէս նաեւ կարելիութիւն ունենալ ազդուորէն հսկելու կացութեան ապահովութեան վրայ Սեւ ծովում եւ Նեղուցներում:

«Ս. Միութիւնը յանձն է առնում այս հարցը ենթարկել հայեցո-

Թէ ինչո՞ւ Ռ. Միութիւնը չի յիշում անցեալը՝ այդ մասամբ հասկանալի է։

Չի յիշում նախ այն պատճառով, որ ինք ընդհանրապէս հրաժարած է ցարական Ռուսիոյ աշխարհակալ անցեալից, իսկ մասնաւորաբար Պոլսից հրաժարած է իր 1917 Նոյ. 24 դեկրետով։

Երկրորդ՝ չի յիշում այն պատճառով, որ ինք, խարխուլ և հակոդութիւն պահանջելով Նեղուցներում, ոչ թէ աշխարհակալ քայլ է կատարում Թուրքիոյ վերապետութեան դէմ այս ջրերի վրայ, այլ կռուան է ստեղծում՝ Թուրքևխորհրդային միացեալ ուժերով իր և Թուրքիոյ ապահովութիւնը պաշտպանելու համար։

Եւ, վերջապէս, չի յիշում նաև այն պատճառով, որ ինք դեմ է Թուրքիոյ բաժանումին, մինչ իր նախորդը՝ ցարական Ռուսիան՝ Պոլիսն ու Նեղուցները պիտի ստանար ճիշտ ա՛յդ հիմունքով։ Անգլիա եւ Ֆրանսա յօժարում էին առաջին մեծ պատերազմի այդ «ամենէն թանգարժէք վաստակը», ինչպէս որ պիտի ասէր Գրէյ, զիջելու Ռուսիոյ, կանխապէս նոյն Ռուսիոյ համամտութիւնը առնելով այն մասին, որ փոխադարձաբար ինք եւս համարժէք զիջումներ պիտի անի իրենց «Թէ՛ Թուրքիոյ այլ մասերում եւ Թէ տարբեր տեղերում»։

Սրանք են, թւում է մեզ, հ. Միութեան լռութեան գլխաւոր պատճառները։

Արդար է ենթադրել, որ մասնաւորաբար Անգլիա լուռ է եւ չի անդրադառնում 1915 մարտեան յուշագրին առաւելաբար երրորդ պատճառով։

զութեանը Միջազգային ապագայ Կազմակերպութեան, ուր խնդիրը ճնշութեան պէտք է առնուի հաւասական ապանովութեան շրջագծի մէջ, բայց միշտ ճկայի առնելով Ռ. Միութեան մասնաւոր շահերը, իբրեւ Սեւ ծովի եզերակայ մեծագոյն պետութիւնը։

Չի կարողանում ասել.— «1915ին ես տուի՝ փոխարժէքը հեզանից առնելու պայմանով, մինչ այսօրդու ուզում ես առնել՝ առանց փոխարէնը ինձ որեւէ բան տալու»։

Եւ 1915ի նկատմամբ լրիւ արդար պիտի լինէր Անգլիոյ այս խօսքը։

Այդ շրջանի ռուսարհատեն ոգիի պատկերը գծած լինելու համար, խորհրդային դիւանագիտական մեծարժէք հատորների (ցարական շրջանի) բազմանրամուտ խմբագիրը՝ Մ. Պոկրովսկիյ՝ նկատում էր.

«Միայն Թուրքիոյ բաժանման փաստը, որին մենք տեղեակ ենք այսօր գնդ. Հաուզի հրապարակած Թղթերից, եւ որին հաւասար փութաջանութեամբ — կարծես այդ երկրում Թուրք իսկ եղած չլինէր — ձեռնարկած էին (պատերազմի շրջանին և պատերազմի վախճանին.—Ն.) Լոնդոնում և Ուաշինգտընում», այդ փաստը բաւական է համոզուելու համար, Թէ հզօրները ի՛նչ են հասկանում «ազատութիւն և քաղաքակրթութիւն ասելով»։*)

Սակայն այս ճշմարտութեան «ոսկի հատիկ»ը կայ նաեւ այսօր։ Նաեւ այսօրուան բուռն պայքարի մէջ Անգլիա եւ Ամերիկա՝ Թուրքիան պաշտպանելով՝ իրե՛նց են պաշտպանում եւ իրե՛նց շահերը նրա կատի ունեն։

Տարբերութիւնը այնտեղ է միայն, որ հակընդդէմ շահերի շուրջ մրցորդ ոյժերը երբէկ լեզու գտած էին, մինչ այսօր այդ լեզուն գտած չեն տակաւին։

Ճիշտ եւ արդար չէ մտածումը այն՝ մարդոց, որոնք կարծում են, Թէ Անգլիա 1915ին «խաբեց» Ռուսիան, սին խոստումներով նրան նետեց պատե-

---

*) «Միջազգային Հարաբերութիւններ Աշխարհակալութեան Դարաշրջանին», Շարք 3րդ, հ. Ա., 1931, Մոսկուա, էջ VIII։

բազմի մէջ, իսկ վերջաւորութեան՝ առանց ոչնչի նոյն պատերազմից նրան դուրս քշեց։

Բնաւ եւ երբեք։ Եթէ Ռուսիա մնար ռազմաճակատների վրայ եւ Բրեստում կնքուած անջատ — եւ ամօթալի — խաղաղութեամբ պատերազմից դուրս չգար, ապա Խաղաղութեան վեհաժողովում նա նոյն պատուաւոր տեղը պիտի ունենար, ինչ որ ունէր 1815ին՝ Վիեննայում, եւ ինչ որ նա ունի այսօր՝ երկրորդ համաշխարհային պատերազմի վախճանին։

Այդ դէպքում դարաւոր «հիւանդ»ը պիտի գար սեղանի վրայ եւ անխուսափելիօրէն ենթարկուէր հիմնական անդամատումների։

Այսպէս չեղաւ սակայն։ Գործը մնաց թերի. Անգլիա եւ Ֆրանսա լայնօրէն իրենց բաժինն առան, մինչ Ռուսիա ոչ միայն հողային չան չունեցաւ Թուրքիոյ մէջ, այլ ինքն իսկ հող տուաւ նրան Անդրկովկասի մէջ։ Եւ անգամ այսօր նա այդ հողը — Կարս, Արդահան եւ այլն — բուռն ընդդիմութեանը հետեւանքով Անգլիոյ եւ Ամերիկայի՝ չի կարողանում ետ ստանալ։ *)

---

*) «Ալլուս»ի 1947 Ապր. 10ի թուով թերթի խմբագրապետներից Նինաղ Էդիմ — մէկը Սան Ֆրանչիսկոյի թուրք պատուիրակութեան անդամներից — գրում էր.

«1945ին կրկնուած հողային պահանջների, ինչպէս եւ Նեղուցներում խարիսխ ունենալու առաջարկի մասին Խ. Միութիւնը բաց թէ Բողարկուած կերպով խօսած է Թուրքիոյ արտ. գործոց նախարար Սարաջօղլուին, երբ նա 1939ին գնում էր Մոսկուա»։

Ամենէն ուշագրաւն այն է սակայն, որ Խ. Ռուսիա, ըստ «Թասվիրի, «Թուրքիայից հայերին հող տալու անհրաժեշտութիւնը տեսած է» տակաւին **1920ին**. Այս հողը Խ. Ռուսաստանը պահանջում էր, ըստ «Թասվիրի, «Վանի, Բիթլիսի եւ Մուշի շրջանցներից» («Ցուս.», 22 Մարտ 1947)։

Այլ է Ռուսիոյ պարագան։

Նա չի կարող — եւ չի ուզում — իր Դաշնակիցներին ասել.— «Ձեռկ դուք առիք՝ առանց ինձ որեւէ բան տալու, իսկ այսօր ես պէտք է առնեմ՝ առանց որ դուք փոխարէնը որեւէ բան պահանջէք ինձանից»։

Չի կարող այս բանն ասել, որովհետեւ մէ՛կ աշխարհ էր երէկ, տարբեր աշխարհ է այսօր։

Չի ուզում ասել, որովհետեւ մէ՛կ Ռուսաստան էր երէկ, այլ Ռուսաստան է այսօր։

1914ից այս կողմ հինգ մեծ կայսրութիւններ տրորուեցին և քշուեցին պատմութեան բեմից,— Աւստրօ-Հունգարիա, Գերմանիա, Իտալիա, Ֆրանսա և Ճապոն։

Այսօր աշխարհի պատմաբեմին՝ իբրև դերակատար ու աշխարհավար ոյժեր՝ երեք Մեծեր մնացած են միայն,— Անգլիա, Ամերիկա և Խ. Միութիւն։

1914ից այս կողմ տեղի ունեցաւ և մէկ այլ, դարձեալ աշխարհակշիռ իրադարձութիւն,— ռուսական երկու ահարկու յեղափոխութիւններից ծնաւ Բոլշեւիզմը, ոչ իբրեւ կուսակցութիւն, այլ իբրեւ Պետութիւն։ Այսօր-վաղը նա իր գոյութեան երեսնամեակը պիտի տօնի՝ հիմնապէս ուրոյն և արտաշխարհին հակադիր կարգերով՝ ընկերային, տնտեսական և քաղաքական։

Այն աշխարհը, որի արգանդից ծնունդ առան Նեղուցներին վերաբերող վեց պատմական փաստաթղթերը, գնաց առյաւէտ, և նրան փոխարինելու եկաւ մի նոր ու տարբեր աշխարհ։

Այս նոր աշխարհը, որպէսզի կարողանայ խաղաղութեան մէջ ապրել և ստեղծագործել, խարսխուած պէտք է լինի ուժերի որոշ հաւասարակշռութեան վրայ։

«Անգլիոյ առաջադրանքն է,— նկատում էր 1923ի Նոյ.ին հրապարակած իր մի յօդուածում Մեծն Բրիտանիոյ առաջին աշխատաւորական վարչապետը՝ Ռամզէյ Մակդոնալդ,— որոնց հաւասարակշռութիւն հաստատել Եւրոպայի մէջ»։ *)

Այսօր նոյնութեամբ այս նոյն առաջադրանքը իր ուժը պահում է Անգլիոյ համար, բայց ոչ միայն Եւրոպայի, այլ համայն աշխարհի նկատմամբ։

Նոյնը նաև Ամերիկայի համար։

Այսօր «Մընրոյի վարդապետութիւնը» (ամերիկեան կիսագնդից դուրս չմիջամտել ուրիշների գործերին) փոխարինուում է «Տրումընի վարդապետութեամբ» (միջամտել), որովհետեւ երբէք, առանց միջամտելու, ղեկավարութեամբը Անգլիոյ, որոշ հաւասարակշռութիւն պահուում էր աշխարհում, մինչ այսօր, առանց ամերիկեան միջամտութեան, չի պահուում։

«Միջազգային ծաւալով «ուժերի հաւասարակշռութիւն» պահել,— նկատում է ռուս սոցիալ-դեմոկրատ պարագլուխներից Ռ. Աբրամովիչ,— եւրոպական պետութեանց և, առաջին հերթին, Մեծն Բրիտանիոյ գործն էր։ Ամերիկայի հոգը չէր, թէ ի՞նչ է կատարուում «Արեւելեան Կիսագունդ»ում։ Այսօր իսկ, հակառակ այն հսկայ տեղաշարժին, որ միջազգային յարաբերութեանց մէջ արդէն կատարուած է թէ՛ պատերազմի տարիներին և թէ պատերազմի վախճանին, Միացեալ Նահանգների օրէնսդիրներն ու վարիչները մեծ դժուարութեամբ են հաշտուում այն մտքին, որ համաշխարհային հաւասարակշռութեան կենտրոնը վաղուց հաստատուած է «Ուաշինգտընի միջօրէականի» վրայ և անցնում է Միացեալ Նահանգների տնտեսական, արդիւնաբեր-

*) «Պատմ. Դիւանագիտութեան», հ. Գ., էջ 275։

ական եւ զինուորական զօրութենականութեան (potentiel) միջից...»։ *)

Մենք վկայ ենք այսօր, թէ ի՞նչպէս Ամերիկա, իր վարիչների կամքով թէ հակառակ նրանց կամքի, լծուած է ուժերի խախտուած հաւասարակշռութիւնը վերահաստատելու։

Իսկ այս հաւասարակշռութիւնը, գէթ որոշ պատմաշրջանի համար, կարելի է հաստատել ոչ թէ անջատաբերն միայն Նեղուցների խնդիրը քննելով, այլ, ինչպէս որ ճիշտ կերպով նկատում էր Լոնդոնի պարբերականը, համաձայնութեան գալով բովանդակ Արեւելքի, որ ասել է՝ նաև ամբողջական Թուրքիոյ շուրջ։

«Խաղաղութիւնն անկարելի է աշխարհում,— Պրագայում 1947 Ապր. 21ին տուած իր հրապարակային բանախօսութեան մէջ յայտարարում է Մեծն Բրիտանիոյ աշխատաւորական կուսակցութեան նախկին նախագահը՝ պրոֆ. Հարոլդ Լասկի,— առանց Խ. Միութեան, Մեծն Բրիտանիոյ եւ Միացեալ Նահանգների միջեւ հաստատուն համաձայնութեան, իսկ այս համաձայնութիւնը կարելի է նոյնիսկ Միջին Արեւելքի հարցի նման մի փափուկ հարցում...»։ **)

Եւ ինչո՞ւ կարելի պիտի չլինի, եթէ երբեք կողմերը՝ թէ՛ Խ. Միութիւնը, թէ՛ Անգլիան և թէ Ամերիկան՝ հաւասարապէս պատրաստ են զիջումներ՝ աւերներից և զարդերից յոգնած մարդկութեան խաղաղութիւն պարգեւելու համար։

Մեծահռչակ աշխարհագիր Էլիզէ Ռեկլիւն իր «Ընդհանուր Աշխարհագրութեան» մէջ նկատում էր։

*) Ռ. Աբրամովիչ — «Մոնոմախի մորթէ զդակը» («Ս. Վեսցիկ», նիւ Եորք, 12 Մարտ 1947, թիւ 3)։

**) «La Bourse Egyptienne», 23 Ապր. 1947։

«Ռուսիան, որ իր հիմի մէջ ցամաքային մեծ պետութիւն է, ամէն տեղ, իր ճանապարհին, Պոլսից մինչև Տեան-Ցզին, ցցուած է տեսնում իր առջև ծովային մեծ պետութիւնը, իր ռազմատորմիղով, իր ռազմադիրքերով, իր առեւտրական ցանցով եւ իր գաղութներով Անգլիան հարուածում է բովանդակ Հին Աշխարհի շահերը»։

Ելք չգտնելով այս կացութիւնից՝ աշխարհագիրը եզրափակում էր.

«Աշխարհի ճակատագիրը մօտ ապագային պիտի վճռուի Միջին Ասիոյ լեռնոտիեշերին, այն երկրներում, ուր, ըստ բազմաթիւ աւանդութեանց, ծագել է մարդկային ցեղը, և ուր արիացիները որոնում են ծննդավայրը իրենց նախնիների»։ *)

Եւ անշուշտ. եթէ ուժերի և շահերի միջև համաձայնութեան և հաշտեցման եզրեր չգտնուեն, ապա կը մնայ այն միւս ճանապարհը, որի մասին Ռեկլիւները խօսում են ցաւով, իսկ աշխարհի բոլոր հրձիգներն ու յետադէմ ոյժերը՝ խորին կարօտով։

«Միմիայն Մեծն Բրիտանիան եւ Միացեալ Նահանգներն են,— գրում է այս հրձիգներից Ն. Սադաք,— որ ի վիճակի են մէկ դար ու թերեւս աւելի երկար ժամանակ պատերազմ մղելու Ռուսիոյ դէմ»։ **)

Չենք կարծում, թէ այսքան դիւրին է մէկ դարի ծանրութեամբ պատերազմ պարտադրել մարդկութեան. մեր աշխարհը չի դիմանայ այդ կոտորածին. երբ մանաւանդ ամէն յաղթանակ պատերազմի մէջ՝ յաղթանակ չէ նաեւ խաղաղութեան մէջ։

Սարսել եւ խորտակել մեր աշխարհի վարիչ ուժերը — Անգլիա, Ամերիկա եւ Ս. Միութիւն — դիւրին չէ։

*) «Նովոյա Ռոսիա», 1 Նոյ. 1939, թիւ 72:

**) «Ազգամ», 1946, Հոկտ. (օրդ, տարաբախտաբար, նշանակած չեմ):

Եթէ ճիշտ է Մեծն Բրիտանիոյ մասին ասուած այն խօսքը, թէ «Անգլիա կորցնում է նակատամարտները, սակայն շահում է պատերազմները», ապա նոյնքան ճիշտ պիտի լինէր ասել Ռուսիոյ հասցէին — նրա երկիրը, ժողովուրդը, պատմութիւնն ու մշակոյթը նկատի առնելով — թէ «Ռուսիա եթէ իսկ կորցնում է պատերազմները, դարձեալ շահում է յաղթանակները»։

Այսպէս էր երէկ, երբ Ռուսիոյ տնտեսական հիմը համապատասխան չէր իր ռազմա-քաղաքական ուժին եւ իր հզօր մշակոյթին։

Համոզուած ենք, որ այսպէս պիտի լինի մանաւանդ սրանից յետոյ, երբ ստոյգ գիտենք, որ Ս. Միութիւնը հիմից փոխած է նախկին Ռուսիոյ բացառաբար երկրագործական պատկերը, եւ այս երկիրը դարձրած է արդիւնաբերական մի վիթխարի ուժ։

Այս ուղղութեամբ իր սպառած ճիգերը աւելի արդիւնաւոր պիտի լինեն մանաւանդ ապագային, երբ անկասկած է այլեւս, որ ցամաքի վրայ իր հզօրագոյն մրցորդը՝ Գերմանիա՝ անկարող է դիւրութեամբ ոտքի կանգնել և նախկին թափով իր տնտեսութիւնը զարգացնել։ Իր տեղը մի զգալի չափով վաղը պիտի գայ բռնելու այսօրուան Խորհրդային Միութիւնը։

Սակայն Ռուսիա ունի հզօրանքի նաեւ մէկ այլ եւ ինքնայատուկ աղբիւր, ոչ նուազ մեծակշիռ, քան իր տարածքը և իր հիմնական ժողովուրդի համախումբ վիճակը։

Մեր խօսքը իր անի մասին է։

Ռուսիոյ հզօրանքի գլխաւոր աղբիւրը իր անի մէջ է առաւել, քան իր տարածքի եւ համախմբումի

(այս վերջին երկուսը առնելով թէ իբրեւ նակաս և թէ իբրեւ թիկունք)։ *)

Անիմանալի են աշխարհի բաները. ինչո՞ւ չէ. Ուսիա պատերազմներ կորցրած է անգեալին ու կարող է կորցնել նաեւ. ապագային։

---

*) Մեծն Պետրոս — ռուս պատմութեան առաջին կայսրը — երբ 1725ին մեռաւ, ձգեց մի երկիր, որ 13 միլիոն բնակիչ ունէր. այսօր ռուս երկիրը շուրջ 200 միլիոն բնակիչ ունի, մի բանակ, որին նայ նայում ոչ միայն նորանոր կցումներով, այլ եւ իր բնական աճի նանապարհով (այս վերջին գծով՝ ենգապատկուեցաւ իր թիւը, 13 միլիոնը հասցնելով 65 միլիոնի)։

«Եւրոպայի եւ Խ. Միութեան ազգաբնակչութիւնը»,— այս թռուցիկը Գրիսբրնի (Անգլիա) համալսարանի Վիճակագրական Դասընթացքը, որ գործում էր նախկին Ազգաժողովի յանձնարարութեամբ, 1944ի գարնան մի ուշագրաւ ուսումնասիրութիւն լոյս ընծայեց, ուր փորձում էր տալ թիւը այն ազգաբնակչութեան, որ 1970ին պիտի ունենան Եւրոպան եւ Խ. Միութիւնը։

Ըստ այս ուսումնասիրութեան, խորհրդային 11 հանրապետութեանց (եւ ոչ 16) բնակիչների թիւը, որ 1940ին հասնում էր 174 միլիոնի, 1970ին, երեսուն տարի վերջ, պիտի բարձրանայ 251 միլիոնի (յաւելում՝ 77 միլիոն)։ մինչ նոյն ժամանակաշրջանին Եւրոպայի բնակիչների թիւը, որ 1940ին հասնում էր 399 միլիոնի — աւելի քան կրկնակին Խ. Միութեան թուի — 1970ին պիտի բարձրանայ 417 միլիոնի (յաւելում՝ ընդամէնը 18 միլիոն, երբ այս յաւելումը պիտի լիներ 77 միլիոնի կրկնակին, եթէ երբեմ Եւրոպան նոյն ոգին ունենար, ինչ որ ունի Ռուսիան)։

Աճի մէջ նոյն դանդաղումը, ըստ Գրիսբրնի վիճակագիրների, նաեւ Հիւս. Ամերիկայի մէջ.

"... Արեւմտեան քաղաքակրթութեան հին աշխարհի մայրամուտը (ներառնելով նաեւ Հիւս. Ամերիկան) անխուսափելի է,— նկատում է Ս. Շվարց,— քաղաքակիրթ աշխարհի կենտրոնի տեղաշարժը դէպի արեւելք — կէս դարու խնդիր է»։ (Մանրամասներ տե՛ս **Ս. Շվարց** — «Ուսիոյ ժողովրդագրական դէմքը», «Նովրիյ Ժուռնալ», Նիւ Եորք, 1944, գիրք VIII, էջ 219—235)։

Մեր օգտագործած հարցին ուշագրաւ յօդուած ունի նուիրած նաեւ Լրանսացի ծանօթ վիճակագիր Պիեռ Ժորժ (տե՛ս «Population», N° 3, Յուլիս-Սեպտ. 1946)։

Սակայն սլաւ — տոկուն, թարմ ու յառաջադէմ — ցեղը, պատերազմներ կորցնելով հանդերձ, կեանքի մէջ մի՛շտ յաղթանակած ու մի՛շտ յառաջացած է, առաւելաբար իր անդիմադրելի աճի բերումով։

Իր ուժի այս կենսաշորշ աղբիւրը խաղաղութեան մէջ նրան տուած է բազմապատիկը այն կորուստի, ինչ որ ինք կրած է պատերազմների մէջ։

Ֆրանկուգերման յարաբերութեանց մէջ յարատեւող տագնապի խորունկ պատճառը տարբեր տեղ չէ, քան այս աճի մէջ. Գերմանիան աճում է, իսկ Ֆրանսան՝ ոչ։

«1870–71ի Ֆրանս-պրուսական պատերազմի շրջանին,— նկատում է Գ. Նիկոլսբնի գրքին կցած իր յառաջաբանում Լոնդոնի նախկին խորհրդային դեսպան Մայսկին,— Ֆրանսա և Գերմանիա գրեթէ հաւասար ազգաբնակչութիւն ունէին, Ֆրանսայի մէջ 37 միլիոն մարդ, իսկ Գերմանիոյ մէջ՝ 41 միլիոն։ Դէպի 1914ը պատկերը խստօրէն փոխուում է. առաջին համաշխարհային պատերազմի նախաշեմին Ֆրանսա 40 միլիոն բնակիչ ունէր, մինչ նոյն շրջանին գերման բնակիչների թիւը բարձրացած էր 67 միլիոնի»։ *)

Եւ ճիշտ այդ միակ — ու հիմնական — պատճառով առաջին մեծ պատերազմի յաղթականը՝ Ֆրանսա՝ իրականին մէջ պարտուած էր (ինչպէս եւ եկաւ վկայելու երկրորդ մեծ պատերազմը), մինչ պարտուած Գերմանիան՝ յաղթական (Ֆրանսայի բաղդատմամբ անշուշտ)։

Նոյնն է մնում պատկերը նաեւ այսօր, քանի տակաւին սպեղանին գտնուած չէ երկու ազգերի

---

*) Գ. Նիկոլսբն — «1919ին ի՞նչպէս ստեղծուեց խաղաղութիւնը», Մոսկուա, 1945, էջ 7։

տկարութեան և հզօրանքի աղբիւրը հանդիսացող այս հիմնական հարցում՝ նրանց անի խնդրում։*)

Լորդ Վանզիդարտները Գերմանիոյ նկատմամբ կարծում են, թէ արհեստական միջոցներով կարելի է — մանաւանդ այսօր, երբ Գերմանիան անպաշտպան է — այդ աճը կեցնել։

Սակայն նոյնը կարելի չէ գործադրել Ռուսիոյ նկատմամբ — ու կարելի չէ բազմաթիւ պատճառներով — եթէ անգամ Ռուսիա գալիք — եօթնի՛ցս անիծեալ — պատերազմից պարտութեամբ դուրս գայ։

Մեր աշխարհի բարգաւաճանքի աղբիւրը — խաղաղութեան մէջ է։

Միայն այս ճանապարհի վրայ, դէթ յառաջիկայ պատմաշրջանին, մարդկութիւնը կարող է փրկուել, ամրանալ ու վերափոխուել — հոգեպէս ու նիւթապէս — նոր ուժերով ու նոր հեռանկարներով իր գալիք զարգացման ուղիները գծելու համար։

«Ինչ որ մեզ («Երեք Մեծ»երիս.—Ն.) միութեան պէտք է մղեր իրապէս, ոչ թէ պատերազմն է, այլ՝ խաղաղութիւնը...», Թեհրանից զարձին՝ Թունուզ՝ ասած է Նախագահ Ռուզվելտը իր զաւակին՝ Էլիոթի։**)

Եւ արդարացի էր Նախագահը։

Այս արդար խաղաղութեան բանալիներից մէկը — Նեղուցների մէջ է։

*) Ըստ ժրանսական Վիճակագրական Պատասխանատու տուած թուերի՝ Ֆրանսա 1936ին 41.900 000 բնակիչ ունէր, մինչ 1946ին՝ տասը տարի վերջ՝ միայն 40.500.000 (1.400.000 պակաս), երբ երկրորդ մեծ պատերազմին տուած իր զոհերի թիւը հազիւ էր հասնում 150.000ի, իսկ տարագրուածների թիւը՝ 300.000ի (տե՛ս "Հայրենիք„, 19 Դեկտ. 1946)։

**) «Յուս.», 25 Նոյ. 1946։

Ի. Միութիւնը այսօր պահանջում է այդ բանալին — ոչ իբրև հողային կցում, այլ իբրև իրական երաշխիք — իր ապահովութեան և պաշտպանութեան համար։

Եւ որովհետեւ ապահովութեան և պաշտպանութեան խնդիրներ ունեն նաև միւս Մեծերը, ուստի, Նեղուցների կապակցութեամբ, Մեծերը համաձայնութեան պէտք է գան այն բոլոր «բանալի»ների շուրջ, որոնք գտնւում են ընդհանրապէս Արեւելքի մէջ։

Իր այն ճառի մէջ, որ աշխատաւորական Բեւինն արտասանեց Համայնքների Տան 1946 Փետր. 21ի նիստին — մի ճառ, որ կոչուած է պատմական և անմեռ մնալու — Անգլիոյ արտ. գործոց վարիչը յատակ բառերով յայտարարում էր.

«Անկեղծօրեն պիտի ասեմ, որ ջեմ ուզում Թուրքիան փոխակերպուած տեսնել արբանեակ պետութեան։ Ուզում եմ, որ Թուրքիան ազատ եւ անկախ մնայ»։

Նոյնը հետագային կրկնեցին Անգլիոյ եւ Ամերիկայի նաեւ միւս վարիչները, պահպանողական թէ աղատական, հանրապետական թէ ռամկավար։

Նրանք բոլորը կարծես լուռ կերպով ուզում էին ասել, թէ իրենց համար թերեւս նախընտրելի պիտի լինէր Նեղուցները ամբողջութեամբ տալ Ի. Միութեան՝ սակայն Թուրքիան ունենալ «ազատ և անկախ», քան Նեղուցները կիսով տալ Ի. Միութեան՝ սակայն Թուրքիան «ենթակայ» պահել այդ հզօր ուժին, դարձնել նրա «արբանեակ»ը Մերձաւոր Արեւելքում։

«Ի. Միութիւնը,— կարդում ենք Հիւս. Ամերիկայի Պետական Վարչութեան 1946 Սեպտ. 30ի յայտարարութեան մեկնաբանումի մէջ,— Նեղուց-

ներում կայաններ ունենալով՝ կարող է մեծ ճնշում բանեցնել Թուրքիայի կառավարութեան ներքին և արտաքին քաղաքականութեան վրայ»։*)

«Թուրքիան ընկերներ է որոնում,— գրում էր «Նիւ Եորք Տրիբիւն» իր 1946 Հոկտ. 6 թուով,— այլապէս պիտի դառնայ խամաճիկ պետութիւն Ռուսիոյ ճանկերի մէջ»։**)

Մորքին մէջ խօսքը ոչ թէ Նեղուցների մասին է, այլ՝ Թուրքիոյ։

Իրականին մէջ այս հին խնդիրն է, որ իր ամբողջութեանը մէջ կրկին գալիս է սեղանի վրայ։

Այսպէս է կեանքը. նա կրկին դառնում է այն կէտին — անշուշտ իր կերպարանափոխ ու ճոխացած ձեւի մէջ — որտեղից մեկնել է։

Փոխւում են մարդիկ, փոխւում են գաղափարներն ու բառերը, փոխւում են նաև երեւոյթներն ու իրաւակարգերը, բայց հիմին մէջ մի բան — ժառանգութիւնը դարերի — միշտ մնում է նոյնը։

Առէք, օրինակ, Հիւս. Իրանի Ատրպատականի պարագան։

Ի փոխարինութիւն այն փոփոխութեանց, որ Անգլիա առաջարկում էր կատարել ի նպաստ իրեն (Տիբետի հարցում) 1907ի անգլերուս դաշնագրի մէջ, ցարական Ռուսիոյ արտ. գործոց նախարար Սազոնով 1914 Փետր. 20 թուակիր գրութեամբ — «խիստ գաղտնի և շտապ» — հրահանգում էր արտասահմանեան իր դիւանագէտներին՝ Անգլիայից պահանջել, ի միջի այլոց, հետեւեալը.

«Պարսկական գործերի մէջ մենք անգլիացիներից հաւասարապէս կարող էինք պահանջել հետեւեալ ծառայութիւնները։ Նրանք, օրինակ, կարող

*) «Հայրենիք», 8 Հոկտ. 1946:

**) «Հայրենիք», 7 Հոկտ. 1946:

էին յանձնառու լինել մեր առջև, որ խոչընդոտ պիտի չհանդիսանան կազմութեանը փոստօրէն ինքնավար Ատրպատականի, ցման գլխաւորութեանը տակ Շոջա-էդ-Դոուլէի (ցարական մանկլաւիկներից.—Ն.), ռուսական հոգատարութեամբ, միաժամանակ Ատրպատականին կցելով հետեւեալ չրջանները, որ՝ է՛ր երբեմն՝ պատկանած են Ռուսիոյ (իբրեւ թէ Մեծն Պետրոսի ժամանակ!!...—Ն.),— Գիլան, Մազանդարան եւ Ատրաբատ»։*)

Աւելի ուշ թուականով, 1915 Փետր. 28ին, ռուս նախարարական դանլիճի մեծազգեցիկ անդամներից Ա. Կրիվոշէին, «խորհրդաբար» դիմելով նոյն դանլիճի անդամներից արտ. գործոց նախարար Սազոնովին, առաջարկում էր նրան՝ Դաշնակիցներից ռուսապարսիկ սահմանների մի այնպիսի «սրբագրում» պահանջել, որ Կարեագինի և Լենքորանի միջեւ դէպի հիւսիս ընկած պարսկական հողամասը «ամբողջապէս անցնէր մեզ»։ «Էլ աւելի ցանկալի կը լինէր,— շարունակում էր Կրիվոշէին,— հիւսիսային Ադրբէջանի կցումը»։ Այսքանով իսկ չգոհանալով՝ Կրիվոշէինն առաջարկում էր Ռուսիոյ կցել «արեւադարձային բոյսերի մշակոյթի յարմար» Գիլանն ու Մազանդարանը, «բամբակենու մշակոյթի յարմար» Ատրաբադի գաւառը և այլն։ «Վերոյիշեալ մարզերի կցումը,— եզրափակում էր Կրիվոշէին,— կայսրութեան սահմանները դէպի հարաւ ընդարձակելով՝ միաժամանակ կը լուծէր մի շարք վաղուց հասունացած խնդիրներ, որոնք առաջնակարգ կարեւորութիւն ունեն»։**)

*) «Մ. Ֆ. Ա. Դարաբաղցին», շարք Գ., հ. Ա., Մոսկուա, 1931, էջ 501:

**) «Հայոցացի աւտոնոմիան եւ անցանցան», էջ 78—79:

Պատմութեան այս անիւը դարձաւ-դարձաւ եւ երէկ եկաւ ու մի պահ կանգ առաւ... Ատրպատականի «ինքնավարութեան» դռների առջեւ։*)

Պատմութեան նոյն խաղերն են, որ պարբերաբար դարձել ու դառնում են նաեւ Պոլսոյ և Նեղուցների շուրջ։

«Թուրքիան 241 տարուան ընթացքին, — «Թասվիր»ի մէջ նկատում էր նրա խմբագրապետներից Զիյադ Էբբիւզիա, — ճիշտ 13 անգամ մարտնչած է Ռուսիոյ դէմ։ Նեղուցները ձեռք ձգելու համար՝ ռուսները տեւաբար զինուած յարձակումներ գործած են մեր վրայ»։**)

Այս յարձակումները յարատեւած են, որովհետեւ յարատեւած են նաև նրանց տուն տուող պատճառները։

241 տարիների ընթացքին անկարելի եղաւ լուծել Նեղուցների խնդիրը, որովհետեւ այս նոյն ժամանակաշրջանին անկարելի եղաւ լայն սահմանների մէջ ներդաշնակել անգլեւռուս շահերը։

Իսկ այսօր այս երկու Հսկաներին նոյն աշխարհամասի մէջ եկած եւ միախառնուած է երրորդը՝ Հիւս. Ամերիկան, ոչ իբրև հաշտարար ոյժ, այլ իբրեւ շահակից կողմ։

*) Արդար լինելու համար ասենք, որ աշխարհակալ տենչեր ունեն ոչ միայն մեծերը, այլ եւ փոքրերը։

Իր հերթին Պարսկաստանը առաջին խաղադրութեան Վերսայոյի (1919ի), ուր Ռուսաստանը չկար, սեռրազրութեանը տակ իր առ. գործոց նախարար Մոշաւեր-էլ-Մեմալէքի, Ռուսաստանից պահանջում էր 578.000 ք. ֆիլմ. տարածութեամբ հոգեր Կովկասում, որ ասել է՝ աւելի մեծ մի երկիր. բաց այսօրուան Ֆրանսան է... Եւ խորհե՛լ, որ Պարսկաստանը պատերազմիկ իսկ չէր... (Տե՛ս «Պատմ. Դիւանագիտութեան», հ. Գ., էջ 33)։

Ջուր է ասել, որ Պարսկաստանի պահանջի մէջ մտնում էր նաեւ ամբողջ Կովկասեան Հայաստանը։

**) «Ժամանակ» (Պոլիս), 3 Ապր. 1946։

1875ի Դեկտ.ին ցար Աղեքսանդր Բ., ընդունելով Պետերբուրգի Ֆրանսական դեսպան Լեֆլոյին — և նրա միջոցով իր խօսքը Եւրոպային ուղղելով — յայտարարում էր.

«Մ՛չ ես եւ ոչ հայրս երբեք նպատակ ունեցած չենք Պոլսոյ տիրանալու։ Ոչ այնքան մեր սիրուց դէպի Թուրքիան, այլ որովհետեւ ոչինչ չունենք նրա տեղը դնելու համար։ Սակայն Ռուսիա երբեք պիտի չհանդուրժէր, որպէսզի որեւէ մեծ պետութիւն, մանաւանդ Անգլիա, գար և հաստատուէր Ցարգրադում, և կամ, որպէսզի կրկին վերահաստատուէր բիւզանդական, այսինքն յունական կայսրութիւնը»։*)

Հորքին մէջ նոյնն էր կրկնում նաև վերջին ցարը՝ Նիկոլայ Բ.՝ Թուրքիոյ ներքին գործոց նախարար Թալէաթ բէյին, որ 1914ի Ապրիլին, Քրքական յատուկ առաքելութեան գլուխն անցած,

*) **Մ. Պոկրովսկիյ** — "Արեւելեան Հարցը", էջ 506։

Առ ի տեղեկութիւն գէթ ծանօթութեան մէջ յիշեսցէնք, որ Բիւզանդական Կայսրութեան վերականգնումի ծրագիրը յղացած էր ռուս զահակալներից նոյնիսկ Եկատերինան՝ փառաբանչ կայսրուհին։

«Ռուսիոյ վիճակուեց,— գրում է պատմարան Ն. Կարէեւ,— 18րդ դարում մի բանի պատերազմներ մղելու Թուրքիոյ դէմ, իսկ նոյն դարու երկրորդ կէսին զոյութիւն ունէր մինչեւ իսկ Եկատերինա Բ.ի հնչակաւոր ծրագիրը Թուրքիոյ բաժանման եւ Բիւզանդական կայսրութեան վերականգնումի մասին։ (Տե՛ս **Պրոֆ. Ն. Կարէեւ** — «Վերնանուր դասընթացք 19րդ եւ 20րդ դարերի պատմութեան», Մոսկուա, 1919, հ. Ա., էջ 125)։

Իսկ Եկատերինայի թոռը՝ Աղեքսանդր Ա.՝ հինգ տարի զահակալած իր թագակիր հորը՝ Պաւել Ա.ի սպանութիւնը գլուխ հանելուց յետոյ, յայտարելով իր մեծահռչակ տաքին, Վիեննայում, Սրբազան Դաշնակցութեան խորհրդաժողովին, ուր ինքն առաջին ցուցակահան էր, **թաղեց,** հակառակ Եկատերինայի ձգած թաղամական աւանդին, յոյն դաս. պատրաստ կանգնելով սուլթանի վերապատակալ իրաւունքներին...

Ելտա եկած էր՝ Թուրք կառավարութեան ողջոյնները բերելու համար Լիւադիա հանգստի եկած ցարական ընտանիքին.

«Թալէաթ բէյը յայտարարեց ինձ,— 1914 Ապր. 30 Թուականով «խիստ գաղտնօրէն» տեղեկագրում էր իր դեսպաններին արտ. գործոց նախարար Սազոնով,— որ իր ժամանումը Ելտա կապուած է բարեկամութեան և խաղաղութեան գործին (Ռուսիոյ հետ)։ Թուրքիա, նրա խօսքերով, եկած է այն համոզումին, որ ո՛չ մէկ մեծ պետութիւն, անգամ եթէ փափագ ունենայ, չի կարող զգալի վնաս հասցնել Թուրքիոյ և վտանգաւոր լինել նրա համար, Ռուսաստանից բացի»։

Ըստ տեղեկագրի՝ Սազոնովի եւ Թալէաթի զրոյցին մասնակցում է նաև ցարը.

«Թալէաթի հետ զրոյցի բռնուելով,— գրում էր Սազոնով,— Թագաւոր կայսրը բարեհաճեց մատնանշելու, որ ռուսաւթուրք յարաբերութեանց մէջ ամենէն էականը այժմ Նեղուցների հարցն է։ Ռուսիա անտեսական մարզում ո՛չ մէկ պահանջ չի առաջադրում, նա չի ձգտում չահագործելու իր հարեւանին այնպէս, ինչպէս որ չահագործում են արեւմտեան պետութիւնները, որովհետեւ իր ունեցած հարցերը իրեն կը բաւեն։

«Մենք ուզում ենք,— ասաւ կայսրը,— որ Թուրքիա ազատօրէն զարգանայ և լիակատար տէրը լինի իր տանը մէջ. ինչ որ մենք չենք կարող թոյլ տալ եւ ինչ բանի հետ որ երբեք չենք կարող հաշտուել, այդ այն միջին վիճակն է, երբ մենք Նեղուցներում պիտի չփուէինք ոչ միայն Թուրքիոյ, այլ և մէկ ուրիշ պետութեան հետ. ահա ա՛յս պարագային մենք պարտականութիւն պիտի ունենանք մեր սեփական միջոցներով մեր շահերը պաշտպանելու»։ *)

Նոյնիմաստ յայտարարութիւններ իր հերթին անում էր Անգլիա, այս անգամ ուղղուած, սակայն, Ռուսիո՛յ դէմ։

Հռչակաւոր Դիզրայէլին, 1876 Օգոստ.ին, ասնուղղակիօրէն պատասխանելով ցար Աղեքսանդր Բ.ին, վկայագրում էր.

«Մենք միշտ այնպէս խորհած ենք, որ Միջերկրականը — մէկն է այն գլխաւոր ճանապարհներից, որոնք մեզ տանում են դէպի մեր Հնդկական կայսրութիւնը, եւ որ այդ ծովը, միշտ այնպէս, ինչպէս և նրանք, որոնք կապուած են իրեն, պէտք է ազատ և ապահով լինեն։ Մեր քաղաքականութիւնը կայանում է նրանում, որ այդ արդիւնքը ապահովենք»։ **)

Այսօր Ռուսիոյ մէջ ցար Աղեքսանդր Բ.ին փոխարինում է համայնավար Ստալինը, իսկ Անգլիոյ մէջ կայսերապաշտ և պահպանողական Դիզրայէլիին փոխարինում է ընկերվար Էտլին, սակայն հին վէճը նոյնութեամբ կարծես շարունակւում է նաև այսօր։

Եւ այս տպաւորութիւնն է ստացւում, որովհետեւ խնդրի հիմը շարունակում է միշտ մնալ նոյնը։

Իսկ այդ հիմը տարբեր տեղ չէ, քան — Հընդկասեանի մէջ։

Պատմութեան մէջ ոչ մէկ երկրի տիրակալութիւն օտար հողի վրայ այնքան բախտակիր ար-

---

*) «Միջազգային Յարաբերութիւններ Աշխարհակալութեան Դարաշրջանին», Մոսկուա, 1934, էջ Գ., ն Ե., էջ 447—448:

**) Մ. Պոկրովսկիյ — «Արեւելեան Հարցը», էջ 509:

Ժէք ունեցած չէ մարդկութեան համար, որքան ունեցաւ Անգլիոյ տիրակալութիւնը Հնդկաստանի վրայ։

Անվարան կարելի է յայտարարել, որ տարբեր պիտի լինէր վերջին երեք դարերի մարդկային պատմութեան ընթացքը եւ տարբեր՝ մեր մոլորակի բազմաթիւ ժողովրդների ճակատագիրը, եթէ երբեք առաջին անգլիացիները 1612ին ոտք դրած չլինէին հնդկական հողի վրայ։

Զենք ասում, թէ աւելի վատ կամ լաւ կը լինէր, — այդ գիտենալը վեր է մեր իմացականութիւնից,— սակայն որոշապէս տարբեր կը լինէր։

Տարբեր կը լինէին նաև անգլեւռուս յարաբերութիւնները։

Անգլիան Հնդկաստանին տիրելուց յետոյ է միայն, որ իր մեծագոյն ոսոխը Ռուսիոյ մէջ տեսաւ։

Նոյնը նաեւ Ռուսաստանը. Անգլիան Հնդկաստան գալուց յետոյ է միայն, որ Ռուսաստանը իր մեծագոյն թշնամին Անգլիոյ մէջ տեսաւ։

Ամէն դաւի մէջ, որ նիւթւում էր Անգլիոյ դէմ, Անգլիան՝ Հնդկաստանին տիրելուց յետոյ՝ տեսնում էր «ռուսական մատ»ը։

Ամէն դաւի մէջ, որ նիւթւում էր Ռուսիոյ դէմ, Ռուսաստանը՝ Անգլիան Հնդկաստան գալուց յետոյ՝ տեսնում էր «անգլիական մատ»ը։

Անգլիոյ համար գոյութիւն ունէր նախ Ռուսաստանը, ինչպէս որ Ռուսիոյ համար գոյութիւն ունէր նախ Անգլիան։

Անգամ վերջին երկու մեծ պատերազմներին, Անգլիա՝ Գերմանիոյ դէմ կռուելով՝ նկատի ունէր Ռուսիան (գերմանեւռուս զինակցութիւնը իր դէմ խափանելու համար), ինչպէս որ Ռուսիա՝ նոյն Գերմանիոյ դէմ կռուելով՝ նկատի ունէր Անգլիան

(անգլեւգերման զինակցութիւնը իր դէմ արգելելու համար)։

Եւ որովհետեւ սարսափի աչքերը միշտ մեծ են լինում, ուստի Անգլիոյ աչքին ամենազօր դարձաւ Ռուսաստանը, իսկ Ռուսիոյ աչքին՝ Անգլիան։

Մինչ իրողութիւնն այն էր, որ Ռուսիա՝ հզօր լինելով՝ երբեք ամենազօր չէր, իսկ Անգլիա՝ մեծ աշխարհավար լինելով՝ երբեք ամենակարող չէր։

Նախաղբիւրը այս չափազանցուած վախերի — Հնդկաստանը։

Եւ որովհետեւ այսքան մեծ եղաւ Հնդկաստանի անդրադարձումը մարդկութեան ճակատագրի վրայ, ուստի իրականութեան դէմ մեղանչում պիտի չլինէր, եթէ մենք մեր վերջին երեքհարիւրամեակի պատմութիւնը կոչէինք — «մարդկային պատմութեան հնդկական շրջան»։*)

---

*) Բրիտանական Կայսրութիւնը բաղկացած է երկու մեծ գօտիներից՝ **արեւմտեան** եւ **նեարեան**։

Արեւմտեան գօտին մաս են կազմում, գլխաւորութեամբ բուն Անգլիոյ, ինքնավար գաղթապետութիւնները,— Նիւֆաունդլենդ (Բրիտանական՝ այժմ բաղդատաբար իրաւազուրկ), Կանադա, Նոր-Զելանդիա, Աւստրալիական Դաշնակցութիւն, Հարաւ-Ափրիկեան Միութիւն եւ Էյրէ (Իրլանդիա)։

Այս **արեւմտեան** գօտին բռնում է աւելի քան 19 միլ. քառ. միլ. տարածութիւն, շուրջ 30 միլ. բնակիչներով։

Նեարեան գօտին, գլխաւորութեամբ Հնդկաստանի, բռնում է շուրջ 17 միլ. քառ. միլ. տարածութիւն, աւելի քան 400 միլ. բնակիչներով։

Տիրակալութեան տարբեր ձեւերի տակ Անգլիոյ ազդեցութիւնը տարածւում է շատ աւելի բնդարձակ հողերի վրայ, շուրջ 500 միլ. բնակիչներով։

Հնդկաստանի տիրակալութեան ճամբաները Անգլիոյ առջեւ բացուել են իր առեւտրականները։ Միայն 1612ին, առաջին անգամ լինելով, անգլիական հռչակաւոր Արեւելեա-Հնդկական Ընկերակցութեան

Ասացինք արդէն, որ առաւելաբար այս նոյն հունով ընթացան նաեւ անգլեւռուս յարաբերութիւնները։

Անգլիա լի է նախապաշարումներով դէպի Ռուսաստանը, որ նստած է դէպի Հնդկաստան տանող Միջին Ասիոյ մէջ (Անդրկասպեան խորհրդային հինգ հանրապետութիւնները) եւ որ ուզում է իջնել դէպի Հնդկաստան տանող Միջերկրականի ափերը։

Այդ է պատճառը, որ Անգլիոյ աչքին արեւելեան բոլոր հարցերը — որոնց կարգին նաեւ Հայկականը — հիմին և խորքին մէջ գերազանցաբար հնդկա՛ն հարցեր են։

Ինչպէս որ Ռուսիոյ աչքին հնդկական բոլոր հարցերը հիմին և խորքին մէջ գերազանցաբար արեւելեա՛ն հարցեր են։

Անգլիան Հնդկաստանին կապուած իր բոլոր հարցերը փորձում է լուծել Ռուսիոյ համար ամենէն խոցելի կէտում՝ Արեւելքում (այստե՛ղ Ռուսիոյ սպառնալով և այստե՛ղ նրա առջեւ խոչընդոտներ յարուցանելով)։

Իր հերթին Ռուսիա Արեւելքին կապուած իր բոլոր հարցերը փորձում է լուծել Անգլիոյ համար ամենէն խոցելի կէտում՝ Հնդկաստանում (այստե՛ղ

հեսախոյզներ ոսք դրին հնդկական հողի վրայ (նրա արեւմտեան ափում, Սուրատի մէջ, Բոմբէյի մոտ):

Արագօրէն «Մեծ Մողոլների, իսկ աւելի ուշ նաեւ Ֆրանսական առեւտրական ընկերակցութեանց հիմերը սարսելով Հնդկաստանում՝ Անգլիա 1771ից այս կողմ սկսեց մայլ առ մայլ իր ափերի մէջ առնել ողջ Հնդկաստանը:

Այս ասիհնանական տիրակալումը ամբողջացաւ միայն 1877ին, երբ արքայական հրովարտակով Հնդկաստանը «կայսրութիւն» հռչակուեց:

Անգլիոյ սպառնալով եւ այստե՛ղ նրա համար վնասանդներ ստեղծելով)։

Անշուշտ առասպել է այն խօսքը, թէ Մեծն Պետրոսը իր յետնորդներին կտակ ձգած է՝ Անգլիան Հնդկաստանում հարուածելու։)*

*Սակայն երբեք առասպել չէ, որ Մեծն Եկատերինայի զաւակը՝ Պաւել Ա.՝ 1796ին գահ բարձրանալով եւ ընդամէնը հինգ տարի գահակալելով՝ իր թագաւորութեան վերջին տարին պատերազմի բռնուելով Անգլիոյ հետ՝ արդէն բանակներ էր պատրաստում, համամտութեամբը Նապոլէոնի, դէպի Հնդկաստան արշաւելու։ Եւ բնաւ յայտնի չէ, թէ ի՛նչ պիտի լինէր այս ձեռնարկի արդիւնքը, եթէ երբեք 1801 Մարտ 11ի դիշերը պալատական դաւադրութեամբ վերջ չդրուէր 47ամեայ Պաւելի կեանքին, մեղսակցութեամբը իր հարազատ զաւակի՝ Աղեքսանդր Ա.ի, այս վերջինի կնոջ՝ մեծ իշխանուհի Եղիսաբեթ Ալեքսէեւնայի (որ կայսրուհի պիտի դառնար Պաւելի սպանութեան գիշերն իսկ) ու նաեւ Պետերբուրգի անգլիական դեսպանի՝ Ուիտվորտի եւ բրիտանական գանձատան։**)*

---

*) Մեծն Պետրոսի այս մեացածին «կտակի» մասին խօսած են շատեր — Մեծն Նապոլէոն, Լորդ Քրզրն, Լենին, պրոֆ. Տ. Եգոր (իր «Պարսկաստանը եւ Պարսկական Հարցը» մեծարժէք գործի մէջ) եւ բազմաթիւ ուրիշներ — ոմանք՝ հաւատալով, իսկ ուրիշներ՝ հեգնելով:

Էականը «կտակը» չէ սակայն, այլ այն, որ ռուս երկիրը, ըստ մի կարգ մտածողների, եթէ "կտակ„ իսկ չունի, այնուամենայնիւ, իր ազգարնագրական դիրքով, իր պատմութեամբ եւ իր ռազմա-տաղտկական նպատակներով այդ "կտակ„ին համակիր ձգտումներ ունի:

«Կտակի» հերքիաթը տեղ զած է նաեւ Ջեւդեթ փաշայի «Թուրքական Պատմութիւնը» գրքի մէջ (տե՛ս Դ. Լազեան — «Հայաստան եւ Հայ Դատը„, 1946, Գահիրէ, էջ 5—7):

**) Պատմաբանը նկատում է, որ Պաւելի սպանութեան լուրը յաջորդ օրն իսկ, Mars 12ին, հասնում է Լոնդոն, «մի առեղծուած այդ

Առասպել չէ թնաւ, որ Պաւելի մահից յետոյ Ազեքսանդր Ա.ի ժամանակ, Մեծն Նապոլէոնը քանիցս չլացուցիչ խոստումներով փորձեր արաւ՝ ռուս կայսեր հայեացքը դէպի Հնդկաստան դարձնելու։

Ինչպէս որ առասպել չէ նաև այն, որ Իրիմի ամօթալի պատերազմից յետոյ, Ռուսիա, թէ՛ իր կորցրած վարկը վերաշտանելու եւ թէ Անգլիոյ նը-կատմամբ իր տկար դիրքերը ամրացնելու համար, եկաւ և մեծատարած փռուեց Միջին Ասիոյ մէջ։

Այս արդէն, նորից ենք կրկնում, երբեք առասպել չէ։

Ռուսաստանը առաջին անգամ ոտք դրաւ Միջին Ասիա 1865ին, և դեռ քսան տարին չանցած, 1884ին, առաջնորդութեամբ իր մեծ զօրավարների — Չերնեաեւ, Կաուֆման և Սկոբելեւ — նա արդէն հասած էր Հնդկաստանի սահմաններին։

Քսան տարուան մէջ Ռուսաստանը կարողացաւ իրեն կցել ամբողջ Անդրկասպեան երկիրը, իր այսօրուան հինգ մեծատարած խորհրդային հանրապետութիւններով՝ Թուրքմենիստան, Ուզբեկիստան, Տաճիկիստան, Խըրխըզստան և Կազակիստան (վերջինը՝ իր մի մասով)։

Եւ արագօրէն այնքան ամրացաւ այս երկրների մէջ, որ իր մեծահռչակ զօրավարը՝ Սկոբելեւ՝ 1877–78ի ռուս-Թրքական պատերազմի նախամուտին, իրեն իրաւունք էր տալիս ռազմարշաւի հետեւեալ ծրագիրը ներկայացնելու իր կառավարութեան.

«Որքան էլ յաջող ընթանալու լինի պատերազմը Եւրոպայում եւ Ասիական Թուրքիոյ մէջ, այնուամենայնիւ, այդ ռազմանակատներում դժուար է Արեւելեան Հարցի լուծումը ձեռք ձգել»։

Մոլտկէի եւ Պասկեւիչի հեղինակութեանց դիմելով՝ զօրավարը գրում էր.

«Աւելի լաւ պիտի չլինէ՞ր, եթէ մենք, օգտուելով մեր նոր ու ճզօր ռազմագիտական դիրքից Միջին Ասիոյ մէջ, անցեալի բաղդատմամբ մեր առաւել ծանօթութիւնից — այս բառի լայն առումով — Ասիոյ հանապարհների եւ միջոցների հետ, փորձեինք այստե՛ղ մահացու հարուածը տալ մեր իրական թշնամուն (ակնարկը՝ Անգլիոյ.—Ն.), այն պարագայում (կասկածելի), երբ տեսնենք, որ բացայայտ նշանները իսկ այն մասին, թէ մենք վնռած ենք գործել անգլիացիների համար ամենեն զգայուն ռազմարշաւային ուղղութեամբ, բաւարար չեն հրանց լիակատար գիջողականութեան մղելու»։*)

Ռուսաստանը պատերազմի միջոցով Արեւելեան Հարցը լուծելու համար՝ մեծանամբաւ զօրավարը առաջարկում էր պաշտպանողական կռիւ վարել Արեւելքում, իսկ յարձակողական՝ Հնդկաստանում։

Անգլիոյ համար էականն այն չէ՝ որ պատերազմը այդպէս չընթացաւ, այլ այն՝ որ այդպէս ծրագիրներ կային։

Եւ, ինչո՞ւ չէ, կարող են լինել նաև ապագային։

Անգլիան չի ընդունում երբեք, որ իր զաւակները՝ Ռաուլինսընները՝ սարսափից մեծացած աչքերով էին դիտում երեւոյթները, երբ անակնկալով յայտարարում էին, թէ Ռուսաստանը բարի նպատակներով չէ, որ գտնուում է... «Հնդկաստանի դրուների մոտ»։

թուականի համար, որ զուրկ էր հեռագրաթելից»։ (Տե՛ս Մ. Պոկրովսկիյ — «Ռուսաց Պատմութիւն», հ. Դ., Մոսկուա, 1914, էջ 239)։

*) Մ. Պոկրովսկիյ — «Ռուսաց Պատմութիւն», հ. Ե. էջ 323։

Նոյն զօրավարը՝ Սկոբելեւ՝ աւելի ուշ, 1881ի Օգոստոսին, գրում էր ռուս հասարակական նշանաւոր դէմքերից մեծազդեցիկ Կատկովին.

«Առանց լուրջ ռազմացոյցի դէպի Հնդկաստան, ճաւանաբար Քանդահարի ուղղութեամբ, անիմաստ է պատերազմի ձեռնարկել ի հնդիր Բալկանեան թերակղզի»։ *)

Այսպէս նաև ուրիշները։

Սկոբելեւները երբ որոճում էին այս ծրագիրները՝ Միջին Ասիոյ մէջ ո՛չ կանոնաւոր ճամբաներ կային և ոչ երկաթուղագծեր. մինչ այսօր Ռուսիա Անդրկասպեան երկրները ցանցապատած է առաջնակարգ ճամբաներով և ընդարձակ երկաթուղագծերով։

Վախի և անվստահութեան այն սերմերը, որ հողային իր նոր գրաւումներով, 1865ից մինչեւ 1884, ցանեց Ռուսիան դէպի Հնդկաստան տանող Անդրկասպեան երկրներում, առատօրէն պտղաբերեցին եւ թունաւորեցին անգլեռուս յարաբերութիւնները տասնամեակներ շարունակ։

1873ի Դեկտ.ին, ռուսական զօրքերի կողմից Խիւան (այսօրուայ Ուզբեկիստանի սահմաններում) գրաւուելուց յետոյ, անգլիական դահլիճը Պետերբուրգի իր դեսպանին յանձնարարեց յայտնել ցարական կառավարութեան, որ «Խիւայի գրաւումը սպառնում է բարի յարաբերութեանց Ռուսիոյ եւ Անգլիոյ միջեւ»։

Ի պատասխան այս ծանուցագրի, Ռուսաստանը, իբրև երաշխիք Հնդկաստանի ապահովութեան, առաջարկեց Աֆղանիստանը անկախ հռչակել՝ նրանից միջնորմ պետութիւն ստեղծելու համար Ռուսիոյ և Անգլիոյ միջև։

*) Նոյն տեղը, էջ 324:

Բանակցութիւնները արդիւնք չտուին. 1875ի Հոկտ.ին Անգլիա մերժեց ռուսական առաջարկը, որի հետեւանքով Ռուսիա տեղաշարժեց իր զօրքերը և 1876 Փետր. 17ին գրաւեց նաև Կոկանդի խանութիւնը (դարձեալ այսօրուայ Ուզբեկիստանի սահմաններում)։ *)

Եւ որովհետեւ այս աշխարհամասում ամուր էին ռուսական դիրքերը, ուստի Ռուսիա չարունակեց իր գրաւումները, իսկ Անգլիա ռուսական այս հարուածի փոխվրէժն առաւ 1878ի Բերլինի վեհաժողովում՝ Ռուսաստանից խլելով այն, ինչ որ նա ստացած էր իրեն Սան-Ստեֆանոյում։

Մինչև 20րդ դարի առաջին տարիները չարունակուեցին անվստահութեամբ լի այս յարաբերութիւնները։

Միայն 1907 Սեպտ. 23ին, անգլեռուս պատմական դաշինքի կնքումով, ուր հաւասարապէս ներդաշնակուած էին երկու մեծ մրցորդների շահերը Տիբեթում, Աֆղանիստանում և Իրանում, կարելի եղաւ գէթ մի չափով այս ձգտուած յարաբերութիւնները մեղմել։

Ցիշեցինք արդէն, թէ ինչպէս Լօզանում Նեղուցների դատը պաշտպանելով, Չիչերին՝ ռուս պատուիրակութեան պետը՝ որի բանակները ամրօրէն տեղաւորուած էին Միջին Ասիոյ մէջ՝ Պամիրի փեշերին, իր խօսքն ուղղելով Փըրզընի՝ յայտարարում էր.

«Դուք, բերեւս, անհանգիստ էք նրա համար, որ մեր հեծեալները կրկին երեւացել են Պամիրի բարձունքների վրայ...»։

Եւ չափազանցութիւն չկար այս յիշեցումի մէջ, որովհետեւ Անգլիոյ բուն կայսրութիւնը Հնդ-

*) «Պատմ. Դիւանագիտութեան», ն. Բ., էջ 27—28:

կատանի՛ մէջ է և Հնդկաց՝ ովկիանոսի վրայ. զուր չէ, որ նմուտները կայսրութիւնը սկսած են կոչել այս նոր անունով.— «Հնդկաց Ովկիանոսի Բրիտանական Կայսրութիւն»։ *)

Եւ որովհետեւ կողմերը հասկանում էին իրար և գիտէին, թէ վէճը ի՞նչ բանի շուրջ է գառնում, ուստի Չիչերին, մասնաւորելով իր խօսքը Նեղուցների շուրջ, յայտարարում էր.

«Մենք ձեզ ոչ թէ պայքար, այլ խաղաղութիւն ենք առաջարկում, հիմ առնելով ամբարտակի սկզբունքը մեր միջեւ ու նաեւ Թուրքիոյ ազատութեան եւ գերիշխանութեան սկզբունքը»։

Այս խաղաղութիւնը չի կարող տարբեր հիմ ունենալ, քան գործակցութիւնը երեք Մեծերի միջեւ, հաստատուած ուժերի որոշ հաւասարակշռութեան վրայ։

Անլուծելի և անկարելի ոչինչ չկայ մեր աշխարհի համար։

Նոյն Սկոբելեւը, որի անունը յիշատակեցինք մի քանի անգամ, նոյն կատկովին ուղղած իր միևնոյն նամակում — 1881 Օգոստ. — գրում էր.

«ԿԱՐԵԼԻ Է ԱՄԲՈՂՋ ՄԻՋԻՆ ԱՍԻԱՆ ՏԱԼ ԱՆԳԼԻՈՑ՝ Ի ԳԻՆ ԼՈՒՐՋ ԵՒ ՇԱՀԱՒՈՐ ԶԻՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԻՐԵՆ ՀԵՏ»։**)

Բայց մի՞թէ միայն Ռուսաստանն է ընդունակ այսքան մեծ զիջումների։

Մի՞թէ միայն նա՛ կարող է իր հողերից հսկայ աշխարհներ — ամբողջ Միջին Ասիան — ռազմաքաղաքական նկատումներով զիջել մէկ ուրիշին,

*) Տե՛ս, ի միջի այլոց, զօր. Գոլովինի փաստաթղթից եւ հեղափոխական գիրը — «Ո՞ւր է գնում Մեծն Բրիտանիան» — լոյս տեսած Փարիզ, 1937ին։

**) Մ. Պոկրովսկիյ — «Ռուսաց Պատմութիւն», ն. ե., էջ 324։

մինչ Անգլիա նոյն նկատումներով ոչինչ չի կարող Ռուսիոյ զիջել ո՛չ Նեղուցների և ոչ էլ Թրքապատկան Հայաստանի հարցերում։

Ձենք կարծում։

Նաև Անգլիա, նայած տեղին և պայմաններին, կարող է զիջումներ անել այս հարցերից թէ՛ մէկում և թէ միւսում։

Տակաւին 1903ին, երբ Անգլիա առաջին պըրպտումներն էր կատարում 1907ի անգլերուս համաձայնութեան ճանապարհը հարթելու համար, Մեծն Բրիտանիոյ արտ. գործոց փոխ-նախարարը՝ «Սըր Զարլզ Հարդինջ» գիմելով անգլիական ծովային հեղինակութեանց — կայսրութեան Պաշտպանութեան Խորհուրդին և Ծովային Հետախուզութեան Պետին — խնդրում էր տեղեկացնել իրեն, թէ ի՞նչ անդրադարձում կ'ունենայ ուժերի հաւասարակշռութեան վրայ, եթէ միայն ռուսական ռազմանաւերը Նեղուցներից ազատ երթեւեկի մենաշնորհ ունենան։

Ցիշատակուած ծովային հեղինակութիւնները իրենց պատասխաններով գալիս էին վկայելու, որ միայն Ռուսիոյ ընծայուած նման իրաւունքը զգալապէս պիտի չփոխէր ռազմագիտական ընդհանուր վիճակը Միջերկրականում։ *)

Անկասկած է, որ նրանք Ռուսիոյ համար նըպաստաւոր այս պատասխաններն էին յղում Հարդինջին, որովհետև միաժամանակ իրենց մտքի մէջ համարժէք զիջումների ակնկալիքներն ունէին նոյն Ռուսաստանից։

Ցիշատակելով այս դէպքերը՝ մեր նպատակն է լոկ ասել, որ ապահովութեան այն երաշխիքը, որի

*) Ա. Մանդելշտամ — «20րդ դարու Ռուսիան թրքական Նեղուցների առթիւ» («Նովոսելիէ», Նիւ Եորք, 1946, թիւ 29—30, էջ 112)։

մասին խօսում է Խ. Միութիւնը Նեղուցների կապակցութեամբ, նոյն երաշխիքը — բայց միայն իրենց ապահովութեան համար եւ տարբեր վայրերի նկատմամբ — պահանջում են ուրիշներ։

Աւելի լայնօրէն խօսելով՝ Անգլիա, որի «կենսատարածքն» բռնում է աշխարհի մէկ-երրորդը, իր այս հարստութեանը պահպանումի համար ձգտում է ապահով տեսնել իր «կենսագիծ»երը՝ ծովային (Ջիբրալտար, Մալտա, Սուէզ, Ադէն, Կարաչի) և ցամաքային (Հիւս. Ափրիկէ, Յունաստան, Մերձաւոր եւ Միջին Արեւելք)։

Իր հերթին Խ. Միութիւնը, որի «կենսատարածքը» բռնում է առաւելագոյնը մէկ-հինգերորդը աշխարհի, իր այս հարստութեանը պահպանումի համար նոյնպէս ձգտում է ապահով տեսնել իր «կենսագիծեր»ը՝ ծովային (Նեղուցներ) և ցամաքային (սահմանակից բարեկամ երկրներ)։

Այսօր այս դարաւոր վէճին իր «կենսագիծ»երով եկած և միախառնուած է նաև Հիւս. Ամերիկան։

Ինդրի լուծումը կարող է լինել միայն ա՛յս սահմանների մէջ՝ մեր մոլորակի բոլո՛ր ցամաքները ու բոլո՛ր ջրերը միասին առնելով։

Գալիքի մասին խօսելով՝ դարձեալ Ռուզվելտն ասում է իր զաւակին՝ Էլիոթի, Թեհրանի Խորհրդաժողովից յետոյ, Դահիրէ, 1943 Դեկտ. 5ին.

«Թեհրանում որոշեցինք, որ մեր երեք երկրները — աշխարհի մէջ ամենեն զօրաւորները — համախոհութեամբ կարող են նկատի առնել ապագայ անհամաձայնութիւնները, կարող են միացնել իրենց արտաքին քաղաքականութիւնը՝ աշխարհին այն համոզումը ներշնչելու համար, թէ բազմաթիւ սերունդներ այլեւս պատերազմ պիտի չտեսնեն։»*)

*) "Յուս„, 22 Նոյ. 1946:

Դարձեալ նոյն Խորհրդաժողովից յետոյ՝ Նախագահն ասում է իր զաւակին.

«Ամենեն եակաւն էր ցոյց տալ Ստալինին (Թեհրանի Խորհրդաժողովում.—Ն.), որ Միացեալ Նահանգները Մեծն Բրիտանիոյ հետ միացեալ նպատակ չեն կազմած Խ. Միութեան դեմ։ Ես կարծում եմ, որ մենք այդ կասկածը ցրեցինք միանգամ ընդմիշտ։ Ես կը յուսամ, որ այդ այդպես է։ Միակ բանը, որ կարող է խախտել հաւասարակշռութիւնը պատերազմից յետոյ, այդ՝ աշխարհի նոր բաժանումն է երկու բանակների — Ռուսաստանը՝ Անգլիոյ եւ մեր դեմ»։*)

Նախագահն ուզում էր ասել, որ «երեք»ների միութեան բուն աղբիւրը ոչ թէ պատերազմն է (Գերմանիան և Ճապոնը խորտակելու համար), այլ՝ խաղաղութիւնը (մի նոր և աւելի արդար աշխարհ կերտելու համար)։

Ուզում էր ասել, որ յաղթական պատերազմի վախճանին կա՛մ խաղաղութիւն չի լինի, և կամ եթէ լինի՝ կը լինի միայն սերտ գործակցութեամբ երեք Մեծերի։

Պէտք չէ, որ այս գործակցութիւնը խախտուի, որովհետեւ խախտումը ինքնին համակշիռ պիտի լինի նոր պատերազմի։

Պէտք չէ, որ մասնաւորաբար Թուրքիան՝ այսհին ու դասական «հիւանդ»ը՝ նոր ներարկումներով կրկին ոտքի հանուի՝ իբրեւ զէնք գործածուելու համար Մեծերի միջև մղուող պայքարում։

Իսկ այս կարգի ծրագրներ, տարաբախտաբար, կան։

Կան դարանակալ ոյժեր, որոնք երազում են

**) Էլ. Ռուզվելտ — «Նորա այէերոյ» («Նոր ժամանակներ»), Մոսկուա. 24 Յունուար 1947, թիւ 4, էջ 29):

վերաստեղծել երբեմնի «Օսմանեան կայսրութիւնը» — «նոր» գինին հին տակի մէջ ածելով — իբրեւ պատնէշ Ռ. Միութեան դէմ։

Ջորջ Ֆիլդինգ Էլիոթ — «Նիւ Եորք Տրիբիւնի 1946 Հոկտ. 7ի թուով լոյս ընծայած իր մի ուշագրաւ յօդուածի մէջ գրում էր.

«Մեր գլխաւոր և անմիջական շանը Միջին Արեւելքի մէջ է, որ մի ռազմագիտական շրջան է։ Այդ աշխարհամասում են՝ Թուրքիա, Իրաք, Սուրիա, Պաղեստին, Եգիպտոս, Իրան և այլ դրկից երկիրներ։ Այդ շրջանը պատմական կամուրջ է Հին Աշխարհի երեք մասերի՝ Եւրոպայի, Ասիոյ եւ Ափրիկէի միջև։ Աշխարհակալների գլխաւորագոյն նպատակն էր անցնել այդ շրջանից՝ մէկ ցամաքամասից միւսը երթալու համար։

«Պատահմունքի արդիւնք չէր, — շարունակում է հեղինակը, — որ Նապոլէոնը կռուեց Եգիպտոսի և Սուրիոյ համար։ Պատահմունք չէր, որ Հոհընցոլլերնեան Գերմանիան ուզում էր Սուրիա և Պաղեստին գնալ Թուրքիոյ միջից։ Պատահմունքի արդիւնք չէր նաև այն, որ երկրորդ համաշխարհային պատերազմին Հիտլերը պատերազմի ամենէն տագնապալի շրջանին փորձում էր աքցանի մէջ առնել այդ շրջանը, յարձակելով թէ՛ Կովկասի և թէ Հիւս. Ափրիկէի դէմ, յետոյ միանալու համար Միջին Արեւելքի մէջ, սակայն ետ մղուեց թէ՛ Ստալինգրադից և թէ Էլ-Ալամէյնից»։

Ապա դառնալով Մեծն Բրիտանիոյ դարաւոր քաղաքականութեան՝ Ջ. Էլիոթ նկատում էր.

«Ամբողջ մէկ դար Բրիտ. կայսրութիւնը ջանաց պահպանել Օսմանեան կայսրութիւնը ոչ նրա համար, որ անգլիացիները սիրում են Թուրքերին կամ Թրքական վարչակերպերը, այլ որովհետեւ Օսմանեան կայսրութիւնը կազմում էր մի ցամաքային կամուրջ, որից եւ ո՛չ մէկ աշխարհակալ պիտի կարողանար անցնել»։

Իր բուն ասելիքին գալով՝ նորագոյն աշխարհակալների քողարկուած բանքերը գրում էր.

«Առաջին համաշխարհային պատերազմով խորտակուեց Օսմանեան կայսրութիւնը։ Անգլիա եւ Ֆրանսա ջանացին նրան յաջորդել իրենց կէս-կայսերապաշտութեամբ։ Այսօր, համաշխարհային երկրորդ պատերազմից յետոյ, մեռնելու վրայ է նաև հին տեսակի կայսերապաշտութիւնը։ Ֆրանսացիները դուրս եկան Սուրիայից եւ Լիբանանից։ Անգլիացիները քաշւում են Եգիպտոսից։ Ամերիկեան ժողովուրդի սկզբունքն է, թէ «ժողովուրդները իրենք պէտք է կառավարեն իրենց»։ Այս տեսակէտին ուժ է տալիս նաեւ բրիտանական ժողովուրդը։ Հնդկաստանի հանդէպ բրիտանական քաղաքականութիւնը դրա ապացոյցն է։ Բայց այս չի նշանակում, որ մենք Հին Աշխարհի բանալին պիտի ձգենք Ռուսիոյ»։

Արդ, քանի որ այս «բանալի»ն պէտք չէ ձգել ո՛չ Անգլիոյ, ո՛չ Ամերիկայի եւ ոչ էլ Ռուսիոյ, ուրեմն որի՞ն պէտք է տալ.

«Միջին Արեւելքը պարապութիւն է, ինչպէս որ ներկայիս պարապութիւն է Արեւմտեան Եւրոպան։ Այդ պարապութիւնը կարելի է լեցնել մշտնջենապէս մի ժողովուրդով, որ՝ պատասխանատուութիւն ստանձնելով՝ ապրում է այնտեղ, եւ կամ թոյլ պէտք է տալ, որ դրսից գայ մի այլ պետութիւն, գրաւի այդ շրջանը և նրա վրայ զօրաւոր հակակշիռ հաստատի։ Այդ վերջին ձեւը բրիտանացիները փորձեցին երկու պատերազմների միջեւ եղած ժամանակաշրջանին։ Նրանք այժմ այդ բեռը առան-

ձին չենք կարող տանել։ Մենք էլ չենք կարող զորավիթ լինել հին տեսակի կայսերապաշտութեան։ Բայց եւ չենք կարող թոյլ տալ, որ ռուսները տեղաւորուեն այնտեղ։ Եթէ թոյլ տանք, այդ պիտի նշանակի խորհրդային վարչակարգի տիրակալութիւնը հատատարել աշխարհի մէկ մեծ մասի վրայ»։

Թուրքն ի՞նչ պէտք է անել.

«Դայ եւ մեկ ուրիշ հաւանական լուծում. վերադարձնել Օսմանեան Կայսրութիւնը նո՛ր ձեւով եւ բոլորովին նո՛ր սկզբունքներով, հիմնուած մարդկային իրաւունքների վրայ եւ զօրացած Միջին Արեւելքի պետութեանց ընկերակցութեամբ»։ *)

Եւ բնաւ գաղտնիք չէ, որ այսօր այս ուղղութեամբ հակայ աշխատանք է տարւում՝ «նոր սկզբանքներով — խարսխուած «մարդու եւ քաղաքացիի իրաւանց» վրայ — ազգերի մի նոր ու զօրաւոր Ընկերակցութիւն ստեղծելու Մերձաւոր եւ Միջին Արեւելքի մէջ, Թուրքիոյ գլխաւորութեամբ։

Այսօր և առ այժմ, իբրեւ թեկնածու այս Ընկերակցութեան, մատնանշուած են,— Թուրքիա, Եգիպտոս, Լիբանան, Սուրիա, Իրաք, Պաղեստին, Անդրյորդանան և Սէուդական Արաբիա, շուրջ 5½ միլ. ք. քիլմ. տարածութեամբ մի աշխարհամաս, մօտ 50 միլիոն բնակիչներով, որոնցից աւելի քան 35 միլիոնը՝ իշխանական գծերով տարանջատուած արաբներ, իսկ մնացեալները Թուրքեր և այլ փոքրամասնութիւններ։

Ցարդ այս ուղղութեամբ կատարուած են հետեւեալ գործերը,— 1946 Մարտ 22ին կնքուած է անգլեւ-յորդանանեան դաշինքը (այս դաշինքով, ի դէպ, Անդրյորդանանը հանդէս է գալիս իբրեւ բացարձակապէս գերիշխան պետութիւն), 1946ի Մարտին կնքուած է Թուրքեւ-իրաքեան բարեկամութեան դաշինքը, 1946 Նոյ. 10ին՝ իրաքեւ-անդրյորդանանեանը, իսկ 1947 Յունուար 11ին՝ Թուրքեւ-անդրյորդանանեան ուխտը։

Այս բոլոր դաշինքների մէջ ձեւապէս թէեւ Թուրքիան չկայ, սակայն նա՛ է առանցքը այս բոլոր համաձայնութեանց, որովհետեւ նա՛ է հիմնական ոյժը Մերձաւոր եւ Միջին Արեւելքի մէջ։

Ֆրանսական գործակալութեան դիւանագիտական խմբագիրը՝ Գիւստաւ Օկուտիւրիէ՝ նկատում էր.

«Խորհրդային ազդեցութեան տարածումով Բալկանների հիւսիսում՝ Թուրքիա պաշտպանողական դիրքի մատնուած է Թրակիոյ մէջ. այդ ազդեցութեան ծաւալումով իր կացութիւնը վտանգուած դտնելով՝ Թուրքիա ապահովութեան երաշխիքներ է որոնում Օսմանեան Կայսրութեան մերձ-արեւելեան ժառանգորդ պետութեանց մէջ, որոնք բարեկամական յարաբերութիւններ են պահում Մեծն Բրիտանիոյ հետ։ Այսպիսով բոլորովին յստակ են դառնում Թուրքիոյ եւ արաբական երկրների, մասնաւորաբար Անդրյորդանանի եւ Իրաքի հետ կազմուելիք «Արեւելեան Բլոկ»ի գաղափարները, որոնք անցեալ Հոկտ.ին արծարծուեցին Թուրքիոյ արտ. նախարար Հասան Սակայի կողմից՝ սուրիական մամուլին իր տուած տեսակցութեան ընթացքին։ Այս լոյսի տակ այժմ հասկանալի է դառնում այն այցելութիւնը, որ վերջերս Թուրք արտ. նախարարութեան ընդհ. քարտուղար Ջէմալ Էսքէնին տուաւ Անդրյորդանանի Աբդալլահ թագաւորին։ Զուտ քաղաքավարական մի այցելութիւն Ամմէթ Ինէօնիւի

*) «Հայրենիք», 11 Հոկտ. 1946։

անունից, որ մօտ ժամանակին, ինչպէս ասում են, պիտի յանգի Էնկիւրիի և Ամմանի միջեւ կնքուելիք բարեկամական ուխտի»։ *)

Մի հմտալից յօդուածի մէջ անդրադառնալով այն քաղաքականութեան, որ հետապնդում է Անգլիան Մերձաւոր եւ Միջին Արեւելքի մէջ, նպատակ ունենալով այս երկրների ժողովրդներին համախմբել մէկ բլոկի մէջ, հակախորհրդային ճակատի վրայ, գլխաւորութեամբ Թուրքիոյ, արաբ աշխարհի մեծանուն առաջնորդներից դոկտ. Թահա Հիւսէյն — Գահիրէի համալսարանի գրական բաժնի վարիչը, անուանի գրագէտ, բանասէր եւ քննադատ — մտահոգօրէն նկատում է.

«Քաղաքականութիւնն այնպէս է ցոյց տալիս, որ Անգլիան կարծես ուզում է վերասեղծել հին Օսմանեան Պետութիւնը»։ **)

Աւելի ընդարձակելով այս մտքի սահմանները՝ «Տրիբիւն»ն իր 1946 Յունուար 27ի թուով նկատում էր.

«Անգլիական ռազմախարիսխների գիծը Հարաւային Իրանից անցնում է դէպի Իրաք, Սուրիա, Լիբանան, Պաղեստին, Եգիպտոս եւ Յունաստան՝ պատսպանելու համար թէ՛ Պարսից ծոցը, Միջին Արեւելքը եւ Միջերկրականի արեւելեան աւազանը եւ թէ Թուրքիան իր այսօրուայ դիրքի մէջ։ Ամէն անցորդի, որ պտտում է այս աշխարհամասում, դժուար չէ գալ այն եզրակացութեան, որ այս գիծը հանդիսանում է իրական պատուարը անգլիական ռազմագիտութեան։

*) Ս. Հ. Ոսկունի — «Արեւելեան Պոմ» («Ազդակ» Շաբաթօրեակ, 10 Յունուար 1947, թիւ 46):

**) Դոկտ. Թահա Հիւսէյն — «Մեծն Բրիտանիա, Թուրքիա եւ Արաբ Աշխարհը» («Արեւելք», Հալէպ, 10 Նոյ. 1946):

Այս պատուարը ցցուում է՝ իբրեւ հիմնակմախք (carcasse)՝ պատսպանելու համար Միջին Արեւելքը»։

Եւ հին հրձիգը՝ Թուրքիան՝ կազմ ու պատրաստ սպասում է այսօր՝ կրկին ռազմաբեմ իջնելու համար։

Անդրադառնալով անհրաժեշտութեանը իսլամ աշխարհի ամբողջացումին՝ « La Turquie»*ն իր 1945 Նոյ. 7ի թուով գրում էր.*

«Բնական է, որ Թուրքիա՛ն պիտի գլխաւորէր այս շարժումը, եւ իր ազդեցութիւնը պիտի ընդարձակուէր մինչեւ այն սահմանները, ուր հասած էր Օսմանեան կայսրութիւնը ԺԸ. դարում (բացառելով Բալկանները)։ Շնորհիւ այս բանի՝ մենք վերստին մեր ձեռքերի մէջ պիտի առնենք դէպքերի ղեկավարութիւնը աշխարհի մեկ հարուստ եւ ընդարձակ շրջանի մէջ»։

Արձագանգելով իր պաշտօնակցին՝ «Թասվիր»ն իր 1947 Յունուար 8ի թուով վկայագրում էր.

«Չկայ ոչ մեկ հաս խոչընդոտ՝ արգելելու համար արաբ պետութեանց եւ Թուրքիոյ ամբողջացումը քաղաքական եւ տնտեսական մեկ միութեան մէջ, հաւասարապես անհրաժեշտ ինչպէս իսլամ աշխարհին, այնպէս նաեւ մեզ»։

Ինքն Աբդուլլահը՝ Անդրյորդանանի թագաւորը՝ գծելով այս միացեալ աշխարհի սահմանները՝ յայտարարում էր.

«Մերձ-արեւելեան խմբաւորումի մէջ պիտի մտնեն՝ Աֆղանիստանը, Իրանը, Թուրքիան, Իրաքը, Սուրիան, Անդրյորդանանը եւ Լիբանանը»։

Միաժամանակ թագաւորը վկայում էր, որ «Սեւդական Արաբիան եւ Եգիպտոսը, շնորհիւ առկայութեանը մի շարք առանձնայատկութեանց, այս խմբաւորումի մէջ պիտի չմտնեն»։ *)

*) «Թասվիր», 24 Դեկտ. 1945:

Թրքական «La République» թերթը՝ անդրադառնալով թագաւորի այս վերջին խօսքին՝ իր 1946 Դեկտ. 26ի թուով նկատում էր.

«Եթէ Եգիպտոսը եւ Արաբիան յամառեն չմտնել ինքնապաշտպանողական բլոկի մէջ ընդդէմ խորհրդային վտանգի՝ շատ լուրջ սխալ կը գործեն»:

Քաղաքական նոյն լուսարձակի տակ է դիտում եւ գնահատում տեղի ունեցող երեւոյթները նաեւ խորհրդային մամուլը։

«Վերջերս Էնկիւրիից մէկէն կոչ արձակուեց,— նկատում էր «Պրաւդա»,— արաբ երկրներից «միութիւն» ստեղծելու ոչ-արաբ Թուրքիոյ գլխաւորութեամբ»։ Այս կոչի մէջ Թերթը տեսնում էր Էնկիւրիի ձգտումը — «նոր ձեւի մէջ վերականգնելու Օսմանեան Կայսրութիւնը»։ *)

Նոյն տակոյն էր արձակում Մոսկուայի գրիչներից նաեւ Գ. Ցակոբեան.

«Աւելի ու աւելի յանախակի արաբ երկրների մամուլը ընդունում է առնում թուրք դիւանագիտութեան փորձերը՝ արաբ երկրներից մի բլոկ սարքելու ոչ-արաբ Թուրքիոյ գլխաւորութեամբ»։ **)

Ու յայտնի չէ տակաւին, թէ ի՛նչ վախճան պիտի ունենան Թուրքիոյ այս վտանգաւոր խաղերը։

1947 Յունուար 12 թուականով «ԱՖՓ»ի գործակալութիւնը հեռագրում էր Էնկիւրիից.

«Դանդաղօրեն, բայց եւ մեծ շրջահայեցութեամբ Թուրքիա յառաջանում է դէպի արաբական երկրները։ Դեռ եկած չէ պահը, ուր կարելի պիտի լինեն քաղաքական ճշմարիտ եզրակացութիւններ հանել»։ ***)

---

*) Թ. Լէօնթիեւ — «Արաբ հասարակայնութեան օրինաւոր բողոքները» («Պրաւդա», 1 Նոյ. 1946):

**) Գ. Ցակոբեան — «Թուրքիոյ կացութեան շուրջ» («Պրաւդա», 21 Դեկտ. 1946):

***) «Յուս.», 13 Յունուար 1947:

Ուրեմն զուր հոսեց արիւնը նաեւ երկրորդ համաշխարհային պատերազմի մէջ. այդ արիւնը թափուեց ոչ թէ նոր աշխարհ կերտելու համար, այլ վերականգնելու համար... Օսմանեան կայսրութիւնը, բայց միայն... «նոր» ձեւով, բոլորովին «նոր» ընկերակցութիւններով՝ իբրեւ ազա՞տ, անկա՞խ պետութեանց նոյնքան ազա՞տ եւ իրաւահաւասա՞ր մէկ Ընկերակցութիւնը Մերձաւոր և Միջին Արեւելքի մէջ...

Նոր են բառերը, բայց ոչ գործերը։

Այս վերջիններից էր նաեւ Սաադաբադի ուխտը — միութիւնը Թուրքիոյ, Իրաքի, Իրանի եւ Աֆղանիստանի — որ աշխարհ եկաւ 1937 Յուլիս 8ին եւ առժամաբար իր մահկանացուն կնքեց երկրորդ մեծ պատերազմի շրջանին։

Ո՛չ, սրա համար չէր, որ մարդկութիւնը անհաւորագոյն սարսափներ ապրեց վեց տարի շարունակ, 1939ից մինչեւ 1945ը։

«Օսմանեան կայսրութիւնները մեզ ոչ թէ խաղաղութիւն են բերում, այլ սոյզ պատերազմ, շատ աւելի վայրագ եւ արիւնալի, քան ինչ որ ապրեցինք։

Ուշագրաւ է, որ այս գաղափարի սերմնացանները մահոգ են — անշուշտ միշտ յանուն «խաղաղութեան» — ոչ միայն Օսմանեան կայսրութեան վերականգնումի, այլ և նրա... թուրքեւխորհրդային սահմանների ապահովութեան հարցով։

«Ճորճ Ֆ. Էլիոթ,— գրում է «Հայրենիք» իր 1946 Նոյ. 12ի խմբագրականի մէջ,— իր վերջին յօդուածներէն մէկուն մէջ խօսելով Արեւմուտքի և Արեւելքի ռազմական հաւասարակշռութեան մասին, համեմատութեան դրած էր Միացեալ Նահանգներու եւ Խ. Միութեան ռազմական ուժերը, Ան կ՚ըսէր,

թէ Միացեալ Նահանգներն այսօր անգերազանցելի են իրենց նաւատորմով, հեռուները թռչող մեծ օդանաւերով և հիւլէական ռումբերով, որոնցմով կրնան ուղղակի յարձակիլ Խ. Միութեան որեւէ խոցելի կէտի վրայ։ Մինչդեռ Խ. Միութիւնը, թէեւ չունի ո՛չ զօրաւոր նաւատորմ, ոչ հեռուները թռչող օդանաւերու տորմիղ եւ ոչ այլ հիւլէական ռումբեր և, հետեւաբար, չի կրնար ուղղակի յարձակիլ Միացեալ Նահանգներու վրայ, բայց կրնայ անուղղակի կերպով վտանգել Ամերիկայի ապահովութիւնը, որովհետեւ արեւելեան Եւրոպայի մէջ այսօր ունի այնքան զօրք և ռազմագիտական այնպիսի դիրքերու մէջ է, որ կրնայ նուաճել արեւմտեան Եւրոպան, ինչպէս որ ըրաւ Հիթլեր 1940ին»։

Ի տես այս կացութեան, Էլիոթ խորհրդածում է.

«Որքան ատեն որ կայ այս փոխադարձ անմիջական սպառնալիքը, բնական է, որ ներկայ ձրգտուած վիճակը պիտի շարունակուի ու թերեւս աւելի եւս վատթարանայ։ Ատկէ միակ գործնական ելքն այն է, որ Ուաշինկթըն դադրի հիւլէական ռումբ արտադրելէ, իսկ Մոսկուա ալ յետ քաշէ իր զօրքերը արեւելեան Եւրոպայի որոշ տեղերէն եւ մնացած տեղերու մէջն ալ պակասեցնէ զանոնք։ Ուստիկա ընէ այնպէս, որ իր սահմաններէն դուրս աւելի զօրք չունենայ Եւրոպայի մէջ, քան ամերիկացիք ու անգլիացիք ունին։ Այն ատեն, Էլիոթի կարծիքով, անմիջական բախումի վտանգը եթէ չվերնայ ալ, գէթ պիտի սահմանափակուի, և ժամանակ պիտի շահուի՝ աւելի հանգիստ օրտով ստեղծելու համար տեւական հաւասարակշռութեան վիճակ մը և կայացնելու համար ընդհանուր իրաւախոհութիւն մը Արեւմուտքի և Արեւելքի միջև»։

Այս դատումներուն մէջ մեզ ամենէն աւելի շահագրգռողը ռազմա-քաղաքական այն դեղագիրն է.

որ հեղինակը առաջարկում է Անդրկովկասի նկատմամբ.

«Հեսաֆրբական է,— նկատում է «Հայրենիք», — որ այսպիսի ելքի մը նախապայմաններեն մէկն ալ ելիքը կը նկատէ ռուսական զօրքերու կրճատումը Անդրկովկասի մէջ այնպէ՛ս, որ անոնք աւելի զօրաւոր չըլլան, քան թրքական եւ պարսկական բանակները...»։

Այս գերազանցագուրգուրանքը ի խնդիր Թուրքիոյ ապահովութեան չդայլուում է անչուշտ իբրեւ վարձք այն «աջակցութեան», որ այդ երկիրը երկու մեծ պատերազմներին բերաւ Դաշնակիցներին...

Հիւլէական ուժի կապակցութեամբ նոյն խնդրին անդրադառնալով, Էիպման, որ Խ. Միութիւնը սանձած պահելու համար չէր ուզում նրան ոչ մէկ ռազմադիրք կիջել Նեղուցներում, գրում է.

«Մենք մեզ հարցնում ենք.— տէ՞ր ենք թէ ոչ զէնքերի, որոնք Ռուսիան պիտի բռնադատէին անպայման անձնատուր լինելու։ Անվարան կարող ենք պատասխանել.— ներկայիս տէր չենք նմանօրինակ զէնքերի։ Ինչպէս մենք, ռուսներն էլ պիտեն այս պարագան»։

Խ. Միութեան զօրութիւնը մատնանշելով հիւլէական ուժի դէմ, որ առաւելապէս քաղաքների «խաղաղ բնակչութիւնը բնաջնջելու ծառայող մի զէնք է», հեղինակը նկատում է.

«Ռուսները տէր են այսօր վինուորական մի զէնքի, որից զուրկ ենք մենք։ Այդ զէնքն է՝ գրեթէ անսպառ հետեւակ զինուորների աղբիւրը, որ հիւլէական պատերազմի պարագային թէ՛ պաշտպանողական եւ թէ յարձակողական նպատակով պիտի կարողանան օգտագործել։ Ռուսները (վերջին պատերազմին) գերակշիռ զէնքերը փոխադարձեցին

նախ «նահանջելով», յետոյ նախայարձակին մաշեցնելուց ու սպառելուց յետոյ հեռաւոր տարածութեանց մէջ՝ նրա վրայ չղթայազերծելով մարդկային զանգուածները։ Նրանք Նապոլէոնի և Հիտլերի դէմ ճակատեցին՝ արեւելեան Ռուսիոյ ներքեւը քաշուելով։ Հիւլէական ռումբերի դէմ նրանք պիտի մաքառեն ոչ միայն դէպի արեւելեան Ռուսիա քաշուելով, այլ և միաժամանակ դէպի արեւմըտեան Եւրոպա յառաջանալով։ Զմոռանանք, որ ռուս հետեւակազօրքերը գտնւում են Նորվեգիոյ, Շուէդի, Ֆինլանդիոյ և Դանիոյ սահմանների վրայ, Գերմանիոյ մէջ՝ Էլբա գետի, Աւստրիոյ մէջ՝ Դանուբի վրայ և, չնորհիւ Իւգոսլաւիոյ հետ ռուսների ունեցած զինակցութեան, դէպի Իտալիա առաջնորդող բաց դաշտերի վրայ»։ *)

Այս վտանգները նկատի առնելով՝ հեղինակն իր երկրին առաջարկում է լրջօրէն խորհել զինուորական մեծ պետութիւն մնալու աւելի ապահով միջոցների մասին, քան հիւլէական ռումբն է։

Եւ իր որոնումների այս ճանապարհին, մէկ այլ յօդուածի մէջ, հեղինակը կրկին դառնում է Թուրքիոյ.

«Որքան ժամանակ որ պ. Բըրնզ փորձում էր բանակցութեանց միջոցով դուրս հանել Կարմիր Բանակը արեւելեան Եւրոպայից, Ստալին կարող էր, համեմատելով Կարմիր Բանակի չափը Ամերիկեան և Բրիտանական զօրքերի չափի հետ, վստահ լինել, որ պ. Բըրնզ իր նպատակին պիտի չհասնի, եթէ ամբողջ ամառն իսկ խօսի։ Բայց երբ Սեպտեմբերին (1946ի.—Ն.) ամերիկեան ծովային և օդային ոյժ ստեղծուեց Միջերկրականում եւ Թուրքիոյ հետ-

*) Ա. Լիպմանն — «Հիւլէական ռումբը կարելի չէ խ. Միութեան դէմ գործածել» («Ժամանակ», Պոլիս, 1946, Դեկտ. 14):

ուը, որ նախադուռն է խ. Միութեան ամենէն խոցելի մասի (ընդգծումը՝ մեզանից.—Ն.), այն ժամանակ փոխուեց ուժերի հաւասարակշռութիւնը Եւրոպայում եւ աշխարհի մէջ։ Կարմիր Բանակը, որ տիրապետում է արեւելեան Եւրոպայում, եւ որ անկարելի է տեղից շարժել դիւանագիտական յարձակումով ճակատից, կարող է վտանգուել արեւելեան Միջերկրականից։ Ամերիկացիք եւ անգլիացիք երբեք չեն կարող Կարմիր Բանակի չափ զինուորական զանգուած ունենալ Եւրոպայում։ Մինչ ծովային եւ օդային զինուորական ոյժը մի այնպիսի ոյժ է, որ մենք ունենք եւ մենք կարող ենք մեր ուզածի չափ մեծացնել։ Այս ուժի երեւումը Եւրոպայում, ռուսների ունեցած ամբողջ դիրքի թիկունքում, այն էլ ուղղուած դէպի Ռուսիոյ ամենէն խոցելի կողմը, մի այնպիսի ազդակ է, որ Ստալինը չէր կարող անտեսել, եւ հաւատում ենք, որ նա անտեսած չէ իր քաղաքական հաշիւներն անելու ժամանակ»։ *)

*) «Հայրենիք» (խմբ.), 6 Նոյ. 1946:

Անցողակի յիշատակենք, որ երբ երկրորդ մեծ պատերազմը սկսաւ, Ամերիկան զէնքի տակ 174.000 զինուոր ունէր: Պարտադիր զինուորական ծառայութիւնը, որ գոյութիւն ունէր միայն առաջին մեծ պատերազմի երջանին, վերանասցուեց միայն 1940ի Սեպտ.ին (Ամերիկան պատերազմի մտնելուց աւելի քան մէկ տարի առաջ):

1946ի Հոկտ.ին, երբ Գերմանիա եւ Ճապոն վերջնապէս ջախջախուած էին արդէն, Միացեալ Նահանգների զինուորական նախարարը՝ Ռոբերտ Պատերսըն՝ նաւ խօսելով Սան Ֆրանչիսկոյում, յայտարարում էր, որ ամերիկեան բանակը բաղկացած պիտի լինի տուրջ հինգ միլիոն զինուորներից՝ հաշուելով թէ՛ կանոնաւոր եւ թէ պահեստի զօրքերը: Կանոնաւոր բանակը պիտի ունենայ տուրջ մէկ միլիոն զինուոր: Այս մէկ միլիոնից միայն 300.000ը՝ ցամաքային բանակներում, մինչ 400.000ը — օդային:

1946 Հոկտ. 8ին նաւ խօսելով Չիկագոյում ամերիկեան բաղ-

Ընդհանուր առումով այս է մեր օրերի ռազմաքաղաքագէտների «իմաստութեանց» վերջին խօսքը. — գալիք նոր պատերազմը կա՛մ չանել արագօրէն՝ հակառակորդի հարիւրաւոր քաղաքները — քազմամիլիոն բնակչութեամբ — հիւլէական ռումբերի տարափի տակ մոխրելով, և կամ, եթէ անհնար է այս, հաշտուել այն մտքին, որ արեւմտեան ճակատը մինչեւ Ատլանտեան, մանաւանդ պատերազմի սկզբնական շրջանին, կարող է անցնել Կարմիր Բանակին, մինչ հարաւայինը, մանաւանդ Նեղուցներով ու Թրքական ծովափերով միասին, պիտի մնայ Դաշնակիցներին...

Աւելի ուշ նոյն Լիպմանը, անդրադառնալով Տրումընի առաջարկով Ամերիկայի կողմից Թուրքիոյ եւ Յունաստանի ընծայուելիք օգնութեան, նկատում էր.

«Մենք Թուրքիան եւ Յունաստանը ընտրեցինք ո՛չ նրա համար՝ որ նրանք մասնաւորապէս կարօտ են օգնութեան. ո՛չ նրա համար՝ որ նրանք փայլուն օրինակներ են ժողովրդապետութեան եւ չորս ազատութեանց, այլ որովհետեւ նրանք հանդիսանում են ռազմագիտական ճանապարհը դէպի Սեւ ծով եւ Խ. Միութեան սիրտը։ Մեր ուժը գործածելով այն կէտի վրայ, ուր Խ. Միութիւնը ամենէն աւելի խոցելի է, մեր նպատակն է թեթեւացնել ճնշումը ամբողջ Եւրոպայի սահմանների վրայ և թուլացնել խորհրդային սեղմումը եւրոպական ցամաքի վրայ։

մաօդային ուժերի հրամանատարը՝ զօր. Սպասաս՝ յայտարարում էր.

"Միայն օդային հզօրութիւնը կարող է պաշտպանել Ամերիկան բեւեռային շրջաններից սպառնացող յարձակումների դէմ„։

Զօրանաւերի վարչութեան ընդհ. վերատեսչի՝ Սիլմրնի յայտարարութեամբ՝ Ամերիկան իր 1946ի բիւդջէի 45%ը յատկացրած էր բանակին եւ ռազմատորմիղին։

Երբ միջոցներ ենք ձեռք առնում վստահ լինելու համար, թէ կարող ենք Սեւ ծով մտնել, դրանով ոչ միայն ապահովում ենք այն՝ որ Խորհուրդները Միջերկրական չեն կարող մտնել, այլ և այն՝ որ այժմ մենք կարող ենք արդիւնաւորապէս բանակցել Խորհուրդների հետ, իրենց զինուորական ուժերը Եւրոպայից քաշելու համար։»*)

Սակայն այս կարգի միջոցներով մարդկային պատմութեան մէջ ցարդ ոչ ոք կարողացած է խաղաղութիւն բերել աշխարհին։

Ինչո՞ւ Ամերիկան, որ 9.000 քիլ. տարածութեամբ հեռու է Միջերկրականից՝ կարող է Միջերկրական մտնել, իսկ Ռուսաստանը, որ միջերկրականեան երկիր է՝ կարող չէ։

Ինչո՞ւ և՛ Անգլիան, եւ՝ Ռուսաստանը, եւ՝ Ամերիկան միաժամանակ — նոյն իրաւունքներով և նոյն ազատութեամբ — չեն կարող օգտուել միջերկրականեան ջրերից։

Սպառազինումով երկարած ձիթենին խաղաղութիւն չունի իր մէջ։

«Այն խաղաղութիւնը, որ հաստատուած է իրեարահակացողութեան վրայ, — նկատում էր Հէնրի Ուոլլը, — կարող է լինել երկարատեւ, մինչ այն խաղաղութիւնը, որ հաստատուած է ուժի վրայ, երկարատեւ երբեք չի կարող լինել»։**)

Տեւաբար այս նոյն գաղափարն էր քարոզում նաև Հիւս. Ամերիկայի վաղամեռ Նախագահը՝ Ռուզվելտ։

Նոյն գաղափարը պէտք է արծարծեն ամէնքն

*) «Ճակատ կը յարդարեն» («Յառաջ», 10 Ապրիլ 1947)։

**) Մ. Գալակտիոնով — «Սպառազինման սնումը Միացեալ Նահանգներում» ("Նովոյէ Վրեմիա", Մոսկուա, 1 Նոյ. 1946, թիւ 21)։

անխտիր՝ պատերազմի բոլո՛ր թշնամիները և խաղաղության բոլո՛ր բարեկամները։

Խօսելով պարսկական Ատրպատականի «ինքնավարութեան» հաշուեյարդարի մասին՝ Չըրչիլն իր վերջին յօդուածներից մէկում նկատում էր.

«Այս պարագան (այսինքն՝ հաշուեյարդարը.— Ն.) պէտք է վստահութիւն ներշնչի բոլոր նրանց, որոնք մեզ կարծում են, թէ խորհուրդներն՝ իրենց երկրում այժմ տիրող պայմանների և մեծ ազգերի վերախմբման ներքոյ վիճակում՝ պատերազմ չեն ուզում, այլ միայն ուզում են նրա պտուղները խաղալ՝ առանց ներդրութեանց և ցնցումների ենթարկուելու»։*)

Այս վկայութիւնը գալիս է մի մարդուց, որ ամենէն անհաշտ հակառակորդներից է բոլշեւիզմի և ամենէն կասկածոտ վերաբերումը ունի խորհրդային քաղաքականութեան դիտաւորութեանց հանդէպ։

Եւ ճիշտ այդ պատճառով էլ մեծապէս բարձրանում է վկայութեան արժէքը։

Չըրչիլի հետ է իր վկայութեան մէջ նաեւ Ֆ. Ֆրութեան անցեալը։

Խորհուրդները իշխանութեան եկան 1917ին եւ մինչեւ 1941 Յունիս 22ը, առանց փոքրիկ զինաթափումները հաշուի առնելու, պատերազմների մէջ չմտան և ապրեցին խաղաղութեան մէջ։

Համոզուած ենք, որ, կամայ թէ ակամայ, նրանք պիտի ուզեն ապրել խաղաղութեան մէջ նաեւ սրանից յետոյ։

Ռուս երկիրը պէտք չէ նոյնացնել Բոլշեւիզմի

*) Ուինսթըն Չըրչիլ — «Ռուսիոյ դիտաւորութիւնները եւ ամերիկեան միջամտութիւնը» («Յուս.», 28 Ապր. 1947)։

հետ. նոյնացնել կարող են նրանք, որոնք հատուցում դարձնելու համար իրենց պայքարը Ռուսիոյ դէմ, չարունակ Բոլշեւիզմի մասին են խօսում։

Պէտք չէ նոյնացնել անգամ Խ. Իշխանութիւնը Բոլշեւիզմի հետ, որովհետեւ մի զգալի չափով տարբեր երեւոյթներ են նաեւ այս երկուսը, մէկը՝ իր պետական հանգամանքով, իսկ միւսը՝ կուսակցական։

Պաշտպանել ռուս երկրի իրաւունքները ներդրումների հարցում, այս երբեք ասել չէ պաշտպանել կա՛մ Խորհուրդները՝ իբրեւ վարչակարգ և կամ Բոլշեւիզմը՝ իբրեւ վարդապետութիւն։

Մերը չեն ո՛չ Խորհրդային կարգերը եւ ոչ էլ Բոլշեւիզմը։*)

Սակայն մենք չենք վարանում ռուս երկրի իրաւունքները պաշտպանել ներդրումների հարցում, որովհետեւ այդտեղ ենք տեսնում խաղաղութեան շահը եւ արդարութեան պահանջը։

Ինչպէս որ չենք վարանում պաշտպանել մեր այսօրուայ հայրենիքի հողային ընդարձակման պահանջը — Սեւրի դաշնագրով և Ուիլսընեան իրաւարարութեան սահմանների մէջ — հակառակ այն իրողութեան, որ չար լեզուները, գլխաւորութեամբ Թուրքիոյ, լռութեան դատապարտելու համար մեզ, ձիգ են անում մեր արդար պահանջը նոյնացնել Բոլշեւիզմի՝, Խորհուրդների՝ եւ համայնավար ծաւալապաշտութեան հետ...**)

*) Անցողակի նկատեմ, որ հին առումով Ռուսիոյ մէջ, 1935ից այս կողմ, Խորհուրդներ այլեւս չկան։ Խորհուրդներից մնացել է միայն բառը, սակայն հիմնապէս տարբեր բովանդակութեամբ (տե՛ս մեր յօդուածը — «Ամենադեմոկրատիկ» բռնակալութիւնը», «Հայրենիք», Մայիս 1938)։

**) Գերմոյկիս 420ող էջի «Մտաճութեան» մէջ յիշատակած եմ արդէն, որ, վկայութեամբը Նիհաղ Էդիմի, Մոսկուան՝ «1945ից

Գիտակցաբար երեւոյթները չաթափոխելով՝ նը-
ղանք ռուս են տեսնում այնտեղ՝ ուր խօսողը հայն
է, եւ Ռուսաստան են տեսնում այնտեղ՝ ուր պա-
հանջատէրն ու պայքարողը Հայաստանն է։

Առանց Երեքների փոխադարձ համաձայնու-
թեան — և արդարութեան հիմունքով — Նեղուց-
ների եւ հայկական հողերի հարցերը կարգադրելու՝
կարելի չէ իսկական խաղաղութիւն հաստատել
Մերձ-Արեւելեան աշխարհում։

Իսկ այս հարցերն էլ, ըստ երեւոյթին, կարե-
լի պիտի լինի կարգադրել ոչ թէ անջատաբար, այլ
բոլոր կնճիռները միասին առնելով և մեր փոքրա-
ցած աշխարհում ուժերի որոշ հաւասարակշռութիւն
ստեղծելով։

1947 Ապր. 30ին խօսք առնելով Միացեալ Նա-
հանգների Առեւտրական Սենեակի նստաշրջանին՝
մեզ ծանօթ վոլտը Լիպմանը յայտարարում էր.

«Խ. Միութիւնը գիտէ, որ մեծ է վտանգը, ե-
թէ երբեք ինք կորցնի պատերազմի և խաղաղու-

կրկնուած իր հողային պահանջների մասին... խօսած է Թուրքիոյ արտ. գործոց նախարար Սարաջօղլուին, երբ նա 1939ին գնում էր Մոսկուա»:

Արդ, Ահմեդ Շիւքրիւ Էսմեր — "Ուլուս"ի քաղաքական բաժնի խմբագիր եւ անգամ «ՄԱԿ»ի բրէ. պատուիրակութեան — Forein Affairs, American Quarterlyի մէջ ընդարձակ յօդուած գեղեղելով Նեղուցների մասին, այդտեղ յայտնում է, թէ 1939ին Մոսկուա **ի՛նչ** հողերի մասին խօսած է Սարաջօղլուին.

«Երբ Մոսկուայի թուրք դեսպանը ուզեց հասկանալ (1945ի Մարտին.—Ն.), **թէ ի՛նչ փոփոխութիւններ են պահանջւում** (1945 Մարտ 19ի խորհրդային յուշագրով՝ 1925ի թուրքիախորհրդային դաշնագրի մէջ.—Ն.)՝ **նրան բացատրէն պատասխանուեց, որ Թուրքիան ուզում է Նեղուցների իրաւավիճակը փոխել՝ «ազգու երաշխիքներ ունենալու համար, ինչպէս նաեւ կցել** (Խ. Հայասանին.—Ն.) **Թուրքիոյ արեւելեան գաւառները»** («Հայրենիք», 13 Ապր. 1947):

թեան միջեւ ընտրութիւն անելու հնարաւորութիւնը։ Միացեալ Նահանգները, ընդդիմանալով ռուսական ծաւալումին, պէտք չէ, սակայն, այնպիսի դիրք բռնեն, որ կողմերին — մէկին կամ միւսին — միայն մէկ միջոց մնայ — անպայման անձնատուութիւն»։

Լիպմանը հինգ պայմաններ էր մատնանշում, որոնք, ըստ իրեն, թոյլ պիտի տային պատուաւորապէս կարգադրել ստեղծուած դժուարութիւնները.

«1.— Status quoն Չինաստանում։

«2.— Ցունգասանին եւ Թուրքիոյ տրուելիք օգնութեան կցել մի դաշնագիր, որով երաշխաւորուում են խորհրդային շահերը Դարդանելում (ընդգծումը՝ մեզանից.—Ն.)։

«3.— Գերմանիոյ ապակենտրոնացումը եւ ամբեմտեան երեք գօտիների դաշնակցութիւնը, միաժամանակ, եթէ անհրաժեշտ է, բաց դուռ ձգելով Խ. Միութեան յարումի համար։

«4.— Դիւրացնել Եւրոպայի տնտեսական միութիւնը, աջակցութեամբը Խ. Միութեան, հայթայթելով անհրաժեշտ դրամագլուխը եւրոպական տնտեսական վերածնունդի համար։

«5.— Վարկեր բանալ Խ. Միութեան, ինչպէս նաեւ յօժարել հատուցումների գանձումին Գերմանիոյ ընթացիկ արտադրութիւնից՝ դիւրացնելու համար Խ. Միութեան վերաշինութիւնը»։*)

Այստեղ մեզ շահագրգռողը Լիպմանի մօտեցումի կերպն է «Երեքներ»ների առջեւ ցցուած կնճիռների լուծման մէջ։

Ըստ Լիպմանների՝ Նեղուցների հարցը անջատաբար կարելի չէ լուծել, մինչ այլ խնդիրների վապակցութեամբ՝ կարելի է։

---

*) «La Bourse Egyptienne», 2 Մայիս 1947:

Այստեղ, այս առնչութեամբ, պիտի ուզէինք մատնանշել մէկ այլ խնդիր եւս։

Իրականին մէջ երկրորդ համաշխարհային պատերազմի յաղթական վախճանով ոչ թէ մարդկային պատմութեան մէջ մի էջ փակուեց, և բացուեց մի նոր էջ, այլ մարդկային մի պատմութիւն փակուեց, և դրուեց սկիզբը մի նոր պատմութեան։

Այս նոր պատմութեան մէջ առանձնակի տեղ է գրաւում մեծ և աշխարհավար ցեղերի — ոչ միայն անգլօ-սաքսոնների, այլ և սլաւների — համախմբումն ու ամբողջացումը։

Պատմական մի խոր ու դարաւոր երեւոյթ կարծես ձեւ է առնում մեր աչքերի առջև։

Բազմամամուտ պատմաբանը՝ Վ. Կլիւչեւսկիյ (1841—1911)՝ ունկնդիր իր հեռաթափանց մտքի ներշնչումին, սրանից աւելի քան վաթսուն տարի առաջ՝ 1884ին՝ Մոսկուայի համալսարանի պատմութեան ամբիոնից նախագուշակում էր իր ուսանողներին.

«Եւրոպայի պատմութեան 19րդ դարը յայտարերում է՝ հետեւեալ ձգտումը միջազգային քաղաքականութեան մէջ, — ստեղծել քաղաքական մեծ մարմիններ՝ միեւնոյն ազգութեան նախապէս բաժան մասերի քաղաքական ամբողջացումով։

«Եւրոպան ամփոփւում է, բիւրեղանում և վերածւում սակաւաթիւ, բայց ազգային մեծ պետութեանց մի ընտանիքի։

«Ռուսիա, քաղաքականապէս կեանքի կոչելով Արեւելքի փոքր սլաւ ժողովուրդներին, հակազդող ուժ է ստեղծում Եւրոպայի այդ ազգային-քաղաքական բիւրեղացումին։

«Տակաւին կարելի չէ վճռաբար ասել, թէ իրաւամբ նոր ծրագի՞ր է այս, միջազգային մի նոր

սկզբո՞ւնք, թէ՞ առաջին պանն է այն նոր պրոցեսի, որ կատարւում է Արեւմուտքում. այլ խօսքով՝ կարելի չէ նախատեսել, թէ քաղաքական կեանքի կոչուած Արեւելքի փոքր ուղղափառ և սլաւ ժողովուրդները արդեօք Եւրոպան քաղաքականապէս պիտի կոտորակե՞ն մանր քաղաքական միաւորների, թէ՞, ընդհակառակն, իրե՛նք պիտի ամբողջանան մէկ վիթխարի ուղղափառ-սլաւ պետութեան մէջ»։ *)

Վաթսուն տարի յետոյ, համաշխարհային երկրորդ մեծ պատերազմի վախճանին, մենք այս հարցումի պատասխանը մի չափով ունենք արդէն. մեր աչքերի առջեւ սլաւ ժողովուրդները միանում եւ ստեղծում են այն մեծ ընտանիքը, որի մասին սերունդներ ամբողջ երազում էին, մանաւանդ ռուս երկրի մէջ։

Այս մեծ ընտանիքը իր տան ապահովութիւնը պիտի որոնի նաև Նեղուցներում։

Քմահաճոյք չէ այս, այլ կեանքի և պատմութեան հրամայական պահանջ։

Այս կնճռի լուծումը պէտք է գտնել ոչ թէ թուրը պատեանից հանելով, այլ տագնապահար ոռոնելով, վիճելով և գալիք անաւոր սարսափները ճախատեսելով. գտնել պէտք է խաղաղութե՛ան ճանապարհներով, բայց ոչ պատերազմի։

Բոլոր խաղաղասէր ոյժերը — մեծ թէ փոքր — պէ՛տք է կազմակերպուեն՝ պատերազմը արգելելու համար։

Ամենազգի հրձիգները թեթեւօրէն խօսում են պատերազմի մասին, մոռանալով, որ մենք մտած ենք Հիւլէական Դարաշրջանի մէջ։

---

*) Պրոֆ. Վ. Կլիւչեւսկիյ — «Դասընթացք Ռուս Պատմութեան», հ. Ե., 1922, Պետրոգրադ, էջ 161—162:

Այս խօսքը առնելով ոչ թէ իր նեղ, այլ իր ղայն և համապարփակ իմաստով։

Դարաշրջանի համար բնորոշը միայն ղէնքը չէ, այն ռումբը, որ 1945 Օգոստ. 6ին նետուեց Հիրոշիմա քաղաքի վրայ՝ չուրջ 300.000նոց մի հըստկայ քաղաք իր բնակիչներով միասին բոցերի մէջ մոխրելով։*)

Իրենց ձեւով և արդիւնքով ինքնատիպ «հիւլէական ռումբ»եր էին նաև այն ակտերը, որ Խ. Իշխանութիւնը գործադրեց հինգ ինքնավար հանրապետութեանց և շրջանների նկատմամբ՝ անհաւատարմութեան ամբաստանութեամբ նրանց բոլորին «հաշուեյարդար»ի ենթարկելով, — Գերման-Վոլգեան Ինքնավար Հանրապետութիւնը՝ Գերագոյն Խորհուրդի Նախագահութեան 1941 Օգոստ. 28ի դեկրետով (այս Հանրապետութիւնը 605.000 բնակիչ ունէր), Կարաչաեւեան Ինքնավար Շրջանը (149.000 բնակիչներով), Ղալմուխների Ինքնավար Հանրապետութիւնը (220.000 բնակիչներով), Չեչէն-Ինգուշեան Ինքնավար Հանրապետութիւնը (697.000 բնակիչներով) և Խրիմի Ինքնավար Հանրապետութիւնը (1.127.000 բնակիչներով)։**)

Ինքնայատուկ «հիւլէական ռումբ» էր նաեւ միլիոնաւորների այն մեծ տեղաշարժը, որ Բելոռուսիայից և Ուկրայնայից կատարուեց դէպի Լեհաստան, Լեհաստանից՝ դէպի Արեւելեան Պրուսիա և այս վերջին շրջանից՝ դէպի կենտրոնական եւ Արեւմտեան Գերմանիա։***)

*) Երկրորդ ռումբը 1945 Օգոստ. 9ին նետուեց Նագասակիի վրայ։

**) Ռ. Դվինով — "Ժողովուրդների մեծ գաղթը Խ. Միութեան մէջ» («Ս. Վեսնիկ», Նիւ Եորք, 12 Mars 1947, թիւ 3, էջ 38—41)։

***) 1941ին, մինչեւ առաջին մեծ պատերազմը, Գերմանիոյ տարածութիւնն էր 549.000 f. f. (առանց գաղութներ հաշուելու),

Վաղը, գալիք նոր ու անեղ զինաբախումին, հիւլէական ռումբերը պիտի տեղան հարիւրներով, թիկունքում խաղաղ բնակիչները պիտի ածխանան միլիոններով, և ազգերը — մանաւանդ փոքրերը — «հաշուեյարդար»ի պիտի ենթարկուեն տասնեակներով...

«Քաղաքակրթուող» մարդկութիւնը դէպք առ դէպք և աստիճան առ աստիճան թրքանում է իր բարոյականով։

1858ին լոյս ընծայած իր հռչակաւոր գործի առաջին հատորում — «Անգլիոյ քաղաքակրթութեան պատմութիւնը» — Բոկլը միամտաբար նկատում էր.

«Առանձնատպութիւնը այն ռազմաբախումի, որի մէջ եւ մենք խրուած ենք (ակնարկը՝ 1853ի Խրիմի պատերազմին.—Ն.), կայանում է նրանում, որ նա ծագած է ոչ թէ քաղաքակիրթ երկրների շահերի բախումից, այլ Ռուսիոյ և Թուրքիոյ միջև յառաջացած խզումից,— երկու նուազ քաղաքակիրթ պետութիւններ, որոնք այժմ գտնուում են Եւրոպայում»։

Բոկլը վաւերագրում էր, «իբրեւ չափազանց կարեւոր երեւոյթ, ա՛յն, որ աննախընթացօրէն երբ-

1920ին՝ պատերազմից յետոյ՝ 468.780 f. f., 1938ին՝ երկրորդ պատերազմի նախասեմին՝ 583.000 f. f., 1947ին՝ երկրորդ պատերազմի վախճանին՝ 380.000 f. f.։

Միայն Լեհաստանին արեւելեան Գերմանիայից փոխանցուած են 65.000 f. քիլ. տարածութեամբ հողեր (Արեւելեան Պրուսիոյ մի մասը ու նաեւ Սիլեզիոյ, Պոմերանիոյ եւ Բրանդենբուրգի շրջանները)։ Այս հողերից, վկայութեամբ Մոլոտովի, առ 15 Ապր. 1947, տեղահանուած էին 5.678 000 գերմաններ (դէպի արեւմտեան Գերմանիա), եւ նրանց տեղերը բերուած էին աւելի քան 5.000.000 լեհեր։ Այս նոյն շրջաններում, առ 15 Ապր. 1947, մնում էին միայն 400.000 գերմաններ, որոնց տեղահանութիւնը նոյնպէս նախատեսուած է։

կարատեւ խաղաղութիւնը (Վիեննայում 1815ին հիմնադրուած Սրբազան Դաշնակցութիւնից մինչեւ Խրիմի պատերազմը.—Ն.) խախտուած է ոչ այնպէս, ինչպէս առաջ, այսինքն բախումովը երկու քաղաքակիրթ ժողովրդների, այլ յարձակումովը անքաղաքակիրթ Ռուսիոյ՝ Է՛լ աւելի անքաղաքակիրթ Թուրքիոյ վրայ...»։

Անգլիոյ միջամտութիւնը Խրիմի պատերազմին նկատելով իբրեւ «քաղաքակրթութեան պաշտպանութիւն ընդդէմ բարբարոսների»՝ գիտունը եզրափակում էր.

«Հակումի պակասը դէպի պատերազմը արդիւնք է մշակուած հաշակի, յատուկ՝ մտաւորապէս զարգացած ժողովրդի»։

Շուրջ մէկ դար է անցած այս միամիտ հաւատքի վրայից, և այսօր, մէկ դար վերջ, բարձրօրէն քաղաքակիրթ ժողովուրդները հակում ունեն ոչ թէ դէպի պարզ պատերազմները, այլ հակում ունեն դէպի զանգուածային բնաջնջումի զէնքերը և դէպի «հիւլէական» ակտերը, լինի՛ պատերազմի ժամանակ, լինի՛ խաղաղութեան մէջ։

Միացեալ Ազգերի Ընդհանուր ժողովին արտասանած իր ընդարձակ ճառի մէջ — Նիւ Եորք, 1946 Հոկտ. 29ին — Ռ. Միութեան արտ. գործոց նախարարը՝ Վ. Մոլոտով՝ յայտարարում էր.

«Բոլորը գիտեն, որ հիւլէական ռումբը գործածուեց այնպիսի քաղաքների վրայ, ինչպէս Նագասակին եւ Հիրոշիման են։ Ճապոնական այդ քաղաքների ազգաբնակչութիւնը ճաշակեց հիւլէական ռումբի անգթութիւնը։ Սակայն հիւլէական ռումբը զօրքերի դէմ ոչ մէկ տեղ պիտանի չեղաւ։ Եւ սա պատահականութիւն չէ։ Եթէ, այնուամենայնիւ, ծրագրեր կան հիւլէական ռումբերը քաղաքներ

ների խաղաղ բնակչութեան դէմ օգտագործելու, և այն էլ՝ լայն չափերով, ինչպէս այդ մասին շաղակրատում են մի կարգ թերթերի մէջ, ապա պէտք չէ պատրանքներ սնուցանել այս կարգի գազանային ծրագրերի կիրարկումովը յառաջացած մի-ջազգային ազդեցութեան մասին»։

Անկախ այս ազդեցութիւնից՝ Մոլոտով անհրաժեշտ էր նկատում հետեւեալ ազդարարութիւնն անելու.

«Ի վերջոյ պէտք չէ մոռանալ, որ մէկի հիւլէական ռումբերին կարող են հակադրուել միւսի թէ՛ հիւլէական ռումբերը և թէ ուրիշ բաներ, եւ այն ժամանակ մի կարգ ինքնահաւան, բայց սահմանափակ մարդոց այսօրուան բոլոր հաշիւների վերջնապէս փուճ լինելը աւելի քան բացայայտ կը դառնայ։ Պատրանքները լուրջ գործերի մէջ միշտ վնաստանգաւոր են, ինչ որ, ի վերջոյ, ստիպուած պիտի լինեն ընդունելու ինչպէս ինքը Բարուխը, այնպէս նաև իր գործակիցները»։*)

Ահա այն մթնոլորտը, որի մէջ շնչում է այսօր ոճիրների տակ կքած մեր աշխարհի մարդկութիւնը։

Զուր չէ, որ պատերազմի սկզբնական շրջանի Անգլիոյ վարչապետը՝ Չեմբըրլէն՝ 1939 Նոյ. 28ին Համայնքների Տան ամբիոնից իր արտասանած ճառի մէջ նախազգարարում էր.

«Երբ մենք յաղթենք, ապա, թերեւս, մեզ պէտք պիտի լինեն աւելի կամք եւ երեւակայութիւն այն բանի համար՝ որ շահենք խաղաղութիւնը, քան ունեցանք այն բանի համար՝ որ շահենք պատերազմը»։**)

---

*) «Իզվեստիա», 31 Հոկտ. 1946։

**) «Պոսլեդնիա Նովոստի» (Փարիզ), 29 Նոյ. 1939։

Այս կամքն ու երեւակայութիւնը պէ՛տք է որ ստեղծուեն։

Հիւլէական դարաշրջանը իր համապարփակ ու համածաւալ սարսափներով հրամայաբար պարտադրում է աշխարհի վարիչներին իրենց կարողութիւնների գերագոյնը փորձել՝ նոր հրդեհի ճարակումը արգելելու համար։

«Վարել — նշանակում է նախատեսել», թերեւս երբեք այս իմաստութեան յիշեցումը այնքան ճիշտ եւ տեղին եղած չէ, որքան այսօր է։

Կուէբեկի միջնաբերդից խօսելով՝ Չըրչիլ, 1943 Օգոստ. 31ին, ի լուր իր բոլոր բարեկամների եւ քննադատների, յայտարարում էր.

«Մահկանացուների մէջ ամենէն մտացիներին իսկ տրուած չէ գիտենալ ստուգապէս՝ թէ ի՛նչ են իրենց չաները. սակայն պարզ մարդոց իսկ տրուած է գիտենալ ամէն օր՝ թէ ի՛նչ են իրենց պարտականութիւնները»։

Չըրչիլ, ըստ երեւոյթին, ուզում էր ասել, թէ ի՛նչ կը ծնի վաղը իր գործերից (Գերմանիան պարտութեան մատնելուց)՝ ինք չգիտէ, սակայն ի՛նչ պէտք է անել այսօր (Գերմանիան պարտութեան մատնելու համար)՝ ինք գիտէ։

Այսպէս դատել՝ այս նշանակում է սխալ գործելու իրաւունքը ստանալ։

Սակայն, եթէ այսպէս կարելի էր անել երէկ՝ պատերազմի ժամանակ, երբեք կարելի չէ այսպէս անել այսօր՝ խաղաղութեան մէջ։

Երբ մանաւանդ ստոյգ է, որ խաղաղութեան մէջ գործուած սխալը աշխարհն ու մարդկութիւնը պիտի տանէր դէպի վերջնական փճացում։

Չուր չէ, որ մեծանուն քաղաքագէտը՝ Տալէյրան (1754—1838)՝ ասում էր սխալուած քաղաքագէտ-

ների հասցէին.— «Ոնիր չէ՝ որ ցերեմ, այլ՝ սխալ է»։

Այս «սխալ»ը պէտք չէ տեղի ունենայ մասնաւորաբար Թուրքիոյ կապուած հարցերում, ծովային թէ ցամաքային։

1947 Ապր. 1ին խօսք առնելով Նիւ Եորքի Մեդիսըն Սկվերի համաժողովրդական հաւաքոյթին՝ Միացեալ Նահանգների նախկին փոխ-նախագահը՝ Հէնրի Ուոլլաս՝ յայտարարում էր.

«Ալտայում մենք հանդիսաւորապէս համաձայնուեցինք, որ յաղթանակից յետոյ բրիտանական իշխանութիւնը, փոխադարձ խորհրդաւորութեամբ (Մեծերի միջեւ.—Ն.), պիտի թուլացուի սեւծովեան նեղուցների վրայ։ Պոտսդամում մենք հաստատեցինք այս համաձայնութիւնը։ Բայց եւ այնպէս, հակառակ այս խոստումներին, 18 խաղաղ ամիսների ընթացքին ո՛չ մէկ գործ կատարուեց այս ուղղութեամբ»։ *)

Այս վկայութիւնը գալիս էր մի մարդուց, որ 1945ին փոխ-նախագահ լինելով՝ լաւատեղեակ էր, թէ ի՛նչ համաձայնութիւններ եղած են Ալտայում և Պոտսդամում։

Արդ, ինչո՞ւ 1945ին կարելի էր որոշ իրաւախոնութեան գալ Թուրքիոյ շուրջ, իսկ այսօր կարելի չէ։

Մի՞թէ միակ պատճառը — խաղաղութիւնն է։

Ո՛չ, պէտք չէ, որ Թուրքիան — այս դարաւոր «հիւանդ»ը — մէկ ամբողջ աշխարհամասի կրծքին բացած իր ծովային և ցամաքային խոցերով՝ նոր արիւնահեղութեան աղբիւր հանդիսանայ։

Հին է խօսքը — «Պատմութիւնը ուսուցանում է»։

Պատմութեան 1915ի դասից — մի՛չտ ունկընդիր տեղի եւ ժամանակի պայմաններին — պէտք է օգտուել գիտենալ նաև այս անգամ։

---

*) «Հէնրի Ուոլլասի ճառը» ("Գրաւոր„, 3 Ապր. 1947)։

Ուժերի նոր հաւասարակշռութեան հիմունքը երբ գտնուի՝ դիւրութեամբ կը կարգադրուի նաեւ Թրքական կնճիռը, ինչպէս որ կարգադրուեց 1915*ին։*

Վերջացնենք մեր խօսքը այն կարեւոր յայտարարութեամբ, որ արաւ Միացեալ Նահանգների Նախագահը 1947 *Մարտ* 12*ին արտասանած իր պատմական ճառի մէջ։* *)

«ԱՇԽԱՐՀՈՒՄ ՏԻՐՈՂ ՎԻՃԱԿԸ ԱՆՓՈՓՈԽԵԼԻ ՉԷ, ԵՒ STATUS QUO*Ն ԵՒ ՆՈՒԻՐԱԿԱՆ ՉԷ։ ՍԱԿԱՅՆ ՉԵՆՔ ԿԱՐՈՂ ԹՈՅԼ ՏԱԼ, ՈՐ, ՄԻԱՑԵԱԼ ԱԶԳԵՐԻ ՈՒԽՏԱԳԻՐԸ ԽԱԽՏԵԼՈՎ, ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՒԵՆ* STATUS QUO*Ի ՄԷՋ, ԿԱՄ ԲՌՆՈՒԹԵԱՄԲ (դրսից.—Ն.) ԵՒ ԿԱՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՆԱՐԻՄԱՑ ԹԱՓԱՆՑՈՒՄՆԵՐՈՎ (ներսից.—Ն.)»։*

Ուրեմն թո՛ղ այդ փոփոխութիւնները կատարուեն երեք-Մեծերի փոխադարձ համաձայնութեամբ։ **)

Այս է Արդարութեան պահանջը, եւ այստեղ է խաղաղութեան երաշխիքը։

---

*) Այս ճառն արտասանուեց այն ժամանակ, երբ «Զորս»երի խորհրդաժողովը Մոսկուայում դեռ նոր անցած էր գործի: Խորհրդաժողովը բացուեց 1947 Մարտ 10ին եւ փակուեց Ապրիլ 24ին, տեւելով ամբողջ 45 օր, ամենէն երկարաւեւը 1941ից այս կողմ եղած բոլոր խորհրդաժողովների մէջ (1943ի աւնան խորհրդաժողովը Մոսկուայում՝ տեւեց 12 օր, Թեհրանինը՝ 5 օր, Գանիրէինը՝ 4, Եալտայինը՝ 9, Պոտսդամինը՝ 17, Լոնդոնինը՝ 22, Մոսկուայինը՝ 1945ի ձմրան՝ 11 օր):

**) «Տրումընը չի բացատրում,— նկատում էր Հ. Լասկի «Avanti»ի 1947 Մարտ 29ի թուով,— թէ ինչո՛ւ ամբողջական հարցը Նեղուցների մասին չի կարող բնինուել ո՛չ Միացեալ Ազգերի Ազգահովութեան խորհրդի եւ ոչ էլ Արտաքին Գործոց Նախարարների խորհրդի կողմից» (տե՛ս «Իզվեստիա», 2 Ապր. 1947):

Խօսքը ոչ թէ ad hoc հրաւիրուած խորհրդաժողովի մասին է (արտ. գործոց նախարարների), այլ այն խորհուրդի, որ «Երեք»ների միաձայն որոշումով հիմնադրուեց Պոտսդամում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

		էջ
	ԵՐԿՈՒ ԽՕՍՔ	VII — VIII
I	ԹՈՒՈՒՑԻԿ ԱԿՆԱՐԿ	1—45

Վոսքոր եւ Դարդանել.— Աշխարհագրական նշդակը.— Ռուսիոյ ծաւալումը.— Իր պայքարը մոնղոլածիններ եւ թաթարածին ժողովուրդների դէմ.— «Երրորդ Հռոմը».— «Անմեղ եւ մաքուր ոյժը.— Հիւսիսի «պատուհանը» եւ հարաւի «բանալին».— Հսկան.— Դարերը եւ հոսանքները նոյնացած.— Նոյնը ամէն տեղ.— Սուէզ.— Դարաւոր մրցորդների սանդրանին հանդիպումը Պոլսոյ ջրերում.— Խրիմի դասը:

II	ՆԵՂՈՒՑՆԵՐԸ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՈՒԽՏԵՐՈՒՄ	46—112

Ռուսիոյ դիրքը Նեղուցներում մինչեւ 1870ը.— Ցար Նիկոլայ Ա.— Ցար Ալեքսանդր Բ.— Նեղուցները 1870ից այս կողմ.— Լոնդոնի դաշինքը.— Շեօնբրունի ուխտը.— Բերլինեան յուշագիրը.— Սայխսաց.— Պոլսոյ խորհրդաժողովը.— Բուդապէշի համաձայնութիւնը.— Սան Ստեֆանոյ եւ Բերլին.— «Երեք կոյսերի» համաձայնութիւնը».— Ցար Ալեքսանդր Գ.— Նոր բարդութիւններ.— Բիսմարկ — Պատերազմական անակոչ — Միջերկրականեան համաձայնութիւն.— Գերմանեւռուս համաձայնութիւն.— Ցար Նիկոլայ Բ.— Հայ Դատը եւ Նեղուցները.— Աւստրեւռուս համաձայնութիւն.— Բաղդադի երկաթուղին եւ Նեղուցները (1900 Մարտ 31ի ռուսեւթուրք համաձայնութիւնը).— Անգլեւռուս համաձայնութիւն.— Բուխլաու.— Իտալեւռուս համաձայնութիւն.— Գերմանեւռուս նոր համաձայնութիւն.— Զարկոյի նոյթը.— Բալկանեան պատերազմներ:

III	ՆԵՂՈՒՑՆԵՐԸ ԱՌԱՋԻՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ	113—186

Հայաստանը եւ Նեղուցները (1914 Յունուար 26ի Համաձայնագիրը).— Յաւտուկ խորհրդարանի նիստը (Սա-

գոնովի յիշատակագիրը).— Ռուսիա, Անգլիա եւ Ֆրանսա պատերազմի սկզբին.— Սազոնովի սեպտեմբերեան ծրագիրը (Թուրքիա եւ Հայաստան).—Ռուսիոյ կիսիր.— Ռուսիան պատերազմից ճանելու գերման ճիգերը.— Սր Էդուարդ Գրէյի յայտարարութիւնը.— 1915 Մարտ 4ի, 8ի եւ 12ի ռուսական, ֆրանսական եւ անգլիական ծանուցագիրները.— Անչաս ճատութեան նոր ճիգեր.— 1915 Մայիս 2ի գերման յարձակման իմաստը.— Սազոնով եւ Շեիրմեր.— Հրադարակե՞լ թէ չհրապարակել.— Գրոսդոպով.— Ռումանիոյ դէմ 1916ի գերման գինարշաւի իմաստը.— Տրեպովի 1916 Դեկ. 2ի յայտարարութիւնը.— Նիկոլայ Բ.ի 1916 Դեկ. 25ի հրովարտակը.— Բուլգար միջնորդը.— 1917ի ֆրանկեւռուս նոր համաձայնութիւնը.— Փետրուարեան յեղափոխութիւնը.— Ժամանակաւոր Կառավարութեան յայտարարագիրը.— Պ. Միլիւկովի հրաժարականը.— Ժամանակաւոր Կառավարութեան նոր յայտարարութիւնը.— Ա. Կերենսկիի վկայութիւնը.— Եզրափակում:

IV ՆԵՂՈՒՑՆԵՐԸ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՇՐՋԱՆԻՆ . . . . . 187—250

1917 Դեկ. 7ի դեկրետը.— Բրեստի դաշնագիրը.— Վիլսընի «14 կէտերը» — Մուդրոսի զինադադարը.— Խրիմի դասի կրկնումը.— Քէմալական շարժումը.— 1920 Յունուար 28ի «Ուխտը».— Սեւր.— Լոնդոնի Խորհրդաժողովը.— Լոյդ Ջորջ (Բեմիր Սամի եւ Օրլանդոյ).—Վոլտեր Լիպմանի բացատրագիրը.— 1921 Մարտ 16ի ուխտերը (թուրքեւռուս եւ անգլեւռուս).— Կարսի դաշնագիրը.— Ճենովայի Խորհրդաժողովը.— 1922ի թրքական յարձակումը.— Լօզան.— Տագնապահար աշխարհը.— «Ջենտրլմէն համաձայնութիւն»ներ.— Մոնտրէոյի դաշինքը.— Դէյմէրի զարգացումը.— Պատերազմ:

V ՆԵՂՈՒՑՆԵՐԸ ԵՐԿՐՈՐԴ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ . . . . . 251—295

«Ուժերի հաւասարակշռութիւն».— «Հիւանդ մարդը» եւ իր «առողջ» բժիշկները.— 1915 մարտեան յուշագիրների իմաստը.— «Սայքս-Փիկոյ-Սազոնով համաձայնութիւն»ը (Թուրքիա եւ Հայաստան).— Բրնզի, Բեւինի եւ Զրչիլի յայտարարութիւնները.— Մոսկուայի, Թեհրանի, Եալտայի եւ Պոսդամի Խորհրդաժողովները.— Խ. Միութեան դիրքը Նեղուցների հարցում 1939ից այս կողմը:

VI ՆԵՂՈՒՑՆԵՐԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԱԽՃԱՆԻՆ . . . . . 296—390

Խ. Միութեան արտ. քաղաքականութիւնը.— Հիւսիսի «Նեղուց»ները (Շպիցբերգէն).— Խ. Միութեան 1946 Օգոստ. 8ի ծանուցագիրը.— Թուրքիկ ակնարկ.— Մեկնութիւն ծանուցագրի.— Թուրքիոյ պատասխանը.— 1946 Օգոստ. 19ի, 20ի եւ 22ի ծանուցագիրները՝ ամերիկեան, անգլիական եւ թրքական.— Խ. Միութեան 1946 Սեպտ. 24ի երկրորդ ծանուցագիրը.— 1946 Հոկտ. 4ի, 9ի եւ 18ի ծանուցագիրները՝ անգլիական, ամերիկեան եւ թրքական.— Խարհափումներ.— Պոսդամ (17 Յուլիս—2 Օգոստ. 1945).— Նիւ Եորք (23 Հոկտ.—15 Դեկտ. 1946).— Սպառնալիքներ եւ սակարկումներ.— Անտեսակցի «ծուխը».— 1947 Մարտ 10ի Մոսկուայի Խորհրդաժողովը եւ 1947 Մարտ 12ի անակնկալ ռումբը.— Հիւսիսային Ամերիկայի Նախագահը 1946ին եւ 1947ին (Տրումբնի 1946 Ապր. 6ի ճառը).— Բրնզի 1946 Փետր. 26ի ճառը.— Սարաջօղլուի 1947 Մարտ 7ի յայտարարութիւնը.— Յոյսի առկայծող կանթեղը.— Հայ Դատ:

VII ՆԵՂՈՒՑՆԵՐԸ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԴԱՏԸ . . 391—474

Մեծերի «ամուսնութիւն»ը ջրերի հետ.— Ցեղադարձ հայեացք.— Փոխադարձ վախեր.— Սուեզ, Պանամա, Դարդանել.— Համակիր ձայներ.— Երէկ եւ այսօր.— Պատերազմ եւ խաղաղութիւն.— Երեք Մեծերը եւ իրենց «կենսագիծ»երը.— Սլաւ աշխարհի ոյժը.— Հնդկաստանը եւ Նեղուցները.— Արեւելքը եւ Արեւմուտքը.— Նոր «Օսմանեան Կայսրութիւն».— Հիւլէական դարաշրջանի սեմին.— Պատմութեան 1915ի դասը: